

ՀԱԿՈՒՔ ԴՐԻՄԵՅԻ

ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒՆՅՈՒՆՆԵՐ



ԵՐԵՎԱՆ

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

АКОП КРЫМЕЦИ

КАЛЕНДАРОВОЕДЧЕСКИЕ
ТРУДЫ

Подготовка текста, введение и комментарии
Дж. А. ЭИНАТЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1987

01
7-17

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈՒՐ ԳՐԻՄԵՑԻ

ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա շ ի ս տ ա ս ի թ ու թ յ ա մ ք
Ձ. Ա. ԷՅՆԱԹՅԱՆԻ

4424



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1987

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Լ. Վ. Միրզոյան,
պատմական գիտությունների դոկտոր Հ. Գ. Փափազյան

Գիրքը հրատարակության է երաշխավորել
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Գ. Բ. Պետրոսյանը

Հակոբ Արիմեցի

Հ 176 Տոմարագիտական աշխատություններ /Աշխատասիրու-
թյամբ Զ. Ա. էյնաթյանի; [Պատ. խմբ. Լ. Վ. Միրզոյան,
Հ. Գ. Փափազյան]; ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր
Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ին-տ. Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.,
1987 — 394 էջ.

Աշխատության մեջ ներկայացվում են XIV—XV դդ. հայ տոմարագետ
Հակոբ Արիմեցու երկերը, որոնք հայոց տոմարի բազմադարյան պատմության
մեջ նշանակալից տեղ են զբաղում: Այդ երկերում քննարկված են բնագիտա-
կան, փիլիսոփայական տարբեր հարցեր:

Նախատեսված է գիտության պատմության հարցերով հետաքրքրվող-
ների համար:

1605000000

Հ-----95—86

703 (02)—87

ԳՄԿ 22.61

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայկական միջնադարյան ձեռագրերը հարուստ են տոմարագիտական
աշխատանքներով. դրանք տեսական գործեր են, կոնկրետ սահմանումներ
և խորհուրդներ, աղյուսակներ և բոլորակներ, բացատրություններ և մեկ-
նություններ, որոնք ուղղված են մի նպատակի՝ ճշգրիտ հաշվել ժամա-
նակը:

Դեռևս հնում ժամանակը շափելու համար մարդիկ օգտվել են աստ-
ղագիտական երևույթներից. գիշերվա և ցերեկվա հերթափոխությունը,
լուսնի փուլերի հաջորդականությունը, տարվա եղանակների փոփոխու-
թյունը օգնել են մարդուն ճիշտ շափելու ժամանակը: Դրանց վրա են հիմ-
նրված ժամանակի միավորները՝ օրը, ամիսը, տարին: Սակայն այդ երեք
մեծությունները անհամաչափելի են: Դժվար է գտնել այնպիսի ամբողջ
թվով արտահայտվող տարիների քանակ, որ պարունակեր ամբողջ թվով
ամիսներ կամ օրեր: Դրանով էլ բացատրվում է օրացույցի կառուցվածքի
բարդությունը և հազարամյակների ընթացքում տարբեր ժողովուրդների
կողմից օգտագործված օրացուցային համակարգերի բազմազանությունը:
Այդ դժվարությունները հաղթահարելու և վերահիշյալ երեք մեծություննե-
րը միմյանց հետ համաձայնեցնելու փորձերով է բացատրվում այն փաս-
տը, որ տարբեր ժամանակներում, տարբեր ժողովուրդների մոտ ստեղծվել
են երեք տիպի օրացույցներ՝ լուսնային, լուսնաարեգակնային և արեգակ-
նային: Շատ ժողովուրդների լեզուներում «ամիս» բառը կապվում է լուսնի
հետ, իսկ տարվա առաջին ամիսը՝ վաղ գարնան հետ:

Այդպես է եղել, օրինակ, հրեական օրացույցում: Այն պարունակում
էր 30 և 29 օրական լուսնային ամիսներ. ընդ որում առաջին ամիսը կոչ-
վում էր «ավիվ», այսինքն՝ «հասկերի ամիս» և համապատասխանում
էր գարնան սկզբին, իսկ մյուսները անուններ չունեին, այլ կոչվում էին
համարներով՝ 2-րդ, 3-րդ և այլն¹: Նույնպիսի տեղեկություն կա VII դ. հայ

¹ С. И. Селешников, История календаря и хронология, М., 1972, с. 114.

մտածող Անանիա Շիրակացու մոտ. «Անուանք ամսոյն ոչ էին յիսկզբանէ: Այլ՝ սկսեալ յԱզամայ մինչև ի Մովսէս, զգարնանամուտն տարեմուտ անուանէին ամենայն ազգք. և ամսոց անուանք ոչ գոյր, բայց միայն զառաջինն լուսինն զգարնան ատաշին լուսին անուանէին, և զկնի՝ Բ. երրորդ լուսին, և Դ. երրորդ և Գ. երրորդ, մինչև ց ժԲ. ան երրորդն և զողջոյն ամսն՝ աչալիսի անուամբ վարէին մինչև ի մուտն գարնանային: Եւ դարձեալ յառաջինն յանային»²:

Հետագայում բարեւացիների ազդեցութեամբ ամիսները անուններ ստացան: Առհասարակ բարեւական մշակույթը այնպիսի մեծ համարում ունեւր, որ նրա լուսնաարեգականային օրացույցը ընդունվել է հարևան ժողովուրդների կողմից. ասորիներն այն ընդունել են մոտ 1100 թ. մ. թ. ա., հրեաները՝ 586 թ. մ. թ. ա.³ Երուսաղեմը բարեւացիների կողմից գրավելուց հետո, պարսիկները՝ 539 թ. մ. թ. ա., երբ պարսկական թագավորները գրավեցին Բաբելոնը և այլն⁴:

Հայկական տոմարի մասին տեղեկությունները՝ մինչև հայ գրերի ստեղծումը քիչ են և կապված են իրեղեն հուշարձանների հետ: Հայաստանի տարածքում հայտնաբերված հազարավոր ժայռապատկերներ ցույց են տալիս, որ տեղի նախաբնիկների պատկերացումները աստղային երկնքի մասին դուրս էին գալիս դուրս կրոնապաշտամունքային շրջանակներից: Դրանք կապվում են ոչ միայն Արևի, Լուսնի և աչքով տեսանելի հինգ մոլորակների, այլև Լուսնի փուլերի և համաստեղությունների հետ⁵: Նույնպիսի եզրակացություն է հանգեցնում Հայաստանի տարածքում հայտնաբերված բրոնզե դարի դոտի-օրացույցը: Ենթադրվում է, որ Հայկական լուսնաարեգական տեղարնիկները օգտվել են բավականին կատարելագործված լուսնաարեգականային օրացույցից, որտեղ տարին սկսվում էր գարնանից, ուներ 12 լուսնային ամիսներ, ամիսները բաժանված էին շաբաթներով⁶:

Հայտնի է, որ լուսնաարեգականային օրացույցներում արեգականային տարին և լուսնային ամիսները համապատասխանեցնելու համար ժամանակ առ ժամանակ ավելացվում էին լրացուցիչ ամիսներ: Շատ անգամ

2 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, աշխատությամբ Ա. Արրահամյանի, Երևան, 1940, էջ 76:
3 Э. Бикерман, Хронология древнего мира, М., 1975, с. 20, 21.
4 Հ. Ա. Մարտիրոսյան, Նախնադարյան Հայաստանի լուսնաարեգականային տոմարը, ՀՍՍՀ ԳԱ Լրագրեր (Հաս. գիտ.), 1973, № 7, էջ 23—42:
5 Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, Բրոնզե դարի դոտի-օրացույցը, Երևան, 1965:

դրանք ունենում էին կամայական բնույթ, սակայն երկու լուսատուների շարժումները համապատասխանեցնելու այդ փորձերը նպաստում էին գիտություն անաշխարհին: Այսպես, սովետական աստղագետ Ն. Իդիստնի կարծիքով հիմնականում այնտեղ է գարեպացել աստղագիտությունը, որտեղ գործածվել է լուսնաարեգականային օրացույց⁶:

Թե երբ է Հայկական լուսնաարեգում անցում կատարվել լուսնաարեգականային օրացույցից արեգականայինին՝ հայտնի չէ: Մեղ հայտնի հայկական արեգականային⁷ օրացույցը 12×30+5 տիպի է: Տարին անփոփոխ 365 օր հաշվելու հետևանքով շորս տարին մեկ անգամ տարեակիցըր տեղափոխվում էր 1 օրով, իսկ 1460 տարի հետո՝ (որը հայկական մատենագրություն մեջ հայտնի է «Հայկաչ շրջան» անունով)⁸, մեկ ամբողջ տարով:

Ավանդությունը հայկական տոմարի սկզբնավորումը կապում է Հայկ նահապետի Բելի դեմ տարած հաղթանակի հետ, իսկ ամիսների անունները՝ նրա որդիների և դստերի անունների հետ. «Զի Հայկ ոմն անուն աղեղնաւոր հսկայ՝ յազգէ Յաբեթի... եկեալ ի Բաբելոնէ տիրեաց Հայոց: Եւ բնակեալ ի Հայս և յանուն նորա կոչեցան Հայք, նոյնպէս որդոց և դստերաց իւրոց և դ անուանս, զոր առեալ հայոց զանուանս ուստերաց և դստերաց նորա եղին ի վերայ ամսոյդ՝ վասն մեծարնաց հօրն և զաւակացն, — և են այսոքիկ: Նաւասարդի, Հոբի, Սահմի և Մահեկի, Արեգ, Մարերի, դստերք էին Հայկին: Տրէ, Քաղոց, Արաց և Հրոտից որդիք էին Հայկին: Իսկ Մարգաց և Հարաւանց, զոր այժմ Ահեկի կոչեն, այս ի գործոց անուանեցան, զի ընդ այն ժամանակս ամառնայինք էին սոքա»⁹:

Իր հաշվումների համար հիմք վերցնելով 1460-ամյա պարբերաշրջանը, Ղ. Ալիշանը փորձել է պարզել այդ իրադարձության թվականը: Նաստացել է 2492 թ. մ. թ. ա.¹⁰: Սակայն հայկական տոմարի սկզբնավորության մասին հին ավանդություններին գիտական հիմնավորում տալու

6 Н. Идельсон, История календаря, Л., 1925, с. 120.
7 Հետազոտությունները ցույց են տվել, որ արեգականային օրացույցներ գործածող երկրներում՝ օրինակ Եգիպտոսում, Իրանում, օրը սկսվում էր լուսաբացից (տե՛ս Э. Бикерман, Хронология древнего мира, с. 11): Միջնադարում հայկական եկեղեցին նույնպես իբրև օրվա սկիզբ ընդունում էր առավոտը (տե՛ս Հ. Մնացյան, Զեյ և ուրբաթադեյ, Լրագրեր, 1969, № 3, էջ 78—81; Դիոնիսիոս Բարսաղիբի հակամատուցությունը հայոց դեմ, աշխատությամբ Պ. Էսապալյանի, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1937, № 6, էջ 312; Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, հ. 1, Երևան, 1964, էջ 66, 83):
8 Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 76—104:
9 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, էջ 77:
10 Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Ա, էջ 95, 96:

այս փորձը հետագայում քննադատվել է¹¹: Հետաքրքրական է նշել, որ նույն ավանդությունը պահպանվել է XI դ. նշանավոր տոմարագետ Հովհաննես Սարկավազի մոտ: Այսպես, նա գրում է. «Արդ՝ զշարժումն ամսոցն երբայցեցոց և զանշարժութիւն հայ ամսոցդ սահմանեաց բարձրեան, զի հաւատ և գիր և տոմար այս երկու ազգիս միայն ետ Աստուած, և այլոց ազգացը՝ մարդկան են արարեալ, գիրս հայոց՝ աստ ի վերայ վիմի հրեղէն աշով, անդ՝ ի տախտակս քարեղէնս, զտովմարս՝ անդ Մովսէս, աստ՝ Հայկն, յառաջ բան զնա»¹²:

Ազգագրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրիստոնեական կրոնը պաշտոնական դառնալուց հետո ստիպված է եղել ոչ միայն հաշվի նստել ժողովրդական ավանդությունների հետ, այլ նաև դրանք իր մեջ ընդունել: Դա նախ և առաջ վերաբերում է հայկական տոմարի առաջին ամսվա՝ նավասարդի տոնախմբություններին: Այդ տոնը սկզբնական շրջանում համընկել է գարնան զարթոնքի հետ, իսկ հետագայում օգոստոսի կեսերի՝ բերքահավաքի հետ: Պարզվում է, որ այս տոնի հետ կապված ծեսերը պահպանվել են Հայաստանի տարբեր շրջաններում, և եթե հունվարի 1-ի տոնակատարությունը դժվար մտավ կենցաղի մեջ և շուներ ծխական որևէ երանդ, ապա նավասարդի տոնախմբությունները մինչև XX դ. ապրում էին ժողովրդի մեջ¹³:

Գրավոր հնագույն տեղեկությունը հայկական տոմարի մասին պահպանված է Մովսես Խորենացու մոտ, ըստ որի՝ հայոց Արտաշես թագավորը (189—160 թ. մ. թ. ա.) հատուկ ուշադրություն է դարձրել մի շարք գիտությունների՝ այդ թվում նաև տոմարագիտության, զարգացմանը¹⁴: Որոշ ուսումնասիրողներ հայկական տոմարը նմանեցրել են եգիպտականին¹⁵: Հայտնի է, որ եգիպտացիների օրացուցային տարին, իրական արեվադարձայինից բառորդ օրով պակաս լինելու պատճառով, տարեսկիզբը յուրաքանչյուր 4-րդ տարին մեկ օրով շուտ սկսվելով, իր դիրքը վերա-

կանգնում էր 1460 տարի անցնելուց հետո¹⁶: Որքան էլ որ հայկական տոմարը իր կառուցվածքային սկզբունքով նման էր հին եգիպտական արեգակնային օրացույցին, պատմական իրողություն է, որ եգիպտացիները 26 թ. մ. թ. ա. հոմեական Օգոստոս կայսեր օրոք անցան անշարժ տոմարի, իսկ հայկական շարժական տոմարը հարատևեց հարյուրամյակների ընթացքում:

Թերևս կարելի էր հայկական օրացույցը նմանեցնել «գրադաշտականին»¹⁷: Այստեղ արեադարձային և օրացուցային տարիների տարբերությունը ուղղում էին 120 տարին մեկ անգամ ավելացնելով մեկ ամբողջ ամիս. ընդ որում ավելաց հինգ օրերը դրվում էին ավելացրած ամսից հետո, իսկ վերջինս սկզբում զնում էին առաջին ամսից հետո, մյուս անգամ երկրորդից հետո և այլն:

Պարզ երևում է, որ հայոց և պարսկական օրացույցները համարժեք չեն:

Ի միջի այլոց, նշենք, որ որոշ ուսումնասիրողներ իբրև «գրադաշտականի» նախատիպ ընդունել են եգիպտական օրացույցը¹⁸: Արեգակնային և հատկապես եգիպտական օրացույցի պարզության և նպատակահարմարության մասին բազմիցս խոսել են մասնագետները¹⁹:

16 1460-ամյա այդ պարբերաշրջանի մասին Ն. Իդելսոնը գրում է. «Իբնեք եգիպտացիները հին ժամանակներում գիտեին՝ արդյոք այդ ժամանակահատվածի պարբերության մասին, թե ոչ—տալիմ պարզ չէ» (Н. Идельсон, История календаря, с. 47):

17 Ենթադրվում է, որ հնում պարսկական օրացույցը եղել է արեգակնային, հետո ընդունվել է բարեխառն, ավելի ուշ՝ «գրադաշտականը», որը նույնպես արեգակնային է: Վերջինիս զործածության մեջ մտնելու ժամանակի մասին եղել են տարբեր կարծիքներ. գրանցից հնագույնները վերաբերում են V դ. մ. թ. ա. (В. А. Лившиц, «Зороастрийский» календарь, Э. Бикерман, Хронология древнего мира, գրքում, с. 321):

18 Այս կապակցությամբ հետաքրքիր է Վ. Ա. Լվշիցի կարծիքը. «Նրա (գրադաշտականի—Ջ. է.) կառուցվածքի մեծ նմանությունը եգիպտական տոմարի հետ շատ ուսումնասիրողների բերել է այն եզրակացության, որ թափառող արեգակնային տարվա մասին գաղափարը փոխ է առնված եգիպտականից... Սակայն ...ազգագրական տվյալները ցույց են տալիս, որ 360 և 365 (12×30+5) օրերից կազմված արեգակնային տարվա վրա հիմնված տոմարական համակարգերը հանդիպում են տարբեր ժողովուրդների մոտ գրեթե բոլոր աշխարհամասերում ...այնպես որ «գրադաշտական» տոմարը կարող է գիտվել նաև որպես հնդեվրոպական օտարագույն կատարելագործում» (նույն տեղում, էջ 325):

19 Э. Бикерман, Хронология древнего мира, с. 35; Я. И. Шур, Рассказы о календаре, М., 1962, с. 72—85; О. Нейгебауер, Точные науки в древности, М., 1966, с. 92. Վերջինս գրում է. «Այդ տոմարը, ըստ էության, հանդիսանում է միակ խնամարը մարդկության ամբողջ պատմության ընթացքում»:

11 Ա. Գ. Արամյան, Հայոց գիր և գրություն, Երևան, 1973, էջ 99:
 12 Ա. Գ. Արամյան, Հովհաննես Խոստատաների մատենագրությունը, Երևան, 1956, էջ 223:
 13 Ա. Օղաբաշյան, նավասարդյան տոնախմբությունների վերապրուկները, ՀՍՍՀ ԳԱ Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), 1974, № 3, էջ 113—125:
 14 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913, էջ 188:
 15 Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին, Մատենագրանի գիտական նյութերի ժողովածու, № 1, Երևան, 1941, էջ 19, 23; Е. И. Каменцева, Хронология, М., 1967, с. 66:

Սակայն քրիստոնեությունը ընդունած ժողովուրդները եկեղեցական տոների համար պետք է ունենային հաստատուն տոմար: Այս իմաստով ամենանպատակահարմարը հուլյանն էր: Հռոմեական կայսրության արեմուտքում այն ընդունվեց առանց փոփոխելու, իսկ արևելյան նահանգներում, ուր կայսրության պաշտոնական լեզուն հունարենն էր, նոր տոմարը հարմարեցվեց տեղական սովորություններին:

Հայոց տոմարը անհարմարություններ է ստեղծել քրիստոնեությունը ընդունելուց հետո:

Այս առումով տոմարի պատմությունը սերտորեն առնչվում է ժողովրդի քաղաքական և եկեղեցական պատմությանը: Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հանաչվեց IV դ. արշալույսին: Սկզբում, Արևելյան Հայաստանում եկեղեցական լեզուն ժողովրդին քիչ մատչելի ասորերենն էր, իսկ Արևմտյան Հայաստանում՝ հունարենը²⁰:

Պետք է ենթադրել, որ եկեղեցական տոներն էլ կարգավորվում էին ասորական և հունական տոմարներով:

Է. Գյուլոթրին հավանական է համարում, որ հայերն իրենց օրացույցը համաձայնեցրել են կապադովկիացիների հետ, իսկ 353 թվականից՝ ընդունել Անդրեասի 200-ամյա զատկացանկը²¹: Ըստ Բ. Սարգսյանի, հայերն այդ ժամանակ գործածել են կամ հուլյան տոմարը, կամ էլ Անատոլիոսի կանոնը²²: Հավանաբար, Անդրեասի ցուցակները նույնպես հայերի կողմից

20 Մինչև IV—V դդ. ասորական եկեղեցու ազդեցությունը Հայաստանում ավելի մեծ է եղել, քան հունականինը, չնայած որ Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից էր և հունական դպրոցին էր պատկանում: Դրան նպաստում էր նաև Պարսկաստանը: Սակայն V դ. սկսած, Մեսրոպ Մաշտոցից հետո, ասորական եկեղեցու ազդեցությունը թուլանում է, հունականը ուժեղանում (տե՛ս Ս. Տեր-Մինասյանց, Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908, էջ 1—69):

21 E. Dulaurier, Recherches sur la chronologie Arménienne, Paris, 1879, p. 47. Հայտնի է, որ քրիստոնյա ժողովուրդները իրենց հիմնական տոնի՝ զատկի և նրա հետ կապված եկեղեցական տոների համար կազմում էին զատկացուցակներ 19, երբեմն 95 և նույնիսկ 200 տարիների համար: Այս վերջինը հայկական մատենագրության մեջ հայտնի է Անդրեասի անունով, որը հանրած էր 353—552 թթ. համար (տե՛ս Ա. Աբրահամյան, Հայոց դիր և գրություն, էջ 102):

22 270—277 թթ. Ալեքսանդրիայի եպիսկոպոս Անատոլիոսը հույների և ասորիների համար կազմեց 19-ամյա զատկական կանոնը, որ և կոչվեց «ալեքսանդրյան», որովհետև այն նախ ընդունվեց ալեքսանդրացիների կողմից (Բ. Սարգսյան, Ազաթանգեղոս և իւր լազմադարեան զաղտեփքն, Վենետիկ, 1890, էջ 352):

կիրառվել են որևէ օտար տոմարի միջնորդությամբ: Այդ մասին են վկայում հայկական միջնադարյան տոմարագետների հաղորդումները²³:

Հայտնի է, որ V դ. քրիստոնյա տարրեր եկեղեցիների միջև սկսվեցին դավանաբանական վեճեր: Սկզբում հայերը հեռու էին դրանցից, իսկ հայկական գրի ստեղծումից հետո «սկսվում է մի զորեղ կուլտուրական պայքար... ընդդեմ պարսկական և ասորական, հետագայում նաև հունական ոտնձգությունների»²⁴:

V դ. բորբոքվում են միաբնակության և երկարնակության վեճերը, որոնք պակաս կարևոր դեր չեն խաղում հայ ժողովրդի մշակույթի համար: Քաղկեդոնականությունը պաշտոնապես ընդունվում և պարտադիր է դառնում Բյուզանդական կայսրության մեջ: Հայերի համար դավանության խնդիրն ստանում է ազգային-քաղաքական նշանակություն: «Հռոմեների ազդեցությունից զերծ մնալու և ազգային միությունը պահպանելու համար՝ պետք էր դավանապես զատվել նրանցից»,— գրում է Մ. Արեղյանը²⁵:

VI դ. կեսերից հայոց եկեղեցին բացարձակապես բաժանվում է քաղկեդոնականներից:

Հետաքրքիր է նշել, որ միաբնակ դավանանքի եկեղեցիների մեջ հայոց եկեղեցին ունեցել է առանձնահատուկ դիրք²⁶:

23 Ըստ սկզբնաղբյուրների, Անդրեասը միասնություն և պարզություն է մտցրել ծաղկերի տոմարների միջև, իսկ այդ ազդերի և նրանց 19-ամյակները կազմողների մասին տեղեկություններ կան շատ ձեռագրերով մեզ հասած «Յաղագս թէ յումմէ եղան սուժարք ազգաց» խորագիրը կրող աշխատությունում և տարբեր հայ տոմարագետների մոտ: Հատ այդ հաղորդումների ստացվում է հետևյալ պատկերը.

ա) Մովսես մարգարեն օրինադրել է զատկական կրոմները

բ) Նղբաւը նորոգել է այն՝ Երրայեցիների համար, կազմելով 19-ամյա ցուցակներ

գ) Արիստիդես Աթենացին կազմել է 19-ամյակ հռոմեացիների

դ) Ղևոնդսը՝ Եթովպացիների և եգիպտացիների

ե) Որոբինսը՝ արարների և մակեդոնացիների

զ) Անատոլիոսը՝ հույների և ասորիների համար

է) Անդրեասը ընդհանրություն է մտցրել այդ ազգերի տոմարների միջև. տե՛ս

Ա. Աբրահամյան, Անանիա Երրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 294, 295, ետևի՝ Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 271, 272, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 2017, թ. 408ա—411ա, 2001, թ. 149ա—152ա: Ինչպես տեսնում ենք, հայկական տոմարի մասին այստեղ հիշատակություն չկա:

24 Մ. Արեղյան, Երկիր, հ. 9, Երևան, 1968, էջ 99:

25 Նույն տեղում, էջ 397:

26 Ն. Տեր-Մինասյանց, Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ, էջ 79:

Ուշադրութեան արժանի է այն փաստը, որ պայքարը գնում էր ոչ միայն օտարազգի քաղկեդոնականների և հայերի միջև, այլև քաղկեդոնական և ոչ-քաղկեդոնական հայերի²⁷: Երկարատև այդ պայքարն իր արձագանքը գտավ մշակույթի տարրեր բնագավառներում՝ գրականության, ճարտարապետության, կերպարվեստի մեջ: Եվ հենց այդ պայքարից էլ ծնվեց հայկական ազգային եկեղեցին:

«Իհարկե, կասկած չկա, — գրում է Ն. Մառը, — որ հակաքաղկեդոնականությունը հաղթանակեց Հայաստանում: Հակաքաղկեդոնական համայնքը, դեպի հեռավոր ժամանակների խորքը գնացող իր տեղական, նախասկզբնական, զուտ եկեղեցական ավանդույթներով աստիճանաբար վեր էր ածվում հայկական ազգային եկեղեցու²⁸: Ազգային գիր ու գրականություն ունենալուց հետո ինքնուրույն դարձած հայոց եկեղեցին, անշուշտ, փորձելու էր սահմանապատվել քաղկեդոնականներից նաև տոմարի հարցում, ստեղծելով սեփական տոմարական համակարգ և թվարկություն:

Ըստ բանասիրության մեջ ընդունված կարծիքի, Անդրեասի 200-ամյա զատկացուցակի ավարտից հետո, 552 թ. հուլիսի 11-ից սկիզբ է առել հայկական թվարկությունը՝ Հայոց Մեծ թվականը: Այս կապակցությամբ հետաքրքիր տեղեկություն կա Հովհաննես Վանականի մոտ (XIII դ.)՝ «Յորժամ մերքս բաժանեցան և զտոմարս շրջեցին՝ յարաց յերեսունն էր յայտնութիւնն... Եւ շրջելոյ պատճառ ասեն ոմանք, թէ ընդ Պարսից իշխանութեամբ էին, իշխանքն կամեցան, թէ ընդ նոսա յար լիցի, որ երկու անգամ տարեմուտ ոչ պիտի առնել: Բայց հայք աւելի քան զԱսորիք և զՀրեայք՝ չեն լեալ ընդ Պարսաւք, զի Պարսից տաւնն և ամիսն ի միասին շարժի և մեր տաւնքս անշարժ են: Եւ այլք ասեն, թէ վասն աշխատելոյ մանկանց ի յուսումն, զի դիրաւ գտանելին դիրաւ արհամարհնլի է: Եւ ոմանք թէ կամեցան ամենայնի բաժանել զմեզ ի Յունաց, զի մի խառնեցուք ընդ նոսա տաւնիւք կամ ամսաւք կամ տարեմտիւք»²⁹:

Այստեղ «շրջել» բառը, մեր կարծիքով, պետք է հասկանալ այսպես. եթե մինչ այդ եկեղեցական տոները հաշվում էին որևէ օտար տոմարի միջոցով, ինչպես որ ծիսակատարությունները տարվում էին օտար լեզվով, ապա դրանից հետո որոշվեց ոչ միայն եկեղեցական լեզուն դարձնել հայերենը, այլև տոները հաշվել հայոց տոմարով, որը մինչ այդ օգտա-

գործվում էր ժողովրդի կողմից: Եվ քանի որ «շրջելու» ժամանակ քրիստոնեության համար կարևոր տոներից մեկը՝ «հայտնությունը» համընկավ հայոց արաց ամսի 30-ին, ապա տոմարական հետագա շատ հաշիվներ կապվում էին այդ սկզբնակետի հետ:

Հայոց Մեծ թվականի հիմնադրման ժամանակի, պատճառների և հեղինակների մասին շատ է խոսվել³⁰: Ենթադրվում է, որ այն արվել է Մովսես Եղվարդեցի (574—604) կաթողիկոսի օրոք:

Ըստ հայկական աղբյուրների, Անդրեասի 200-ամյա զատկացուցակի ավարտից հետո քրիստոնյա ժողովուրդները ինը տարի շարունակ շփոթում էին զատիկը և նրա հետ կապված մյուս տոները: Եվ միայն Ալեքսանդրիայի տոմարագետների ժողովը էաս Ալեքսանդրիացու ղեկավարությամբ³¹ զատիկի 532-ամյա շրջանը հայտնաբերելուց հետո, կարգավորեց այդ շփոթությունը³²: Հայկական տոմարի պատմության ուսումնասիրողները հենց դա էլ համարում են Հայոց Մեծ թվականի հիմնադրման պատճառը: Այսպես, Բ. Թումանյանը այդ մասին գրում է. «Հայոց Մեծ թվականն սկսվել է Անդրեսս Բյուզանդացու 200-ամյա տոմարական աղյուսակների վերջանալուց անմիջապես հետո: Այն հաշվվել է որպես 532-

30 Մ. Զավաթյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1784; Ն. Ալիևյան, Հայոց թվականին հաստատութեան ժամանակը, Հանդէս ամսօրեայ, 1904, № 4; Գ. Խալաթյանց, «Հայոց թվականի հաստատութեան ժամանակի» առիթով, Հանդէս ամսօրեայ, 1904, № 5; Ն. Ալիևյան, «Հայոց թվականի հաստատութեան ժամանակը» հոդվածիս քննութեանց պատասխանս, Հանդէս ամսօրեայ, 1904, № 7; Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 1, Կ. Պոլիս, 1912; Լ. Սեմյուշով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին; Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը; Բ. Փումանյան, Հայ աստղագիտության պատմություն, հ. 1; Նույնի՝ Հայոց Մեծ և Փոքր թվականների տարեակզրի հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1965, № 6; Զ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959; Ի. Ազամյան, Հայկական թվականի մասին գիտելիքներ, Բազմաձեպ, Վենետիկ, 1966, № 7—10; 1969, № 8—10, 1970, № 4—6, Ս. Մ. Мурадян, Хронология систем летоисчисления по армянским источникам, Կրարեր, 1975, № 10, № 1 և այլն:

31 Ըստ ձեռագիր աղբյուրների այդ ժողովում ներկա էին 36 իմաստուններ, որոնցից միայն 8-ի անուններն են տրված (այդ թվում նաև էաս Ալեքսանդրացունը): Անանիա Շիրակացին նշում է, որ դրանցից 7-ը հույն էին, իսկ մնացածը՝ եգիպտացիներ: Ուշագրավ է, որ հանվան հիշատակված են հենց այն ազգերի ներկայացուցիչները, որոնք մինչև Անդրեսսը ունեցել են 19-ամյա զատկացուցակներ (տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 296, Նույնի Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 273, Մատենադարան, ձեռ. № 1114, թ. 98ր):

32 Հայոց Մեծ թվականի հիմնադիրները 532-ամյա շրջանը ընդունելիս հաշիվի առան հաև անցած 9 տարիները (Մատենադարան, ձեռ. № 1114, թ. 100ր):

27 Н. Марр, Аркаун, монгольское название христиан, СПб, 1905, с. 5, 6.

28 Նույն տեղում, էջ 15:

29 «Ճազագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ», աշխատութիւնս Լ. Ս. Խաչիկյանի, Մատենադարանի գիտ. ելութերի ժողովածու, № 1, 1941, էջ 165:

ամյա առաջին աղյուսակի սկիզբը, շկապվելով որևէ քաղաքական կամ աստղագիտական կարևոր իրադարձության հետ»³³:

Իսկ Ն. Ակիևյանը հենվում է Ծ. Գինցելի առաջ քաշած վարկածի վրա, ըստ որի հայերը եզրիպտական տոմարը ընդունել են մ. թ. ա. 488 թ. և դրահիման վրա ավելի քան 1000 տարի հետո սկիզբ դրել Հայոց թվականին³⁴:

532-ամյա շրջանը լրանալուց հետո, XI դ. Հովհաննես Սարկավազի կողմից հիմնվում է Հայոց Փոքր թվականը և կազմվում անշարժ տոմար, ընդ որում նավասարդի 1-ը կապվում է օգոստոսի 11-ի հետ: Ըստ ուսումնասիրողների՝ Հովհաննես Սարկավազն իբրև հիմք վերցրել է ավերասանդրյան տարին, այսինքն՝ 4 տարին մեկ անգամ ավելյաց ամիսը հինգ օրվա փոխարեն «նահանջը» հաշվի առնելու հետևանքով ունենում էր 6 օր³⁵:

Չնայած դրան, հայոց շարժական տոմարը և Հայոց Մեծ թվականը ոչ միայն գործածությունից դուրս չեկան, այլև հարատևեցին էլի մի քանի հարյուրամյակ: Ինչպես Մ. Օրմանյանն է նկատում, այս նոր տոմարի մասին պաշտոնական «գործողություն մը» չի արվել, ինչպես որ Հայոց

Մեծ թվականի համար ըրած էր Մովսես Եղիվարդեցին իր ժամանակին»³⁶: Այնուհետև Մ. Օրմանյանը Հայոց Փոքր թվականի շուրջ խոսելով շարունակում է. «Ասկէ առաջ պատմութեանս մէջ բոլոր ամսաթիվերը շարժական տոմարով կը հաշուէինք, բայց ասկէ ետքը խառն կիրառութիւն մը կը գտնենք, և երկու տոմարներ միասին կը շարունակեն, շարժականը շատ առիթներու մէջ գործածուած կը գտնվի իբր քաղաքական տոմար, անշարժն ալ կը հիշուի, ավելի եկեղեցական կիրառութեան մեջ»³⁷:

Հայոց տոմարի շարժական լինելը, ինչպես նաև եկեղեցական վեճերում տեղ գտած տոմարական բազմաթիվ հարցերի³⁸ պարզաբանման անհրաժեշտությունը առիթ են տվել տոմարագիտական աշխատություններ թարգմանելու, գրելու, մեկնելու: Դրանց ղգալի մասը պահպանվել են հայկական ձեռագրերում:

Վանական բարձրագույն տիպի դպրոցներում վարում էին տոմարագիտության դասեր, սովորեցնում էին հաշվումներ անել ինչպես հայկական, այնպես էլ հարևան ժողովուրդների տոմարներով:

Ուստի, ինքնին հասկանալի է, որ առանց ճշգրիտ գիտությունների և, մասնավորապես տոմարագիտության պատմության, հայկական մշակույթի պատմությունը թերի կլիներ: Այդ է պատճառը, որ հայոց տոմարի պատմության ուսումնասիրությամբ սկսել են զբաղվել դեռևս XVIII դ. վերջերից:

Նպատակ չունենալով այստեղ տալ ուսումնասիրողների մանրամասն ու սպառիչ ցուցակը, կանգրադառնանք դրանցից հիմնականներին:

Նախ հիշատակության են արժանի Մ. Չամչյանի «Պատմություն հայոցի» ելրորդ գրքի վերջում ղետեղված «Ժամանակագրություն» բաժնի մանրամասն տեղեկությունները՝ հայ մատենագրության մեջ տեղ գտած տարբեր թվականների մասին³⁹: Ոչ պակաս կարևորություն են ներկայացնում Հայկազյան բառարանի մեծածավալ երկհատորյակում հայկական տոմարի տարբեր հասկացությունների հետ առնչվող բացատրությունները⁴⁰:

36 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 1, էջ 1309:

37 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 1, էջ 1309:

38 Այսպես, հիմնական վեճը զնում էր Քրիստոսի ծննդյան օրվա ճշգրտման շուրջ՝ Պակաս վեճերի տեղիք չէ տվել այնպիսի մի հարց, ինչպիսին է օրվա սկզբի հարցը (տե՛ս, օրինակ, Դիոնեսիոս Բարսալիքի հակաճառությունը հայոց դեմ, էջ 312) և այլն:

39 Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ:

40 Գ. Անտիբեան, Խ. Սիրմելեան, Մ. Ագերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆՁԲ), հ. 1, Վեներիկ, 1836, հ. 2, 1837:

33 Բ. Փումանյան, Հայոց Մեծ և Փոքր թվականների տարեկալը հարցի շուրջը, էջ 82:
34 Ն. Ակիևյան, Մովսես Դաստուրանցի (կոչված Կաղանկատուացի) և իր պատմութիւն աղոսանից, Հանդէս ամսօրհայ, 1959, № 1—4, էջ 111:

35 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 1, էջ 1307; Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 82; Բ. Փումանյան, Հայ աստղագիտության պատմություն, հ. 1, էջ 142:

Ավելորդ չենք համարում նշելու, որ ըստ ձեռագրական տվյալների Հովհաննես Սարկավազի անշարժ տոմարում չորս տարին մեկ անգամ նահանջ օրը ավելացվում էր ոչ թե ավելյաց ամսի վրա, այլ հայոց VII ամսի՝ մեհեկանի վրա (տե՛ս Մատենագարան, ձեռ. № 1114, թ. 7ա, 5614, թ. 248բ, 1849, թ. 153բ և այլն): Նույն բանը կարելի է գտնել նաև Ա. Աբրահամյանի հրատարակած «Նաանախորաններում» (Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 165), որտեղ մեհեկի վերջին օրվա դիմաց նշված է. «Հայք գաւելորդ նահանջի աստ զնեն»: Այսինքն նահանջ տարիներին այդ ամիսը դառնում էր 31 օրեկան, «ի նահանջի ամի մեհեկի ամիս 1Ա (31) ար լինի»,—կարդում ենք «Ակիզքն հայերէն տոմարիս ըստ Սարկավազին» աշխատության մեջ (Մատենագարան, ձեռ. № 1849, թ. 153բ): Այս առիթով ուզում ենք անել մի հավանական ենթադրություն, նահանջի օրը մեհեկի 30-ի կամ մարտի 7-ի հաջորդ օրը վերցնելը նմանեցնել եզրիպտոսի պատմության մեջ «Կանոպյան» անուանով հայտնի ղեկերտին: 238 թ. մ. թ. ա. Պտղոմեոս—էվերգես Թագավոր աստղագետների խորհրդով որոշում է եզրիպտական շարժական տոմարը դարձնել անշարժ: Իր ծննդյան օրը՝ մարտի 7-ին նա իր հրամանը արձանագրել է տալիս Կանոպի վանքի քարե պատի վրա: Սակայն այդ ղեկերտը գործածության մեջ չի մտնում (տե՛ս Я. И. Шур, Рассказы о календаре, с. 85):

Գիտական արժեքավոր ուսումնասիրություն է ֆրանսիացի գիտնական է. Դյուլորիեի՝ հայկական տոմարի պատմության վերաբերյալ XIX դ. կեսերին գրված գործը⁴¹:

Պակաս կարևորություն չունի գերմանացի գիտնական Տ. Գինցելի հայտնի ուսումնասիրության՝ հայկական տոմարի վերաբերյալ առանձին բաժինը⁴²:

Խնդրո առարկա նյութի ուսումնասիրության համար օգտակար են Ղ. Ալիշանի և Մ. Օրմանյանի հայագիտական աշխատանքներում եղած տոմարական ուսումնասիրությունները⁴³:

Վերջին տարիներին այս ուղղությամբ կատարված ուսումնասիրություններից պետք է հիշատակել Ա. Աբրահամյանի, Բ. Քումանյանի, Հ. Բաղալյանի գործերը⁴⁴:

Հայոց տոմարի պատմությամբ զբաղվողների համար օգտակար կարող են լինել Լ. Սեմյոնովի⁴⁵, Ի. Աղամյանի⁴⁶, Ա. Մաթևոսյանի⁴⁷ և Պ. Մուրադյանի⁴⁸ հոդվածները:

* * *

Քանի որ հայոց տոմարագիտությունը հիմնականում կապվում է Անանիա Շիրակացու և Հովհաննես Սարկավագի անունների հետ, ապա,

բնականաբար, ուսումնասիրությունների մեծ մասը վերաբերում են միջնադարյան այդ երկու մտածողների գիտական ժառանգությանը: Սակայն կան այլ հայ տոմարագետներ, որոնց աշխատանքների ուսումնասիրությունը նույնպես կարևոր է և կարող է օգնել ավելի ամբողջական պատկերացում կազմելու հայոց տոմարի պատմության վերաբերյալ:

Սույն աշխատանքում փորձ է արվում ուսումնասիրելու Հակոբ Արիմեցու տոմարագիտական երկերը, որոնք մինչ այժմ առանձին հետազոտման առարկա չեն հանդիսացել, սակայն հայոց տոմարի բազմադարյան պատմության մեջ նշանակալից տեղ են զբաղում: Հակոբ Արիմեցին ապրել և ստեղծագործել է XIV դ. վերջին և XV դ. առաջին տասնամյակներին Երզնկայի և Մեծոփի բարձրագույն դպրոցներում:

Հակոբ Արիմեցին ծնվել է XIV դ. կեսերին Արիմում: Ծննդյան թվականը հայտնի չէ, սակայն XV դ. հիշատակարաններից մեկում պահպանվել է տեղեկություն նրա ընտանիքի մասին. «զբարեպաշտ ծնողսն իմ և զաստուածասէր զհայրն իմ նորազատ և զմայրն իմ զՄելիք և զեղբարսն իմ զՅոհան և զքոյրսն իմ զԽաս-Մելիք և զլալ Խաթուն աղաչմ յիշել...»⁴⁹:

Հայտնի է, որ Արիմում կաթողիկոսություն տարածելու նպատակով դեռևս XIII դ. առաջին տասնամյակներին Հռոմի պապը Կաֆալում հիմնում է եպիսկոպոսություն: Ուսումնասիրողները նշում են, որ Կաֆան դարձել էր կաթողիկոսության տարածման կենտրոնատեղին ոչ միայն Արիմի, այլև ընդհանրապես Արևելքի համար⁵⁰: Քանի որ Հռոմի պապի գերիշխանության ճանաչումը խոստանում էր տնտեսական դիրքերի ամրապնդում, ապա ջննդական վաճառականական կապիտալի հետ կապված հայ առևտրական վերնախավի մի մասը XIV—XV դդ. կուլ է գնում կաթողիկոսություններին: Սակայն պատմական փաստերը վկայում են, որ «կաթողիկոսությունը Արիմում երբեք նշանակալից հաջողություն չի ունեցել»⁵¹: Կաթողիկոսությանը դիմազբաղող շատ հայեր՝ հավատարիմ իրենց ազգային եկեղեցուն, նույնիսկ հեռանում են Կաֆայից: Հայտնի է Մաղաքիա Արիմեցի վարդապետի օրինակը, որը մեծահարուստ մարդու զավակ էր, աշակերտել էր Հովհան Որոտնեցուն, և որն իր ամբողջ կյանքն ու հարստությունը նվիրեց կաթողիկոսության դեմ մղվող պայքարին, Հայաստանում

4424

41 E. Dulaurier, Recherches sur la chronologie arméniene.
42 F. Ginzel, Handbuch der Mathematischen und Technischen Chronologie, Leipzig, 1910—1914.
43 Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց հայոց, հ. Ա: Նույնի՝ Հին հավատք կամ հեթանոսական կրոնը հայոց, Վենետիկ, 1895: Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին և իր պատմությունը, Կ. Պոլիս, 1911: Նույնի՝ Ազգապատում, հ. 1 և այլու:
44 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը: Նույնի՝ Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը: Բ. Քումանյան, Հայ աստղագիտության պատմություն, հ. 1: Նույնի՝ Առձեռն տոմարացույց, Երևան, 1965: Նույնի՝ «Տոմարի պատմություն», Երևան, 1972: Հ. Ս. Բաղալյան, Օրացույցի պատմություն, Երևան, 1970: Նույնի՝ Հայոց տոմարի պատմություն, Երևան, 1976:
45 Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին: Նույնի՝ Աստղաբաշխական բնութի քաղվածքներ հայ պատմագիրներից, Մատենադարանի գիտ. նյութերի ժողովածու, № 1, 1941: Նույնի՝ Ա. Աբրահամյանի «Անանիա Շիրակացու մատենագրությունը» գրքի գրախոսականը, Տեղեկագիր, 1947, № 3 և այլու:
46 Բ. Աղամյան, Հայկական թվականի մասին գիտելիքներ:
47 Ա. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկներ», Լրաբեր, 1974, № 7, 8:
48 П. М. Мурадян, Хронология систем летосчисления по армянским источникам.

49 Լ. Խաչիկյան, Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. 1, Երևան, 1955, էջ 655:
50 Վ. Միխայլյան, Արիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 231:
51 Նույն տեղում:



պահելով դպրոցներ, ամեն կերպ օգնելով Ղրիմի հայերին՝ իրենց երեսաներին հայկական դպրոցներ ուղարկելու գործում:

Այդպես են վարվել նաև Հակոբ Ղրիմեցու ծնողները, նրան ուղարկելով Երզնկայի դպրոցը: Սա չի նշանակում, իհարկե, թե Ղրիմում հայկական դպրոցներ չէին գործում: Հայտնի է, որ հայկական շատ եկեղեցիներին կից գործել են դպրոցներ, որտեղ կրոնական առարկաների հետ մեկտեղ աշակերտները ստացել են նաև աշխարհիկ գիտելիքներ⁵²:

Հնարավոր է, որ Ղրիմեցու ծնողները սկզբնական կրթություն ստանալու համար նրան տվել են տեղի դպրոցներից մեկը, իսկ հետո այն շարունակելու համար ուղարկել Երզնկա:

Մեծ Հայքի Եկեղյաց գավառը՝ Երզնկա քաղաքով, մոնղոլների տիրապետության տակ էր անցել դեռևս 1243 թվականից: Հաճախակի արշավանքների, կողոպուտի և ավերածության ենթարկվելով հանդերձ, XIII—XIV դդ. ընթացքում Երզնկան իր բնական և աշխարհագրական դիրքի շնորհիվ դարձել էր առևտրական կենտրոն:

«Գտնվելով Արևելքը Արևմտյան Եվրոպայի երկրների և Ռուսաստանի հարավային շրջանների հետ կապող կարևորագույն երկու ուղիների վրա,— գրում է ակադ. Լ. Խաչիկյանը,—նա մասնակցում էր միջազգային առևտրին... Երզնկայի առևտրականները սերտ կապերի մեջ էին Կիլիկյան նավահանգիստների, Տրապիզոնի, Ղրիմի, ինչպես և Իրանի ու Հայաստանի վաճառաշահ քաղաքների... հետ... Պարբերաբար կրկնվող կործանարար երկրաշարժերն ու բազմաթիվ արշավանքներն ու ասպատակությունները, որին ենթարկվել է Երզնկան XIII—XV դդ., հասցրել են նրան ծանր վերքեր, սակայն ժամանակավորապես են միայն խանգարել քաղաքի նորմալ կյանքը: Քաղաքը... ողջ միջնադարի ընթացքում շարունակել է խաղալ կարևոր դեր Փոքր Ասիայի տնտեսական ու կուլտուրական կյանքում»⁵³:

Երզնկայի վրայով անցնող առևտրական ճանապարհները քաղաքը միջազգային կապերի ու փոխազդեցության մեջ են առնում ոչ միայն տրեստություն, այլև կուլտուրական կյանքի բնագավառում: Երզնկան հաղորդակից է դառնում Արևելքի ու Արևմուտքի երկրների մտավոր կյանքին և: Այստեղ էին գալիս բազմաթիվ օտարերկրյա ճանապարհորդներ,

մտավորականներ: Իրենց հերթին Կիլիկիա էին գնում շատ ու շատ երզնկացիներ և շփման մեջ մտնում թե տեղի և թե դրսից եկած ուսումնականների հետ: Զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող երկրների հետ այսպիսի լայն փոխհարաբերության շնորհիվ Երզնկան դառնում է նաև ուսումնական-կրթական կենտրոն. «Երզնկան, որ վանքերով շրջապատված ժԳ—ժԴ դարուն փայլուն անուն մը ուներ, Հայաստանի մեջ ճեմարան մը կներկայացներ, կարծես ճիգ մը ուներ մրցելու Կիլիկիո հետ, որ ուսումնական վարդապետներուն կեղրոնավայրն էր»⁵⁴,—գրում է Մ. Պոտուրյանը: Ուսումնասիրողները նշում են, որ շնայած քաղաքական անկայուն վիճակին, Եկեղյաց գավառը և Երզնկա քաղաքը միջնադարում պահպանել են իրենց ազգային դեմքը: Երզնկայի և Եկեղյաց գավառի XIII—XIV դդ. պատմության վերջին ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ այնտեղ շարունակում էին իշխել հայ իշխանական տների ներկայացուցիչներ⁵⁵:

Երզնկայի հռչակված ուսումնական հաստատություններում սովորելու էին գալիս ոչ միայն Եկեղյաց գավառի, այլև Հայաստանի ու Կիլիկիայի զանազան քաղաքների ուսումնականներ: XIV—XV դդ. ընթացքում այդ դպրոցներից առավել աչքի էին ընկնում Ավազ և Կապուսի վանքերի դպրոցները, որոնք կոչվում էին «դասատուն վարդապետաց» կամ «լսարան», իսկ երբեմն էլ «համալսարան»⁵⁶:

XIV դ. վերջերին Ավազ վանքի առաջնորդն էր Հովհան Որոտնեցու աշակերտ, Գրիգոր Տաթևացու երեց ընկեր, «տիեզերահռչակ մեծ բարունապետ», «բաշ հոետոր» Գևորգ Երզնկացի⁵⁷: Նրա բազմաթիվ աշակերտներից ամենանշանավորը Հակոբ Ղրիմեցին է:

Հակոբ Ղրիմեցու մասին եղած ամենավաղ մատենագրական հիշատակությունը պահպանված է իր իսկ ձեռքով գրված 1389 թ. գրազգրի հիշատակարանում. «Արդ, ես՝ Յակոբ Ղրիմեցիս, ունայնագործս ի բարեաց և ուխտադանց գտեալս ի Տէառնէ, նայ և վատթարս ի մէջ սրբազանից՝ ըստ անարժան գնացից, գրեցի վերեքեան գիրքս զայս իմով ձեռամբ

54 Հ. Մ. Պոտուրյան, Կոստանդին Երզնկացի ժԴ դարու բանաստեղծ և իր քերթվածները, Վենետիկ, 1905, էջ 10:

55 Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացի և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 15:

56 Ս. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 292:

57 Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Ժն դարի հիշատակարաններ, հ. 1:

52 Э. М. Корхмазян, Армянская миниатюра Крыма (XIV—XV вв.), Ереван, 1978, с. 13—14; Վ. Միխայլևան, Ղրիմի հայկական դպրոցի պատմություն, էջ 292:

53 Լ. Ս. Խաչիկյան, 1280 թ. Երզնկայում կազմակերպված «եղբայրությունը», Տեղեկագիր, 1951, № 12, էջ 74:

անարհեստ գրչի Առաջին՝ զՀոգոց և զԶորութեանց նորին, յերկրորդ զԱռաքինութեանց Հոգոյն, երրորդ՝ վասն բնութեան հրեշտակացն ի թուականութեանս Հայոց Մեծ թուականին ՊԼԸ (=1389) և Փոքերն 32 (306) ի գաւառս Եկեղեաց, ի հռչակաւոր վանքս, որ կոչի Կապուսի, ի ստորոտ լերինս Սեպուհու»⁵⁸: Զեռագրի վերջին մի բանի թերթերի վրա նրա կողմից շարադրված փոքրիկ աշխատությունից եզրակացնում ենք, որ ձեռագիրը արտագրողը հասարակ մի գրիչ չէ, այլ հասուն, բազմակողմանի զարգացած մի մարդ, որը ծանոթ է իմաստասիրական տարբեր աշխատությունների և կարող է դրանցից կազմել փոքրիկ համահավաք մի տեքստ⁵⁹: Վերջում նա նշում է. «զՅակոբ Արիմեցի, սպասաւոր բանի աղաչեմ յիշել ի Տէր»⁶⁰: Նույն ձեռագրում նա տեղեկացնում է, որ կազմել է նաև բառարան, որը տվել է ոմն Հովհաննես Աբեղայի. «Եւ զբառգիրքն իմ, յորում փառք ի բարձունսն մեկնչովն գրեալ է ի սկիզբն, ետու Յովանէս արեղային՝ գրոց աշակերտին և բանի սպասաւորին»⁶¹:

Մեզ համար պարզ է դառնում, որ 1389 թ. Հ. Արիմեցին արդեն ուսումն ավարտած, զարգացած մի անձնավորություն էր: Պետք է ենթադրել, որ նա Արիմից եկել էր Երզնկա սովորելու, իսկ ավարտելուց հետո մնացել այնտեղ աշխատելու: Ուրեմն, եթե նրա մատենագրական գործունեության սկիզբը համարենք 1389 թ., ապա դրանից հետո նա ապրել ու ստեղծագործել է շուրջ 37 տարի⁶²: Հիշատակարանում կարգում ենք.

58 Լ. Ս. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1959, էջ 580:

59 Մատենադարան, ձեռ. № 3487, Թ, 130ա—144ա:

60 Նույն տեղում, Թ, 144ա: Հիշատակարաններից զժժար չէ եղրակացնել, որ միջնադարյան Հայաստանում «սպասաւոր բանի» արտահայտությունը վերաբերում էր միայն վարդապետներին: Դա նշանակում է, որ 1389 թ. Հակոբ Արիմեցին արդեն 25—30 տարեկան էր, բանի որ վարդապետ էր: Ուստի կարելի է եղրակացնել, որ նա ծնվել է 1359—1364 թթ. ընթացքում:

61 Լ. Ս. Խաչիկյան, ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 580: Զեռագրերում Հակոբ Արիմեցու անունով հանդիպում են բառգրքեր՝ մեկը հայոց լեզվի բացատրական բառարան (տե՛ս Մատենադարան, № 941, Թ, 267ա—277ա «Բառ է հայոց լեզու է պարզ և յիտակ, ասացեալ է Յակոբ վարդապետէ...» սկզբնատողերով), իսկ մյուսը՝ «Մեկնութիւն նշանագրոց ալֆաբետից կրրայնցոցն» (Մատենադարան, ձեռ. № 1975, Թ, 43բ. կամ Մ. Մ. ձեռ. № 2010, Թ, 136ա):

62 Նշենք, որ ըստ Ղ. Փիրղալեմյանի (տե՛ս Ղ. Փիրղալեմյան, Նոտարք հայոց, Կ. Պոլիս, առանց տարեթվի, էջ 159), իսկ հետո նաև Հ. Աճառյանի (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանուններ, Երևան, 1946, հ. Գ, էջ 502), Հակոբ Արիմեցին ապրել և ստեղծագործել է մինչև XV դ. կեսերը: Ըստ նրանց, Հակոբ Արիմեցու նշանավոր «Մեկնութիւն

«Զմեղուցեալ գրիչս զՅակոբ մեղուցեալ միայնակեացս Արիմեցի՝ զսիրողս միայն բանի և յիրէնմին հետի, աղաչեմ յիշել ի Տէր Աստուած՝ ողորմի ասելով մեղուցեալ հոգոյս, և Տէր զձեզ յիշեսցէ յողորմութիւնն իւր, ամէն: Ի թուիս ՊՄԳ (=1404) գրեցի զայս սակաւ հարցմունքս՝ յետոյ քան զգրել զրոցս»⁶³:

1408 թ. Հակոբ Արիմեցին իր ուսուցչի՝ Գևորգ Երզնկացու խնդրանքով տոմարագիտության դասեր է անցկացնում նրա դպրոցում, իսկ հետո ընդառաջելով աշակերտների խնդրանքին նաև կազմում նրա ձեռագիր դասագիրքը: Զեռագրերում այն պահպանվել է «Ի խնդիրս հասարակաց օգտի» վերնագրով: Աշխատության սկզբում հեղինակը տալիս է գրքի ստեղծման պատմությունը. «Արդ, ես, Յակոբ Արիմեցի, աշակերտ Գէորգ բաբունապետին մեծի... Եզնկայի հոգևոր զաւակաց իմոց մանկանց... սոսկ անուամբ միայնակեացս Յակոբ, դասիւ սակաւ ինչ ի տումարական արհեստէս ուսուցար սոցա: Իսկ սոքա ծանուցեալ զդժուարութիւն իրին աղաչանօք խնդրեցին... գրով աւանդել նոցա... Եւ մեք առանց յապաղելոյ բուռն հարաք ոչ ըստ բոլոր արհեստին, այլ սակաւ ինչ ի գլխաւորագունից մասանց... ի մի վայր հաւաքեցար. է զի էր ուրէք, որ ծածուկ ունէր զտեսութիւն միտք բանին, մեք զայն պարզ և յայտնի բանիւ բացայայտեցար ի զուարճութիւն ուսումնասիրաց...»⁶⁴:

Այդ նույն ժամանակ է գրվել նրա մյուս աշխատանքը՝ «Հարցումն Գէորգ բաբունապետի և ծառայաբար կատարումն Յակոբ աշակերտի» վերնագրով: Տոմարական-եկեղեցական հարցերի շուրջ գրված մի աշխատություն է դա, որոնց Հովհաննես Սարկավապից հետո ոչ ոք չէր անդրադարձել և որի հրատապությունը պայմանավորված էր հայկական եկեղեցին մյուս եկեղեցիների ազդեցությունից զերծ պահելու մղումով: Գևորգ Երզնկացին դիմում է Հակոբ Արիմեցուն իբրև արդեն ճանաչում գտած տոմարագետի, կատարել տոմարական այդ բարդ հաշիվները:

Այնուհետև Հակոբ Արիմեցու գիտական ծառայության մեջ պետք է հիշատակել 1276 թ. Կիլիկիայում գրված իմաստասիրական աշխատությունների ժողովածուի լուսանցքներում 1410 թ. նրա կատարած դիտողությունները: Բացի դիտողություններից, նա լրացրել է Ներսես Շնորհալու «Մեկնութիւն բանից Սահմանաց իմաստասիրութեան Դաւթի» գործը:

տոմարի» գործը գրվել է 1448 թ.: Սակայն հետագայում պարզվեց, որ այն գրվել է 1416 թ. (Լ. Ս. Խաչիկյան, ԺԾ դարի հիշատակարաններ, հ. 1, էջ 180):

63 Լ. Ս. Խաչիկյան, ԺԾ դարի հիշատակարաններ, հ. 1, էջ 42:

64 Մատենադարան, ձեռ. № 74, Թ, 325ա, բ:

Հակոբ Արիմեցու ստեղծագործական կյանքի բեղմնավոր շրջանը կապված է Մեծոփի դպրոցի հետ:

XIV դ. վերջերին և XV դ. սկզբներին հայոց դպրոցների գլուխ էր կանգնած Տաթևի համալսարանը: Նրա հովանավորության ու ազդեցության տակ ստեղծվում էին կրթական նոր օջախներ: Երկրի քաղաքական ծանր ու աննպաստ պայմանների հետևանքով նրանց մի մասը քայքայվել ու անհետացել էին և նրանց փոխարեն ստեղծվել նորերը:

XV դ. սկզբներին Սյունյաց դպրոցների, հատկապես Տաթևի դպրոցի ազդեցության և հովանավորության տակ ստեղծվեց Քաջբերունյաց երկրի Մեծոփի դպրոցը, որը շուրջ 8 տասնամյակ կարողացավ պահպանել իր գոյությունը:

Հայտնի է, որ 1408 թ. Մեծոփի եկավ Գրիգոր Տաթևացին իր 100-ից ավելի աշակերտներով: Նա այստեղ կարգաց դասախոսություններ:

Գրիգոր Տաթևացուց հետո Տաթևի համալսարանը երկար ժամանակ չկարողացավ պահպանել հին ավանդույթները: Չնայած Տաթևացու աշակերտներից ոմանք փորձում էին այդ անկման առաջն առնել, սակայն երկրում տիրող դժնդակ պայմաններում, երբ հետզհետե խամրում էր մշակութային կյանքը, նրանց ծավալած մշակութային գործունեությունը հերոսական ջանքեր էր պահանջում:

Ահա այդ ժամանակ էր, որ Մեծոփի դպրոցը դարձավ Տաթևի արժանավոր հետևորդը: Այդ դպրոցի առավել ծաղկեցնողը, Տաթևի դպրոցի ծրագիրն այնտեղ հետևողականորեն իրականացնողը հանդիսացավ Քովմա Մեծոփեցին, որի շուրջ շորս տասնամյակ գոյատևող մանկավարժական գործունեության ընթացքում այն դարձավ մշակութային կարևոր կենտրոն, որ հանգամանալից հետազոտության էին ենթարկվում գիտության, գրականության և արվեստի գրեթե բոլոր բնագավառները:

Ինչպես պատմական սկզբնաղբյուրներն են վկայում, Մեծոփի դպրոցում գրությունը ավելի շատ ուշադրություն են դարձրել, քան եղել է որևէ այլ դպրոցում: Պատճառն այն էր, որ լանկեթեմուրյան արշավանքների ընթացքում ձեռագրական հսկայական կորուստներ էին եղել. հարկավոր էր դրանք բազմացնել և փրկել կորստից:

Քովմա Մեծոփեցին ձեռագրեր էր հավաքում, նորոգում, խմբագրում, լրացնում, հանձնարարում ընդօրինակության կամ անձամբ ընդօրինակում:

Գասավանդվող հիմնական առարկաների համար Մեծոփի էին հրավիրվում ողջ Հայաստանում ճանաչում գտած անվանի մասնագետներ:

Բնագիտական և տոմարագիտական հարցերի շուրջ դասախոսություններ կարդալու համար XV դ. 10-ական թթ. Մեծոփի է հրավիրվում Հակոբ Արիմեցին: Նա մինչև իր դասախոսություններին անցնելը Քովմա Մեծոփեցու խնդրանքով խմբագրում է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը» (2 հատոր): Այդ գովարին և աշխատատար գործի մասին պատմում է հենց ինքը՝ Հակոբ Արիմեցին. «Արդ ևս Յակոբ սոսկ անուամբ վարդապետս Արիմեցի եկի ի վանքս Մեծոփու առ Քովմա բարունապետն, և առի զՔարոզգիրքն զթ (2) հատորն, գոր աշխատասիրեալ էր քաջ հոնտորն՝ մեծն Գրիգոր: Եւ մեծաւ ջանիւ ընթերցեալ իմ դտիւ և զգիշեր զՅՄ (350) քարոզն և ի խնդրոյ բարունոյս Քովմայի... և հանի ճՁԳ (173) քարոզ...»⁶⁵:

Հակոբ Արիմեցին նշում է, որ բացի խմբագրելուց և կարգավորելուց, մի շարք քարոզներ էլ ինքն է գրել, նորից շարագրել, նպատակ ունենալով «Քարոզգիրքը» ավելի ամբողջական և օգտագործելի դարձնել. «Եւ է ի քարոզքս, զի զինքն որպէս էր հանց գրեցաք և թէ ուրէք-ուրէք բան կամ բառ, որ ի յինքն իրք մի կարիք ունէր՝ զայն լուծաք և բացաք, և է որ առաւելաւ ի քարոզքն, և է որ պակասեաց, և է որ յերկուցն և կամ յերիցն զգօրաւոր բանսն և զգեղեցիկսն ըստ կարգի շարագասեցաք և այնպէս գեղեցկայարմար ոճիւ զքարոզսն ի գլուխ հանաք: Եւ էր, որ ի հանդիսաւոր տօնսն, որպէս ի յաւագ ուրբաթուն և ի յարութեանն և յաստուածածնին և ի խաչին, որ ի յայլմէ վարդապետաց ասացեալ էր և չէին բանքն ըստ կարգի: և ըստ պատշաճի, զայն քարոզսն ի շնորհաց հոգոյն սրբոյ և այլ քարոզք վասն խոստովանութեան և վասն մահու վարդապետաց՝ նուաստութիւնս մեր գրուորն արտաճառեաց: Եւ է այլ քարոզք, որ ի կիսու գրեալ կամ այլ առաւել և նուազ՝ շնորհօք սուրբ հոգոյն աշխատասիրեցաք և ի գլուխ հանաք զբանսն ըստ կարգի, և է որ ի մեր գրոց, և է որ ի յայլ գրոց հարկաւոր: և ընտիր քարոզք՝ զայն այլ ի գիրքս մուծաք: Եւ այնպէս արարաք զսայ ըստ տկարութեանս մերում, շնորհօք Սուրբ Հոգւոյն, զի բովանդակն, որ ի գիրքս հաւաքեցաք, բովանդակն ըստ իւրաքանչիւր կարգի ասելի է և քարոզելի: Եւ ոչ մուծի աստ այնպէս քարոզ, որ ասենք, թէ այս ասելի է և այս ոչ, այլ բովանդակն ասելի է և քարոզելի...»⁶⁶:

Այդ աշխատանքը նա սկսել է իսառաքստի վանքում և ավարտել Մեծոփում, ինչպես որ նշում է նույն հիշատակարանում. «Արդ, սկսեալ եղև ընտիր Քարոզգիրքս ի թուխ հայի ՊԿԳ (= 1415) ի իսառաքստայ վանքն...»

65 Վ. Ս. Խաչիկյան, ԺԾ դարի հիշատակարաններ, հ. 1, էջ 653—654:

66 նույն տեղում, էջ 653—654:

բազում աշխատութեամբ և հոգեկան և մարմնական կրից փորձութեամբ...
Կատարեցաւ զիրքս յապրիլ ամսոյ ի Ա (1) և տրէի ի Զ (6), ի վանքս
Մեծոփու սուրբ Աստուածածնին գեղեցկաշէն տաճարին»⁶⁷;

Այստեղ ավելորդ չէ հիշատակել, որ Խառաքաստի վանքի (Վանա լճի
հյուսիս արևելյան մասում, Մեծոփից հարավ) հետ կապված է նույն ժա-
մանակի հայ նշանավոր մատենագիր Գրիգոր Խլաթեցու անունը: Վերջինս
խմբագրել, կարգի է բերել «Յայսմաուրք» ժողովածուները, նրանց մեջ
ավելացնելով նաև իր օրով նահատակվածների պատմությունը: «Յայս-
մաուրքի» այդ նոր խմբագրությունը կոչվել է իր անունով «Մերենց»:
Արտագործներն այն համարել են լավագույն օրինակը: Նա վերակազմել է
նաև Գանձարանները: Հնարավոր է, որ Հակոբ Արիմեցին և Գրիգոր Խլա-
թեցին ինչ-որ մի ժամանակաշրջան աշխատել են միասին, մասնավանդ, որ-
զրա օգտին խոսում են ձեռագրերում պահպանված որոշ տեղեկություն-
ներ: Այսպես, երբ Գրիգոր Խլաթեցուն բռնեցին և հավատքը շուրանալու
պատճառով նահատակեցին, «եկեալ հրեղէն լեզուն Յակոբ ճգնաւոր վար-
դապետն Արիմեցին աշակերտօք իւրովք և ազգականօք և բազում ժողո-
վրրօք և արարին կոծ մեծ ի վերայ նորա և եգին... ի տապանի ի փոքր
բլրին, որ է հանդէպ վանացն յարեմտեան կուսէն»⁶⁸:

Իսկ ձեռագրերից մեկում պահպանված Թովմա Մեծոփեցու հիշատա-
կարանում Գրիգոր Խլաթեցին և Հակոբ Արիմեցին հիշատակվում են կողք-
կողքի՝ իբրև այդ ժամանակների նշանավոր ուսուցիչ և մտածող «Յիշես-
ջիք ...զպիտականուն վարդապետս Թովմա... եւ զուսուցիչն մեր և զվար-
ժիչք՝ զաստուածաբան վարժապետն զԳրիգոր Տաթևացի... զՄարգիս և
զՎարդան, զԳրիգոր նահատակն Խլաթեցի, զՅակոբ ճգնաւորն Արիմեցի,
զԳալուստ Վաղանդեցի և զամենայն վարդապետք այժմեան ժամանա-
կիս, որ բազում երախտիս ունին ի վերայ մեր եւ ամենայն Հայաստանեայց
եկեղեցեացս...»⁶⁹:

Անդրադառնալով Հակոբ Արիմեցու խմբագրած «Քարոզգրքին», պետք
է ասել, որ այն օգտագործվել է հետագայում և զնահատվել ըստ արժան-
վույն: Այսպես, մի ընդօրինակության մեջ կարդում ենք. «Ի Թուխ Հայ-

⁶⁷ Նույն տեղում, էջ 655: Այստեղ պիտի նշել, որ հիշատակարանի գրիչը տրէի էԶ
(26)-ի փոխարեն սխալմամբ գրել է ի Զ. (6): 1415 թ. արև ամսի 26-ն է համընկել ապ-
րիլի 1-ի հետ (տե՛ս Բ. Քոստանյան, Տոմարի պատմություն, էջ 88-ի աղյուսակները):

⁶⁸ Հայ նոր վկաները, աշխատութեամբ Զ. Մանանդյանի և Զ. Աճառյանի, Վաղարշա-
պատ, 1903, էջ 270:

⁶⁹ Լ. Ա. Խաչիկյան, ԺՆ դարի հիշատակարաններ, հ. 1, էջ 451:

կազան տօմարի Պկէ (1418) գրեցաւ... Արդ, աղաչեմ յիշեցէք զՅովանէս
ստացողս... Դարձեալ յիշեցէք յաղօթս ձեր զՅակոբ վարդապետ Արիմեցին,
որ եկն ի հեռաստանէ և բազում աշխատութեամբ դայս ճշէ (177) բա-
րոզս և է ինչ, զի ինքն շարագրեաց ի շնորհաց սուրբ հոգոյն, զոր տացէ
նմա տէր աստուած մեր զփոխարէն վաստակաց իւրոց...»⁷⁰:

Գրիգոր Տաթևացու «Քարոզգրքի» մեկ այլ ընդօրինակության գրիչը
Հակոբ Արիմեցուն անվանում է այդ գործի շարադրողը. «Փրկեսցէ զմեզ...
աստուած... մանաանդ ստացողի սորա... և զգծողի... և շարագրողի
Յակոբ վարդապետի Արիմեցույ...»⁷¹:

Հակոբ Արիմեցու խմբագրած Քարոզգրքի միայն մեկ օրինակ է մեզ
հայտնի, որը պահպանվել է Լեհինգրադի արևելագիտության ինստիտուտի
№ 88 ձեռագրում: Դա հեղինակի ինքնագիրն է, որտեղ նա իր անունը նշում
է միայն իր կողմից նորից շարագրված քարոզների սկզբում կամ վերջում:
Իսկ կատարված խմբագրական աշխատանքի մասին ամբողջական գնա-
հատական տալու համար հարկ կլինի համեմատել Գրիգոր Տաթևացու քա-
րոզները դրանց խմբագրված տարբերակների հետ: Ձեռագրերում պահ-
պանվել են առանձին քարոզներ Հակոբ Արիմեցու անունով:

Ըստ երևույթին, Հակոբ Արիմեցու աշխատանքը «Քարոզգրքի» վրա
կարելի է համեմատել Գրիգոր Խլաթեցու «Յայսմաուրքների» վրա կատա-
րած աշխատանքի հետ:

Կարևորն այստեղ այն չէ, թե «Քարոզգրքը» իր ժամանակի գիտու-
թյան որ բնագավառին էր վերաբերում. կատարվող աշխատանքը ինքնա-
նպատակ չէր. մի կողմից օտար բռնակալների դերիշխանության և մյուս
կողմից, հարևան եկեղեցիների և, հատկապես կաթոլիկ եկեղեցու, ոտըն-
ձգությունների պայմաններում անհրաժեշտ էր ջանք շինայել անաղարտ
պահելու նախորդ դարերում ստեղծված հայկական մշակույթի ամեն մի
մասունքը: Իզուր չէ, որ XIV դ. հետո ընկած ժամանակաշրջանը հայ դրա-
կանության մեջ ընդունված է անվանել «ավերմունքի դարեր»⁷²: Բարձրա-
գույն վանական դպրոցներում անում էին ամեն ինչ, որպեսզի այդ ան-
կումն արգելակեն: «Նրանց մեծ ճիգերը ապարդյուն շեն մնում, նրանք
կարողանում են Հայաստանի որոշ թվով անկյուններում, գոնե ժամանա-

⁷⁰ Նույն տեղում, էջ 209, 210:

⁷¹ Նույն տեղում, էջ 210:

⁷² Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1970, էջ 400:

կալորայես, կուլտուրական և եկեղեցական անկման առաջն առնել»⁷³, — գրում է Մ. Աբեղյանը:

Հակոբ Ղրիմեցու ստեղծագործական կյանքում 1416 թ. եղել է նշանակալից տարի: Նրա բեղմնավոր աշխատանքի արդյունքները մեծ մասամբ պահպանվել են: Այդ տարի Մեծոփում է գրվել նրա աշխատություններից ամենակարևորը՝ «Մեկնութիւն տումարի», որը, ինչպես բնութագրում է ահադ. Լ. Խաչիկյանը, «երկար ժամանակ ուսումնական ձեռնարկի դեր է կատարել և առավելս, քան որևէ այլ գրվածք, գաղափար է տալիս միջնադարյան Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում քառյակ գիտությունների՝ թվաբանության, երկրաչափության, երաժշտության և աստղաբաշխության դժով դասավանդվող գիտելիքների ծավալի և բովանդակության մասին»⁷⁴:

1416 թ. Մեծոփում է գրված նաև Ղրիմեցու «Յաղագս ազգականութեան» աշխատանքը, որը պահպանվել է Մատենադարանի 6 տասնյակ ձեռագրերում: 3 տասնյակից ավել ձեռագրերում էլ պահպանվել է «Յաղագս պսակի ամուսնացելոյ» գործը, որը, ամենայն հավանականությամբ, կազմել է «Յաղագս ազգականութեան» գործի մի մասը կամ շարունակությունը և որը հետագա գրիչների կողմից անջատվել, դարձել է առանձին գործ: Այս վերջինները բարձր են գնահատվել ուսումնասիրողների կողմից: Միջնադարում ամուսնացողների տարիքի վերաբերյալ տարբեր կարծիքներ են եղել: Ինչպես մի շարք ժողովուրդների, այնպես էլ հայերի մոտ ամուսնանում էին շատ վաղ հասակում: Հայտնի է, որ Սահակ Պարթևը մի կանոնով ուզեցել է փոխել այն սովորությունը, որով թույլատրվում էր 12 տարեկանից ցածր երեխաների պսակը: Այնուհետև այդ խնդրով զբաղվել է ազգային օրենսդրական մի ժողով 554 թ. Դվին քաղաքում: Իսկ 1243 թ. Սսի ազգային ժողովը սահմանում է տղայի համար՝ 14, աղջկա համար՝ 12 տարեկան հասակը: Սակայն ժողովրդի մեջ գործել են այլ սովորություններ, որոնք տարբեր տեղերում տարբեր են եղել: Ամեն տեղ էլ, սակայն, սովորությունը՝ կանոնական կարգերով գրված չափահասության սահմանն իջեցրած է եղել մի քանի տարով: Իսկ XV դ. Հակոբ Ղրիմեցին գրում է. «Ըստ օրին, պետք էր իսկապես, որ փեսացուն լրիվ 16 և հարսնացուն լրիվ 14 տարեկան հասակին հասած լինեին, որպեսզի պսակ-

վեին, բայց մեր սուրբ հայրերը վատ ժամանակների պատճառով պսակվողների տարիքը երկու տարով իջեցրին... Չպետք է մանկահասակներին ամուսնացնել, քան այդ թույլատրված է, դրա համար ետ կացեք այդ շար սովորությունից»⁷⁵: Կարծում ենք իրավացի է Ա. Ղլտչյանը, երբ նշելով այդ մասին գրում է. «XV դարու այդ աշխատության մեջ... նա (խոսքը Հակոբ Ղրիմեցու մասին է — Ջ. է.) տիրող սովորության դեմ է դուրս գալիս: Պետք է ենթադրել, որ այդ վարդապետը ժամանակակիցների մեջ մեծ հեղինակություն ունեցող մեկն է եղել, հայ եկեղեցու մի մեծ վարդապետ, որ հանդգնել է կանոնական մի կարգ սահմանել ու հոգևորականության հրահանգություններ տալ: Հաս և չհասի աստիճանները որոշելու գործում նա ունեցել է ահադին ազդեցություն իր ետնորդների վրա, նրանով ղեկավարվել են դարեր շարունակ մինչ ի մեր օրերը»⁷⁶:

Հակոբ Ղրիմեցուն է վերագրվում մարդակազմության վերաբերյալ մի աշխատություն, որը այդ հեղինակի անունով ձեռագրերում մեզ չի պատահել: Այսպես, Մ. Չամչյանը գրում է. «Յակոբ վարդապետ Ղրիմեցի, որ արար դլոմոնենս կազմութեան մարդոյ և զազգազրութիւն ի խնդրոյ թովմայի Մեծոքեցոյ և զմեկնութիւն տումարի»⁷⁷:

Նույնի մասին կարդում ենք Մ. Բժշկյանի մոտ. «Յամի Տէառն 1403 Յակոբ վարդապետ Խրիմեցի ծաղկեցաւ, որ յօրինեաց դլոմոնենս մարդակազմութեան, ևս և զմեկնութիւն տումարի, և զոտանաւորս ինչ»⁷⁸:

Ձեռագրերում սակայն, կա նման մի աշխատանք «Ի չորից գոյացեալ զմարդն» սկսվածքով, որը ենթադրաբար վերագրվում է Հակոբ Ղրիմեցուն⁷⁹:

Ձեռագրերում պահպանված մի տեղեկության համաձայն Հակոբ Ղրիմեցին մահացել է 1426 թ. «ՊՂԳ. (1425) թուականին հանդեաւ նահատակութեամբ Գրիգոր վարդապետն Մերենց ի Քրիստոս, Հոգւոյ գալստեան կիրակէին, և ի միւս ամի ՊՂԵ (1426) Յակոբ վարդապետն Ղրիմեցի, հինգշաբթի, օր համբարձմանն...»⁸⁰: Հակոբ Ղրիմեցու գործերը քիչ են

75 Ա. Ղլտչյան, Հայ հին իրավունքը, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1913, № 1, էջ 49:

76 Նույն տեղում, էջ 48:

77 Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. 9, էջ 452, 453:

78 Մ. Բժշկյան, Ժանապարհորդութիւն ի կահատան և յայն կողմանս բնակեալս ի Հայկազանց, սերելոյ ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 335:

79 Լ. Ս. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ., էջ 27—29:

80 Լ. Ս. Խաչիկյան, Ժե դարի հիշատակարաններ, հ. 1, էջ 655:

73 Նույն տեղում, էջ 408:

74 Լ. Ս. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ., ՊԲՀ, 1971, № 2, էջ 27:

ուսումնասիրվել: Այսպես 1945 թ. «Բազմավէպ»-ում կարդում ենք. «Մեր մատենագրության մեջ քիչ ծանոթ դեմքերէն մեկը կրնանք նկատել Հակոբ Արիմեցիին: Քիչեր միայն խոսած են անոր մասին, առանց գաղափար մը տալու անոր ամբողջական երկերուն, անձին և կյանքին պարագաներուն»⁸¹:

Հոգովածագիրը անդրադառնալով Հակոբ Արիմեցու «Յաղագս ազգականութեան բաժանման» գործին, հեղինակի մասին գրում է. «Որքան բարեգութ, նույնքան արդարադատ և խիստ, զբաղած է իր ազգային բարոյական վերածնունդով»⁸²:

Հակոբ Արիմեցու բնագիտական գործերի մասին մասնավորապես խոսել է Լ. Խաչիկյանը, նշելով նրա գիտական մեծ վաստակը և մասնագիտական հմտությունը, միաժամանակ ընդգծելով նրա «Մեկնութիւն տումարի» աշխատության նշանակությունը միջնադարյան Հայաստանի տումարագիտության և տիեզերագիտության պատմության ուսումնասիրության գործում⁸³:

Հ. Աճառյանի մոտ նա նշվում է իբրև տումարագետ, ինչպես նաև որպես հեղինակ քարոզների, ազգականության և պսակի կանոնների, քերականական գործերի⁸⁴:

Հակոբ Արիմեցու մասին գրում է նաև Ս. Խ. Մովսիսյանը իր «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության» գրքում. «Հայոց հին մատենագրության մեջ շատ հայտնի է Հակոբ Արիմեցին, որը մաթեմատիկոս և տումարագետ է եղել և 30 տարուց ավելի տարբեր դրպրոցներում դասավանդել է վերոհիշյալ առարկաները»⁸⁵: «Ինչպես երեւում է,— այնուհետև գրում է Ս. Խ. Մովսիսյանը,— փորձված բարունակատ Մեծոփեցիի Արիմեցու ուժերը լրիվ չափով է օգտագործել, ոչ միայն որպես դասախոս, այլև նրա ձեռքով կազմել է տվել նաև դասագրքեր»⁸⁶:

Բարձր է գնահատում Արիմեցու տումարական գիտելիքները Բ. Թումանյանը իր «Հայ աստղագիտության պատմություն» գրքում, անվանելով

նրան «հմուտ տումարագետ»⁸⁷, որն ի տարբերություն մյուսների, «աշխատում է երևույթները բացատրել նաև փիլիսոփայական տեսանկյունով»⁸⁸:

Հակոբ Արիմեցու երաժշտական գիտելիքներին անդրադարձել է Ն. Քանճիզյանը: «Հակոբ Արիմեցին... մոտիկից ծանոթ է եղել հայրենի երաժշտատեսական մտքի զարգացման ուղիներին և... կարողացել է լրջորեն օգտվել այդ բնագավառում կուտակված հարուստ փորձից,— գրում է նա⁸⁹: Մասնագիտական հարցերի շուրջ խոսելով Ն. Քանճիզյանը նշում է, որ Հակոբ Արիմեցու «Մեկնութիւն տումարի»-ն կարդալով հասկանալի է դառնում, որ Դավիթ Անհաղթից մինչև Արիմեցին ընկած ժամանակաշրջանը երաժշտական տեսության ու պրակտիկայի մեջ մեծ տեղաշարժեր էին կատարվել, որոնց մասին Հակոբ Արիմեցին ոչ թե ինչ-որ մեկի հետ վիճում է, կամ ապացուցում, այլ «իմաստուն հանգստությամբ նկարագրում»⁹⁰: Հայ երաժշտական մտքի պատմության մեջ Արիմեցու կատարած գործը արժեքավոր է նաև նրանով, որ նա խոսում է հատկապես աշխարհիկ երաժշտության մասին⁹¹:

Այսպիսով, Հակոբ Արիմեցին միջնադարյան հայ բնագիտական մտքի ուշագրավ ներկայացուցիչներից է, որի աշխատանքները, սակայն, պատշաճ չափով չեն ուսումնասիրվել: Նրա աշխատանքներից և ոչ մեկը հրատարակված չէ, եթե չհաշվենք մի հատված «Հարցումն Գէորգ րաբունակապետի...» գործից, որ հրատարակել է Ա. Աբրահամյանը⁹²:

Պետք է փորձենք տալ նրա տումարագիտական երկերի գնահատականը, լրացնելու համար հայ տումարագիտության պատմության ամբողջական շղթան:

Հակոբ Արիմեցին միջնադարյան հայ տումարագիտության աչքի ընկնող վերջին ներկայացուցիչն է, քանի որ նրանից հետո Հայաստանի քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով գիտության և մշակույթի մեջ դիտվում է անկում, իսկ XVIII դ. սկզբից հայ տումարագիտական միտքը եվրոպական լեզուներից կատարված գիտական թարգմանու-

81 Խ. Այվազյան, Հակոբ Արիմեցի և իր «Յաղագս ազգականութեան» բաժանման» գրքի գիրքը, Բազմավէպ, 1945, № 1, էջ 12:

82 Նույն տեղում, էջ 13, 14:

83 Լ. Ս. Խաչիկյան, Հայ բնագիտական մտքը XIV—XVIII դդ.:

84 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 502—504:

85 Ս. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, էջ 437:

86 Նույն տեղում, էջ 438:

87 Բ. Քանճիզյան, Հայ աստղագիտության պատմություն, հ. 1, էջ 23:

88 Նույն տեղում, էջ 311:

89 Ն. Քանճիզյան, Ներդաշնակության հենքի մասին ուսմունքը Հայաստանում միջին դարերում (X—XV դդ.), Բանբեր Մատենադարանի, № 8, Երևան, 1967, էջ 105:

90 Նույն տեղում, էջ 110:

91 Նույն տեղում:

92 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 294—298:

թյունների միջոցով արդեն հաղորդակից է դառնում տիեզերագիտության արևակենտրոն համակարգին՝ դրանից բխող եզրակացություններով:

* * *

Երզնկայի դպրոցում գրված Հակոբ Ղրիմեցու տոմարագիտական երկու աշխատությունները պահպանվել են կամ առանձին, կամ միասին, երբեմն էլ մեկը մյուսի շարունակությունն է կազմում:

Այսպես, «Ի խնդիրս հասարակաց օգտին» իբրև առանձին գործ, իր այդ վերնագրով պահպանվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի երկու ձեռագրերում № 74 և № 8991:

Իսկ երկու ուրիշ ձեռագրերում՝ այդ նույն աշխատանքը առանց առանձին վերնագրի, պահպանվել է «Հարցումն Գէորգ րաբունապետի...» աշխատությունից անմիջապես հետո, իբրև նրա շարունակությունը, այդ ձեռագրերի համարներն են՝ 2017 (թ. 1ա—17բ՝ «Հարցումն Գէորգ րաբունապետի...»), իսկ 18ա—95ա՝ «Ի խնդիրս հասարակաց օգտին») և 5118 (թ. 293ա—298բ՝ առաջինը, 298—329բ՝ երկրորդը): Իսկ № 1849 ձեռագրում այդ երկու աշխատանքները ընդօրինակված են մեկը մյուսից հետո և ամեն մեկն իր առանձին վերնագրով (թ. 225ա—229ա՝ «Հարցումն Գէորգ րաբունապետի...», 229բ—250ա՝ «Ի խնդիրս հասարակաց օգտին»): Մի քանի ձեռագրերում էլ «Հարցումն...»-ը հանդես է գալիս առանձին, առանց մյուսի: Այդպես է Մատենադարանի № 5128 (թ. 270բ—278բ), № 2036 (թ. 226բ—240բ), № 1978 (թ. 8ա—14ա), № 1495 (թ. 164ա—166բ) ձեռագրերում:

Դժվար է ասել՝ դրանք միևնույն աշխատանքի տարբեր մասերն են, թե առանձին աշխատություններ: Հայտնի է, որ երկուսն էլ գրված են միևնույն տեղում, մոտավորապես նույն ժամանակ և միևնույն մարդու խընդրանքով: Երևի հենց այդ պատճառով էլ նրանք գրիչների մի մասի կողմից ընդօրինակվել են միասին: Չնայած երկուսն էլ տոմարագիտական գործեր են, բայց տարբեր են միմյանցից. մեկը հայոց տոմարին վերաբերող մի փոքրիկ դասագիրք է հիշեցնում, իսկ մյուսը՝ դավանաբանական-եկեղեցական հարցերի շուրջ հարևան եկեղեցիների հետ ունեցած տարաձայնությունների պատճառով գրված գործ:

Ինչպես արդեն խոսք եղավ վերևում, «Ի խնդիրս հասարակաց օգտին» աշխատությունը Երզնկայի դպրոցում կարդացած դասախոսությունների գրառումն է. ունկնդիրները ծանոթանալով տոմարի դժվարությունների հետ, ցանկացել են այդ ամենն ունենալ նաև գրավոր ձևով: Հեղինակը

նշում է, որ աշխատանքում շարադրված են տոմարական ոչ բոլոր հասկացությունները, այլ հիմնական մասերը:

Հարց ու պատասխանի ձևով գրված այդ ծավալուն գործը սկսվում է հայ մատենագրության տոմարագիտական երկերի մեջ տեղ գտած ավանդական հարցերով՝ «Հարցումն շրջանաց Արեգական և Լուսնի»⁹³, որտեղ ներկայացված են Արեգակի 28-ամյա, Լուսնի 19-ամյա և զատկացանկերի 532-ամյա շրջանները:

Ասում ենք «ավանդական», որովհետև այդ հարցերը կան նախորդ դարերի հեղինակների գործերում, ինչպես նաև տոմարական բովանդակություն ունեցող այլ անհեղինակ⁹⁴ աշխատանքներում: Այսպես, դրանք առկա են ինչպես «Յաղագս թուականին հոռոմոց»⁹⁵ անհեղինակ գործի, այնպես էլ Անանիա Շիրակացու «Տոմարի»⁹⁶ և Սամվել Անեցու տոմարական աշխատության մեջ⁹⁷:

⁹³ Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 326ա—328ա, 2017, Թ. 17բ—19բ:

⁹⁴ Տոմարական բովանդակություն ունեցող հայկական միջնադարյան ձեռագրերում հայ տոմարագիտների աշխատանքների կողքին հաճախ հանդիպում են այնպիսի անհեղինակ աշխատանքներ, ինչպիսիք են՝ «Յաղագս թէ յումմէ եղան տոմար ազգաց», «Յաղագս թուականին հոռոմոց», «Հարցումն Եսեբի ժամանակագրի առ Անատոլիոս», «Մեկնություն տոմարի Անդրէասայ» և այլն: Սրանց մի մասը, ըստ երևույթին, թարգմանված են այլ լեզուներից: Դա պետք է բացատրել նրանով, որ մինչև սեփական թվարկություն և եկեղեցական տոմար ունենալը հայերը կրոնական տոների համար առաջնորդվում էին հարևան ժողովուրդների տոմարներով, ուստի պետք է կարծել, որ Հայոց Մեծ թվականը ահմանելիս հայերեն թարգմանված էին քրիստոնեական աշխարհում հայտնի տոմարական մի շարք աշխատություններ:

⁹⁵ Մատենադարան, ձեռ. № 6869, Թ. 105ա—106ա: Մեկ ուրիշ ձեռագրում նույն հարցերն ընդօրինակված են «Հարցումն Եսեբի...» աշխատանքում (Մատենադարան, ձեռ. № 1973, Թ. 151բ):

⁹⁶ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, ԽԾ (45), ԽԶ (46), ԽԷ (48) կետերը: Ասենք, որ «Տոմարը» Շիրակացու գրչին պատկանելու մասին կա նաև այլ կարծիք (տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ 747): Ձեռագրական նյութերի համեմատությունից պարզվում է, որ Շիրակացու տոմարական հարց ու պատասխանները իբրև «Մեկնություն տոմարի Անդրէասայ», «Հարցումն Եսեբի ժամանակագրի առ Անատոլիոս» և «Յաղագս թուականին հոռոմոց» աշխատություններից են կաղմված, ինչպես որ նշել է Հ. Անասյանը (նույն տեղում): Եթե թվերի լեզվով արտահայտված, ապա 72 տոմարական հարցերից 55-ը այդ երեք աղբյուրների հետ են համընկնում, իսկ մնացած 17-ի կեսից ավելին այնպիսի հարցեր են շոշափում, որ մինչև Ա. Շիրակացին անպայման պիտի պարզարանված լինեին (օրինակ՝ Ի՞նչ է օլիմպիադ, ընդիբտոն, Ի՞նչ է լրումն զատկի և այլն): Որոշ հարցեր էլ կրկնությամբ հանդերձ, լրացված են հեղինակի կողմից: Վերջենք հայկական ամիսների մասին պատմությունը:

⁹⁷ Ս. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը, էջմիածին, 1952, № 2, էջ 37, 38:

Որքան էլ որ հարցերն ավանդական են, պատասխանները նույնու-
թյամբ չեն կրկնում նախորդ դարերից եկողներին: Հեղինակը աշակերտ-
ներին մատչելի ձևով պատմում է, որ Արեգակը և Լուսինը ունեն երկուա-
կան շրջաններ. մեծ կամ հասարակ և փոքր կամ հատուկ: Լուսնի փոքր
շրջանը 19 տարի է, երբ այն վերադառնում է իր շավղի այն կետը, որտե-
ղից նա սկսել է շարժվել «ստեղծման» պահից: Արեգակի փոքր կամ հա-
տուկ շրջանը 28 տարի է: Իսկ հասարակ կամ մեծ շրջանը, որը հավասար-
ապես վերաբերում է թե Լուսնին և թե Արեգակին, 532 տարի է, որից
հետո այդ երկու լուսատուները հայտնվում են միևնույն կենդանակերպի
միևնույն շավղում, շարաթվա միևնույն օրը, ինչպես որ եղել է «արարչու-
թյան» ժամանակ⁹⁸: Այնուհետև, տոմարական կոնկրետ սահմանումների
և հասկացությունների բացատրությունն անցնելուց առաջ նա տալիս է
տոմարի՝ իբրև գիտություն, փիլիսոփայական սահմանումը. «Գիտելի է, զի
ըստ շորից վարդապետական յեղանակաց բացակարարի վարդապետու-
թիւն տումարական արհեստիդ, այսինքն բաժանականան, սահմանակա-
նան, ապացուցականան և վերլուծականան»⁹⁹:

Հայ փիլիսոփայական մտքի պատմությանը ծանոթանալով, մեզ
համար պարզ է դառնում, որ իմաստասիրության այդպիսի քառակի բա-
ժանում կատարվել է Դավիթ Անհաղթի կողմից. «Չորս գոն տրամաբանա-
կան հնարք, և են այսորիկ. բաժանականն, սահմանականն, ապացուցա-
կանն և վերլուծականն»¹⁰⁰:

98 Մատենադարան, № 74, Թ. 326ա—328բ, 2017, Թ. 17բ—20ա:

99 Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 328 բ, 2017, Թ. 20ա:

100 Դավիթ Անյաղթ, Վերլուծութիւն «նեբաժութեանն» Պորփիրի, համահավաք քննա-
կան բնագիրը, Թարգմանությունը զբարբարից ուսուցիչն, առաջարանն ու ծանոթագրություն-
ները Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1976, էջ 16:

Այդ շորս մեթոդների մասին Դավիթը գրում է. «Նախագասի բաժանականն քան
զսահմանականն... վասն զի ամենայն որ առնելով զպիտանացուն ի բաժանմանէ բացա-
կատարց զսահմանն: Իսկ սահմանականն նախագասի ապացուցականին, վասն զի որպէս
ասէ Արիստոտել, սկիզբն ապացուցութեան սահման է (իբրք, «չորբարանչուր ապացուցի
սկիզբը այն սահմանումն է, թե ինչ է իրենից ներկայացնում տվյալ իբր»,—գրում է Արիս-
տոտելը (տե՛ս В. П. Зыдов, Аристотель, М., 1963, էջ 97)... Իսկ վերլուծականն ի վերջոյ
դասեցաւ, վասն զի հակադարձապէս ունի վերլուծութիւն առ բաժանումն, քանզի բաժա-
նումն ի պարզագունէն սկսանի, և ի շարադրեալսն երթնայ յանզի, իսկ վերլուծականն ի շա-
րագրելոցն սկսանելով ի պարզագոյնն երթնալ յանգի» (տե՛ս Դավիթ Անյաղթ, Վերլուծու-
թիւն «նեբաժութեանն» Պորփիրի, էջ 20):

Ահա էլ սկզբունքով էլ Հակոբ Արիմեցին տոմարագիտությունը բա-
ժանում է այդ շորս ենթամասերին. «զի որպէս սեռականագոյն սեռն ի ձեռն
բաժանականին տարորոշի ի տեսակս, և տեսակն ի ձեռն սահմանին ստո-
րագրեալ զանազանի յայլումն տեսակաց, և ապացուցականան հաւա-
տարմանա, և վերլուծականան քակտի յայնս յորոց և զոյացեալն զոյ,
ըստ այսմ օրինակի և զտումարն որպէս զսեռականագոյն սեռս բաժա-
նեմք ի զանազան մասունս իբրև ի տեսակս և զմասունս իբրև զտեսակ
սահմանաւ ստորագրեմք»¹⁰¹:

Քանի որ հայկական տոմարի դարավոր պատմության մեջ այդպիսի
գիտական մոտեցում խնդրին կատարվում է առաջին անգամ, ապա հեղի-
նակը հաշվի առնելով այդ հանգամանքը, տալիս է դրա բացատրությունը
հետևյալ կերպ. «Սե թէ որ ասիցէ՞ զի՞նչ է սահման սոցա, գիտիցէ՞, զի ըստ
իւրաքանչիւր զանազան բերումն արհեստին՝ սահման և ենթադրութիւն է
նմին. որով տարանջատի ի յայլոց մասանցն: Սե ապա ապացուցիւ հաւա-
տարմացուցանեմք զզժվարութիւն սոցա, և վերլուծականան քակտեմք
յայնս, յորոց և բաղկացեալն զոյ, քանզի առեալ զվերագիրն, քակտեմք
զնա յաւուրս, և զաւուրս ի ժամս, և զժամս ի մասունս, և զմասունս վեր-
լուծանեմք, յԱրեգականն և ի Լուսինն, յորոց և բաղկանան սոքա, նոյնպէս
և զայլ մասունս իմասցիս»¹⁰²:

Ինչպես տեսնում ենք, Հակոբ Արիմեցու այս դասախոսությունների
ունկնդիրները պետք է ունենային նախ և առաջ փիլիսոփայական գիտե-
լիքներ յորոշակի մակարդակ՝ դրանք հասկանալու և յուրացնելու համար:
Այնուհետև Արիմեցին անցնում է տոմարի առանձին հասկացություններից
մեկին՝ թվականին. «Արդ, այժմ առեալ ի ձեռն և զթուական մասն, զստո-
րաբաժանեալսն ի տումարէ՝ իբրև զտեսակ, և սահմանաւ բացայայտես-
ցուք զսա: Զի յառնենն առաջարկութիւն՝ զի՞նչ է թուական, ի լուծումն եզ-
րակացութիւն խնդրէ զսահման, զի ըստ քանոն իմաստասիրացն յամենայն
ուրէք զի՞նչ էն, սահմանաւ և կամ ենթադրութեամբ ճանաչի»¹⁰³:

101 Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 328բ, 2017, Թ. 20ա, բ:

102 Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 328բ, 329ա; 2017 Թ., 20բ, 21ա:

103 Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 329ա, 2017, Թ. 21ա: Այս թեզը նույնպես
գալիս է Դավիթ Անհաղթից, և, բնականաբար, հույն մեծ մտածողներից: Այսպես, Դավիթ
Անհաղթի մոտ կարգում ենք. «...երկակի ասի գոյ ապացուցականն, քանզի մին ի նոյնս
իսկ յիրողութեանցն բնութեան ասի գոյ... Իսկ միւսն յորոշմունս, այս ինքն՝ ի նկատմունս
միայն...» (տե՛ս Դավիթ Անյաղթ, Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտելի, համա-
հավաք քննական բնագիրը, Թարգմանությունը զբարբարից ուսուցիչն, առաջարանն ու ծանո-

Հայոց թվականի հիմնադրման ժամանակի մասին, Հակոբ Արիմեցիին հետևում է նախորդ դարերի տոմարագետների և մատենագիրների մեծ մասի կողմից ավանդված տեղեկություններին, որոնք այն կապում են Մովսես Եղվարդեցի կաթողիկոսի անվան հետ: Հայտնի է, որ այդ հարցի շուրջ այլ կարծիքներ էլ են եղել: Այսպես, Մ. Օրմանյանը նշում է. «Տոմարական գործողությունը այնպիսի հաստատուն կերպով կապված է Մովսեսի անունին հետ, որ անհնար է դայն անկէ զատել և ուրիշ հայրապետի մը անունին հետ միացնել, թեպետև աստ և անդ ներսեսի և Հովհաննեսի անունները տվողներ էլ գտնվին»¹⁰⁴:

Հակոբ Արիմեցիին Մովսեսի անունը հիշատակելիս ընդգծում է՝ «տմանք յայլոց ասեն, բայց այս է ճիշտն»¹⁰⁵:

Հակոբ Արիմեցիին թվականի հիմնադրման պատճառը կապում է էաս Աղեքսանդրացու 532-ամյա զատկացուցակի հետ, որը կազմվեց Անդրեասի 200-ամյա ցուցակից ինը տարի հետո և կարգավորեց զատկի հաշվմանը՝ առաջացած խառնաշփոթությունը. «Հանճարեղը ժամանակին ի միասին եկեալ կարգեցին թուական Հայոց, զի ուղղեցեն զզատիկն Տեառն ալլօքն հանդերձ, բայց ոչ կարացին ի ճշմարտութեան կալ անսխալ զամս ինն: Իսկ ի Ժ. (10) երորդ թուականին էաս անուն ոմն իմաստասէր Աղեքսանդրացի ուշիմ և հանճարեղ մտօք ժողովեաց առ ինքն զարս կորովամիտս և նրբահայեացս, և կարգեցին զանտարակուսելի օրինակն, որ կոչի Շ. (500)-եակ և ապա ուղղեցան ամենայն կանոնեալքն, և այս եղէ պատճառ եղելոյ թուականիս...»¹⁰⁶:

Խնդրո առարկա աշխատությունում դիտողության նյութ դարձած հարցերից հիշատակության է արժանի Լուսնի 19-ամյա շրջանին վերաբերող բացատրությունը, որտեղ Հակոբ Արիմեցիին քննադատաբար է մոտենում նախորդ մեկնիչների տեսակետին և աշխատում տալ ուրույն բացատրություն:

Թագրությունները Ս. Ս. Արեշատյանի, Նրևան, 1967, էջ 62): Այս կապակցությամբ տես նաև Գալիբ Անյադը, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի, էջ XVII:

104 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 1, էջ 569:

105 Մատենադարան, ձեռ. ՆՆ 74, ք. 331բ, 2017, ք. 24ա:

106 Մատենադարան, ՆՆ 74, ք. 331ա, բ, 2017, ք. 23բ:

Առհասարակ, պետք է ստել, որ 532-ամյա շրջանը և նրա հայտնաբերողը՝ էաս Աղեքսանդրացին բարձր են զնահատված հայկական սկզբնաղբյուրներում: Հետաքրքրական է նշել, որ էասից մեկ հարյուրամյակ առաջ նույն շրջանը հայտնաբերված էր Վիկտորիուս Ակուփտանացու կողմից՝ լատին եկեղեցու համար: Արևմուտքում այն հայտնի է «Վիկտորյան» կամ «Գիտնիսյան» անունով: Դյուլորինն էասի մասին գրում է, որ եթե նա

Հայտնի է, որ 19-ամյա շրջանը հայտնադործվել է մ. թ. ա. 433 թ. Աթենացի գիտնական Մեթոնի կողմից և օգտագործվել լուսնային ամսի և արեգակնային տարվա տևողությունները համաձայնեցնելու համար: Բանն այն է, որ 235 լուսնային ամիսը մի քանի ժամ ճշտությամբ հավասար է 19 արեգակնային տարվա: Այսպես, եթե A տարում ապրիլ ամսվա 13-ին եղել է լիալուսին, ապա (A+19)-րդ տարում նորից այդ ամսվա նույն օրը կլինի Լուսնի այդ հասակը: Քանի որ լուսնային ամիսները վերցնում էին 29 և 30 օրերով (լուսնային ամիսը = 29 ու կես օր), ապա հասկանալի է, որ 235 այդպիսի ամիսները 19 տարում տեղավորելը այնքան էլ դյուրին գործ չէր: 19 տարվա ընթացքում 7 անգամ ավելացվում էին 13-րդ՝ լրացուցիչ լուսնային ամիսներ, որոնք հունարեն կոչվում էին «էմբոլիսմիկ»՝ ավելացրած: Այդ տարիները, ըստ ընդունված տեսակետի, հետևյալ կարգն ունեին՝ 3, 6, 9, 12, 15, 17, 19, այսինքն՝ 19-ամյա շրջանի այդ տարիներում էին ավելացվում լրացուցիչ ամիսներ: Իսկ հրեական և ալեքսանդրյան 19-յակի կարգը այսպիսին էր՝ 3, 6, 8, 11, 14, 17, 19¹⁰⁷:

Հայկական ձեռագրերում պահպանված լուսնային աղյուսակներից երևում է, որ փոքրիկ տարբերությամբ՝ էմբոլիսմիկ տարիների կարգը համընկնում է դրա հետ՝ 3, 6, 8, 11, 14, 16, 19¹⁰⁸:

19-ամյակի հաշվումները կատարվում էին նաև վերագրիներին սիստեմով: Քանի որ լուսնային տարին արեգակնայինից պակաս է 11 օրով, ապա ամեն մի տարվա սկզբի Լուսնի հասակին գումարելով 11 կարելի է ստանալ հաջորդ տարվա սկզբի Լուսնի հասակը: Եթե այն անցնում է 30-ից, ապա պիտի 30-ը հանել: Այս դեպքում էլ մեծ ճշտության հասնելու համար, այսինքն 19-ամյակի առաջին տարվա վերագրին հասնելու համար, հարկ է լինում ցիկլի վերջին տարում վերագրել 11-ի փոխարեն վերցնել 12¹⁰⁹:

Օտնոբ էր 532-ամյա շրջանին, ապա պիտի կարծել, որ Վիկտորիուսն է եղել առաջին միտք հղացողը (E. Dulaurier, Recherches sur la chronologie Armenienne, էջ 32): Նույն պիտի 532-ամյակ կազմել են եգիպտացի Անեիանոսը և Պանոպոլը, որոնք այդ շրջաններով էս են զնացել մինչև «արարչություն» (նույն տեղում):

107 Н. Идельсон, История календаря, с. 140—145;

108 Մատենադարան, ձեռ. ՆՆ 2001, ք. 43բ, 44բ, 1973, ք. 48բ, 49ա:

109 Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, Энциклопедический словарь, т. 22А, СПб, 1897, с. 953.

Այս մասին հայ տոմարագետներն իրենց մեկնություններում գրում էին, որ 19-ամյակի վերջում կուտակվում են Լուսնի շարժման մեջ հաշվի չառնված մասունքներ և դառնում մեկ օր:

Այսպես, «Մեկնությունն տոմարի Անգրէասայ» աշխատությունում կարգում ենք. «դիմն և դտասն մասունն, որ ամի ամի յաւելու ի Լուսնէ և ի տասն և յին ամին լինին 34Ա (361)... որ լինի օր մի, որ յաւելու ի վերադիրս ազգաց»¹¹⁰: Նույն բացատրությունը, քիչ թե շատ փոփոխված, գտնում ենք «Տիեզերագիտություն և տոմար»¹¹¹ գործի մեջ, ինչպես նաև Հովհաննես Սարկավազի¹¹², Հովհաննես Կոզեռնի¹¹³ և Սամվել Անեցու¹¹⁴ աշխատություններում:

Հակոբ Արմեցին այս նույն հարցի շուրջ խոսելիս պնդում է, որ «Աւուր աւուր առնէ ի տարին մասն մի պակաս, որ լինի միանգամայն ի մանր մասնական մասանց ի տարին ժժ (19) մասն պակաս աւուր աւուր պակասեալքս ի Լուսնէն: Եւ մասունքս այս ամի ամի պակասեալ առնէ ի ժժ (19) ամն 34Ա (361) մասն...»¹¹⁵:

Ունկնդիրների մոտ սա զարմանք է առաջացնում, ուստի նրանք դիմում են Հակոբ Արմեցուն այսպիսի հարցով. «Զարմանալի իրս երևի աստ: Արդ եթէ օրս ի պակասութենէ ընթացից մանր մասնականցս կատարի, որպէս ցուցաւ, ապա զի՞րդ ասի ի տոմարս, թէ ընթանայ Լուսինն ի տարին 3ԾԴ (354) օր և ժժ (19) մասն և մեկնիշ տոմարին զօրս զայս ասէ, թէ պատճառի յժժ (19) մասանց, որ ամի ամի յաւելու ի Լուսնէն եւ... առնէ օր մի... Վարանիմ յայս: Աղաչեմ պարզաբար բացայայտել զի մեր այսպէս գիտեմք և ի մեկնաց տոմարաց... թէ ի յաւելեալ մասանց լինի օրս, և դուք ի պակասութենէ մասանց ցուցիք»¹¹⁶:

Հակոբ Արմեցու պատասխանը բավականին ընդարձակ է ու մանրամասն: Նա նշում է, որ «Նուրբ է քննութիւն սորա և ուշիմ քննողաց է յայտնի սա, զի ոչ ըստ ուղիղ զծի Արեգականն պարտ է իմանալ, այլ ընդդիմաբար. և մի իմանալ զաւելին ի բաղկացութիւն աւուրն, այլ ընթացս ճանապարհին, աւելի ընթացից Լուսնին: Զի կրկին է յաւելումն. զի է յա-

ւելումն, որ զօրն գոյացուցանէ, և է յաւելումն, որ զընթացս պատճառէ: Այն յաւելումն մասանց, որ զօրն գոյացուցանէ, ի մասունք Արեգականն, զի Արեգականն է գոյացուցանել զօրն... իսկ մասունք Լուսնիս ոչ գոյացուցանէ օր, այլ պակասեցուցանէ: Բայց պատճառէ զընթացս Լուսնին օր մի, յաւելու ի ճանապարհս իր»¹¹⁷:

Ինչպես տեսնում ենք, սրանով Հակոբ Արմեցին տոմարագիտության բնագավառում հայտնագործություն չի անում: Սակայն այս օրինակը մեզ թույլ է տալիս ասելու, որ նա օգտվելով նախորդ դարերի հայ տոմարագետների մեկնություններից, իր հերթին խորամուխ է եղել ամեն մի հարցին, փորձելով տալ իր սեփական բացատրությունները, գրանով իսկ զրավելով արժանի և ուրույն տեղ հայ միջնադարյան տոմարագետների շարքում:

Եկեղեցական տոներից (չհաշված Զատիկը) Հակոբ Արմեցին քրննարկման առարկա է դարձնում հատկապես «Առաջավորը»-ը: Եկեղեցական այդ տոնը մյուս քրիստոնյա ժողովուրդների մոտ չկա¹¹⁸: Այն՝ Զատիկի նման, 35 օրվա շարժականություն ունի և ընկնում է հունվարի 11-ից մինչև փետրվարի 15-ը, այսինքն, զատիկից 10 շաբաթ առաջ:

«Վասն է՞ր ասի Առաջաւոր» հարցին Հակոբ Արմեցին պատասխանում է. «Վարդապետք եկեղեցւոյ ըստ բազում եղանակի մեկնեն զառաջաւորն, բայց մեզ ոչ է փոյթ ի տեղիս յայս ըստ վարդապետական մեկնութեան առնել զխնդիրն առաջաւորութեան, այլ ըստ տոմարական արուեստիս յայսմ տեղուց խնդրել արժան է»¹¹⁹:

110 Մատենադարան, ձեռ. № 74, ք. 342ա, ր. 2017, ք. 36ա, ր.

118 *Տե՛ս Մ. Меликсет-Бекоев, Грузинский извод сказания о поете «араджа-вор».—Христианский восток, т. 5, 1917, СПб, с. 73—111: Նա գրում է. «Հայկական եկեղեցու կողմից որույն զարգացման ուղին վերջնականապես ընտրելու հետևանքով հունական եկեղեցին չէր կարող մնալ առանց որոշակի կանխակալ միտմի, և յուրաքանչյուր հարմար և անհարմար դեպքում յիսկաբյուրեր այն: Հենց այս կապակցությամբ հունական եկեղեցական մատենագրության մեջ սկիզբ է առնում հայերի դեմ ուղղված, այսպես կոչված, «մերկացնող» գրականություն: Նման գործերից ամենալայն համարվը ձեռք բերեց «Առաջավոր» կոչված պահլի մասին գրույցը» (էջ 73—74):*

Այս տոնը կապվում է Գրիգոր Լուսավորչի անվան հետ, բայց սկզբնական շրջանում հայտնի էր և ընդունված էր նաև վրացիների կողմից, որոնք բառը ազավաղելով դարձրել էին «ալաջոր»: Իսկ հետագայում երկու եկեղեցիների տաքաձայնությունների շարքում դասվում է նաև «առաջավորը» (էջ 74—75):

119 Մատենադարան, ձեռ. № 74, ք. 351ա, 2017, ք. 46ա:

110 Մատենադարան, ձեռ. № 2017, ք. 412բ:

111 Անանյա Երևակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 80, 81:

112 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 223:

113 Մատենադարան, ձեռ. № 2292, ք. 275ա:

114 Մատենադարան, ձեռ. № 2017, ք. 95բ, 6089, ք. 221ա:

115 Մատենադարան, ձեռ. № 74, ք. 341ա, 2017, ք. 34բ:

116 Մատենադարան, ձեռ. № 74, ք. 342ա, 2017, ք. 36ա:

Այս առիթով հարկ է արձանագրել, որ XV դ. այդ առաջագիմ մտածողը, որքան էլ որ իր ժամանակի բերումով գիտություն տարբեր հարցերին մոտենում էր հոգևորական-եկեղեցական սահմանափակ տեսանկյունից, սակայն, միաժամանակ, իր աշխատություններում տուրք չի տվել այդ կարգի դատողություններով շեղումներին և դիմել է դրանց՝ միայն և միայն անհրաժեշտության դեպքում: «Առաջավորի» հետ կապված տարածայնությունները աննշան տեղ չեն գրավում հայ եկեղեցու պատմության մեջ, և դրան շանդրադառնալու փաստը խոսում է այդ տեսակետի օգտին: «Նախ ասի Առաջաւոր ըստ իրին դրութեան,—շարունակում է Ղրիմեցին,—զի սա նախադաս է և առաջին, սկիզբն գոլով պահոց և զատկի, այլ և տէրունական տօնից»¹²⁰:

«Առաջավոր» անվան երկրորդ բացատրությունը Հակոբ Ղրիմեցին կապում է նրա՝ միշտ առաջ խաղալու հետ, և այդ առիթով նշում, որ հայկական եկեղեցական բոլոր տոները ամփոփված են հետևյալ 13-ի շուրջ. 1) Առաջավոր, 2) Բուն Բարեկենդան, 3) Զատիկ, 4) Համբարձում, 5) Հոգեգալուստ, 6) Սուրբ Գևորգ, 11) Հիսնակամուտ, 12) Սուրբ Հակոբ և վերջապես 13) Ութօրեքը¹²¹:

Այնուհետև սկսնակ տոմարագետներին Հակոբ Ղրիմեցին սովորեցնում է, որ եկեղեցական բոլոր տոները բաժանվում են երկու խմբի. մի մասը պետք է տոնել շաբաթվա որոշակի օրում, իսկ մյուսների համար այդ պարտադիր չէ: Ըստ որում դրանցից մի մասը շարժվում, տեղափոխվում է, մյուսը՝ ոչ: Շարժվողներն էլ իրենց հերթին բաժանվում են երկու խմբի. մի մասը ետ և առաջ են շարժվում, մյուսները՝ միայն առաջ: Ըստ այդմ էլ վերոհիշյալ 13-ից 7-ը առանց օրագյուտի են տոնում՝ 1) Բարեկենդան, 2) Համբարձում, 3) Հոգեգալուստ, 4) Սուրբ Գրիգոր, 5) Վարդավառ, 6) Սուրբ Գևորգ, 7) Ութօրեքն: Իսկ մյուս 6-ը՝ օրագյուտով են տոնում՝ 1) Առաջավորը, 2) Ավագ լրումը, 3) Աստվածածինը, 4) Սուրբ խաչը, 5) Հիսնակամուտը, 6) Սուրբ Հակոբը: Առանց օրագյուտի հաշվով տոները կատարվում են այն օրը, երբ պատահի՝ լինի լուր օր, թե կիրակի: Իսկ օրագյուտով հաշվով տոներից շուրջ ետ և առաջ են շարժվում 1) Աստվածածինը, 2) Սուրբ խաչը, 3) Հիսնակամուտը և 4) Սուրբ Հակոբը, իսկ երկուսը՝ միշտ առաջ. դրանք են «Առաջավորը» և «Ավագ

լրումը»¹²²: Այստեղից էլ՝ «վասն միշտ յառաջ խաղալոյս՝ ասացաւ Առավաւոր»¹²³:

«Ու զի՞նչ է պատճառն յաւետ յառաջ շարժութեան Առաջաւորիս»¹²⁴,— հարցի պատասխանից իմանում ենք, որ պատճառը Զատիկն է. եկեղեցական հայրերն ամեն կերպ աշխատում են այնպիսի ճշգրտությամբ հաշվել զատկական լրումը, որ հանկարծ միևնույն տարվա մեջ երկու Զատիկ չտոնվի: Եվ քանի որ «Առաջավորն» էլ կապված է Զատիկ հետ, նույնպես առաջ է շարժվում. «Զայս վասն հարկի Աւագ լրմանն արարին, զի յառաջ խաղացուցեալ զնա, արտաքս հանցեն քան զհասարակածն, զի մի գուցէ անկանիցի Աւագ լրումն ի ներքոյ հասարակածին և առնիցէ զմին տարին Բ. (2) Զատիկ...»¹²⁵:

Ունկնդիրների այն հարցին, թե ինչո՞ւ չի կարելի կրկնակի Զատիկ անել, Հակոբ Ղրիմեցին պատասխանում է. «Այս է վնասն, զի զհոյս իմաստասիրաց հակառակասիրացն ճշտութեան ծաղր տայ առնել, զի տգէտ և յիմար երևեցուցանէ ոչ կարել առնել տարրոշումն սկզբան տարւոյն և վախճանին, զոր յայտնապէս սահմանեաց Աստուած յամենայն Զատիկս, զի ի մին տարին Բ. (2) Զատիկ բերէ և զգալ տարւոյն Զատիկն խափանէ, զի ի նիսան ոչ առնէ...»¹²⁶: Այնուհետև նա նշում է, որ «տարի» ասելով երկու բան են հասկանում՝ իսկական և «ըստ պատահման». առաջինը կապվում է «արարչության» և աստվածաշնչային այլ դեպքերի հետ և սկսվում է նիսան ամսից (այստեղ փաստորեն խոսքը աստղագիտական տարվա մասին է, որն սկսվում է գարնանային օրահավասարից), իսկ մյուսը՝ «ի մարդկանէ եղաւ, զի ազգք և ազինք ի յորում եղանակի տարւոյն ըստ հաճութեան և ըստ պատահման որ եղին իրեանց թուական, զօրն զայն, յորում եղին ղթուական, սկիզբն տարւոյ եղև նոցա և նոր տարի անուանեցին զայն»¹²⁷:

¹²² Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 353ա—354բ, 2017, Թ. 48ա—49բ:

¹²³ Հայոց եկեղեցական տոները հաշվելու բարդությունների մասին գաղափար կազմելու համար կարելի է նայել В. В. Болотов, Об армянском церковном годе, Христианский восток, т. 1, 1912, էջ 267—276, որտեղ հեղինակը գրում է. «Որոշակի տարվա համար հայկական տոմարը կազմելը հասարակ գործ չէ, և ես վստահ չեմ՝ կկարողանամ արդյոք կատարել այդ աշխատանքը... ճշգրիտ» (էջ 267):

¹²⁴ Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 354բ, 2017, Թ. 49բ:

¹²⁵ Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 354բ, 2017, Թ. 49բ:

¹²⁶ Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 357ա, 2017, Թ. 52ա:

¹²⁷ Մատենադարան, № 74, Թ. 357բ, 2017, Թ. 52բ:

¹²⁰ Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 351բ, 2017, Թ. 46ա:

¹²¹ Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 353ա, բ, 2017, Թ. 48ա, բ:

Հակոբ Արիմեցին երրայական ամիսների օրինակի վրա ցույց է տալիս, որ եթե Ավագ լրումը լինի ավելաց 4-ին (կամ որ նույնն է՝ մարտի 20-ին), և այդ օրը շաբաթ լինի, ապա Ձատիկը կընկնի հաջորդ օրը՝ ավելաց 5-ին (կամ որ նույնն է՝ մարտի 21-ին): Այդպիսով, մի տարվա մեջ երկու Ձատիկ կստացվի՝ մեկը տարեսկզբին՝ նիսանին, մյուսը՝ տարիվերջին, ավելացի վերջին օրը:

Այն հարցին, թե Ավագ լրումը կիրակի օր հանդիպելու դեպքում ինչու՞ հենց այդ օրը Ձատիկ չեն տոնում, Հակոբ Արիմեցին պատասխանում է, որ մինչև նիկիական ժողովը այդպես էին անում, բայց հետո Կոստանդինոս արքայի որոշումով Ձատիկը վերցնում են լրման հաջորդ կիրակին, որպեսզի այն չհամընկնի հրեականի հետ¹²⁸:

Հակոբ Արիմեցին բացատրում է նաև դատկական լրման «Լուսնի շորեքտասան» անվանումը, որ այն գալիս է հնուց և կապված է աստվածաշնչային դեպքերի հետ, բայց իրականում լուսինը 15 օրական է լինում: Պարզապես հին անվանումն է պահպանվել, մանավանդ, որ դրանով այն տարբերվում է սովորական լիալուսինների անվանումից¹²⁹:

Որքան էլ որ աշխատության սկզբում հեղինակը ընդգծում է, թե աշխատել է վերցնել տոմարի ոչ բոլոր, այլ զլիսավոր հարցերը և բազմիցս նշում է, որ չի ուզում բացատրությունը ձգձգել և դրանով իսկ ձանձրացնել ու հիասթափեցնել ինչպես ունկնդիրներին, այնպես էլ ընթերցողներին, բայց և այնպես աշխատանքը ամբողջական և ուսանելի է: Անկասկած, բարձրագույն վանական դպրոցներում տոմար ուսումնասիրողների համար այն դասագրքի դեր է կատարել: Եվ եթե հայկական ձեռագրերում նրա ընդօրինակությունների թիվը մեծ չէ, ապա դրա միակ պատճառը մի քանի տարի հետո նույն հեղինակի կողմից գրված ավելի ծավալուն աշխատությունն է՝ «Մեկնութիւն տումարի», որի ընդօրինակությունների թիվը անցնում է մի քանի տասնյակից: Այս վերջինիս համար հիմք է ծառայել «Ի խնդիրս հասարակաց օգտի» աշխատությունը:

«Հարցումն Գէորգ բարունապետի...» աշխատանքը նվիրված է դուստր եկեղեցական հարցերի: Այստեղ մեզ հետաքրքրողը Հակոբ Արիմեցու կողմից քննարկված ժամանակագրական այն հարցերն են, որոնք հայկական տոմարագիտական երկերում շատ չեն. դրանք մեզ հայտնի են Հովհաննես Սարկավագի մի աշխատությունից, որի մասին խոսք կլինի

128 Մատենադարան, № 74, Թ. 360ա, 2017, Թ. 55ա, Բ:

129 Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 362ա, Բ, 2017, Թ. 57ա, Բ:

ստորև, և ձեռագրերում «Յաղագս ատուրց հնգից գիտելոյ» վերնագրով պատահող գործում, որը շատ նման է խնդրո առարկա աշխատանքին¹³⁰, Պետք է ենթադրել, որ դա հենց «Հարցումն Գէորգ բարունապետի» աշխատությունն է՝ առանց վերնագրի և հեղինակի բառերի:

Հին աշխարհի ժամանակագրությունը թե՛ Մերձավոր Արևելքում, թե՛ Հունաստանում, և թե՛ Հռոմում կատարվել է հիմնականում այսպես կոչված «էպոնիմիկ» տարիներով՝ կապված փարավոնների և թագավորների անունների հետ¹³¹:

Քրիստոնեության տարածումից հետո ժամանակի չափումը ստանում է առանձնահատուկ նշանակություն: Քրիստոնյա տոմարագետները իրենց հաշվումները կատարելիս՝ դրանք կապում էին նաև նախորդ դարերում տեղ գտած աստվածաշնչային դեմքերի ու դեպքերի հետ:

Այդպես է նաև հայ մատենագրության մեջ և, մասնավորապես, Հակոբ Արիմեցու աշխատանքներում: Ժամանակագրությունը սկսում էին «արարչության» վեցերորդ օրից, այսինքն Ադամի «ստեղծումից» հետո: Այդ մասին Արիմեցին գրում է. «Սկիզբն դարուց և ժամանակաց թուելութեան վեցերորդ օրն է արարչութեան, որ թուէ զթուականն, զի յառնելն թուականն ոչ ասեն կալ յարարչութեան առաջին ատուրն, այլ թէ կալ յԱդամայ հետէ, և Ադամ ի վեցերորդ օրն ստեղծաւ»¹³²:

Կան «արարչագործության» բազմաթիվ, միմյանցից խիստ տարբեր թվականներ: Հայկական ձեռագրերում Ադամից Քրիստոս ընկած ժամա-

130 Մատենադարան, ձեռ. № 2017, Թ. 421ա—427բ:

131 Ժամանակագրական այդ կարգի ցուցակների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում Պաղոմոսի «Թագավորների կանոնը», որն սկսվում է Քարելոնի Նարեհասար թագավորի գահակալության օրից և շարունակվում մինչև մ. թ. սկիզբը: Կան ձեռագրեր, որոնց մեջ ժամանակագրությունը շարունակվում է մինչև ավելի ընդօրինակող գրչի ապրած ժամանակաշրջանը: Կանոնը կազմված է ըստ եգիպտական շարժական տոմարի. նրանում կան բարեխլական, պարսկական, պաղոմոսյան, հռոմեական և բյուզանդական թագավորների գահակալության տարիները (տե՛ս Н. Идельсон, История календаря, с. 66; Э. Букерман, Хронология древнего мира, с. 76, 104):

132 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 49բ:

Սակայն դա չէր խանգարում նրանց տոմարական հաշվումներ կատարել արարչության նախորդ օրերի համար: Այսպես, ըստ հայկական ձեռագրերի, «առաջին» օրը եղել է երբայական տոմարով ավելաց ամսի 1-ին (=մարտի 17), օրը՝ կիրակի, իսկ Արեգակն ու Լուսինը ստեղծվել են շրբորդ օրը՝ շրբեջարթի և այլն: Այդ հաշվումների մեջ մեծ տեղ էր հատկացվում Արեգակի և Լուսնի «ստեղծման» պատմությանը, քանի որ դրանք եղան քի նշան և ի ժամանակս և յատուրս և ի տարիս...» (տե՛ս Գիրք Աստուածաշունչը, Վեներիկ, 1860, ծնունդը Ա 14):

նակահատվածի վերաբերյալ հանդիպում են Անդրեասի, Անանիա Շիրակացու, երբայական, Շ. (500)-եկի և այլ անուններով ժամանակագրություններ: Գրանց բազմազանության և միմյանց նկատմամբ ունեցած խիստ տարբերությունների մասին է խոսում հետևյալ հաղորդումը, որն առկա է ինչպես Հովհաննես Սարկավազի, այնպես էլ Հակոբ Ղրիմեցու մոտ. «Բազումք յառաջնոց վարդապետաց անտի գրեցին ըստ իւրաքանչիւր դիտման բնութեամբ կիրառեալ վասն ստուգելոյ ամսոյն անցելոց, սակայն ոչ միաբան հանդիպին միմեանց, նաև Եւսեբն վկայէ այսմ յաղագս ոչ գիտելոյ ստուգիւ զանցեալ ժամանակս, և հաստատէ զայս բանիւ Տէառն, որ ասաց թէ. «ոչ է ձեզ գիտել զժամս և ժամանակս զոր հայր եղ յիւրում իշխանութեան»¹³³ և ասէ Եւսեբի և վասն անցելոյն յայտնեաց: Զի ըստ Անդրէասայ ժամանակագրութեան լինի յԱղամայ մինչև ի Հայ թուականն ՅՃԾԵ (6155) և ըստ կայսերական պատմության ԲՉԿԱ (5761) և ըստ Անանիայ Շիրակունոյ ԲՃՂԸ (5198) և ըստ երբայականին ԲՍՁԹ (6289)... ըստ Շ. (500)-եկին ԲՁՀՁ (5976)»¹³⁴:

Տոմարագետները այս կամ այն դեպքի ժամանակը ճշտելու համար օգտվում էին նախընթաց շրջանի ժամանակագրություններից և զուգահեռներ անցկացնում տարբեր թվականների՝ օլիմպիադի, Հոմմի հիմնադրման, ինչպես նաև էպոնիմիկ տարիների միջև:

Քանի որ հայկական ձեռագրերում տոմարագիտական երկերի հիմնական առանցքը Ալեքսանդրիայի ժողովում հայտնագործված 532-ամյա շրջանն է, ապա տրամաբանական էր սպասել, որ եղած բազմաթիվ ժամանակագրություններից հայ տոմարագետները պետք է ընդունեին այդ ժողովում որոշվածը: Զեռագրերում այդ մասին որոշակի աշխատանք չկա. եղած տվյալներն էլ քաղում ենք Անանիա Շիրակացու, Հովհաննես Սարկավազի և Հակոբ Ղրիմեցու գործերից:

¹³³ Գործք, Ա7:

¹³⁴ Մատենադարան, ձեռ. № 2017, Թ. 2ա—3ա և փոքրիկ տարբերություններով Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 223, 224: Այս հատվածում հաշիվն արված է ոչ թե Ազամից-Քրիստոս ընկած ժամանակի, այլ Ազամից մինչև Հայոց Մեծ թվականի համար:

Ազամից մինչև Քրիստոս ընկած ժամանակամիջոցը շափում էին նաև դարերով: Գրանք մեծ ժամանակահատվածներ էին, որոնցից յուրաքանչյուրը նշանավորվում էր մի անունով կամ դեպքով: Սակայն այս մեթոդի ճշտությունն էլ անմիջապես վիճակում էր: Մատենադարանի ձեռագրերից մեկում այդ մասին կա հետաքրքիր մի տեղեկություն. «Երատեսնադարանի ձեռագրերից մեկում այդ մասին կա հետաքրքիր մի տեղեկություն. «Երատեսնադարանի գրեցան, ոչ թէ ի մտանել դարուն ևր կամ յիւանել, այլ ի դարն, ուր լինէր

Հարկ է նշել, որ էսա Աղեքսանդրացու կազմած զատկացանկը նշանավոր էր ոչ միայն իր տևականությամբ՝ 532 տարի, նրա զլիսավոր առավելությունը նախորդների համեմատությամբ կայանում էր նրանում, որ 532 տարի անցնելուց հետո այն նորից կարելի էր օգտագործել¹³⁵:

Սույն հանգամանքի շնորհիվ հնարավոր էր դառնում այդ շրջաններով ոչ միայն ապագա հաշիվներ կատարել, այլև հետադարձ՝ ընդհուպ մինչև աշխարհի «արարչության» առասպելական թվականը:

Ալեքսանդրյան խմբի աշխատանքների մասին ճիշտ գաղափար կազմելուն օգնում են մի այլ ՇԼԹ. (532)-ամյա զատկացանկ կազմող տոմարագետի մասին պահպանված տեղեկությունները: Դա Իրիոն կոչված տոմարագետն է, որի կազմած ցանկերը կիրառություն են գտել թյուզանդիայում: Իրիոնի գործը մեր ձեռագրերում պատշաճ չափով չի արտացոլվել: Պահպանված սակավ տեղեկություններն էլ, սակայն, օգնում են մեզ լավ հասկանալու երկու զատկացանկերի սկզբունքային տարբերությունները: Այսպես, Անանիա Շիրակացու Զատկի ճառում կարդում ենք. «Առնէ ժամանակագրութիւն նորաձայն, հակառակ աստուածային գրոց եւ ամենայն ժամանակագրաց, նոյնպէս եւ տումար...»¹³⁶:

Միջնադարում Իրիոնի կազմածը ընդունվում է շատ եկեղեցիների կողմից, սակայն հայ եկեղեցին հավատարիմ է մնում ալեքսանդրյան տոմարագետների դրույթներին: Այդ մասին Անանիա Շիրակացին հայտնում է, որ շնչած այն հանգամանքին, որ Իրիոնը «ընդ ամենայն պշխարհն զիւրն հաստատեաց: Բայց մեք բաւ եւ մի լիցի հաւանել ժամանակագրութեանն Իրիոնի՝ շփոթելոյ եւ յաճախելոյ արտաքոյ աստուածային գրոց. եւ մի ընդունել զթիւս տումարի նորա զխաբողականս»¹³⁷:

Ըստ հայկական աղբյուրների, Իրիոնի ժամանակագրությունը սխալ է այն պատճառով, որ նա ճիշտ չի օգտվել նախընթաց շրջանի ժամանակագրություններից. «ոչ ըստ յաւետ բնութեանն Եւսեբեա և ոչ ըստ Անդրէասայ համեմատեալ...»¹³⁸:

հուշակառք նշան՝ զայն կոչէին դարագլուխ. և այս յայտ անտի է, որ մինչև ի ծնունդն Քրիստոսի ոչ որ կարաց ասել, թէ որքան էր» (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1999, Թ. 200ր):

¹³⁵ Եթե, իհարկե, հաշվի չառնվեն հուլյան տոմարում տեղ գտած թերությունները, որոնք նկատվեցին և վերացվեցին XVI դարում (Գրիգորյան տոմար):

¹³⁶ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 296:

¹³⁷ Նույն տեղում:

¹³⁸ Մատենադարան, ձեռ. № 1973, Թ. 145ա:

Այսպիսով, մեզ համար պարզ է դառնում, որ հայ եկեղեցին Աղեքսանդրիայի տոմարագետների կազմած 532-ամյա զատկացանկը ընդունելու հետ մեկտեղ ընդունել է նաև նրա ժամանակագրությունը: Այս վերջինիս մասին մանրամասներ իմանում ենք Հովհաննես Սարկավապից¹³⁹ և Հակոբ Արիմեցուց: Այդ աղբյուրները մեզ տեղեկացնում են, որ էսոսի խումբը ժամանակագրությունն՝ սկսած «արարչությունից» կազմել է 532-ամյա շրջանների համեմատ, Ադամից մինչև Քրիստոս ընկած ժամանակամիջոցը ընդունելով 5420 տարի¹⁴⁰: Այն կոչվել է «Բուն»¹⁴¹ կամ «Շ(500)-եկի»¹⁴² թվական: Այն օգտագործվել է վերոհիշյալ աշխատանքներում կատարված տոմարական հաշիվներում: Դրանք հիմնականում վերաբերում են Քրիստոսի առասպելական կյանքի հետ կապված և հիմնական համարվող հետևյալ հինգ դրվագներին՝ «լուծյուն Եղիսաբեթի, Ավետում Կուսին, Մնունդ, Մկրտություն և Խաչելություն»:

Մինչև դրանց հաշվումներին անցնելը Հակոբ Արիմեցին նշում է. «Յազագս աուրց հնգից ստուգութեամբ քննեալ ըստ տոմարական արհեստից և անսխալ ցուցման զաուրցն պատկեր, զոր անհնար է ըստ բազում ջանից այլոց ազգաց քրիստոնէական տոհմից անսխալ բերել զաուրցս զպատկեր. վասն որոյ յոյժ շառագունին ի յաղթիլ սմին»¹⁴³:

139 Այդ տեղեկությունները մենք գտանք Ա. Աբրահամյանի հրատարակած «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» գրքում զետեղված «Մեկնութիւն տոմարին հայկազնեայ» աշխատանքի մեջ, որը պահպանվել է Մատենադարանի 2 ձեռագրերում, որոնցից և ոչ մեկի մեջ նշված չէ Հովհաննես Սարկավապի անունը: Հրատարակողը ելնելով մի շարք հանգամանքներից այն իրավամբ վերագրել է Հովհաննեսին: Ինչպես քիչ հետո կտեսնենք, Հակոբ Արիմեցին նշում է, որ տոմարական այդ հաշիվներն անելիս ինքն օգտվել է Հովհաննես Սարկավապից:

140 Հետաքրքրական է նկատել, որ Հովհաննես Կոզեռնը այդ թիվը կապում է Անդրեասի անվան հետ (Մատենադարան, № 1999, Թ. 27բ): Նույնպիսի կարծիք է նաև Մ. Չամչյանը, (Մ. Չամչյան, ժամանակագրություն, Պատմություն հայոց, Կ. Պ, էջ 3), իսկ Ա. Աբրահամյանի «Հայոց գիր և գրություն» գրքի մեջ այն կոչվում է «աղեքսանդրյան» թվական և հավասար է 5423 (կամ 5425)-ի (տե՛ս Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրություն, էջ 125): Իսկ Պանոզորի և Անիանոսի անունով հայտնի այբբանդրյան էրան սկսվում է մ. թ. ա. 5492 թվականից (տե՛ս Փ. Ա. Брокгауз, И. А. Ефрон, Энциклопедический словарь, т. 38А, СПб., 1903, с. 744):

141 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 228:
142 Նույն տեղում, էջ 224: Հակոբ Արիմեցու մոտ պատահում է ինչպես «Բուն» և «Շ. (500)-եկի» այնպես էլ «Բուն թուական Շ. (500)-եկին» անվանումները (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 2017, Թ. 3բ, 4բ—5ա):

143 Մատենադարան, ձեռ. № 2017, Թ. 1բ:

Մյուսուհետև շեշտում է, որ այդ հինգ օրվա տոմարական հաշվումներն անելիս օգտվել է Հովհաննես Սարկավապի աշխատանքներից, համառոտելով և ավելի մատչելի դարձնելով դրանք ուսումնասեր անձանց համար. «Մանիր աստ բարունի իմ, զի ոչ եթէ զիմ ջանից ցուցանեմ զքաջութիւն, այլ զՍարկավապ վարդապետին, որ հասարակ ամենեցուն յայտնի է առն քաջութիւն ի գիտութիւն մակացութեանս այս: Չնորայն աշխատութիւն և զվաստակ ջանից, զոր փարթամ և երկար բանիւք շարագրեալ է զաուրցս ստուգութիւն, մեք զայն ջանիւ համառատեցաք, վասն ուսումնասեր անձանց, զի առ ձեռն պատրաստ և դիրին լիցի ի տրամաբանութիւն անիրաւ հակառակորդաց յաղագս այսմ իրի»¹⁴⁴:

Այդ հաշվումներից կտանք միայն թվականները: Դրանք ամեն մի տոնի համար երեքն են՝ «Շ. (500)-եկի», Հոռոմեական և Հայկական: Վերջին երկուսը հաշված են՝ յուրաքանչյուրն իրենց ելակետային թվականից 532-ամյա շրջաններով ետադարձ շարժումից: Հոռոմեականի համար դա մ. թ. 248 թ. էր, որը համարվում էր Հոռոմի հիմնադրման 1000-ամյակի լրանալու տարին, իսկ հայկականի համար՝ 552 թ., այսինքն Հայոց Մեծ թվականի հիմնադրման տարին:

Ավելի հասկանալի դարձնելու նպատակով որոշեցինք այդ թվականները տալ մի աղյուսակի միջոցով, մանավանդ որ մինչ այժմ ուսումնասիրողների կողմից դրանք առանձին ուշադրության չեն արժանացել:

Աղյուսակ № 1145

Հինգ տոները	Շ-եկի թվական	հոռոմեական թվական	հայկական թվական
Հղություն Եղիսաբեթի	5418	278	506
Ավետում Կուսին	5419	279	507
Մնունդ	5420	280	508
Մկրտություն	5450	310	6
Քաչելություն	5453	313	9

144 Նույն տեղում, Թ. 1բ, 2ա:
145 Տվյալները կազմված են ըստ Հովհաննես Սարկավապի (Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 222—235) և Հակոբ Արիմեցու «Հարցումն Գէորգայ...» (Մատենադարան, ձեռ. 2017, Թ. 1ա-17բ) աշխատության հաղորդումներին:

Ինչպես երևում է աղյուսակից, Քրիստոսի ծնունդը «Բուն» կամ «Շ-եկի» թվականով կատարված է համարվել աշխարհի «արարչագործություն» 5420 թվականին:

Դրանից առաջ եղած դեպքերը Ավետումը՝ 5419-ին, Եղիսաբեթի հղությունը՝ 5418-ին, իսկ Մենդից 30 տարի անց՝ Մկրտությունը (5450) և, վերջապես, 33 տարի անց՝ Խաչելությունը (5453):

Նույնպիսի հարաբերությամբ վերցրած են Հոռոմեական և հայկական թվականները, բայց ոչ թե «արարչությունից» սկսած և ժամանակի բնական ուղղվածությամբ հաշված, այլ 532-ամյա շրջանների պարբերությամբ:

Այսպես, օրինակ, Մնունդին հայկական թվականը 508 է: Սա նշանակում է, որ Մնունդը համապատասխանում է հայկական ՇԼԲ. (532)-ի 508-րդ տարվան. խոսքը Լուսնի հասակի, Զատիկի և եկեղեցական մյուս տոների համընկնելու մասին է: 30 տարի անց մկրտությունը չէր կարող գտնվել նույն ՇԼԲ. (592)-ի ժամանակագրական սահմանների մեջ, քանի որ դրա ավարտին մնում էր 24 տարի (իրոք, $532 - 508 = 24$): Ուրեմն, մ. թ. 24 թվին, ըստ այդ հաշվումների, ավարտվում է հայկական ՇԼԲ. (532) շրջանը և սկսվում նորը¹⁴⁶: Այս մյուսի 6-րդ տարվան էլ համապատասխանում է Մկրտությունը ($24 + 6 = 30$): Մկրտությունից երեք տարի անց, այսինքն ՇԼԲ. (532)-ի 9-րդ տարվան, բնականաբար, կհամապատասխանի Խաչելությունը:

Դժվար չէ կռահել, որ «Հայկական» թվականի համար ասվածը վերաբերում է նաև «Հոռոմեականին», այն տարբերությամբ միայն որ Հայկականի համար իբրև հենակետ է ծառայել 552 թ., իսկ Հոռոմեականի համար՝ 248 թ.¹⁴⁷, ինչպես արդեն ասվեց վերևում:

146 Ի դեպ, եթե մ. թ. 24 թ. սկսվել էր հայկական մի նոր ՇԼԲ, ապա այն կավարտվեր 556 թ. ($24 + 532 = 556$): Մինչդեռ, հայտնի է, որ Հայոց Մեծ թվականը հիմնվել է մ. թ. 552 թ. և կազմվում է ՇԼԲ-ի ընդունման հետ: Այս մի քանի տարվա տարբերությունը չի վրիպել ուսումնասիրողների ուշադրությունից (տե՛ս Մ. Չամչյան, Ժամանակագրություն, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 6): Ենթադրվում է, որ հայերը Քրիստոսի առասպելական Մնունդը համարել են ընդունված ժամանակից 4 տարի առաջ:

147 Հաշվումները ցույց են տալիս, որ նույնպիսի խզում կա նաև Հոռոմեական ՇԼԲ. (532)-ի և Քրիստոսի թվականի միջև: Իրոք, եթե Մենդին Հոռոմեական թվականը 280 է (ինչպես երևում է աղյուսակ N 1-ից), ապա այդ ՇԼԲ. (532)-ն կավարտվեր մ. թ. 252 թ., մինչդեռ դրա փոխարեն ունենք 248 թ.: Մեր կարծիքով, սա բացատրվում է այն պարզ պատճառով, որ հաշվումները կատարվել են հայ տոմարագետների՝ սովյալ դեպքում Հովհաննես Սարկավազի և Հակոբ Արիմեցու կողմից: Բայց ինչպես հետո արիթմետիկ կունենանք հա-

Այժմ տեսնենք, թե ինչպես է ներկայացված այդ երեք թվականների հարաբերությունը: Մանիր վասն առաջին ատուրն, որ է յղութիւն Եղիսաբեթի, զի Բուն թուականն ի նմին ամին էր ԲնԺԸ (5418): Արդ, այսու գիտացի զՀոռոմին: Կալ զԲուն թուականդ Շ. (500)-եկին ԲնԺԸ (5418) և բեր ի վերայ ՃԶ (180) լինի ԲՇՂԸ (5598), որոշեա Շ. (500)-եակ շրջանիւ, մնաց ՄՀԸ (278), և այս է թուական Հոռոմին. և այսու գիտ զթուականն Հայուն. բեր ի վերայ ՄԻԸ (228), առնէ ՇԶ (506) և այս է թուականն Հայոց»¹⁴⁸:

Ինչպես տեսնում ենք, այդ երեք տարբեր թվականների միջև եղած հարաբերությունն այսպիսին է. Հինգհարյուրյակի և Հոռոմեական թվականների տարբերությունը հավասար է 180-ի, իսկ Հոռոմեականի և Հայկականի՝ 228: Վերջիններ N 1 աղյուսակից Քրիստոսի առասպելական կյանքի հինգ դրվագներից որևէ մեկի համապատասխան թվականները օրինակ՝ Մենդի համար դրանք 5420, 280, 508 են: 5420-ից կարելի է հանել տասը հատ 532-ամյա շրջան, կմնա 100: Ուրեմն, կունենանք 100, 280, 508: Դրանց տարբերությունները, իսկապես, 180 և 228 են: Կամ վերջիններ Մկրտության թվականները՝ 5450, 310, 6, կամ որ նույնն է՝ $130 + 310 = 440$ և $310 + 228 = 538$. Այստեղ էլ ստացվում է՝ $130 + 180 = 310$ և $310 + 228 = 538$. Այս վերջինից պիտի հանել 532-ամյա շրջանը, կստացվի 6: Ահա այդ հաշվումների մասին Հակոբ Արիմեցու բացատրությունը. «Ի Մկրտութեան Քրիստոսի էր թուականն Շ. 500)-եկին ԲնՄ (5450) և Հոռոմին՝ ՅԺ (310), իսկ Հայոցն՝ Զ. (6), զի ի Մենդեանն Քրիստոսի Հայոց թուականն ՇԸ. (508) էր, երբ Լ. (30) այլ հաշուիս մինչև ի Մկրտութիւն, լինի ՇԼԸ. (538) երթ զշրջանն ՇԼԲ. (532), մնաց Զ. (6), և այն է ի նոր սկսեալ շրջանէն»¹⁴⁹:

Մտղվելու, երբ խոսքը գնում է դուռ տոմարական հաշիվների, և ոչ թե Քրիստոսի կյանքի դրվագների մասին, Հոռոմեական թվականը վերցվում է 248:

148 Մատենադարան, ձեռ. N 2017, Թ. 5ա:

Իսկապես, $5418 + 180 = 5598$, $5598 - 532 = 10$ և 278 մնացորդ. $278 + 228 = 506$:

Այս նույն հաշվումները Մնունդի համար Հովհաննես Սարկավազի մոտ այսպես են կատարված. «Կալ զթուական Հինգհարիւրեկին ի Մնունդն Փրկչին ԲնԻ (5420), զհանապազորն ի վերայ բեր ՃԶ. (180), լինի ԲՈ (5600), որ է թուական Հոռոմի... կալ ՄԶ. (280), որ է թուական Հայոց: Կալ զթուական ԲնԻ (5420), հան տաս Շ. (500) բոլոր, մնայ հարիւր, ած ի վերայ ՆԸ. (408) զհանապազորն, լինի ՇԸ. (508), որ է թուական Հայոց Մենդեան Փրկչին» (տես Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 233):

149 Մատենադարան, ձեռ. N 2017, Թ. 11ա:

Հակոբ Արիմեցին նշում է նաև, որ Քրիստոսի կյանքի հետ կապված հինգ օրերի տոմարական հաշվումները սխալներով են գրանցվել տոմարատետրերում. «Բազումք ոչ գիտելով զխորանն սխալ նշանեցին... զի ոչ ճանաչեցին զամն, թէ նահանջ էր, թե ոչ, ... վասն որոյ սխալեցան: Իս այս յայտ ի տոմարատետրերդ է... Զի այս յայլոց ազգաց քրիստոնէից է սխալեալ... որ թէ շատ հնարին և թէ սակաւ, ոչ կարեն զպատկեր աուրցն անսխալ բերել, վասն այն ճշմարիտ գիտեմք, զի սուտ են նորայ»¹⁵⁰:

Երևի դա է եղել պատճառը, որ Հակոբ Արիմեցու ուսուցիչը՝ Գեորգ Երզնկացին, զիմել է նրան վերոհիշյալ հինգ տոների տոմարական ճշգրիտ հաշվումները ստանալու նպատակով: Այդ մասին նշվում է աշխատության հենց վերնագրում և սկզբի տողերում. «Զհրաման հարկի բարունույդ իմոյ հրաշալի և զվարդապետաց պետի թորգոմեան տոհմի քաջ փաղերայի Գէորգ վարժապետի... ընկալա հնազանդ ծառայս քո և աշակերտ Յակոբս Արիմեցի»¹⁵¹: Կատարելով այն ժամանակների համար կարևոր և շնորհակալ գործ, նա չի մոռանում նշել, որ դա պետք չէ իրեն վերագրել, և որ ինքը օգտվել է Հովհաննես Սարկավագից¹⁵², ինչպես արդեն ասվեց վերևում:

Այսպիսով, պարզ է դառնում, որ 532-ամյա շրջանն ընդունելու հետ միասին հայ տոմարագիտները ընդունել են նաև նրա հետ կապված ժամանակագրությունը: Ծրգրիտ տոմարական հաշվումներ անելիս նրանք՝ «արարչությունից» մինչև Քրիստոս ընկած ժամանակահատվածի մասին եղած բազմաթիվ տվյալներից օգտագործել են Շ. (500)-եկի թվականը և 532-ամյա շրջանի պարբերաբար կրկնվելու հատկությունը: Այդ մասին են վկայում հետևյալ տողերը, որոնք առկա են և Հովհաննես Սարկավագի և թե Հակոբ Արիմեցու մոտ. «Բազումք զրեցին վասն ժամանակացն անցելոց և ամենքեան անմիաբան զու: Զի որպէս արուեստ բժշկութեան ոչ ի սկզբանց ամենայնի ճշմարտիւ գիտացեալ եղև, այլ առ

սակաւ սակաւ, նոյնպէս և շրջաբերութիւն Արեգական և Լուսնի առ սակաւ սակաւ գիտացեալ եղև ի ձեռն Շ. (500)-եակ բոլորիդ, այլ ոչ թուականալ Աղամայ. և այս գիտք աուրցս ըստ Շ. (500)-եակ թուականին է էսանց Աղեքսանդրիայ անտարակոյս բոլորին, որ զանցեալն և ի հանդերձեալն ունի զստուգութիւն, և ոչ ըստ այլոց անմիաբան թուականաց»¹⁵³, Ավարտելով մեր խոսքը Հակոբ Արիմեցու՝ Երզնկայի զպրոցում ծավալած գործունեության մասին, կարող ենք վստահ ասել, որ նույն զպրոցն ավարտած այդ վարդապետը վայելում էր իր ժամանակակիցների, այդ թվում նաև ուսուցչապետ Գեորգ Երզնկացու, հարգանքը: Նրան էին դիմում ոչ միայն հայ տոմարի տարբեր հասկացություններ ուսանելու և յուրացնելու, այլև եկեղեցական վիճաբանական հարցեր պարզաբանելու նպատակով, որոնք կապված էին տոմարական հաշիվների հետ, և որոնց՝ XI դ. հետո ոչ ոք չէր անդրադարձել:

* * *

Հակոբ Արիմեցու տոմարագիտական կարևոր աշխատանքը նրա «Մեկնութիւն տոմարին» է, որում ամփոփված են Մեծոփի զպրոցում կարդացած նրա բնագիտական և տոմարագիտական դասախոսությունները:

Երկի վերնագիրը և շարադրանքում պատահած վկայակոչումները մտածել են տալիս, որ հեղինակը մեկնում է որոշակի մի աշխատանք: Ինչ աշխատանք է դա, ինչ բովանդակություն ունի, երբ է գրվել և ում կողմից: Ահա հարցեր, որոնց լուծումը պահանջում էր ձեռագրանյութերի մանրագնին բաղդատում: Բարեբախտություն պետք է համարել, որ ձեռագրերից մեկում պահպանվել է հետևյալ հիշատակարանը. «Արդ. ես՝ Յակոբ վարդապետ Արիմեցի, ի թուիս հայոց ՊԿՆ. (1416) զՏումարն դաս ասացի ի հռչակաւոր վանքս Մեծոփոյ, ի խնդրոյ թովմա բարունապետի և աշակերտաց նորին: Արդ, վասն զի բազում տոմարատետրք, որ աստ կային՝ Պատճէնք նոցա ոչ համաձայն գտանէին միմեանց ըստ շարադրութեան կարգի, այլ յետ և յառաջ շարադրեալք էին: Վասն որոյ հարկ եղև մեզ ըստ կարգի նոր մեկնելիս, զոր արարաք ի շնորհաց Սուրբ Հովտյն, շարադրել զտոմարս մեծ Հայոցն, զի զիրին լիցի ուսումնա-

¹⁵³ Մատենադարան, ձեռ. № 2017, Թ. 2բ—3ա և Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 223, 224:

¹⁵⁰ Նույն տեղում, Թ. 4ա, ր:

¹⁵¹ Նույն տեղում, Թ. 1ա, ր:

¹⁵² Ասենք, որ Հովհաննես Սարկավագի նշված աշխատության մեջ նույնպիսի հաշվումներ կատարված են նաև աստվածաշնչային տոանձին այլ դեպքերի համար. այսպես՝ այդ հաշվումների «արարչությունը» տեղի է ունեցել Հայկական 409 թվին (Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 226, 227): Հայկական 409-ին է համապատասխանել նաև ելքը Եգիպտոսից և այլն (նույն տեղում, էջ 227):

սէր մակացու արանց: Այլ և ի շատ սորայ զհոռմայեցոցն և զերբայեցոցն Պատճէն ևս եղար, զի այս Գ. (3) ազգիս հարկաւորք են ի տումարագիտութեան գործս, զի դրուք և մուտք յերկոտասան յազգս տումարաց սոքա են: Այլ և զմեկնիչն տումարիս զկնի սոցա եղար, շարագրեցար, զի առ ձեռն պատրաստ լիցի խնդրողին զսա...»¹⁵⁴:

Ինչպէս տեսնում ենք, Հակոբ Արիմեցիին ծանոթանալով դպրոցում եղած տումարատետրերին, և դրանք գտնելով խառը և անմխիթար վիճակում, ստիպված է եղել նախ կարգի բերել, խմբագրել և հետո միայն մեկնել դրանք, ըստ որում նա կարգավորել է ինչպես հայոց, այնպես էլ հոռմայեցոց և երբայեցոց տումարները:

Տումարական բովանդակություն ունեցող հայկական միջնադարյան ձեռագրերը նայելուց մեզ համար պարզ դարձավ, որ տարբեր ժողովուրդների տումարների տեսական շարադրանքը ամփոփված է «Պատճէն տումարի» կոչվող մի շարադրանքում:

Նախ ասենք, որ «պատճէն» բառը հայկական միջնադարյան մի շարք աշխատություններում օգտագործված է ոչ միայն իր սովորական «ընդօրինակություն», այլ նաև աշխատության առանձին «մաս», «զլուխ», «բաժին» իմաստով¹⁵⁵:

Այդ աշխատությունը մեզ է հասել բազմաթիվ ձեռագրերով և հատուկ նշանակություն ունի միջնադարյան հայ տումարագիտական երկերի շարքում:

Ոչ ծավալուն, բայց մեծարժեք ու շատ կողմերով հետաքրքրական այդ աշխատության կարևորությունը պայմանավորված է նրա կենսական նշանակությամբ: Այստեղ առանձին գլուխներով՝ «պատճէններով» շարագրված է ինչպես հայկական, այնպես էլ հոռմեական, հունական, ասորական, երբայական, հին արաբական, եթովպական, եգիպտական, ասիական, կապադովկիական, բյուրանական, աղվանական, վրացական և պարսկական տումարական¹⁵⁶ համակարգերի տեսությունը: Հարկ է նշել,

սակայն, որ հայկականից հետո կարևոր տեղ է հատկացված հոռմեական և երբայական տումարներին: Մյուս ժողովուրդների տումարների մասին անհրաժեշտ տեղեկությունների առկայությունը բացատրվում է նրանց պանագանությունով: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր ամսանունները, իր տարեսկիզբը, և պետք էր գեթ թեթևակի ծանոթ լինել դրանց հետ, հարկ եղած դեպքում զուգորդել կարողանալու համար: Բացառիկ մեծ է «Պատճէն տումարի» և հատկապես նրա «Պատճէն տումարի Հայոց Մեծաց» բաժնի դերը հայկական տումարի պատմության ուսումնասիրման գործում¹⁵⁷:

Այստեղ մանրամասն ներկայացված է հոռմեական, երբայական, ասորական, հունական և այլ տումարների համադրումը: Հայկական տումարական հաշվումները դրանցից որևէ մեկի հետ համապատասխանեցնելուց հետո կարելի է գտնել նաև մյուսները: Այսպես, օրինակ. «յառաջին թուականին Հայոց յունուարի ամսոյ է. (7) մուտ էր մեհեկի ամսոյ, Զ. (6)՝ այն, որ յառաջն էր յունուարի և Ե. (5) ավելիքն եղև ժԱ. (11), դոր կոչեցին յարակայ յունուարոյ»¹⁵⁸: Այս իմանալուց հետո կարելի է օգտվել հետևյալ սահմանումից. «Թէ կամիցիս հոռովմի վերադրան և եւթներեկան զամենայն ազգաց գտանել, կալ զհոռովմի վերադիրն, Բ. (2) ի բաց առ՝ յունաց է, Գ. (3) առ՝ ասորոց է, Է. (7) առ՝ եթովպացոց է,

Т. 2, (Индия), Ташкент, 1963, с. 174: Հետաքրքրական է նշել, որ «կալենդար» բառի տակ հոռմեացիները նույնպես սկզբում նկատի ունեին այն զրբերը, որտեղ գրանցվում էին ամեն ամսվա կալենդարի օրերին եղած պարտքերի տոկոսները: Իսկ հետագայում այդ բառի տակ հասկանում էին այն զրբերը, որտեղ ամեն ամսվա օրերի դիմաց գրվում էին աստվածներին և կայսրներին նվիրված տոները և այլն:

157 «Պատճէն տումարին» հրատարակվել է «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» գրքում (էջ 204—219) իբրև Հովհաննեսի աշխատանք, որտեղ «Պատճէնի» ոչ բոլոր գլուխներն են արտագրված: Այդ մասին գրում է ինքը՝ հրատարակիչը. «Տոմարական ձեռագրերում բազմաթիվ են ոչ միայն «Պատճէնների» տեսակները, այլև նրանց խմբագրությունները, մենք փորձեցինք Մատենադարանի ձեռագրերում եղած պատճէնները որոշ սխտանի բերել, խմբագրությունները որոշել, սակայն պարզվեց, որ նրանք այնքան շատ են և իբրև այնքան են տարբերվում, որ այդպիսի կարգումն անհնարին է» (նույն տեղում, էջ 88):

Կարծում ենք, սակայն, որ Հայոց Մեծ թվականի հետ կապված հաշվումներն ու հայկական շարժական տումարն ընդունելով որպես հիմնական առանցք, կարելի է խմբավորել տարբեր դարերում խմբագրված է «Պատճէնները»:

158 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 209:

154 Լ. Ս. Խաչիկյան, Ժծ դարի հիշատակարաններ, հ. 1, էջ 181:
155 ՆՁԲ, Բ, 615; տե՛ս, օրինակ, Յովհաննես Մամիկոնեհի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832:
156 «Տոմար կամ տումար, բառ յունական... հատոր գրոց, հատուած բանից գրելոց՝ ի գլուխս գլուխս, գիրք, մատեան, կոնդակ... իսկ պարսկերեն տումար, է ծայեալ թուղթ... տումար կամ տումար-ցուցակ հաշուի և կարգի ժամանակագրութեան, աստեղաբաշխութեան և թուականաց ազգաց և տոնից... օրացույց» (տես ՆՁԲ, Բ, էջ 889): Տոմար բառը օգտագործված է նաև Բիրունու մոտ (տե՛ս Абу Рейхан Бируни, Избранные произведения,

եզիպտացոց է, Թ. (9) առ՝ երբայեցոց է, արարացոց և մակեդոնաց-
ւոց»¹⁵⁹։

Այսպիսի բազմաթիվ այլ խորհուրդներ կան, ինչպես, օրինակ,
«զուգաւորութիւն Հայոց ընդ յերբայեցոց այսպէս արա», «զուգաւորու-
թիւն հոռոմի ընդ երբայեցոց» և այլն։

Տոմարի տեսութեան հարցերին նվիրված այս աշխատութիւնը մեծ-
արժեք հուշարձան է նաև գործնական աստղագիտութեան առումով. այն-
տեղ տրված են երկնային լուսատուների դիրքը որոշելու տարրեր եղա-
նակներու Այսպես. «Եթէ կամիցիս գիտել՝ թէ Արեգակ յորում կենդանա-
կերպի է, կալ ի դարնանային հասարակածէն մինչև ուր ես, Բ. (2) թուով
պակաս և տուր կենդանակերպացն և. (30) սկսեալ ի Խոյէն, ուր սպառի
թիւն, յայնմ կենդանակերպուչ է»¹⁶⁰։ Նույն ձևով սահմանված են. «Եթէ
կամիցիս գիտել՝ եթէ Լուսինն յորում կենդանակերպի է», «Եթէ կամի-
ցիս գիտել՝ եթէ Լուսինն քանի՞ ժամ լոյս տայ ի դիշերի», «Եթէ կամիցիս
գիտել՝ եթէ Արեգակն քանի՞ աշտիճան բարձրացեալ է» և այլն։

Ուշագրութեան արժանի է այն փաստը, որ Հայոց Մեծ թվականի հետ
կապված բաժինը բազմիցս հրատարակվել է XVII—XVIII դարերում¹⁶¹։
Տեսական մասի բնագրից հետո ղետեղված և տվյալ ժամանակի համար
հաշված աղյուսակների առկայութիւնը խոսում է այդ հրատարակու-
թիւնների գործնական կիրառութեան, ինչպես նաև Հայոց տոմարի
մինչև XVIII դ. վերջերը պահպանած կենսունակութեան մասին։

«Պատճէն տումարի» համառոտ և ընդարձակ ընդօրինակութիւնների
թիւր Մ. Մաշտոցի անվան մատենադարանում անցնում է 90-ից։ Որոշ
ընդօրինակութիւններում պակասում են այս կամ այն գլուխները, բայց
ներանց ճնշող մեծամասնութիւնը պարունակում է Հայոց Մեծ թվականի
հետ կապված տոմարի տեսական մասը։ Բնագրի հնագույն օրինակները
գալիս են XIII—XIV դարերից, որոնք դարեր շարունակ արտագրվելով և
գործածվելով հասել են մինչև XVIII—XIX դարերը։

Ի՞նչ է հայտնի այդ աշխատութեան հեղինակի և ժամանակի մասին։
Պետք է ասել, որ եթե Հայոց Փոքր թվականի հետ առնչվող բաժինը
հաստատապես կապվում է Հովհաննես Սարկավագի անվան հետ, ապա

Հայոց Մեծ թվականինը՝ Անանիա Շիրակացուն վերագրելու հարցում
կան իրարամերժ տեսակետներ¹⁶²։ Սա, անշուշտ, բխում է Հայոց Մեծ
թվականի հիմնադրի վերաբերյալ եղած տարաձայնութիւններից¹⁶³։

Չնայած, որ ըստ մատենագրական տեղեկութիւնների, էասյան
532-ամյա զատկացանկը հայերի կողմից ընդունվել է VI դ. Մովսես Եղ-
վարդեցու օրոք, տոմարապետ Աթանաս Տարոնացու ջանքերով¹⁶⁴, սա-
կայն կան նաև որոշակի հիշատակութիւններ այն մասին, որ Անանիա
Շիրակացին կազմել է 532-ամյա ցուցակ և գրել ինչպես հայ, այնպես էլ
ուրիշ ժողովուրդների տոմարներին վերաբերող աշխատանք¹⁶⁵։

Հայտնի է նաև, որ Անանիա Շիրակացու կազմած տոմարը պետք է
լիներ այնպիսին, որ հայերն այլևս կարիք չունենային օտար տոմարնե-
րից օգտվելու։ Այսպես, Հովհաննես Գրասխանակերտցիին (X դ.) այդ մա-
սին հայտնում է. «Իսկ Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն հայ-
կական տոմարի, զի թերևս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթացե-
լօրինել, զի միշտ անշարժ լինիցին տօնք տարեկանաց կամ յեղափոխ
եղանակը ժամանակաց։ Վասն որոյ և առ ինքն զԱնանիայ Անեցի կո-

162 Տե՛ս Ա. Արքանմայան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 111, 112 և
2. Անասյան, Հայկական մատենագիտութիւն, հ. Ա, էջ 748, 749։

163 Տե՛ս Լ. Սևմյոնով, Ա. Արքահամյանի «Անանիա Շիրակացու մատենագրութիւնը»
գրքի գրախոսականը։ Ա. Արքահամյան, Շիրակացու աշխատութիւնների հարազատութեան
հարցի շուրջը, Տեղեկագիր, 1947, № 6։

Բանն այն է, որ ուսումնասիրողները այս հարցում հենվում են մատենագրական նյու-
թերի վրա, իսկ դրանք երբեմն հակասում են միմյանց։ Այսպես, ձեռագրերում այս հարցի
վերաբերյալ մեզ պատահեցին երկու իրարամերժ կարծիքներ, որոնց հեղինակները 11-րդ
դարի նշանավոր տոմարագետներ են՝ Հովհաննես Կողեներ և Հովհաննես Սարկավագը. «Արք,
վասն զի յարաց ամոյ... հանդիպեցաւ զեւել զգիր թուականութեան հայոց ազգիս ի ձեռն
Անանիայ Շիրակուանցոյն ի Ժ. (10)-երորդ ամի աթոռակալութեան Յոհանիսի հայոց կա-
թողիկոսի, որ ԻԳ. (23) թիւ էր հայրապետացն ի որդոյն Գրիգորի»,—գրում է Հովհաննես
Կողեներ (տես Մատենադարան ձեռ. № 2292, թ. 273ր «Մեկնութիւն տոմարի, զոր արա-
րեալ է Յոհանիսի վարդապետի, զոր մականունն Կողեան կոչեցեալ» աշխատանքում)։ Այստեղ
խոսքը Հովհաննես Բ Գարեղյան կաթողիկոսի (507—574 թթ.) մասին է, որը Մովսես
Եղվարդեցու նախորդն էր։

Դրան հակառակ, Հովհաննես Սարկավագը գրում է. «Իսկ որք ասեն ի ձեռն Անանիայի
եզաւ տումար հայոց, մեծապէս սփրթեն զտգիտութեան կարծիս» (տես Մատենադարան,
ձեռ. № 2001, թ. 158ր—159ա, «Սարկավագի սակս Բ. (2)-ոցն ապրիլի և Գ. (4)-իցն ան-
միարանութեան» աշխատանքում)։

164 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 572։

165 Ա. Մաքսուջյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», Լրաբեր, 1974, № 8, էջ
80—81։

159 Նույն տեղում։

160 Նույն տեղում, էջ 206։

161 Փր՝ Տոմարաց գիրք հայոց, հոռոմայեցոց և պարզատոմար, Յամստէլտամ, 1662,
Բուն տոմար հայոց, Կ. Պոլիս, 1750։ Կյուրեղ Սեբաստեան, Բուն տոմար հայոց պարզե-
ցեալ աշխատիք, Կ. Պոլիս, 1760 և այլն։

չեալ, որ բանիրուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր: Իսկ նորա ջան ի վերայ եղեաւ և ըստ բոլոր ազգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ Հայկական սոմարի, զի բարեձևագունից ոմանց և զմերս կշռադատեալ՝ մի կարօտասցուք գալ ի զուգաւորութիւն Հոռովմայեցոց»¹⁶⁶:

Մեր կարծիքով, այս կենճոտ հարցի պարզաբանման հավանական վարկածներից մեկը հետևյալն է. Աթանաս Տարոնացին էասյան ՇԼԲ. (532) շրջանը վերակազմել է հայկական ամիսներով, որից եկեղեցու որոշումով սկիզբ է առել Հայոց Մեծ թվականը: Այդ գործն, անշուշտ, պահանջում էր խոր գիտելիքներ և ժամանակ, սակայն անժխտելի է նաև այն հանգամանքը, որ ձեռքի տակ ունենալով 532-ամյակի օրինակը (նույնիսկ օրինակներ, եթե նկատի ունենանք նաև Իրիոնի կազմածը), ստեղծագործական մեծ աշխատանք չէր պահանջում՝ այն հայկական ամիսներին հարմարեցնելու համար:

Սակայն միայն զատկացուցակը չէր կարող գոհացնել հայկական եկեղեցու պահանջները: Հարկավոր էր մշակել սեփական տոմարական համակարգ, որը բավարարեր նիկիայի ժողովի պայմաններին, զուգահեռ և անսխալ գնար հուլյան տոմարին, միաժամանակ մնալով ազգային, ինքնուրույն:

Ահա այս դժվարին գործն էր, որ պետք է իրականացնե՞ր գիտակ մի անձնավորություն, և որը ամենայն հավանականությամբ եղել է VII դ. մեծ մտածող Անանիա Շիրակացին: Դժվար է ասել՝ նա ձեռքի տակ ունեցե՞լ է մյուս ժողովուրդների տոմարական կանոններին վերաբերող աշխատանքներ, թե ծանոթ լինելով դրանց, ինքն է շարադրել բոլոր գլուխները: Անկախ դրանից, անվիճելի է մի բան. հեղինակը ստեղծել է հայոց շարժական տոմարին համապատասխան եկեղեցական տոները անսխալ հաշվելու մի համակարգ, որը զուգահեռ ընթանում էր անշարժ տոմարների հետ և որը օգտագործվեց մինչև XVIII—XIX դդ.:

Ինչպես արդեն խոսք եղավ վերևում, տարբեր ժողովուրդների տոմարների միջև ընդհանրություն մտցվեց տոմարագետ Անդրեասի կողմից:

Պետք է ասել, որ որքան էլ միջնադարյան հայ տոմարագետները կողմից բարձր է գնահատվում էաս Աղեքսանդրացու գործը, այնուամենայնիվ, ընդգծվում է, որ նա շարունակել է Անդրեասին: Այսպես, Անա-

¹⁶⁶ Յովհաննու կաթողիկոսի Գրասխանակերտցու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92:

նիա Շիրակացին գրում է. «Արդ ոչ եթէ նորաձեւելովս ինչ ազարտեցին զվաղնշուցն դրոշմեալ կանոն, այդ ճշգրտիւ զնոյն չորեքտասան յիննևտասն յիննևտասն թուոյ դրոշմեցին յարմարական ոճով...»¹⁶⁷:

Հովհաննես Վանականը ավելի որոշակի է արտահայտվում. «յառաջ վարեալ զարուեստն Անդրէասայ, արարին ՇԼԲ. (532) ամաց լրումն»¹⁶⁸:

Ընդհանրապես, Անդրեաս-տոմարագետի դերը բարձր է գնահատված հայկական մատենագրություն մեջ: Նա էր, որ «արար միաբանութիւն ամենայն տիեզերաց լրմանց ԹԺ (19)-երեկաց, վերադրաց և տարէմտից և այլ զանազան խորհրդոց, վասն զի գայր առ նա Հոգին Սուրբ և աղբերացուցանէր զնա քան պծովն օվկիանոս, որ քննէր զվերին կիսագունդն և զներքին կիսագունդն»¹⁶⁹ գրում է Հակոբ Ղրիմեցին:

Անդրեասի անձնավորության մասին քիչ տեղեկություններ կան, ձեռագրերում նա հիշատակվում է հիմնականում բյուզանդացի, բայց երբեմն նաև ասորի¹⁷⁰: Ուսումնասիրողներից ոմանք նրան պարսիկ են համարել¹⁷¹, իսկ ուրիշներն էլ՝ եգիպտացի¹⁷²:

Հայկական ձեռագրերում Անդրեասի անունով պահպանված սակավաթիվ աշխատանքներից ուշագրություն է արժանի «Մեկնութիւն տումարի Անդրէասայն». հայոց տոմարի պատմության համար նա «Պատճէն տումարից» հետո գրավում է իր ուրույն տեղը հայ մատենագրության մեջ:

Հետաքրքրական է նշել, որ այդ երկի 23 հարց ու պատասխաններից¹⁷³ կեսը վերաբերում է Հայոց Մեծ թվականի հետ կապվող բաժնին: Սա մեզ ենթադրել է տալիս, որ տարբեր ժողովուրդների տոմարներին վերաբերող զրույների գոնե մի մասը գրված է հենց Անդրեասի կողմից, և հայերը նույնպես՝ իրենց տոմարական համակարգին նվիրված զրույք անվանել են նրա անունով: Այստեղից էլ՝ «Պատճէնի» այդ բաժնին նվիր-

¹⁶⁷ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 295:

¹⁶⁸ Յաղագս ի տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ, էջ 164:

¹⁶⁹ Մատենագրան, ձեռ. № 1114, ք. 98, 6089, ք. 206ա, բ:

¹⁷⁰ Մատենագրան, ձեռ. № 2017, ք. 423բ:

¹⁷¹ Ա. Աբրահամյան, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, (Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում, № 6, Երևան, 1967, էջ 61):

¹⁷² Անդրեասին Անևիանոսի հետ նույնացնելու փորձ է կատարել Ն. Ակիսյանը, հնարավոր համարելով, որ նրա 532-ամյա շրջանի վերջին 200-ամյակի մասին են խոսում հայկական ձեռագրերը (տե՛ս Ն. Ակիսյան, Մովսէս Գասխտրացի (կոշտած Կազանկատուացի) և իր Պատմութիւն Աղուանից, Հանդէս ամսօրեայ, № 1—4, 1959, էջ 111—112):

¹⁷³ Մատենագրան, ձեռ. № 2017. ք. 411ա—414բ, 6869, ք. 100ա—104բ, իսկ № 2001 ձեռագրում հարցերի քանակը 21 է (200ա—203ա):

ված հնագույն¹⁷⁴ մեկնությունն անվանումը՝ «Մեկնությունն տումարի Անդրէասայ»:

Ձեռագրական նյութերի ուսումնասիրությունից և համեմատությունից մեզ համար պարզ դարձավ, որ «Պատճէն տումարի» աշխատությունը ողջ միջնադարի ընթացքում եղել է հայ տոմարագետների ուշագրություն կենտրոնում: «Մեկնությունն տումարի» կողմից իրենց աշխատություններում նրանք մեկնել են Հայոց Մեծ թվականի հետ կապված տոմարական բաժինը, զուգահեռներ անցկացնելով հարևան ժողովուրդների՝ հատկապես հռոմեական և երբայական համակարգերի հետ:

Վերջիններ «Պատճէն տումարից» մի սահմանում և տեսնենք, թե այն ինչպես է մեկնված տարբեր դարերում տարբեր տոմարագետների կողմից, այդ թվում նաև «Մեկնությունն տումարի Անդրէասայ» անհեղինակ գործում:

«Պատճէն տումարի հայոց» — «Գարնանամուտ այսպէս արա. կալ ժԳ. (13) և զնահանջն, տուր ահկի ամսոյ յառաջ, ուր թիւն յանկիսանդ է»¹⁷⁵:

«Մեկնությունն տումարի Անդրէասայ» — «Զի՞նչ է, որ ասէ կալ ժԳ. (13) և զնահանջն: Վասն զի յառաջին թուականին հասարակածն յահկի ի ժԳ. (13)-ն դիպեցաւ, զայն տասն և երեքն ի վերայ նահանջին արկանել հրամայէ, և զմինդ առաջին աւուր ամսոյն ասէ տալ. նոյն սարասիւ իմացիր և զայլդ ամենայն յեղանակսդ և զտօնսդ, որ նահանջիդ են գրեալ»¹⁷⁶:

Անանիա Շիրակացու «Տոմար» — «զի՞նչ է կալ ժԳ. (13) և զնահանջն. վասն զի յառաջին ամի թուականին հասարակածն յահկի ի ժԳ. (13)-ն հանդիպեցաւ, զայն ժԳ. (13)-ն ի վերայ նահանջին արկանել հրամայէ: Եւ զմինդ առաջին աւուր ամսոյն տալ: Նոյնպէս իմա և զայլ ամենայն յեղանակսդ և զտօնսդ որ նահանջիդ են գրեալ»¹⁷⁷:

Հովհաննէս Կոզեռնի «Մեկնությունն» — «Իսկ վասն դարնանային եղանակին, զի ասէ կալ զնահանջն, ժԳ. (13) ի վերայ ամ, ահկի ամսոյ տուր յառաջ, զիտեա, զի յառաջին ամի թուականին հասարակածն յահկի

ժԳ. (13) էր, և պարտ էր ժԳ. (13) ի վերայ ամել, զի ամիսս գլխութիւն առցէ»¹⁷⁸:

Սամվել Անեցու «Մեկնությունն» — «Զի՞նչ է, որ ասէ կալ երեքտասան և զնահանջն: Վասն զի յառաջին ամի թուականին հասարակածն յահկի երեքտասան դիպեցաւ, զայն երեքտասանն ի վերայ նահանջին ասէ արկանել և առաջին ամսոյն տալ: Այսպես իմա և զամենայն եղանակսդ և զտօնսդ, որք նահանջիւ են գրեալ»¹⁷⁹:

Բերենք ևս մեկ օրինակ.

«Պատճէն տումարի Հայոց» — «Վերադիր այսպէս արա. կալ զթուականն և տէս, թէ քանի նահանջ կայ ի նմա կամ քանի ժԹ. (19)-ակ, ապա բազմապատիկ արա զԱ. (1) ժԱ (11), ըստ նահանջիցն պակասեցո, ըստ իննետասներեկացն յաւել, Ը. (8) թիւ հանապազ երթ և զայլ Լ. Լ. (30. 30), որ մնայ վերադիր է»¹⁸⁰: Այս սահմանման կապակցութեամբ մեկնիչները տվել են վեց հարց. 1. «զի՞նչ է վերադիր», 2. «զի՞նչ է բազմապատկելն», 3. «զի՞նչ է ըստ նահանջիցն պակասեցո», 4. «զի՞նչ է ըստ ժԹ. (19)-երեկաց յաւել», 5. «զի՞նչ է Ը. (8) հանապազորդ երթն», 6. «զի՞նչ է երթն Լ. Լ. (30. 30)»¹⁸¹:

Այս վեց հարցերից մենք կվերջնենք առաջինը:

«Մեկնությունն տումարի Անդրէասայ» — «զի՞նչ է վերադիրն. զմետասան աւուրսն, զոր աւելի ընթանայ Արեգակն, քան զԼուսինն, զայն վերադիր կոչէ»¹⁸²:

Անանիա Շիրակացու «Տոմար» — «Վերադիրք են արեգակնայիցն յաւելմանցն հաւաքեցեալ ամսացելոյն արտադրութեանցն մնացուածք, որք անկանին ի վերայ Լուսնի: Եւ դարձեալ ոչ է պարտ կորուսանել զտարեւին քանիս Լուսնին, այլ ամելովն ի սա ցուցանի քանիք Լուսնին ի նորումս, և յէլս տարոյն ճշգրիտ հատկաւորապէս ի նմանէ սկսանի վերա-

178 Մատենադարան, ձեռ. № 2292, Բ. 276ր:

179 Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը, էջմիածին, 1952, № 2, էջ 35, 36:

180 Ա. Աբրահամյան, Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 205:

181 Եթե Անդրեասի մեկնության մեջ դրանք ճիշտ են դասավորված, ապա Անանիա Շիրակացու «Տոմարում» «ինչ է վերադիր» հարցը 29-րդ է, իսկ մյուսները՝ 50—54: Պետք է ասել, որ սա երկու դեպքը չէ. յոթնօրյակին վերաբերող հարցերից մեկը 30-րդն է, սրտը՝ 55:

182 Մատենադարան, ձեռ. № 2017, Բ. 412բ, 413ա:

174 Գրանից հետո գրված մեկնություններում Անդրեասի անունը չի նշվում:

175 Ա. Աբրահամյան, Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 205:

176 Մատենադարան, ձեռ. № 2017, Բ. 414ա:

177 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, էջ 85:

դիր նոր ամենայն ազգաց: Դարձեալ զմետասան աւուրսն զոր Արեգակն աւելի ընթանայ քան զլուսինն, վերադիր կոչեցին»¹⁸³:

Հովհաննէս Կոզեռնի «Մեկնութիւն»—«յամենայն ամի ԺԱ. (11) աւուրքք յառաջ կատարէ Լուսինն զընթացս իւր, քան Արեգակն, վասն զի յաւուր արարչութեան ի շորեքշաբթու ըստեղծ զԱրեգակն ընդ առաւօտս: և զլուսինն ընդ երեկո: Եւ ի ստեղծման Լուսինն ԺԱ. (11) մասն պակաս էր յընթացից Արեգականն: Եւ այն լինի յամիսն ժամս ԺԱ. (11) և ի տարին՝ աւուրս ԺԱ. (11): նա կոչի վերադիր»¹⁸⁴:

Սամվել Անեցու «Մեկնութիւն»—«մետասան աւուրսն, զոր աւելի ընթանայ Արեգակն, քան զլուսինն, վերադիր կոչեն, որ յամենայն ամի ի վերայ ածենք, զի հաւասարեացի»¹⁸⁵:

Քվարկված և այլ օրինակներ մեզ հանգեցնում են այն եզրակացութեան, որ «Պատճէն տումարի» աշխատությունը հետագա տոմարագետների համար եղել է գործունեության ելակետ, և նրա շուրջ գրված մեկնությունների միջոցով է, որ միջնադարյան մշակութային կենտրոններում հանրագումարի են բերվել տոմարագիտական գիտելիքները:

Քվում էր, թե Հովհաննէս Սարկավագի բարեփոխումից հետո Հայոց Մեծ թվականը կարելի էր շօգտագործել: Սակայն հենց ինքը՝ Սարկավագը համոզված չէր դրանում և Հայոց Մեծ թվականի սահմանումներից օգտվողներին խորհուրդ էր տալիս հանել սխալների հետեանքով առաջացած ավելորդ տարին. «կալչիր զազնուականոսն, որ անմուար ունի զամենայն սահմանեալսն վասն տաւնի և յեղանակաց... Ապա եթէ վասն զայդ գիտելոյ և ունելոյ ամենեցունց ոչ կամիցես տանել այսմ հոգ և ջան, բեզ և այդ մի եղէց խորհրդակից, այլ թողուլ զաւելորդն ի թուականէն զմի թիւն և ուղղապէս վարիլ»¹⁸⁶:

Հակոբ Արիմեցու «Մեկնութիւն տումարի» երկի հետ ծանոթանալուց հետո պարզվեց, որ նա նույնպես հանդիսանում է Հայոց Մեծ թվականի հետ կապված շարժական տումարի բացատրությունը: Սակայն նա ոչ իր ծավալով և ոչ էլ քննարկած հարցերի խորությամբ նման չէ վերոհիշյալ մեկնություններին. այն ոչ միայն նախորդների հասարակ կրկնությունը չէ, այլև որոշ հարցերում նույնիսկ հակադրվում է նրանց: Այդպես էր,

օրինակ, Լուսնի 19-ամյա շրջանի վերջին տարում վերադիրը 11-ի փոխարեն 12 վերցնելու բացատրությունը, որով Հակոբ Արիմեցին տարբերվում է նախորդ մեկնիչներից:

Մատենադարանում եղած տոմարական բովանդակությամբ ձեռագրերում մեզ հայտնի մեկնությունների ժամանակագրական կարգը, մոտավոր ճշտությամբ, այսպիսին է.

Առաջին. «Մեկնութիւն տումարի Անդրէասայ»¹⁸⁷: Անվիճելի է, որ այս աշխատությունը հայ տոմարագիտության կարևորագույն հուշարձաններից է: Նրա հեղինակը հայտնի չէ, սակայն, ամենայն հավանականությամբ, այն Հայոց Մեծ թվականի հետ կապված շարժական տումարի հնագույն մեկնությունն է, նրանից են օգտվել հետագա մեկնիչները:

Երկրորդ. Անանիա Շիրակացու «Տումար»:

Երրորդ. «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, զոր մականունն Կոզեռն կոչեցեալ» (XI դ.)¹⁸⁸:

Չորրորդ. «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Սամուէլ քահանայի, ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի» (XII դ.)¹⁸⁹:

Հինգերորդ. Հակոբ Արիմեցու «Մեկնութիւն տումարի» (XV դ.)¹⁹⁰:

Հովհաննէս Սարկավագը «Պատճէն տումարին» նվիրված հատուկ մեկնություն չունի, սակայն զանազան առիթներով նա ևս անդրադարձել է դրան:

Այսպիսով, թեև հայոց տոմարը իր շարժականությամբ որոշ բարդությունների հետ էր կապված, այդուհանդերձ՝ այն կիրառվեց երկար ժամանակ: Այդ է վկայում Հակոբ Արիմեցու «Մեկնութիւն տումարի» աշխատությունը՝ գրված 1416 թ.: Վանական նշանավոր հաստատություններին կից գործող դպրոցներում աշակերտներին սովորեցնում էին հաշվել հայկական շարժական տոմարով, գրում էին մեկնություններ՝ այդ տոմարի շուրջ: Աշակերտներն իրենց ձեռքի տակ ունենում էին տոմարի հայոց «Պատճէնը»: Մեկնիչը միայն բացատրում էր այն, պարզեցնում

187 Մատենադարան, ձեռ. №Ն 2017, ք. 411ա—414բ, 6869, ք. 100ա—104բ, 2001, ք. 200ա—203ա:

188 Մատենադարան, ձեռ. №Ն 2292, ք. 273բ—278բ, 2001, ք. 182ա—186ա, 1999, ք. 67բ—77ա:

189 Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը, էջմիածին, 1952, № 1, էջ 35—36, № 2, էջ 34—43; Մատենադարան, ձեռ. №Ն 2017, ք. 95ա—99ա, 6089, ք. 217բ—227բ, 2292, ք. 225բ—229բ, 7095, ք. 227ա—239ա:

190 Մատենադարան, ձեռ. № 1114, ք. 28ա—98ա և այլն:

183 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, էջ 70, 71:

184 Մատենադարան, ձեռ. № 2292, ք. 274բ:

185 Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը, էջմիածին, 1952, № 2, էջ 34:

186 Ա. Աբրահամյան, Հովհաննէս Իմաստասիրի մատենագրությունը, էջ 263:

բնագրի բովանդակությունը, իսկ հաշվումների համար ասում. «որպէս հրամայէ Պատճէնն» կամ «որպէս խրատէ Պատճէնն»:

Հակոբ Արիմեցին մինչև տոմարի մեկնությունն անցնելը նախ խրմբագրել և նորից շարագրել է Մեծոփի դպրոցում եղած «Պատճէն տումարի» տարբերակները, ինչպես որ հաղորդում է ինքը, հեղինակը:

Մեզ համար հետաքրքիր էր գտնել այդ նոր խմբագրված տարբերակի գոն մեկ օրինակ, որպեսզի կարողանայինք գնահատել նոր խմբագրի կատարած աշխատանքը:

Մատենադարանում եղած «Պատճէն տումարի» աշխատության շուրջ 90 ընդօրինակությունների մեջ նախ առանձնացրինք այն օրինակները, որտեղ այդ բնագրի հետ միասին արտագրված կա նաև Հակոբ Արիմեցու «Մեկնություն տումարին»:

Պարզվեց, որ երեք տասնյակից ավելի օրինակներում վերոհիշյալ երկու գործերը հանդես են գալիս կողք կողքի: Ծիշտ է, այդ ձեռագրերի մի մասում սկզբից «Մեկնություն տումարին» է արտագրված, հետո միայն «Պատճէն տումարին», բայց այն փաստը, որ եղած 90 ընդօրինակությունների մեկ երրորդ մասում դրանք մեկը մյուսի շարունակությունն են կազմում, խոսում է այդ երկու բնագրերի օրգանական կապի մասին: Դրանում ավելի ևս համոզվելու համար ասենք, որ «Պատճէնի» հետ մեկտեղ ընդօրինակված Հակոբ Արիմեցու «Մեկնություն տումարի» քանակը կազմում է ընդհանուրի կեսը (Մատենադարանում Արիմեցու աշխատության ընդօրինակությունների թիվն անցնում է 60-ից):

Վերը հիշատակված երեք տասնյակ ձեռագրերից վեցը XV դ. ընդօրինակություններ են: Դրանցից հինգում «Պատճէնը» և մեկնությունը դասավորված են այնպես, ինչպես Հակոբ Արիմեցին է ասում. «զմեկնիչն տումարիս զկնի սոցա եղաք, շարագրեցաք, զի առ ձեռն պատրաստ լիցի խնդրողին զսայ...»¹⁹¹:

Ինչպես արդեն ասվեց, այդ բնագրի հեղինակի հարցը պարզված չէ: Հասկանալի պատճառներով դժվար է պարզել նաև խմբագրի հարցը: Բանն այն է, որ տոմարի տեսության մասին գիտական արժեքավոր այդ գործը սերնդից սերունդ փոխանցվող դասագիրք էր, որը պետք էր մաքրել պատահական սխալներից, բարձրագույն դպրոցներում դասավանդելու և հետագա մասնագետներին ճշգրիտ տեսքով ավանդելու համար: Պարզ է, որ այդ գործը կատարողը աշխատության վերնագրում չէր նշե-

լու իր անունը: Եվ միայն բարեբախտություն պետք է համարել վերոհիշյալ հիշատակարանի գոյությունը ձեռագրերից մեկում:

Պետք է ասել, XV դ. առաջ և հետո ընդօրինակված «Պատճէն տումարի» բնագրերի միջև կան զգալի տարբերություններ, որոնք, անտարակույս, Հակոբ Արիմեցու ստեղծագործական աշխատանքի արդյունքն են: Դրանց մանրագնին համեմատությունը կարող է նյութ դառնալ մի նոր ուսումնասիրության: Մանրամասնությունների մեջ չմտնելով նշենք միայն կարևորները:

Սա նախ և առաջ վերաբերում է «կատարեալ Լուսին այսպէս արա» հատվածին: Լուսնի հետ կապված հաշվումների մի սահմանում է դա, ըստ որի՝ նա «կատարչալ» էր դառնալու իր «ստեղծումից» 6840 տարի անց: Ասենք, որ XII դ. սկզբներից սկսած որոշ հայ «տոմարագետներ», ոչ լրջմիտ հաշվումներ կատարելով, հանգել էին այն տեսակետին, որ Հայոց ՊԿՑ, այսինքն՝ մ. թ. 1416 թ. Լուսինը կատարչալ ձև ստանալով, այլևս չի նվազելու. երկու լուսատուներից մեկը երկնակամարի վերին կիսազնգում գտնվելով, մյուսը՝ ներքին՝ միաժամանակ ու երկուստեք լուսավորելու են աշխարհը, և տեղի է ունենալու «վախճան ժամանակի»՝ Քրիստոսի երկրորդ գալուստը¹⁹²:

«Կատարչալ Լուսնի» մասին մի փոքրիկ անհեղինակ աշխատանքի հետ ծանոթանալով, տարիներ առաջ ակադեմիկոս Լ. Խաչիկյանը, նկատի ունենալով նրա գրության ժամանակը (1416 թ.) և այնտեղ տեղ գտած հետևյալ տողերը. «Արդ, եղբարք իմ, զի մեք առաջին մեկնիչն որ արարաք՝ տասն մտօք ցուցաք, որ կարծիքս սուտ է, թէ Լուսինն պիտի բոլորի և այլ ոչ խոսի...»¹⁹³ հանգել է հետևյալ եզրակացությունը. 1. աշխատանքի հեղինակն է Հակոբ Արիմեցին և 2. 1416 թ. մի քանի տարի առաջ նա գրել է մի աշխատություն, որտեղ տաս կետով ապացուցել է «կատարչալ» Լուսնի հետ կապված աշխարհի վերջի մասին վեճերի անհիմն լինելը¹⁹⁴:

192 Լ. Ս. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ., էջ 29: Ինչպես պատմական սկզբնաղբյուրներն են վկայում, XV դ. սկզբներին ինչ-որ արտակարգ երևույթի էին սպասում նաև Առաջավոր Ասիայի մյուս ժողովուրդները. գյուղացիական հուզումների առաջնորդներից մեկը հանգստացնում էր մարդկանց, ասելով, թե շուտով գալու է «մեսիան» և վերականգնելու է արդարությունը երկրի վրա: Բով 1416 թ. նա արդեն վճռեց ժողովրդին ապստամբության կոչ անելու (տե՛ս История стран зарубежной Азии в средние века, М., 1970, с. 388):

193 Լ. Խաչիկյանը ծանոթ է եղել Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանի № 1244 ձեռագրի հետ: Բերված տողերը գտնվում են այդ ձեռագրի 211 էջում:

194 Լ. Ս. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ., էջ 29:

191 Լ. Ս. Խաչիկյան, Ժե դարի հիշատակարաններ, հ. 1, էջ 181:

Մեր որոշումների ժամանակ Մատենադարանի ձեռագրերում հայտնաբերվեցին այդ փոքրիկ աշխատության վեց ընդօրինակություններ¹⁹⁵, ինչպես նաև պարզվեց Հակոբ Արիմեցու այն աշխատությունը, որի գոյության մասին ենթադրություն է արել Լ. Նաչիկյանը:

Նախ ասենք, որ ձեռագրերում պահպանված «կատարյալ Լուսին» հոդվածի ընդօրինակությունները ըստ ժամանակի կարելի է բաժանել երեք խմբի՝ 1. մինչ 1416 թ., 2. 1416 թ. և 3. 1416 թ. հետո գրված: Հարկ է նշել, որ երեք դեպքում էլ դրանք հանդես են գալիս տոմարի տեսության տրակտատում՝ «Պատճենում»:

Առաջին խմբին պատկանող հիշատակարաններում մարդիկ սպասում են այդ օրվան: Այդպես է, օրինակ, Ա. Աբրահամյանի կողմից հրատարակված և Հովհաննես Սարկավազին վերագրված «Պատճեն տոմարի» բնագրում. «ի ՅՊն (6840) ամին լինի ար մի և այն է արն դատաստանին և զալուստ փրկչին»¹⁹⁶:

Երկրորդ խմբին պատկանող վեց օրինակներից հինգը գտնվում են այնպիսի ձեռագրերում, որտեղ միաժամանակ կան և՛ «Պատճեն տոմարի», և՛ Հակոբ Արիմեցու «Մեկնութիւն տոմարի» աշխատանքները, այսինքն «Պատճենի» Հակոբ Արիմեցու կողմից խմբագրված տարբերակներում, նյութերի շարքում գրավելով նույն տեղը¹⁹⁷, ինչ որ չի կարելի ասել մյուս երկու խմբերի ընդօրինակությունների մասին:

Ի տարբերություն առաջին խմբի, երկրորդի «կատարյալ Լուսին» հատվածը ոչ թե մի սահմանում է, կամ հիշատակություն, այլ համեմատաբար ավելի ընդարձակ մի հոդված, որտեղ հեղինակը տալիս է Լուսնի «կատարյալ» անվանման բացատրությունը: Նա գրում է, որ Լուսնի ընթացքի հաշիվներում ամեն 19-ամյակի մեջ 2 րոպե, կամ ինչպես ինքն է ասում՝ մեկ մաս նկատի չի առնված, որը կուտակվելով 360 հատ 19-ամյակի կամ որ նույնն է՝ 6840 տարվա ընթացքում Արեգակի և Լուսնի միջև տալիս է 12 ժամի տարբերություն: Այդ ժամանակ երկու կիսազրնդերում էլ խավար չի լինի, քանի որ Արեգակի 12 ժամ լուսավորելուց

հետո անմիջապես ծագելու է լիալուսինը, և երկրագնդի երկու կիսազրնդերն էլ միաժամանակ լուսավոր են լինելու:

«Ոմանք սղալեալ և թիւր իմաց միտք բանիս,— գրում է Հակոբ Արիմեցին,— ասացին թէ յայնժամ Լուսինն բոլորի և այլ ոչ խոռի, և տօնք և տոմարք խափանին...»¹⁹⁸:

Բացատրելով, որ ոչ մի այդպիսի բան չէր կարող պատահել, Արիմեցին զոհունակությամբ նշում է, որ ինչպես ինքը կանխանշել էր, այդ օրն անցավ, և ոչ մի արտակարգ բան տեղի չունեցավ. «Արդ, իմա, եղբայր, զի այս կարծիքս սուտ է... որպէս ականատես եղաք յամիս յայսմիկ, որ թուական ՊԿԾ (=1416) և էր ամս կատարեալ Լուսին, և մնաց Լուսինն յիւր բնական սահման: Եւ զոհացաք զԱստուծոյ, որ զինչ մեկնեցաք յառաջին մեկնիչը, նայ եղև ճշմարիտ, վասն այն յաւելորդ համարեցաք դարձեալ շարագրել...»¹⁹⁹:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը նշում է, որ տարիներ առաջ իր կողմից արած ենթադրությունը ճշտվեց, ուստի դրա բացատրությունը նորից չի ուզում կրկնել:

Իրոք, 1416 թ. մի բանի տարի առաջ Հակոբ Արիմեցին անդրադարձել է այդ հարցին, որը մենք գտանք «Ի խնդիրս հասարակաց օգտի» աշխատությունում: Եվ ինչպես հեղինակը 1416 թ. գրում է, թե «Արդ, եղբարք իմ, զի մեք առաջին մեկնիչն որ արարաք՝ տասն մտօք ցուցաք, որ կարծիքս սուտ է...»²⁰⁰, նույն տաս կետերով էլ պահպանվել է այդ բացատրությունը: 1408 թ., երբ մարդիկ սպասում էին այդ անհասկանալի օրվան, Արիմեցին գիտնականին հատուկ հանգստությամբ գրում է. «Գիտելի է վասն կատարեալ Լուսնիս, զի ասացեալ է վասն սմա յոմանց՝ ոչ գիտեմ, եթէ յիմաստականաց և եթէ յիմաստասիրաց, եթե Լուսին այլ ոչ դառնայ ի ժողով իւր, այլ բոլոր և կատարեալ մնայ, զոր ընդգիմա-

195 Երուսաղեմի № 1244 ձեռ., Թ. 210—211: Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 5ա, 5614, Թ. 246բ:

196 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 5ա, Բ. 5614, Թ. 246ա, Բ. 5975, Թ. 9բ, 10ա, 2036, Թ. 272ա, 7040, Թ. 38բ—39բ, 7243, Թ. 15բ—16բ:

Եթե նկատի ունենանք, որ հայ տոմարագետները տոմարական հաշվումների ասենք, 19-ամյակի, 532-ամյակի և այլնի համար աշխարհի «արարչագործությունը» ընդունում էին Քրիստոսի «ծնունդից» 5420 տարի առաջ և որ «ծնունդի» հաշիվներում 4 տարվա տարբերություն կար. ապա կտեսնենք, որ իրոք, 6840 թիվը՝ «արարչագործությունից» սկսած, համընկնում է հայկական ՊԿԾ (865), այսինքն՝ մ. թ. 1416 թ. հետ (5420+551+865+4=6840, կամ որ նույնն է՝ 5420+1416+4=6840):

200 Երուսաղեմի № 1244 ձեռ., էջ 210:

195 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 5ա, Բ. 5614, Թ. 246ա, Բ. 5975, Թ. 9բ—10ա, 2036, Թ. 272ա, 7040, Թ. 38բ—39բ, 7243, Թ. 15բ—16բ:

196 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 219:

197 Նրան հաջորդում են «Եթէ կամիցիս գիտել, թէ Արեգակն յորում կիտի է», այնուհետև «Թուական ամենայն ազգաց» հարցերը (տես Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 6ա, 5614, Թ. 247ա, 5975, Թ. 10ա, 7040, Թ. 40ա, 7243, Թ. 17ա):

նամք բազում եղանակաւ ըստ եկեղեցւոյ վարդապետութեան... նախ ըստ ստեղծմանն և ըստ վախճանի, զի որպէս ի միում աւուր ստեղծան լուսաւորքդ, պարտ է զի և ի միում աւուր կատարեսցին... երրորդ՝ վասն ներգործութեան. զի ի ներգործութեան Լուսինն ծնընդեանն և լրմանն, սերմանիք բուսանին և ծառք պտղաբերին, նաև ջուրք ծովուց առաւելան և նուազին, կենդանիք ծնանին և ապականին... հինգերորդ՝ վասն ժամանակին, զի որպէս Արեգակն զտարին կատարի, նոյնպէս և Լուսինն զամիսն ...վեցերորդ՝ ...Աստուած զԼուսինն անգիր տումար արարեալ է ռամկացն և ախմարացն... իններորդ՝ այս յարտաքին իմաստասիրացն միայն ասացաւ և ոչ յեկեղեցւոյ վարդապետաց, այլև ոչ ի գիրս աստուածաշունչ գտանեմք այսմ վկայութիւն, թէ և զմարգարէին որ բերցէ²⁰¹ մինչև կատարեցի Լուսինն, զայն վասն կատարածին ասէ: Տասներորդ՝ ըստ յարմարութեան, զի ոչ վայել է Աստուծոյ ...կատարումն Լուսնի ի յանկատար ժամանակիս»²⁰²:

Ինչպէս տեսնում ենք, Հակոբ Արիմեցու ընդգիմախոսութիւնը դուրս չի գալիս քրիստոնեական եկեղեցու ուսմունքի սահմաններից: XV դ. սկզբին այլ կերպ էլ էր կարող լինել, մանավանդ երբ խոսքը վերաբերում էր աշխարհի վախճանին: Մեզ համար պարզ է դառնում, որ Հակոբ Արիմեցին կուրորեն չի հետևել կրոնական դադափարներին: Աշխարհի վախճանը գուշակող տգետ աստղաբաշխ-տոմարագետների դեմ մղած այդ լրջմիտ բանավեճով բացահայտվում են Արիմեցու պատմականորեն առաջադիմական հայացքները: Թեև նա բացահայտ չի մերժում աշխարհի մոտալուտ վախճանի մասին քրիստոնեական եկեղեցու ուսմունքը, սակայն այն հետաձգելով անորոշ ժամանակով, ըստ երևույթին, ինչ-որ շափով կողմնակից է եղել աշխարհի անվախճան լինելու տեսակետին:

Հակոբ Արիմեցուց հետո ընդօրինակված «Պատճէն տումարի» աշխատութեան «կատարյալ Լուսին» հատվածները փոքրիկ հիշատակութիւններ են. հիմնականում նշվում է, որ այդ սպասված օրն անցել է, և ոչ մի վնաս չի եղել. «Մաներուք, զի իմաստասէրք ասացին, թէ յորժամ այն մի մասն ժողովեալ օր մի լինի, կատարումն Լուսնի է... բայց գիտելի է, զի ի

201 Այդպես է Հովհաննես Սարկավազին վերագրված «Պատճէն տումարի» բնագրում «այն է արև դատաստանին և գալուտս փրկչին, ըստ բանի մարգարէին, որ ասէ. ժագեաց ի յաւուրս նորա արդարութիւն բազում խաղաղութիւն մինչև կատարեսցի Լուսին» (Հովհաննես Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 219): Մարգարեին վերագրված տողերը, իրոք, կան և պատկանում են Դավիթ մարգարեին (տես Սաղմ. ՀԱ 7):

202 Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 396բ—398բ:

Հիմն (6840) ամեն ժողովեցան մասունքն այն և եղև աւր մի, բայց խնամովն Աստուծոյ վնաս ոչ եղև աշխարհի»²⁰³,—կարդում ենք ձեռագրերից մեկում:

Այսպիսով, տոմարի տեսութեան խմբագրութեանը ձեռնամուխ լինելով, Հակոբ Արիմեցին մի քանի դար առաջ շարագրված այդ աշխատութեան սահմանումները անվերապահորեն չի վերարտագրել: Իմանալով, որ «Պատճէն տումարի» երկը բարձրագույն դպրոցներում դասավանդվող դասագրքերից մեկն է, նա իր պարտքն է համարել հենց այդտեղ տալու «աշխարհի վերջի» հետ կապված «տոմարական սահմանման» անհեթեթութիւնը, միաժամանակ մատնացույց անելով տարիներ առաջ գրած էր գործը, որի մեջ տրված է նույն հարցի ավելի մանրամասն բացատրութիւնը:

«Պատճէնի» նոր խմբագրված տարբերակում մյուս նորամուծութիւնը 1416 թ. հաշված տոմարական աղյուսակներն են: Դրանցից մեկը պահպանվել է XV դ. մի քանի ձեռագրերում: Այն պարունակում է Լուսնի 19-ամյա շրջանի և եկեղեցական գլխավոր տոների հաշիվները հոռմեական ամիսներով և Հայոց Մեծ թվականով: Աղյուսակի ներքևում կարդում ենք. «Կալ զՄեծ թուականն, ՊԿն (=1416) ի բաց երթ և զայլն, երթ ժԹ. ժԹ. (19), մնացեալն խորանացո տուր և գտանես զամեն...»²⁰⁴:

Բարբախտաբար Մատենադարանի մի ձեռագրում պահպանվել են 1416 թ. կազմած նույնպիսի տոմարական աղյուսակներ մյուս ժողովուրդներին՝ երբայցեցիներին²⁰⁵, հույների և ասորիներին²⁰⁶, արաբների ու մակեդոնացիներին²⁰⁷, եգիպտացիներին ու եթովպացիներին²⁰⁸ տոմարներով, որոնք, անշուշտ, Արիմեցու աշխատանքի արդյունքներն են:

Այսպիսով, Հակոբ Արիմեցին ոչ միայն խմբագրել է «Պատճէն տումարին», այլև այն հարստացրել տոմարական նոր հաշվումներով, դրանով իսկ ցանկանալով այն ավելի դյուրըմբռնելի և օգտագործելի դարձ-

203 Մատենադարան, ձեռ. № 1465, Թ. 264ա, բ: Ձեռագրերում պատահում են նաև Լուսնի «կատարման» վերաբերյալ նոր հաշվումներ, ըստ որի աշխարհի «վերջը» դեռ սպասվում է:

204 Մատենադարան, ձեռ. №№ 1114, Թ. 15բ, 16ա, 5614, Թ. 256բ—257ա, 5975, Թ. 19բ:

205 Մատենադարան, ձեռ. № 5975, Թ. 23բ:

206 Նույն տեղում, Թ. 33ա:

207 Նույն տեղում, Թ. 33բ:

208 Նույն տեղում, Թ. 34ա:

նեկ ինչպես ունկնդիրների, այնպես էլ հետագա ընթերցողների համար: Հետաքրքրական է նշել, որ ձեռագրերում մեզ հանդիպեցին մի քանի ընդօրինակություններ, որոնց գրիչները «Պատճէն տումարի» խմբագրած օրինակը և նրա «Մեկնութիւն տումարի» աշխատությունը միաժամանակ ընդօրինակելիս, առանձին հատվածներ մի աշխատանքից արտագրել են մյուսի մեջ: Այսպես, «Պատճէնում» հաճախ հանդիպող «յաղագս շրջանաց», «վասն դարուց», «ինչ է յտրելեան և այլն», հատվածները որոշ ձեռագրերում հանդիպում են ոչ թե իրենց տեղում, այլ Հակոբ Արմեցու «Յաղագս տումարական մակացութեան» աշխատությունից հետո, որը ձեռագրերում սովորաբար ընդօրինակված է լինում իբրև «Մեկնութիւն տումարի» երկի շարունակություն²⁰⁹:

Եթե ավելացնենք նաև, որ ձեռագրերի մի մասում «Յաղագս տումարական մակացութեան» աշխատությունից հետո ընդօրինակված է Հակոբ Արմեցու ուղերձը՝ ուղղված Թովմա Մեծոփեցուն, ապա պարզ կդառնա, որ «Պատճէնից» վերցրած հատվածները արտագրված են Հակոբ Արմեցու խոսքերից անմիջապես առաջ²¹⁰:

Ուղերձում ասված է. «Արդ, ով բարունի... վարդապետ Թովմա, Առաջնորդ աստուածաբնակ հոչակատր սուրբ ուխտի Մեծոփայ... Ահա և դայս ևս զինդիր քո կատարեցի բազում աշխատութեամբ... զՅակոբ Արմեցի սոսկ միայն անուամբ վարդապետս...»²¹¹:

Կարծում ենք, որ նյութերի դասավորության խախտումը չի կարող բացատրվել միայն պատահականությամբ: Ծիշտ է, մեր պատմական սկզբնաղբյուրները մեզ են հասել բազմաթիվ արտագրություններից հետո և իրենց վրա կրում են այդ արտագրությունների անխուսափելի սխալները: Սակայն վերոհիշյալ փաստը, հավանաբար, պիտի ընկալել իբրև Արմեցու կողմից կազմված դասագրքի նյութերի օրգանական կապի տեղաշարժում: Հնարավոր է, որ ծավալը կրճատելու կամ այլ նպատակով գրիչների կողմից որոշ հատվածներ միացվել են, ինչ-որ հատվածներ էլ զեղչվել:

209 Տե՛ս, օրինակ, Մատենադարան, ձեռ. № 5834, 5051, 2036, 2011, 6089, 1762, 2015, 3240, 3071:

210 Մատենադարան, ձեռ. № 5834, Բ. 54ա—55ա, 5051, Բ. 220ա—221բ, 2036, Բ. 219բ—222բ, 2011, Բ. 139ա—141ա, 6089, Բ. 211ա—214ա:

211 Մատենադարան, ձեռ. № 5834, Բ. 56ա, 5051, Բ. 221բ, 2036, Բ. 222ա—բ, 2011, Բ. 141ա, 6089, Բ. 214ա:

Այսպիսի ենթադրության օգտին է խոսում ձեռագրերից մեկում տեղ գտած հակառակ օրինակը: Դա Մատենադարանի № 7040 ձեռագիրն է՝ ընդօրինակված XVIII դ. առաջին կեսում: Այստեղ ընդօրինակված է ինչպես «Պատճէն տումարի» աշխատության XV դ. սկզբին խմբագրված տարբերակը, այնպես էլ «Մեկնութիւն տումարի» և «Յաղագս տումարական մակացութեան» աշխատանքը: Այստեղ «Պատճէնի» հայկական և հոռոմեական տոմարներին վերաբերող գլուխների միջև առկա են «Մեկնութիւն տումարից» ամբողջական հատվածներ, ընդ որում դրանք կային նաև «Մեկնութեան» բնագրում²¹²: Այսպիսով, խմբագրված «Պատճէնը» և Հակոբ Արմեցու «Մեկնութիւնը», ինչպես XV դ., այնպես էլ հետագայում ներկայացվում են միատեղ, իբրև միևնույն դասագրքի տարբեր մասեր:

Ամենայն հավանականությամբ, նույն դասագրքի մաս է հանդիսանում նաև «Տումար արքայական» փոքրիկ աշխատությունը: Այստեղ արված սահմանումները հիմնված են 1460-ամյա շրջանի վրա, իսկ հաշվարկի սկիզբը կապվում է «արարչության» օրերի հետ, այսինքն՝ Քրիստոսից 5420 տարի կամ Հայոց Մեծ թվականից 5976 տարի առաջ: Զուտ և կեղեցական կարիքների համար գրված գործ է այն: Բերենք մի սահմանում. «Արքայական յայտնութիւն այսպէս արա. կալ ՌՁԶ (5976), զհայ թուականն ի վերայ բեր, ՌնԿ (1460) ի բաց գնայ և զմնացեալն նահանջ արա, այսինքն ի շորիցն մին առ և տուր Գ. (4) թիւ քաղոց ամսոյ և դայն տուր ի կարգի և այն է»²¹³: Ինչպես տեսնում ենք, հաշվումներն արված են հայկական ամիսներով և «արարչության» օրերի համար: Տարիներ առաջ Ա. Աբրահամյանը այս աշխատանքի մասին գրել է. «տումարական այս աշխատությունը սովորաբար ընդօրինակված է լինում Հակոբ Արմեցու «Յաղագս տումարական մակացութեան» աշխատության հավելվածում և, հավանական է, նա էլ լինի նրա հեղինակը»²¹⁴:

212 Հատվածների վերնագրերն են՝ «Յատկութիւնք Արեգական» Բ. 49ա, բ («Պատճէն»), 173բ, 174ա (Մեկնութիւն): «Յատկութիւն աստեղաց» Բ. 50ա և 176ա, «Յաղագս Լուսին» Բ. 50ա—51բ և 174ա—175բ, «Վասն Լ'ր զլուսաւորսդ յերկինս եղ», Բ. 52ա և 178բ, «Լուսաւորն ուստի՞ գոյացան», Բ. 52բ—53ա և 171բ—172ա:

213 Մատենադարան, ձեռ. 1114, Բ. 24բ, 1849, Բ. 143բ, 5614, Բ. 267բ: 4 տարվա տարբերության մասին խոսք եղավ վերևում:

214 Մատենադարանի «Տումարի մասեան», աշխատությամբ Ա. Աբրահամյանի (անտիպ), էջ 67բ:

Իրոք, այդ գործի տասը ընդօրինակություններից ութը հանդիպում են «Յաղագս տումարական մակացութեան» աշխատանքից հետո, իսկ մյուս երկուսը՝ «Պատճէնում»²¹⁵:

Հետաքրքրական է նշել, որ տումարական այդ կարգի սահմանումներն մինչև Հակոբ Արիմեցիին եղած տումարագետների աշխատություններում չկան: Իհարկե, 1460-ամյա շրջանի մասին հիշատակություններ կան, բայց ոչ սահմանումներ կամ հաշվումներ: Հեղինակը աշխատանքի հենց վերնագրում նշում է դրանց դժվարամատչելի լինելը. «Տումար արքայական, որ է յոյժ դժուարիմաց, բայց միայն վարժից...»²¹⁶:

Քանի որ այս փոքրիկ աշխատությունը կազմում է «Պատճէն տումարի» մասը, ապա նպատակահարմար կլինի այն հրատարակել այդ գործի ամբողջական տեքստի և նրա՝ Հակոբ Արիմեցու կողմից խմբագրված օրինակի հետ միասին:

Այսպիսով, եթե հանրագումարի բերենք վերոհիշյալ փաստերը, ապա կարող ենք ասել, որ հայ տումարագիտության անկյունաքարային գործը՝ «Պատճէն տումարի»-ն XV դ. սկզբներին խմբագրվել և հարյուստացվել է նոր նյութերով, և որ այդ գործն արել է դարի նշանավոր տումարագետ Հակոբ Արիմեցիին:

Պետք է ասել, որ Արիմեցու կազմած տումարական դասագրքից ավելի անվնաս է պահպանվել նրա երկրորդ մասը՝ այսինքն «Մեկնութիւն տումարի» և «Յաղագս տումարական մակացութեան» գործերը: Մեկնությունը սկսվում է հետևյալ տողերով. «Մեկնութիւն տումարի, զոր խնդրեալ Թովմա վարդապետի Մեծոփոյ վանաց... և սիրով զհայցուածս նորա կատարեալ Յակոբ վարդապետի Արիմեցուց... Մանիր, ով վեհիմաստդ մտօք, զի որք որ տումարական մակացութեանս են ներընդունակք, ոչ որ ըստ արհեստին են ներակրթեալք, բաւական են այսմ իրադործութեան հարցափորձեալ մեկնութեան...»²¹⁷:

Թե ինչ է նշանակում «արհեստ» և «մակացութիւն», մենք իմանում ենք հաջորդ տողերից. «Գիտելի է ըստ կանոնաց իմաստասիրաց, զի գիտութիւն Դ. (4) բաժանի և Դ. (4) կերպի առ ներընդունողսն երևի: Եւ եթէ ո՞չք են այսոքիկ, ասեմք, հմտութիւն, ներհմտութիւն, արհեստ և մակա-

215 Այդպես է հնագույն օրինակում՝ 1114 ձեռագրում, որը 1425 թ. պրություն է այսինքն՝ ընդօրինակված է Հակոբ Արիմեցու կենդանության օրոք:

216 Մատենադարան, ձեռ. № 1114, թ. 24ր:

217 Նույն տեղում, թ. 28ա:

ցութիւն: Հմտութիւն է սակաւ ինչ ծանոթութիւն ի ճանաչումն իրին, և ներհմտութիւն է մասնաւոր գիտութիւն առաջադրեալ իրին, իսկ արհեստ է թարց պատճառի բոլոր գիտութիւն, և մակացութիւն է հանդերձ պատճառօք բոլոր գիտութեան անսխալ ճանաչումն»²¹⁸:

Գիտություն այս շորս տարբեր աստիճանների մասին նա խոսում է տումարի օրինակի վրա. «Հմտութիւն է ծանօթութիւն անուան ամսոց՝ որպէս ռամիկ մարդիկ ծանօթացեալ անուանցն, հարցանեն՝ թէ նաւասարգի և կամ հոռի քանի է: Եւ ներհմտութիւն է, յորժամ նորավարժքն, որ գեղես ուսեալ լինին զպատճէն տումարին, բայց ոչ զարհեստ առնելոյն: Իսկ արհեստ է՝ առնել ամսամուտ, օրագիրտ, ծնունդ լուսնի և այլն: Եւ մակացութիւն է՝ գիտել, թէ ուստի պատճառին վերադիրք և է. (7) երեակք և շրջանք Արեգական և լուսնի և այլն և ուսել զայս...»²¹⁹:

Ըստ այդմ էլ, հեղինակը բազմակողմանի և մանրամասն քննում, մեկնում է ամեն մի հարց:

Վերցնենք, թեկուզ, հենց առաջին հարցը՝ «նախ թէ զի՞նչ է տումար, երկրորդ՝ թէ յումէ էառ զարտադրութիւն և ուստի զսկիզբն, երրորդ՝ թէ յորոց պատճառի տումարական մակացութիւնս»²²⁰:

«Ի՞նչ է տումար» հարցը կա նաև Անդրեասի, Անանիա Շիրակացու և Սամվել Անեցու մոտ: Պատասխանը, շնչին տարբերություններով, բոլորի մոտ միևնույնն է. «Տումարն ժողով թարգմանի... և զԲ (2)-ուց լուսաւորաց հանգամանս... Դարձեալ տումարն ասի ժողով... վասն զտիեզերս ժողովելոյ... Դարձեալ տումար Արեգական և լուսնոյ ընթացք»²²¹:

218 Նույն տեղում, թ. 28ր: Գիտության նույնպիսի բառակի բաժանման մենք հանդիպում ենք Դավիթ Անհաղթի մոտ. «Արդ, պարտ է գիտել, եթէ գիտութիւն կամ ընդհանուր է կամ մասնական, կամ հանդերձ պատճառաւ կամ առանց պատճառի, յորոց լինին շորքս այսոքիկ. հմտութիւն, ներհմտութիւն, արհեստ, մակացութիւն» (տե՛ս Դավիթ Անյաղք, Մահմանք իմաստասիրութեան, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջարանը և ծանոթագրությունները Ս. Ս. Արեշտայանի, Երևան, 1960, էջ 102):

219 Մատենադարան, ձեռ. № 1114, թ. 30ա:

220 Նույն տեղում, թ. 31ա:

221 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 2017, թ. 411ա, Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տումար, էջ 74—75 և Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տումարական և արեգակագիտական աշխատությունը, էջմիածին, 1952, № 1, էջ 35: Հետաքրքիր է նշել, որ եթե այդ հարցը մյուսների մոտ առաջինն է, ապա Շիրակացու «Տումարում» այն 41-րդն է: Սա դարձյալ ապացույց է այն բանի, որ «Տումարում» հարցերի հաջորդականությունը խախտված է:

Հակոբ Ղրիմեցու մոտ դա բավականին երկար բացատրություն է: Խոսքը ոչ միայն ծավալի մասին է. պարզապես հեղինակը նկատի ունենալով նախորդ մեկնությունների անփոփոխ պատասխանը, որ բերվեց վերևում և որի հետ, անշուշտ, պետք է ծանոթ լինեին ընթերցողներն ու ունկնդիրները, տալիս է հարցի մաթեմատիկական, աստղաբաշխական, աստվածաբանական բացատրությունը, որոնց մասին խոսք կլինի ստորև: «Վասն առաջնոյն գիտելի է, զի ըստ իմաստասիրացն և աստեղաբաշխութեան մակացութեանն տումար է նախ է. (7) մոլորակացն շաւղաց անսխալ գիտութիւն, որով կարացե՛ գիտել զյամբ և զարագ շարժութիւն ընթացից նոցա... երկրորդ տումարն ժողով ասի. և է այս ստուգաբանօրէն անուն, զի վասն ժողովեալ աստեղացդ գիտութեան ժողով անուանեցաւ. ոչ միայն մոլորակացն... այլև անմոլորիցն... երրորդ, ժողով ասի, վասն զի իմաստասէրք և վարդապետք կամեցան զտիեզերս ժողովել յայսմ իմաստասիրութիւն, որպէս ասի... իմաստասէրն ժողովեաց (էաս Աղեքսանդրացու մասին է խոսքը—Ջ. է.) ...զարս կորովամիտս ի քննութիւն շրջանաց Արեգական և Լուսնի... հինգերորդ՝ ժողով ասի տումարս, զի վարդապետք և իմաստասէրք եկեղեցւոյ ի ժողովել մոլորակացդ զերկուսս զայս, որպէս զԱրեգակն և զԼուսինն միայն ժողովեցին ի մակացութիւն տումարական արհեստիս»²²², ավելացնելով, որ իմաստասերները այդ երկու լուսավորները համարեցին տումարի հիմք, որպեսզի դուրին լինի և սովորելը և սովորեցնելը:

«Տումար» բառի բացատրությունը տալուց հետո Հակոբ Ղրիմեցին անցնում է տումարի հայոց «Պատճէնի» սահմանումներին: Խոսելով «ամսվա» մասին, նա հարց է դնում. «Նախ խնդրելի է, թէ ամիսքս ուտի՞ գոյացան, երկրորդ, թէ անուանք ամսոցս յումէ՞ եղան»²²³:

Ասենք, որ «Ի՞նչ է ամիս» հարցի պատասխանը նախորդ մեկնիչների մոտ այսպիսին է. «Տեսանելով առաջնոցն զԼուսինն լցեալ և մաշալ, իմացան զանցաւորութիւն կենաց իւրեանց և ասացին, թէ իմ ես պատկեր»²²⁴:

Ղրիմեցին մանրամասն գրում է, որ ամիսը կապված է երկու լուսատուների՝ Արեգակի և Լուսնի հետ, առաջինը մեկ ամսում անցնում է մեկ կենդանակերպով, իսկ երկրորդը՝ ամբողջ կենդանաշրջանը: Ամսվա ընթացքում աճելով և նվազելով՝ Լուսինը հիշեցնում է մարդու կյանքը: Այդ պատճառով իմաստասերները «ամիս» բառը ձևափոխելով. «փոխարկեցին զայս ընդ ինու և զինի ընդ եշի, որ ասէր «ամիս» սոքա անացին «իմ ես»²²⁵... որպէս ի ծնանիլ լուսոյդ քո ամիսն սկսանի և ի պակասիլ լուսոյդ ամիսն վճարի և անյայտի, այսպէս և կեանք մեր ի ծնանիլն երևի և ի վճար մահուան անյայտի և ծածկի»²²⁶:

Ամիսների անունների պատմությունը (եբրայական, հոռմեական և հայկական) բոլոր մեկնություններում գրեթե նույնն է²²⁷: Հաջորդում է «Ի՞նչ է թուական» հարցը և ապա՝ «Թուական է՞ թուել զթուելին, այսինքն զժամանակն և ասել՝ թէ յԱղամայ ի ջրհեղեղն ՍՄԽԲ (2242) ամ է... ի ծնեղենէն Քրիստոսի մինչև ի սուրբ Գրիգոր ՅԺԲ. (312) ... Եւ սոքա են ժամանակք, որք թուելիք են թուականին: Նաև իւրաքանչիւր թուականք՝ թէ արարչութեան... և Աղեքսանդրին և թուականք հանուր ազգաց թուելիք են թուականին, վասն որոյ ասացաք, թէ թուական է թուել զթուելին՝ այսինքն զժամանակս և զժամս»²²⁸:

Նա անդրադառնում է նաև նույն հարցի մասին նախորդ դարերի մեկնիչների բացատրությանը. «Իսկ մեկնիչն յերիս տարրորէ, զի ասէ՛ զի՞նչ է թուական, նախ ասէ՛ նիւթ է թուոց, երկրորդ՝ շարժումն յաւետ յառաջիադաց, երրորդ՝ հիմն զանազան մասանց արուեստից, զոր բացայայտեցուք զսոսա ըստ կարգի»²²⁹:

Իմիջիայլոց, նույն հարցին նա անդրադարձել է նաև «Ի խնդիրս հասարակաց օգտի» աշխատությունում: Այնտեղ նա գրում է. «Ըստ առաջնոցն սահմանօրէն թուական է շարժումն յաւետ յառաջիադաց և հիմն զանազան մասանց արհեստից»²³⁰:

225 Մատենադարան, ձեռ. № 1114, ք. 42ա:

226 նույն տեղում:

227 Անդրեասի մեկնության մեջ այն չկա, Անանիա Երևակացի, Տիեզերագիտութիւն և տումար, էջ 76—77, Ա. Աբրահամյան, Հովհաննէս Իմաստասերի մատենադրությունը, էջ 224, Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տումարական և տիեզերագիտական աշխատությունը, էջմիածին, 1952, № 1, էջ 35, 36, Մատենադարան, ձեռ. № 1114, ք. 42ա, ք:

228 Մատենադարան, ձեռ. № 1114, ք. 43բ, 44ա:

229 նույն տեղում, ք. 44ա:

230 Մատենադարան, ձեռ. № 2017, ք. 21բ, 74, ք. 329բ:

222 Մատենադարան, ձեռ. № 1114, ք. 31ա—38ա:

223 նույն տեղում, ք. 41բ:

224 Մատենադարան, ձեռ. № 2017, ք. 412ա. Անանիա Երևակացի, Տիեզերագիտութիւն և տումար, էջ 75 (այստեղ այդ պատասխանից հետո տրված են ամիսների անունների պատմությունը), Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տումարական և տիեզերագիտական աշխատությունը, էջմիածին, 1952, № 1, էջ 35:

Իրոք, նախորդ մեկնիչների մոտ այդ հարցի պատասխանը այսպիսին է.

«Մեկնութիւն տումարի Անդրէասայ»—«զի՞նչ է թուականն—նիւթ թուոց, շարժումն յաւէտ յառաջախաղաց և հիմն զանազան մասանց արուեստից»²³¹;

Անանիա Շիրակացու «Տումար».—«Թուական է ժամանակական շարժումն, և ամատող շարժումն, յառաջախաղաց տրամագրութիւն, յորմէ քաղկանայ տումար... Եւ է սա շարժումն թուոց ԻԸ. (28)-ից և հիմն զանազան մասանց արուեստից»²³²;

Սամվել Անեցու «Մեկնութիւն».—«զի՞նչ է թուականն—նիւթ թուոց, շարժումն յաւէտ յառաջախաղաց և հիմն զանազան մասանց արուեստից»²³³;

Բերելով տվյալ հարցի նախկին մեկնություններում տեղ գտած բացատրությունները, Ղրիմեցիին ունկնդիրներին ապացուցում է զրանցից յուրաքանչյուրը: Այսպես, նա պնդում է, որ «նիւթ է թուոց» արտահայտության մեջ հակասություն չկա: Որքան էլ որ «թուելն աննիւթ է», բայց և այնպես նմանություն ունի նրա հետ: Այսպես, օրինակ, ինչպես կավը բրուտի նյութն է, երկաթը՝ դարբնի, փայտը՝ ճյուղնի, թուղթը՝ գրագրի, իսկ գիրքը՝ վարդապետի, այնպես էլ «թուելն և համարելն թուելի և համարելի իրացն նիւթ է, զի նովաւ թուի թուելին... զի առանց նիւթոյ անկարելի է արհեստաւորին գործել ինչ, այսպէս և առանց թուականին՝ տումարագրտին անհնարին է առնել ինչ ի մասանց արուեստից տումարին»²³⁴, «Յաւէտ յառաջախաղաց շարժման» արտահայտության բացատրությունը հիմնականում վերաբերում է երկնքի շարժմանը. ժամանակը կապված է երկնքի և լուսավորների հետ, իսկ նրանք անընդհատ շարժման մեջ են, այդպես էլ՝ թվականը:

Իսկ «հիմն զանազան մասանց արհեստից» արտահայտությունը Հակոբ Ղրիմեցիին մեկնում է հետևյալ կերպ. մեր նախնիները նկատի են ունեցել ոչ միայն տոմարական արհեստի զանազան տարրերը, այլև գի-

տության, կենցաղի այն բնագավառները, որոնք «համարողական թուովս հիմնաւորի և առանց թուելոյ անհնարին է, եթէ բացակատարի»²³⁵;

«Այսպիսով,—եզրակացնում է նա,—յայտնի է, զի բոլոր կենցաղս զանազան արհեստիքն իւրեանց, հոգեւոր և մարմնաւոր թուով եզերին. ճշմարիտ է, զի հիմ է զանազան մասանց արհեստից, որպէս և ցուցեալ եղև»²³⁶;

«Թվականի» մասին ընդհանուր հարցեր շոշափելուց հետո Հակոբ Ղրիմեցիին անցնում է «Պատճէն տումարի հայոցի» համապատասխան սահմանումին: Այս հարցի վրա մենք ավելի մանրամասն կանգ կառնենք, քանի որ խոսքը գնալու է նաև Հայոց թվականում ավելորդ տարի առաջանալու և այդ սխալը ուղղելու փորձերի մասին:

Թվում է, թե թվականը հաշվելու համար առանձին կանոն պետք չէր սահմանել, քանի որ տարեթվերը հաշվելու համար անհրաժեշտ է ունենալ միայն հաշվարկի սկզբնակետ: Բայց հայոց տումարի «Պատճէնին մոտիկից ծանոթանալով, մեզ համար պարզ է դառնում, որ այդ աշխատության շարադրողը սահմանումների համակարգում հիմնական տեղը տալիս է հենց այդ կանոնին: Իսկ վերջինս տրված է երկու ձևով. զրանցից մեկը կապված է Հայտնության, մյուսը՝ զարնանային օրահամասարի հետ: Այսպես, առաջինը պահանջում է թվականի հաշիվը կատարել հետևյալ կերպ. «կալ թիւ մի յարաց ամսոյ, թուես մինչև ցյայտնութիւն, շորեքպատկեա և այն է: Թէ յառաջին»²³⁷ ամին ես՝ Գ. (3) երթ ի բաց, յերկրորդին՝ Բ. (2), յերրորդին՝ Ա. (1), իսկ շորրորդին լիով կալ՝ նահանջ է»²³⁸:

Քանի որ Հայոց թվականի սկիզբը դրվել էր 552 թ. հուլիսի 11-ին, ապա առաջին տարվա «Հայտնությունը», այսինքն հունվարի 6-ը, համընկել էր հայկական արաց ամսի 30-ի հետ»²³⁹:

235 Նույն տեղում, թ. 49բ:

236 Մատենադարան, ձեռ. № 1114, թ. 50բ:

237 «Առաջին ամի» ասելով հասկանում են նահանջից հետո եկող առաջին տարին, իսկ ինքը՝ նահանջը շորրորդն է: Այսպես օրինակ, Մատենադարանի № 3668 ձեռագրի «Պատճէնում» զրված է, որ թվականը 4-ի բաժանելիս եթե մնացորդը 1 է, դա եռանակում է, որ «յառաջին ամին ես յետ նահանջի (թ. 123բ, 124ա):

238 Մատենադարան, ձեռ. № 7098, թ. 137բ:

239 Լուսնի հասակի և եկեղեցական տոների կարգի համեմատությունից նույնպես պարզվում է, որ 553 թ. հունվարի 6-ը համընկել է հայոց 1 թվականի արաց 30-ի հետ (տե՛ս Ի. Աղամյան, Հայկական թվականի մասին գիտելիքներ. բազմակց, 1966, № 9—10, էջ 216):

231 Մատենադարան, ձեռ. № 2017, թ. 312բ, 6869, թ. 101բ:

232 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 66:

233 Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը, էջմիածին, 1952, № 1, էջ 36:

234 Մատենադարան, ձեռ. № 1114, թ. 44բ:

Ասենք, որ հայ տոմարագիտության պատմության մեջ Հայոց Մեծ թվականի առաջին տարվա, այսինքն սկզբնականի մասին տարբեր կարծիքներ կան. ըստ ոմանց՝ այն 552-ն է, իսկ ըստ մյուսների՝ 553-ը: Այս հարցը կարող է ավելի հանգամանալից ուսումնասիրության՝ թեկուզ պարզելու համար, թե տվյալ մատենագիրը կամ սկզբնաղբյուրը ո՞րն է համարել սկիզբ՝ 552 թ. հուլիսի 11-ը, թե 553-ի սկիզբը: Հարկ է նշել, սակայն, որ միջնադարյան մատենագիրների մեծ մասը նշում են 553 թ.:

Ըստ այդմ են դասակարգված տարեթվերը Անանիա Շիրակացուն վերագրված 532-ամյա աղյուսակում, այդտեղ հայոց շորրորդ տարին համընկնում է նահանջի հետ²⁴⁰: Եթե առաջին տարին լիներ 552-ը, ապա շորրորդ տարին նահանջ լինել չէր կարող:

Նույն բանը գտնում ենք Հակոբ Արիմեցու մոտ. «Արդ, ի դեռ Մեծ թուականին, հայոց նաւասարդն, որ տարեգլուխ եղաւ հայոց և սկիզբն թուականին, ըստ հոռոմոց ամսոյն ի յուլիս ամսոյ ի ԺԱ. (11) եղեալ է... Եւ յայտնութիւն յարաց ամսոյ ի Լ. (30) դիպեցաւ և ամն առաջնում նահանջի և շորրորդ ամն նահանջ, որ է զուգ թիւ»²⁴¹:

Ավելի ևս համոզվելու համար, «Պատճէն տոմարի» աշխատության թվականը հաշվելու վերահիշյալ սահմանումով, գտնենք մի օրինակ (տե՛ս աղյուսակ № 2):

Եթե ուզում ենք որոշել, թե 561 թվականը հայոց որ թվին է համապատասխանում, նայում ենք, թե այդ տարվա Հայտնությունը (հունվարի 6-ը) հայկական որ ամսի որ օրն է ընկնում: Այս դեպքում՝ մեհեկի 2-ը: Հաշվում ենք արաց 30-ից մինչև մեհեկի 2-ը, ստացվում է 3 օր, $3 \times 4 = 12$: Քանի որ 561-ը նահանջի առաջին տարին է, ապա, ըստ կանոնի, պիտի հանել 3: Ստացվում է $12 - 3 = 9$: Ուրեմն, 561-ը հայոց 9 թվականն է, ինչ որ երևում էր աղյուսակից:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ տոմարական սահմանումների հիմքում Հայոց Մեծ թվականի առաջին տարին ընդունված է եղել 553-ը: Սրա օգտին է խոսում նաև Հակոբ Արիմեցու հետևյալ հաղորդումը. «...սկիզբն թուականիս մերոյ է ՇՄԳ (553). թիւն, որ ի Քրիստոս է, բայց ոչ ըստ դրութեան, այլ ըստ թուելութեան...»²⁴²:

Թվականի մյուս սահմանումը կապված է գարնան օրահավասարի հետ. «Թուական այսպէս արա. կալ ԺԸ. (18) թիւ ահկի ամսոյն, թուեա

Նահանջ	Հայոց Մեծ թվական	Մ. թ.	«Հայտնություն»
	1	553	արաց 30
	2	554	»
	3	555	»
Նահանջ	4	556	»
	5	557	մեհեկի 1
	6	558	»
	7	559	»
Նահանջ	8	560	»
	9	561	մեհեկի 2
	10	562	»

մինչև ցգարնանամուտ...»²⁴³, իսկ այնուհետև նույն շարունակությունը, ինչ որ առաջին սահմանման մեջ էր:

Դժվար չէ համոզվել, որ եթե արաց 30 = հունվարի 6, ապա նույն տարում ահկի 13 = մարտի 20: Սահմանումը խորհուրդ է տալիս հայկական ցանկացած տարեթիվը գտնելու համար տեսնել, թե գարնանային օրահավասարը ահկի 13-ից ուր է հասել, կամ որ նույնն է՝ ահկի մեջ վերցնել 18 օր, հետո նայել, թե որ ամսի որ օրն է հասել այն, այդ քոչոր օրերը բաղմապատկել 4-ով, հաշվի առնել նահանջի հետ կապված կանոնը և կստացվի թվականը:

Ինչպես պարզ երևում է այս երկու սահմանումներից, հայոց տոմարի շարժական լինելը հաշվի է առնված, և այն կարելի էր օգտագործել այնքան ժամանակ, մինչև պակաս օրերը կուտակվեն և տան մեկ լրիվ տարի (1460-ամյա «Հայկալ շրջան»): Հայոց թվականը հաշվում էին հենց այդ շարժումին նայելով. տվյալ դեպքում այդ անում էին «Հայտնության» և գարնանային օրահավասարի շարժումին հետևելով:

Բայց քանի որ տոմարական հաշվումների ճշգրտությունը բխում էր եկեղեցական տոների ճիշտ հաշվելու անհրաժեշտությունից, ուստի հայերը չէին կարող իրենց տոմարով բոլորովին կտրվել մյուսներից: Պետք էր մյուս ժողովուրդների և, հատկապես, հուլյան տոմարի հետ համապատասխանությունը պահպանել: Հենց այդտեղ է, որ սովորական եկե-

240 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 263:

241 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 51ա:

242 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 100ա:

243 Մատենադարան, ձեռ. № 7098, Թ. 137բ:

դեցականները և ժողովուրդը դժվարությունների էին հանդիպում: Եվ միայն տոմարի իսկական, հմուտ մասնագետի փորձ և գիտելիքներ էին պետք՝ սխալները հասկանալու և ուղղելու համար:

Ինչպես արդեն ասացինք, միջնադարում Հայոց և Հոռոմեական թվականների միջև խզում էր առաջացել: Հովհաննես Սարկավազը նոր 532-ամյա հաշիվներն անելիս առաջարկում էր այն հանել անցած 532-ամյակի հետ միասին, այսինքն՝ հանել 533:

Հայոց տոմարի պատմության ուսումնասիրողները անդրադարձել են այդ հարցին և ավելորդ տարին կապել 1460-ամյա շրջանի հետ: Ըստ բանասիրության մեջ ընդունված կարծիքի, հերթական 1460-ամյա «Հայկայ շրջանը» ավարտվել է մ. թ. 428 թ.²⁴⁴:

Լ. Սեմյոնովն, օրինակ, գրում է. «Նա (Հովհաննես Սարկավազը—Ջ. է.) տարիների հաջորդական համարներից դուրս ձգեց... 428-րդ թվականը և կարելի է համոզված կերպով ասել, որ իրոք հայկական տոմարը կարգի բերեց»²⁴⁵:

Ուսումնասիրողների մի մասն էլ՝ նկատի ունենալով Հովհաննես Սարկավազի «Վասն զի լինի յաւելուած թիւ մի ի ժողովմանէ նահանջիցն յետ ՌՆԿ. (1460) ամաց, որով այլալիեալ ապականէ կանոնն»²⁴⁶ արտահայտությունը, եզրակացրել են, որ ավելորդ տարին առաջացել է ճիշտ 1460 տարի անցնելուց հետո:

Այսպես, Ա. Աբրահամյանը գրում է. «Հովհաննեսը հաշվում է նահանջ օրերի քանակը և գտնում, որ 1460 օրերի ընթացքում հայկական տոմարի մեջ մուտք է գործել ուղիղ մեկ տարի նահանջ, որը ինքն անհրաժեշտ է համարել դուրս նետել: Ահա այդ նկատառումով էլ նա խորհուրդ է տալիս, որ ՇԼԲ թվականի հիման վրա տարին գտնելու համար հայկական թվականից պետք է դուրս գալ ոչ թե ՇԼԲ այլ ՇԼԳ՝ հաշվի առնելով եկամուտ տարին»²⁴⁷: Ըստ Բ. Թումանյանի «Իմաստասերը... նշում է, որ

244 Տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց հայոց, հ. Ա, էջ 91: Մ. Օրմանյան, Ազգապատմ., հ. Ա, էջ 303:

245 Լ. Սեմյոնով, Ակնարկներ հայկական տոմարի մասին, էջմիածին, 1944, № 6, էջ 53: Այստեղ պետք է նկատենք, որ Հայոց Մեծ թվականը հիմնվել է 552 թ. և հայոց մատենագրության մեջ խոսվում է միայն և միայն այդ թվարկության մասին: Թե ինչպես են հաշվել «Հայկայ շրջանի» տարիները դրանից առաջ, հայտնի չէ: Ուրեմն 552 թ. սկզբնական ունեցող թվային համակարգից ի՞նչպես կարելի էր հանել 428 թ.:

246 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 281:

247 Նույն տեղում, էջ 100:

հայոց տոմարում նահանջ չլինելու պատճառով շորս տարին մեկ մի օրով առաջ ընկնելով 1460 տարվա ընթացքում ավելանում է մեկ տարի, և որ սխալն ուղղելու համար անհրաժեշտ է ՇԼԲ-ի փոխարեն ՇԼԳ վերցնել»²⁴⁸:

Հետաքրքիր է այս հարցի պատմությունը տալ Հակոբ Արմեցու բացատրության լույսի տակ, դրանով իսկ փորձելով քիչ ավելի մոտենալ հայոց տոմարի պատմության ուսումնասիրման կարևոր հարցերից մեկի լուսաբանմանը: Ավելորդ տարվա մասին նա խոսել է նաև «Ի խնդիրս հասարակաց օգտի» աշխատության մեջ, որտեղ ունկնդիրները նրան առաջարկում են այսպիսի մի հարց. «Ընդ է՞ր, զի յորժամ Հոռոմ թուական առնեմք և ըստ խոստուն՝ կալնումք զյաւակայն ՅԳ. (304) և զՀայ թուական ի վերայ բերեմք և առնեմք մեծ թուական հոռոմին և յորժամ կամիմք է. (7) երեակ և վերադիր առնել, եթէ թիւ մի ոչ պակասեցուցանեմք, ոչ բերէ զարուեստն»²⁴⁹:

Այդ որոշակի հարցին տրվում է այսպիսի պատասխան. «Ծանիր, որդի, զի այս ի պատճառէ հասարակածին եղև, զի հասարակածն յորժամ ի նաւասարդ եմուտ, զանխլաբար թիւ աւելի ի ներս եմուծ, և ոչ գիտացեալ բազմաց, շփոթեաց զամենայն կանոնեալսն առաջնոց հարցն, և այնմհետէ ոչ բերէ ուղիղ թուականս, զէ. (7) երեակս, զվերադիրս և զլրմունս»²⁵⁰:

Ունկնդիրների համար սա նորություն է, նրանց նորից են հարցնում. «Աղաչեմ բացայայտել, զյաւելեալ թիւդ, թէ ո՞րպէս հասարակածն զանխլաբար ի ներս եմոյծ»²⁵¹, որին Հակոբ Արմեցին պատասխանում է. «Դժուարին և, նուրբ է գիտութիւն սորա, զի անխու է և ծածուկ, բայց դու այսպէս իմա, զի ի դնել թուականին հասարակածն զարնանային յահկի ամսոյ ի ԺԳ. (13)-ն էր և փոխելով ըստ շորից շորից ամաց հասարակածն ըստ հայ ամսոցդ կատարեաց յահկի ամսոյն ի հետ զտարին և անցեալ, եմուտ ի նաւասարդի ամիս ի միւս տարին և արար թիւ մի յաւելուած, քանզի ունիմք զնահանջ թուականին և շորեքպատկեմք և լինի թուական և յաւելուած միոյ թուոյն շարժէ զամենայն կանոնեալսն, զի հասարակածն յահկի ԺԳ. (13) էն հասեալ մինչև յաւելեացի Ե. (5) ն՝

248 Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, հ. 1, էջ 66:

249 Մատենադարան, ձեռ. № 74, Բ. 332ա, 2017, Բ. 24ր: Հոռոմեական թվականը ակավում էր 248 թ., իսկ հայկականը՝ 552-ից (248+304=552):

250 Մատենադարան, ձեռ. № 74, Բ. 332ա, 2017, Բ. 24ր:

251 Մատենադարան, ձեռ. № 74, Բ. 332բ, 2017, Բ. 25ա:

դամս նՄԲ. (452), յորմէ հետէ եղաւ թուականն, ուղղապէս և միաբան-
 քայր ալոց ազգաց կանոնեալն կարգ, իսկ յորմէ հետէ հասարակածն
 եմուտ ի նաւասարդի ամիս, թիր իմն և անմիաբան վարի ընդ ալլան,
 եթէ ոչ ուղղեցիք»²⁵²: Քանի որ հայկական տոմարը նահանջի համար հա-
 տուկ օր չունի, ապա շորս տարին մեկ անգամ այդ օրը անցնում էր հա-
 ջորդ տարվա վրա: Այսինքն, շորս տարին մեկ անգամ տարվա որոշակի
 օր տվյալ տարվա մեջ ընկնելու փոխարեն անցնում էր հաջորդ տարվա
 վրա: Բայց դա տոմարական-եկեղեցական հաշիվներին չէր խանգարում
 այնքան ժամանակ, քանի դեռ զարնանային հասարակածը կամ հայտնու-
 թյունը, որոնցով սահմանում էին թվականը, կամ որոնց հետ էին կապ-
 ված եկեղեցական տոները, չէին անցել այդ սահմանը: Քանի որ զարնա-
 նային հասարակածի օրը ավելի շուտ կարող էր անցնել հաջորդ տարվա
 վրա, կամ որ նույնն է՝ հանդիպել նավասարդ ամսի հետ²⁵³, ապա ավե-
 լորդ թվի հետ կապված շփոթությունները սկսվեցին հենց այդ տեղից:
 Իսկ մինչ այդ անցել էր արդեն 452 տարի²⁵⁴:

Պետք էր սպասել, որ Հովհաննես Սարկավազը ևս ավելորդ թվի առա-
 ջացման մասին խոսելիս անդրադարձած լիներ ոչ միայն 1460 ամյակի
 ընթացքում տարի կուտակվելու վերաբերյալ ընդհանուր դատողութուն-
 ներին, այլև նշեր վերոհիշյալ հանգամանքը: Պարզվեց, որ նրա աշխա-
 տություններից մեկում հիշատակություն կա այդ մասին, բայց ոչ այն-
 պիսի մանրամասնությամբ, ինչպես Հակոբ Ղրիմեցու մոտ է: Գուցե
 պատճառն այն է, որ վերջինիս աշխատությունը դասախոսությունների
 գրառում է:

252 Մատենադարան, ձեռ. №№ 74, Բ, 332բ—333ա, 2017, Բ. 25ա, ր:

253	1 Նաւասարդ	8 արեգ
	2 հոռի	9 աճկի 13=մարտի 20
	3 սահմի	10 մարերի
	4 տրէ	11 մարգաց
	5 քաղոց	12 հրորտից
	6 արաց	13 ավելաց
	7 մեհեկի	

Եթե առաջին տարում մարտի 20=աճկի 13, ապա առաջին նահանջը անցնելուց հետո
 այն կհամապատասխանի աճկի 14-ին և այդպես շարժվելով կանցնի մարերի, մարգաց,
 հրորտից, ավելաց ամիսների վրայով:

254 Իրոք, աճկի 13-ից մինչև նավասարդի 1-ը կա 113 օր (աճկից 18 օր+մարերի
 30 օր+մարգաց 30 օր+հրորտից 30 օր+ավելաց 5 օր=113 օր): Քանի որ այդ շար-
 ժումը եղել է 4 տարին մեկ անգամ, ապա 113-ը պիտի բաղմապատկել 4-ով՝ 113×
 4=452:

Ահա թե ինչ է գրում Հովհաննես Սարկավազը. «Վասն զի լինի յաւե-
 շուած թիւ մի ի ժողովմանէ նահանջիցն յետ Ռնկ (1460) ամաց, որով այ-
 չայլեալ ապականէ կանոնն: Եւ ոչ այսքան և եթ, այլ և յամենայն լրմոնս
 իննետասներեկացն ամաց և յարեգակնայինս ըստ շորից, որովք լինի յա-
 տնումն և պակասութիւն վերադրացն, որ ըստ հայում: Յայսպիսոյ սահ-
 մանէ անդիտանան բազումք, մանաւանդ յորժամ դիպեցի յեղանակին
 գարնայնոյ պանցանել յետ աւուրցն աւելեաց, յամիսն առաջին, կոչեցեալ
 նաւասարդի... Եւ են այժմ ամք այդպիսի սխալման ճժԳ (113): Վասն
 որոյ զյաւելեացն թիւն պակասուցաք ի կոչելոյն թուական: Եւ երթամք ի
 բաց ոչ ՇԼԲ (532), այլ ՇԼԳ. (533)»²⁵⁵:

Հակոբ Ղրիմեցու բացատրության հաջորդ մասից իմանում ենք, որ
 եթե մինչ այդ հոռմեական նահանջները համընկնում էին հայկական՝ 4-ի
 վրա բաժանող թվականներին, ապա ավելորդ տարին մտնելուց հետո այդ
 համապատասխանությունը խախտվել է, որի հետևանքով հայոց տոմարի
 զանազան էլեմենտներ հնարավոր չէ ճշտությամբ հաշվել. «Ի դեկ թուա-
 կանին առաջի ամ էր նահանջի, զի լրումն յապրիլի ժԳ. (13)ն²⁵⁶ էր, որ
 առաջին ամ էր, և տես ի Շ. (500) եակն, որ զլուխ բուրբին յապրիլի ժԳ.
 (13)ն է, զի առաջին ամ է, և նահանջն ի յահկի ժԳ. (13)էն մինչև ի յաւե-
 լեացի Ե. (5)ն նՄԲ (452) ամ ի զոյգ թիւն գայր՝ ի Գ. (4)ն և ի Ը. (8)ն,
 ի ժԲ. (12)ն, ի Ի. (20)ն և այլն... Յորժամ հասարակածն եմուտ ի նաւա-
 սարդ, յայնմհետէ ի Ֆարտ թիւն գա մինչև յօրս... Այս է պատճառն, զի
 յառաջ հասարակածն գայր... և ապա տարէմուտն, և այժմ յառաջ տարէ-
 մուտն գայ և ապա հասարակածն, վասն զի հասարակածն կոխեաց զտարէ-
 մուտն և էանց յայն կոյս»²⁵⁷:

Այնուհետև Հակոբ Ղրիմեցին խոսում է սխալը ուղղելու մասին: Նա
 գրում է, որ Հայոց թվականից Հոռմեականին անցնելիս անհրաժեշտ է
 ավելորդ թիվը հանել, հակառակ դեպքում ամեն ինչ սխալ կստացվի: Ընդ
 որում, կարելի է Հայոց թվականից նախ հանել այն, ինչպես առաջարկել
 է ժամանակին Հովհաննես Սարկավազը, հետո ավելացնել 304-ը. «Եւ թէ
 կամիս որ Հոռոմ թուականն ուղիղ գայ և ի լման և զարուեստն զեղեցիկ բե-
 րէ, դու որպէս զՍարկավազ վարդապետն արա, զի նա զաւելի թիւս ի հետ

255 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 281, 282:
 Իրոք, 551+452+113=1116 Բ. Սարկավազի ժամանակներն են:

256 Իրոք, ՇԼԲ աղյուսակի 1-ին տարվա լուսնի ավագ լրումը ապրիլի 13-ն է (տե՛ս
 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 263):

257 Մատենադարան, ձեռ. №№ 74, Բ. 333ա, ր, 2017, Բ. 25բ, 26ա:

չրջանին գնաց, զի շրջանն որ ՇԼԲ. (532) է, ՇԼԳ (533) գնա և հանէ գաւելիք թիւն ի բաց, և մնացեալն ի սկիզբն լինի նոր շրջանի, և գա ամենայն ինչ ուղիղ, և նահանջն անկանի դարձեալ ի գոյգ թիւն. և տես ի Շ. (500)-եակն, որ փոքր թուականան վարի, որ գլուխ բոլորին ԺԳ. (13)ն է»²⁵⁸:

258 Մատենադարան, ձեռ. №№ 74, Բ. 335ա, 2017, Բ. 28ա:

Այստեղ մի փոքր բացատրություն տանք Փոքր թվականի, կամ որ նույն է, Հովհաննես Սարկավագի անվան հետ կապված 532-ամյակի մասին: Ասենք, որ Սարկավագը XI դ. խոշորագույն մտածող է, որի աշխատանքները ոչ լրիվ չափով են ուսումնասիրվել և էլի կարոտ են ուսումնասիրման՝ փրիսոփայություն, ճշգրիտ գիտությունների և, մասնավորապես, սոմատագրությունից առումով: Չնուազանցությունների հետազոտման ընթացքում եկել ենք մի եզրակացության, որը կարող է օգտակար լինել հետագա ուսումնասիրողների համար: Խոսքն այն մասին է, որ Փոքր թվականը նույնպես հիմնված է շարժական տոմարի վրա: Այսպես, վերջիններ հենց Հովհաննես Սարկավագի աշխատությունների շարքում հրատարակված «Պատճէն տումարի» բնագրի մեջ տեղ գտած Փոքր թվականի երկու սահմանումները՝ մեկը կապված հայտնության օրվա հետ, իսկ մյուսը՝ զարնանային օրահամարի հետ, ինչպես որ եղել է Հայոց Մեծ թվականի դեպքում: Վերջինիս սահմանումից հետո, որը կապված էր արագ 30-ի, այսինքն 553 թ. հայտնության օրվա հետ, տրված է. «Ի Մեծ թուականէն ՇԼԳ. (533) ի բաց կրթ՝ Փոքր է: Դարձեալ կալ յերեքտասանէն մարգաց ամսայ, թուես մինչև ցյայտնութիւնն, յորեքպատկեա՝ նոր թուական է: Թէ յառաջին ամին ես՝ Գ. (3) եթթ, եթէ յերկրորդին՝ Բ. (2)» (տե՛ս Ա. Արքանամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 205):

Ինչպես տեսնում ենք, դարձյալ հաշիվը կատարվում է նահանջի հատուկ օր շունհնալու պատճառով տարվա օրերը, տվյալ դեպքում՝ հայտնության օրը, շորս տարին մեկ անգամ, մեկ օրով շարժվելու օրինաչափության վրա. բնդ որում սկզբնակետը համապատասխանում է այն տարվան, երբ հայտնությունը, այսինքն՝ հունվարի 6-ը համընկնում է հայկական մարգաց ամսի 13-ին: Գծվար չէ համոզվել, որ դա եղել է հենց առաջին 532-ամյակը ավարտելուց հետո (տե՛ս Բ. Փուլանյան, Տոմարի պատմություն, էջ 74: Այդ տարին համապատասխանում է Հայոց Մեծ թվականի ՇԼԳ (533) տարվան, կամ որ նույն է մ. թ. 1035 թ.):

Հայ միջնադարյան մատենագրության մեջ Փոքր թվականի սկզբնակետի մասին խոսք չկա: Ընդ որում, Փոքր թվականը Մեծի հետ համեմատած, շատ ավելի քիչ է գործածված, բայց նրա հաշվարկի սկզբի մասին որևէ տեղեկություն չի եղել մեր կարծիքով բացատրվում է հենց այն հանգամանքով, որ նա Մեծ թվականի հետ կապված 532-ամյակի ավարտից հետո սկսվող նոր 532-ամյակի հետ առնչվելով, բնականաբար հանդիսանում էր նրա շարունակությունը, և նոր տեղեկությունները նրա մասին ավելորդ էին:

Ավելի ևս համոզվելու համար այս բանում կարող ենք վերցնել Փոքր թվականի մյուս սահմանումը, որտեղ իբրև սկզբնակետ վերցված է այն տարին, երբ զարնանային օրահամարը համընկել է նավասարգի 21-ին և որը դարձյալ համապատասխանում է ՇԼԳ. (533) տարուն (տես նույն տեղում):

Ուղում ենք ավելացնել, որ ըստ երևութի՝ քաղաքական-եկեղեցական նկատառումներով, անցում՝ անշարժ, կամ որ նույնն է՝ հուլյան տոմարին, չի արվել նույնիսկ Հով-

Քանի որ Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարը այնպես շատավ գործածություն մեջ, ինչպես որ շարժականը հարատևեց, իսկ Փոքր թվականն էլ օգտագործվում էր ոչ միշտ, այն էլ Մեծ թվականին զուգահեռ, ուստի հարկ էր ավելորդ թիվը հաշիվներից դուրս նետել: Հակոբ Արիմեցին գրում է, որ ուղղումը երկու ձևով կարելի է անել. «Դու ուղղեա կրկին կերպիւ. կամ դաւելի թիւն ի բաց ձգէ ի մեր թուականէս, և գայ ուղիղ հոռոմ թուականն առանց յաւելուածոյ և կամ զյարակայն թիւ մի պակաս կալ, այսինքն՝ 3Գ (303) և դարձեալ գայ ուղիղ»²⁵⁹:

Բայց Արիմեցու կարծիքով պետք չէ 304-ը փոքրացնել մեկով, դրանով իսկ խախտելով մեր նախնիների կազմած կանոնները: Հոռոմեական տոմարով հաշվումներում սխալ շանելու նպատակով պետք չէ նաև նրանց թվականը մեկով փոքրացնել: Քանի որ ավելորդ թիվը առաջացել է մեր տոմարի պատճառով, ուստի մեր թվականից պետք է հանել այն. «Գաւելի թիւն ի մեր թուականէն հան և բեր ի վերայ 3Գ (304)-ին և գայ ուղիղ... զի այն մեր աւելի թիւն է, որ կու պակասեցնես, որ ի հասարակածէն եղև, և ոչ է ի հոռոմ թուականէն...»²⁶⁰:

Այնուհետև հմուտ մանկավարժը ուսանողներին զգուշացնում է, որ եթե հաշվումներում առանց ավելորդ թիվը դուրս գցելու ստացվում են ճիշտ արդյունքներ, դա նշանակում է, որ այն հաշվի չի առնված, ուղղումն արդեն կատարված է, այլապես. «առանց թիւ մի պակաս կալելոյ ոչ բերիցէ զարուեստն... կանոնեալքն առաջին հարցն, որ դամս նՄԲ. (452) ուղիղ բերէր, և յորժամ աւելի թիւս ի ներս անկաւ, այլ ոչ կարէ բերել. եթէ ոչ թիւ մի պակաս կալցես»²⁶¹:

Հայոց տոմարի համար սկզբունքորեն կարևոր այս հարցի քննարկումը Հակոբ Արիմեցին ավարտում է տվյալ տարվա օրինակով, ցույց տալով սխալը. «Դարձեալ ծանիր, զի գաւելի թիւս դժուար է հասարակ մտաց իմանալ, զի անխաբար եմուտ. վասն այն զանխուլ և ծածուկ է հասարակ տումարագիտաց վասն այն յերկարեցի: Բայց թէ կամիս յայտնի և դիրաւ ճանաչել գաւելի թիւս, դու այսպէս իմա, զի զթուականս մեր ի գլուխ Շ. (500)-եակ շրջանին եղաւ, որ ապրիլի ԺԳ. (13) է, և մեկ անգամ զանձամբ եկեալ է շրջանս ՇԼԲ. (532) ամ և դարձեալ նոր սկսեալ, և այժմ նոր շրջա-

հաննես Սարկավագի կողմից: Նա իր ստեղծած անշարժ տոմարը կիրառել է միայն Յայսմավորը կոչված ժողովածուներում:

259 Մատենադարան, ձեռ. №№ 74, Բ. 335ա, Բ. 2017, Բ. 28ա, Բ:

260 Մատենադարան, ձեռ. №№ 74, Բ. 335բ, 336ա, 2017, Բ. 28բ, 29ա:

261 Մատենադարան, ձեռ. №№ 74, Բ. 336ա, 2017, Բ. 29ա:

նիս 317 (324) ամ է, որ առնէ ԸՃԾԶ. (856) և է ամս նահանջ, և թուականս մեր է ԸՃԾԷ (857). ահա տես զաւելի թիւս, որ եղև ի հասարակածէն, զի յորժամ թուական առնես և չորեքպատկես, գտանես զնահանջի ամս՝ նահանջի առաջին ամ, որ է ամենևին թիւր և սխալ և սուտ: Այսքան բավականացի վասն թուականիս»²⁶²:

Այս բոլորից հետո, ինչպես «Պատճէնի» բոլոր սահմանումների դեպքում, այնպես էլ այստեղ վերջում նշում է. «Արա թուականն ըստ խրատու Պատճէնին, որպէս և հրամայէ»²⁶³:

Թվականի մյուս սահմանմանը Հակոբ Արիմեցին անդրադարձել է «Մեկնութիւն տումարի» աշխատութիւնում: Այսպես, նա գրում է. «Երբ կու կալնումք ի յարաց թիւ մի մինչև ցյայտութիւն և չորեքպատկեմք զնոսայ, որ գտնումք զթուականն, նա ՊԿԴ. (864) կուգայ, և թուականս ՊԿԵ. (865) է: Եւ այս թիւ մի աւելի կուգայ, և թէ վասն է՞ր. զի պարտ է ըստ արուեստին խրատու, որ ՊԿԴ. (864) լինէր թուականն և ոչ ՊԿԵ. (865)»²⁶⁴:

Այս անգամ էլ նույնպիսի մանրամասնությամբ և համբերատարությամբ Հակոբ Արիմեցին բացատրում է, որ այդ սահմանումով Հայոց թվականը հաշվելիս՝ մինչև Հայոց 744 թ. ամեն ինչ Հռոմեական թվականի հետ ճիշտ էր գնում, իսկ երբ նավասարդը և Հայտնութիւնը համընկան (744 թ.), առաջ եկավ ավելորդ մի թիվ. «Յայտնութիւն յարաց ամսոյ... Է. (30) էն մինչև յաւելեացի Ե. (5) եկն... որ է ՃԶԶ. (186) օր: Եւ առնէ ՉԽԴ. (744) ամ, նահանջն հանդիպի ի զոյգ թիւն, որ է Դ. (4), Ը. (8), ԺԲ. (12) և այլն ըստ կարգի ... Յայտնութիւնն զայսքան ժամանակս յառաջ գայր, քան զնաւասարդն, և ապա յետոյ գայր նաւասարդն և յաւելոյր զֆարտ թիւ թուականին ի նահանջի յառաջի ամն: Իսկ յորժամ եկն Յայտնութիւն և եմուտ ի նաւասարդն ի ՉԽԸ (748) ամն, յայնժամ յառաջ խաղացոյց նահանջն զնաւասարդն»²⁶⁵:

Այնուհետև նա ցալով արձանագրում է, որ «եւ ի ՉԽԹ. (749) թուէն ի վեր ՌԵԿ. (1460) ամ նահանջն ի ֆարտ թիւն պիտի գայ. եւ նահանջի առաջին ամն ի զուգն: Եւ յորժամ դարձեալ կրկին անգամ կոխէ նաւասարդն

զՅայտնութիւնն, յայնժամ դարձեալ ուղղի իբրև յառաջինն և նահանջն գայ ի զուգ թիւն և նահանջի առաջին ամն՝ ի ֆարտ թիւն»²⁶⁶:

«Մեկնութիւն տումարի» աշխատութեան մեջ քննարկվող հաջորդ հետաքրքիր հարցը վերաբերում է նահանջին: «Մեկնութիւն տումարի Անդրէասայ»-ում և Սամվել Անեցու մոտ «Խ՞նչ է նահանջ» հարցի պատասխանը այսպիսին է. «զԳ. (3) ժամն, որ ի շորս ամին ար մի կատարի՝ որիչ կարգեցին և կոչեցին նահանջ, որ է շարժող եղանակաց և տանից»²⁶⁷:

Քիչ ավելի ընդարձակ է Անանիա Շիրակացու տոմարում, մանրամասն տրված է շորս տարվա ընթացքում 1 օր կուտակվելու բացատրութիւնը²⁶⁸:

Հակոբ Արիմեցու մոտ այս հարցն էլ մյուսների նման տրոհված է ենթահարցերի՝ «Խ՞նչ է, ինչի՞ց է գոյանում, քանի՞ տեսակ է լինում»²⁶⁹ և դրանցից յուրաքանչյուրի պատասխանը տրված առանձին: Այստեղ, սակայն ամենահետաքրքիրը «նահանջի» շորս տեսակների մասին հաղորդումն է. «Գիտելի է, զի նահանջն ի Դ. (4) բաժանի՝ ի նահանջն, ի յամսանահանջն, ի նահանջից նահանջն, ի գերադրական նահանջն: Առաջին նահանջ այս է, որ զորոշումն ժամանակաց առնէ, որպէս ասացաք, երկրորդ նահանջ ամսանահանջն է, որ զուգաւորութիւն ամսոց ազգաց առնէ, որպէս է հոռոմոց և հայոց: Երրորդ նահանջ՝ նահանջից նահանջն է, որ է Արեգական և Կուսինն, որ զԿուսինն յիւր շրջանն ձգէ և զԱրեգակն ի յիւրն: Չորրորդ՝ գերադրական նահանջն այն է, որ զՇ. (550)-եակ աւագ շրջանն կատարէ և զԱրեգակն և զԿուսինն ի ստեղծման շաւիղն ձգէ»²⁷⁰:

Նախորդ դարերի մեկնութիւններում մենք նահանջի այդպիսի բաժանման չենք հանդիպում:

Անանիա Շիրակացու «Տոմարում» և Սամվել Անեցու մոտ կա միայն «նահանջից նահանջը», «զԽ՞նչ է նահանջից նահանջն—ի կիտէ ի կէտ նահանջ կոչի և բոլորին բովանդակ նահանջից նահանջ»²⁷¹,—կարգում ենք «Տոմարում»: Իսկ Սամվել Անեցու մոտ նույնը սահմանված է այսպես.

266 Նույն տեղում, թ. 51բ:

267 Մատենադարան, ձեռ. № 2017, Թ. 412բ և Ա. Արախամյան, Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատութիւնը, էջմիածին, 1952, № 1, էջ 36:

268 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 66—68:

269 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 51բ:

270 Նույն տեղում, Թ. 52ա:

271 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 68:

262 Մատենադարան, ձեռ. № 74, 336բ, 2017, Թ. 29ա, բ: Ինչպես տեսնում ենք, աշխատանքը գրված է 324+1084=1408 թ. որը նահանջ էր, բայց Հայոց թվականն էր 1409, եթե հաշվից չհանեինք ավելորդ թիվը:

263 Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 337ա, 2017, Թ. 29բ:

264 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 50բ, 51ա:

265 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 51ա:

«ի քսան և ութ ամին եօթն օր լինի և շաբաթ կատարի և այն կոչի նահանջից նահանջ»²⁷²;

Ինչպես տեսնում ենք, 28 տարվա ընթացքում նահանջ օրերից կուտակված մեկ լրիվ շաբաթն է կոչվում «նահանջից նահանջ»:

Հակոբ Ղրիմեցու մոտ «նահանջից նահանջ» սահմանումը տրված է ոչ միայն Արեգակի, այլև Լուսնի համար, եթե առաջինը վերաբերում է 28-ամյա շրջանին, ապա երկրորդը՝ 19-ամյա շրջանին²⁷³: Հետաքրքիր է նաև «գերազարական նահանջը», որը վերաբերում է 532-ամյա շրջանին, որից հետո կրկնվում են թև Արեգակի և թև Լուսնի հետ կապված հաշվումները:

Սակայն հայկական տոմարի համար, պարզվում է, որ, առանձնահատուկ նշանակություն է ունեցել «ամսանահանջը», որին ոչ մի ուրիշ տոմարագետի մոտ չենք հանդիպել: Ամենայն հավանականությունով, դա այնքան գործնական, առօրեական մի հասկացություն է եղել, որ մեկնիչները դրա մասին չեն էլ հիշատակել: Պարզվում է, որ «Պատճէն տումարի» գրեթե բոլոր ընդօրինակությունների հայկական տոմարի բաժնում այն կա: Նախ տրված է սահմանումը. ամսանահանջը գտնելու համար պետք է վերցնել Հայոց Մեծ թվականի նահանջը, բաժանել 30-ի և վերցնել մնացորդը²⁷⁴:

Այսինքն, վերցնում էին Հայոց Մեծ թվականի սկզբից մինչև տվյալ պահը անցած նահանջները, դրանից հանում ամբողջ ամիսները, այսինքն 30-ական օրերը, իսկ մնացորդով կատարում հաշվումներ: Սահմանումից հետո տրված է թվերի մի շարք, որը բոլոր դարերի «Պատճէններում» միևնույնն է: Շարքի վերնագիրն է. «ամսանահանջը» կամ «այս են ամսանահանջը և անփոխ եղանակներն»²⁷⁵, կամ «յաղագս անփոխ եղանակաց»²⁷⁶, կամ «ամսախորանք են այսորիկ»²⁷⁷ կամ «ածէքն»²⁷⁸, որն այստեղ, անշուշտ, նշանակում է «ավելացնել», «վրա բերել»:

Շարքից ներքև տրված են տարվա անշարժ տոները, այսինքն այն օրերը, որոնք անփոփոխ են՝ ասենք զարնանամուտը, աշնանամուտը, Հայտնությունը և այլն, գտնելու կանոնները հայոց շարժական տոմարով:

272 Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը, էջմիածին, 1952, № 1, էջ 36:

273 Մատենադարան, ձեռ. № 1114, ք. 52ա:

274 Տէ՛ս, օրինակ, Մատենադարան, ձեռ. № 3668, ք. 129ա, 4284, ք. 138բ, 6731, ք. 170բ, 5117, ք. 126ա:

275 Մատենադարան, ձեռ. № 2005, ք. 11ա:

276 Մատենադարան, ձեռ. № 5975, ք. 6բ:

277 Մատենադարան, ձեռ. № 4284, ք. 138բ:

278 Կիրեղ Սեբաստեան, Բուն տոմար հայոց, էջ 11:

Այսպես, այդ շարքը սկսվում է հետևյալ կանոնով. «Կալ զամսանահանջըն, Ը. (8) ի վերայ ած, տրէի տուր՝ զարնանամուտ է»²⁷⁹: Այնուհետև նույն սահմանման մեջ 8-ի փոխարեն վերցրած է 13²⁸⁰, երբ ուզում են գտնել «Աւետիք այլազգեաց» և այլն:

«Պատճէն տումարի» աշխատության տարբեր օրինակների համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ թվերի շարքը և կանոնները անփոփոխ են. փոխվում է առաջին տողի, կամ որ նույնն է՝ զարնանային օրահավասարի կանոնի մեջ հայկական ամսվա անունը և իհարկե, համապատասխանաբար նաև մյուս կանոնների միջի ամսանունները, ինչպես որ կարելի էր եզրակացնել «ամսանահանջի» սահմանումից:

Դա փաստորեն համապատասխանություն էր ստեղծում հայոց շարժական և հարևան անշարժ, հիմնականում հուլյան, տոմարների միջև, առանց խորանալու տոմարի բոլոր սահմանումների մեջ: Քանի որ ամիսն էր փոփոխվում, իսկ 30 օրանոց ամիսը կկուտակվեր $30 \times 4 = 120$ տարում, ապա տոմարագետները պետք է հետևեին, որ ամեն 120 տարի անցնելուց հետո «Պատճէնի» այդ մասում ուղղումը մտցվելու: Սակայն ինչպես միջնադարյան մյուս տոմարագետների, այնպես էլ Հակոբ Ղրիմեցու մոտ այդ մասին խոսք չկա:

Չեռագրերից մեկում պահպանվել է այսպիսի մի հաշվարկ. «Յամէն ՃԻ. (120) տարի ի Ա. (1) ամիսն ջուր կու օրհնուի և անտի յառաջիկայ ամիսն անցանէ: Նոյնպէս յամէն ՃԻ. (120) տարի զածէքն փոխէ, վասն զի ամսանահանջն ԼԱ. (31) կու լինի, զԼ. (30) ի բաց երթ և զԱ. (1)ն բռնէ և տուր յառաջիկայ ամիսն ածէքացն»²⁸¹: Սա թույլ է տալիս եզրակացնելու, որ այդ անցումը կատարվում է 120 տարին մեկ անգամ հանդիսավոր պայմաններում: Երևի դա է պատճառը, որ այդ հարցի շուրջ տոմարագետները առանձին բացատրություն չեն թողել:

Այսպիսով, հայոց տոմարի պատմության համար կարևոր էր ոչ միայն 1460-ամյա, այլև 120-ամյա պարբերաշրջանը:

Ինչպես տեսնում ենք, հայոց շարժական տոմարի տեսությունը գրող տոմարագետը շնայած ազգային-եկեղեցական սկզբունքներից²⁸² էլնելով

279 Մատենադարան, ձեռ. № 4454, ք. 363ա:

280 Նույն տեղում:

281 Մատենադարան, ձեռ. № 7898, ք. 367բ:

282 Հայտնի է, որ հայոց եկեղեցին տարբերվել է հարևան եկեղեցիներից զավանական տարբեր հարցերով. հիմնական տարբերություններից մեկն էլ այսպես կոչված «խաչեցար» բառի հավելումն էր «Սուրբ Աստված» արտահայտությանը: Մելիքսեթ-Քեկովը այդ մասին

չի ընդունել հուլյան անշարժ տոմարը, սակայն ամենայն ճշգրտությունը հաշվի է առել նահանջի հետ կապված սխալները և աշխատել դրանք վերացնել այլ ուղիներով:

Նույնպիսի մանրամասնություններ և բազմակողմանի հարցերի ընդգրկումով Հակոբ Ղրիմեցին բննում է «Պատճէնի» մնացած բոլոր սահմանումները: Միջնադարյան այդ կարևոր բնագիրը ավարտվում է հետևյալ տողերով. «Ուր շափ և համար ոչ է, անդ և ոչ գիտություն է: Եւ ուր ոչ գիտություն, անդ մոլորություն, որպէս ի թիւս համարոյ ծովուց, ցողոց: Զի թէ ոչ գիտասցէ զաստիճանս կենդանակերպիցն, զիս՞րդ գիտասցէ զԱրեգական հոլովմունս: Եւ եթէ ոչ զհոլովմունս, նաև ոչ զմասունս, և եթէ ոչ զմասունս, նաև ոչ զժամս, և եթէ ոչ զժամս, նաև ոչ զաւուրս, և եթէ ոչ զաւուրս, նաև ոչ զշարաթս, և եթէ ոչ զշարաթս, նաև զամիսս, և եթէ ոչ զամիսս, նաև զտարիս, և եթէ ոչ զտարիս, նաև ոչ զժամանակս, և եթէ ոչ զժամանակս, նաև ոչ զդարս... Այսպիսով, յայտնի եղև, զի ուր ոչ է շափ և համար, անդ և ոչ գիտություն»²⁸³:

«Մեկնութիւն տումարից» անմիջապէս հետո սովորաբար ընդօրինակված է լինում «Նորին Յակոբ վարդապետի Ղրիմեցոյ Յաղագս տումարական մակացութեան, թէ ի յորոց մարզկանէ արհեստաւորեցաւ» փոքրիկ աշխատությունը, որն, անկասկած, նույնպէս գրված է 1416 թ. Մեծոփում և կազմել է նույն զասագրքի բաղկացուցիչ մասը:

Հեղինակը ուսանողներին պատմում է, թե տումարագիտությունը երբ է սկիզբ առել և ում կողմից: Այսպէս, Մովսեսը կարգել է զատկի լրում-

ըրում է. «Հայ եկեղեցու կողմից մինչև այժմ պահպանված այդ խմբագրությունը տարբերվում է կաթողիկոսականից փաստորեն միայն նրանով, որ «անմահ» բառից հետո ավելացվում է «որ խաչեցար վասն մեր» արտահայտությունը, այսինքն «Սուրբ Աստուած, սուրբ և հօր, սուրբ և անմահ»-ի փոխարեն երգվում է «Սուրբ Աստուած, սուրբ և հօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր»: Եվ հենց այս նորամտություն պատճառով մի անգամ չէ, որ հայ եկեղեցին ստիպված էր պատասխան տալ իր բազմադարյան փյուռյան ընթացքում (տե՛ս Մ. Меликсет-Бекоев, Грузинский извод сказания о поете «араджавор» с. 106): Մասնագետների կողմից ընդունված է, որ այդ նորամտությունը և դրանով հարևան եկեղեցիներից առանձնանալու փորձը հայ եկեղեցու կողմից արվել է դեռ V դ. կեսից (տե՛ս Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, Կնիք հաստոյ ընդհանուր սուրբ եկեղեցոյ, էջմիածին, 1914, էջ LXXIII—LXXV): Զեռագրերում պատահում են տեղեկություններ այն մասին, որ մեր տոմարի «շրջվելը» կապված է եղել «խաչեցար»-ի ընդունման հետ: Իսկ Հովհաննէս Վանականը գրում է. «Եւ որպէս ոչ ընկալան Հայք զարաղանդն Քաղկեդոնի... Այսու սահմանա վարեցաւ Անաստաս և զՍուրբ Աստուածն խաչեցան հաստատեաց» (Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ, էջ 164):

²⁸³ Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 97ր, 98ա:

ները, նրանից հետո եզրասը նորոգել է այն՝ դարձյալ երրայեցինների համար և այլն, մինչև որ Անդրասը. «արար միաբանութիւն ամենայն տիեզերաց լրմանց, ԹԺ (19) երեկաց, կրկնակաց և տարէմտից և այլ զանազան խորհրդոց...»²⁸⁴:

Այնուհետև արված է Անդրեասի 200 ամյակի ավարտից հետո զատկական հաշիվների շփոթության և էաս Աղեքսանդրացու խմբի կատարած աշխատանքի պատմությունը: Դրանից հետո նա դարձյալ անդրադառնում է Հայոց Մեծ թվականի հիմնադրման ժամանակի և հետագայում առաջացած ավելորդ տարվա հարցերին, վերջինիս մասին նշելով միայն, «որպէս բացայայտեցար ի մեկնութիւն թուականին»²⁸⁵:

Ավարտելով իր խոսքը տոմարի մասին, Հակոբ Ղրիմեցին նշում է, որ գիտություն այդ բնագավառում սխալվել աններելի է, որովհետև պատճառ է դառնում հետագա խառնաշփոթությունների. «Ծանիր, որդի, զի յախմար գրչէ ապականեալ է բազում ինչ ի մասանց տումարական արհեստիս, նաև ի մեկնութիւնս վասն ղթիւսն յաւել և պակաս գրելոյ: Զի տումարի գրողն պարտ է, զի քաջ վերահասու լինի տումարական մակացութեանն, և ապա համարձակի ի գրելն, զի տումարս ոչ է իբրև զայլ գրեանս: Թէպէտ և սխալն յամենայն գիրս ոչ մեկնի, բայց թէ պատահէ յայսն, կարողութիւն է վարդապետաց այլ իմն մտօք ուղղել զայն, բայց զի տումարական գիտութեանս անկարելի է, զոր օրինակ՝ մեկն անկարելի է լինել Բ. (2) կամ Բ. (2) Ա. (1): Այսպէս անկարելի է թիւ մի աւելի կամ պակաս գրել, թէ ոչ՝ սխալ է զարուեստն»²⁸⁶:

Թվում է, թե XV դ. սկզբներին, երբ կար հուլյան օրացույցը, երբ գոյություն ուներ Հովհաննէս Մարկավագի բարեփոխած անշարժ տոմարը, անհեթեթություն էր՝ շարունակել հաշվումներն անել հայոց շարժական տոմարով, մանավանդ, եթե նկատի ունենանք դարերի ընթացքում առաջ եկած ավելորդ տարին և նրա հետ կապված դժվարությունները:

Սակայն եթե հարցին մոտենանք ժամանակի քաղաքական-եկեղեցական պայքարի տեսակետից, այն ավելի պարզ կդառնա:

Հակոբ Ղրիմեցու ժամանակներում հայկական եկեղեցու ինքնուրույնությունը համար մեծ վտանգ էին ներկայացնում «ունիթոնները» կամ «միաբարները»:

²⁸⁴ Նույն տեղում, Թ. 98ր:

²⁸⁵ Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 101ա:

²⁸⁶ Նույն տեղում, Թ. 99ր:

Դեռևս XIV դ. սկզբներին հիմնվում է Մարաղայի լատին եպիսկոպոսությունը, իսկ Քոնստանտնուպոլսի Բարթոլոմեոս Մարաղացու գլխավորությունով, որտեղ արհամարհելով հայկական ծեսերը, սովորությունները, դրականությունը, ունիթոսները լատիններենից թարգմանում էին կաթոլիկական ոգով կրոնական գրքեր, վերջինների միջոցով հայերի մեջ տարածելով Արևմուտքի սխոլաստիկական գաղափարները: Նրանց հայրենամերժ գործունեությունը առաջ է բերում հուզումներ և զորեղ հակազդեցություն՝ ի դեմս Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու, որոնք իրենց աշակերտներին ներշնչում էին լինելու ոչ միայն ուսումնասիր, այլև անաղարտ պահել հայոց լեզուն, գրականությունը, հայրենի եկեղեցական ավանդույթները: XV դ. սկզբին այդ սուրբ գործը իր վրա է վերցրել Մեծոփի դպրոցը:

Ինքնին հասկանալի է, որ հակաունիթոսական այդ պայքարում տոմարի հարցը ևս ունենալու էր իր որոշակի տեղը: Դրանով պետք է բացատրել Թովմա Մեծոփեցու խնդրանքը՝ տոմարի մեկնության շուրջ դասեր կարդալու և հետո գրի առնելու մասին՝ ուղղված Հակոբ Արիմեցուն:

Ասենք, որ շարժական տոմարից անշարժին անցնելը մեծ դժվարությունների հետ չէր կապված, քանի որ աչքի առաջ էին ինչպես հուլյան, այնպես էլ հարևան մյուս ժողովուրդների՝ հատկապես «ալեքսանդրյան» օրացույցը: Դժվարը՝ հայոց շարժական տոմարը մյուսների հետ համապատասխանեցնելն էր, որն այնպես վարպետորեն արված է «Պատճէն տումարի» կոչվող աշխատության մեջ: Այս իմաստով մեծ ու շնորհակալ գործ է վերցրել իր վրա Հակոբ Արիմեցին՝ մաքրել հայոց տոմարը սխալներից, դրանով իսկ փրկելով այն՝ գործածությունից դուրս գալու վտանգից: Մեզ համար պարզ է դառնում, որ ուսանողը ձեռքի տակ ունենալով տոմարի շարադրանքի նոր խմբագրված տարբերակը և դրա մանրամասն մեկնությունը, կարող էր հմտանալ ոչ միայն տոմարական բարդ հաշվումներ կատարելու մեջ, այլև գաղափար կազմել մինչև XV դ. հայկական մատենագրության մեջ կուտակված տոմարական հարուստ գիտելիքների մասին:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ նրա մեկնությունը լավ ծառայել է այն նպատակին, որի համար գրել է հեղինակը: Այդ մասին են վկայում տարբեր դարերում ընդօրինակված և Մատենադարանում պահպանվող նրա՝ շուրջ 60 բնագրերը, որոնց մեծ մասը արտագրված է ամբողջական ու ավարտուն տեսքով: Սակայն նրան մտահոգում էր հետագայում թույլ արվելիք սխալների վտանգը: «Մեծաւ աշխատութեամբ մեր զթիրսն ուղ-

չեմք, բայց ոչ սակաւ երկիւղ է մեզ վերստին թիրելոյ ի յախմար գրւչաց»²⁸⁷,— գրում է նա:

* * *

Քանի որ Հակոբ Արիմեցին հանդիսանում է Տաթևի թեկուզև անուղղակի աշակերտներից մեկը, ապա ինչպես պետք էր սպասել և ինչպես փորձել ենք բացահայտել, նրա աշխարհայացքի շատ հարցեր կապվում են այդ դպրոցի և նրա ղեկավարի՝ Գրիգոր Տաթևացու տեսակետների հետ:

Ասենք, որ Հակոբ Արիմեցու կողմից գրված առանձին իմաստասիրական աշխատություն մեզ հայտնի չէ: Սակայն նրա տոմարական բովանդակություն ունեցող գործերը և հատկապես «Մեկնութիւն տումարին» հարուստ են տիեզերագիտական և փիլիսոփայական հարցերի ընդգրկումով և հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու նրա աշխարհայացքի մասին:

Քննարկվող ժամանակահատվածում ինչպես միջազգային, այնպես էլ հայկական մշակույթի տարբեր բնագավառներ հարստանում էին երկու աղբյուրներից՝ սխոլաստիկական և արաբական գրականությունից: Արաբական ազդեցությունը Հայաստանում նկատելի էր հատկապես բժշկագիտության բնագավառում:

Սակայն, որքան էլ որ արաբական մշակույթի ազդեցությունը մեծ էր, այնուամենայնիվ միջնադարյան Հայաստանի նշանավոր մտածողներից ոմանց նա չի կարողացել ներքաշել իր ոլորտները: Դրանցից արժանի են հիշատակության Գրիգոր Մագիստրոսը (XI դ.) և Գրիգոր Տաթևացին²⁸⁸: Վերջինիս մասին խոսելիս Լ. Հովհաննիսյանը մասնագիտական հարցերի քննարկումից և համեմատությունից հետո եզրակացնում է, որ նա իր խոր հետքն է թողել ինչպես հայ մշակույթի և գիտության մեջ, այնպես էլ բժշկագիտության բնագավառում: Սակայն ուսումնասիրողին զարմացնում է այն հանգամանքը, որ «Գրիգոր Տաթևացին, զուցե իբրև խանդոտ քրիստոնյա, արաբ գիտնականներին երբեք չի հիշատակում (շատ հնարավոր է, որ նա նրանց ընդհանրապես չի էլ իմացել) այն դեպքում, որ Հայաստա-

²⁸⁷ Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 100ա:

²⁸⁸ Л. Оганесян, История медицины в Армении, т. 2, Ереван, 1946, с. 14—44, 154—163.

նում բժշկությունը վաղուց արդեն ամբողջությամբ հենվում էր արաբական ավանդույթների վրա»²⁸⁹;

Պետք է ենթադրել, որ ասվածը վերաբերում է ոչ միայն բժշկագիտական հարցերին, որոնք նույնպես Գրիգոր Տաթևացին քննարկել է միջնադարյան Հայաստանում համընդհանուր տարածում գտած անտիկ բնափիլիսոփայության դրույթների լույսի տակ²⁹⁰:

Ինչպես ասվեց վերևում, սխոլաստիկական գրականության հետ հայ միջնադարյան մտածողները շփվում էին միարարների շնորհիվ: Եթե միարարական շարժման քաղաքական կողմնորոշման վնասակար լինելը հայ ժողովրդի համար ակնհայտ է²⁹¹, ապա Քոնստյուն ստեղծված բարձրագույն դպրոցի շուրջ համախմբված եվրոպացի և հայ վարդապետների գիտական ժառանգության մասին նույնը չի կարելի ասել: Գիտական որևէ նշանակությունից զուրկ հայերեն լեզվով նրանց կողմից գրված ծիսական-դավանաբանական գործերի կողքին կային նրանց ջանքերով թարգմանված և ստեղծված մեկնություններ, իմաստասիրական երկեր, որոնց միջոցով հայ գիտական միտքը նոր հնարավորություններ է ձեռք բերում հազորդակցվելու անտիկ գրականության և իմաստասիրության որոշ ավանդույթների, ընդարձակում հետաքրքրության իր շրջանակները²⁹²: Մինչ այդ հայ գիտական միտքը սնվում էր հին հունական գիտական գրականությունից կատարված թարգմանություններով, որոնք ընդհանուր առմամբ հարմարեցված էին Աստվածաշնչի և եկեղեցական հայերի ասույթներին:

Այդ է պատճառը, որ կաթոլիկ բարոզիչների և հայ ունիթոոնների կողմից թարգմանված և ստեղծված գործերը շատ շուտով դուրս են գալիս այդ շրջանակներից և տարածվում հայ գիտական-ուսումնական կենտրոններում²⁹³:

Պետք է ասել, որ հայ լուսավորչական և կաթոլիկ եկեղեցիների պայքարում հատկապես նշանակալից էին նոմինալիստների և ռեալիստների

միջև եղած կատաղի վեճերը, որոնք, սակայն, հատուկ չէին միայն Հայաստանին: Հայտնի է, որ եվրոպայի տարբեր վանական-ուսումնական հաստատություններում փիլիսոփայական այդ երկու ուղղությունների մեջ տարվող անհաշտ պայքարը տեեց մի քանի հարյուրամյակ²⁹⁴:

Վեճը զնում էր ընդհանուր հասկացությունների՝ «ունիվերսալիաների» շուրջը, թե ո՞րն է առաջնային և ռեալ գոյություն ունեցողը՝ ընդհանուր հասկացությունը, թե՞ առանձնակի իրը:

Հայտնի է, որ նոմինալիզմը բարձր է գնահատվել մարքսիզմ-լենինիզմի կլասիկների կողմից, քանի որ այդ երկու ուղղությունների միջև եղած պայքարից է սկիզբ առել մատերիալիզմի և իդեալիզմի ձևավորումը²⁹⁵:

XIV դ. ընթացքում հայկական բարձրագույն տիպի դպրոցների անհաշտ պայքարը ունիթոոնների դեմ տարվում էր նոմինալիզմի դիրքերից, հայերեն թարգմանված Ալբերտ Մեծի, Քովմա Աքվինացու, Բարթոլոմեոս Մարաղացու գործերը տարածում էին կաթոլիկ եկեղեցու «ռեալիզմը»: Հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրողները գտնում են, որ միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական մտքի պատմության մեջ նոմինալիստական ուղղությունը կազմում է նրա ամենաարժեքավոր հատվածը²⁹⁶:

XV դ. սկզբից Հայաստանի վիճակը ավելի ծանրացավ: Նոր ասպատակությունները խիստ բացասաբար անդրադարձան գիտության և մշակույթի հետագա զարգացման վրա: Անկում են ապրում իմաստասիրական այն ավանդույթները, որ ստեղծել էին Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին: Այսպես, վերջինիս նշանավոր աշակերտներից մեկը՝ Առաքել Սյունեցին արդեն հեռացել էր իր ուսուցչի ավանդած ուսմունքից և հակվել դեպի աստվածաբանություն: Սրանով սկսված հայ միջնադարյան փիլիսոփայության վայրէջքը բավականին խորացավ և տեեց շուրջ երկու դար: Այս իմաստով Հակոբ Ղրիմեցու աշխարհայացքի ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ այն թույլ կտա պատկերացում կազմել այդ ժամանակի հայ բնագիտական-փիլիսոփայական մտքի մակարդակի մասին ընդհանրապես:

Փիլիսոփայական բովանդակություն ունեցող մի ձեռագրում 1410 թ. Հակոբ Ղրիմեցու կողմից արված լրացումներից արդեն երևում է, որ նա

294 История философии, М., 1957, с. 284.

295 Նույն տեղում:

296 Ս. Աբելաշյան, նոմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում, Բանբեր Մատենադարանի, N 6, 1962, էջ 77:

289 Նույն տեղում, էջ 163:

290 Լ. Ս. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ., էջ 25:

291 Լ. Ս. Խաչիկյան, Արտագիտական իշխանությունը և Մործորի դպրոցը: Բանբեր Մատենադարանի, N 11, 1973, էջ 125—209:

292 Յովհաննես Քոնեցի, Յաղագս բերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ. Ս. Խաչիկյանը, ներածությունը Լ. Ս. Խաչիկյանի և Ս. Ա. Ավագյանի, Երևան, 1977, էջ 29, 30:

293 Նույն տեղում, էջ 33: Այսպես, օրինակ, Հակոբ Ղրիմեցու կողմից 1389 թ. ընդօրինակված մի ձեռագիր ամբողջությամբ ունիթոոնական գրականության նմուշներից է բաղկացած:

մատիկից ծանոթ է եղել հայկական բարձրագույն դպրոցների մակարդակով ուսումնասիրվող աշխատություններին և մեկնություններին:

Այսպես, մի բնագրում կարդում ենք. «պղատոնականքն գոյացութիւն առաւել կամին, քան թէ քանակ...»: Լուսանցքում Ղրիմեցիւն գրում է. «զի ասէին, թէ բանն ի բանականութենէն է... ապա ուրեմն բանն գոյացութիւն է»²⁹⁷:

Շատ դեպքերում նա վկայակոչում է Գավիթ Անհաղթին: Այսպես, «գայս լուծումն ինքն Գավիթ ասէ» (թ. 205ա, 212ա): Հիշատակում է նաև հունական փիլիսոփայական այն աշխատությունները, որոնք թարգմանված էին հայերեն. «Թէ զՊերիարմենիասն... զԻԹ (29) ճառն կարդաս (թ. 266ա) կամ «ի Պորփիրն ի Ժէ. (17) ճառն ասէ» (թ. 273 ա) և այլն:

Հայտնի է, որ Գավիթ Անհաղթի աշխատությունները մեծ հեղինակություն էին վայելում և մտցված էին միջնադարյան հայկական դպրոցների սլարտադիր ծրագրերում: Սակայն դա չի խանգարել Հակոբ Ղրիմեցուն նրանցում նկատել ամենաանշան թերությունները և նշել՝ հետագա ընթացողներին օգնելու ցանկությունը:

Այսպես, եթե «Սկիզբն և նախադրութիւն գրոցն, որ ասի ըստ Յունաց Պերիարմենիաս և հայերեն յաղագս մեկնութեան արտագրեալ ի մեծ հելենացոյ Արիստոտելէ, թարգմանեալ և մեկնեալ ի Գավթ փիլիսոփայէ» աշխատության լրացումներից մեկում գրում է. «Տես որ շմոլորիս յանուանսն և կարծես, թէ նոյն են բացերևական բանն և ստորասութիւն, զի նա բուրն է, և նորա մասունք» (թ. 294բ), կամ՝ «զմեկնիչն լաւ կարդա, զի պարզ յայտնէ գրանքս» (թ. 332ա), ապա մեկ ուրիշ դեպքում կարդում ենք. «զկարելին և զանկարելին չի յիշել» (թ. 298բ), կամ «տես, զի ենթաներհակն մասնաւոր կու ասէ մեկնիչն, թէ և կու յիշէ, բայց ի բնաբանն զայս եղանակս ոչ յիշեաց» (թ. 300բ):

Ինչպես միջնադարյան մտածողներից շատերի, այնպես էլ Հակոբ Ղրիմեցու գործերում անտիկ գիտության և բրիստոնեական գաղափարախոսության համատեղումը ակնհայտ է: Այս իմաստով՝ նրա «Մեկնութիւն տումարի» աշխատության համար իբրև բնաբան կարող են ծառայել հետևյալ տողերը. «Գիտել պարտ է, զի տումարական մակացութիւն ոչ սոսկ իմաստասիրութիւն է և ոչ պարզ աստուածաբանութիւն, այլ խառն ի յերկուցն գեղեցիկ ունի զվարդապետութիւն»²⁹⁸:

Գիտության և աստվածաբանության միմյանցից անկախ լինելու և միաժամանակ, միմյանց լրացնելու մասին իր ասածը ավելի հասկանալի դարձնելու նպատակով նա վկայակոչում է Գրիգոր Նյուսացուն, թե «մարդք ստեղծվեց հոգու և մարմնի գեղեցիկ համագրությամբ՝ հոգին իմանալու, մարմինը զգալու համար»²⁹⁹:

Կարևոր է նշել, որ նույնպիսի սահմանազատում կատարել է նաև Գրիգոր Տաթևացին, որը բարձր է գնահատվել ուսումնասիրողների կողմից. «հարելով ճշմարտության երկվության թերիային, նա (Իմա Գ. Տաթևացին—Ջ. է.) սահմանազատում է փիլիսոփայության և աստվածաբանության բնագավառները... Իր այս լուծումով Տաթևացին փաստորեն ազատում է փիլիսոփայությունը աստվածաբանության խնամակալությունից և միջնադարի պայմաններում առաջադիմական բայլ է կատարում, լայնացնելով գիտության իրավունքները»,— գրել է Ս. Արևշատյանը³⁰⁰:

Հակոբ Ղրիմեցին սովորեցնում է ուսանողներին, որ իմաստասիրությունը բաժանվում է տեսականի և գործնականի³⁰¹: Տեսականն էլ իր հերթին՝ բնագիտության, աստվածաբանության և տոմարական մակացության³⁰²:

«Գրոց բաժանմունքն,— գրում է նա,— յերիս տարրորչին, կամ իմաստասիրական գոլ, որպէս զգիտութիւն գոյիցս ուսուցանէ մեզ, և կամ վարդապետական գոլ, որ զաստուածաբանութիւն հոգիաշունչ գրոց ուսուցանէ մեզ, և կամ տումարական մակացութիւն, որ զերկուցն շնորհէ մեզ՝ զիմաստութիւն: Զի ըստ որում լուսաւորաց է քննութիւն իմաստասիրութիւն է, և ըստ որում յԱստուծոյ ուստ ունի զգրութիւն, և սովաւ վարի եկեղեցոյ վարդապետութիւն: Վասն որոյ երբեմն յայս կոչս և երբեմն յայն կոչս շարաբերէ զմակամտածութիւնս մեր ի մակացութիւնս»³⁰³:

299 Նույն տեղում:

300 Ս. Արևշատյան, Տաթևի փիլիսոփայական դպրոցը, Բանբեր Մատենադարանի, № 4, 1958, էջ 127:

301 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 49բ: Նույնը տե՛ս Գավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 120:

302 Գավիթ Անհաղթը գրում է, որ Պլատոնն ու Արիստոտելը տեսականի ստորաբաժանումը տարբեր ձևով են կատարել. ըստ առաջինի՝ այն բաժանվում է բնագիտության և աստվածաբանության, իսկ ըստ երկրորդի՝ դրանց ավելանում է նաև երրորդը՝ ուսումնականը (տե՛ս Գավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 120): XI դ. փիլիսոփա Գրիգոր Մաղիսորոսը գիտությունը բաժանում է 3 մասի՝ բնագիտության, աստվածաբանության և մաթեմատիկա (տե՛ս В. К. Чалоян, История армянской философии, Ереван, 1959, с. 214):

303 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 43բ:

297 Մատենադարան, ձեռ. № 1716, Թ. 207բ:

298 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 43բ:

Հայտնի է, որ միջնադարում աստղագիտությունը թվաբանության, երաժշտության և երկրաչափության հետ միասին կազմում էին մաթեմատիկական քառյակ գիտությունների խումբը³⁰⁴։

Ըստ Դավիթ Անհաղթի, դրանցից յուրաքանչյուրը քանակից է բաղկացած։ Իսկ քանակը երկու տեսակ է լինում՝ շարունակ և տարրոշ։ Նրանք էլ իրենց հերթին բաժանվում են երկուական տեսակի, տարրոշը կարող է օգտագործվել և առանձին և ուրիշ մեծությունների հետ փոխկապակցված, իսկ շարունակը լինում է անշարժ և շարժուն³⁰⁵։

Ըստ այդմ էլ՝ թվաբանությունը բաղկացած է տարրոշ քանակից, որը կարող է գործածվել առանձին, երաժշտականը՝ փոխկապակցված գործածվող քանակից, երկրաչափականը՝ անշարժ շարունակից և, վերջապես, աստղաբաշխականը՝ շարժուն շարունակից։

«Իսկ տարրոշ քանակը պատուականագոյն է, քան զշարունակն, վասն զի տարրոշ քանակն կարող գոյ անշարժաբար զանազան տեսակս ընդունել... իսկ շարունակ քանակն ոչ կարէ»³⁰⁶, — գրում է Դավիթ Անհաղթը։

Որ տարրոշը պատվական էր համարվում, քան շարունակը կամ որ նույնն է՝ սահմանափակը ավելի կատարյալ էր համարվում, քան անսահմանափակը — այս միտքը գալիս էր պլուրիստիկականներից³⁰⁷։

Ելնելով այդ գրությունից, Դավիթը գտնում է, որ «թուականն աւելի առաջադաս է, քան երաժշտականն, քանզի առաջինը ըստ ինքեան է, միւսը ըստ բաղադանութեան, իսկ երկրաչափականն առաջադաս է, քան աստղաբաշխականը, քանզի անշարժը յառաջագոյն է, քան զշարժումն, զի անշարժն է սկիզբն շարժման»³⁰⁸։

304 Գիտությունների այս ստորաբաժանումը ըստ Դավիթ Անհաղթի տե՛ս С. С. Арешатян, Формирование философской науки в древней Армении (V—VI вв.), Ереван, 1973, с. 296.

305 Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 127, 128; նույնը տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 33ա, բ։

306 Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 130—132, ինչպես նաև Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 33բ։

307 Այստեղից էլ՝ պլուրիստիկականների տաս հիմնական հակադրությունները։ 1) սահմանափակ և անսահմանափակ, 2) կենտ և զույգ, 3) միավոր և բազմություն, 4) աչ և ձախ, 5) արական և իգական, 6) հանգստացող և շարժվող, 7) ուղիղ և թեք, 8) լույս և խավար, 9) բարի և չար, 10) քառակուսի և ուղղանկյուն (տե՛ս Целлер, Очерк истории греческой философии, М., 1913, с. 45)։

308 Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 132։

Դավիթ Անհաղթի այս գրություններն ընդունելով և դրանք մանրամասն երկայացնելով³⁰⁹, Հակոբ Արիմեցին նույն հարցին մոտենում է նորովի, այդ շորսից ամենագծվարն ու ամենակարևորը համարելով աստղաբաշխությունը, կամ ինչպես ինքն է ասում՝ տումարական մակացությունը³¹⁰։ «Թուական գիտութիւնս յուսումնական մակացութիւնս դիրագոյն է, քան ցտումարական մակացութիւնս, զի մերձ է առ մեզ... նաև տեսանէ զհամարս թուոցն ի մատունսն իւր և յայլ զանազան նիւթս թուոց... իսկ Արեգական և Լուսնի ընթացք սաստիկ հեռագոյնք և անտես»³¹¹։

Մանրամասն խոսելով երաժշտության և նրա դյուրիչ ազդեցության մասին, Հակոբ Արիմեցին նշում է, որ այդ գիտությունը ևս ավելի դյուրին է, քան աստղագիտությունը. «զի ունի զքնարն ի զիրկն և զլարսն ի քնարին և ոչ բարձրագոյն, իբրև զԱրեգակն և զԼուսին, վասն որոյ մեծ և արժանի է զարմանալոյն մակացութիւնս սոցա, քան զայլ մասունս ուսումնականին»³¹²։

Նա հանգամանորեն պատմում է նաև երկրաչափության մասին, որ այն ծագել է Ծգիպտոսում՝ մշակելի հողատարածությունները ճիշտ բաժանելու և հաշվելու նպատակով, և որ այն հետաքրքիր, մարդկանց համար օգտակար գիտություն է։ Ապա նշում է, որ երկրաչափի գործն էլ մեծ դժվարությունների հետ չի կապված, քանի որ նա հաշվումներն անում է երկրի վրա, որոշակի գործիքներով³¹³։

Ինչպես տեսնում ենք, քառյակ գիտությունների մասին նրա հաղորդած տեղեկությունները հիմնականում մնալով միջնադարյան հայկական բարձրագույն դպրոցների ուսումնական ծրագրերի սահմաններում, միաժամանակ նոր անկյան տակ են ներկայացնում դրանք ունկնդիրներին։ Բանն այն է, որ մենք գործ ունենք ոչ թե մի սովորական ուսուցչի հետ, այլ մտածող գիտնականի, որը սիրահարված է ընությունն ու բնագիտությանը և այդ սերը ուզում է փոխանցել իր աշակերտներին։ Երբեք էլ չթերագնա-

309 Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 33ա—35ա։

310 Պատահական չէ, որ «աստղաբաշխության» փոխարեն նա օգտագործում է «տումարական մակացութիւն»։ Միջնադարի բնագիտության պատմության ուսումնասիրողներից մեկը իրավացի կերպով նկատել է. «Աստղագիտության զլիավոր խնդիրը կայանում էր եկեղեցական օրացույցի կարգավորումը» (տե՛ս Ф. Даннеман, История естествознания, т. I М., 1932, с. 313)։

311 Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 34ա։

312 Նույն տեղում, Բ. 35ա։

313 Նույն տեղում, Բ. 35բ։

հատելով մյուս գիտությունները, նա ապագա տոմարագետներին զգուշացնում է առաջիկա դժվարությունների մասին, նշելով նաև ուսումնասիրությունյան առարկայի հետ կապված մեծ հետաքրքրությունն ու անհրաժեշտությունը:

Նշենք մի ուշադրավ հանգամանք ևս. վերոհիշյալ երեք գիտությունները, որոնց վրա Հակոբ Արիմեցին չի ցանկացել ծանրանալ, և որոնք «Մեկնութիւն տումարիում» իրենց գրաված ծավալով անհամեմատելի են «տումարական մակացության» հետ, այնուամենայնիվ, առանձին հարցերում հեղինակը ցուցաբերել է մասնագիտական մոտեցում, երբեմն նույնիսկ հակադրվելով նախորդ մտածողներին:

Իբրև օրինակ ուզում ենք բերել պլուրազորականներից ժառանգած թվերի տեսությունից մասնավոր մի հարցի մասին Հակոբ Արիմեցու կարծիքը: Հայտնի է, որ վերջիններիս մոտ ամեն մի թվին տրվում էր կենսական նշանակություն: Այսպես, մեկը համարվում էր բացարձակ, անբաժանելի մի եզակիություն, կամ որ նույնն է՝ նույնացվում էր կեանքի հետ, երկուսը՝ որպես դեպի անորոշություն գնացող ուղիղ գիծ, երեքը որպես այդ անսահմանության մարմնավորում՝ մակերևույթի ձևով, իսկ չորսը նույնացվում էր մարմնի հետ: Այս նույն միտքը օրինակով բացատրելու նպատակով № 1716 ձեռագրի լուսանցքներից մեկում գրված է. «զգիրք առ օրինակ. գրերն կես և տողերն գիծ և մի թուխթն մակերևութ և ամեն գիրքս մարմին: Բայց չէ ամենևին նման զի կետերն ի գիծն և գծերն ի մակերևութիւն և մակերևութիւն ի մարմին շերեայ աշաց, ապա մտօք իմանին»³¹⁴.

Պլուրազորականները բաժանում էին թվերը զույգերի, կենտերի: Մեկ թիվը նրանց կարծիքով այդ խմբերից և ոչ մեկի մեջ չէր մտնում, այն համարվում էր ոչ թե թիվ, այլ թվերի հիմքը³¹⁵:

³¹⁴ Մատենադարան, ձեռ. № 1716, Թ. 210ա:

³¹⁵ Մինչև XVI դ. վերջերը մաթեմատիկոսները պայթարում էին 1-ը թվերի շարքը դասկար համար (տե՛ս Д. Я. Стройк, Краткий очерк истории математики, М., 1978, с. 82):

«Պարտ է գիտել,—գրում է Դավիթը,—եթէ թուականութեան երկուս տեսակը են՝ դար և կոճատ... Արդ, ընդհանուր սկիզբն դարիցն և կոճատացն միակն է, իսկ դարին երկեակն: Եւ տարակուսեն ոմանք, թէ երկեակն, թիւ գոյով, զիմո՞րդ է սկիզբն: Առ որս ասեմք, եթէ ոչ գոյ թիւ երկեակն, վասն զի ոչ ունի դաստկութիւն թուոյ յինքեան, վասն զի ամենայն թիւ բազմապատկելով մեծ թիւ բացակատարէ, քան շարագրելով.—իսկ երկեակդ ոչ այդպէս, քանզի բազմապատկելով և շարագրելով զնոյն թիւ բացակատարէ՝ զչորսն... Ուստի յայտ է, թէ երկեակդ ոչ է թիւ, այլ լոկ սկիզբն թուոց» (Դավիթ Անհաղբ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 112):

Այս հարցը շոշափում է ինչպես Դավիթ Անհաղբի, այնպես էլ Գրիգոր Տաթևացու և Հակոբ Արիմեցու աշխատություններում, սակայն այն տարբերությամբ, որ եթե Տաթևացու մոտ միայն մեկը չի համարվում թիվ, ապա Դավիթ Անհաղբն ու Հակոբ Արիմեցին նույն կարծիքին են նաև երկուսի մասին: Այսպես, Դավիթ Անհաղբը գրում է, որ կենտ և զույգ թվերի հիմքը մեկն է, իսկ միայն զույգերինը՝ երկուսը: Նա այդ բացատրում է նրանով, որ սովորական թիվը ինքն իրենով բազմապատկելիս ավելի մեծ թիվ է ստացվում, քան ինքն իրեն գումարելիս, մինչդեռ երկուսի դեպքում այդ տարբերությունը չկա:

Գրիգոր Տաթևացին համաձայն չէ դրան. «Երկեակն ոչ կարէ սկիզբն յինիլ, Կ՛է թիւս՝ երկեակն ի միակէն բաղկանայ: Արդ՝ նախ է որ բաղկացոյցն, քան զոր բաղկացան: Երկրորդ՝ երկեակն բաղադրեալ է, իսկ միակ պարզ, այլ ամենայն բաղադրեալ ի պարզէ է: Այսպիսով, ոչ է երկեակն սկիզբն, որ է բաղադրեալ, այլ միակն է որ պարզ»³¹⁶:

Հակոբ Արիմեցին, անշուշտ, ծանոթ է այդ երկու տեսակետներին, սակայն այս հարցում նա համամիտ է Դավիթ Անհաղբի հետ: «Թուականն,—գրում է նա,—իմաստասէրն ի մատունսն և կամ դրոշմեալ իբարտիսի զիւրն յարգարէ զարուեստ... ցուցանէ զդարսն և զկոճատսն... նաև զթիւսն և զսկիզբն թուոց, զմիակն ցուցանէ սկիզբն ընդհանուր թուոց՝ դարից և կոճատաց և զեկեակն՝ դարիցն, որ է զոյգ, որպէս Բ. (2), Դ. (4), Զ. (6), Ը. (8), Ժ. (10): Եւ ցուցանէ զերկեակն օրինակաւ՝ ոչ գոլ թիւ, այլ սկիզբն թուոց, վասն զի ամենայն թիւ բազմապատկեալ մեծ թիւ բացակատարէ, քան զշարագրեալն... բայց երկեակն ոչ այսպէս... ուստի յայտ արար, թէ երկեակն ոչ է թիւ, այլ սկիզբն թուոց, վասն որոյ շունի յատկութիւն թուոյ»³¹⁷:

Ինչպես տեսնում ենք, տվյալ հարցում Հակոբ Արիմեցին հակադրվում է Գրիգոր Տաթևացուն, ընդունելով Դավիթ Անհաղբի կարծիքը: Այս հանգամանքը, անկասկած, վկայում է այն մասին, որ նա կուրորեն չի հետևում այս կամ այն հեղինակությանը: Նրա քննարկած յուրաքանչյուր հարցի շուրջ գրի առնված մտորումներում որոշակիորեն նկատելի է դրա մասին եղած կարծիքներից իր սեփական դատողություններին համընկնող ամենահավանական թվացող բացատրությունները ճշգրտությամբ արտահայտելու ձգտումը:

³¹⁶ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 20:

³¹⁷ Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 32ա, Բ. 6089, Թ. 94ա—95ա:

Հակոբ Ղրիմեցին լինելով միջնադարի գիտնական, չէր կարող ժխտել աշխարհի «արարչություն» մասին եղած առասպելը: Բնության ու ողջ տիեզերքի առաջացման մասին նրա բմբունումը դուրս չի գալիս աստվածաբանական շրջանակներից: Սակայն նա արժանի հետնորդն է հայ միջնադարյան այն մտածողների՝ ըստ որոնց «արարչագործությունից» հետո բնությունը հանդես է գալիս իբրև ինքնուրույն ստեղծագործող, իր հիմքում ունենալով շորս տարրերը՝ հող, ջուր, օդ և հուր: Այս հայեցակետը իր սկիզբն է առել հայ ինքնուրույն գրականության արշալույսին գրված «Հաճախապատում» ճառերից³¹⁸, Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոցից»³¹⁹, իսկ այնուհետև ավելի հիմնավոր ձևակերպվել Անանիա Շիրակացու կողմից³²⁰, հետագայում փոխանցվելով Հովհաննես Երզնկացուն³²¹, Գրիգոր Տաթևացուն³²²:

Հետևելով նրանց, Հակոբ Ղրիմեցին ընդունում է, որ «առաջին օրը» ստեղծվել են ոչ թե երկինքն ու երկիրը, ինչպես որ պնդում է Սուրբ գիրքը, այլ «առաջին ատուր արարչութեան գոյացոյց գհրշտակքն, գհրեղէն երկինքն և զլոյսն առաջին, նաև զշորս տարբերք»³²³:

Անդրադառնալով տարրերի մասին էմպիզոկլիսի և Արիստոտելի կողմից մշակված և Հայաստանում լայն տարածում գտած ուսմունքին, նա ասում է, որ շորս տարրերից յուրաքանչյուրն ունի որակական երկու հատ-

կություն. հողը ցուրտ և շոր, ջուրը ցուրտ և խոնավ, օդը խոնավ և ջերմ, հուրը ջերմ և շոր³²⁴ և որ դրանք դասավորված են հետևյալ կարգով՝ հող, ջուր, օդ, հուր³²⁵: Այս հակադիր հատկություններով օժտված տարրերն են,—գրում է նա,—որ «ծնողք են ամենայն շարախառն էությունց»³²⁶: Եթե սրան ավելացնենք նաև նրա այն կարծիքը, որ «բնութիւնը առ սակաւ սակաւ ըստ ժամանակի ներգործէ զկատարելութիւն»³²⁷, ապա կստացվի, որ շորս տարրերը ժամանակի ընթացքում առաջացրել են աշխարհի բազմազանությունը:

Սա չի նշանակում, թե Հակոբ Ղրիմեցին իր դատողություններում այս եզրակացությունից չի շեղվում: Բանն այն է, որ միջնադարյան գրեթե բոլոր մտածողների մոտ նկատվում է այն միտումը, որ նույն հարցի բնագիտական և աստվածաբանական բացատրությունները հաճախ հակասում են միմյանց³²⁸:

Այսպես, մեկ ուրիշ առիթով Ղրիմեցին ասում է, որ աստված ամեն ինչ ստեղծել է ոչնչից և կատարյալ, և ոչ թե «միջնորդութեամբ բնութեան ի ժամանակի»³²⁹: Հասկանալի պատճառներով այլ կերպ լինել չէր կարող: Ինչպես միջնադարյան բոլոր մտածողների, այնպես էլ Հակոբ Ղրիմեցու մտքով անզամ չի անցել հերքել աստծու և արարչության գաղափարը: Այնուամենայնիվ «ամենայն շարախառն էությունց» հիմքում ընկած տարրերի վերոհիշյալ թեզը խոսում է նրա կողմից ինչպես բնական պրոցեսի ընդունման, այնպես էլ իր նշանավոր նախորդների և հատկապես Տաթևի դպրոցի լավագույն ավանդույթները պահպանելու ձգտման մասին, որն անշուշտ, գնահատելի է XV դ. առաջին տասնամյակներից սկիզբ առած հայ միջնադարյան փիլիսոփայության վայրէջքի ընդհանուր ֆոնի վրա:

Այնուհետև նա իր աշակերտներին ավանդում է անվանի նախորդներից ժառանգած մյուս ճշմարտությունը՝ նյութական բնությունը առաջնային է, իսկ գիտակցությունը կամ գործը՝ երկրորդային:

Այսպես, XI դ. հայտնի տոմարագետ Հովհաննես Սարկավազի մոտ կարդում ենք. «Որպէս բազում ուրեք բազում անգամ հանդիպեցաք... ոչ

324 Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 78ր:

325 Նույն տեղում, Բ. 79ր:

326 Նույն տեղում, Բ. 78ր:

327 Նույն տեղում, Բ. 61ր:

328 Տե՛ս, օրինակ, Գ. Գրիգորյան, Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, էջ 41: Կ. Ս. Արևշատյան, Философские взгляды Григора Татеваци, с. 63:

329 Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 61ր:

318 С. С. Арешатян, Формирование философской науки в древней Армении (V—VI вв.), с. 59: Սրբոյ հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք, էջմիածին, 1894, էջ 27—28:

319 С. С. Арешатян, Формирование философской науки в древней Армении, (V—VI вв.), с. 86: Եղնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Արբաճամյանի, Երևան, 1950, էջ 33:

320 Այսպես, Շիրակացին գրում է. «Նա է (Աստված—Ջ. է.) սկիզբն և արարիչ երևելեաց և իմանալեաց: Եւ եղևարս ի նմանէ են թուով շորս: Առաջինն՝ հուր: Երկրորդն՝ հող: Երրորդն՝ ջուր... Այլ երկինք և երկիր և որ ի միջոցն են հաստատութիւնք ամենայն որ ի նոսա, յայս երկոյ կազմեցան» (տե՛ս Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 3, 4): Ուսումնասիրողները բարձր են գնահատել այս թեզը. (տե՛ս Аняня Ширакаци, Космография, перевод с древнеармянского, предисловие и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Арешатяна, Ереван, 1962, предисловие с. 12):

321 Գ. Գրիգորյան, Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, Երևան, 1962, էջ 41:

322 С. С. Арешатян, Философские взгляды Григора Татеваци, Ереван, 1957, с. 62:

323 Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 86ր:

բանն զիրս հաստատէ, այլ իրն՝ զբան»³³⁰; Այս կապակցութեամբ Վ. Զալոյանը գրել է. «Այստեղից պարզ երևում է, որ Հովհաննես Իմաստասերը իրերի աշխարհը, արտաքին բնությունը ընդունում է առաջնային և մարդու գիտակցությունը—երկրորդային, իբրև ճշմարտութեան հիմք է ընդունում արտաքին իրերի օբյեկտիվ ռեալութեանը»³³¹:

Նույնպիսի զիրքերի վրա է եղել Գրիգոր Տաթևացիին. «բնությունը ուժեղ է գիտակցությունից,—գրել է նա,—բանի որ բնությունը մեր գիտելիքների համեմատութեամբ առաջնային է»³³²:

Հակոբ Արիմեցիին ոչ միայն ընդունում է իր ուսուցիչներից ժառանգած այդ դրույթը, այլ նաև փոխանցում է իր աշակերտներին. «Նիւթն տայ ունեւ զգործն... զի գործն ի նիւթոյ բաղկանայ,—գրում է նա,—նիւթն էացուցանէ զգործն և առանց նիւթոյ անէ և անգոյ է, այսպէս և թուականն էացուցանէ զտումարն, և թարց թուականի տումարն ոչ տումար է, զի նիւթն առանց գործոյ ունի զէութիւն, բայց գործն առանց նիւթոյ ոչ. այսպէս և թուականն առանց տումարի ունի զէութիւն, զի ի ժամանակէն բաղկանայ, և ժամանակս միշտ յէութենէ կայ... նիւթն առաջնային է բնութեամբ և գործն երկրորդ՝ պատահմամբ»³³³,—գրում է նա:

Հետաքրքիր է, որ նույնպիսի միտք է արտահայտել վաղ միջնադարի մեծ մտածող իբն Սինան. «Մատերիան,—գրում է նա,—միշտ նախորդում է ամենաստվորական իրի գոյութեանը, որից էլ կազմված է սովյալ իրը»³³⁴:

Ինչպես տեսնում ենք, այս օրինակը մեկ անգամ ևս հաստատում է այն իրողութեանը, որ ի դեմս Հակոբ Արիմեցու, մենք գործ ունենք իր ժամանակի համար առաջադեմ մի մտածողի հետ:

Նշենք մի ուշագրավ հանգամանք ևս. հայտնի է, որ երկնային մարմինները ըստ Արիստոտելի և միջնադարյան մի շարք մտածողների, կազմված են եթերից՝ հինգերորդ տարրից: Այդ տեսակետն են ընդունել Անահիա Շիրակացին³³⁵, Հովհաննես Երզնկացին³³⁶, Բարթուղիմեոս Մարաղա-

ցին: Վերջինս համամիտ է Արիստոտելի այն կարծիքին, որ երկնային մարմինները իրենց բնույթով տարբեր են երկրից, հետևաբար, նաև շորս տարբերից³³⁷:

Պարզվում է, որ Հակոբ Արիմեցիին և Գրիգոր Տաթևացիին այլ կերպ են մտածում: Այսպես, «ինչից են կազմված լուսավորները» հարցի պատասխանը, թե մեկի և թե մյուսի մոտ ընչին տարբերություններով այսպիսին է. «Մեանք ասեն, թէ հինգերորդ էութիւն է արտաքոյ շորից տարերց ըստ Արիստոտելի: Այլ... ըստ Պլատոնի՝ եթէ լոյսն խզումն է ի տարրական հրոյ, որ յառաջին օրն գոյացաւ», իսկ շորերը օրը գոյացան լուսավորների անոթները՝ օդից և լցվեցին այդ լույսով³³⁸: Թե մեկը և թե մյուսը կազմակերպ են այս վերջին տեսակետին, որովհետև «այս հաւանելի ենք»³³⁹:

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Տաթևացիին և Հակոբ Արիմեցիին կողմնակից են երկնային մարմինների բաղադրութեանը շորս տարբերով բացատրելու տեսակետին:

Անցնելով տիեզերքի կառուցվածքի բնութեանը, հարկ է նշել, որ տարբեր դարերի դպրոցներում ընդունված են եղել տիեզերքի երկրակենտրոն համակարգի միմյանցից քիչ թե շատ տարբեր տարբերակներ:

Հայտնի է, որ ըստ Արիստոտելի՝ Արևը, Լուսինը, հինգ մոլորակները և անշարժ աստղերը ամրացված են ութ ոլորտների վրա: Դրանցից ամենահեռավորը՝ անշարժ աստղերի ոլորտը, իր պտույտով պատճառ է դառնում բոլոր երկնային մարմինների օրական շարժման համար: Հիպարքոսի կազմից պրեցեսսիայի երևույթի հայտնաբերումից հետո Արիստոտելի հետնորդներին հարկ եղավ ավելացնելի էլի մեկ ոլորտ՝ իններորդը: Ըստ այս

330 Մատենադարան, ձեռ. № 1659, Թ. 35ր, 36ա: Բարթուղիմեոս Մարաղացիին գրում է. «Արիստոտելէս երեք կերպիւ ընդդէմ ասաց Պլատոնի. զի նախ ասաց Պլատոն, թէ երկնային մարմինքն են ի բնութենէ շորից տարերացս, իսկ Արիստոտել ասաց ունել ամենայն ալ իմն բնութիւն: Երկրորդ, ասաց Պլատոն, թէ մին նիւթ է ամենայն մարմնոց երկնայնոց և երկրայնոց, իսկ Արիստոտել ասէ զանազանս գոյ: Երրորդ, ասաց Պլատոն, թէ երկնային մարմինքն ըստ բնութեան իրեանց են ապականացուք, այլ միայն ի կամացն Աստուծոյ են անապականք: Իսկ Արիստոտել ասաց, թէ ստոյգ երկնային մարմինքն ըստ բնութեան իրեանց են անապականք: Նա պաշտպանում է Արիստոտելի կարծիքը (տե՛ս նույն տեղում, Թ. 50ր—51ա):

335 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 53ր: Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 188:

336 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 53ր: Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 188:

330 Մ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրութեանը, էջ 238:

331 В. К. Чалоян, История армянской философии, с. 228.

332 С. С. Аревшатян, Философские взгляды Григора Татеваци, с. 72.

333 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 44ր—45ա:

334 С. Н. Григорян, Средневековая философия народов Ближнего и Среднего востока, М., 1966, с. 207.

335 Э. Л. Даниелян, Армянские космографические труды VII в. о строении вселенной, Ереван, 1979, с. 27—28.

336 Գ. Գրիգորյան, Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, էջ 44:

վերջին վարկածի անշարժ աստղերի ոլորտը կոչվում էր «հաստատութուն», իսկ իններորդը՝ «առաջին շարժիչ»:

Հետագայում «Ալմագեստի» թարգմանիչներից մեկի՝ Սաբիտ բեն Կորրայի (836—901 թթ.) կողմից ավելացվեց էլի մեկ՝ տասներորդ ոլորտ, որն ընդունվեց Ալֆոնսի (1223—1284 թթ.) դպրոցի կողմից³⁴⁰:

Այդ ոլորտները ոչ մի կապ չունեին Հիպարքոսի և Պտղոմեոսի էպիցիկլերի և դեֆերենտների հետ. նրանք ուղղակի երկրաչափական արաստակցիաներ էին, որոնք ինչ-որ ճշտությամբ ներկայացնում էին մոլորակների և երկնակամարի օրական շարժումները:

Պարզվում է, որ վերոհիշյալ վարկածը ընդունված էր ինչպես Ալբերտ Մեծի, Բարթոլոմեոս Մարաղացու և XIV դ. Եվրոպայի համալսարանների, այնպես էլ Գրիգոր Տաթևացու և Հակոբ Ղրիմեցու կողմից: Այսպես, Ալբերտ Մեծը գրում է, որ «երկնայինը բաժանի յերիս երկինս՝ ի հրեղենն, ի ջրեղենն և ի հաստատութիւնն: Իսկ ընդ հաստատութեամբն, որ է երկինն աստղալից պարունակին եօթն պարունակք եօթեանց մոլորակացրն»³⁴¹: Բարթոլոմեոս Մարաղացին նշում է, որ իններորդ ոլորտը ջրային է, իսկ տասներորդը՝ հրեղեն: Ընդ որում նա պնդում է, որ վերջին՝ հրեղեն ոլորտը հայտնաբերել են ոչ թե իմաստասերները, այլ եկեղեցու սուրբ հայրերը³⁴², իսկ իններորդը՝ աստղագետները, որին էլ վերագրում են երկնքի շարժումը³⁴³: XIV դ. Եվրոպայի համալսարաններում ընդունված տիեզերքի կառուցվածքի մասին եղած պատկերացումներն ամփոփված են Կոնրադ Ֆոն Մեգենբերգի³⁴⁴ «Բնության գիրք» աշխատությունում, ըստ

որի՝ տիեզերքի կենտրոնում երկիրն է, շուրջը յոթ մոլորակների ոլորտներ, անշարժ աստղերի երկնակամարը և էլի երկու ոլորտներ:

Գրիգոր Տաթևացին գրում է, որ թե՛ ջրեղեն, և թե՛ հրեղեն երկինքները անաստղ են, բայց միմյանցից տարբերվում են նրանով, որ առաջինը շարժվում է, իսկ երկրորդն անշարժ է³⁴⁵:

Այդ տասը երկնային ոլորտները Հակոբ Ղրիմեցին անվանում է «բնական», քանի որ «երկինքները», ինչպես ինքն է ասում, լինում են երեք տեսակ. «բնական, հատկական և նմանական»³⁴⁶: «Հատկականը» երկիր-լուսին ընկած տարածություն երկինքն է, իսկ «նմանականը» վերաբերում է աստվածաշնչային առասպելներին և երկնքի «նմանվելու» պատճառով է այդպես կոչվում: Այնուհետև նա նշում է, որ վերջինի մասին ինքը չի խոսելու, քանի որ, ինչպես ինքն է ասում, «մերս վարդապետութիւն վասն աստղալից երկնիցս է, զի տումարական մակացութիւնս վասն սորա է, զի սա ունի զԱրեգակն և զԼուսին, զմոլորակս և զկենդանակերպս»³⁴⁷:

Երկիր-լուսին տարածությունը Հակոբ Ղրիմեցին Գրիգոր Տաթևացու նման բաժանում է երկու հրե և երկու օդային երկինքների. «առաջինն է հրոյն վերին մասն որ կոչի հրեղէն երկին... երկրորդ՝ ներքին մասն հրոյն, որ կոչի օլումբային երկին, վասն մերձ գոլոյն յՈւմբիոս լեան: Երրորդն է վերին մասն օդոյն և կոչի եթերային երկին... չորրորդն է ներքին մասն օդոյն և կոչի օդեղէն»³⁴⁸:

Մինչև Լուսին ընկած տարածությունը շորս ոլորտների է բաժանում նաև Բարթոլոմեոս Մարաղացին, որը տալիս է նաև հարցի պատմությունը³⁴⁹:

340 А. Берри. Краткая история астрономии, М.—Л., 1946, с. 85: Որոշ ուսումնասիրողների կարծիքով իններորդ ոլորտը ավելացվել է Աբու նասր Մուհամմեդ Ֆարաբիի (870—950 թթ.) կողմից: С. Н. Грудорян, Средневековая философия народов Ближнего и Среднего востока, с. 164.

341 Համառոտութիւն աստվածաբանութեան երանելոյն Մեծին Ալպերտի, Վենետիկ, 1715, էջ 82: Հետաքրքիր է նշել, որ XIII դ. հայկական միջավայրում ստեղծագործած սիրիացի մտածող Իշոխի «Բնութիւն գրքում», որը պահպանվել է միայն հայերեն լեզվով, «անշարժ» աստղերի երկնակամարից հետո գրված են ոչ թե երկու, այլ մեկ ոլորտ (տե՛ս Իշխի, Գիրք ի վերայ բնութեան, քննական բնագիրք, թարգմանությունը գրաբարից ռուսերեն և առաջաբանը՝ Ստեփան Վարդանյանի, Նրևան, 1979 էջ 84):

342 Մատենադարան, ձեռ. № 1659, Թ. 35ա:

343 Նույն տեղում, Թ. 19ա:

344 Մեվել է Գերմանիայում, կրթություն ստացել տեղում, հետո Փարիզում, դասավանդել է Վիեննայում (տե՛ս Փ. Даннеман, История естествознания, т. 1, с. 342—346):

345 Գրիգոր Տաթևացի, Գիրք բարոզութեան, որ կոչի Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1742, էջ 176:

346 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 75ա:

347 Նույն տեղում, Թ. 75բ:

348 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 75ա, Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 183: Ասենք, որ ըստ նրանց, վերոհիշյալ տարածությունում է տեղավորված և մի հինգերորդ երկինք՝ դրախտը: Մինչդեռ Բարթոլոմեոս Մարաղացու մոտ այս վերջինը բացակայում է: Մեղ համար պարզ է դառնում, որ մեր միջնադարյան մտածողների հակասությունները ունիթոոների հետ վերաբերել են միմիայն եկեղեցական հարցերին և ոչ քնադատությանը:

349 Հովհան Գամակացին (VII—VIII դդ.) ըստ նրա, տարբերել է երեք տեսակի երկինքներ՝ օդային, աստղավոր և վերին: Առաջինը հողից և ջրից հետո եղած օդն ու հուրն են, որոնք իրենց հերթին երկուական ծայր ունեն՝ վերին և ներքին: Նրանից հետո

Ալբերտ Մեծի մոտ նույն տարածությունը բաժանված է ոչ թե չորս, այլ վեց ոլորտների: «Բոլորակ հրոյն,—գրում է նա,—ունի զերիս ներկայարանս, այսինքն, զվերինն՝ որ կոչի հրային և զմիջին, և զստորնային՝ որ ասի օլոմպիական: նմանապես և օդն ունի զերիս ներկայարանս, այսինքն, զվերինն՝ որ կոչի եթերային, և զմիջինն, և զստորինն՝ որ ասի «դային»³⁵⁰:

Հակոբ Արիմեցուն հարց է տրվում, թե ինչու է երկինքը գնդաձև: Այս հարցին նա պատասխանում է՝ ելնելով մի դուլթից, որ գալիս էր պլուվագորականներից, իսկ հետո նաև Արիստոտելից. մարմնի ձևերից ամենակատարյալը գունդն է, իսկ հարթ պատկերներից՝ շրջանը:

«Բոլորակ ձևն պատշաճ է երկնից,—գրում է Հակոբ Արիմեցին,—դի երկինքն է կատարեալ մարմին... իսկ բոլորակ ձևն ի մէջ ամենայն ձևվոց է կատարեալ. նախ զի ոչ կարէ յաւելու ի նմա՝ և ոչ պակասիլ, երկրորդ՝ զի ոչ երևի սկիզբն և ոչ կատարած, երրորդ, զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց է առաջին, կատարեալ... զի որքան է ի միջին կիտէն ի բոլորակ ծիրն Զ. (6) այնչափ է իւր բոլորակ ծիրն: Այսպիսով, բոլորակ ձևն կատարեալ է և պատշաճի բոլորակութեան երկնից մարմնոց»³⁵¹:

Նույնպիսի բացատրություն գտնում ենք նաև Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գրքում»³⁵²:

Այնուհետև Արիմեցուն նոր հարց է առաջադրվում, թե ինչու երկինքը սալի անիվի նման ուղիղ գծի վրա չի շարժվում, այլ ձիթահանքի քարի նման «կողմնաւոր շրջաբերի»³⁵³:

Հայտնի է, որ ըստ Արիստոտելի՝ միայն շրջանաձև շարժումն է անընդհատ, այդ պատճառով էլ երկնային մարմինները օժտված են այդպիսի շարժումով. «Շրջանաձև շարժումը,—գրում է նա,—գնում է մի կետից դեպի նույն կետը, իսկ ուղղագիծ շարժումը՝ մի կետից մի այլ կետ, և շրջանաձև շարժումը երբեք նույն տեղով չի անցնում, իսկ ուղղագիծը՝ հաճախ»³⁵⁴... Նույնիսկ կիսաշրջանագծով կամ շրջանագծի մի այլ մասով

Ռարենտ վարդապետը (VIII—IX դդ.) այս բոլորակը բաժանեց չորս մասի՝ «հրեղեն, օլոմբային, եթերային և օդային» (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1659, Թ. 99ա—100ա):

350 Համառոտութիւն աստուածաբանութեան երանելոյն Մեծի Ալպերտի, էջ 83:

351 Մատենադարան, ձեռ. 1114, Թ. 74բ:

352 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 182:

353 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 46ա:

354 Аристотелю, Физика, М., 1936, с. 165.

չի կարելի շարժել անընդհատ, քանի որ վերջը չի կապվում սկզբի՝ հետևակ շրջանաձև շարժումը կապում է վերջը սկզբի հետ, և միայն նա է կատարյալ»³⁵⁵:

Ահա այս դատողություններն են ընկած Հակոբ Արիմեցու պատասխանի հիմքում. «եթէ որպէս զկունտս սալի ուղիղ թաւալէր զկողմը հիւսիսային և հարաւային,—գրում է նա,—եզերացն ոչ կարէր ի հաստատութեան պահել, այլ միայն գմէջն, զի նա առնույր թափ արագ շարժութեան երկնից: Իսկ յորժամ կողմնաւոր առնու զհիւսն, զբոլորն միապէս պնդէ, և այսպէս զաշխարհս ի հաստատութեան պահէ վասն որոյ իբրև վարս՝ ձիթահանոց շրջաբերի»³⁵⁶:

Հայտնի է, որ միջնադարում երկնքի համար ընդունված էին հասարակ և հատուկ շարժումներ. ընդ որում երկինքը շարժվում է արևելքից արևմուտք, իսկ մոլորակները՝ այդ թվում նաև Արևն ու Լուսինը, շարժվում են հակառակ ուղղությամբ՝ արևմուտքից արևելք: Երկինքն անհամեմատ ավելի արագ շարժվելով, երկնային մարմիններին տանում է իր ուղղությամբ: Այսպես, Անանիա Շիրակացու մոտ կարդում ենք. «Եւ վասն ընթացից լուսաւորացոյ ի մտից յեւս կոչս ընդդէմ երկնի մի ումեք անհաստ թուեցեալ յամառեսցի, ստելով թէ մեք տեսանեմք զլուսաւորսց ելեալ յարևելից և եկեալ մինչև յարևմուտս՝ ... այլ գիտասցէ, թէ երկինն է այն, որ հանէ զնոսս յեկից և բերէ ի մուտս, քանզի անչափ է երազութիւն շրջագալութեան երկնի»³⁵⁷: Նա բերում է արագ պտտվող երկանքի վրա քալող մրջյունի օրինակը, որը դուրս շրջանաձև համար ընթանում է քարի շարժման հակառակ ուղղությամբ:

Այս երևույթին ճիշտ նույն բացատրությունն է տալիս նաև Հակոբ Արիմեցին. «Լուսաւորք ունեն հասարակ և յատուկ շարժումն,—գրում է նա,—յատուկ շարժումն արևմուտքից յարևելս. և այս յայտ է ի Լուսնէն, իսկ հասարակ շարժումն յարևելից յարևմուտս: Եւ յատուկ շարժումն յինքեանց է: Եւ հասարակն ի բնութենէ երկնիցն... զնոսս բնութեամբ ըստ ինքեան ձգէ»³⁵⁸: Նա ևս բերում է մրջյունի հայտնի օրինակը, կրկին անգամ հաստատելով այն իրողությունը, որ տասնամյակներ առաջ ճշգրիտ ձևակերպել է Գ. Տեր-Մկրտչյանը. «Անանիան իբրև աղբիւր է ծառայել

355 Նույն տեղում, էջ 166:

356 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 46բ: Երկնքի շարժումը չբաղադրարի շարժման է նմանեցվում Բիրունու «Հնդկաստան» գրքում (տե՛ս Бурыки, Индия, с. 262):

357 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 48:

358 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 82բ, 83ա:

իրենից հետո եկող բոլոր տոմարագետներին... Ինչ նշանակութիւնն որ ունեցել է Խորենացու Պատմութիւնը հետագա պատմիչների համար, նույնն է եղել Շիրակացին... հետագա տոմարագետների համար»³⁵⁹:

Իսկ Խնչն է երկնքի շարժման պատճառը, այս հարցի պատասխանը Գրիգոր Տաթևացու և Հակոբ Արիմեցու մոտ նույնն է. «Նախ այսպէս, զի օդն որ ի մէջ է մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա է պատճառ շարժութեանն երկնից: Գարձեալ կէտ երկրիս անշարժ է ի մէջն և պատճառ է զշարժութիւնն երկնի: Որպէս կարակնին կէտ անշարժ է և պատճառ է զբոլորակ ծիրն... Իսկ Արիստոտէլ ի վերայ երկուց բեռնացն սսէ շարժիլ երկնի որպէս անի սալին՝ ի վերայ սոնոյ»³⁶⁰:

Կենդանակերպերի մասին «յինքեանց շարժին թէ յայլմէ» հարցին Հակոբ Արիմեցին պատասխանում է, որ երկինքն է շարժում նրանց, «զի որպէս բեռնն ի տախտակի ամրացեալք են»³⁶¹:

Գրան հակառակ, մոլորակները իրենք են շարժում. «Գիտել պարտ է, զի սոքա՝ շարժմունք յինքեանց ունին և ոչ յայլմէ, զի սոքա ոչ են իբրև զհասարակ աստեղս, որ հաստատեալ են յերկինս և ի նմանէ շարժին»³⁶²:

Մոլորակների պտտման աստղային պարբերությունները Հակոբ Արիմեցու մոտ հիմնականում ճիշտ են տրված: Երեւակը 30 տարի, Լուսնի՝ 12, Հրատը 1 ու կես, Լուսաբերն կես, Փայլածուն՝ 3 ամիս³⁶³:

Երկնային մարմիններից, սակայն, տոմարի համար,—ասում է Հակոբ Արիմեցին,—կարևորագույնը երկուսն են՝ Արևն ու Լուսինը, որոնցից առաջինը, «բերէ յինքեան զկայսերական ճոխութիւն և Լուսինն՝ թագավորական»³⁶⁴:

Արեգակի շարժումով են պայմանավորված տարվա եղանակները և, հետևաբար, կյանքը երկրի վրա: Այսպես, Հնդկաստանում,—գրում է Արիմեցին,—մարդիկ սև են, ինչպես խանձված փայտը, իսկ դրան հակառակ,—«աշխարհն Ռուզաց, ուր բնակութիւն մարդկան է, այնքան սաստիկ

լինի ցուրտն, որ ի պարզկայ գիշերն զգրկապատ ծառսն ճայթեցնէ և յերկուս հերձէ»³⁶⁵:

Տարվա շորս եղանակների հետ կապված փոփոխվում է ինչպես բնութիւնը, այնպես էլ կենդանական աշխարհը՝ նաև մարդիկ: Այսպես, գարնանը «ծառք չորացեալք դալարին... բուսանին և աճեն սերմանիք... շարժին կենդանիք ի ծնունդն...», ամռանը Արեգակի շերմութեամբ «հասանին պտուղք, աշնանը ծառք ի պտղոց կողոպտին... տերեք դեղնին և թափին... ամլութիւն աճէ յերկիր... և շարժին կենդանիք յղացումն», ձմռանը շերմութեան պակասից «ծառք մեռանին... ամենայն կենդանեաց տխրութիւն...»³⁶⁶: Ըստ այդմ էլ՝ գարնանը, «արիւնն առաւելու ի մեզ», ամռանը «խարտեալ մաղձքն», աշնանը՝ «սեաւ մաղձքն», ձմռանը՝ «պղղամ և սպիտակ հիւթք տիրեն»³⁶⁷:

Կենդանակերպերի անունների մասին խոսելիս Հակոբ Արիմեցին գրում է, որ մարդիկ դրանց կենդանիների անուններով են կոչել երկու պատճառով. նախ աստղերի դասավորութիւնը նմանեցրել են տվյալ կենդանու կամ նրա մարմնի որևէ մասին և երկրորդ՝ «ըստ ներգործութեան Արեգականն այսպէս կոչեցան: Եւ զի Խոյն ծննդական է, և Արեգակն գալով ի սաղաշխարհս շարժէ ի ծննդականութիւն: Զի երկիր ծնանի զբոյսս, և ծառք և տունկք զտերևս և զծաղիկս, կենդանիք ծնանին զնմանս իւրեանց»³⁶⁸: Իսկ Յուլն ավելի հզոր է և նույնպես «ծննդական»: Արևը գալով այդ կենդանակերպը, ավելի է ներգործում երկրի վրա:

Այն բույսերը և կենդանիները, որ չլին հասցրել զարթնել, աճում են այդ ժամանակ. «Իսկ ի Եկաւորն բարձրանալ Արեգականն և զորացեալ շերմութեամբն բերէ զառաջին եկն, զի վաղահաս պտուղքն գան ի յեկ»³⁶⁹:

Խեցցեալն անվանվեց հաջորդ համաստեղութիւնը, որովհետև այդտեղ հասնելով Արեգակը փոխում է իր ընթացքը³⁷⁰: Հաջորդ՝ Առյուծ համաստե-

359 Պ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, Արարատ, Էջմիածին, 1896, էջ 341, 342:

360 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 182, Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 74ա:

361 Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 376, 2017, Թ. 74ա:

362 Մատենադարան, ձեռ. № 74, Թ. 365բ, 2017, Թ. 80բ:

363 Ժամանակակից տվյալները՝ Սատուրն՝ 29, 45 տարի, Յուպիտեր՝ 11, 86 տարի, Մարս՝ 1,88, Վեներա՝ 0,6, Մերկուրի՝ 0,24 տարի:

364 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 90ա:

365 Նույն տեղում, Թ. 94ա:

366 Նույն տեղում, Թ. 86ա:

367 Նույն տեղում: Չորս տարբերի նմանողությամբ կենդանի օրգանիզմում եղած չորս տեսակի հյուսիսի տեսությունը գալիս է Հիպոկրատից և Գալենից, որը ընդունվել էր նաև միջնադարյան հայ բժիշկների կողմից: Այսպես, Ամիրղովլաթ Ամասիացու «Ձգնու բժշկութեան» զբրում մանրամասն տրված է ոչ միայն այդ հյուսիսի, այլև դրանք ըստ եղանակների փոփոխվելու մասին (տե՛ս Ս. Մալխասյանց, Ամիրղովլաթ Ամասիացի, Օդեսա բժշկութեան, Սրևան, 1940, էջ 22, 53):

368 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 71ա:

* 369 Նույն տեղում, Թ. 71բ:

370 Նույն տեղում:

դուժյուն հասնելով Արեգակի ներգործությունը այնպես է հղորանում, որ նա կարող է նույնիսկ մարդկանց վնասել³⁷¹։ Իսկ երբ Արեգակը գալիս է Կույսի համաստեղությունը, երկիրը կույսի բնություն է ստանում, «ոչ ծնանի իբրև կոյս, զի անհնար է յայսմ ժամանակի իր սերմանել յերկիր և զայն հնձել»³⁷²։ Գալով Կշիռ կենդանակերպը, Արեգակը նախ հավասարեցնում է օրն ու գիշերը, և երկրորդ, շերմությունը և ցրտությունը, «զի ոչ շերմութեամբ այրէ և ոչ ցրտութեամբ սառեցուցանէ»³⁷³։ Հաջորդ կենդանակերպը Կարիճն է, որը խայթոցը «ի վերջըն ունի, այսինքն ի տուտն... Այսպէս և Արեգակն... հասանելով Կարճին, յանկարծակի ձիւնաբերութիւն լինի և խայթէ ի վերջըն իբրև զկարիճ»³⁷⁴։ Արեգակի Աղեղնավոր հասնելուց հետո այնպես է ցուրտը սաստկանում, որ «մահ գործէ կենդանեաց, դորս գտանէ արտաքս, զոր օրինակ նետ էլեալ ի հաստ և ի լայնալիճ աղեղնէ, զոր հարկանէ»³⁷⁵։ Գալով Այծեղջյուր, Արեգակը այլևս չի խոնարհւում, այլ սկսում է բարձրանալ, ինչպես Այծեղջյուրը՝ թողած ուղիղ ճանապարհը, բարձրանում է քարերի, բարձրությունների վրա, որ ճիշտ կողմնորոշվի³⁷⁶։

Ջրհոսում եղած ժամանակ Արեք սկսում է քիչ-քիչ շերմացնել, գետերը, առուները տեղ-տեղ հալվում են³⁷⁷։ Չուկն կենդանակերպում Արեգակի շերմությունն ավելանում է, ձնհալից ջուրն առատանում, Երկիրը ձկան նման լողում է ջրի մեջ³⁷⁸։

Այս համեմատությունները գեղեցիկ են և ուսանելի։ Գա, անշուշտ, կօգնէր ունկնդիրներին նյութը ավելի արագ և դյուրին ըմբռնելու գործում։ Իայց առավել կարևորն այստեղ մի այլ հանգամանք է, որի մասին տարիներ առաջ գրել է ակագեմիկոս Լ. Խաչիկյանը։ Բանն այն է, որ միջնադարում ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում տարածված է եղել աստղահամայնությունը։ Ձեռագրերում պահպանվել են բախտազուշակների կողմից գրի առնված գուշակողական բնագրեր։ Մինչդեռ «Հակոբ Արիմեցին,—գրում է Լ. Խաչիկյանը,—ոչ միայն իր գիտելիքները չի շարաշահել

գուշակություններ կատարելով, այլև խիզախ դիրք է բռնել ընդդեմ խավաբամտության և բախտազուշակության։ Նա ընդունելի է համարել միայն կենդանակերպերի ազդեցությունը բնական այն երևույթների վրա, որոնք առնչվում են տարվա եղանակների փոփոխության հետ»³⁷⁹։

Ավելի հետաքրքիր հարցեր են կապված Լուսնի հետ. քանի օրական է «ստեղծվել», ունի՞ բնական լույս, թե ոչ և այլն։ «Ստեղծման» հասակի մասին Հակոբ Արիմեցին գրում է. «Արդ, ի վերայ աուրս այս բաղում են կարծիք, զի զանազան ձևս ասեն զԼուսինն ստեղծեալ։ Ոմանք ետօրեայ, և այլք միօրեայ, իսկ կէսք մետասանօրեայ»³⁸⁰։ Եվ վերջապես,—շարունակում է նա,—532-ամյա զատկացանկը կազմելիս ալեքսանդրյան գիտնականները «ծանեան զԼուսինն ստեղծեալ ի լրման ձևի և զաուրս ժն. (15) քնթացեալ լեալ էր և բոլորեալ լուսովն»³⁸¹։

Ասենք, որ Բարթոլոմեոս Մարաղացու մոտ նույնպես ընդունված է այդ վարկածը, սակայն այն տարբերությամբ, որ այն վերագրված է ոչ թե ալեքսանդրյան խմբին, այլ հռոմեական փիլիսոփա Բոեսիոսին (480—524 թթ.)³⁸²։

Լուսնի հետ կապված հաջորդ հետաքրքիր հարցը վերաբերում է նրա լույսին։ Թվում է, թե Արիստոտելը մեկընդմիջտ պարզել էր այն, և նրան անդրադառնալն անիմաստ էր։ Սակայն ինչպես գրում է Արիստոտելի ուսումնասիրողներից մեկը, այդ հարցը մանրամասն քննարկվում էր Արիստոտելի միջնադարյան թե՛ արևելյան և թե՛ արևմտյան անթիվ մեկնաբանների կողմից մինչև Լեոնարդո դա Վինչի³⁸³։ Պետք է ասել, որ հայ մտավոր մշակույթի պատմության մեջ այս հարցը տարբեր մտածողներ տարբեր ձևով են ներկայացրել։ Այսպես, Եզնիկ Կողբացին տալով այդ հարցի հույն իմաստասերների բացատրությունը, նշում է, որ ինքը համաձայն չէ դրա հետ և որ Լուսինը ստեղծվել է լույս տալու համար, հետևաբար, չի կարող սեփական լույս չունենալ³⁸⁴։ Իսկ Անանիա Շիրակացին

371 Նույն տեղում, թ. 72ա։

372 Նույն տեղում։

373 Մատենադարան, ձեռ. № 1114, թ. 72ա։

374 Նույն տեղում, թ. 72բ։

375 Նույն տեղում։

376 Նույն տեղում, թ. 73ա։

377 Նույն տեղում, թ. 73ա, բ։

378 Նույն տեղում, թ. 73բ։

379 Լ. Ս. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ., էջ 29։

380 Մատենադարան, ձեռ. № 1114, թ. 58բ։

381 Նույն տեղում, թ. 61ա։

382 Նա այս մասին հաղորդում է. «Ասաց Բօէսիոս ի գիրս մխիթարական իմաստասիրութեան, թէ բնութիւն յիսկիզբանն սկսու ի կատարելոյն, զի ի սկզբանէ կատարեալ ստեղծաւ մարզն և անասունք և բոյսք և տունկք, վասն այնորիկ և Լուսինն կատարեալ ստեղծաւ» (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1659, թ. 159ա)։

383 В. П. Зубов, Аристотель, с. 100, 101.

384 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 129—130։

չիտենալով այդ մասին եղած իրարամերժ կարծիքները, կողմնակից է արիստոտելյան բացատրությանը. «առաջինքն, որք ջանացան հասու լինե՞ր նմա, ասացին այսպէս՝ թէ Լուսինն սարր է սեղմ, խիստ մաքուր, գնդաձև։ Ըստ ոչ ունի զլուսնն բնութեամբ, այլ հաղորդութեամբ յԱրեգականէ առեալ, որպէս զհայելի ընդդէմ Արեգական ունելով և նա ճառագայթս բացարձակէ յիրմէ, նոյնպէս և զԼուսինդ ասեն։ Բայց երկու ոմանք չեկեղեցույ ասացին, թէ առանձին ունի Լուսինն զլուսն և ոչ յԱրեգականէ։ Զի որպէս ամանն Լուսնի այլ իմն է, նոյնպէս և լուսն նորա այլ իմն է... բայց ես հաւանիմ բազմաց իմաստասիրութեան յԱրեգականէ ասել»³⁸⁵։ Հաջորդ դարերի հաջ մտածողները, գիտենալով հարցի ճիշտ բացատրությունը, շատ դժպքերում շին ընդունել այն՝ միայն և միայն եկեղեցական գրույթներից շեղվելու համար։ Այսպես, օրինակ Հովհաննես Երզնկացին գրում է.

«Բայց ըզմանէ ոմանք ասեն արք գիտնական,
թէ ոչ ունի լուսն յինքենէ իւր բնական,
այլ հայելի ընդդէմ կացեալ Արեգական,
և ի նմանէ ճառագայթէ զլուսն իւրական»։

Այլ մեք ասեմք ըստ սուրբ գրոց ճշմարտական,
թէ լուսն Լուսինն է յինքենէ արարչական»³⁸⁶։

Տաթևի դպրոցում ընդունված է եղել Լուսնի թե՛ սեփական և թե՛ Արեգակից փոխառնված լուսնի առկայությունը։ Այսպես, «ունի բնական լուսն և յԱրեգակէն լուսն ընդունի»,— գրում է Գրիգոր Տաթևացին³⁸⁷։

Հակոբ Արիմեցին նույնպես ընդունում է Տաթևացու այս թեզը, որք տարբեր էր նույն հարցի շուրջ գաղափարական հակառակորդների ունեցած կարծիքից³⁸⁸։

«Ունի բնական լուսն,— գրում է նա,— և յԱրեգակէ փոխառնու լուսն... Վարդապետք ասեն, որպէս սուրբն Բարսեղ ասէ, թէ որպէս երկբերանք քսակ է Լուսինն, ընդ մինն ելանէ և ի վերինն թիկունսն ժողովի և պակասի մէջն լուսն և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ զմեզ։ Ըստ այլք ասեն,

385 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, էջ 39, 40։

386 Տետրակ համառոտ և լի իմաստախոհ բանիք, արարեալ... Յօհաննիսի Երզնկացույ, որ և ասի Մործորեցի, Ն. Նախիջևն, 1792, էջ 31։

387 Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, Ամարան հատր, էջ 654։

388 Լուսնի լուսնը միայն Արեգակով պայմանավորված լինելու մասին խոսել են թե Ալեքսեոս Մեծը (տե՛ս Համառոտություն աստուածարանութեան երանելոյն Մեծին Այպերտի— էջ 89) և թե Բարթոլոմեոս Մազարացին (Մատենադարան, ձեռ. № 1659, Բ. 155ա)։

թէ յԱրեգակէն առնու զլուսն... և այլք ասացին, թէ ունի բնական լուսն և առնու զլուսն յԱրեգակէ և այնպէս խառն Բ. (2) լուսն ի նմայ... ուղղապէս անցեալ ընդդէմ Արեգակս խաւարէ զնա»³⁸⁹։

Սակայն, շնայած այն հանգամանքին, որ ելնելով ժամանակի ոգուց և Տաթևի դպրոցի գրույթներից, Հակոբ Արիմեցին ընդունում է Լուսնի սեփական լուսնի գոյությունը հնարավորությունը, սակայն այն հարցին, թե «գի՞նչ է, որ ի նորիլն եղջերուակերպ երևի», նա պատասխանում է. «ստուեր երկրի ընդ մէջ անցեալ Արեգակին, խաւարէ զԼուսինն և յորժամ առնու զլուսն յԱրեգակն յեզրն, երկրիս ձևն բոլորակ է, խաւար մնայ մէջն, նոյնպէս յորժամ հեռանայ, և պակասի լուսն»³⁹⁰։

Ինչպես տեսնում ենք, բնական երևույթը բացատրելիս նա մնում է «ստուեր իմաստասիրութեան» սահմաններում, իրեն ազատելով «պարզ աստուածաբանություն» կաշկանդող շրջանակներից։

Լուսնի շարժման մասին Հակոբ Արիմեցին օգտագործում է «սողալ» բառը, քանի որ այն տարբեր է երկնքի և Արեգակի գնդաձև շարժումներից³⁹¹։ Գա երևում է նրանից,— գրում է նա,— որ Լուսինը լուսնը «միակողմանի ունի, զի որպէս արտաքին երեսս լուսն է, նոյնպէս ներքինն խաւար է»³⁹²։

Երկնային մյուս մարմինների նման երկիրը նույնպես գնդաձև է³⁹³,— գրում է Հակոբ Արիմեցին, բայց տիեզերքի չափերի հետ համեմատած կետ է³⁹⁴։ Սա Պտղոմեոսի տեսության հիմնական գրույթներից է, որ ընդունվել էր եկեղեցու կողմից։ Այսպես, VII դ. հուլյն իմաստասեր Գևորգ Պիսիդացու «Վեցօրեայ» աշխատությունում, որը վաղ միջնադարում թարգմանվել է հայերեն, կարդում ենք.

389 Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 55ա, բ։

390 Նույն տեղում, Բ. 55բ։

391 «Երկինքն զնոյն զորեւելով գլխի, նոյնպէս և Արեգակն, բայց Լուսինն ոչ այսպէս, թի սողալով սողի, որպէս զնա ի վերայ ջրի (Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 45բ)։

392 Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 46ա։

393 Նույն տեղում, Բ. 55բ։ Այս տեսակետը ևս գալիս է Տաթևի դպրոցի գրույթներից։ Եվ Էրզնկացի չէ Գ. Խրոյաչանք, ըստ որի Գրիգոր Տաթևացին ընդունել է երկրի տափակությունը (տե՛ս Գ. Խրոյաչանք, Անանիա Շիրակացու աշխարհայացքը, Երևան, 1964, էջ 140—145)։ Գրիգոր Տաթևացին երկրի ծայրերի երկարությունը և լայնության մասին խոսելուց հետո (Գիրք հարցմանց, էջ 210) երկրի ձևի մասին շատ որոշակի գրում է, որ այն «բոլոր է» (նույն տեղում, էջ 211)։

394 Մատենադարան, ձեռ. № 1114, Բ. 93բ։

«Ի միջի բերէ զերկիր՝ իբրև զկէտ մի,
ի վերայ ոչինչ կառուցման կառուցնալ,
...Քանզի շափ երկնի՝ անշափութեամբ
նւ առ քն՝ կէտ մի է անձուկ»³⁹⁵;

Միջնադարյան մտածողների համար կարևոր էր երկրի անշարժությունը հարցը: Նրանք փորձել են այն բացատրել հիմնականում բնական պատճառներով: Այսպես, Եղիշեն³⁹⁶ և Անանիա Շիրակացին³⁹⁷ ընդունում են, որ երկիրը իր ծանրության շնորհիվ չի կարող վեր բարձրանալ, իսկ ներքևից փչող հողմերի շնորհիվ չի կարողանում ներքև իջնել:

Հովհաննես Երզնկացին սրան ավելացնում է նաև այն, որ երկինքն իր արագ պտույտով չի թողնում երկրին շարժվել³⁹⁸:

Հովհան Որոտնեցին այս հարցի կապակցությամբ բերում է թե՛ աստվածաբան մտածողների և թե՛ Արիստոտելի տեսակետները, միաժամանակ նշելով, որ «հարկ է մեզ ընտրություն առնել, և որ ըստ շաղաք Աստուածաշունչ գրող ընթանայ՝ ընդունել, իսկ որ արտաքոյ է ի շաղաք Աստուածաշունչ գրող՝ ոչ ընդունել, թէլպէտ և ասողն մեծ ոք իցէ»³⁹⁹: Նա հայտնում է, որ վարդապետների և փիլիսոփաների մի մասը ենթադրում են, թե երկիրը ջրերի վրա է հաստատված, իսկ ըստ Արիստոտելի «զերկիր ի ջրոջ պարունակեալ և ջուր յօդոյ և օդ ի հրոյ և հուր յեթերէ: Իսկ եթերն սրընթաց շրջագայութեամբն իւր պահէ հաստատուն ի մէջ իւր զերկիր»⁴⁰⁰:

Իսկ Բարսեղ Կեսարացին, — շարունակում է Հովհան Որոտնեցին, — համամիտ է մի այլ կարծիքի. «Երկինքն է բոլորակ շրջապատեալ զերկիր և երկու կիսաբոլորիս մէջն է խոնարհ և ցած, մինչ զի ամենայն կողմանց

395 Ա. Տիրոյեան, Վեցօրեայք Պիսիդեայ Իմաստասիրի, Բագմավէպ, 1890, № 4, էջ 145: Նույն բանը ընդունված է եղել Հնդկաստանում (տե՛ս Буржуа, Индия, с. 249):

396 Լ. Ս. Խաչիկյան, Եղիշենի «Արարածոց մեկնությունը» աշխատությունը, էջ 170, 184 (անտիպ):

397 Գ. Խելոյայան, Անանիա Շիրակացու աշխարհայացքը, էջ 152—153:

398 Գ. Գրիգորյան, Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, էջ 68—69: Նույն կարծիքին է նաև XIII դ. հայ փիլիսոփա Վահրամ Բարձուրի «երկինքն բոլոր՝ վերոյ և ներքո՝ և շուրջ այլ զաշխարհս պարունակեալ է, և հանապաղ ի շուրջ հին դարոյն պնդէ դմաստն աշխարհիս» գրում է նա (տե՛ս Վահրամ Բարձուր, Լուծմունք աստուգութեանցն» Արիստոտելի, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները Գ. Զ. Գրիգորյանի, Երևան, 1967, էջ 220):

399 Հովհան Որոտնեցու հուաքեալ ի բանից իմաստասիրաց, տեքստը պատրաստեցին Ս. Արևշատյան, Ս. Լալաֆարյան, Բանբեր Մատենադարանի, № 3, 1956, էջ 379:

400 Նույն տեղում, էջ 376:

ծանրութիւնք առ մէջն իջանեն և չկա հնար ծանրութեանցն ի միջի կիտէն արտաքս շեղող»⁴⁰¹:

Գրիգոր Տաթևացին նույնպես տալիս է տվյալ հարցի շուրջ եղած բոլոր կարծիքները. 1) չորս տարրերը հաջորդաբար գնդաձև դասավորված լինելով պահում են երկրին, որպես «ղձու հաւի՝ զեղնուցն ի մէջ ջրոյն և մզղնա տեսակն ի խեճեպոյն է ամրացեալ», 2) ներքին հողմերը վեր են ձգում, վերին հողմերը՝ ներքև, դրա համար էլ երկիրն անշարժ է, 3) երկրի ծանրությունը ցած է քաշում, հողմերը զեպի վերև, 4) «հաւասարակշիռ է երկիրս բոլորակի և յամենայն կողմանց ծանրութիւնն ի մէջն ժողովի և այսպէս ինքն ի վերայ իւր հաստատեալ է» և վերջապես 5) երկինքն թեթև է, վեր է քաշում, իսկ երկիրը ծանր է, դեպի ներքև է ձգում և այսպես «մի զմի հաստատուն պահեն»⁴⁰²: Գոյություն ունեցող այս տարբեր կարծիքներին Գրիգոր Տաթևացին ավելացնում է նաև վեցերորդ բացատրությունը՝ Աստծո զորությունը:

Հակոբ Արմեցին լավ գիտի այս բոլորը, սակայն նա իր աշակերտների համար այդ բացատրությունները խտացրել է մեկ նախադասության մեջ. «Գիտելի է, զի երկնից մշտաշարժութիւն է, որ պահէ զերկիրս յանշարժութիւն, որպէս անշարժութիւն երկրիս պահէ զնա ի մշտաշարժութիւն»⁴⁰³: Թվում է, թե նա ոչ մի նոր բան չի ավելացնում, տալով այս կարճ բացատրությունը: Սակայն եղած բացատրություններից ընտրելով այդ մեկը և երկրի անշարժությունն ու երկնքի շարժումը միմյանցից բխեցնելով և միմյանց հետ կապելով նա կարծեք թե իր ժամանակից առաջ է ընկնում:

Երկնային մարմինների շարժման հետ էր կապվում նաև ժամանակը: Ժամանակի գծային բնույթը՝ այսինքն սրա անկրկնելի, անվերադարձ լինելը, որը բնական ու հասկանալի է, և առանց որի մենք չենք էլ կարող առհասարակ պատկերացնել այն, բոլորովին էլ հասկանալի չի եղել անցյալում:

Հին հույների կողմից աշխարհն ընկալվում էր ոչ թե փոփոխությունների, զարգացման, այլ հանգստի կամ համաշափ պտույտի մեջ:

Մինչև XIII—XIV դարերը, բանի որ մարդու կյանքի և հիմնական զբաղմունքների ուղիքը կապված էր բնական երևույթների հետ, ժամա-

401 Նույն տեղում, էջ 379:

402 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 181:

403 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 46ա:

նակի ճշգրիտ չափումը անհրաժեշտություն չէր: Ժամանակի հիմնական միավորները միջնադարում տարին, ամիսը, օրն էին, և ոչ թե ժամը, կամ առավել ևս րոպեն: Սակայն անտիկ աշխարհի և միջնադարյան քրիստոնյա մտածողների կողմից ժամանակի ընկալումը տարբեր էր: Աշխարհի սկզբի և վերջի մասին Սուրբ գրքի տեսությունը խոսում էր ժամանակի երկարության, անկրկնելի լինելու մասին⁴⁰⁴: IV—V դդ. քրիստոնյա աստվածաբան Ավգուստինոս Երանելին մերժեց ժամանակի պարբերական բնույթը և նրա արիստոտելյան բացատրությունը, այսինքն, իբրև երկնային մարմինները շարժման շափ դիտելը: Բայց XIII դ. սկսած ժամանակի հասկացությունը նոր երանգ էր ստանում՝ արիստոտելյան իդեաներով: Այսպես, XIII դ. հայ պատմիչ՝ Վարդան Արևելցու մոտ կարգում ենք. «Բնութիւնն շարժէ զգունդն երկնից, և նա զժամանակն»⁴⁰⁵:

Նույն բանը գտնում ենք Վարդան Արևելցու ժամանակակից և բարեկամ XIII դ. սիրիացի մտածող Իշոխի մոտ. «Եւ փոփոխումն ժամանակին լինի գնդին երկնից շրջելովն... բնութիւնն շարժե զգունդն երկնից, և նա շարժէ զժամանակն»⁴⁰⁶:

Իսկ Գրիգոր Տաթևացին ասում է, թե դատաստանից հետո ժամանակ չի լինելու, որովհետև երկնային մարմինները չեն շարժվելու⁴⁰⁷:

Հակոբ Արիմեցու մոտ նույն միտքը ձևակերպված է այսպես. «Արդ, ժամանակն ի շրջագայութենէ երկնիցն պատճառի... երկինքն միշտ յաւետ յառաջ խաղայ. է այսպէս և ժամանակն, զի ներկայն միշտ անցելոյն առաջի կայ և ապագայն ներկայիս»⁴⁰⁸: Ինչպես վերևում ասվեց, նա գտնում է, որ ինչպես նյութը առանց գործի ունի էություն, իսկ գործն առանց նյութի՝ ոչ, այնպես էլ թվականը առանց տոմարի ունի էություն, որովհետև ժամանակից է բաղկացած, իսկ «ժամանակս միշտ չէութենէ կայ, որ թուելովն զէութիւն թուականին տայ»⁴⁰⁹:

Միջնադարյան շատ մտածողների նման Գրիգոր Տաթևացին և Հակոբ Արիմեցին ժամանակի պարբերական ընկալումը համատեղել են գծայինի

հետ: «Ժամանակն ի գոյից է, թէ յանգոյից» հարցին նրանք պատասխանում են. «Ի գոյից է, զի շարժումն երկնի և ընթացք լուսաւորացոյ ծնանին զժամանակն, և յանգոյից, զի անցեալն ապականեալ է, և ապագայն ոչ է ի միջի, և ներկայն անզգայարար անցանէ»⁴¹⁰:

Ժամանակը միջնադարում բնութագրվում էր հետևյալ կատեգորիաներով՝ 1. հավիտենականություն (aeternitas), 2. միշտ (aevum) և 3. մարդու կյանքի տևողությունը (tempus)⁴¹¹: Սրանք ունենալով ավելի խոր իմաստ, միմյանցից տարբերվում էին ոչ միայն տևողությամբ: Այսպես, հավիտենականությունը հատուկ էր միայն աստծուն՝ նա ժամանակի արարիչն էր, մշտնջենավոր էին երկնային մարմիններն ու հրեշտակները, «ժամանակեայ» էր մարդը, որը «կարգաւորիչ էր ժամանակի»⁴¹²:

Հետևելով Գրիգոր Տաթևացուն, Հակոբ Արիմեցին գտնում է, որ «Յաւիտեանն էլ» իր հերթին չորս տեսակ է լինում, «յարածգական», որն անսկիզբն է և անվախճան, «անսկիզբ յաւիտեան», «անվախճան յաւիտեան» և «ժամանակեայ յաւիտեան», որն ունի և սկիզբ, և վախճան⁴¹³:

«Յարածգական» հավիտյանն, ըստ Հակոբ Արիմեցու, հաշվել հնարավոր չէ, ինչպես հնարավոր չէ հաշվել երկնքի բոլոր աստղերը, անձրևի շիթերը, ծառերի տերևները, ծովի ավազի հատիկները: Անսկիզբ և անվախճան հավիտյանները կարելի է չափել այն ծայրից, որտեղ դրանք սահմանափակվում են: Իսկ վերջինը քանի որ սկսել է հաշվել մարդը, այդ պատճառով էլ մարդու «արարչագործության» պահը համարվում է սկիզբ, ըստ այդմ՝ թվականի սկզբի մասին ասում են՝ «կալ յկղամայ հետէ»⁴¹⁴:

Հակոբ Արիմեցին հանգամանորեն կանգ է առել նաև ժամանակը չափելուն վերաբերող հարցերի վրա:

Հայտնի է, որ եթե երկարության և զանգվածի միավորները տարբեր ժամանակներում և երկրներում տարբեր են եղել, ապա ժամանակի միա-

410 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 198, Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 47ա:

411 Այսպես, Ալբերտ Մեծը գրում է. «Բայց զանազանութիւն է ի մէջ ժամանակին, մշտնջենաւորութեան և յաւիտենականութեան, քանզի ժամանակն ունի զսկիզբն և զաւարտ: Իսկ մշտնջենաւորութիւնն կարօտանայ վախճանի, այլ ոչ սկզբան այլ յաւիտենականութիւն կարօտանայ երկաթանշիւրցոց կոպարացն, զի է չափ անստեղծ» (տե՛ս Համառոտութիւն աստուածաբանութեան երանելոյ Մեծին Ալպերտի, էջ 95):

412 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 45ա:

413 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 115, Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 47բ—49բ:

414 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 49բ:

404 Л. Я. Гуревич, Представления о времени в средневековой Европе: История и психология, сб. ст., М., 1971, с. 162: Հողվածում կարգում ենք. «Հավանարար ոչինչ այնպես պարզ չի բացահայտում անտիկ և նոր մշակույթների խոր հակասությունը, ինչպես ժամանակի ընկալումը» (էջ 2):

405 Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 4:

406 Իշոխ, Գիրք ի վերայ բնութեան, էջ 82—83:

407 Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, Ամբարն հատոր, էջ 747:

408 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 46բ:

409 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 45ա:

վորի ընտրության հարցում տարածայնություն չի եղել. ցերեկվա և գիշերվա հերթափոխությունը հուշել է մարդուն ժամանակի միավորի ընտրության միակ, բնական ձևը: Բոլոր միավորներն արտահայտվել են օրով կամ նրա մասերով: Սակայն օրվա և տարվա առաջացման պատճառների բացատրություններն են տարբեր եղել: XVI դարում երբ Կոպեռնիկոսը ապացուցեց, որ երկիրը պտտվում է իր առանցքի ու Արևի շուրջը, դրանից հետո միայն գիտականորեն բացատրվեցին ցերեկվա և գիշերվա առաջացումը, երկնային ոլորտի օրապտույտը և շատ այլ երևույթներ: Իսկ Հակոբ Արիմեցուն Կոպեռնիկոսից բաժանում էր մեկ հարյուրամյակից ավելի ժամանակամիջոց, երբ իշխում էր տիեզերքի կառուցվածքի մասին եկեղեցու կողմից ընդունված երկրակենտրոն համակարգը և ինչպես ամենուրեք, Հայաստանում էլ գիտությունը ստանձնել էր աստվածաբանության հլու կամակատարի գերը: Բնականաբար, Հակոբ Արիմեցին նույնպես հարցը քննարկելիս հենվում էր դրա վրա: Նա հանդամանորեն բացատրում է, որ շափելու համար միշտ էլ ինչ-որ բան է պահանջվում, որը տարբերվում է շափվող մեծությունից, և այս կապակցությամբ նշում է, որ երկնքի շարժումը չի կարող միավոր լինել երկնքի ժամանակի համար, այլ այն շափ է մեր՝ երկրագնդի համար, որովհետև «ժամանակս առ մեզ է և ոչ է յերկինս, վասն զի առաջին շարժումն դայս շափէ... և յերկրի լինի ամառն և ձմեռն, և ոչ յերկինս»⁴¹⁵:

Հետաքրքրական է նշել, որ նույնպիսի մտքի հանդիպում ենք ինչպես Ալբերտ Մեծի, այնպես էլ Գրիգոր Տաթևացու մոտ⁴¹⁶: «ժամանակն է առ մեզ, և ոչ ի յերկինս, ըստ իւրում գոյացութեան զի աստ փոփոխին ամենեքեան, և ոչ անդ, քանզի աստ՝ երբեմն ձմեռն, երբեմն ամառն, երբեմն խաղաղ, երբեմն վրդով, երբեմն հանդարտութիւն և երբեմն մրրիկ»⁴¹⁷, — գրում է Ալբերտ Մեծը:

Ժամանակի միավորների մասին խոսելիս Հակոբ Արիմեցին օրվան յուրահատուկ տեղ է հատկացնում: Ըստ Արիմեցու՝ օրը ունի կրկնակի իմաստ. «բնական» և «արուեստական»⁴¹⁸: «Արուեստական՝ ծագումն լուսոյ մինչև յերևելոյ առ հասարակ յազգս, իսկ օր բնական, որ է կիտ է ի կէտ՝ ԻԳ (24) ...բնական օրն է տիւ և գիշեր, իսկ արուեստական օրն՝ միայն տիւ: Բնական օրն հաւասարաշափ է, զի ոչ առաւելու և ոչ նուա-

պէ»⁴¹⁹: Սակայն դա չի խանգարել Հակոբ Արիմեցուն՝ ընդունելու լուսոյ-խավար հասկացության կրոնական սահմանումը, գիշերն ու ցերեկը, լուսնն ու խավարը դիտել իբրև միմյանցից անկախ հասկացություններ, «առաւօտ խառն է ի լուսոյ և ի խաւարէ»⁴²⁰:

Պարզվում է, որ օրվա նույնպիսի կրկնակի սահմանում եղել է տարբեր ժողովուրդների՝ հույների, հռոմեացիների մոտ⁴²¹: Արիմեցին քննարկում է նաև օրվա սկզբի հարցը. «ննդրելի է, թէ ո՞րն է սկիզբն աւուրն: Նախ գիտելի է, զի կրկին է օր՝ այսինքն բնական և արուեստական... բնական օրն հաւասարաշափ է, զի ոչ առաւելու և ոչ նուազէ, իսկ արուեստական օրն առաւելու և նուազէ: Եւ բնական օրն զանազանապէս առեալ է ի զանազան ազգս, զի հրեայքն և ասորիք զերեկոյն զնեն սկիզբն բնական աւուրն, ասելով՝ եղև երեկոյ, եղև վաղորդայն օր մի, իսկ աստեղագէտք զհասարակ օրն, յորում Արեգակն ի բարձունս իւր հասանէ: Իսկ այժմ քրիստոնէիցս կրկին է սկիզբն աւուրն՝ այսինքն՝ մէջ գիշերին և առաւօտն, զի ի մէջ գիշերի ծնաւ Քրիստոս և ի մէջ գիշերի յարեաւ ի գերեզմանէն, վասն որոյ տօն առաջի աւուրն մէջ գիշերի սկսանի, և մեծամեծ տօնք յերեկոյ, որպէս ասեմք Զ. (6) շարթի երեկոյն կիրակամուտ: Իսկ միւսն է ըստ ծագումն, յորում զպահճք և զուտիք բաժանեն, այսինքն՝ լուսն և գիշերն»⁴²²:

Հայտնի է, որ լուսն և խավար հասկացությունը մտնում էր պլուրիթագրականների 10 հակադրությունների մեջ. այն միջնադարում արտահայտում էր կյանքի և մահվան հակադրությունը: Գիշերը համարվում էր դժվարությունների, սարսափների շրջան, իսկ օրվա լույսը օգնում էր մարդուն ազատվելու սարսափներից և անհասկանալի ուժերից: Այդ հարցին անդրադարձել են միջնադարյան տարբեր մտածողներ: Այսպես, օրինակ, Եզնիկ Կողբացին գրում է. «երկու իրար հակառակ բաները միմյանց ոչընչացնում են, ինչպես լույսը ոչնչացնում է խավարը»⁴²³:

Այդպես է նաև հույն փիլիսոփա Սեկունդոսի մոտ. «Ի՞նչ է տիւ» հարցին նա պատասխանում է. «Հանդէս, որ լի է աշխատութեամբ, շրջանակ երկուտասանժամեան... յորդորումն աշխարհի... կենդանեաց համբոյրք

419 Նույն տեղում: «Բնական» և «արուեստական» օրվա այդ սահմանումները գտնում ենք նաև Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցում» (էջ 194):

420 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 86ա:

421 Զ. Букерман, Хронология древнего мира, с. 10—11.

422 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 85բ, 86ա:

423 Եզնիկ Կողբացի, Եզո աղանդոց, էջ 59:

415 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 47ա:

416 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 198:

417 Համառոտութիւն աստուածաբանութեան երանելոյն Մեծին Ալպերտի, էջ 94:

418 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 85բ:

առ ի զմիմեանս տեսանելոյ, յուշարար անդադար, բնութեան հայելի, թիւորով յաւիտենական համարին»: Իսկ «Ի՞նչ է Արեգակ» հարցի պատասխանը խոսում է գիշեր-ցերեկ հակադրության մասին՝ «ակն լուսաւոր, նահատակ գիշերոյ»⁴²⁴:

«Հարցմունք և պատասխանիք ի գիրս ծննդոց» աշխատության հեղինակը (XII դ.) ավելի կոնկրետ է հարցը դնում. «Եւ թէ ոչ էր խաւարն արարած, ընդէ՞ր ասէ Դաւիթ թէ արարեր զխաւարն և եղև գիշեր»⁴²⁵: Այս հարցի պատասխանը գտնում ենք Հովհաննիս Բարսեղի մոտ. «ոմանք... դիտարն էութիւն գոլ ասացին, որ երևի սուտ, քանզի խաւարն ոչ է էութիւն, այլ պակասութիւն լուսոյ»⁴²⁶:

Անանիա Երևակացու մոտ շատ որոշակի է տված տվյալ հարցի բացատրութիւնը. «Յայտ է թէ տիւ ի լուսոյ Արեգականէ լինի: Իսկ գիշերն ոչ էթէ յումեքէ, այլ ուր ոչ գոլ լոյս, անդ խաւար է, և գիշեր...»⁴²⁷:

Ուշագրավ է, որ գիշեր-ցերեկ հասկացութիւնները միմյանցից չեն անջատված հայկական ժողովրդական հավատալիքներում: Օրինակ, Գ. Սրվանձտյանի մոտ կարդում ենք. «Կերթայ, բաստ կուգայ փիւր հալետորի մը: Հալետոր նստեր դարի գլուխ, սև թելէ կծիկ մը ձեռք, կը կծկէ, սպիտակ թելէ ջոջ կծիկ մ'էլ դրեր կուշտ: Կերթայ մօտ, կը հարցունէ.— էդ ի՞նչ կծիկներ են, դու ո՞վ ես:—Որդի, կասէ, ես ժուկն ու ժամանակն եմ, սեւ կը կծկեմ՝ գիշեր է, սպիտակ կծկեմ՝ ցերեկ է»⁴²⁸:

Հակոբ Արիմեցիին լավատեղյակ էր իր նախորդների աշխատություններին և գիշեր-ցերեկ հասկացությունները, վերջին հաշիւով, ճիշտ է բացատրում: Նա Արեգակի հատկությունների մասին խոսելիս նշում է. «զտիւ և գիշեր կատարէ, շփ է ժամանակաց... զոմանս խաւարէ և զայլս լուսաւորէ»⁴²⁹:

Գրիգոր Տաթևացու նման Հակոբ Արիմեցիին նույնպես անդրադարձել է այն հարցին, թե ինչու Սուրբ գրքում արարչության սկզբի մասին չի ասվում «առաջին» օր, այլ «եղև օր մի»: Պատասխանը երկու տեղում էլ նույնն է.

424 Հ. Տաշյան, «Ետպ Սեկունդոսի իմաստասիրի առ Անդրիանոս կայսր»—Հանդէս ամսօրեայ, № 8, 1894, էջ 274:

425 Ա. Վարդանյան, Եղիշի վարդապետի հարցմունք և պատասխանիք ի գիրս ծննդոց, Հանդէս ամսօրեայ, 1929, № 2, էջ 71:

426 Յովհաննիս Բարսեղի հակադրութիւն և տոմար, էջ 353:

427 Անանիա Երևակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 53, 54:

428 Գ. Ե. Սրվանձտյան, Համով, հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 151:

429 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 54բ, 55ա:

է. «Ասելի է, նախ՝ զորքանութիւն ժամուցն ցուցանէ, թէ տիւ և գիշեր ի՞ր. (24) ժամ լինի օր մի բնական: Երկրորդ զի միևնույն օրն կատարի դարձմամբ Արեգակն ի կիտէ ի նոյն կէտ արեւելից: Երրորդ, զի յոր կատարին է (7) ատուրն, դառնամք ի յառաջին օրն, որ է միևնույն: Չորրորդ՝ նշանակէ զփութանցութիւն ատուրցս մեր, զի ամեն ժամանակ մեր անցանեն իբրև զմի օր, անզգայաբար, բոստ այնմ հազար ամ յաշս Տեսան իբրև զզօր երկկոյ, որ է անց որպէս զպահ գիշերոյ: Հինգերորդ, այս մին օր է, որ կըրկնութիւնով կատարէ զշաբաթ և զամիս և զտարի և զդար կենցաղոյս»⁴³⁰:

Նկատի ունենալով Աստվածաշնչի այն տողերը, թե «հազար ամ յաշս Տեսան որպէս օր երկկի զի անց որպէս պահ մի գիշերոյ» կամ որ նույնն է՝ «և այս ևս մի լիցի ի ձեռն ծածկեալ, սիրելիք, զի մի օր Տեսան իբրև զհազար ամ է, և հազար ամ իբրև զմի օր»⁴³¹, միջնադարի մեր մտածողները, կարծեք, փորձում են ենթադրել, որ հազար տարին ոչ միայն աստ-ծու աչքին է մեկ օր երևում, այլ օրերն անցնում են այնպես «անզգայաբար», «փութանցիկ», որ այդպես է թվում բոլորին: Այստեղից կարելի է եզրակացնել՝ հնարավոր է որ «արարչագործութիւնը» եղել է ոչ թե վեց օրում, այլ հազարամյակների ընթացքում:

Հակոբ Արիմեցիին բնեւ է նաև երկնքի շարժման արագության փոփոխությունը և, դրա հետ կապված, ժամանակի հիմնական միավորի՝ օրվա տևողության փոփոխության հարցը: Նա գտնում է, որ երկնքի սովորականից ավելի արագ կամ ավելի դանդաղ պտտվելու դեպքում երկրի վրա ավերածություններ կլինեին, կփոփոխվեր ցերեկվա և գիշերվա տևողությունը, որի հետևանքով կխախտվեր կյանքի նորմալ ընթացքը: Այդ պատճառով էլ երկինքն «միշտ ունի զմիակ շարժումն... շփ է ատուրն, զի ի կիտէ ի նոյն կէտ ընթանալով բովանդակէ զօրն... երկինքն եթէ յաւորն Բ (2) կամ Գ (3) անգամ շուրջ առնոյր վասն ահագին սրբնթացութեան ցրուէր լծովս և հոսէր զերկիր. վասն այնորիկ կշռաբար ետ նմա Աստուած զմիակի շարժումն... զի թէ պակաս գնալովն, քան զմի անգամ... հոլովէր ահագին

430 Մատենադարան, ձեռ. № 1114, Թ. 85ա, Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 193:

Ասենք, որ այս հարցին անդրադարձել են Բարսեղ Կեսարացի, Բարթոլոմէոս Մարագացի: Վերջինս բերում է Բարսեղ Կեսարացու պատասխանը. 1. 24 ժամը ցույց է տալիս մեկ օր, 2. Արեգակը մեկ օրում պտտվում, դալիս է նույն կետը և 3. երբ անցնում են շաբաթվա յոթ օրերը, նորից ետ ենք դառնում նույն օրը (տես Մատենադարան, ձեռ. № 1659, Թ. 89բ, 90ա և Սրբոյ Բարսեղի եպիսկոպոսի Կեսարու կապաղովկացոյ ճարտ վասն վեցօրեայ արարչութեանն», Վենետիկ, 1830, էջ 39, 40:

431 Սաղմ. 2Թ4 և Բ Պեռ. Գ3:

ծանրութիւն երկրի և ծովուց ոչ կարէր զկայ առնուլ զմիջոցիս, այլ խոնարհիլ ի ներքին կիսագունդն... ապականէր... յարագ շարժութենէ նորա... ծնանի ջերմութիւն... արդ՝ եթէ այլևս սրբնթացաբար ընթանայր, քան զոր այժմս ընթանայ, կիզէր և շորացուցանէր զաշխարհս, և ոչ կարէին զդէմ ունել ջերմութեան այնր»⁴³²:

Այսպիսով, — եզրակացնում է Հակոբ Արիմեցին, — ամեն ինչ հաշված է այնպէս, որ երկրի վրա կյանքը լինի նորմալ, ներդաշնակ. «զի մի կրկին գալովն կարի փոքրացուցցէ... և մի ըստ Բ. (2) աուր շափ գալովն ի յերկարութենէն ձանձրացուցցէ... այլ այնպէս զմիջինն գնալով ճանապարհ զաշխարհս ի հանդարտութիւն պահեսցէ»⁴³³: Եվ այստեղ նա հիացած բացականչում է. «Եւ մեք փառաւորեմք զհրաշագործն Աստուած, որ անշունչ և անկենդան լուսաւորացն այսքան անմուր շաղօք տայ գտանել զմիմեանս... առանց մոլորելոյ, զի ոչ եթէ տարու ոչ մոլորին զմիմեանս, այլև ոչ ամսով մի, կամ շաբաթով, կամ օրով, կամ ժամով, կամ մասամբ, այլև ոչ րոպէիւ միով»⁴³⁴:

Սա գովք չէ ասածուն, այլ որոնող գիտնականի հիացմունք, որը չէր կարող այլ կերպ արտահայտուիլ XV դ. սկզբներին⁴³⁵:

Ամփոփելով մեր խոսքը Հակոբ Արիմեցու մասին, կարող ենք ասել, որ հայոց տոմարը, Հայոց թվականը գործածութիւնից դուրս գալու մտավախութիւն ունենալով, նա իբրև մեծ հայրենասեր և Տաթևի ավանդույթների արժանի շարունակող, աշխատել է ամեն կերպ պահպանել դրանք: Խմբագրելով տոմարի տեսութիւնն վերաբերող աշխատութիւնը, նշելով

⁴³² Մատենագարան, ձեռ. № 1114, Թ. 82ա, ր:

Երկնքի շարժման անփոփոխ լինելու անհրաժեշտութիւնն հարցին անդրադարձել է նաև Գևորգ Պիտրոսը: Նրա կարծիքով, այդ շարժումը այնպես է կատարվում, որ առաջացած ջերմութիւնից արարածները շայրվեն.

«Ձի մի կործանեսցէ պնդութիւն հոլովիցն

Ի վաղվաղակի վարուցն շտապոյ,

...Ձի թէ ոչ էր բարեկարգ, այլ խոտորէր

Ձաշխարհ ի շեղելն իւրում փաղաղէր»

Ա. Տրոյան, Վեցօրեայք Պիտրոսի իմաստասիրի, Բազմավէպ, 1890, № 6, էջ 221:

⁴³³ Մատենագարան, ձեռ. № 1114, Թ. 83ա:

⁴³⁴ Մատենագարան, ձեռ. № 1114, Թ. 90ր:

⁴³⁵ Ըիշտ նույն հիացմունքն է արտահայտել XX դ. անգլիացի աստղագետ Սմարտ, ասելով՝ «Մեզ աչեցնում է արեգակնային համակարգի մեծութիւնը և նրա զարմանահրաշ կազմակերպվածութիւնը» (տե՛ս Մ. А. Смарт, Солнце, звезды и вселенная, М., Л., 1935, с. 20):

թվականի հետ կապված սխալների մասին, պատրաստելով տոմարագետների նոր սերունդ, նա իր երախտիքն է մատուցել իր ժողովրդին:

Հակոբ Արիմեցու կատարած գործը իդուր չի անցել. դրա վառ ապացույցն են հանդիսանում նրա աշխատութիւնների XV—XIX դդ. ձեռագրերում պահպանված բազմաթիվ ընդօրինակութիւնները:

* * *

Հակոբ Արիմեցու տոմարագիտական աշխատութիւնների ընդօրինակութիւնները գտնվում են հայերեն ձեռագրերի աշխարհի տարբեր հավաքածուներում: Իրանց մեծ մասը պահպանվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Այստեղ են գտնվում Հակոբ Արիմեցու կենդանութիւն օրոք գրված ձեռագրերը:

Այլ մատենադարաններում պահպանվող ձեռագրերից հիմնականներն են. Վիեննայի հավաքածուում՝ № 749 (XVII դ.), № 876 (XVIII դ.), Երուսաղեմի հավաքածուում՝ № 785 (ժամանակն անհայտ), № 935 (XVIII դ.), № 1019 (XVIII դ.), № 1052 (ժամանակն անհայտ), № 1084 (XVII դ.), № 1184 (XVII դ.), № 1196 (ժամանակն անհայտ), № 1223 (XV դ.), № 1248 (XV դ.), № 1256 (XVI դ.), № 1375 (XVIII դ.), № 1388 (ժամանակն անհայտ), № 1468 (XVII դ.), № 1495 (ժամանակն անհայտ), № 1554 (ժամանակն անհայտ), № 1574 (XV դ.), № 2391 (XVII դ.), № 2397 (XVII դ.), № 2462 (XV դ.), № 3084 (XIX դ.):

Բնագիրը կաղմելիս մենք օգտագործել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերը⁴³⁶:

«Ի խնդիրս հասարակաց օգտի» աշխատութիւնը պահպանվել է 5 ձեռագրում, որոնցից մեկը՝ № 8991-ը (XIX դ. գրչութիւն) թերի է: Մենք վերցրել ենք մյուս 4-ը՝

Ա—ձեռ. № 5118 (հիմք-ձեռագիր), 1412 Թ., թերթ 298բ—329բ,

Բ—ձեռ. № 1849, 1440 Թ., թերթ 230բ—250բ,

Ը—ձեռ. № 2017, 1637 Թ., թերթ 18ա—95ա,

Թ—ձեռ. № 74, 1647 Թ., թերթ 325ա—399բ:

Թև «Ի խնդիրս հասարակաց օգտի» և թև «Հարցումն Գէորգ րաբունայետի և ծառայարար կատարումն Յակոբ աշակերտի» աշխատութիւնների

⁴³⁶ Օ. Եգանյան, Ա. Չելքունյան, Փ. Անրաբյան, Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, հ. Բ, 1970:

Համար որպես հիմք-ձեռագիր վերցրել ենք № 5118-ը, քանի որ այն գրվել է Հակոբ Արիմեցու կենդանության օրոք՝ 1412 թ. Ավագ վանքում:

«Հարցումն Գէորգ բարունակատի և ծառայաբար կատարումն Յակոբ աշակերտի» աշխատությունը պահպանվել է հետևյալ ձեռագրերում՝ № 495, 1849, 1978, 2017, 2036, 3521, 5118, 8389:

Մենք վերցրել ենք՝

Ա—ձեռ. 5118 (հիմք-ձեռագիր), 1412 թ., թերթ 293ա—298ա,

Բ—ձեռ. 1849, 1440 թ., թերթ 225ա—229ա,

Ը—ձեռ. 3521, XVII դ., թերթ 76ա—88բ,

Ժ—ձեռ. 1978, XVII դ., թերթ 8ա—33բ,

Լ—ձեռ. 2017, 1637 թ., թերթ 1ա—17բ,

Ն—ձեռ. 5128, XVII դ., թերթ 270բ—277ա:

Հակոբ Արիմեցու «Մեկնութիւն տումարի» աշխատության ընդօրինակությունների թիվը անցնում է 6 տասնյակից: Դրանց համարներն են՝ 739, 1114, 1356, 1762, 1770, 1849, 1919, 1947, 1974, 1975, 1976, 1977, 1978, 2000, 2001, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2019, 2036, 2180, 3015, 3071, 3119, 3190, 3240, 3504, 3587, 3833, 3939, 4283, 4425, 4454, 4617, 5051, 5117, 5373, 5613, 5614, 5834, 5975, 5617, 6089, 6644, 6731, 7040, 7189, 8082, 8165, 8221, 8273, 8443, 8533, 8753, 9114, 9480, 10200:

Դրանցից մենք վերցրել ենք՝

Ա—ձեռ. 1114 (հիմք-ձեռագիր), 1425 թ., թերթ 28ա—98ա,

Բ—ձեռ. 1849, 1440 թ., թերթ 157ա—211ա,

Ը—ձեռ. 2014, 1463 թ., թերթ 45ա—150բ,

Ժ—ձեռ. 5975, XV դ., թերթ 58ա—137բ,

Լ—ձեռ. 3587, 1468 թ., թերթ 32—164,

Ն—ձեռ. 6644, 1532 թ., թերթ 3ա—72ա,

Շ—ձեռ. 5614, 1543 թ., թերթ 271ա—347ա,

Ի—ձեռ. 1770, 1589 թ., թերթ 104բ—149բ,

Լ—ձեռ. 2011, 1684 թ., թերթ 2ա—90բ:

Ինչպես նախորդ երկու աշխատությունների, այնպես էլ «Մեկնութիւն տումարի» հիմք-ձեռագիրը գրված է Հակոբ Արիմեցու կենդանության օրոք:

Քննական բնագիրը կազմելու համար մեր ընտրած ձեռագրերից միայն Բ ձեռագիրն է վերջից թերի, սակայն որոշեցինք այն օգտագործել, քանի որ գրված է Մեծովում 1440 թ., և ստացողն է թուվա Մեծովեցին:

«Յաղագս տումարական մակացութեան» աշխատությունը մեծ մասամբ հանդես է գալիս «Մեկնութիւն տումարի» հետ: Այն պահպանվել է հետևյալ ձեռագրերում՝ № 701, 1114, 1762, 1770, 1974, 1978, 2009, 2010, 2011, 2014, 2015, 2016, 2018, 2019, 2036, 2180, 3015, 3071, 3190, 3240, 3504, 3989, 4298, 5091, 5117, 5613, 5614, 5834, 5975, 6017, 6089, 6644, 6731, 7040, 7189, 8082, 8105, 8716, 9114, 9512, 10200:

Դրանցից վերցրել ենք՝

Ա—ձեռ. 1114 (հիմք-ձեռագիր), 1425 թ., թերթ 98ա—102բ,

Բ—ձեռ. 2014, թերթ 151ա—158ա,

Ը—ձեռ. 5975, XV դ., թերթ 138ա—142ա,

Ժ—ձեռ. 6644, 1532 թ., թերթ 72ա—76ա,

Լ—ձեռ. 5614, 1543 թ., թերթ 347ա—352բ,

Ն—ձեռ. 1770, 1589 թ., թերթ 149բ—152բ,

Շ—ձեռ. 6644, 1532 թ., թերթ 72ա—76ա,

Քննական բնագրում ամենուրեք ընդունելով «օ» գրելաձևը, անտեսել ենք «ա» ձևը: Հայերեն այբուբենի տառերով արտահայտված թվային արժեքների կոդքին կոր փակագծերով տվել ենք նրանց արարական թվանշաններով համարժեքները:

Վերջում մեր պարտքն ենք համարում խորին հարգանքի և երախտագիտության խոսք ասել ակադ. Լ. Ս. Խաչիկյանի հիշատակին, որի անմիջական ղեկավարությամբ և իմաստուն խորհուրդներով կատարվեց սույն ուսումնասիրությունը:

Բ Ն Ա Գ Ր Ե Ր

Օգնեա Հոգիդ Սուրբ Աստուած

Ի ԽՆԴԻՐՍ ՀԱՍԱՐԱԿԱՅ ՕԳՏԻ

Արդ, ես, Յակոբս Ղրիմեցի և գառածեալս մեղօք յերկրի, աշակերտ Գէորգ բաբունապետին մեծի և քաջ փաղերային Եղնկացի,
 5 հոգևոր զաւակաց իմոց մանկանց Սիոնի և նորաբողոքոյ կուսակրոն քահանայից՝ Թարմատարք ոգով, սոսկ անուամբ միայնակեացս Յակոբ, դասիւ սակաւ ինչ ի տումարական արհեստէս ուսուցաք սոցա: Իսկ սոքա ծանուցեալ զգժուարութիւն իրին, աղաչանօք խնդրեցին ի նուաստութենէս մերմէ ըստ բանին ուսուցանելոյն և գրով աւանդել
 10 նոցա: Եւ հարկեալ զմեզ բաբունապետին իմոյ կատարել զխնդիրս նոցա ըստ հրամանի Տեառն, թէ «ամենայնի, որ խնդրէ ի քէն՝ տուր»: Վասն որոյ և մեք առանց յապաղելոյ բուռն հարաք ոչ ըստ բոլոր արհեստին, այլ սակաւ ինչ ի վլխատրագունից մասանց մակացութեանս ի հարկաւորացն և համառոտաբար զբանս իմաստասիրաց և զեկեղեցւոյ սուրբ վարդապետաց աշխատասիրելոյ ի գործս
 15 յայս: Զբանս նոցա, որ տարածեալ էր ի բազումս, մեք զայն վլխատրօլէն ի մի վայր հաւարեցաք, և զի՛ էր ուրեք, որ ծածուկ ունէր զտեսութիւնս միտք բանին, մեք զայն պարզ և յայտնի բանիւ բացայայտեցաք ի զուարճութիւն ուսումնասիրաց տումարական մակացութեանս:
 20

Եւ յոյս զայս ունելով ի մտի, թէ որոց քաղցր թուեսցի մակացութիւնս այս ի յուսանիլն, Աստուած ողորմի ասասցեն յորդոր սրտիւ մեղուցեալ անձինս, որ և ինքեանք ողորմութեան Աստուծոյ արժանասցին ամենայն հաւատացելովք հանդերձ, ամէն:

¹ Ղուկ. 230:

Հարցումն.—Քանի՞ են շրջանք Արեգական և Լուսնի:
 Պատասխանի.—Երկու՝ մեծ և փոքր, և է փոքրն յատուկ իւրաքանչիւր և առանձին, և մեծն՝ հասարակ երկաքանչիւրոցն:
 5 Հարցումն.—Եւ ո՞ր է փոքրն և յատուկն և մեծն և հասարակն:
 Պատասխանի.—Փոքր շրջան Լուսնի և յատուկ առանձին ինքեան ժԹ. (19)ամ է, յորս շրջի Լուսինն ի կիտէ ի նոյն կէտն, այսինքն ի շաւիղ ստեղծմանն, յորս ի սկզբանն յառաջին նուագն ընթացաւ: Եւ Արեգականն՝ ԻԸ. (28)ամ: Եւ մեծ շրջան երկոցունցն և հասարակա-
 10 քար՝ է ՇԼԹ. (532)ամ, յորս ի մի շաւիղ ընթանան Արեգակն և Լուսինն ի միում կենդանակերպի, ի ստեղծման շաւիղն, յորս ընթացան յաւուր շրեքշաբթի ի սկիզբն արարչութեան:
 Հարցումն.—Ի քանի՞ ամ շրջի շրջան Արեգականն:
 Պատասխանի.—Ի ԻԸ. (28) ամն:
 15 Հարցումն.—Եւ զի՞նչ է, որ շրջէ զնա:
 Պատասխանի.—Եօթն աւուրքն, որ նահանջեալ շաբաթանան: Զի Արեգակն կատարէ զտարին 345. (365) օր և ժամս Գ. (3): Իսկ Գ. (3) ժամքն ժողովեալ ի Գ. (4) ամն, լինի օր մի, որ կոչի նահանջ, և ի ԻԸ. (28) ամն շաբաթացեալ նահանջս այս դարձուցանէ զԱրեգակն
 20 ի նոյն շաւիղ ստեղծմանն:
 Հարցումն.—Եւ ի քանի՞ ամ շրջի շրջան Լուսնին:
 Պատասխանի.—Ի ժԹ. (19) ամն:
 Հարցումն.—Եւ զի՞նչ է, որ շրջէ զնա:
 Պատասխանի.—Եօթն ամիսքն, որ նահանջեալ շաբաթանան: Զի
 25 կատարէ Լուսինն զտարին 30Գ. (354) օր, ժԱ. (11) աւուրք պակաս, քան զԱրեգակն: Եւ այն աւուրքն ժողովեալ ի ժԱ. (11) վերադրացն ի Գ. (3) ամս, լինին ամիս մի և աւուրս Գ. (3), որ կոչին «նահանջեալ», և այն ամն լինի ժԳ. (13) Լուսնեայ: Եւ ի ժԹ. (19) ամն լինի է. (7) ամիս՝ պակաս օր մի, և օր մի ժԹ. (19) երեկի ամին ի մասանցն ժողովեալ: Զի Լուսինն յամենայն ամի ժԹ. (19) մասն աւելի ընթանայ, քան զ30Գ. (354) օրն, և մասունքս այս ժԹ. (19) ամին առնէ օր մի և լնու զէ. (7) ամիսն: Եւ օրս այս դարձուցանէ զԼուսինն ի շաւիղ ստեղծմանն:
 Հարցումն.—Զիա՞րդ կատարի աւագ շրջանն Արեգականն և Լուսնի ի կիտէ ի կէտ:

Պատասխանի.—Մանիր, ով ուսումնասէր, զի ի ստեղծմանն
 յառաջնումն աւուր, չորեքշաբթոջ ի շաւիղն, յոր ընթացաւ Արեգակն
 յառատուուն, ի նոյն շաւիղն ընթացաւ Լուսինն յերկկոյին: Եւ զա-
 տեցան ի միմեանց Արեգակն և Լուսինն ի շաւղէն յայն զամս բա-
 5 զումս: Եւ ի ԺԹ. (19) ամն կատարեալ՝ Լուսինն զՖ. (7) ամիսն ի ԺԱ.
 (11) աւուրց վերադրացն ժողովեալ և յաւելի մասանցն, զոր վերա-
 գոյն ասացաք և յառաջիկայդ ասելոց եմք վասն որպիսութեան մա-
 սանցն, և դարձաւ յառաջին շաւիղ ստեղծմանն, յորս ընթացաւ զկնի
 Արեգականն: Իսկ Արեգակն այլևս յամեաց, մինչև եղև ԻԸ. (28) ամ,
 10 և աստ շաբաթացեալ զնահանջսն, ապա դարձաւ և սա ի շաւիղ
 ստեղծմանն, յորս ընթացաւ յաւուր չորեքշաբթու յարարչութեան: Եւ
 այսպէս սորա երթ և եկ առնելով ի շաւիղս յայս և ոչ գտանեն զմի-
 մեանս, զի ի միասին ընթացին ի շաւիղս յայս, որպէս ի ստեղծ-
 մանն: Զի երբ Լուսինն գայ, և Արեգակն՝ ոչ, և երբ Արեգակն, և
 15 Լուսինն՝ ոչ, և պատահի, զի երկու անգամ Լուսինն գայ, և ապա մի
 անգամ Արեգակն: Մինչ զի ԻԸ. (28) անգամ Լուսինն գայ և ԺԹ. (19)
 անգամ Արեգակն, ի շաւիղս յայս, և ապա գտանեն զմիմեանս Արե-
 գակն և Լուսինն ի նոյն շաւիղն, յորս ընթացան յաւուր չորեքշաբթու
 ի ստեղծման աւուրն: Եւ այս լինի յամս ՇԼԲ. (532), զի ԻԸ. (28) ԺԹ.
 20 (19) և ԺԹ. (19) ԻԸ. (28) առնէ ՇԼԲ. (532) ամ: Եւ այս է կատարումն
 աւագ շրջանին Արեգականն և Լուսինն ի կիտէ ի նոյն կէտ ստեղծ-
 մանն, որ դարձուցանէ զԱրեգակն և զԼուսինն ի սկիզբն հասարակ
 և մեծ շրջանին:

ՅԱՂԱԳՍ ԹՈՒԱԿԱՆՈՒՆ

Գիտելի է, զի ըստ չորից վարդապետական յեղանակաց բացա-
 կատարի վարդապետութիւն տումարական արհեստիս, այսինքն բա-
 ժանականան, սահմանականան, ապացուցականան և վերլուծա-
 կանան: Զի որպէս սեռականագոյն սեռն ի ձեռն բաժանականին տա-
 25 րորոշի ի տեսակս, և տեսակն ի ձեռն սահմանին ստորագրեալ զա-
 նազանի յայլումն տեսակաց և ապացուցականան հաւատարմանայ
 30 և վերլուծականան քակտի յայնս, յորոց և գոյացեալն գոյ, ըստ այսմ
 օրինակի և գտումարն որպէս զսեռականագոյն սեռս բաժանեմք ի
 զանազան մասունս՝ իբրև զտեսակ սահմանաւ ստորագրեմք: Եւ թէ

որ ասիցէ, զի՞նչ է սահման սոցա, զիտիցէ, զի ըստ իւրաքանչիւր
 զանազան բերումն արհեստին սահման և ենթադրութիւն է նմին,
 որով տարանջատի յայլոց մասանցն և ապա ապացուցիւ հաւատար-
 մացուցանեմք զգծուարութիւն սոցա և վերլուծականան քակտեմք
 5 յայնս, յորոց և բաղկացեալն գոյ: Քանզի առեալ զվերադիրն, քակ-
 տեմք զնա յաւուրս և զաւուրս ի ժամս և զժամս ի մասունս և զմա-
 սունսն վերլուծանեմք յԱրեգակն և ի Լուսինն, յորոց և բաղկանան
 սորա: Նոյնպէս և զայլ մասունսն իմացիս:

Արդ, այժմ առեալ ի ձեռն զթուական մասն, զստորաբաժանեալս
 10 ի տումարէ իբրև զտեսակ, և սահմանաւ բացայայտեսցուք զսա: Զի
 յառնելն առաջարկութիւն «զինչ է թուական», ի լուծումն եզրակա-
 ցութիւն խնդրէ զսահման, զի ըստ քանոն իմաստասիրացն յամե-
 նայն ուրեք զինչ է՝ն սահմանաւ և կամ ենթադրութեամբ ճանաչի:

Այժմ յաղագս թուականիս վեց իրս խնդրելի է. նախ՝ թէ զինչ է
 15 թուական, երկրորդ՝ թէ զինչ է գործ սորա, երրորդ՝ թէ վասն զինչ
 պատճառի եղին զթուական, չորրորդ՝ թէ յորում ժամանակի, հինգե-
 րորդ՝ թէ քանի ամբ էին յկղամայ հետէ, այլև ի ծննդենէն Քրիստոսի,
 վեցերորդ՝ արասցուք ապա և զթուականն որպէս Պատճէնն հրա-
 մայէ:

Վասն առաջնոյն ասելի է ըստ առաջնոցն սահմանօրէն «թուա-
 կան է շարժումն յաւէտ յառաջախաղաց և հիմն զանազան մասանց
 արհեստից»: Եւ այս չիրաւի, զի երկինքն և լուսաւորքն, ուստի ի սո-
 25 ցանէ պատճառի ժամանակն, միշտ յառաջ խաղալով ի կիտէ արևե-
 լից առ կետն արևմտից, բացակատարեն զժամն և զժամանակն և
 զդարքն, որ պարունակեն զժամանակն: Վասն այսր պատճառի և

թուականս յաւէտ յառաջ խաղացմամբ չափէ զժամանակն և թուէ
 զքանիօնութիւն դարուց կենցաղոյս: Իսկ զանազան մասունք՝ զեօթ-
 ներեակն, զնահանջն, զվերադիրն, զԺԹ. (19) երեակն և զայլսն իմա
 ըստ սոսա, զի սորօք այլքն եղանին: Զի տումարն բոլորի անուն է,
 30 որպէս վերագոյն ասացաք, և սորա մասունք ի ներքոյ բոլորին,
 նաև սեռական անուն է և սորա տեսակք ի ներքոյ սեռի և սորա
 ամենեքեան թուականան լինին, վասն որոյ ասի «հիմն զանազան
 մասանց արհեստից»: Եւ վասն յիշելոյ գտումարն, եթէ որ ասիցէ
 «զինչ է տումար» նա առանձնակի ունի զխնդիրն և ոչ ըստ տեղույս
 յարմարի:

Վասն երկրորդին ճառելի է, թէ դորձ թուականիս բազում է-
 նախ յայտնէ զորքանութիւն ծննդագործութեան մարդկան՝ ըստ այնմ՝
 «Աղամ լեալ ամս Մլ. (230) ծնանի զՍեթ»¹: Երկրորդ՝ յայտնէ զչափ
 կենաց, որպէս ասէ «Աղամ լեալ Ջլ. (930) ամաց, մեռանի»²: Երրորդ՝
 5 զգարուց, ըստ այնմ «Աղամայ ի փոխիւն Ենովբայ են ամբ ՌնՁէ.
 (1487) և մինչ ի ջրհեղեղն ՍՄԽԲ. (2242)»: Զորրորդ՝ ցուցանէ և
 զօլոմպիաթն, որ են նահանջքն, որպէս ասէ Եւսեբի «ի ՃԺԱ. (111)
 օլոմպիաթին թագաւորէ Աղեքսանդր Մակեդոնացի»³: Հինգերորդ՝
 զչափ առաջնորդական և թագաւորական իշխանութեանց, ըստ այնմ՝
 10 «Յեսու առաջնորդեաց ամս Իէ. (127) և Գորոնիէլ՝ ամս. Խ. (40): Եւ
 թագաւորեաց Սաուղ ամս ԽՁ. (46) և Գաւիթ և Սողոմոն զամս Խ.
 (40)»³: Վեցերորդ՝ զմեծամեծ շինուածոց և զայլոց գործոց, ըստ
 այնմ «ՂԽՁ. (46) ամ շինեցաւ տաճարս այս և Նէեմի կատարեաց
 զպարիսպն Երուսաղէմի յԺԲ. (12) ամս»⁴: Եօթներորդ՝ յայտնէ զա-
 15 ռումն քաղաքաց և զմեծամեծ պատերազմաց, որպէս ասեն թէ
 «առաւ Իլոն քաղաք յաւուրս դատաւորացն Ելոնայ յերրորդ ամի և
 Երուսաղէմ ի Սեղեկիայ ժԲ. (12) ամին»:

Վասն երրորդին գիտելի է, զի վասն այս պատճառի եղին զթուա-
 կան Հայոց, զի ի լրման Մ. (200) եկին Անդրէասայ լրումն Ջատկին
 20 մարտի ԻՆ. (25) էր և ի սկզբանն՝ յապրիլի Գ. (4): Եւ վասն զի ոչ
 ի սկիզբն կարացին գնալ զի յետ ԻՆ. (25)ին ժԳ. (13) էր ապրիլի,
 և Թ. (9) լրմունք կայր ի մեջն, և այնր պատճառաւ սկսան շփոթել
 տօնք և ամենայն արուեստ իրողութեան տումարաց⁵: Ապա հան-
 25 ճարեղք ժամանակին ի միասին եկեալ կարգեցին թուական Հայոց,
 զի ուղղեցեն զՋատկն Տեառն այլոքն հանդերձ, բայց ոչ կարացին
 ի ճշմարտութեան կալ անսխալ զամս ինն: Իսկ ի տասներորդ թուա-
 կանին էաս անուն ոմն իմաստասէր Աղեքսանդրացի ուշիմ և հան-
 ճարեղ մտօք ժողովեաց առ ինքն զարս կորովամիտս և նրբահա-
 յեացս, և կարգեցին զանտարակուսելի օրինակն, որ կոչի Շ. (500)
 30 եակ: Եւ ապա ուղղեցան ամենայն կանոնեալքն, և այս եղև պատճառ
 եղելոյ թուականիս, շփոթումն տօնից և Ջատկաց:

1 Մենդ. Ե3,4:
 2 Մենդ. Ե5:
 3 Բ Մնաց. Թ30:
 4 Բ Մակ. Ա18:
 5) Տե՛ս ծանոթագրութիւնները:

Զորրորդ՝ խնդրի, թէ յորում ժամանակի եղին: Զթուականն եղին
 ի ժամանակս երկրորդ Յուստինիանոսի կայսեր, որ զԱյա Սոֆիայն
 շինեաց ի Կոստանդնուպօլիս, ի ԻԹ. (29) ամին սորա և պարսից
 արքային Խոսրովու ի ԺԹ. (19) և հայոց սպարապետին Մեծէժ Գնու-
 5 նեցտյ ի Ժ. (10) ամին և տէր Մովսէս կաթողիկոսին, որ տասներ-
 կուերորդ էր ի Լուսաւորչէն, ի Դ. (4) ամին սորա, զոր ոմանք յայ-
 ւոց ասեն, բայց այս է ճիշտն:

Հինգերորդ՝ զի յԱղամայ հետէ ՌՁԼՁ. (5976) ամ էր և ի ծննդե-
 նէն Քրիստոսի ՇՄԳ. (553):

Իսկ վեցերորդ՝ արա զթուականն որպէս և Պատճէնն խրատէ:
 10 Հարցումն.— Ընդ էր՝ է, զի յորժամ Հոռոմ թուական առնեմք և
 ըստ խրատուն կալնումք զյարակայն 3Դ. (304) և զՀայ թուական ի
 վերայ բերեմք և առնեմք Մեծ թուական Հոռոմին և յորժամ կամիմք
 եօթներեակ և վերադիր առնել, եթէ թիւ մի ոչ պակասեցուցանեմք, ոչ
 15 բերէ զարուեստն: Այսպէս և զՀայոց և զնահանջսն Ա. (1) ամաւ
 յառաջացուցանէ, յորժամ չորեքպատկեմք զթուականն:

Պատասխանի.— Մանիր, որդի, զի այս ի պատճառէ հասարակա-
 ծին եղև: Զի հասարակածն յորժամ ի նաւասարդ եմուտ, զանխա-
 րար թիւ աւելի ի ներս եմոյձ, և ոչ զիտացեալ բազմաց շփոթեաց
 20 զամենայն կանոնեալսն առաջնոց հարցն: Եւ այնմհետէ ոչ բերէ ուղիղ
 թուականս, զեօթներեակս, զվերադիրս և զլրմունս միով թուով յա-
 ռաջացեալ գտանի ընդ հայումն, այսպէս և զնահանջն ոչ ցուցանէ
 յորում ամի և լինի: Զի յորժամ չորեքպատկես զթուականն, տարով
 մի յառաջացուցանէ զնահանջն վասն յաւելեալ թուոյն, և չէ ամն
 25 նահանջի:

Հարցումն.— Աղաչեմ բացայայտել զյաւելեալ թիւդ, թե որպէս
 հասարակածն զանխալարար ի ներս եմոյձ:

Պատասխանի.— Դժուարին և նուրբ է զիտութիւն սորա, զի ան-
 խուլ է և ծածուկ, բայց զու այսպէս իմա, զի ի զնել թուականին հա-
 սարակածն զարնանային յահկի ամսոյ ժԳ. (13)ն էր: Եւ փոխելով
 30 ըստ չորից չորից ամաց հասարակածն ըստ հայ ամսոցդ կատարեաց
 յահկի ամսոյն ի հետ գտարին և անցեալ եմուտ ի նաւասարդի ամիս
 ի միւս տարին և արար թիւ մի յաւելուած: Քանզի ունիմք զնահանջ
 թուականին և չորեքպատկեմք, և լինի թուական, և յաւելուած միոյ
 35 թուոյն շարժէ զամենայն կանոնեալսն: Զի հասարակածն յահկի ժԳ.
 (13)էն հասեալ մինչև յաւելեացի Ե. (5)ն զամս նՄԲ. (452), յորմէ

հետէ եգաւ թուականն, ուղղապէս և միաբան գայր այլոց ազգաց կանոնեալն կարգ: Իսկ յորմէ հետէ հասարակածն եմուտ ի նաւասարդի ամիս, թիւր իմն և անմիաբան վարի ընդ այլսն, եթէ ոչ ուղղեսցի:

5 Եւ թէ որպէս եղև յաւելուածս այսմ թուոյ, ուսիր. ի զնել թուականին առաջի ամ էր նահանջի, զի լրումն յապրիլի ժԳ. (13)ն էր, որ առաջին ամ էր, և տես ի Ծ. (500)եկան, որ զլուխ բոլորին յապրիլի ժԳ. (13)ն է, զի առաջին ամ է: Եւ նահանջն յահկի ժԳ. (13)էն մինչև յաւելեացի Ե. (5)ն ՆԾԲ. (452) ամ ի զոյգ թիւն գայր՝ ի Գ. (4)ն, ի Ը. (8)ն, ի ԺԲ. (12)ն, ի ԺԶ. (16)ն, ի Ի. (20)ն և այլն ամենայն, ըստ այնմ կարգի: Եւ յորժամ հասարակածն եմուտ ի նաւասարգ, յայնմ հետէ ի ֆարտ թիւն գայ մինչև յօրս և առ յապայ, և ըստ այնմ՝ ֆարտ թուոյն յաւելեալ թիւն:

15 Հարցումն.— Եւ զի՞նչ է պատճառն, զի մինչ յաւելեաց Ե. (5)ն ի զոյգ թիւն գայր նահանջն և ի նաւասարգէ ի հետ ի ֆարտն:

Պատասխանի.— Այս է պատճառն, զի յառաջ հասարակածն գայր վասն զարնանամտին և ապա տարեմուտն, և այժմ յառաջ տարեմուտն գայ և ապա հասարակածն, վասն զի հասարակածն կոխեանց զտարեմուտն և էանց յայն կոյս:

20 Հարցումն.— Որպէս կոխեաց հասարակածն զտարեմուտն:

Պատասխանի.— Տես աստ և ուսիր ուշիմ մտօք, զի նորք է տեսութիւն սորա: Գիտեա, զի տարին 345. (365) օր է և նահանջի ամն 342. (366), որ է օր մի աւելի: Եւ այս աւելի օրս թիւ մի յառաջ խաղացուցանէ զհասարակածն ի քանիս ամսոյն: Արդ, յահկի ժԳ.

25 (13)էն յաւելեացի Ե. (5)ն հասարակածն ի ՆԾԲ. (452) ամն: Եւ եկեալ նահանջն ըստ շորից շորից ամաց ի զոյգ թիւն, և եղև ՆԾԳ. (453) ամն առաջի ամ նոր նահանջի: Եւ սկսեալ ի նաւասարգոյ մինչև յաւելեացի Ե. (5)ն, և կատարեաց զտարին 345. (365) օր, մինչ ի Գ. (4) ամն նահանջի, որ էր ՆԾԶ. (456) ամ: Եւ ավելի օրն

30 նահանջի այլ ոչ գտեալ տեղի ի նահանջի ամս, որ էր ՆԾԶ. (456)՝ ի հին տարիս, որպէս յանցեալ ամսն: Հին տարի վասն այն ասեմ, զի առաջին ամ նահանջին նոր ասի և շորօրդս հին, զի զ345. (365) օրն տարույն ի Գ. (4) ամն յաւելեացի Ե. (5)ն լմնեաց ի հին տարին և ի հարկէ աւելի աւուրս նահանջի եմուտ հասարակածն ի

35 նոր տարին՝ ի նաւասարգն: Եւ վասն այս անկաւ նահանջն ի ֆարտ թիւն, զի այս որ նահանջս պիտէր որ գայր, ՆԾԶ. (456)ն՝ ի զոյգ

թիւն, որպէս որ գայր հանապազ մինչև ցայս, և վասն ոչ գտանելոյ տեղի աւելի օրս նահանջի ի հին տարին, եմուտ ի նոր տարին, և խաղաց հասարակածն և նահանջն՝ ՆԾԷ. (457)ն ի ֆարտ թիւն: Եւ այս ֆարտ թիւս եղև աւելի թիւ, որ շարժեաց զամենայն կանոնեալսն և եհան ի միաբանութենէ ազգացը և զեօթներեակս, զվերադիրս, զլըրմունս, զհահանջս և զայլսն ամենայն:

Հարցումն.— Մեր զաւելի թիւս գայս ընդունիմք՝ ի համարս թուականին Հոռոմոց թէ՞ ոչ:

10 Պատասխանի.— Գիտեա, զի յորժամ զյարակայն կալնուս 3Գ. (304) և զՀայ թուականն ի վերայ բերես և առնես Հոռոմ թուական, ոչ կարես եօթներեակ և վերադիր առնել Հոռոմի, եթէ ոչ թիւ մի պակաս կալցես զթուականն: Եւ գայն թիւն, որ պակաս բռնես, անտարակոյս զիտացիր, զի այն թիւն չէ և չէ ի թուականէն Հոռոմոց, այլ

15 այս աւելի թիւս է, որ ի հասարակածէն եմուտ զանխլաբար ի թուականս Հայոց: Եւ դու յորժամ զՀայ թուականն ի վերայ յարակային բերես, այսինքն ի վերայ 3Գ. (304)ին, զաւելի թիւն թուականս մեր հետ իւր ունի, և զՀոռոմ թուականն բերէ թիւ մի աւելի, վասն այն

20 ոչ բերէ զարուեստն: Եւ թէ կամիս, որ Հոռոմ թուականն ուղիղ գայ և ի լման, և զարուեստն գեղեցիկ բերէ, դու որպէս զՍարկաւազ վարդապետն արա, զի նա զաւելի թիւս ի հետ շրջանին գնաց: Զի շրջանն, որ ԵԼԲ. (532) ամ է, ԵԼԳ. (533) գնայ և հանէ զաւելի թիւն ի բաց.

25 և մնացեալն սկիզբն լինի նոր շրջանի, և գայ ամենայն ինչ ուղիղ, և նահանջն դարձեալ անկանի ի զոյգ թիւն: Եւ տես ի Ծ. (500)եակն, որ Փոքր թուականան վարի, որ ի զլուխ բոլորին ապրիլի ժԳ. (13)ն է: Այսպէս և դու ուղղեա կրկին կերպիւ՝ կամ զաւելի թիւն ի բաց

30 ձգէ ի մեր թուականէս, և գայ ուղիղ Հոռոմ թուականն առանց յաւելուածոյ, և կամ զյարակայն թիւ մի պակաս կալ, այսինքն 3Գ. (303), և դարձեալ գայ ուղիղ: Բայց այս թէպէտ ուղիղ գայ, բայց կրկին սխալումն առնէ. Ա. (1)՝ զի զյարակայն որ 3Գ. (304) ամ էր Հոռոմոց, յորժամ զՀայ թուականն եղին, թիւ մի պակաս առնեմք, յորժամ այսպէս ուղղեմք, զի 3Գ. (303) կայնումք, և Բ. (2)՝ զի ծածկէ

զյաւելեալ թիւս, որ ի մեր հասարակածէն եղև: Բայց դու զ3Գ. (304)ն ամբողջ պահէ, որպէս էրն և զաւելի թիւն ի մեր թուականէն հան և բեր ի վերայ 3Գ. (304)ին, և գայ ուղիղ: Իսկ թէ զաւելին ոչ հանես, իբր թէ զժուար թուի բեզ, զի թուականս մեր աւելի թուովս

35 բերի, դու ի Հոռոմ թուականէն թիւ մի պակաս կալ, և զարուեստն

ուղիղ բեր: Եւ այն ոչ առնէ զՀոռոմ թուականն թիւ մի պակաս, զի այն մեր աւելի թիւն է, որ կու պակասեցնես, որ ի հասարակածէն եղև և ոչ է ի Հոռոմ թուականէն զի յայնժամ գայ Հոռոմ թուականն ուղիղ և լման, յորժամ զմեր աւելի թիւն ի բաց հանես: Իսկ ըստ 5 հայումն այսպէս ճանաչէ զթիւրն և զուղիղն. զի յորժամ աւելի թուովս եօթներեակ և վերադիր առնես և կամ այլ ինչ, և բերէ ուղիղ, զիտացիր, զի այն ուղղեալ է, և թէ իցէ վերադիրն և կամ այլ ինչ ըստ այլում եղանակի և արուեստի և առանց թիւ մի պակաս կալնելոյ ոչ բերիցէ զարուեստն, այն են ի սկզբանէ կանոնեալքն առաջին հարցն, որ զամս ՆՍԹ. (452) ուղիղ բերէր: Եւ յորժամ աւելի թիւս ի ներս անկաւ, այլ ոչ կարէ բերել, եթէ ոչ թիւ մի պակաս կալցես: Գարձեալ ծանիր, զի զաւելի թիւս դժուար է հասարակ մտաց իմանալ, զի զանխլարար հմուտ: Վասն այն զանխուլ և ծածուկ է հասարակ տումարագիտաց, վասն այն յերկարեցի: Բայց թէ կամիս 15 յայտնի և դիրար ճանաչել զաւելի թիւս, դու այսպէս իմա, զի զթուականս մեր ի գլուխ Շ. (500) եակ շրջանին եդաւ, որ ապրիլի ԺԳ. (13) է և մեկ անգամ զանձամբ եկեալ է շրջանս ՇԼԹ. (532) ամ և դարձեալ նոր սկսեալ: Եւ այժմ նոր շրջանիս ՅԻԳ. (324) ամ է, որ առնէ ՊՄԶ. (856), և է ամս նահանջ, և թուականս մեր է ՊՄԷ. (857): Ահա տես 20 զյայտնի զաւելի թիւս, որ եղև ի հասարակածէն, զի յորժամ թուական առնես և շորեպատկես, գտանես զնահանջի ամս նահանջի առաջի ամ, որ է ամենեկին թիւր և սխալ և սուտ: Այսքան բաւականացի վասն թուականիս:

Եւ այժմ զվեցերորդն՝ արա թուական ըստ խրատու Պատճէնին, 25 որպէս և հրամայէ:

ՅԱՂԱԳՍ ԵՕԹՆԵՐԵԿԻՆՅ)

Վասն եօթներեկին երիս իրս խնդրելի է. նախ թէ զինչ է եօթներեակն, երկրորդ՝ թէ յորմէ պատճառի, երրորդ՝ թէ վասն էր Գ. (3) ի վերայ բերեմք և կամ Գ. (4) ի բաց զնամք:

30 Վասն առաջնոյն գիտելի է, զի եօթներեակն աւուրք շաբաթուն է, որ սկսաւ յարարչութենէն, այսինքն ի միաշաբաթ աւուրն և գայ մինչև ցայսօր և ոչ այլ յաւելու կարէ և կամ նուազիլ, զի ի միաշաբաթէն սկսեալ եզերի ի շաբաթն և դարձեալ յառաջին սկիզբն դառնալ ի միաշաբաթն:

Երկրորդ՝ ասելի է, թէ պատճառի սա յերեք ժամուցն, որ աւելու ի մասանց Արեգականն, յիւրաքանչիւր եղանակս, և լինի օր մի, և օրն այն եօթներեակ լինի և յէ. (7) ամն շաբաթանայ ըստ հայումն և յառաջինն դառնայ: Իսկ ըստ ազգացոյ ի Զ. (6) ամն շաբաթացեալ 5 դառնայ, զի ի նահանջի ամին կրկին աճէ եօթներեակն նոցա³):

Երրորդ՝ գիտելի է, զի վասն այն Գ. (3) ի վերայ բերեմք, զի ի շորրորդումն աւուր ստեղծաւ Արեգակն, և յորժամ Գ. (3) ի վերայ շորիցն բերեմք, լինի է. (7) և եզերի շաբաթն, և լինի սկիզբն գալ շաբաթուն միաշաբաթն: Եւ Գ. (4) ի բաց բառնամք, այսինքն զեղեալ 10 աւուրն, զի լինիցի դարձեալ մեզ սկիզբն շաբաթու միաշաբաթն:

Հարուցմն.— Վասն էր⁴ զստեղծման շաբաթն ի կիր առնումք և զթուականն է. (7), է. (7) զնամք:

Պատասխանի.— Զի օրն և շաբաթն ի ստեղծմանէն ունին զէութիւն և զանունն, և ի կիր առնելով զայս, Գ. (3) ի վերայ բերելով և 15 կամ Գ. (4) ի բաց բառնալով հասուցանէ զմեզ ի թուականին պատկերն, և է. (7), է. (7) ի բաց զնալով զթուականն հասուցանէ զաւուրցըն պատկերն: Եւ արուեստս այս հաստատեցաւ յաւել աւուրցն արարչութեան, զի կալեալ զէ. (7) թիւն բերեմք ի վերայ կազմութեան աւուրն մարդոյ, առնէ Զ. (6) և ցուցանէ զօրն ուրբաթ: Եւ ըստ 20 այսմ արհեստի ի ստեղծմանէն մինչև ի կատարած աշխարհի ոչ սխալեալ կորնչի օր մի:

ՅԱՂԱԳՍ ՆԱՀԱՆՋԻ

Վասն նահանջիս երիս իրս խնդրելի է. նախ թէ զինչ է նահանջ, երկրորդ՝ թէ ուստի գոյանայ, երրորդ՝ թէ զինչ է ներգործութիւն 25 սորա:

Վասն առաջնոյն ճառելի է, զի նահանջն յաւելուած թուոյ անուն է, թէ մասանց լիցի յաւելուած և թէ աւուրց և թէ ամսոց և թէ տարեաց: Զի որ ի մասանց յաւելուածոյ լինի օր, ասեմք այնմ «նահանջ», և երբ օր նահանջիցն շաբաթանայ, կոչի «նահանջից նահանջ Արեգականն», զի դառնայ Արեգակն ի շաւիղ շրջանին իրոյ, յորում ստեղծաւ: Իսկ յորժամ ժողովի է. (7) ամիս՝ պակաս օր մի, ի մետասան աւուրց վերադրացն և կատարի յԺԹ. (19) մասանց 30 կուսնի միոյ աւուրն, ասի «նահանջից նահանջ կուսնի», զի և կու-

սինն դառնայ ի շաւիղ շրջանի իւրոյ ստեղծմանն: Եւ երբ տարիքն ժողովեալ լինի ՇԼԲ. (532) ամ, յայնժամ ասի «նահանջից նահանջ Արեգական և Լուսնի» զի ի միասին կատարեալ զաւագ շրջանն և դարձեալ դառնան ի միասին ի շաւիղ շրջանին, որպէս ի սկզբան լինելութեան իւրեանց, որ երկոքինն ընթացան ի շաւիղն յայն:

Իսկ վասն երկրորդին գիտելի է, զի գոյանայ օր նահանջիս յարեգականային մասանցն և այս ըստ կրկին յեղանակի. առաջին՝ զի Արեգական ընթանայ զշափ աւուրն ԻԳ. (24) ժամ և Ժ. (10) մասն ու կես այլ աւելի և երկրորդ՝ զշափ աւուրն ըստ ԺԲ. (12) ժամու, յորժամ ընթանայցէ Ե. (5) մասն և շորրեակ մասին մի ընթանայ այլ աւելի: Եւ շորրեակ մասին մի բաժին է ի մասնէ, յորժամ ի Գ. (4) բաժինս բաժանես զմի մասն: Եւ բաղկանայ օր նահանջիս յարեգականային կես մասանցն և ի շորրեակ մասին միոյն: Արդ՝ յարեգականային կես մասանցն բաղկանայ օր նահանջիս. այսպէս՝ յաւելու յօրն կես մասն և յամիսն՝ ԺԵ. (15) և ի տարին՝ ՃԶ. (190) մասն և ի Գ. (4) տարին՝ ԶԻ. (720) մասն: Արա զԼ. (30) մասն ժամ մի, լինի ԻԳ. (24) ժամ և կատարի օր մի, և օրս այս ասի նահանջ, որ է յաւելուած արեգականային մասանց: Իսկ ըստ շորրեակ մասին միոյ գոյանայ նահանջի օրս այսպէս՝ ի Գ. (4) օրն յաւելու մասն մի և յամիսն է. (7) մասն ու կես և ի Գ. (4) ամիսն Լ. (30) մասն և ի տարին Դ. (90) մասն և ի Գ. (4) տարին 34. (360) մասն: Լ. (30) մասն արա ժամ մի, լինի ԺԲ. (12) ժամ և առնէ օր մի ըստ ԺԲ. (12) ժամու: Ապա յայտնի եղև օր նահանջիս, որ բացակատարեցաւ յարեգականային մասանցս, որպէս ցուցաք:

Իսկ վասն երրորդին ասելի է, թէ զինչ է ներդրութիւն նահանջիս. նախ զի յաւելու օր մի ի տարիս և որոշումն զորժէ ժամանակաց, երկրորդ՝ զի կրկին աճեցուցանէ զեօթնեբեակն այլոց ազգաց, երրորդ՝ զի պակասեցուցանէ թիւ մի ի վերադիրս հայոց⁵): Բայց ոչ զովին հայք յիմաստասիրաց, զի նահանջն յարեգականային մասանցն բաղկանայ, որպէս ցուցաք: Պարտ էր յեօթնեբեակս յաւելել, զի և եօթնեբեակն յարեգականային մասանցն է և ոչ ի վերադրացն պակասեցուցանել և զթերութիւն լցեալ Լուսնին ԺԱ. (11) վերադրան զօր նահանջիս ի վերայ յաւելել և յանշարժութենէ շարժել զբովանդակ կանոնեալսն տումարական արհեստիս և աշխատանս մեծ հասուցանել նորամուտ ուսումնականաց:

Երիս իրս խնդրելի է աստ. նախ թէ զինչ է ԺԹ. (19) երեակն, երկրորդ՝ թէ ուստի բացակատարի, երրորդ՝ թէ զինչ է ներդրութիւն սորա:

Վասն առաջնոյն ասելի է, թէ ԺԹ. (19) երեակս կրկին իրս յայտնէ. նախ զքանիօնութիւն շրջանի Լուսնին, զի սկսեալ յառաջին ամէն զընթացս շաւղի իւրոյ շրջանին և կատարէ զճանապարհս ընթացիցն որպէս ԺԹ. (19) ամին և վերստին շրջեալ դառնայ յառաջին սկիզբն, երկրորդ՝ զօրն յաւելեալ յԺԹ. (19) մասանց ի տարիս Լուսնին կոչնէ ԺԹ. (19) երեակ, զի սա է, որ ձգէ զԼուսնինն ի տեղի իւր:

Վասն երկրորդին գիտելի է, զի օրս այս բացակատարի ի պակաս ընթացից Լուսնին ոչ ըստ բաղկացութեան, այլ ըստ ընթացման, զի որպէս ասացաք, թէ Արեգական ընթանայ յօրն ԻԳ. (24) ժամ և Ժ. (10) մասն ու կես, այսպէս և Լուսնինն ընթանայ յօրն ԻԳ. (23) ժամ և Գ. (3) մասն՝ Բ. (2) մասն պակաս ի ԻԳ. (24) ժամէն: Եւ այս Բ. (2) մասն պակասեալ աւուր աւուր ի տարին Զ. (6) օր առնէ, զոր յառաջիկայդ ասելոց եմք ի բացայայտութիւն վերադրին: Եւ զարձեալ ընթանայ Լուսնինն այլևս մանր մասնկուրք պակաս յամենայն աւուր բաց և որիչ յերկու մասանցս այս: Եւ այս է պակասն Լ. (30) մասին միոյ և Կ. (60) մասին միոյ և 34. (360) մասին միոյ: Եւ Լ. (30) մասին միոյ այն է, յորժամ զմի մասն յԼ. (30) բաժինս բաժանես, նա մի բաժինն է, նոյնպէս և զԿ. (60) ին իմա և զ34. (360) ին: Եւ այս Լ. (30) մասին միոյս պակասեալ աւուր աւուր ի Լուսնէն քան զաւուր շափն, առնէ յամիսն մասն մի պակաս և ի տարին ԺԲ. (12) մասն պակաս: Իսկ Կ. (60) մասին միոյ պակասեալ աւուր աւուր առնէ յԲ. (2) ամիսն մասն մի պակաս և ի տարին Զ. (6) մասն պակաս, որ լինի ի վերայ ԺԲ. (12) ին ի տարին ԺԼ. (18) մասն պակաս: Իսկ 34. (360) մասին միոյ պակասեալ աւուր աւուր առնէ ի տարին մասն մի պակաս, որ լինի միանգամայն ի մանր մասնկուրնս մասանց ի տարին ԺԹ. (19) մասն պակաս՝ աւուր աւուր պակասեալքս ի Լուսնէն: Եւ ԺԹ. (19) մասունքս այս ամի ամի պակասեալ առնէ ի ԺԹ. (19) ամն 34Ա. (361) մասն: Եւ արա զԼ. (30) մասն ժամ մի, որ լինի օր մի ըստ ԺԲ. (12) ժամու, որպէս Արեգականն ԻԳ. (24): Զի շափ Լուսնի աւուրն ԻԳ. (23) ժամ և Գ. (3) մասն է և զԲ. (2) մասն, որ ասացաք, թէ պակաս ընթանայ Լուսնինն քան

զլափ աւուր Արեգականն, որ է ԻԴ. (24) ժամ, և զայս մանր մասընկունքս մասանց ըստ Բ. (2) մասինն ևս պակաս ընթանայ քան զլափ ԻԳ. (23) ժամու աւուրն: Եւ օրինակ քեզ, զի որպէս զլափ տարւոյն, որ 34. (360) օր է, Լուսինն 2. (6) օր պակաս ընթանայ, այսպէս և զլափ աւուրն, որ ԻԴ. (24) ժամ է, զասացեալ մասունքս հանդերձ մասնկամբքս պակաս ընթանայ յամենայն աւուր, որ և «կատարեալ Լուսինն» ի պակասութենէ մասանցս պատճառի: Եւ օրս այս որ բացակատարեցաւ ի լուսնական մասանցս, «ԺԹ. (19) երեակ» անուանեցաւ, վասն զի յԺԹ. (19) ամի ապա եզերեցաւ:

10 Երրորդ՝ ճառելի է և վասն ներգործութեան սորա. նախ զի զտարի Լուսինն, որ ըստ ԺԲ. (12) Լուսնի կատարի, 3ՄԴ. (354) օրն առնէ 3ՄԳ. (353) օր և ներգործէ որոշումն ժամանակաց, երկրորդ՝ զի թիւ մի յաւելու ի վերադիրս ամենայն ազգաց, երրորդ՝ պակասեցուցանէ թիւ մի ի վերադիրս հայոց:

15 Հարցումն.— Զարմանալի իրս երևի աստ. արդ եթէ օրս ի պակաս ընթացից մանր մասնկանցս կատարի, որպէս ցուցաւ, ապա զիարդ՞ ասի ի տումարս, թէ ընթանայ Լուսինն ի տարին 3ՄԴ. (354) օր և ԺԹ. (19) մասն, և մեկնիչ տումարին զօրս զայս ասէ, թէ պատճառի յԺԹ. (19) մասանց, որ ամի ամի յաւելու ի Լուսնէն և լինի ի 20 ԺԹ. (19) ամն 34Ա. (361) մասն և առնէ օր մի և մասն մը: Վարանիմ յայս, աղաչեմ պարզաբար բացայայտել, զի մեք այսպէս զիտեմք և ի մեկնչաց տումարաց այսպէս իմանամք, թէ ի յաւելեալ մասանց լինի օրս, և զուր ի պակասութենէ մասանց ցուցիք:

Պատասխանի.— Նուրբ է քննութիւնս սորա և ուշիմ քննողաց է 25 յայտնի սա, զի ոչ ըստ ուղիղ գծի Արեգականն պարտ է իմանալ, այլ ընդդիմաբար, և մի իմանալ զաւելին ի բաղկացութիւն աւուրն, այլ յընթացս ճանապարհին աւելի ընթացից Լուսինն: Զի կրկին է յաւելումն. զի է յաւելումն, որ զօրն գոյացուցանէ, և է յաւելումն, որ զընթացս պատճառէ: Այն յաւելումն մասանց, որ զօրն գոյացուցանէ, է մասունք Արեգական, զի Արեգակն գոյացուցանէ զօրն, վասն որոյ ի մասանց Արեգականն յամենայն ամի Ե. (5) օր յաւելու և ի նահանջի ամի օր մի: Իսկ մասնկունք Լուսնիս ոչ գոյացուցանէ օր, այլ պակասեցուցանէ, բայց պատճառէ զընթացս Լուսնին օր մի յաւելեալ ի ճանապարհս իւր: Եւ յարացոյց քեզ, զի Լուսինն ի տարին 35 ԺԱ. (11) օր պակաս ընթանայ և ԺԱ. (11) օր աւելի: Եւ թէ որպէս, ասացուր, զի ԺԱ. (11) պակաս ընթանայ, քան զտարի Արեգականն

և ԺԱ. (11) օր աւելի քան զիւր տարին և ի շրջանն՝ է. (7) ամիս, պակաս օր մի և ԺԹ. (19) երեկի աւուրս՝ է. (7) ամիս, որ է ՄԺ. (210) օր⁶): Արդ, որ զայսքան աւուրս, որ պակաս գնաց քան զԱրեգական տարին և աւելի, քան զիւր տարին, ոչ թէ օր գոյացուցց և զաւելի թիւս տարեացն, որպէս Արեգակն զԵ. (5) աւուրսն յամենայն ամի, այլ զպակաս ընթացքն ի տարիս Արեգական աւելի ընթացաւ ի տարիս իւր զէ. (7) ամիսս և զոյգ գտաւ ընդ Արեգականն: Արդ, զաւուրքս զայս պակաս իմա ըստ բնական ընթացից Լուսնին և աւելի իմա, քան զտարիս իւր յաղագս ընդ Արեգականն զոյգ ընթանալոյ: Սոյնպէս և զօրն որ լսես թէ ի ԺԹ. (19) մասանցն, որ ամի ամի յաւելու ի Լուսնէն, մի կարծեր, թէ մասունքն այն օր գոյացուցանեն: Ոչ գոյացուցանեն, այլ պակասեցուցանեն, բայց օր մի աւելի ընթացուցանեն զԼուսինն և զպակասն լցուցանեն, և կարծի, թէ օր գոյացուցանեն: Եւ այսու առաւել իմա, զի զԺԸ. (18) ամն ԺԱ. (11) բերեմք ի վերայ հին վերադիրն և յԺԹ. (19) ամին՝ ԺԲ. (12): Եւ այս է պատճառն, զի զԺԸ. (18) ամն 2. (6) օր պակաս գնայ Լուսինն ի տարին, և Արեգակն Ե. (5) օր աւելի, վասն այն ԺԱ. (11) բերեմք ի վերայ, իսկ յԺԹ. (19) ամի է. (7) օր պակաս գնայ, և Արեգական Ե. (5) օր աւելիքն առնէ ԺԲ. (12) օր պակաս զԼուսինս յԱրեգակնէն, և վասն այն ԺԲ. (12) բերեմք ի վերայ և հաւասարեմք Արեգականն: Եւ ծանիր, զի այսու տարրորոշին Արեգակն և Լուսինն ի միմեանց, զի Արեգականն մասունքն օր բաղկացուցանեն և Լուսնին պակասեցուցանեն: Նմանապէս և «զկատարեալ Լուսինն» զիտեա, զի և զայս Լուսնի 2ՌՊԽ. (6840) ամն օր մի պակասեցուցանէ, զի այն մի մասն, 25 որ ի ԺԹ. (19) ամէն մնայ, ի պակասեալ մանր մասնկանց մասանցըն է և վասն այն երբ 2ՌՊԽ (6840) ամն լինի, Լուսինն օր մի աւելի ընթանայ և զպակասն զայն լնու: Եւ յաղագս այսմ «կատարեալ Լուսինն» անուանեցաւ, զի թերութիւն միոյ աւուրն, որ եղև ի մէկ մասնէն յամենայն ԺԹ. (19) ամի, աւելի գնալովն կատարեաց և «կատարեալ Լուսինն» անուանեցաւ, յայսինքն թէ Լուսինն զպարտս միոյ աւուրն վճարեալ է և կատարեալ: Եւ զԼուսինս զայս «վախճան ժամանակի» ասացին իմաստասէրքն:

Զորս իրս խնդրելի է աստ. նախ՝ թէ զինչ է վերադիրն, երկրորդ՝
 թէ զիրար լինի պակասութիւն աւուրցս, երրորդ՝ թէ վասն էր՝ բե-
 րեմք յամենայն ամ զմետասան թիւս ի վերայ Լուսինն, չորրորդ՝
 5 թէ զինչ է ներգործութիւն վերադրիս:
 Վասն առաջնոյն ասելի է, զի վերադիր ստուգարանութեան ա-
 նուն է, զի ամի ամի զմետասան օր պակաս ընթացից Լուսնոյն,
 առեալ յառաջիկայ ամի Լուսնէն ժԱ. (11) օր և ածեմք ի վերայ
 անցեալ ամի Լուսնեացն և հաւասարեմք զԼուսինն և զԱրեգակն: Եւ
 10 վասն զի վերայ բերելով հաւասարին սորա, «վերադիր» անուանեցաւ:
 Երկրորդ՝ ասացուք թէ ուստի լինի պակասութիւն աւուրցս: Գի-
 տելի է, զի ոմանք ի Լուսնէն ասեն և ոմանք՝ յԱրեգակնէն, իսկ այլք
 յԱրեգակնէն և ի Լուսնէն: Նախ առաջին, ասէ Երանելին Եփրեմ, թէ
 յառաւօտին եստեղծ Աստուած զԱրեգակն և յերեկոյին զԼուսինն մե-
 15 տասան աւուր: Եւ ժԱ. (11) աւուրքս, որ աւելի գտավ Լուսինն քան
 զԱրեգակն, արդ ասէ սկսեալ յարարչութեան և հանապազ ամի ամի
 յաւելու ժԹ. (19) մասամբք քան զԱրեգակն և ըստ այսմ ի Լուսնէն
 ցուցանէ զաւուրքս զայս: Գարծեալ, իմաստասէրք ոմանք ասացին,
 թէ յառաւօտին ստեղծեալ զԱրեգակն և ընթացեալ Արեգականն ըստ
 20 հրամանի Արարչին ժԱ. (11) ժամ և ժԹ. (19) մասն՝ սկսեալ յա-
 ռաւօտէ յիլիցն Արեւու և հասեալ ի մուտն Արեւու մերձ ի յերեկոյս:
 Եւ մնաց ժԱ. (11) մասն այլ, որ Արեգակն ի ներքին կիսագունդն
 մտանէր, և ստեղծաւ Լուսինն ի նոյն րոպէին, և ընթացան ի շափոն
 յայն, յոր ընթացաւ Արեգակ: Եւ մետասան մասն յիշխանութենէ
 25 Արեգականն որ յաւելաւ ի վերայ Լուսնին, պակասեցոյց զնա յիւ-
 լում իշխանութեան: Եւ այս է պատճառն, զի Լուսինն, որ մետասան
 մասն ընթացաւ զհետ Արեգականն ի տիւն, պակասեցոյց զինքն
 յիշխանութենէ գիշերին, զի ոչ կարաց լուսաւորելով իշխել մինչև ի
 տիւն, զի ի հասարակական կետն ստեղծան, որ ժԹ. (12) ժամ ի
 30 տիւն իշխէր Արեգակն և ժԹ. (12)՝ Լուսինն ի գիշերին: Արդ, Լուսինն
 յժԲ. (12) ժամէն զժԱ. (11) մասն ի տիւն ի հետ Արեգականն ընթա-
 ցաւ յիշխանութիւն Արեգականն և զմետասան ժամն և զժԹ. (19)
 մասն ի գիշերի՝ յիշխանութիւն իւր և հասեալ ի ներքին կիսագունդն:
 Եւ մնաց վերին կիսագունդն խաւար ի լուսոյ Լուսնին մետասան
 մասն մինչև ել Արեգակ: Արդ, ասեն իմաստասէրքն, թէ զժԱ. (11)

մասն զայս յամենայն աւուր պակաս զնայ Լուսինն քան զԱրեգակն
 և յամիսն՝ ՅԼ. (330) և ի տարին ՎՋԿ. (3960): Եւ երբ զԼ. (30) մասն
 ժամ մի առնես, զայ յամիսն ժԱ. (11) և ի տարին ՃԼԲ. (132) ժամ,
 արա զժԲ. (12) ժամս օր մի, առնէ ժԱ. (11) օր: Եւ սորա համա-
 5 ձայն Եփրեմի ի պակաս ընթացից Լուսնին ցուցին զմետասան աւուր-
 քս այս:

Իսկ որք յԱրեգակնէն ասացին, ըստ այսմ եղանակի ցուցին, եթէ
 ընթանայ Լուսինն զտարիս իւր յժԲ. 12) Լուսինս ՅՄԴ. (354) օր և
 Արեգակն՝ զտարին իւր ՅԿԵ. (365) օր և այսպէս զմետասան աւուրքս
 10 առանձին աւելի Արեգականն ընթացից ասացին: Իսկ այլ իմաս-
 տասէրք յերկուցն ասացին յաւելի ընթացից Արեգականն մասանց և
 ի պակաս ընթացից Լուսնոյն մասանց: Եւ է այս յոյժ գովելի և գե-
 ղեցիկ, ըստ որում հաւանեալ հոշակաւոր իմաստասէրն էաս իւրովքն
 հանգերձ: Եւ թէ որպէ՞ս, ասացուք: Արդ այսպէս իմա. զի շափ
 15 տարւոյն ՅԿ. (360) օր է ըստ ժԲ. (12) կենդանակերպից և շափ
 ամսոյն Լ. (30) օր և շաբաթուն՝ է. (7), և աւուրն ժամուց՝ ԻԴ. (24)
 և մասանց ժամուն Լ. (30): Արդ, բաղկանայ ժամն ի մասանց և մասն
 ի թաւալմանէ Արեգականն, և Արեգակն թաւալի ի հասարակաւորու-
 թեան կետն ՅԿ. (360) թաւալ, որ է ՅԿ. (360) մասն, և է այս ըստ
 20 միում աւուր: Իսկ ըստ տարւոյն գիտելի է, զի ժԲ. (12) կենդանա-
 կերպ է ի գունդն անմոլար, և ամեն կենդանակերպ Լ. (30) աստի-
 ճան է, որ առնն ՅԿ (360), յորս ընթանայ Արեգակ և կատարէ զտարին
 ՅԿ. (360) օր, որպէս զամիսն ՅԿ. (360) ժամ: Այսպէս և զօրն ՅԿ.
 (360) մասն, զի սորա պատկերք են միմեանց, և լինի այս ըստ
 25 ժԲ. (12) ժամուց տուրնչեան: Արդ, ուշիմ մտօք ծանիր աստ, զի
 ընթանայ Արեգակն յօրն ԻԴ. (24) ժամ ընդ տիւ և ընդ գիշեր և ժ.
 (10) մասն և կէս, և ԻԴ. (24) ժամաւ կատարէ զշափ տարւոյն ՅԿ.
 (360) օր: Իսկ ժ. (10) մասն յաւելեալ՝ աւուր աւուր առնէ յամիսն
 Յ. (300) մասն և ի տարին ՎՍ. (3600) մասն, արա զԼ. (30) մասն
 30 ժամ մի, զայ Գ. (3) օր՝ ժամ մի և յամիսն ժ. (10) ժամ և ի տարին
 ՃԻ. (120) ժամ: Արա զԻԴ. (24)՝ օր մի, առնէ ըեզ Ե. (5) օր, որ կոչի
 աւել աւուրք: Եւ սորա են, որ անկանին յեղանակքս տարւոյն և առ-
 նեն զԼ. (90) օրն ՂԱ. (91) օր և զձմերանն ՂԲ. (92): Եւ այսպէս
 Արեգականն զշափ տարւոյն, որ ՅԿ. (360) օր էր ըստ ժԲ. (12)
 ամսոց կենդանակերպից, վասն ժ. (10) մասանցս աւելի ընթանալոյ՝

արար զտարին 34Ե. (365) օր: Իսկ կէս մասն առնէ զնահանջն, զորս վերագոյն ասացաք:

Իսկ Լուսինն ոչ է թէ զչափ տարւոյն, որ 34. (360) օր է, յաւելուէ կարէ որպէս զԱրեգակ, այլև ոչ զչափն ի լման կարէ ընթանալ, քան-
5 զի 2. (6) օր պակաս ընթանայ քան զչափ տարւոյն: Եւ թէ որպէս՝
սասացուք զանազան կերպիւ. նախ զի ընթանայ Լուսինն ի ծննդենէն
մինչև ի լրումն ժԳ. (14) օր ու կէս և 2. (6) ժամ և ի լրմանէն մինչև
ի միս ծնունդն ժԳ. (14) օր և կէս և 2. (6) ժամ, և այս առնէ ի ծննդ-
9 ղենէն ի ծնունդ ԻԹ. (29) օր և կէս, կէս օր պակաս յամսոյն և ի ժԲ.
10 (12) ամիսն պակասի 2. (6) օր, և կատարի տարի Լուսինի 3ՄԳ.
(354) օր, 2. (6) օր պակաս, քան զչափ տարւոյն: Երկրորդ՝ ընթա-
նայ Լուսինն յօրն ԻԳ. (23) ժամ և Գ. (3) մասն, Բ. (2) մասն պակաս
ի ԻԴ. (24) ժամէն և յամիսն Կ. (60) մասն և ի տարին ԶԲ. (720)
մասն, Ե. (5), Ե. (5) մասն ժամս արա, առնէ ՃԻ. (120) մասն օր մի
15 և ԶԻ. (720) ն՝ 2. (6) օր: Երրորդ՝ ընթանայ Լուսինն յօրն ԺԱ. (11)
ժամ և Թ. (9) մասն, 2. (6) մասն պակաս քան զԺԲ. (12) ժամն և
յամիսն Ճ2. (180) և ի տարին ՍՃԿ. (2160), արա զԼ. (30) ն ժամ
մի, ի Ե. (5) օրն առնէ Ա. (1) ժամ և յամիսն 2. (6) ժամ և ի տարին
2Բ. (72) ժամ, զԺԲ. (12) ժամն արա օր մի, առնէ 2. (6) օր: Չոր-
20 րորդ, ընթանայ Լուսինն յօրն ԻԳ. (23) ժամ և ԺԸ (18) մասն, ԺԲ.
(12) մասն պակաս քան զԻԴ. (24) ժամն և յամիսն 3Կ. (360) և ի
տարին Տ3Ի. (4320), արա զԼ. (30)՝ ժամ մի, Բ. (2) օր և կէսն առնէ
ժամ մի և յամիսն ԺԲ. (12) ժամ և ի տարին ՃԽԴ. (144) ժամ, արա
զԻԴ. (24) ն օր մի, առնէ 2. (6) օր: Իմա, զի ի տուժարս առանց
25 խոտորելոյ վարիմք, զԺԲ. (12) ժամն երբեմն կէս օր կալնուք և եր-
բեմն ի լման օր, ըստ դիպուածոյ և յարմարութեան մասանց:

Արդ ահա յայտնապէս ցուցաւ ԺԱ. (11) ատուրքս յերկուց լուսա-
տրացո՞՞ Ե. (5) օրն յարեգակնային աւելի մասանցն ընթացից և 2.
(6) օրն ի պակաս ընթացից լուսնական մասանցն:

30 Վասն երրորդին ասացուք, թէ վասն էր՞ բերեմք յամենայն
ամի զԺԱ. (11) թիւս ի վերայ ատուրց Լուսինն: Եւ ասեմք, թէ վասն
բազում պատճառի, քանզի բազում վնաս առնէ, եթէ ոչ վերայ բե-
րեմք յամենայն ամի զԺԱ. (11) թիւս ի վերայ վերագրին: Նախ զի
քակտին ի միմեանց ատուրք միոյ տարւոյն, և լինի մի տարին Բ. (2)

35 տարի, և թէ որպէս՝ ասացուք յԱսագ լրմանն: Երկրորդ՝ զի օրի-
նակ տան պատերազմի երկուց լուսատրացո՞ ըստ ատուրց ժամանա-

կին, զի մինն զտարին իւր առնէ 34Ե. (365) օր և միւսն 3ՄԳ. (354)
օր: Երրորդ՝ զի խափանի տումարական իմաստասիրութիւն, զի վասն
համընթացութեան և զոյգ պահելոյ զսոսա իմաստասիրեցաւ տումա-
րական հանճարս: Չորրորդ՝ զի խափանի մուտ տարւոյն, որ ի միում
5 ատուր սկսան յարարութեան Արեգակն և Լուսինն: Հինգերորդ՝ զի
ոչ կատարի աստուածային հրամանն, որ ասաց Մովսիսի յօրինա-
դրութեան Զատկին, թէ «ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց,
առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ և ի Ժ. (10) երրորդի ամսեանս
այսորիկ առցեն իւրաքանչիւր ոչխարս ընդ երթ և եղիցի ձեզ պահել
10 մինչև ի շորեքտասան ամսոյս այսորիկ, և զենցեն ամենայն բազ-
մութիւնքն ընդ երեկս և փութանակի կերիցեն, զի վաղիւն Զատիկ
Տեառն էս՝ Եւ էր ամսոյն ԺԳ. (13) և Լուսինն ժԳ. (14): Արդ, ըստ
հրամանին Տեառն պարտ է, զի ի Զատկին Լուսինն ի լրմանն գտցի,
և թէ ոչ յաւելուս զԺԱ. (11) թիւս ամի ամի, ի Զատկին զԼուսինն ի
15 լրման գտանել անհնար է: Վեցերորդ՝ զի և յարչարանացն յիշատակ
ի լրմանն եղև, թէ ոչ յաւելուս, ոչ զուգի ընդ Արեգականն: Եօթներ-
րորդ՝ զի անկանի տարի Լուսինն ի ներքոյ հասարակածին և կորու-
սանէ զկէտս չորից Զատկաց, այսինքն զստեղծմանն և օրինադրու-
թեանն և նորոգմանն և վերստին յարութեանն: Ութերորդ՝ զի ծածկի
20 ընդ խաւարաւ գիտութիւն շրջանի Լուսինն և ոչ գայ ի լուս շաւիղ ըն-
թացից նորա ի կիտէ ի կէտ, զի ի ԺԱ. (11) ատուրքս ժողովմանէ և
յԺԹ. (19) մասանցն լրանայ է: (7) ամիս, ուստի իմանամք զդարձ
Լուսինն ի սկիզբն շաւիղն: Այսպէս և շաւիղ Արեգականն, զի սոքայ
միմեամբք յայտնին:

25 Չորրորդ՝ վասն ներգործութեան վերագրին գիտելի է, զի վերոյ
ասացեալ ութ միտքն ներգործութիւն է նորին, զի սա պահէ զատուրս
տարւոյն անբակ և զլուսատրեք ի միաբանութեան և զտումարական
արհեստս անխափան և ըստ հրամանի սոցա բերէ զկարգ Զատկին և
անխափան զմուտ տարւոյն և զլարչարանացն յիշատակ և ար-
30 տաքոյ հասարակածին և զբացայայտութիւն շրջանացո՞:

Հարցումն.—Վասն էր՞ է, զի ելք աւելեացն պատկեր ատուրն
եօթներեակ է առաջիկայ ամին և քանիք Լուսինն՝ վերադիր:

Պատասխանի.—Որպէս յարարութեան ելք աւելեացն եղև եօթ-
ներեակ սկզբան տարւոյն, որ եղև մարդն, զի բերեալ զեօթներեակն

ի վերայ մարդակազմութեան ատուրն, եղև Զ. (6) և երևեցոյց զօրն ուրբաթ, նոյնպէս և այժմ լինի:

Հարցումն.—Արդ եթէ սկզբան տարւոյն հօթնեբեակն Ե. (5) է ըստ Ե. (5) ատուրցն, վասն էր՞ ի գլուխ շրջանին ապրիլի շրիցն՝
5 զհօթնեբեակն մի ցուցանէ սկզբան ամին:

Պատասխանի.—Կրկին է սկիզբն՝ նախ արարչութեան և երկրորդ՝ տարւոյն սկզբան: Արդ, արարչութիւն ի միաշաբաթոջն սկսաւ և հօթնեբեակն Ա. (1) էր, և եդին ի գլուխ շրջանին, զի յայնմհետէ գոյացան ատուրբ: Եւ բերէ զատուր պատկերն զսկզբան տարւոյն ուրբաթ և զլրմանն՝ շորեքշաբթի և տարւոյն զսկզբան հօթնեբեակն Ե.
10 (5) է ըստ աւելեացն թուոյն, վասն որոյ շրջանին հօթնեբեակն, որ է Ա. (1) ի գլուխ բոլորին, զարարչութեան սկզբանն իմա:

Հարցումն.—Կրկին հօթնեբեակքն ցուցաւ ի յեղեւոց ատուրց, բայց տարակոյս է մեզ, զի քանիք լուսինն վերադիր ասացաւ: Արդ յարարչութեան լուսինն բոլոր ստեղծաւ, և թէ ըստ գոյութեան ատուրն առնումք, ի սկզբան տարւոյն լուսինն Բ. (2) ատուր էր, իսկ եթէ ըստ քանակութեան լուսոյն կալցուք, ԺԵ. (15) ատուր է, թէպէտ ոչ է զայս աւելի, զիարդ՞ է, զմի ի գլուխ շրջանի ապրիլին շրիցն զվերադիրն ԺԱ. (11) եդին:

Պատասխանի.—Վասն զի տարեմուտք ազգացս ոչ են եղեալ ի մուտս տարւոյն սկզբան, և վասն այն ոչ կարեն բերել զքանիք լուսինն ի գլուխ շրջանին վերադիր: Բայց թէ կամիս զիտեղ զքանիք լուսինն աւելեացն լինել վերադիր սկզբան տարւոյն, զայս յեբրայականէն ուսիր, զի նոցա տարեմուտն ըստ սկզբան տարւոյն է: Արդ, ի սկզբան տարւոյն լուսինն ի ելք աւելեացն ըստ գոյութեան Բ. (2) ատուր է, զի ի շորեքշաբթի ստեղծաւ և յուրբաթի մուտ է սկզբան տարւոյն, և վերադիր եբրայեցոցն Բ. (2) է՞:
25

Հարցումն.— Իսկ դ՛ոռոմոց ԺԱ. (11) ս որպէս՞ ուսցուր:

Պատասխանի.— Զայս ըստ վախճանի տարւոյն իմա, զի ի սկզբան տարւոյն լուսինն ԺԱ. (11) թիւ պակաս գտանի ի տարիս իւր, և վերջն և սկիզբն ի նոյն տարւոյն են: Վասն որոյ առեալ զպակասութիւն ԺԱ. (11) թուոյն տարւոյն վախճանի և դնեն վերադիր սկզբան տարւոյն, և այսու յօրինեալ զարուեստն եդին ԺԱ. (11) թիւ զվերադիրն ի գլուխ շրջանին: Այսքան առ այս, իսկ բազմապատկելն և զԺԹ. (19) երեկացն յաւելն և զնահանջիցն պակասեցուցանելն տես ի տումարի մեկնիչն, զի աւելորդ է գրելն:
35

Հարցումն.—Վասն էր՞ ասի Առաջաւոր:

Պատասխանի.—Վարդապետք եկեղեցոյ ըստ բազում յեղանակի մեկնեն զԱռաջաւորն, բայց մեղ ոչ է փոյթ ի տեղիս յայս ըստ վարդապետական մեկնութեան առնել զխնդիրն Առաջաւորիս, այլ ըստ տումարական արուեստիս յայսմ տեղուշ խնդրել արժան է: Եւ զայս ըստ կրկին յեղանակի. նախ ասի Առաջաւոր ըստ իրին գրութեան, զի սա նախադաս է և առաջին՝ սկիզբն գոլով պահոց և Զատկի, այլ և տէրունական տօնից: Արդ, որովհետև զսկիզբն յիշեցաք,
10 պարտ է տեսանել և վասն սկզբանց:

Գիտելի է, զի բազում են սկզբունք, որ պիտոյանան ի մեկնութիւնս բանից սրբոց վարդապետաց, որպէս ասի «սկիզբն սեռիցն և տեսակացն և կենդանոյն և նօին և այլն»: Բայց մեղ ոչ է փոյթ ըստ այժմոյս յաղագս վարդապետութեանց, այլ յայպիսի սկզբանց է
15 քննութիւնս մեր, որ ըստ տումարական արհեստիս է պիտանացու: Եւ հարկ է գիտել տումարագիտին, զի ըստ Պղատոնի մի է սկիզբն զեղեցկաբար խորհելոյ և գիտելոյ, թէ յաղագս ոչր՞ է մտածութիւն, և թէ ոչ հարկ է յամենայնէն վրիպել: Արդ, նախ առաջին սկիզբն ասի նա, որ ամենայն սկզբանց է սկիզբն, և այլքն ամենեքեան ի
20 նմանէ ունին զսկիզբն լինելն պատճառեղեացն ինքեանց: Եւ առաջին սկիզբն ամենայն սկզբանց է Աստուած, ըստ այնմ՝ «ես եմ ալֆա և յ»¹:

Երկրորդ սկիզբն՝ շարժութեան դադարումն, զի ամենայն ինչ, որ շարժի, ի դադարմանէ շարժի: Երրորդ սկիզբն՝ ժամանակին շարժութիւն, զի ժամանակն չափաբերի ի շարժմանէ երկնից: Չորրորդ սկիզբն՝ շրջանաց մեծի և փոքու Արեգական և լուսնի, զի լրնթացից նոցա բացակատարի: Հինգերորդ՝ սկիզբն մասանց և ժամուց թաւլումն Արեգականն, զի շրջան մի առեալ գունդն և ձգեալ զլորն ի կէտն առաջին շարժմանն գոյացոյց մասն մի և նորօք զժամն, ուստի օրն էառ զչափաբերութեամբ բերիլն ի ստեղծման լուսաւորացն: Վեցերորդ՝ ասի սկիզբն աւուրց յաւուրս շաբաթուն միաշաբաթն, զի ի նմա եղև սկիզբն եղանակացս լինելութեան: Եօթներորդ սկիզբն՝ տարւոյն յամիս նիսան, ըստ այնմ, թէ «ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյն»²: Ութերորդ՝

1 Յայտ. ԱՅ:

2 Նլք ԺԲԶ:

սկիզբն թուոյ ի համարս՝ միական, քանզի միական ոչ ասի թիւ, այլ սկիզբն թուոց, և թիւ՝ երկեական և երրեական այլօքն հանդերձ: Իններորդ՝ սկիզբն տումարական մակացութեանս գործառնութեան՝ թուական, զի առանց սորա ամենայն մասունք տումարիս շարժութեան անգործ մնան յարհեստ, յորս իմաստասիրեցան: Տասներորդ՝ սկիզբն թուականութեանս ներգործութեան՝ նահանջն, զի նահանջն «մայր թուականութեան» անուանեցին հոյլք ամենայն իմաստասիրաց: Մետասաներորդ՝ սկիզբն ամենայն լրմանց ասի լրումն, որ յապրիլի Գ. (4) ն, վասն որոյ եղաւ յէասանցն գլուխ շրջանի և կոչեցաւ «Աւագ լրումն»: Երկոտասաներորդ՝ է սկիզբն պահոց և Զատիկի և ամենայն տօնից Առաջաւորս, վասն առաջի գոլոյ սորա ի կարգս դրութեան տարւոյն, և վասն այսմ ասի «Առաջաւոր»:

Երկրորդ եղանակն է այս, զի վասն միշտ յառաջ խաղալոյն ասի Առաջաւոր: Արդ, ամենայն տօնք և Զատիկք և ամենայն պահք պարունակին ի ներքոյ ժԳ. (13) թուոյ. առաջին՝ Առաջաւորն, երկրորդ՝ Բուն Բարեկենդանն, երրորդ՝ Զատիկն, չորրորդ՝ Համբարձումն, հինգերորդ՝ Հոգւոյ գալուստն, վեցերորդ՝ Սուրբ Գրիգորն, հօթներորդ՝ Վարդավառն, ութերորդ՝ Աստուածածինն, իններորդ՝ Սուրբ խաչն, տասներորդ՝ Սուրբ Գէորգն, մետասաներորդ՝ Յիսնակամուտն, երկոտասաներորդ՝ Սուրբ Յակոբն, երեքտասաներորդ՝ Ութօրեքն: Գիտելի է, զի ամենայն տօնք և ամենայն պահք, այլև Զատիկ, զոր ասացաքն, յերկուս բաժանին, զի ոմանք օրագիտիւ լինին և ոմանք՝ առանց օրագիտի: Եւ դարձեալ՝ սոքա, որ օրագիտիւ լինին և առանց օրագիտի, յերկուս տարրոշին, զի ոմանք շարժին և ոմանք ոչ շարժին: Եւ դարձեալ՝ այսօրիկ, որ շարժին, յերկուս տրամատին՝ ոմանք յետ և յառաջ շարժին և ոմանք յառաջ միայն: Եւ դարձեալ՝ սոքա, որ յետ և յառաջ շարժին, յերկուս տարանջատին, զի ոմանց պատկեր օրն գտօնն թէ յառաջ տանի և թէ յետ բերէ, պահքն պահեալ է, և ոմանց զԲարեկենդանն խաղացուցեալ՝ պահքն պահելու է: Եւ թէ որպէս՝ ասացուք՝ արդ, ի սոցանէ է. (7) առանց օրագիտի լինին. առաջին՝ Բուն Բարեկենդանն, երկրորդ՝ Համբարձումն, երրորդ՝ Հոգւոյ գալուստն, չորրորդ՝ Սուրբ Գրիգորն, հինգերորդ՝ Վարդավառն, վեցերորդ՝ Սուրբ Գէորգն, հօթներորդ՝ Ութօրեքն: Իսկ Զ. (6) ն օրագիտիւ լինին. առաջին՝ Առաջաւորն, երկրորդ՝ Աւագ լրումն, երրորդ՝ Աստուածածինն, չորրորդ՝ Սուրբ խաչն, հինգերորդ՝ Յիսնակամուտն, վեցերորդ՝ Սուրբ Յակոբն: Եւ որք առանց օրագիտի

լինին, սոքա թէ ի լուր օր և թէ ի կիրակի պատահին, ոչ շարժին յառաջ և կամ յետ, այլ ի տեղն լինին, ուր պատահին: Իսկ որք օրագիտիւ լինին, Գ. (4) ի սոցանէ յետ և յառաջ շարժին՝ Աստուածածինն, Սուրբ խաչն, Յիսնակամուտն և Սուրբ Յակոբն: Եւ երկուցն օրագիտն յետ և յառաջ շարժմամբ գտօնն տայ առնել և պահքն պահեալ է, այսինքն Աստուածածինն և Սուրբ խաչին: Եւ յերկուց օրագիտն յետ և յառաջ շարժմամբ Բարեկենդանն լինի և պահքն պահելու է, այսինքն Յիսնակամուտն և Սուրբ Յակոբին: Իսկ որ միշտ յառաջ շարժին, է Առաջաւորն և Աւագ լրումն, և վասն միշտ յառաջ խաղալոյս ասացաւ Առաջաւոր:

Հարցումն.— Եւ զինչ է պատճառն յաւէտ յառաջ շարժութեան Առաջաւորիս:

Պատասխանի.— Զայս վասն հարկի Աւագ լրմանն արարին, զի յառաջ խաղացուցեալ՝ զնա արտաքս հանցէ քան զհասարակածն, զի մի գուցէ անկանիցի Աւագ լրումն ի ներքոյ հասարակածին և առնիցէ զմին տարին երկու տարի, որպէս ուսանելոց ես յԱւագ լըրմանն, որ առաջի կայ: Այսքան առ այս:

ՅԱՂԱԳՍ ԱՌԱԳ ԼՐՄԱՆՆ

Նախ տեսցուք թէ վասն էր՞ ասի Աւագ լրումն, երկրորդ, թէ վասն էր յամենայն լրմանս զյարակայն ԽԵ. (45) կախումք և զԱւագ լրմանս՝ ԽԶ. (46)⁹), երրորդ՝ թէ վասն էր՞ զվերադիրն առանց կիսակաց երթամք, չորրորդ՝ թէ ԽԶ. (46) թիւս հանապազորդ լրման Զատիկն յաւելուած առնէ յաւուրս Լուսնին թէ ոչ: Եւ ապա հինգերորդ՝ արա զլրումն որպէս և Պատճէնն հրամայէ:

Վասն առաջնոյն ասելի է, թէ վասն բաղում պատճառի ասի Աւագ լրումն: Առաջին՝ զի լրումն այս՝ է ստեղծման լրումն, որ անդրանիկ է և աւագ ամենայն լրմանց, զի առաջին լրումն յետ ստեղծմանն յապրիլի Գ. (4) ն էր և Խաչելութեան լրումն ի նոյն ամիսն յապրիլի ԺԵ. (15) ն էր: Երկրորդ՝ ասի Աւագ լրումն վասն կրկին անդրանակացուցանելոյ զսա Տեսուն Աստուծոյ յօրինադրական Զատիկին, այսինքն ի հին Զատիկին, որ օրինակ էր նորոյս Զատիկիս: Զի ոչխարն, որ զենուին, նշանակէր զՔրիստոս, որ զենաւ ի խաչին,

որպէս ասէ նսայի՝ «իրբե զոչիար անմուռնչ կայ առաջի կտրչի»¹։ Իսկ Զատիկն նշանակէ զյարութիւն Քրիստոսի և ըստ կրկին անդրանկացուցանելոյ ամսոյն նիսանայ յամիսք տարւոյն կրկին անդրանկացոյց և զլրումս զայս։ Զի դարձեալ յապրիլի Գ. (4) ն դիպեցաւ լրումն Զատիկին որպէս առաջին լրումն յետ ստեղծմանն, զի նիսանայ ԺԳ. (14) ն ապրիլի Գ. (4) ն է և տես ի խառնախորանքն։ Երրորդ՝ զի զամենայն լրմունս զյարակայն խն. (45) կալնումք և աստ խՁ. (46) և վասն աւելի թիւս առնելոյն ասի Աւագ լրումն։ Զորրորդ՝ վասն մեծամեծ հրաշիցն և աստուածային զարմանալի գործոցն, որ եղեն ի լրմանս այս։ Զի եղեն Զ. (6) հրաշալի նշանք. առաջին՝ զի երկիր շարժեցաւ, երկրորդ՝ վէճք պատահեցան, երրորդ՝ գերեզմանք բացան, չորրորդ՝ վարագոյրն հերձաւ, հինգերորդ՝ լուսաւորքն խաւարեցան, վեցերորդ՝ ջուր և արիւն բխեաց ի կողէն Քրիստոսի։ Իսկ զարմանալի գործ, զի անմահն մահացաւ ի խաչին և տքնեցաւ ի դիրեզմանին, էջ ի դժոխս և քարոզեաց հոգւոցն, եհան զգերեալսն և աւերումն արար դժոխոցն, յաւուր երրորդի յարեաւ և Աստուած հանդերձ միացեալ մարմնովն քարոզեցաւ։ Ապա ուրեմն յիրաւի Աւագ լրումն անուանեցաւ, որ այսպիսի աստուածային մեծամեծ հրաշք և զարմանալի գործք ի լրմանս այս բացակատարեցաւ։ Զինգերորդ՝ զի յատկական անուն եղաւ սմա անունս այս, զի որոշեսցի յայլոց հասարակաց լրմանց, զի յորժամ լսիցես Աւագ լրումն, անտարակոյս իմասցիս, թէ Զատկաց լրումն կոչէ և ոչ զհասարակաց։

Երկրորդ՝ ճառելի է և վասն յարակային, որ խՁ. (46) կալնումք։ 25 Արդ՝ վասն այն կալնումք խՁ. (46), զի մի գայցէ լրումն, որ ի մարտի ԻԱ. (21) ն է, գայցէ մարտի Ի. (20) նն, ուր հասարակածն է, զի ի նիկիական սուրբ ժողովն ՅԺԸ. (318) հայրապետացն անիծեալ է ընդ Արիոսի և այլոց հերձուածողացն, որ զԱւագ լրումն ի հասարակածին բերցէ, մանաւանդ թէ ի ներքոյ հասարակածին։

30 Զարցումն.— Զինչ՞ է վնասն, որ այսպիսի բանադրանօք փակեցին սուրբ հայրապետքն։

Պատասխանի.— Այս է վնասն, զի զհոյս իմաստասիրաց՝ հակառակասիրացն ճշմարտութեան ծաղր տայ առնել, զի տգէտ և իմար երևեցուցանէ՝ ոչ կարել առնել տարրորշումն սկզբան տարւոյն

և վախճանին, զոր յայտնապէս սահմանեաց Աստուած յամենայն Զատիկս։ Զի ի մին տարին երկու Զատիկ բերէ և զգալ տարւոյն Զատիկն խափանէ, զի ի նիսան ոչ առնէ և արտաքոյ կարգի ի մէկ տարին Բ. (2) տարի առնէ և զնոր տարին ի կարգէ տարեացն թուոց արտաքս հանէ։

Զարցումն.— Աղաչեմ լուծանել, թէ որպէս լինի ի մի տարին երկու Զատիկ և կամ գալ տարւոյն Զատիկն զիարդ՞ խափանի։

Պատասխանի.— Գիտել պարտ է, զի տարին Բ. (2) եղանակաւ ասի, այսինքն ըստ պատահման և ըստ իսկութեան, քանզի յերկուց սահմանեցաւ։ Զի որ ըստ իսկութեան է և ճշմարտութեան՝ յԱստուծոյ սահմանեցաւ և որ ըստ պատահման՝ ի մարդկանէ եղաւ։ Զի ազգք և ազինք յորում եղանակի տարւոյն ըստ հաճութեան և ըստ պատահման որ եզին իւրեանց թուական, զօրն գայն, յորում եզին զթուականն, սկիզբն տարւոյն եղև նոցա, և «նոր տարի» անուանեցին զայն։ Արդ, այս ըստ պատահման «սկիզբն տարւոյ» անուանեցաւ ի մարդկանէ և ոչ ըստ ճշմարտութեան։ Իսկ որ ճշմարիտ «տարի» անուանեցաւ, այս յԱստուծոյ սահմանեցաւ կրկին անգամ, և երրորդումն ինքեամք կատարեցաւ. նախ յարարչութեան սահմանեցաւ և երկրորդ՝ յօրինադրութեան։ Ըստ արարչութեան շորիւք իրօք հաստատեաց զտարին. նախ ստեղծագործութեամբ ժամանակին, յորում զաշխարհս գոյացոյց, երկրորդ՝ կազմութեամբ մարդոյն, յորում արար յաւուր ուրբաթի, երրորդ՝ զսկիզբն նիսան ամսոյ ի նմին աւուր եդ, որ մէկ օր էր ըստ համարոյ, չորրորդ՝ զի զԱրեգակն ի նմին աւուր եդ ի նոյն, որ զտարին ի կիտէն յայնմանէ ընթացիւք ի նոյն կէտն

վճարէր։ Իսկ յօրինադրութեան Զատիկին հաստատեաց պատուիրանադրութեամբ, ըստ որում ասաց Աստուած Մովսէսիւ. «Եղիցի ձեզ օրդ այդ ի յիշատակ և տօնեցեք զդա՞ տօն Տեառն յազգս ձեր օրէն յաւիտեանական տօնեցեք զգա»¹։ Եւ յայսմ օրինադրութեանս սկիզբն տարւոյն դարձեալ զնիսան եդ, ըստ որում ասաց թէ «ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյն»²։

Արդ, ուսիր աստ, զի ԺԳ. (14) երրորդ լրումն Զատկաց ի շրջանս Լուսնին զԺԸ. (18) ամն՝ ի նիսան գայ և մի ամ՝ յաւել աւուրքն։ Արդ, յորժամ խն. (45) կալնուին զյարակայն Աւագ լրման Լուսնին, որ-

¹ Ելք ԺԲ14:
² Ելք ԺԲ2:

¹ նսայի ԾԳ7:

պէս այլոց լրմանցն հարքն հոգելիցք և իմաստասէրք, յայնժամ
ԺԳ. (14) Լուսնին ի հասարակածն գայր, այսինքն յաւելեացն ի Գ.
(4), որ է մարտի Ի. (20): Եւ թէ որպէս, լրումն երբայեցոց արա
և տես. կալ ԽԵ. (45) զյարակայն, երթ զվերադիրն երբայեցոց ԺԶ.
5 (16), մնայ ԻԹ. (29), որ է յաւելեացն ի Գ. (4): Բայց մի տարա-
կուսիր ի տեղիս յայս. զաւելիքս, որ Ե. (5) օր է իբրև զլրման ամիս,
տես, որ Լ. (30) օր է, և ի ԻԹ. (29) էն, որ մնաց ի յարակայէն, յոր-
ժամ զվերադիրն ի բաց գնացաք, զԻԵ. (25) ի բաց գնամք, մնայ
Գ. (4) աւելեացն, և ըստ այսմ ուսիր գարուեստ աւելեացս լրման:
10 նոյնպէս և հոռմայեցոց լրումն արա և տես. կալ զյարակայն ԽԵ.
(45), գնա զվերադիրն ԻԵ. (25), և գայ լրումն մարտի Ի. (20)՝ ԺԴ.
(14) Լուսնին, որ է հասարակածն: Աստ տես զսխալանս, զի թէ պա-
տահիցի պատկեր օրն լրման ի շաբաթ յաւագ շրջանին, ի հարկէ
պարտ է վաղին ի կիրակի Զատիկ առնել: Յայնժամ գայ մարտի
15 ԻԱ. (21) և յաւելեացն ի Ե. (5), և լինի ի մին տարին երկու Զատիկ,
զի զանցեալ Զատիկն ի նիսան արարեք, որ սկիզբն էր տարւոյն, և
զնոր Զատիկն յաւելեացն ի Ե. (5), որ վախճան և վերջ էր տարւոյն:
Ահա եղև ի մին տարին երկու Զատիկ և ելաւ յաստուածադիր սահ-
մանէն, որ ի նիսան սահմանեաց յարարչութեան և յօրինադրութեան:
20 Եւ տես, թէ որքան նախատինս վերաբերէր առ հարքն հոգելիցք և
իմաստասէրք, որ զշաւիղս լուսաւորացդ ըստ ժամուց և ըստ մա-
սանց զընթացս սոցա իմաստասիրեցին և ի մի թիւս տգէտ երևէին:
Զի բազումք ի յանդգնից և հակառակասիրաց ի մերոց և յօտարաց
ժողր առնելով ասէին. «Ի՞նչ ատուր միոյ ոչ կարացին լինել ընտրող,
25 այսինքն զվախճան տարւոյն ի սկզբան տարւոյն ոչ կարացին որո-
շել, որ ախմարաց է դիտելի, ապա և սուտ է արհեստ տումարական
հանճարասիրութեան նոցա»: Եւ վասն այսր սխալանաց զյարակայ
Աւագ լրմանս ԽԶ. (46) սահմանեցին, զի ԺԳ. (14) Լուսնին յաւելեաց
ի Ե. (5) գայցէ, և Զատիկն ի նիսան անկանիցի ըստ աստուածադիր
30 սահմանին: Վասն այն անիծիւք փակեցին, զի մի՞ որ իշխեսցէ զԱ-
ւագ լրումն ի հասարակածին առնել, մանաւանդ թէ ի ներքոյ հասա-
րակածին և հանել զԶատիկն յաստուածադիր կարգէն:

Հարցումն.—Արդ եթէ յաւելեաց ի Ե. (5) ն և կամ այլոց լրմանցն
պատկեր ԺԳ. (14) ին ի կիրակի հանդիպիցի, ընդ էր՞ յերկուշաբթի
ոչ առնեմք Զատիկ, զի նիսան ամիս է:

Պատասխանի.—Այս ի սրբոյն Կոստանդիանոսէ արքայէն մեծէ
եղև, զի մինչև ցայն վայր, յորում ատուր և դիպէր ԺԳ. (14) ն Լուսնին,
ընդ հրէիցն առնէին քրիստոնեայքն զԶատիկն: Վասն որոյ բարե-
պաշտ արքայն ոչ հաւանեալ այսմ, խնդրեաց ի հարցն սրբոց թէ ոչ
5 է պարտ քրիստոնէիցս ի հետ տիրասպան ազգին հրէից առնել
զԶատիկն ի լուր ատուրսն, այլ ի կիրակի, յորում յարութիւն Քրիս-
տոսի եղև: Եւ թէպէտ ի լուր ատուրսն Զատիկ առնել ոչ է արտաքոյ
աստուածադիր հրամանին, զի ի նիսան է, բայց ի կիրակի սահմանե-
ցին ընդ խնդրոյ մեծի արքային, որով որոշեացուք ի հրէից:

10 Հարցումն.—Ընդ էր՞ է, զի զՄնունդն Քրիստոսի ի քանիս ամ-
սոյն առնեն ամենայն ազգ և զՅարութիւն՝ ոչ, զի թէպէտ ոմանք ի
դեկտեմբերի ԻԵ. (25) ն առնեն ըստ պղծոյն Արտեմոնի, սակայն
քանիք Մննդեան զայն ասեն:

Պատասխանի.—Զի Յարութիւն Քրիստոսի Զատիկ է, և Զատիկն
15 տարւոյն մուտ է, ըստ որում զյարութիւն յամիսս տարւոյն արար,
իսկ Մնունդն Քրիստոսի ոչ ունի զմուտս հասարակաբար տարւոյն,
այլ զառանձնակի տարւոյն, որ ինքեան միայն է: Եւ աստ ընդդիմա-
բար ունիմք զխնդիրն, զի ի Մնունդն զքանիս ամսոյն միայն խնդրեմք
և զաւուրն պատկերն ոչ, իսկ ի Յարութեան զաւուրն պատկերն խընդ-
20 րեմք և զքանիս ամսոյն՝ ոչ: Եւ թէ զինչ է պատճառն ասիցէ որ, զի-
տասցէ, զի վասն այն խնդրեմք ի Մննդեան զքանիս ամսոյն, զի
անաւելորդ և աննուագ բերիցէ զժամանակս թուաբերութեան ամացն
Քրիստոսի, իսկ ի Յարութեան զաւուրն պատկեր, զի մի՞ օր Յարու-
թեան ի մէջ այլ ատուրցն տարակուսանօք լիցի:

25 Հարցումն.—Եթէ տարեմուտն ի նիսան ամիս է, զինչ է պատ-
ճառն ի ԺԳ. (14) ին Լուսնին առնել Զատիկն:

Պատասխանի.—Չորք են Զատիկք և տարեմուտք. առաջին՝
ստեղծմանն, երկրորդ՝ օրինադրութեանն, երրորդ՝ վերստին նորոգ-
մանն, չորրորդ՝ հասարակ յարութեան: Եւ սոքա ամենեքեան օրինակ
30 և զազափար են միմեանց, զի ի ստեղծմանն Լուսնին ԺԳ. (14) ն
էր, այսպէս և յօրինադրութեան, նոյնպէս և ի հասարակաց յարու-
թեան է լինելոց, վասն որոյ ի ԺԳ. (14) ն Լուսնին առնեմք զԶատիկն,
զի և շարշարանքն Քրիստոսի ընդ սմա դիպեցաւ:

Հարցումն.—Վասն էր՞ է, զի սկիզբն արարչութեան ի կիրակի
եղև և զսկիզբն տարւոյն՝ յաւուր ուրբաթի եղ, ի նիսան:

Պատասխանի.—Վասն այն, զի յառաջնումն աւուրն արարածքս անկատար էին և յուրբաթի առին զկատարումն: Եւ զի տարին վասն երկու իրաց է. առաջին՝ զի զքանիօնութիւն արարածոցս յայտնեսցէ և երկրորդ՝ զչափ կենաց մարդկան, և սորա յաւուր կիրակէի ոչ էին ի միջի:

Հարցումն.—Վասն էր՞ զԱւագ լրման Լուսինս «ԺԴ. (14) ան» անուանեմք:

Պատասխանի.—Ձայս ոչ է թէ վասն պակաս գոլոյ քան զԺԵ. (15) աւուրք Լուսինն, և վասն այն ասեմք «ԺԴ. (14) ան», այլ Լուսին ի լրմանս այս ԺԶ. (16) գտանի վասն հարկի նիսան ամսոյ, այլ զի հրամայեաց Աստուած ի ԺԴ. (14) նիսան ամսոյ զենել զոչխարսն, և էր Լուսինն ԺԴ. (14) օր, զի վաղիւն ի Ջատկին գտանիցի ԺԵ. (15) աւուր: Եւ հարքն հոգեւիցք առանց խոտորելոյ եղին զանուն լրմանս ԺԴ. (14): Երկրորդ՝ զի ամենայն լրումն ԺԵ. (15) և սայ յատկական անուամբ «ԺԴ. (14) ան» անուանեցաւ ի պատճառս լրման Ջատկաց, բայց դու զԺԴ. (14) նն ԺԵ. (15) իմա, զի զԺԵ. (15) նն ասէ ԺԴ. (14) ան:

Երրորդ՝ խնդրելի է, թէ վասն էր՞ զվերադիրն առանց կիսակաց երթամք. նախ վասն այն երթամք առանց կիսակաց, զի Աւագ լրումս Առաջաւորին պատկեր է, որպէս անդ ոչ առնու ի կիր զկիսակն, նոյնպէս և ոչ աստ հրամայէ առնել: Երկրորդ՝ զի Աւագ լրումն օր մի աւելի առնու, քան զայլ լրմունս, վասն զի զյարակայն ԽԶ. (46) ունիմք: Եւ թէ զկիսակն ի հետ վերադիրն երթամք, զաւելի օրն հետ իւր տանի և ձգէ զԺԴ. (14) նն ի ներքոյ հասարակածին, զի ի մարտի ԻԱ. (21) վերադիրն ԻԵ. (25) է, և յորժամ կիսական ԻԷ. (27) երթաս, լրումն մարտի ԺԹ. (19) գայ: Եւ յաղագս այսմ պատճառի առանց կիսակաց գնամք, զի քան զհասարակածն արտաքոյ հանցէ զլրումն Ջատկին:

Չորրորդ՝ տեսանելի է և զայս, թէ ԽԶ. (46) թիւս հանապազորդ լրման Ջատկին, որ աւելի կալնունք թիւ մի, Լուսինն ի ԺԶ. (16) առնու զլրումն թէ ի ԺԵ. (15): Դիտելի է, զի Լուսնի ստեղծմանէն մինչև ի կատարած աշխարհիս անհնար է, թէ մասն մի յաւելուղ կարէ, զԻԹ. (29) օր և կէսն, կամ մասն մի պակասեցուցանել բացի մանր մասնկանց մասանցն, որպէս ցուցար վերագոյն՝ վասն ԺԹ. (19) երեկի աւուրն, որպէս և սահմանեաց Աստուած: Եւ այնմ

վկայէ Դաւիթ, թէ «սահման եղիր և ոչ անցանեն»¹, զի Լուսինն ըստ արարչադիր սահմանին ի ԺԵ. (15) առնու զլրումն, որպէս յամենայն լրմունս: Բայց մի թիւս աւելի, որ ի յարակայն յաւելին իմաստասէրքն զԽԵ. (45) ն ԽԶ. (46) ունելով, զայս գործէ, զի զՋատկին յառաջ շարժէ, որ ի նիսան մտանէ, զի ըստ հրամանին Աստուծոյ ի նիսան եղիցի զՋատկիս, որպէս վերագոյն ցուցար:

ՅԱՂԱԳՍ ԱՊՐԻԼԻ ՉՈՐԻՑՆ ԾՇԳՐԻՏ ՔՆՆՈՒԹԻՒՆ
Ի ԿԱՏԱՐԵԱԼ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ

Հարցումն.—Ընդ էր՞ է, զի ի շրջանս Լուսինն և ի գլուխ բոլորին ամենայն լրմանցն՝ զապրիլի Դ. (4) ն դնեն, որ այսպէս եղին հինքն՝ գտողք զարուեստիս:

Պատասխանի.—Ձայս վասն առաջին լրմանն, որ յետ ստեղծմանն, զի յապրիլի Դ. (4) ն եղև և վասն այն յապրիլի Դ. (4) ն եղին զսկիզբն լրմանցն ի շրջան ԺԹ. (19) երեկացն:

Հարցումն.—Արդ, խնդրեմ ուսանել զիարդ՞ եթէ հաւասարար ի Դ. (4) ն ապրիլի դիպեցաւ ԺԴ. (14) ն Լուսինն յառաջնում նուագին զկնի ստեղծմանն:

Պատասխանի.—Ծանիր, որդի, զի յոյժ դժուարին եղև գիտ սորա, զի Յ. (6000) ամ տարակուսանօք և երկրայութեամբ կացին ի վերայ առաջին լրմանն, զի Դ. (4) կերպիւ ասացին զստեղծումն Լուսինն ըստ քանակութեան աւուրք և ըստ ձևոյ վասն ոչ հաւաստի գիտելոյ զյեղանակ ստեղծման Լուսինն դասք իմաստասիրացն և եկեղեցւոյ սուրբ վարդապետաց: Չի ըստ բնական քննութեան ասացին ոմանք յիմաստասիրաց՝ մերձ ստեղծեալ զԼուսինն և անկատար, և ոմանք՝ հեռի ստեղծեալ և կատարեալ: Իսկ եկեղեցւոյ վարդապետաց առաջինն՝ Արիստէս և պիսկոպոս, զկնի առաքելոցն, որ արար զտումարս հոռմայեցոց, սա սկիզբն արարութեան զապրիլի Ա. (1) ն ասաց և յապրիլի Դ. (4) ն՝ ստեղծեալ զԼուսինն կատարեալ, ի լրման ձևի: Եւ յետ սորա Եփրեմ Խորին ասորի՝ ԺԱ. (11) ն աւուր ըստ քանակութեան լուսոյ և յանկատար ձևի:

Արդ, ցուցցուք զմտածութիւն սոցա, այլև զուղղութիւնս և զսխալանս, և ապա զհաւաստին՝ յիմաստասիրացն էասանց:

¹ Սաղմ. ԺԳԳ:

Արդ, առաջին՝ որք մերձ և անկատար ասացին, այսպիսի մտօք ասացին եթէ ըստ կարգի բնութեան նախ ծնանելն է և ապա աճամբք ի կատարումն հասանելն: Եւ վասն այսմ պատշաճ էր, զի Արարիչն զԼուսինն միօրեայ ստեղծանէր ըստ ծննդեան կարգի, զի գտանիցի 5 Լուսինն մերձ Արեգականն և ի միում կենդանակերպի և յարևմուտս կոչս: Սոքա զայս ուղիղ ասացին, զի ի միում կենդանակերպի և ի շաւղի լիցի ի ստեղծմանն, բայց զի անկատար ասացին, որ է միօրեայ և մերձ Արեգականն յարևմուտս կոչս ըստ այժմու ծննդեանս՝ զայս յոյժ սխալեցին:

10 Երկրորդ՝ զի ոմանք հեռի և կատարեալ ճառեցին և սոքա այսպիսի մտօք ասացին, թէ վասն զի սկիզբն էր արարչութեան, ոչ վայելէր ըստ կարգի ծննդեանն անկատար ստեղծանել, այլ կատարեալ և հեռի Ե. (5) կենդանակերպի և յարևելս, զի ի լրմանն ստեղծաւ, որպէս և այժմ ըստ կարգի է տեսանել, քանզի ի լրմանն յերկոչս և յարևելս երևի և Ե. (5) կենդանակերպի հեռի: Զհեռիսն կրկին կերպի իմա. Ա. (1)՝ ըստ ճանապարհին և Բ. (2)՝ ըստ կենդանակերպիցն: Սոքա, զի կատարեալ ասեն ստեղծեալ և յարևելս, և զհեռիսն՝ ըստ ճանապարհին, այս ուղիղ է: Բայց զի զԵ. (5) ն ըստ կենդանակերպիցն հեռի ասելով թիւր և սխալ է բազում կերպիւ. նախ, զի ի մի շաւղ ընթացան Արեգակն և Լուսին յաւուրն ստեղծման, և սոքա հեռի ասեն Ե. (5) կենդանակերպիւ, երկրորդ՝ զի Արեգականն տարուոյն սկիզբն իւրն է և ըստ Լուսինն՝ Կոչսն է, երրորդ՝ զի թէ ի նոյն աւուրն դառնայր լոյսն ի ժողով իւր, անպատշաճ էր, և թէ ընթանայր զԺԴ. (14) վասն ծննդեանն ըստ կարգի արշաւանին ի կենդանակերպսն, մերձենայր ի կենդանակերպ Արեգականն և անդ առնոյր զլրումն, որպէս այժմ ծննդեանն առնու, և լինէր մեծ սխալումն, շորրորդ՝ զի թէ զԺԴ. (14) նն ի նոյն կենդանակերպի ընթանայր զծննդեանն կարգ, յայնժամ առանց արշաւանի մնային այլ կենդանակերպն:

30 Երրորդ՝ զի ասաց Արիստէս ի լրմանն ստեղծեալ զԼուսինն, և յապրիլի Գ. (4) ն զլրումն առաջին. այս ուղիղ է, բայց զի զսկիզբն արարչութեան յապրիլի Ա. (1) ն ասաց՝ սխալ է, զի առ օրին ցուցանէ դառնալ զԼուսինն ի ժողով իւր և կորուսանէ զթիւ աւուրց ծննդեանն ԺԴ. (14) Լուսինն:

35 Զորրորդ՝ սուրբն Եփրեմ մետասանօրեայ ասէ ստեղծեալ զԼուսինն, զոր ոմանք ընդդիմանան սրբոյս մեղադրական բանիւ, զի ոչ

ուղղակի իմանան զմիտս սրբոյն. ասեն եթէ ի շորրորդումն աւուր ստեղծաւ Լուսինն և աստի է ԺԱ. (11) օրն, որ ասէ վասն Լուսինն: Քաւ լիցի կարծել զայս ի վերայ սրբոյն, եթէ յառաջ քան զգոյնաւ աւուրց աւուր ստեղծարանէ, այլ զմետասան աւուրս ըստ ձևոյ և քանակութեան աւուր ասէ և ոչ ըստ գոյացեալ աւուրց: Եւ զԴ. (4) օրն ըստ Արեգականն ունել ասէ և զԺԱ. (11) յաղագս լուսալիրն դոլոյ, որպէսզի առ շորիւքն եղիցի ԺԵ. (15) և զնոյն ԺԱ. (11) թիւս ամի ամի յաւելուլ ասէ ԺԹ. (19) մասամբք քան զԱրեգակ, ուստի լինին վերագիրք և ԺԹ. (19) երեակք: Բայց թէպէտ պատկառելի է մեզ ի սրբոյս, զի յէասանց եկեղեցոյ մին ասէ, և ոչ ընդդիմանամբ յանդրանաբար, քաւ և մի լիցի, բայց նուազ ունի դտեսութիւն Գ. (3) կերպիւ: նախ, զի ԺԱ. (11) աւուր ստեղծեալ ասել անկատար ցուցանէ զԼուսինն, երկրորդ՝ զի թէ սկիզբն արարածոցս լինելութեան մարտի ԺԷ. (17) տաս, որպէս և է, առաջին լրումն մարտի ԻԴ. (24) ն զայ, և այս ոչ է ուղիղ. զի թէպէտ առաջինքն զզուրիս շրջանին յապրիլի Բ. (2) ն ասացին, բայց մարտի ԻԴ. (24) ոչ որ ասաց բնաւ: Իսկ թէ զապրիլի Ա. (1)՝ որպէս ասաց Արիստէս, յայնժամ Լուսինն ի լրմանն զԺԴ. (14) աւուրսն ծննդեանն զոյացութեամբ և ներգործութեամբ ոչ ունի, այլ ըստ քանակութեան լուսոյն, յորում և ոչ աչս է ուղիղ: Երրորդ՝ զի զԺԱ. (11) թիւ վերագրին առանձին Լուսինն տայ, զոր Արեգականն և Լուսինն ցուցաւ ի վերոյ:

Եւ մի պակասութիւն երևեսցի սրբոյս այս, զի յատուկ է վարդապետաց կարծեօք մերձ լինել ի ճշմարտութիւն, որպէս ասէ սուրբն Գրիգոր Նարեկացի վասն Քրիստոսի «ոչ թէ ուարբի անուանեմ, որ վարդապետացն է պատիւ կարծողական զիսկն գիտելոյ, այլ Տէր երկնի և երկրի հաւատամ»¹⁰): Զի և այս անհասութեան խորոցն Աստուծոյ է՝ ծածկել զիմաստութիւն և ըստ պատշաճ ժամանակի և զիմաց շարչարանօք խնդրողացն յայտնել զճշմարտութիւն իմաստիցն, զի դժուարագիւտ լինելովն առաւել ազնուացի, զի ունօղքն առ ի պահել զնա յարթութեամբ զգուշացին, զի մի՛ դիւրաւ դտանելին դիւրաւ արհամարհելի լիցի:

Մանիր աստ, զի ի լնուլ երկերիւրեկին Անդրէասայ եկեղեցիք բրիստոնէից զամս ինն մեծ տառապանս կացեալ, վասն զի շփոթեցան ամենայն կանոնեալքն յԱնդրէասայ և այլ ոչ կարէին ուղղել, թէպէտ և յոյժ ջանացին: Ուստի էաս իմաստասէրն Աղեքսանդրացի և ուշիմն ի նուրբ քննութիւնս, ձայն արկեալ կոչէ առ ինքն զարս

կորովամիտս ի բազում աշխարհաց և մտեալ ի քննութիւն այսմ իրի նորօր հանդերձ և գոչելով հառաչմամբ ի խորոց սրտի աղաղակէին՝ առ Աստուած առ ի յայտնել զաստուածային արհեստն իւր, զոր եզ յարշաւանս լուսաւորացն: Ուստի գթացեալ մարդասէրն և ողորմածն՝
5 Աստուած և բաց զմիտս նոցա, որպէս զառաքելոցն, և զՅ. (6000) ամեան ծածկեալ զհտութիւնս ի բազում խնդրողաց յայտնեաց նոցա: Արդ, էասանքն հաւանեալ այսմ կարծեաց և միաբանեալ ասեն՝ զլուսինն կատարեալ ստեղծեալ և առ օրին ոչ դարձեալ ի ժողով իւր, այլ զԺԴ. (14) ի նմին լուսաւորութեան կացեալ և ապա զլրումն առեալ յապրիլի Դ. (4) ն: Եւ այսմ վկայեն մեկնիչք տումարաց, թէ անվայելուչ էր մեծի արարչութեան և արուեստաւորութեան բանին՝ զկատարեալ իւր գործ, անդրէն վաղվաղակի առ օրին դարձուցանել յանկատարութիւն և ի նուազութիւն, այլ պատշաճ էր և ի դէպ անսալ թողուլ զնա մինչև յօրն ԺԵ. (15) երորդ ի նմին լուսաւորութեան, զի
15 ի ԺԵ. (15) երորդի սկսանիցի դառնալ ի ժողով իւր, որպէս և այժմ՝ ըստ բնութեան կարգին տեսանի: Արդ, ահա յայտնի եղև եթէ վարդապետք եկեղեցու յ հոլլք իմաստասիրաց անտարակոյս հաստատեցին զլուսինն կատարեալ ստեղծեալ և ԺԴ. (14) ն ի նմին լուսաւորութեան պահեալ վասն կարգի ծննդեանն և ապա զլրումն առեալ
20 և ամփոփեալ այնուհետև ըստ կարգի բնութեան զլոյսն ի ծոց պատենիցն ի ժողով իւր:

Հարցումն.— Զարշաւանս ընթացիցն զիարդ՞ կատարեալ, խընդրեմ ուսանել:

Պատասխանի.— Իմա զայս, զի ոմանց այսպէս թուեցաւ ընթացիցն կարգ. եթէ զԺԴ. (14) աւուրսն յամելով ընթացաւ լուսինն՝ յարեալս, զի ըստ կարգի բնութեան այս է ընթացիցն կարգ լուսինն, զի ի լրմանն յարեալս կոյս յամելով զայ լուսինն մինչև ի ԺԴ. (14) ն ի ներքին կիսագնդէն ի վեր, որպէս ի ծննդեանն յամելով իջանէ ի վերին կիսագնդէս ի ներքինն, մինչև ի ԺԴ. (14): Եւ զայս յաղագս այն ասացին, եթէ լուսինն ի լրմանն ստեղծաւ և այս է ընթացիցն կարգ, պարտ է, զի յամելով գայցէ յարեալս: Բայց ոչ է հաւանական, այլ յոյժ սխալ և անմտութեան բանք, զի թէ այսպէս լեալ էր, մինչև յաւիտեան լուսինն զվերին կիսագունդն ոչ լուսաւորէր ի լրմանն, այլ զներքինն, և մնայր վերինս խաւար: Եւ զիարդ՞ իշխան զիշերոյ
30 արար զնա Աստուած, յորժամ ոչ լուսաւորէր զվերին կիսագունդս: Բայց այս է ճշմարիտն, որպէս ասեն մեկնիչք, եթէ զԺԵ. (15) օրն

զարեւելեանն ունէր տրամագիծ, զի ընդ մտանելն Արեգականն ելանէր լուսին և զգիշերն ողջոյն լուսաւորէր, ապա մտանէր ընդ երկրաւ, որպէս և այժմ տեսանեմք ի լրմանն:

Հարցումն.— Եւ երբ յեկաւորն և ի խեցդետինն ընթանայր լուսինն, որ երկարանայր ճանապարհն լուսինն, զի ի սոսա ի ԺԵ. (15) ժամն ընթանայ, զիարդ՞ ընդ Արեգական մտանելն ելանէր լուսինն յարեալս, զի Արեգակ ի հասարակական կէտն ընթանայր ի
5 հոյն, և ԺԲ. (12) ժամ էր ճանապարհն նոցա:

Պատասխանի.— Ծանիր, զի օրն ընդ տիւ և ընդ գիշերն ԻԴ. (24) ժամ է, զի ի ԺԵ. (15) ժամէն զԳ. (3) ժամն ի տիւն ընդ Արեգական գնայր ի վերին կիսագունդս և հասանէր ի կէտն արեւմտից և մնայր լուսինն Բ. (9) ժամէն ճանապարհ ի ներքին կիսագունդն և ընդ Արեգականն՝ ի վերին կիսագունդս, ապա ընդ մտանել Արեգականն ելանէր լուսինն և զգիշերն ողջոյն լուսաւորէր: Եւ զայս ընթացք վասն հարկի լրմանն հաւանել արժան է, զի ի լրումն ԺԵ. (15) աւուրն գտցի ելք լուսինն յարեալս ի մտանելն Արեգական, զի զգիշերն ողջոյն լուսաւորեցէ, որպէս և յայժմուս տեսանի և ըստ կարգի բնութեան, որով երեւեցի իշխան զիշերոյ ըստ հրամանին Աստուծոյ, զի այն սակս արարաւ: Եւ ապա սկսանիցի դառնալ ի ժողով իւր և այնուհետև յամելով զայ յարեալս կոյս, զի կարգ արշաւանին մի՞ այլալեացի, որպէս և Տէրն առ խաչելութեամբն զկարգ արշաւանին անսխալ պահեաց: Եւ յաղագս այսմ պատճառի և մեծն Յեսու զերկոսինն կացոյց և արգել ընթացից:

Եւ այժմ աստ ուսիր, զի Դ. (4) կերպիւ գեղեցիկ և հաւանական է բան էասանցն. նախ զի յասելն «կատարեալ ստեղծանիլ» բառնայ զանկատարութիւն լուսինն և կատարեալ ի մէջ համացեղիցն երկի ընդ նոսա և այլոց եղանակաց կատարեալ արարչագործեցելոց: Երկրորդ՞ յասելն զԺԴ. (14) ն մնալ ի նոյն լուսաւորութեան՝ բառնայ զանվայելութիւն ի մեծի արարչութենէն Աստուծոյ, որպէս ասեն
30 մեկնիչք, թէ անվայելուչ էր Աստուծոյ՝ առ օրին անդրէն վաղվաղակի դարձուցանել յանկատարութիւն և ի նուազութիւն: Երրորդ՞ զի ընթանալ ըստ կարգի զկենդանակերպսն անսխալ բերէ զկարգ արշաւանին ըստ ծննդեանն կարգի և ցուցանէ զլուսինն ի ստեղծմանն ընդ Արեգականն ի միում շաղի և կենդանակերպի: Չորրորդ՞ զի
35 զլրումն ԺԴ. (14) ին լիակատար բերէ յապրիլի Դ. (4) ն, ընդ որում՝ զլուսն շրջանին եզին:

Հարցումն.—Զիարդ^օ է, զի ոմանք յապրիլի Բ. (2) ն ասացեալ են զլրումն առաջին:

Պատասխանի.—Գիտելի է, զի զայս նախագոյնքն և առաջինքն հոռոմոց իմաստասիրաց զսկիզբն լրմանց Լուսնոյ Զատկաց յերկուսն ապրիլի եղին և անտի հրամայեն առնել սկիզբն հնգեկի և վեցեկի, և ոչ ոք կարէ հակառակել, քանզի բերէ ժԳ. (14) զաւուրս Լուսնոյն և ըստ անուանն ամենայն ուրեք յամենեցունց յաճախագոյն ասելոց յոյժ է պատեհագոյն և դիպաւոր: Բայց զի գտանի անդ և յամենայն իսկ քանիս լրման Լուսնոյ Զատկաց աւելի, քան զժԳ. (14) Լուսնին, զի զժԶ. (16) լինի, ըստ որում տեսեալն լինի և իմացեալ, թէպէտ և անուանն նոյն պատահեցաւ յիմաստասիրաց ժԶ. (16) ասել ժԳ. (14) ն և պատահեցցի յաւիտեան, և մի ոք համարձակեսցի հակառակել վասն անուանն, թէ ընդ էր^օ է ժԶ. (16) ն ասել ժԳ. (14): Բայց իմա, զի ժողովք իմաստասիրացն էասանց յԱղեքսանդրացւոց քաղաքին եղին սկիզբն և զլուսն Շ. (500) եկին ոչ զԲ. (2) ն ապրիլի ամսոյ, այլ զԳ. (4) ն, զի թէպէտ զնոյն կարգն կալան և պահեցին ամբողջ զժԹ. (19) երեկին և ոչ նորոգածեւ ինչ ասացին զառաջինն, բայց սակայն ոչ անտի զսկիզբն արարին արուեստին, քանզի հանապազ երկու թուով պակաս գտանին բովանդակ տարւոյն աւուրք Լուսնին, այլ և վերադիրք և լրմունք Զատկաց քանզի ժԶ. (16) ն ժԳ. (14) գոլ ցուցանէ և զնոյն թիւ երկուցոց ցանկ պակաս բացաբերէ յամենայն ուրեք: Իսկ այն, որ յապրիլի Գ. (4) ն թէպէտ և ոչ զանունն, զի ժԶ. (16) է և ժԳ. (14) անուանի, սակայն զէութիւն ցուցանէ ստուգապէս և քաջ է էութիւն իսկական, որ է ժԶ. (16) աւուր, Լուսնին քան զանուն պիտակ, որ կոչի ժԳ. (14), և ոչ ունի զաւուրքն ի լրման:

Եւ դարձեալ, զի էութիւն առաջին է, քան զանուն, զի նախ պարտ է էանալ և ապա անուան հանդիպիլ: Եւ դու ի սոսկ ի պիտակ անունն մի պատրիլ, որ սովորաբար ժԶ. (16) լրումն Զատկաց ժԳ. (14) ն անուանեցաւ, թէ ի վերայ շորիցն ապրիլի և թէ ի վերայ երկուցն, զի ժԳ. (14) ն ասի, զէութիւն աւուրցն ժԵ. (15) աւելի ունի, իսկ որ պարտ է հայել, որ հաւաստին է և ճշմարիտ: Զի որ ապրիլի Գ. (4) ն ժԳ. (14) ն ասի, զէութիւն աւուրցն ժԵ. (15) աւելի ունի, իսկ որ յերկուսն ապրիլի՝ միայն սոսկ զանուանակոչութիւն ունի, զի ժԳ. (14) ն ասի, բայց զաւուրսն ոչ ժԵ. (15): Անուանի և վասն այսորիկ յորժամ զլուսն շրջանին յապրիլի Բ. (2) ն լինի, լրումն Զատկաց և

բովանդակ տարւոյն, այլ և վերադիրն Բ. (2) թուով պակաս գան: Իսկ յորժամ յապրիլի Գ. (4) լինի զլուսն շրջանին, էութեամբ ունի զաւուրս Լուսնին զլրման Զատկաց և զբովանդակ տարւոյն, նաև զվերադիրս: Եւ վասն զի էութիւն պատուական է, քան զանուն, զի զճշմարտութիւն ունի յինքեան, և վասն այն զգլուսն բոլորին յապրիլի Գ. (4) ն եղին հոյլք հանճարասիրացն էասանց:

Հարցումն.—Զարմանալի իրս իմն աստ երևի, զի յապրիլի Գ. (4) ն վերադիրն ժԱ. (11) է և յապրիլի Բ. (2) ն վերադիրն ժԳ. (13)¹¹). զիարդ^օ վերադիրն սորա Բ. (2) թիւ պակաս է, զի ժԳ. (13) ն քան զժԱ. (11) ն Բ. (2) թիւ աւելի է, աղաչեմ բացայայտել զպակասս զայս:

Պատասխանի.—Գիտեա, զի պակասն կրկին կերպիւ ասի. զի է աւելի պակաս և է պակաս պակաս, և երկոքեանքս են պակաս: Զի ըստ աստուածադիր սահմանին Լուսնին ժԱ. (11) օր ունի պակաս և յորժամ ժԳ. (13) ն լինի վերադիրն, որպէս այժմ ունի, Բ. (2) թիւ այլ աւելի պակաս ունի, քան զժԱ. (11), և թե Թ. (9) լինի վերադիրն, որպէս այնժամ ունէին¹²), յայնժամ քան զժԱ. (11) պակասն Բ. (2) թիւ այլ ի խոնարհ լինի պակասն: Եւ այսքան զժԱ. (11) պակասն այլևս ասի պակաս և երկոքեանքս յաջմէ և յահեկէ պակասեցուցիչք և ապականիչք են աւուրց Լուսնին և վերադիրն, յորժամ ապրիլի Բ. (2) ն զլուսն շրջանին եղիցի: Վասն այն անտարակոյս զապրիլի Գ. (4) ն զլուսն շրջանին գիտիցես ըստ էասանց, զի անպակաս և անաւելորդ ունի զբովանդակ տարւոյն զաւուրս Լուսնին, այլ և զլրումն Զատկաց և զթիւ վերադիրն: Քանզի ասեն զժէ. (17) մարտի ամսոյ առաջին օր գոլ արարչութեան, և է այսպէս, և ի շորորդումն աւուր զլինելութիւն լուսաւորացո, ապա և դիպողագոյն առաւել ևս է զօրն շորորդ ապրիլի ամսոյն կարծել զիպիլ լրման Լուսնոյն: Քանզի ի ներկայէս երևին երկոքին՝ ոչ միայն անցեալն, այլ և ապանին, զի այժմ յորժամ լինի ծնունդ ընծայութեան Լուսնոյն ի Ի. (20) ն մարտի ամսոյ ընդ երեկոյս, գտանեմք զօր լրմանն ի Գ. (4) ն ապրիլի, իսկ յերկուցն ապրիլի կարծել զլրումն, անէ ի մարտի Ի. (20) էն ժԲ. (12) օր և զիշեր մի, որ յայտնապէս երևի պակասութիւն երկու թուոյն ի ժԵ. (15) երորդ Լուսնէն: Արդ, վասն շորիցն ապրիլի շատ ասացի այսքան, զի թէ զսորա կատարեալ խնդիրն արասցուք, կարի յերկարի ի վերայ նորամուտ ուսումնասիրաց և այնուհետև

դժուարութիւն իրին զարհուրեցուցեալ ի բաց փախուցանէ յուսմանէ զոչ ներհմտացեալն միտք:

ՎԱՍՆ ԿԵՆԳԱՆԱԿԵՐՊԻՑՆ

Բազում ինչ պիտանացու է ի վարդապետութիւն սոցա, սակայն 5 արգելու զմեզ երկարութիւն բանիցն վասն ծանր լինելոյ մանկանց նորավարժից, վասն որոյ համառոտաբար ճառեցից սակաւուք պատճառս տալով իմաստուն մտաց, որ ի սակաւէն զյոլովս մտաբերէ: նախ տեսցուք, թէ վասն էր՞ ասին կենդանակերպք, երկրորդ՝ 10 թէ վասն էր՞ այսպիսի անուամբ յորչորջեցան, երրորդ՝ թէ վասն էր ժԲ. (12) թուով բովանդակեցան, շորրորդ՝ կրականք են, թէ ներգործականք, հինգերորդ՝ յինքեանց շարժին թէ յայլմէ, վեցերորդ՝ թէ որք զոր կէտ ունին յեղանակս տարւոյն, եօթներորդ՝ թէ որոց մասին աշխարհի են տիրողք, ութերորդ՝ թէ ի վերայ որոց իրաց իշխանութիւն ունին, իններորդ՝ թէ որք են արականք և որք իգականք, տասն 15 ներորդ՝ զթիւ որքանութեան աստեղաց սոցա:

Վասն առաջնոյն գիտելի է, թէ կենդանակերպք վասն այն ասին, զի հասարակաբար սորա ամենեքեան հոմանունք են՝ խոյն, Յուլն և այլն: Եւ վասն զհոմանունութիւն որոշելոյ կոշեցան կենդանակերպք իմաստասիրացն, զի միգուցէ յորժամ լսիցես խոյ, Յուլ, կարծիցես, 20 թէ նորա յերկինքն կենդանիք են, որպէս սորա, որ յերկրի են ներշնչական զգայական: Ոչ ասէ կենդանիք, այլ կենդանակերպք, իբր թէ ըստ յարմարութեան նմանք են կենդանեաց ըստ ձևոյ ինչ և ներգործութեան, և ոչ կենդանիք:

Երկրորդ՝ ասելի է, թէ վասն էր այսպիսի անուամբ յորչորջեցան՝ 25 խոյ, Յուլ և այլն: Ասեմք, թէ վասն կրկին պատճառի. նախ ըստ նմանութեան, երկրորդ՝ ըստ ներգործութեան: Եւ է ըստ նմանութեան, զի կենդանակերպքս, յոր ինչ կենդանոյ անուն որ անուանեցան, ունին զմասին ինչ անդամոց զնմանութիւն կենդանացն այն: Զի որ խոյ ասի, զխոյին զմակին զնմանութիւն ունի որպէս բազմաստեղն, և Յուլն՝ զեղջերուացն և խեցգետինն՝ զտոբիցն, այսինքն 30 զկողմնաւոր աստեղքն յաջ և յահեակ, Առիւծն՝ զգլխոյն, Կշիռն՝ զնժարի, այսպէս և զայլսն յաստեղացն ճանաչիցես, իսկ Վիշապն՝ զլուխն բերանաբաց կզակօք: Իսկ ըստ ներգործութեան որ անուա-

նեցան, ոչ եթէ յինքեանց ներգործութեանէն, այլ յարեգականային ներգործութեանցն, զի Արեգակ ի սոսա ընթանալով ըստ զանազան ներգործելոյն՝ զայսպիսի անուանքս առ ընկալան կենդանակերպքս այս: Զի խոյ ասացաւ վասն ծննդականութեան, զի գալով Արեգակն ի սա, 5 շարժէ երկիր ի ծննդականութիւն բուսոց և խոտոց, անկոց և ծառոց, այլև կենդանեաց: Եւ Յուլ՝ որ առաւել ունի ծննդականութեան զօրութիւն, քան զխոյն, զի Արեգակ ի սա գալով առաւելու ի ջերմութիւն և կապէ զծղօտ բուսականացդ և զպտուղս տնկոց: Իսկ Եկաւոր՝ զի Արեգակ ի սմա գալով զվաղահաս պտուղս ծառոց բերէ ի եկ և զդաշտային արտորայսն ի հունձս, և ասի յաւուրքս յայս, թէ նորն եկաւ: Եւ դարձեալ՝ զի կենդանակերպս այս Բ. (2) ասող է և ըստ սմա ասի Եկաւոր: Իսկ խեցգետին, որ է խաչափառն՝ զի Արեգակ ի սա կողմնաւոր ունի զընթացս իւր և խոտորնակն՝ յաջ և յահեակ բարձրանալովն և խոնարհելովն: Իսկ Առիւծ՝ զի Արեգակ ի սմա բարկ է և գազան, իբրև զառիւծ: Իսկ Կոյս՝ վասն անծննդականութեան, զի ի սա 35 ժամանելով Արեգականն այլ ոչ է հնար երկրի զտարւոյն պսակն կրկին պտղաբերել: Իսկ Կշիռ՝ վասն հաւասարութեան ըստ բազում յեղանակի. զի Արեգակ ի սմա գոլով նախ կշիռ ունի զկենդանակերպսն հանդէպ միմեանց յարեւելս և յարեւմուտս կոյս, երկրորդ՝ վասն լուսոյն, զի ի խոյնէն ելեալ Արեգակն ունի զշառաւիղս լուսոյն ըստ ուղիղ գծի յառաւօտուն ի վերայ Կշիռն յարեւմտական կէտին և յերեկոյին՝ յարեւելեան կէտին: Նոյնպէս իմա և ի վերայ խոյին, յորժամ ի Կշիռն ելանէ: Երրորդ՝ ըստ ժամուց տուրնչեան և գիշերոյ ժԲ. (12) լինել տուրնչեանն և ժԲ. (12) գիշերոյն, շորրորդ՝ ըստ ջերմութեան և ըստ ցրտութեան զմիջակն ունելով երկուց առաւելութեանց՝ այսինքն զջերմութեան և զցրտութեան, հինգերորդ՝ ըստ ընդունակութեանց սերմանց, զի երկիր հաւասար և կշիռ ընդունի զսերմանիս ի գարնան և յաշնան, վեցերորդ՝ ըստ կենդանակերպիցն, զի կշիռ ունին զկենդանակերպսն՝ Ե. (5) յաջմէ և Ե. (5) ի ձախմէ, 30 եօթներորդ՝ ըստ առաւել ներհակ որակացն երկուց եղանակացն, զի գարնան եղանակն ունի զառաւել ջերմութիւն ամարան առաջի իւր, իսկ աշնանն զառաւել ջերմութիւն ձմեռան, ութերորդ՝ ներհակ ներգործութեամբ, զի Արեգակ ի խոյն գոլով շարժէ զերկիր ի պտղաբերութիւն և ի Կշիռն հաւասար ընդդէմ նմին յանպտուղութիւն, իննե- 35 րորդ՝ ըստ ընթացից ընդդիմաբար ծայրիցն, զի ի խոյն գոլով ընթանայ զվերինն ծայր և ի Կշիռն՝ զներքինն, տասներորդ՝ ըստ խըն-

դուժեան և տխրական ներգործութեանց, զի ի գարնան Արեգակս
զխնդութիւն ներգործէ կենդանեաց վասն ընդարձակութեան ամա-
րան, և Կշիռն նման սմին զընդ դէմն առնէ յաշունն տխրութիւն՝
վասն ծանրութեան ձմերանն: Իսկ Կարիճ՝ զի կարիճն ի վերջ տտանն
5 ունի զխայթոցն և հարեալ տտամբն տկարացուցանէ զմարդիկ, և
Արեգակ ի սոյն կենդանակերպոջս ի վճարն, որ է վերջըն, զանպատ-
րաստսն և զմերկսն հարեալ ցրտութեամբ և վաղվաղակի տկարա-
ցուցանէ: Իսկ Աղեղնաւոր՝ վասն սաստկութեան, զի որպէս նետ յա-
ղեղնէ ելեալ և հարեալ զմերկ մարդ, առժամայն սպանանէ, այսպէս
10 և Արեգակ ի սմա լինելով, սաստիկ ցրտութիւն ձմերանն հարեալ
զմերկսն ի մարդկանէ վաղվաղակի մահ գործէ: Իսկ Զրհոս՝ զի ի
սմա գոլով Արեգականն խոնաւութիւնք տիրեն երկրի և ձիւնաբերու-
թիւնք առաւել հոսի և տեղայ ի վերայ երկրի: Իսկ Զուկն՝ վասն զի
որպէս ձուկն ի մէջ ջրոց և ծովուց ունի զշարժումն իւր, նոյնպէս և
15 Արեգակ ունի յայսմ կենդանակերպոջս գոլով կենդանիք, որպէս ի
մէջ ջրոց և ծովուց շարժին յերկրի, զի անձրեք և հալումն ձեանց
ծովացուցանեն զաշխարհս:

Երրորդ՝ ճառելի է յաղագս ժԲ. (12) թուով բացակատարիւ սո-
ցա. նախ ըստ գոյաւորութեան մարդոյն, զի մարդ յԺԲ. (12) անդա-
մոց կազմեցաւ և ժԲ. (12) զգայութեամբ զարդարեցաւ, նոյնպէս և
20 երկինք ժԲ. (12) կենդանակերպօք սահմանեցաւ և զարդարեցաւ:
Երկրորդ՝ ըստ բաժանման երկրի, որ յԺԲ. (12) մասն բաժանեցաւ
ըստ անդամոց մարդկան: Երրորդ՝ ըստ խորհրդաւոր թուոյ, զի ժԲ.
(12) էին թիւք նահապետացն և ազգքն Իսրայէլի և ազբիրքն յԱղի-
մայ և ջուրն, որ ի վիմէն յԺԲ. (12) առուս բաժանէր ըստ իւրաքան-
չիւր ցեղիցն բանակելոյ, և ակունք Վակասին և ներքին և արտաքին
կողմունք տախտակացն տապանակին և քարինքն Յորդանանու
եղեալն և հանեալն և մարգարէքն և առաքեալքն և պսակք աստեղաց
ի գլուխ Կուսին, կարգ հրեշտակաց և մարդկան և պտուղ կենաց ծա-
ռոցն և ամիսք տարւոյն և ժամք աւուրն և ըստ ժԲ. (12) կատարեալ
30 թուոյ: Եւ զի յայտնի է ամենեցուն, որ մէջն երկուց ծայրիցն հաղոր-
դին, և է հաստատութիւնս մէջ և անջրպետ, վերինն երկնի և ստո-
րինս երկրի, պատշաճ էր, զի խորհրդաւոր և պատուաւոր թուովս հա-
ղորդ գտանէր Աստուծոյ:

35 Զորրորդ՝ խնդրելի է, թե կրականք են, թէ ներգործականք: Արդ,
ըստ այնմ, զի տեղիք և ճանապարհք են ընթացից մոլորակացոյ՝

կրականք են, իսկ ըստ լուսաւորելոյ զգիշերս՝ ներգործականք են:
Դարձեալ՝ ըստ ունակութեան լուսոյն կրականք են և ըստ ազդեցու-
թեան զօրութեանցն առ ստորինս՝ ներգործականք են:

5 Զինգերորդ՝ տեսցուք, թէ յինքեանց շարժին, թէ յայլմէ: Գի-
տելի է, զի յինքեանց շարժին երկինք և գօտիք, իսկ սորա՝ յայլմէ,
զի որպէս բեռն ի տախտակի ամրացեալ, այսպէս և սորա ի հաս-
տատութիւնդ, և նա ըստ ինքեան շարժէ գոսոսա:

Վեցերորդ՝ տեսցուք թէ որք զոր կէտ ունին ի յեղանակք տար-
ւոյն: Խոյն, Յուլն և Եկաւորն՝ զգարնան, և այլքն ըստ կարգի:

10 Եօթներորդ՝ թէ որոց մասին աշխարհի են տիրողք. Խոյն՝ պար-
սից, Յուլն՝ բաբելացոց, Եկաւորն՝ գամրաց, և այլն ըստ կարգի, որ
ի Պատճէնն պատմի¹³).

Ութերորդ՝ Խոյն ունի իշխանութիւն հողմոյն հարաւոյ, Խեցգե-
տինն տիրէ հողմոյն հիւսիսոյ, Աղեղնաւորն՝ դառնաշունչ հողմոյն
15 արեւմտից, և Այծեղջիւրն՝ արեւելից և այլն:

Իններորդ՝ թէ որք են արականք և որք իգականք: Գիտելի է, զի
2. (6) ն արականք են և 2. (6) ն իգականք. Խոյն, Եկաւորն, Առիւծն,
Կշիռն, Աղեղնաւորն, Զրհոսն—սորա արականք են, Յուլն, Խեցգե-
տինն, Կոյսն, Կարիճն, Այծեղջիւրն, Զուկն—սորա իգականք են¹⁴):

20 Տասներորդ՝ զթիւ որքանութեան աստեղացն. արդ, Խոյն է. (7)
աստղ է, Յուլն՝ ժԲ. (12), Եկաւորն՝ Բ. (2), Խեցգետինն՝ ժԳ. (13),
Առիւծն՝ ժ. (10), Կոյսն՝ Գ. (3), Կշիռն՝ Գ. (3), Կարիճն՝ Լ. (30),
Աղեղնաւորն՝ 2. (6), Այծեղջիւրն՝ Գ. (3), Զրհոսն՝ 2. (6), Զուկն՝
Բ. (2)¹⁵):

25 Արդ, զհամառօտն, որ գրեցաք գոսոսա, զայն գտցես ի տումա-
րատետրերն զեղանակաց տարւոյն, զմասանց երկրի և զիշխանու-
թիւն ի վերայ որոց:

Հարցումն.—Զինչ՞ հասարակութիւն ունին սորա և կամ զինչ
զանազանութիւն:

30 Պատասխանի.—Առաջին հասարակութիւն, զի ամենեքեան կեն-
դանակերպք ասին, իսկ զանազանութիւն, զի ոմն Խոյն և ոմն Յուլ
կոշի, երկրորդ հասարակութիւն, զի ամենեքեան ճանապարհ են ըն-
թացից մոլորակացն, իսկ զանազանութիւն՝ զի ոմանք յեղանակս
գարնան և ոմանք՝ յամարան և այլն, երրորդ հասարակութիւն՝ զի
35 ամենեքեան յերկինս են, իսկ զանազանութիւն՝ զի ոմանք մերձ հիւ-
սիսային կողմանցս և ոմանք՝ հարաւային, չորրորդ հասարակութիւն՝

5 զի ամենեքեան աստեղք են, իսկ զանազանութիւն՝ զի ոմանք առաւել ըստ թուոյ և ոմանք՝ նուազ, հինգերորդ հասարակութիւն՝ զի ամենեքեան տանուտէրք են երկրի, իսկ զանազանութիւն՝ զի ոմն արեւելեան մասին, որ է գլուխ և ոմն՝ ալլում, վեցերորդ հասարակութիւն՝ զի ամենեքեան լուսաւորք են սոքա, իսկ զանազանութիւն՝ զի ոմն քան զոմն առաւել է փառօք ըստ ճառագայթից լուսոյն, եօթներորդ հասարակութիւն՝ զի ամենեքեան հոմանունք են սոքա, իսկ զանազանութիւն՝ զի ոմանք արականք և ոմանք տեսականք և ոմանք քանակական, ոմանք հաւասարական և ոմանք ներգործական, ութերորդ հասարակութիւն՝ զի ամենեքեան իշխողք են, բայց ոմն հողմոյն հարատյ և ոմն ալլում, իններորդ հասարակութիւն՝ զի ամենեքեան յերկնից շարժին, իսկ զանազանութիւն՝ զի ոմանք ի վերին կիսագնդէս յարեւելից յարեւմուտս շարժին, իսկ որք ի ներքին կիսագնդին՝ յարեւմտից յարեւլս, տասներորդ հասարակութիւն՝ զի ամենեքեան սոքա և. (30), և. (30) աստիճան ունին, իսկ զանազանութիւն՝ զի յոմանս զառ ի վեր ունին զընթացս մոլորակքն և յոմանս՝ զառ ի վայր են, և ալլ հասարակութիւնք և զանազանութիւնք, բայց այսքան շատ ասացի:

20 Լարցումն.—Վասն էր՞ է, յորժամ տանուտէր տարուոյ առնեմք, Ե. (5) թիւ ի բաց զնամք ի թուականէն¹⁶⁾:

Պատասխանի.—Հինգ թիւն ոչ է ուղղակի, այլ Գ. (4) ն, զի ի զնել թուականին Աղեղնաւորն էր տանուտէր, քանզի նահանջի առաջի ամ էր: Եւ յորժամ Ե. (5) երթաս, յայնժամ Կարիճն գայ տանուտէր, որ է նահանջի ամ, և շէր ամն նահանջի: Ալլ և այս վասն աւելի թուոյն է, որ ի հասարակածէն եմուտ, զի յորժամ զԳ. (4) ն երթաս, ոչ բերէ ուղիղ զարուեստն, վասն որոյ զաւելի թիւս թուականին ի հետ յարակալին երթայ, որ Գ. (4) է, որպէսզի Ե. (5) գնալովն ուղիղ գտանիցի տանուտէր տարուոյն և սկիզբն ժԲ. (12) իցն ի խոյն լիցի:

30 Լարցումն.—Արեգական յաստիճանս կենդանակերպին կենայ Ա. (1) օր, և Երեւակն՝ և. (30) օր, իսկ Լուսինն՝ Ա. (1) մասն: Այսպէս յամր և արագ ընթացիւք զամենայն մոլորակն տեսանեմք: Արդ, Արեգական զկենդանակերպքն յև. (30) օրն վճարէ ըստ և. (30) աստիճանին, ապա որպէս՞ ի գօտիքն ժ. (10), ժ. (10) օր ընթանայ, զի սորա ժ. (10) աւուր ճանապարհն Երեւակին 3. (300) աւուր է և Լուսինն՝ ժ. (10) մասն են, նմանապէս և ալլքն ըստ իրեանց յամր և արագ ընթանալոյն: Վասն որոյ աղաշեմ ի սէրն Քրիստոսի, թէ որ-

պէս՞ Արեգակն ժ. (10), ժ. (10) օր յամէ առ գօտիսն՝ բացայայտել զայս, զի անհնար երևի իրս այս:

Պատասխանի.—Մածուկ է յայժմու ժամանակի գիտութիւն սորա հասարակ մտաց մերայինս ազին, բայց թէ որ ներհմտիցէ շարաց աստեղաց, աշխատասիրութեամբ հասցէ յարուեստս յայս: Բայց դու այսպէս իմա. զի Գ. (3) են կամարք կիսագնդիս, յորս ընթացումն մոլորակաց լինի՝ ներքին, միջին և վերին: Արդ, ի ներքին կամարէն, որ է Այծեղջիւրն, մինչ ի վերին կամարն, որ է Խեցգետինն, ունի երեսք երկնից յայնութիւն ճԶ. (180) աստիճան: Եւ Զ. (6) կենդանակերպք, որ են ի վերին կիսագունդս և Զ. (6) ի ներքինն՝ ունին յաստիճանս յայս և. (30), և. (30) աստիճան, որ լինի 34. (360), և Արեգակն ի բարձրանալն ընթանայ զճԶ. (180) աստիճանս Զ. (6) կենդանակերպիւ և ի խոնարհիւն զճԶ. (180) աստիճանս Զ. (6) կենդանակերպիւ: Արդ, ուսիր աստ, զի յաստիճանացս յայս, որ կենդանակերպքս ունին և. (30), և. (30) աստիճան անշարժութեամբ, գօտիքս ունին ժ. (10), ժ. (10) աստիճան շարժողութեամբ: Արդ, ի ներքին կամարն ի սկիզբն է Լուսնթագին, և ունի ժ. (10) աստիճան յիշխանութիւն իւր և ալլն ըստ կարգի մինչ ի միջին կամարն, և անդ սկիզբն Հրատն լինի մինչ ի վերին կամարն, և անդ սկիզբն Լուսաբերն լինի, և այսպէս ըստ կարգի մի ըստ միոյ ժ. (10), ժ. (10) աստիճան ունին յելս և յէջս Արեգականն: Եւ դու մի այսպէս իմանալ, թէ որպէս Արեգակն կայ յաստեղս կենդանակերպիցն և. (30), և. (30) օր, նոյնպէս և ի աստեղս որ են գօտիք, կենայ ժ. (10), ժ. (10) օր, զի այս անհնար է: էր՞ վասն. վասն զի կենդանակերպքն անշարժք են ի տեղիս, յոր հաստատեալ են, և սոքա շարժականք, և ի վերայ այսմ, զի յամր և արագ են ընթացիւք: Ալլ յաստիճանս սոցա, որ ըստ կարգի ունին ժ. (10), (10) թուով, Արեգակն յաստիճանքս յայս որ ընթանայ ժ. (10), ժ. (10) օր, եթէ պատահին նոքա և եթէ ոչ, ասի եթէ Արեգակն կենայ ի գօտիքն ժ. (10), ժ. (10) օր, այսինքն յաստիճանսն որ ըստ կարգի ունին գօտիքն: Եւ ըստ այսմ ուղիղ է բանդ՝ «յաստիճանս գօտեացն ընթանալով ի գօտիսն» ասի: Շատ լիցի այսքան համառօտաբար ճառեցեալքս վասն կենդանակերպիցն:

Նախ թէ վասն էր՞ ասին մոլորակը, երկրորդ՝ թէ վասն էր՞ է. (7) թուով պարունակեցան, երրորդ՝ յինքեանց շարժին թէ յայլմէ, չորրորդ՝ ներգործականք են թէ կրականք, հինգերորդ՝ թէ որոց 5 ատուրց և դարուց են տանուտէրք, վեցերորդ՝ թէ որ է առաջին և որ է վերջին, եօթներորդ՝ թէ քանի կենան յաստիճանս և ի կենդանակերպըս, ութերորդ՝ թէ զինչ որակութիւն ունին սոքա, իններորդ՝ թէ որք են արականք և որք իգականք, տասներորդ՝ թէ զինչ հասարակութիւն ունին և կամ զինչ զանազանութիւն:

Գիտելի է, զի սոցա վարդապետութիւն ըստ բոլոր է, ոչ է ըստ տումարական մակացութեանս, այլ աստեղաբաշխութեան, զի հիմն աստեղաբաշխութեան սոքա են ըստ զանազանութեան ներգործութեանց, նաև ըստ կենդանակերպից շարժմանց սոցա: Այլ ի սոցանէ 10 զերկուց լուսաւորացոյ տարրորշեալ զհանգամանս ընթացից է ըստ տումարական արհեստիս, զի ի սոցանէ սահմանեալ եղև տումար՝ 15 զԱրեգակն վասն հասարակաւորութեան, զի յետ այնորիկ շարշարանքն և Յարութիւն Փրկչին, իսկ զԼուսինն՝ զի ի լրման սորա եղև կամաւոր շարշարանքն Քրիստոսի: Վասն որոյ և մեզ զանց առնելի է զըստ բոլորէ խնդիրն, զի այլոց իրողութեան է, մանաւանդ, զի 20 արգելեալ է եկեղեցւոյ բրիստոնէից: Վասն որոյ բուն հարցուք մասնաւոր խնդրոյս, որ ի գործս մեր պիտանի է:

Վասն առաջնոյն ասելի է, թէ մոլորակը վասն այն ասին, զի 5 Ն. (5) ի սոցանէ ուղիղ և մոլար ասին ունել զշափոս ընթացիցն, իսկ Արեգակն և Լուսին՝ ըստ ուղիղ գծի և անմոլար: Երկրորդ՝ զի 25 իմաստասէրք բազում ջանիւք և կատարեալ գիտութիւն սոցա ոչ կարացին լինել հասու, զի ի նուրբ շաւղաց սոցա մոլորէին և զմոլորումն իրեանց ի վերայ գօտեացս անուն եղին մոլորակը, կուշիով յայպէս իբր թէ անհաս է գիտութիւն սոցա ի մարդկանէ: Եւ չէ զարմանք, զի և մարգարէն ասէ, թէ «տեսից զերկինն զգործս մատանց քոց»¹: Երրորդ՝ վասն զանազան փոփոխման նուրբ որակութեանցն ըստ առաւելութեան և նուազութեան ոչ կարեն զցուցումն նշուլից նշանացն իսկապէս իմաստասիրել:

¹ Սաղմ Ը4:

Երկրորդ՝ խնդրելի է, թէ վասն էր՞ է. (7) թուով բովանդակեցան: Նախ ըստ գոյութեան ներքին և արտաքին մարդոյն և ըստ է. (7) զգալութեանցն: Երկրորդ՝ ըստ տարրորշման երկրի, զի յէ. (7) կլէմս բաժանի: Երրորդ՝ ըստ քանակութեան ատուրց և դարուց, զի 5 յէ. (7) որն զլրումն առին եղիլութիւնք եղանակացս, ըստ որում արար և հանգեաւ, և յէ. (7) դարն առնու զվախճան: Չորրորդ՝ ըստ հնոցն պատուիրանազրութեան պատուաւոր է թիւս՝ ալսինքն պահել զօրն է. (7) երրորդ այլ և զամն է. (7) երրորդ, նաև զէ (7) ից է. (7), այլ և զագատարար թիւն յորելեան: Հինգերորդ՝ և ըստ է. (7) աջահեան աշտանակին և է. (7) բերանոյ ճրագացն: Վեցերորդ՝ զի և պատի է. (7) թուոյս երևեցաւ ի Կոյսն Մարիամ և յորդին իւր միածին, զի է. (7) բան խոսեցեալ է Կուսին յաւետարանն և է. (7)՝ Տեառն ի խաչին: Եօթներորդ՝ և ի նորոյ եկեղեցի, զի է. (7) է խորհուրդ եկեղեցւոյ և է. (7)՝ աստիճան քահանայութեան և կրկին է. 15 (7)՝ ամբ սահմանեցաւ աստիճանք հաւատոյ յեկեղեցի Աստուծոյ: Ութերորդ՝ ըստ է. (7) զօրութեան հոգւոյն և է. (7) ազգ ողորմութիւնք են հոգևոր, այլ և մարմնաւոր, իններորդ՝ ըստ է. (7) դասուն անմարմին զուսթնոց զօրութեանց և է. (7) աստեղեան խորանացն: Տասներորդ՝ այլ և զերազանցութիւն պատուաւոր թուոյս երևեցաւ յէ. 20 (7) արփի շնորհօք Հոգւոյն Սրբոյ: Եւ զի գօտիքս մէջ գողով երկակի ծայրից պատուաւոր թուով սահմանեցան քանիօնութիւն սոցա, զի և պատի գեղեցկութեան սոցա ըստ ասեցելոցս երևեսցին:

Երրորդ՝ խնդրելի է և վասն շարժմանց սոցա: Գիտել պարտ է, զի սոքա զշարժմունք յինքեանց ունին և ոչ յայլմէ, զի սոքա ոչ 25 են իբրև զհասարակ աստեղոս, որ հաստատեալ են յերկինս և ի նմանէ շարժին, այլ հեռացեալք են բազում միջոցա յերկնէ և տարանջատեալք են ի միմեանց և ըստ ինքեանց շարժին:

Չորրորդ՝ ասելի է և յայս, զի ոմանք ներգործականք են և ոմանք կրականք և ոմանք՝ ներգործականք և կրականք: Քանզի Երեակն և 30 Լուսինն էգ են և կրական, Լուսնթագն, Հրատն և Արեգակն արու են և ներգործական, Լուսաբերն և Փալլածուն ընդ էգն էգ են և ընդ արուն՝ արու, վասն որոյ՝ կրականք և ներգործականք: Եւ ի սոցանէ լինին ստորնայնոցս գոյից լինելութիւնք և ապականութիւնք, աճելութիւնք և նուազութիւնք:

Հինգերորդ՝ թէ որոց ատուրց և դարուց են տանուտէրք. Երեակն առաջին դարուն էր տանուտէր, Լուսնթագն՝ երկրորդին, Հրատն՝ եր-

ըրրդին, Արեգակն՝ շորրորդին, Լուսաբերն՝ հինգերորդին, Փայլածուն՝ վեցերորդին, Իսկ Լուսինն՝ եօթներորդ դարուա: Այսպէս և զատուրցն կարգն իմա, սկսիք յԵրեւակէն և ի միաշարաթէն:

Վեցերորդ, գիտեա և զայս, զի առաջին է ստորեա Լուսինն և երկրորդ ի վերայ սորա՝ Փայլածուն և այլն ըստ այդմ կարգի մինչև հասանէ յԵրեւակն, որ է է. (7) երրորդ և վերին գօտին:

Եօթներորդ՝ ճառելի է և որքանաբար յամելոյն յաստիճանս և ի կենդանակերպս. Երեւակն Լ. (30) օր կենայ յաստիճանն և Լ. (30) ամիս ի կենդանակերպսն և յԼ. (30) տարին պատէ զկենդանակերպքն, Լուսնթագն ԺԲ. (12) օր կենայ յաստիճանն և ԺԲ. (12) ամիս ի կենդանակերպն և ի ԺԲ. (12) տարին պատէ զամենայնն, Հրատն՝ օր և կէս յաստիճանն և ամիս և կէս՝ ի կենդանակերպն և տարի և կէսն պատէ զամենայնն, Արեգակն՝ Ա. (1) օր յաստիճանն և Ա. (1) ամիս՝ ի կենդանակերպն և ի Ա. (1) տարին պատէ զամենայնն, Լուսաբերն՝ կէս օր յաստիճանն և կէս ամիս՝ ի կենդանակերպն և ի կէս տարին պատէ զամենայնն, Փայլածուն՝ Գ. (3) ժամ յաստիճանն և է. (7) օր և կէս՝ ի կենդանակերպն և յԳ. (3) ամիսն պատէ զամենայնն, Լուսինն՝ Ա. (1) մասն՝ յաստիճանն և Լ. (30) մասն՝ ի կենդանակերպքն և Լ. (30) օրն պատէ զամենայնն:

Ութերորդ՝ ասելի է և վասն որակութեան սոցա. Երեւակին բնութիւն ցուրտ է և շոր և վնասակար և զհողոյ բնութիւն ունի, Լուսընթագն ունի բնութիւն շերմն և գէջ և բարի, Հրատն շերմ է և գէջ, ընդ շարն շար է և ընդ բարին՝ բարի, Արեգակն շերմ է և շոր և բարի, Լուսաբերն շերմ է և գէջ և միջակ, Փայլածուն բնութիւն՝ է որպէս Լուսաբերին, Լուսինն ցուրտ է և գէջ և բարի:

Իններորդ՝ ծանիր զարականն և զիգականն, զոր ասացաք ի շորրորդ համարին՝ առ կրականքն և ներգործականքն:

Տասներորդ՝ ասելի է և վասն հասարակութեան և զանազանութեան սոցա: Եւ նախ վասն հասարակութեան. առաջին, զի մոլորակք կոչին, երկրորդ՝ զի գօտիք ասին, երրորդ՝ զի երկինք անուանին, շորրորդ՝ զի ունին հասարակ շարժումն, որ յԱրփոյն յարեւելից յարեւմտս ձգին, հինգերորդ՝ ունին և յատուկ շարժումն, զի յարեւմտից յարեւելս ձգին, վեցերորդ՝ զի յինքեանց շարժին, եօթներորդ՝ զի ի վերայ ԺԲ. (12) կենդանակերպիցն շարժին, ութերորդ՝ զի նշանք արարածոց են, իններորդ՝ զի ստորնայնոցս մատակարարք և սպասուորք են, տասներորդ՝ զի երկնից զարդարանք են: Իսկ առաջին

զանազանութիւն՝ զի ոմն Երեւակ ասի և ոմն՝ Լուսնթագ, երկրորդ՝ զի ոմն բարձր է և ոմն խոնարհ, երրորդ՝ ոմն յամբընթաց է և ոմն սրընթաց, շորրորդ՝ ոմն քանակաւ մեծ է և ոմն՝ փոքր, հինգերորդ՝ ոմն առաջին է և ոմն վերջին, վեցերորդ՝ ոմն շերմ է և ոմն՝ ցուրտ, եօթներորդ՝ ոմն արական է և ոմն՝ իգական, ութերորդ՝ ոմն ներգործական և ոմն՝ կրական, իններորդ՝ ոմն նշան խոտվութեան և ոմն՝ խաղաղութեան, տասներորդ՝ ոմն իշխան տուրնջեան և ոմն՝ զիշերոյ ըստ լուսաւորութեան: Այսքան առ այս:

ՅԱՂԱԳՍ Գ. (4) ԿԵՏԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՍՑՊ

Երիս իրս տեսանելի է աստ. նախ զինչ են կէտք, երկրորդ, թէ վասն էր՞ Գ. (4) թուով սահմանեցան, երրորդ՝ թէ որքանաբար ունին հաղորդութիւն ըստ եղանակաց տարւոյն: Վասն առաջնոյն ասելի է թէ կէտք են շափ և սահման ժամանակաց, զի սոքօք շափաբերեալ եզերին, որպէս և տարին շորիւք եղանակօք շափի:

Վասն երկրորդին ճառելի է, թէ վասն այն Գ. (4) թուով սահմանեցան, զի մեծարգի երևեցաւ թիւս այս ի սկզբանէ հետէ. նախ ի հանգիստքն արքայական և անեղին անսահման, երկրորդ՝ ի յորդարուի վտակն եղեմական ըստ նախամարգարէին վիպարանութեան, երրորդ՝ ի կենսաբուի աւետարան, շորրորդ՝ ի յաւետարանիչսն, հինգերորդ՝ ի վակասն Ահարոնի, վեցերորդ՝ ի շարաչարութիւն շքնաղագոյն ականցն, եօթներորդ՝ ի կառքն Եզէկիէլի, ութերորդ՝ ի տարն համաշխարհական, իններորդ՝ ի թիւս բաղկացական, տասներորդ՝ ի եղանակս տարւոյն բերման: Եւ վասն զի Գ. (4) թիւս այս յառաջմէ հետէ ի բազումս մեծարգի երևեցաւ և վասն հասարակ մեծարգի թուով սահմանեաց Աստուած զկէտք ժամանակին, զի մի՞ նուազ երևեսցի ժամանակն քան զեղեալսն ի ժամանակի, զի թէ պատշաճ էր ի ժամանակի եղելոցն մեծարգի թուով սահմանիլ, ևս առաւել ժամանակին, որ պարունակող է նոցա:

Վասն երրորդին գիտելի է, զի բազում իրօք հաղորդին կէտք ժամանակաց և հաւասարին եղանակաց տարւոյն. առաջին հասարակութիւն, զի անուամբ հաղորդին, զի կէտ երկնամիջակ, առաջին եղանակի տարւոյն անուանն հաղորդի, ըստ որում ասի «կէտ կրկնամիջակ գարնանային» և այլն ըստ կարգի: Երկրորդ՝ ըստ քանիօ-

նութեան, զի եղանակն ունի ՂԱ. (91) օր և Գ. (3) ժամ, և կէտն ՂԱ. (91) ամ և Գ. (3) ամիս: Երրորդ՝ ըստ տարւոյն որչափութեան, զի Գ. (4) եղանակքն ունին ի տարին 346. (365) օր և կէտքն ի ժամանակն 346. (365) ամ: Զորրորդ՝ ըստ կարգի, զի յեղանակս առաջին է գարունն և ի կէտքն՝ երկնամիջակն, որ է գարնանային: Հինգերորդ՝ ըստ ներգործութեան, զի առաջին եղանակ տարւոյն միջակ է և բարեբիտան, նոյնպէս և առաջին կէտ ժամանակին միջակ է և բարեխառն: Վեցերորդ՝ ըստ վախճանի, զի Գ. (4) եղանակն եզերէ գտարին, և Գ. (4) կէտքն՝ զժամանակն: Եօթներորդ՝ ըստ պարունակութեան, զի տարին պարունակէ զԳ. (4) եղանակն, և ժամանակն զԳ. (4) կէտքն: Ութերորդ՝ ըստ քանակութեան ինքեանց, զի Գ. (4) եղանակք են տարւոյն, և Գ. (4) կէտք են ժամանակին:

Իսկ զանազանին նախ զի որք ըստ տարւոյն սահմանեցան, եղանակք ասին և որք ըստ ժամանակին՝ կէտք, երկրորդ՝ զի եղանակքն վասն տարւոյն սահմանեցան, և կէտքն՝ վասն ժամանակին, երրորդ՝ զի եղանակքն զորքանութիւն ըստ աւուրց ունին և կէտքն՝ ըստ տարեաց, չորրորդ՝ զի եղանակքն զաւուրքն տարի առնեն և սոքա՝ գտարիքն ժամանակ, է և այլ ևս եթէ կամեացի որ:

Հարցումն.—Վասն էր՞ ասի կէտն երկնամիջակ և այլն ըստ կարգի:

Պատասխանի.—Նշանակն անուամբ զորպիսութիւն բերման ժամանակին երկնային ընթացիւք և դրութեամբ տարերց յիրաքանչիւր կէտսն կամի ցուցանել զժամանակն, զի Արեգակն ի միջին կամարին գոլով առնէ զեղանակ գարնանն, նոյնպէս և «կէտ երկնամիջակ» ասելով զգարնանային ժամանակն յայտնէ: Իսկ «ժամադիտակ», զի Արեգակն ի գարնանային եղանակէն յորժամ ամբառնայ յամառնայինն, այնուհետև դիտէ յառաւելութիւն ժամուցն երկար ընթացիւքն, և այս անուամբս զամառնայինն յայտնէ զժամանակն, որով առաւելու սաստիկ ջերմութիւն: Իսկ «եթերական»՝ ըստ կարգի դրութեան տարերցս, զխոնարհիլն սաստիկ ջերմութեան ի բարեխառնութիւն աշնանային ժամանակին ցուցանէ խոնարհութեամբ եթերիս առ Արեգականն բարձրութեան: Իսկ «սուզական»՝ որ ևս խոնարհ է քան զեթերն զևս խոնարհիլն ի բարեխառնութենէ օդոյն ի սաստկութենէ ձմեռնային ցրտոյն յայտնէ զժամանակն:

Հարցումն.—Զինչ՞ է ասելն, թէ ի սկզբան ստեղծման Արեգակն հասեալ ի կիսագնդին կամարին՝ հարաւային մասինն հասարակակէտ:

Պատասխանի.—Հասարակական անուամբ կամի տարորոշումն առնել իմաստասէրս, ըստ երրորդ անկիւնական կամարացոյ երկնից և ցուցանէ եզական թուով միայն լինել հասարակական կէտ և այս ի հարաւային մասինն, զի մի գուցէ յորժամ լսիցես կիսագնդին կամարին զչորրորդ կամարն, իմանայցես, որ ունի զմէջն երկնից ըստ քանակութեան էութեան ձեռնն անկիւնաւոր ի քառանկիւնոջ կողման գոլով: Վասն այն ասէ հարաւային մասինն, այսինքն ի հարաւակոյս կողմանէ, որ զչորրորդ և զերկրորդ կամարիդ զմիջին կամարն ունի՝ զայն ասէ «հասարակական կէտ», ուր խոյն է տանուտէր: Բայց զբառանկիւնին կրկին կերպիւ իմա՞ առաջին, ըստ կամարացոյ և երկրորդ, ըստ վերին և ներքին կիսագնդին:

Հարցումն.—Ընդ էր՞ հասարակ կէտ Արեգականն ոչ եղ ի չորրորդ կամարն, որ ունէր զմէջ երկնից, քան թէ յերրորդ կամարն ընդ հարաւային մասինն:

Պատասխանի.—Զի ի կենդանակերպս, որ զաստիճանս ունին Արեգականն ընթացից ի հարաւային յերկրորդ կամարէն մինչև ի չորրորդ կամարս երկնից, և յայն կոյս հիստիսային կողմանցն ոչ է կենդանակերպ, վասն որոյ ոչ ընթանայ Արեգակն: Գարձեալ՝ վասն հարկի եղանակացոյ, զի թէ եղեալ էր զհասարակ կէտն ի մէջ երկնիցոյ, ոչ էր հնար լինել երկուց եղանակաց տարւոյն, այսինքն ամարան և աշնան, և այնուհետև ոչ բոյս լինէր յերկիր և ոչ պտուղք ծառոց և կենդանիք յոչ գտանել զհարկաւոր պէտս, ոչ կարէին կեալ, և մնայր աշխարհս անապատ:

Հարցումն.—Զիարդ՞ խափանումն լինէր եղանակացն:

Պատասխանի.—Զի Արեգակն յերրորդ կամարն ունելով զհասարակ կէտն գարնան ի սկիզբն զառ ի վեր ունի զընթացսն և բարձրանալովն հասուցանէ զեղանակն գարնան յեղանակս ամարան և խոնարհվելով յաշունն և կրկին խոնարհվելովն ի ձմեռն և բարձրանալովն ի գարունն և կրկին բարձրանալովն յամառն: Իսկ յորժամ ի չորրորդ կամարն, որ է մէջ երկնիցն, ունենայր զհասարակ կէտն յոր կոյս և է սկիզբն խոնարհութեան, ընթացս ունի Արեգակն և իջանելովն զգարնան յեղանակն ի ձմեռն հասուցանէր և ելանելովն ի գարուն, և զի ոչ ունի կրկին ելումն, ոչ կարէ հասուցանել յամարան:

Իսկ զիջուցանելովն դարձեալ հասուցանէ ի ձմեռն և ոչ է հնար լինել ամարան և աշնան, զի կրկին ելանելն է պատճառ գարնան և ամարան, կրկին իջանելն՝ աշնան և ձմեռան, և վասն այսմ հարկի ոչ եղ զհասարակ կէտն ի շորրորդ կամարին, այլ ի երրորդն:

5 Ըստ եղանակաց կամարացոյ ութն են կամարք երկնից, և ըստ կենդանակերպիցոյ ԻԴ. (24), իսկ ըստ աստիճանացոյ՝ ՉԻ. (720) և այլ ոչ է հնար աւելի զոլ քան զայս և կամ պակաս:

Ի ծայրէ ի ծայր ըստ ուղիղ գծի ելիցն Արեգական՝ է լայնութիւն երկնից ըստ ութերորդ կամարիս ճե՛հԻԻ. (144000) աստիճան ըստ 10 փոքր աստիճանացն, որ մնայ Արեգակն Ա. (1) աստիճանն ընդ թաւալմանն: Եւ գիտեա, զի զայս ոչ ասեմ իբր թէ Արեգակն ընդ ութերորդ կամարոյ ճանապարհորդէ, զի նա ի Ը. (8) կամարացոյ միայն 2. (6) երորդ կամարս ընթանայ առ հարաւային կողմ, այլ ծայրէ ի ծայր զլայնութիւն երկնիցոյ ուսուցանեմ քեզ ըստ խոնարհելոյ և 15 բարձրանալոյ Արեգականն աստիճանաց: Իսկ ըստ լայնութեան ճակատու Արեգականն առնէ ծայրէ ի ծայր ՍՃԿ. (2160), իսկ ըստ գնդին բոլորութեան՝ ՉԻ. (720) որ ի գլուխ բոլորիդ է գրեալ, որ ասէ աստիճանք ըստ թաւալման Արեգականն: Այլ և իմա, թէ Արեգակս ի հիսսիսային կողմանն կոչս ի քանիերորդ կամարս երկնից, նոյնպէս 20 և հարաւային իմա ըստ խոնարհելոյն և բարձրանալոյն, այսպէս և զաստիճանսն իմա ըստ զանազան զորոշմելոյդ:

Հարցումն.—Արդ եթէ ի մի կողմանէ առցէ զկրկին իշումն և զելումն ի շորրորդ կամարէն, հնար՞ է լինել շորից եղանակացն:

Պատասխանի.—Եւս առաւել անհնար է լինել ամարան և աշնան, և այս է պատճառն՝ զի յորժամ Արեգակն զհասարակ կէտն, այսինքն զգարնան եղանակն ի շորրորդ կամարն ունենայ զսկիզբն ընթացիցն, ի խոնարհ ունի ընթանալ: 2ի թէպէտ ի մի կողմանէ ունիցի զկրկին խոնարհիլն և զելումն, այսինքն կամ ի հիսսիսային կողմանէն և կամ ի հարաւայինս որպէս և այժմ է յառաջին խոնարհ 30 հիլն զգարունն ձմեռն առնէ և ի կրկին խոնարհիլն կրկին ձմեռն, այսինքն ձմեռն՝ ձմեռն, իսկ ամառն ի գարնան կէտն, նախ զբարձրանալն խնդրէ և ապա կարէ լինել ամառն և բերիլ աշնանն ըստ նմա: Ապա և վաշ արարչական իմաստութեան, զի եղ զհասարակ կէտն յերրորդ կամարին ի հարաւային մասինն, զի վասն առաւել 35 հեռաւորութեան ի հիսսիսոյ կալցի զնա սաստիկ ցրտութիւն և ի հարաւ մերձ լինելոյն կալցի զնա սաստիկ ջերմութիւն ի պատճառս

տանջանաց մեղաւորաց, որք իբրև զիս զայրացուցանեն զԱստուած և վասն ունելոյ զսկիզբն զառ ի վեր ընթացիցն գեղեցկաբար յորինեսցին շորերեան եղանակքն:

Հարցումն.—Զինչ՞ է, որ ասէ «կալ յԱղամայ մինչև ի ծնունդն

5 Քրիստոսի մարդ մի»:

Պատասխանի.—Անուամբ մարդոյն յայտնէ զթիւ ամացն յեւանելոյն Աղամայ մինչև ի ծնունդն Քրիստոսի, քանզի ասելն «մարդ մի» 2. (6) գիր է. Բէն՝ ԵՌ. (5000) և երկու Մենն՝ ԴՃ. (400) և Ինին և Դայն և Այբն՝ ԻԵ. (25), որ առնէ ընդ ամենայն ԲնԻԵ. (5425):

10 Հարցումն.—Վասն էր՞ ասէ «երթ զթուականն 3ԿԵ. (365) և որ ի խոնարհ մնայ ՂԱ. (91), ՂԱ. (91) ի կէտսն տուր» և այս առնէ 3ԿԴ. (364), որ է ամ մի պակաս, զի գնալն 3ԿԵ. (365) է և գալն 3ԿԴ. (364):

Պատասխանի.—Մի գիտել, թէ ամս այս կորնչի և կամ թէ չէ ի 15 միջի, զի որպէս ի գարնան եղանակն ՂԱ. (91) օր տաս և Գ. (3) ժամ, նոյնպէս և աստ տայ ծածկաբար ՂԱ. (91) ամ և Գ. (3) ամիս, զի թէպէտ ի տալն ոչ երևի, զի ՂԱ. (91) տայ, բայց ի գնալն 3ԿԵ. (365)՝ զԳ. (3), Գ. (3) ամիսքն ի հէտ իւր տանի:

Հարցումն.—Ուստի՞ զոչնանս Գ. (3), Գ. (3) ամիսքն ի կէտքս 20 յայս, որ զ3ԿԴ. (364) ն 3ԿԵ. (365) գնամք:

Պատասխանի.—Ի Գ. (3), Գ. (3) ժամու յեղանակացն: Եւ աստ տես, զի 3. (300) ամն ՌՄ. (1200) եղանակ առնէ և ԿԵ. (65) ն՝ ՄԿ. (260), միանգամայն առնէ ՌԵԿ. (1460): 3ԿԵ. (365) ամն հաշուէ ամեն եղանակի Գ. (3) ժամ, Ռ. (1000) եղանակն՝ ԳՌ. (3000) ժամ, 25 ն. (400) եղանակն՝ ՌՄ. (1200) ժամ, որ լինի ՏՄ. (4200) և Կ. (60) եղանակն՝ ՃԶ. (180) ժամ, որ ընդ ամենայնի լինի ՏՅԶ. (4380) ժամ: Արդ, արա զԺԲ. (12) ժամն օր մի, ՎՈ. (3600) ն առնէ 3. (300) օր և ԶԶ. (780) ն՝ ԿԵ. (65) օր, որ է տարի մի, և վասն այսմ տամք ի Գ. (4) կէտքն 3ԿԵ. (365) ամ: Այսքան վասն կէտացն շատ լիցի:

30 3ԱՂԱԳԱ ԾԱԻՂԻ

Հարցումն.—Վասն էր՞ զանունս ընթացից ճանապարհի Արեգական և Լուսնի շաւիղ անուանն:

Պատասխանի.— Վասն սաստիկ և անսխալ ընթացիցն ըստ ուղիղ
 գծի շաւիղ կոչեցաւ յիմաստասիրացն: Զի ճանապարհս, որ առ մեզ
 վասն ընդարձակութեան ունի խոտորումն յաջ և յահեակ, նաև վասն
 դժուարութեան դրութեան լերանց բազում ուրէք ոլոր առնու ճանա-
 5 պարհն, այլ և վասն տկարութեան զգայութեան առ հեռաւորութիւնն
 յետ և յառաջ ոչ կարէ ըստ ուղիղ գծի ուղղել զճանապարհն, և մա-
 նաւանդ, զի ոչ է հարկ մարդոյ այսմ փութոյ, որպէս լուսաւորացոյ:
 Զի լուսաւորքոյ ոչ եթէ վասն անձկութեան երկնից, որ ընդարձակ
 լայնութիւն նորա ի ծոց իւր ունի զամենայն ստորնայինքս, նուրբ
 10 շաւղօք ընթանան ըստ ուղիղ գծի, այլ վասն հարկի շրջանացն, զի
 անսխալ բերիցի: Եւ այնքան ուղիղ ունին զընթացսն, զոր օրինակ ի
 վերայ յորդահոս և ահաւոր գետոյ նուրբ փայտ մի ձգիցի, և տես թէ
 որքան անխոտոր պարտ է ընթանալ ըստ ուղղութեան նուրբ փայ-
 15 տին, զի մի գետակուր լինիցի: Եւս առաւել զլուսաւորացոյ իմա յան-
 բաւ ընդարձակութիւնս երկնից ի նուրբ շաւիղս իւրեանց, զի այնքան
 նուրբ ունին զշաւիղս ընթացից ըստ ուղիղ գծի և անմոլար գնացից,
 որպէս զի դու հանիցես մելանաւ զերկայնութիւն գծի ուղիղ քանո-
 նաւ ի վերայ քարտիզի ըստ նրբութեան մետաքսեան թելի: Եւս առա-
 20 վել իմա քան զայս, և վասն այսորիկ «շաւիղ» անուանեցին զսա ջոկք
 իմաստասիրաց:

ՅԱՂԱԳՍ «ԿՍՏԱՐԵԱԼ ԼՈՒՍԻՆ»

Գիտելի է վասն «կատարեալ Լուսինս», զի ասացեալ է վասն-
 սմա յոմանց ոչ գիտեմ եթէ յիմաստականաց և թէ յիմաստասիրաց,
 թէ Լուսինն այլ ոչ գառնայ ի ժողով իւր, այլ բոլոր և կատարեալ
 25 մնայ, զոր ընդդիմանամք բազում եղանակաւ ըստ եկեղեցւոյ վար-
 դապետութեան և ասեմք եթէ ոչ է ըստ ճշմարտութեան իրոյ այդ:

Նախ ըստ ստեղծմանն և ըստ վախճանի, զի որպէս ի միում
 աւուր ստեղծան լուսաւորքոյ, պարտ է, զի և ի միում աւուր կատա-
 րեսցին: Երկրորդ՝ ըստ աստուածային վճռին ի վերայ համայն եղե-
 30 լոց, ըստ այնմ, որ ասաց ծովու «ցայո վայր եկեսցես և այլ մի
 անցանիցես», և Գաւիթ ասէ. «սահման եղիր և ոչ անցանեն»¹: Նմա-

1 Սաղմ. ճԳԳ:

նապէս և երկնից սահման եղ զմշտաշարժութիւն և լուսաւորացոյ
 զանխոտոր ընթացումն, այսպէս և Լուսինն զլրանալն և զնուազիլն
 վասն հարկի ստորնայնոցս և իւրաքանչիւր սահման վճիռ եղև նմա
 յաւիտեանս: Երրորդ՝ վասն ներգործութեան Լուսինն ծննդեանն և
 5 լրմանն սերմանիք բուսանին և ծառք պտղաբերին, նաև շուրբ ծո-
 վոց առաւելուն և նուազին, կենդանիք ծնանին և ապականին,
 աճին և նուազին և լուծանին տարրական շարախառնեալք և յառաջ
 բերին: Զորրորդ՝ ըստ դաղարման, զի թէ բոլորի, հարկ է զի և դա-
 դարի, որպէս ի կատարածին և թէ ոչ դաղարի, յայտ է, թէ ոչ
 10 բոլորի: Հինգերորդ՝ վասն ժամանակին, զի որպէս Արեգակն զտա-
 րին կատարէ, նոյնպէս և Լուսինն՝ զամիսն, զի ամիսն Լուսինն է,
 որպէս տարին Արեգականն, զի հայելով ի Լուսինն, ստուգաբանեցին
 զանուն ամսոյն, ասելով «իմ ես պատկեր»: Վեցերորդ՝ վասն հա-
 15 սարակական և առանձնական, և առանձնական՝ վարժելոցն, իսկ
 հասարակական՝ անվարժիցն, քանզի վարժեալքն տուժարին իմա-
 նան զել և զմուտ ամսոցն, իսկ անվարժքն՝ Լուսինն, զի Աստուած
 զԼուսինն անգիր տուժար արարեալ է ռամկացն և ախմարացն: Եթ-
 20 ներորդ՝ վասն խրատելոյ զմարդիկ, զի զԼուսինն անգիր քարոզ արար
 Աստուած աշխարհի, զի տեսանելով զարագ փոփոխումն նորա ծա-
 նիցեն զունայնութիւն կենցաղոյս և զվախճան ի կենաց իւրեանց և
 յաւիտեանական կենացն փափագեսցին մտաւորքն: Ութերորդ՝ ըստ
 պատճառին, զի ասաց Քրիստոս՝ «ոչ է ձեզ գիտել զժամս և զժա-
 25 մանակս»¹: Արդ, եթէ ժամանակն, որ ի նմանէ պատճառի, է անգի-
 տելի, ևս առաւել պատճառն է անգիտելի: Իններորդ՝ ըստ վկայու-
 թեան, զի ասաց Աստուած «յերկուց և յերից վկայից հաստատեսցի
 ամենայն բան»², որպէս մարդեղութեան Քրիստոսի վկայեցին՝ նախ
 նահապետքն և ապա մարգարէքն, այլ և իմաստասէրքն, և զաստուա-
 30 ծութիւն ի թափօր վկայութեամբ հաստատեաց Բ. (2) մարգարէիւքն
 և Գ. (3) առաքելօքն: Իսկ այս յարտաքին իմաստասիրացն միայն
 ասացաւ և ոչ յեկեղեցւոյ վարդապետաց, այլ ոչ ի Գիրս Աստուա-
 ծաշունչս գտանեմք այսմ վկայութիւն, թէ և զմարգարէին որ բերի-
 ցէ՝ «մինչև կատարեսցի Լուսինն»³—զայս վասն կատարածին ասէ:

1 Գործք. Ա7:

2 Բ Կորնթ. ԺԳ1:

3 Սաղմ. ՀԱ8:

Տասներորդ՝ ըստ անյարմարութեան, զի ոչ վայելէ Աստուծոյ անկատար իրի տալ կատարելութիւն և այն յանկատար ժամանակի, զի որպէս ոչ վայելէ Աստուծոյ հողացեալ մարմնաւորաց յարութիւն շնորհել յանկատար ժամանակի, զի անվախճան կեանք և վախճանաւոր ժամանակ ի միասին ոչ յարմարին, այսպէս և կատարումն Լուսնի ի անկատար ժամանակի:

Հարցումն.— Ապա վասն էր՞ ասի «կատարեալ Լուսին»:

Պատասխանի.— Ասի վասն մանր մասնկանց մասանցն, որ պակաս ընթանայ Լուսինն աւուր աւուր որպէս ասացաք վերագոյն, որ ի 3 Պն. (6840) ամն օր մի պակասի, և այս պարտք անկանի ի վերայ Լուսինն և փոխանակ այսմ՝ օր մի աւելի ընթանայ Լուսինն և զպարտս զայս վճարէ: Եւ ասացաւ «կատարեալ Լուսին» վասն ոչ ունելոյն այլ ինչ թերութիւն մասանց: Երկրորդ՝ վասն նշանակութեան վախճանի աշխարհիս, զի զօրս զայս կատարելով Լուսին այնուհետև 15 զարշաւանս վախճանաւոր ժամանակիս մերձեցուցեալ է յանվախճան և ի կատարեալն ժամանակ: Երրորդ՝ վասն կատարելութեան թուոյ, զի թէպէտ Լուսինն յամենայն ԺԹ (19) ամի օր մի կատարէ աւելի ընթացիւք սակայն անկատար թուով, զի թէպէտ Ժ. (10) ն կատարեալ է, սակայն Թ. (9) ն անկատար է: Նոյնպէս և Արեգակն ի 20 ԻԸ. (28) ամն՝ զի թէպէտ Ի. (20) ն կատարեալ է, սակայն Ը. (8) ն անկատար է, նոյնպէս և մեծ շրջանն՝ թէպէտ Շ. (500) ն կատարեալ է, և Լ. (30) ն կատարեալ է, սակայն Բ. (2) ն անկատար է: Իսկ յայս թիւս, որ «կատարեալ Լուսնիս» է, բոլորն կատարեալ է՝ զի Բ. (1000) քն ի ներքոյ բիրին են կատարեալ և Ճ. (100) քն ի ներքոյ Բ. (1000) ին և տասանքն ի ներքոյ Ճ. (100) ին: Ապա և յիրաւի «կատարեալ Լուսին» ասացաւ, վասն զի կատարեալ թուով եզերեցաւ: Այսքան առ այս:

ՀԱՐՑՈՒԽՆ ԳԷՈՐԳ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ ԵՒ ԾԱՌԱՅԱԲԱՐ ԿԱՏԱՐՈՒԽՆ ՅԱԿՈՒ ԱՇԱԿԵՐՏԻ

Զհրաման հարկի բարունուդ իմոյ և զվարդապետաց պետի բաջ փաղերայի Գէորգ վարժապետի Թորգոմեան տոհմի և հայկազեան սեռի, մանաւանդ Եկեղեացս դաւառի և Դարանաղեացս նահանկի, 5 ընկալայ հնազանդ ծառայս բո և աշակերտս Յակոբս Ղրիմեցի և ներգեեալս ոգի յաղագս աւուրց հնգից ստուգութեամբ քննել ըստ տումարական արհեստիս և անսխալ ցուցանել զաւուրցն պատկեր, զոր անհնար է ըստ բազում ջանից այլոց ազգաց բրիստոնեական 10 տոհմից անսխալ բերել զաւուրցս պատկեր, վասն որոյ յոյժ շառագունին ի յաղթիլ սմին:

Ծանիր, բարունի իմ, զի ոչ եթէ աստ զիմ ջանից ցուցանեմ զբաշուքիւն, այլ զՍարկաւագ վարդապետին, որ հասարակ ամենեցուն յայտնի է առն բաշուքիւն ի գիտութիւն մակացութեանս այս: 15 Զնորայն աշխատասիրութիւն և զվաստակ ջանից, զոր փարթամ և երկար բանիւք շարագրեալ է զաւուրցս ստուգութիւն. մեք զայն ջանիւ համառոտեցաք վասն ուսումնասէր անձանց, զի առ ձեռն պատրաստ և գիրին լիցի ի տրամաբանութիւն անիրաւ հակառակորդաց յաղագս այսմ իրի:

Բայց նախ գիտելի է ի սկիզբն խնդրոցս, քանզի բազումք յառաջնոց վարդապետաց անտի գրեցին ըստ իւրաքանչիւր դիտման քննութեամբ ի կիր առեալ վասն ստուգելոյ ամացն անցելոց, սակայն ոչ միաբան հանդիպին միմեանց: Նաև Եւսեբի վկայէ այսմ՝ յաղագս ոչ գիտելոյ ստուգիւ զանցեալ ժամանակսն և հաստատէ զայս բանի: 25 Տեառն, որ ասաց, թէ «ոչ է ձեզ գիտել զժամս և ժամանակս, զոր Հայր եզ յիրում իշխանութեան», և զայս ոչ վասն հանդերձելոցն միայն, այլ և վասն անցելոյն յայտնեաց: Զի ըստ Անդրէասայ ժամանակագրութեան լինի յԱղամայ մինչև ի Հայ թուականն ՅՃՄԵ. (6155), և ըստ կայսերական պատմութեան՝ ՐԶԿԱ. (5761), և ըստ

Անանիայ Շիրակունույ ԲՃՂԸ. (5198), և ըստ երբայականին՝
3ՄՁԸ. (6288), և ըստ հրէիցն, որով մեք վարիմք ԲՊԻԸ. (5828), և
ըստ շամարտացոց ԲՊԻԸ. (5828), և ըստ Շ. (500) եկին՝ ԲՁՀՁ.
(5976): Նաև այլք բազումք գրեցին վասն ժամանակացն անցելոց
5 և ամենեքեան անմիաբան հանդիպին գոլ, զի որպէս արուեստ բժշ-
կութեան ոչ ի սկզբանց ամենայնի ճշմարտիւ ամենայն: զիտացեալ
եղև, այլ առ սակաւ սակաւ, նոյնպէս և շրջաբերութիւն Արեգական և
Լուսնի առ սակաւ սակաւ գիտացեալ եղև ի ձեռն Շ. (500) եակ բո-
լորիդ, այլ ոչ թուականաւ յԱղամայ: Եւ այս գիտք աւուրցս ըստ Շ.
10 (500) եակ թուականին է էասանցն յԱղեքսանդրիայ անտարակոյս
բոլորին. որ զանցեալն և ի հանդերձեալն ունի զստուգութիւն և ոչ
ըստ այլոց անմիաբան թուականաց:

Արդ, յորժամ կամիցիս գիտել զպատկեր հնգիցս աւուրցս այ-
սոցիկ, որոց առաջինն է յղութիւն Եղիսաբեթի, և երկրորդ՝ Աւետեաց
15 Աստուածածնին, երրորդ՝ Մենդեանն Փրկչին, չորրորդ՝ Մկրտութեան,
հինգերորդ՝ Խաչելութեան, զոր ոչ կարեն այլ ազգ քրիստոնէից հա-
ւաստի բերել զաւուրցն զպատկեր, որք դեկտեմբերի ԻԵ. (25) առնեն
տօն Մենդեան, և յոյժ սխալեն հետեւելով պիղծ Արտեմոնի:

Եւ արդ այս է աւուրցն պատկեր. յղութիւն Եղիսաբեթի յաւուր
20 շարաթու, Աւետիք Աստուածածնի՝ յաւուր չորեքշաբթի, Մնունդն
Քրիստոսի՝ յաւուր հինգշաբթի, Մկրտութիւն՝ յաւուր կիրակի, Խա-
չելութիւն՝ յաւուր ուրբաթի: Եւ զայս ցուցից անսխալ երկու կերպիւ:
Առաջինն ըստ վկայութեան Զ. (6) ից. զի իւրաքանչիւր ամի, յորս
գիպեցաւ օրն, նախ թէ ի նոյն ամին Բուն թուականն Շ. (500) եկին
25 քանի էր, երկրորդ՝ զՀային և զՀոռոմին, երրորդ՝ զամիսն, չորրորդ՝
զԱւագ լրումն, հինգերորդ՝ զվերագիրն, վեցերորդ՝ զԵօթնհոնակն և
ապա օրագիրտ առնելով գտցուք զճշմարիտն: Երկրորդ՝ կերպիւ զայն
ցուցից, թէ ի Շ. (500) եկին շրջանսն, որ է յապրիլի Գ. (4) գլուխ
բոլորին միոյն և միուսոյն՝ յապրիլի ԺԳ. (13), թէ յորում խորանի
30 դիպեցաւ աւուրքս այս, զորս բազումք ոչ գիտելով զխորանն սխալ
նշանեցին վասն թուոյ Եօթներեկին: Զի ոչ ճշմարտիւ ճանաչեցին
զամն, թէ նահանջ էր, թէ ոչ, այլ միայն զորքանութիւն Եօթներեկին
գիտելով, վասն որոյ սխալեցան: Եւ այս յայտնի ի տումարատեա-
րերդ է, զի յոյժ պակասութիւն է այս՝ ազգիս մերոյ, զի սխալ է զա-
ւուրքս զայս, և ոչ բերէ ճշմարիտ զաւուրցն պատկեր: Զի այս յայլոց
35 ազգաց քրիստոնէից է սխալել զպատկեր աւուրցն, որ թէ շատ հնա-

րին և թէ սակաւ, ոչ կարեն զպատկեր աւուրցն անսխալ բերել, վասն
այն ճշմարիտ գիտեմք, զի սուտ են նոքա, որ ի դեկտեմբերի ԻԵ.
(25) տօնեն զօր Մենդեանն:

Արդ, ասացուք այժմ ըստ առաջին կերպին յաղագս հնգիցս
5 աւուրցս այս, որպէս վերագոյն խոստացար: Եւ զայս նախ վասն
յղութեան Եղիսաբեթի: Մանիր վասն առաջին աւուրն, որ է յղութիւն
Եղիսաբեթի, զի Բուն թուականն ի նմին ամին էր ԲՆԺԸ. (5418): Արդ,
այսու գիտացիր զՀոռոմին. կալ զԲուն թուականդ Շ. (500) եկին
ԲՆԺԸ. (5418) և բեր ի վերայ ճՁ. (180), լինի ԲՇՂԸ. (5598), որո-
շեա Շ. (500) եակ շրջանիւդ, մնայ ՄՂԸ. (278), և այս էր թուական
10 Հոռոմին: Եւ այսու գիտ զթուականն Հայուն. ի վերայ ՄԻԸ. (228)
կալ, առնէ ՇՁ. (506), և այս է թուականն Հայոց: Ապա և յայտնի եղև,
զի ի յղութեանն Եղիսաբեթի Բուն թուականն էր ԲՆԺԸ. (5418) և Հո-
ռոմին ՄՂԸ. (278), իսկ Հայուն՝ ՇՁ. (506): Ասացուք և զայլսն.
15 վերագիր հոռոմին՝ Գ. (3), Աւագ լրումն՝ յապրիլի ԺԲ. (12), Եօթնե-
րեակն՝ Գ. (4): Իսկ երբայցեոց վերագիրն՝ ԻԳ. (24), Աւագ լրումն՝
նիսան ԻԲ. (22), Եօթներեակն՝ Է. (7): Ցուցցուք և զամիսն. արդ, ի
թշրին ամսոյ ի Ժ. (10) և սեպտեմբերի ԻԷ. (27) և մարդաց ի Գ. (4)
էր սկիզբն տօնից, յորում մտանէր քահանայապետն ի սրբութիւն
20 սրբութեանցն Ե. (5) օր, որ թագաւորութեանն տօնէին և Է. (7) օր
տաղաւարահարացն, որ է ԺԲ. (12) օր, և ամենայն ժողովուրդն ժո-
ղովէր յերուսաղէմ կատարել զտօնն և շէր հնար ումեք երթալ ի տուն
իւր մինչև ի կատարումն տօնիցն: Եւս առաւել քահանայապետին
ըստ վկայութեան Աւետարանին Ղուկասայ, զի ասէ, թէ «բերև լցան
25 աւուրք պաշտաման նոցա գնաց Զաքարիայ ի տուն իւր»¹: Եւ ոչ
եզական անուամբ օր պաշտաման ասէ, այլ թէ աւուրք պաշտամանց,
որ է բազմաւորական անուն, զի զորունց աւուրց յայտ առնէ, զորս
ցուցանեմք օրագիրտի երեքումք ամսօքս զաւուրսն միահաղոյն.
զսկզբան տօնիցն և զելիցն և Զաքարիայի գնացմանն և ապա զյղու-
30 թեանն: Կալ զթշրին Ժ. (10), յորում սկիզբն էր տօնին, կրկնակն Ե.
(5)՝ լինի ԺԵ. (15), Եօթներեակն Է. (7)՝ լինի ԻԲ. (22), երթ է. (7),
Է. (7), մնայ Ա. (1), որ է կիրակի սկիզբն տօնին: Կալ զսեպտեմբեր
ԻԷ. (27), կրկնակն Ե. (5), լինի ԼԲ. (32), Եօթներեակն՝ Գ. (4), լինի
ԼՁ. (36), երթ է. (7), է. (7), մնայ Ա. (1), որ է կիրակի: Կալ զմար-

¹ Ղուկ. Ա40:

գաց Գ. (4), կրկնակ Ձ. (6), լինի Ժ. (10), Եօթներեակն Ե. (5), լինի
 ԺԵ. (15), Երթ է. (7), է. (7), մնայ Ա. (1), որ է կիրակի: Եւ թշրին
 ԺԵ. (15) և հոկտեմբերի Բ. (2) և մարգաց Ք. (9) էր սկիզբն տօնի
 տաղաւարահարացն և օրն ուրբաթ: Օրագիւտ արա և տես: Կալ
 5 զթշրին ԺԵ. (15) և կրկնակն Ե. (5), լինի Ի. (20), Եօթներեակն է.
 (7)՝ լինի Իէ. (27), Երթ է. (7), է. (7), մնայ Ձ. (6), որ է ուրբաթ:
 Կալ զհոկտեմբեր Բ. (2), և սորա կրկնակ շկայ, Եօթներեակն՝ Գ. (4),
 առնէ Ձ. (6), որ է ուրբաթ: Կալ զմարգաց Ք. (9), կրկնակն Ձ. (6),
 լինի ԺԵ. (15), Եօթներեակն՝ Ե. (5), լինի Ի. (20), Երթ է (7), է. (7),
 10 մնայ Ձ. (6), որ է ուրբաթ՝ սկիզբն տօնի տաղաւարահարացն: Եւ
 կատարումն տօնի տաղաւարահարացն լինի թշրին ԻԱ. (21) և հոկ-
 տեմբերի Ը. (8) և մարգաց ԺԵ. (15), օր հինգշաբթի: Եւ ի սմին
 աւուր ոչ կարաց գնալ Ձաբարիայ ի տուն իւր, վասն զի յետին օր
 էր և յոլովագունն էր մատուցմունք զոհիցն և պատարագացն, և ոչ
 15 կարէր պարապել մինչև ցերեկոյ, որ ժամանէր երթալ ի տուն իւր:
 Բայց ի թշրին ԻԲ. (22) և հոկտեմբերի Ք. (9) և մարգաց ԺՁ. (16)
 գնաց ի տուն իւր, և օրն ուրբաթ, և եղև յղութին Եղիսաբեթի ի թշրին
 ԻԳ. (23) և հոկտեմբերի Ժ. (10) և մարգաց Ժէ. (17): Բայց գիտա-
 ցիր, զի ոմանք սխալեալ են և թշրին ԻԲ. (22) և հոկտեմբեր Ք. (9)
 ասացեալ են յղութին Եղիսաբեթի, որպէս յայտ է ի տումարա-
 տետրերսն և ի տօնապատճառսն, ոչ գիտեմ, թէ հաշուողն է սխալել,
 թէ գրիչն: Բայց դու Աստուծոյ համար մի խաբեր, զի սխալ է և բեզ
 վկայ օրն, զի ուրբաթ կուգայ և ոչ շաբաթ, այլ այս է ճշմարիտն, զոր
 20 բազում հոգաբարձութեամբ քննեցար. ի թշրին ԻԳ. (23) և հոկտեմ-
 բերի Ժ. (10) և մարգաց Ժէ. (17): Կալ զթշրին ԻԳ. (23), կրկնակն
 Ե. (5), Եօթներեակն է. (7), լինի ԼԵ. (35), Երթ է. (7), է. (7), մնայ է.
 (7), որ է շաբաթ: Կալ զհոկտեմբեր Ժ. (10), կրկնակ շկայ, Եօթնե-
 րեակն Գ. (4), լինի ԺԳ. (14), Երթ զէ. (7), մնայ է. (7), որ է շաբաթ:
 Կալ զմարգաց Ժէ. (17), կրկնակն Ձ. (6), լինի ԻԳ. (23), Եօթներեակն
 Ե. (5), լինի ԻԸ. (28), Երթ է. (7), է. (7), մնայ է. (7), որ է շա-
 30 բաթ:

Ասասցուք և վասն երկրորդ աւուրն, այսինքն վասն Աւետեաց
 Աստուածածնին: Արդ, յայսմ օրէ թուեա մինչև ցԱւետիսն Սուրբ
 Կուսին, լինին աւուրք ճՁ. (180), որ է Ձ. (6) ամիս, և հանդիպի ի
 35 նիսանի Ժէ. (17) և յապրիլ է. (7) և քաղոց ԺԱ. (11): Թուական Շ.
 (500) եկին ՐնԺԹ. (5419), Հոռոմին ՄՆԹ. (279), իսկ Հայուն՝ Շէ.

(507): Վերադիր երբայցեւոցն Ե. (5), Աւագ լրումն նիսանի ԺԱ. (11),
 Եօթներեակն Ա. (1), պատկեր աւուրն շորեքշաբթի: Իսկ հոռոմայեց-
 ւոց վերադիրն ԺԳ. (14), Աւագ լրումն յապրիլի Ա. (1), Եօթներեակն
 5 կրկնակ շկայ, զի առաջին ամիս է, բեր զԵօթներեակն Ա. (1) ի վե-
 րայ, լինի ԺԸ. (18), Երթ է. (7), է. (7), մնայ Գ. (4), որ է շորեք-
 շաբթի: Կալ զապրիլի է. (7), զկրկնակն Ձ. (6), լինի ԺԳ. (13),
 Եօթներեակն Ե. (5), լինի ԺԸ. (18), Երթ է. (7), է. (7), մնայ Գ. (4),
 որ է շորեքշաբթի: Կալ զքաղոց ԺԱ. (11), կրկնակն Ա. (1), լինի ԺԲ.
 10 (12), Եօթներեակն Ձ. (6), լինի ԺԸ. (18), Երթ է. (7), է. (7), մնայ
 Գ. (4), որ է շորեքշաբթի Աւետիք Աստուածածնին:

Բայց աստ գիտացիր, զի ոմանք սխալեալ ուսեն զԱւետիք Կու-
 սին յապրիլի Ձ. (6): Ես սխալումն սոցա լինի Գ. (3) կերպիւ: Նախ
 15 Աւետարանն, թէ յամսեանն Ձ. (6) երրորդ, ոմանք սխալ իմանան
 զբանս հրեշտակին, զի վեց թիւս ի վերայ աւուրց ապրիլի ամսոյն
 իմանան, որ հրեշտակն աւետեաց Կուսին: Բայց ոչ է այսպէս, այլ
 Ձ. (6)՝ յաղագս թուոյ Ձ. (6) ամսոցն ասաց և ոչ վասն աւուրցն
 ապրիլի, զի կատարումն Ձ. (6) երրորդ ամսոյն առաքեցաւ հրեշտակն
 20 և ասաց ցՄարիամ, թէ «ասա Եղիսաբեթ, ազգական բո, և նա յղի
 է ի ծերութեան իւրում»: Եւ ապա Ձ. (6) երրորդ ամիս է, որ ամուլն
 կոչեցեալ է, ապա և յայտնի եղև, որ ապրիլի աւուրցն է. (7) էր և
 կատարման ամսոցն Ձ. (6): Երկրորդ, զի այնքերկ, որ յղութին
 25 Եղիսաբեթի ի հոկտեմբերի Ք. (9) ասեն, ի հարկէ սխալ են և զԱւե-
 տիքն ի Ձ. (6) ասեն, զի հոկտեմբերի յՔ. (9) էն յորժամ հաշուին
 Ձ. (6) ամիս, կուգայ մինչև յապրիլի Ձ. (6), որ է երկուսեանն սուտ,
 զի սխալի աւուրցն պատկեր, քանզի յղութիւն Եղիսաբեթի զայ ի
 ուրբաթ, և Աւետիք Կուսին՝ երեքշաբթի: Երրորդ՝ ըստ առաւելու-
 30 թեան և նուազութեան ամսեացն, զի է, որ Լ. (30) է և է, որ ԼԱ.
 (31) և է, որ ԻԸ. (28), և խանգարի միտք հաշուողին և սխալի յո-
 մանց և այնպէս գրի:

Եւ այսու յայտնի գիտացիր զսխալն, զի գտանի ի տօնապատ-
 ճառերդ գրեալ, զոր զԱւետիք Կուսին ի նիսանի Ժէ. (17) են գրել և
 յապրիլի Ձ. (6). գնա տես ի խանախորանքն և գտանես զճշմարիտն,

զի այն խորանն, որ նիսանի ժէ. (17) է, նաև ապրիլի է. (7) է: Բայց
ևս ցուցանեմ բազում վկայութեամբ զԱւետիք Կուսին յապրիլ է. (7).
նախ զի Սարկաւագ վարդապետն որ զիր տումարն շինեաց, նա
յապրիլ է. (7) ասացեալ է, երկրորդ զի աւուրն պատկեր անսխալ
5 գայ, այսինքն շորեքշաբթի, երրորդ՝ ըստ խառնախորանացն, յորս
զուգաւորութիւն ամենայն ազգաց է, շորորդ՝ ըստ թուոյ համարոյ
ամսոց յայտնի ցուցանեմ զերբայեցոցն, զհոռոմին և զհայուն:

Արդ, թշրին ԻԳ. (23) էր յղութիւն Եղիսաբեթի, կալ Ը. (8) օր
յայս ամսոյս և առ զմեհրշուան, զքասղև և զտբեթ, զշքաթ, զադար՝
10 ճԾ. (150) օր, որ լինի ճԾԸ. (158) և Ե. (5) աւել աւուրքն, լինի ճԿԳ.
(163) և ժէ. (17)՝ նիսան, լինի ճԶ. (180), որ է Զ. (6) ամիս: Իսկ
հոկտեմբերի ժ. (10) էր յղութիւն, կալ ԻԲ. (22) օր յայս ամսոյս.
նոյեմբեր Լ. (30), լինի ՍԲ. (52), դեկտեմբեր ԼԱ. (31), լինի ԶԳ.
(83), յունուար ԼԱ. (31), լինի ճԺԴ. (114) և փետրուար ԻԸ. (28),
15 լինի ճԽԲ. (142), մարտ ԼԱ. (31), լինի ճՂԳ. (173), ապրիլ է. (7)՝
լինի ճԶ. (180), որ է Զ. (6) ամիս անսխալ մինչև յապրիլ է. (7):
Իսկ մարգաց ժէ. (17) էր յղութիւն Եղիսաբեթի. կալ ժԴ. (14) օր
յայս ամսոյս և առ զհրոտից, զնաւասարդի, զհոռի և զսահմի, զոր
է ճԾ. (150) օր, որ լինի ճԿԴ. (164), Ե. (5) օր աւելիքն՝ լինի ճԿԹ.
20 (169) և ժԱ. (11) քաղոց՝ լինի ճԶ. (180), որ է Զ. (6) ամիս անսխալ:
Այսքան վասն երկրորդ աւուրն:

Իսկ վասն երրորդ աւուրն այսպես գիտեալ: Արդ, աստի մինչև
ի Մնունդն Քրիստոսի թուեա ՄՂԵ. (275) օր, որ է Թ. (9) ամիս և Ե.
(5) օր, և գայ տբեթի ԻԱ. (21) և յունուարի Զ. (6) և հոռի ժ. (10):
25 Թուական Շ. (500) եկին ԲնԻ. (5420) և Հոռոմին՝ ՄՁ. (280), իսկ
Հայուն՝ ՇԸ. (508): Վերադիր եբրայեցոցն՝ Ե. (5), Աւագ լրումն
յաւելեացն Ե. (5) և Եօթներեակն Ա. (1) և օր Մննդեանն հինգշաբթի.
Իսկ վերադիր հոռոմին ԻԵ. (25), Աւագ լրումն մարտի ԻԱ. (21),
Եօթներեակն Զ. (6), և ամն է նահանջ և Եօթներեակն կրկին աճէ, զի
30 յելն փետրուարի է. (7) պիտի լինի: Օրագիւտ արա և տես. կալ
զտբեթ ԻԱ. (21), կրկնակն Դ. (4), լինի ԻԵ. (25), Եօթներեակն Ա.
(1), լինի ԻԶ. (26), երթ է. (7), է. (7), մնայ Ե. (5), որ է հինգշաբ-
թի: Կալ զյունուար Զ. (6), կրկնակ շունի սա, Եօթներեակն՝ Զ. (6),
լինի ժԲ. (12), գնա զէ. (7), մնայ Ե. (5), որ է հինգշաբթի: Կալ զհո-
ռի ժ. (10), Եօթներեակն է. (7), զի ի նաւասարդի էր նոր ամի

սկիզբն, և կրկնակն Բ. (2), լինի ժԹ. (19), երթ է. (7), է. (7), մնայ
Ե. (5), որ է հինգշաբթի: Այսքան առ այս:

Եկեսցուք և զշորորդ օրն ցուցցուք, որ է Մկրտութիւն: Իսկ ի
Մկրտութեան Քրիստոսի էր թուականն Շ. (500) եկին ԲնՄ. (5450)
5 և Հոռոմին 3Ժ. (310), իսկ Հայուն Զ. (6), զի ի Մննդեանն Քրիստոսի
Հայոց թուականն ՇԸ. (508) էր, երթ Լ. (30) այլ հաշուիս մինչև ի
Մկրտութիւն, լինի ՇԼԹ. (538), երթ զշրջանն ՇԼԲ. (532), մնաց Զ.
(6), և այն է նոր սկսեալ շրջանէն, վասն այն զթուականն Հայոցն Զ.
(6) ասեմք: Վերադիր եբրայեցոցն ժԸ. (18), Աւագ լրումն նիսան
10 ԻԸ. (28), Եօթներեակն Ե. (5), իսկ պատկեր աւուր Մկրտութեան կի-
րակի, օրագիւտ արա և տես: Իսկ վերադիր հոռոմին Իէ. (27), Աւագ
լրումն յապրիլ ժԸ. (18), պատկեր աւուրն հինգշաբթի, Եօթներեակն
Բ. (2), Կալ զտբեթ ԻԱ. (21), կրկնակն Դ. (4), լինի ԻԵ. (25), Եօթնե-
րեակն Դ. (4), լինի ԻԹ. (29), գնայ է. (7), է. (7), մնայ Ա. (1),
15 որ է կիրակի: Բայց չլինի, թէ տարակուսիս, թէ ի վերն զԵօթներեակն
Ե. (5) ասացի և յօրագիւտս Դ. (4) կալայ: Այսպէս գիտացիր, զի
Ե. (5) Աւագ լրումն էր և այն նոր Եօթներեակն է եբրայեցոցն,
բայց զու զհինն կալ, որ է Դ. (4), զի յունուարի Եօթներեակն եբրա-
յեցոցն դեռ հինն լինի և ոչ նորն: Կալ զյունուարի Զ. (6), կրկնակ
20 շունի սա, Եօթներեակն Բ. (2), լինի Ը. (8), գնա զէ. (7), մնայ
Ա. (1), որ է կիրակի: Այսքան յաղագս շորորդ աւուրն:

Եկեսցուք ի տեսութիւն հինգերորդ աւուրն, որ է Խաչելութեան:
Իսկ ի Խաչելութեան թուականն Շ. (500) եկին ԲնՄԳ. (5453) և Հո-
ռոմին 3ԺԳ. (313), իսկ Հայուն Թ. (9): Վերադիր եբրայեցոցն ԻԱ.
25 (21), Աւագ լրումն նիսան ԻԵ. (25), Եօթներեակն Բ. (2), պատկեր
աւուրն ուրբաթ: Իսկ վերադիր հոռոմին Լ. (30), Աւագ լրումն յապ-
րիլի ժԵ. (15), Եօթներեակն Զ. (6): Օրագիւտ արա և տես. կալ
զնիսան ԻԵ. (25), կրկնակ շկայ սորա, Եօթներեակն Բ. (2), լինի
Իէ. (27), երթ է. (7), է. (7), մնայ Զ. (6), որ է ուրբաթ: Կալ զապ-
րիլի ժԵ. (15), կրկնակն Զ. (6), լինի ԻԱ. (21), Եօթներեակն Զ. (6),
30 լինի Իէ. (27) գնայ է. (7), է. (7), մնայ Զ. (6), որ է ուրբաթ:

Ասացաւ Ե. (5) աւուրն միանգամայն, որպէս խոստացաք: Բայց
արդ յայտնեսցեն մեզ պիղծ արտեմոնիքն և հերձուածող քաղկեդո-
նիքն զաւուրցն պատկերսն անսխալ, որք խելագարեալ ասեն զԱւե-
տիք Աստուածածնին մարտի ԻԵ. (25) և զՄնունդ Փրկչին ի դեկտեմ-
35 բերի ԻԵ. (25): Արդ, զինչ ասացից վասն առաւել ամբարշտութեան

նոցա, զի ինքեանք են մոլորեալք ի ճշմարտութենէն և յետս դարձեալ զհայք բամբասեն, որ անսխալապէս տօնեմք ըստ Յակոբոս եղբոր Տեառն և ըստ սրբոյն Կիրեղի հայրապետին, նաև ըստ տուժարական արհեստին, զոր մի մի ցուցաք անսխալ:

- 5 Եկեացուք և ասացուք ըստ երկրորդ կերպին, որպէս յառաջագոյն խոստացաք, թէ ի Շ. (500) եակս շրջանս յորում խորանի գիպեցաւ: Արդ, յապրիլի շորիցն այսպէս գիտ. սկսիր յառաջմէ շրջանին, որ է սկիզբն և համարեա ՄԾ. (250) խորան, որ է Զ. (6) թուղթ և դէմ մի և Գ. (3) խորան այլ ի միս դիմէն, և այն է խորան տարուոյն, յորում յղացաւ Եղիսաբեթ, Եօթներեակն Գ. (4), վերադիրն Գ. (3), լրումն յապրիլի ԺԲ. (12), օրն կիրակի: Եւ անց ի միս խորանն, զկնի սմին, այն է խորան տարուոյն Աւետեաց Կուսին, Եօթներեակն Ե. (5), վերադիրն ԺԳ. (14), լրումն յապրիլի Ա. (1), օրն հինգշաբթի: Դարձեալ անցիր ի միս խորանն զկնի սորին, և այն է խորան 15 Մննդեան Փրկչին և Եօթներեակն Զ. (6) և է. (7), զի ամն նահանջ է, և Եօթներեակն կրկին աճէ, վերադիրն ԻԵ. (25), լրումն մարտի ԻԱ. (21), օրն երեքշաբթի: Դարձեալ համարեա ի խորանէ աստի ԼԱ. (31) խորան, և այս է խորան Մկրտութեան, Եօթներեակն Բ. (2), վերադիրն ԻԷ. (27), լրումն յապրիլ ԺԸ. (18), օրն հինգշաբթի: 20 Դարձեալ Գ. (3) խորան այլ անցիր զկնի սորա, և վճարի կանոնն, և այն է խորանն Խաչելութեան, Եօթներեակն Զ. (6), վերադիրն Լ. (30), լրումն յապրիլի ԺԵ. (15), օրն ուրբաթ:

Իսկ յորժամ կամիցիս ի միս շրջանն գտանել, որ Փոքր թուականա հայուն կուվարի և գլուխ շրջանին կանոնաց ապրիլի ԺԳ. (13) է, ի ՇԶ. (506) համարին յգութիւն Եղիսաբեթի, և ի ՇԷ. (507) Աւետիք Կուսին, և ի ՇԸ. (508) Մնունդն Քրիստոսի է, և աստի մինչև ի Մկրտութիւն լրումն առնու շրջանն և նոր սկսանի: Եւ նորին ի Զ. (6) թուին է Մկրտութիւն Տեառն, և ի Թ. (9)՝ Խաչելութեան խորանն: Բայց դու, ով ուսումնասէր, մի խաբուիլ, թէ ի տուժարատեւորերն 30 որ հանդիպի սխալ նշանած բերէ զայն, և զճշմարիտն գրէ, որպէս խրատս ցուցանէ, զոր բազում աշխատութեամբ հաւաստի գտայ ըստ առաջնոց սրբոցն աւանդութեանց զսխալեալսն յախմարաց:

Յաղագս տանուտէրացն: Արդ ի Մննդեանն Քրիստոսի ամն նահանջ էր, և Կարիճն՝ տանուտէր: Կարիճն զսատանայ ցուցանէ բազում օրինակաւ, նախ զի խայթեաց զնա և զԱղամ՝ պտղոյն ճաշակմամբ և հանեալ ի դրախտէն մատնեաց ի ներքոյ մահու: Վասն այն

35

Քրիստոս ի սոյն կենդանակերպի ծնաւ, զի աստուածային զօրութեամբն և շարշարանօք պտղոյն խայթեալ սպանցէ զնա: Երկրորդ, զի կարիճն զխայթոցն ի վերջին ծայր տտանն ունի, որ մահացուցանէ զմարդն, և Տէր մեր Յիսուս Քրիստոս ի վերջք տնօրենութեան և ի 5 ծայր կատարման խաչին եսպան զնա: Երրորդ, զի կույր է կարիճն, սատանայ ի տեսանել զբարին, և Քրիստոս՝ ընդդէմ մեղաց, զի «ոչ արար զմեզս և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա»¹ կնքեաց մարգարեն: Զորրորդ, զի կարիճն սատանայ յարածամ շարժէ զտուտն առ ի հարկանել ներել մեղօք մինչև հարեալ ազգու մահու չափ մեղօք սպանանէ զմարդն, և Քրիստոս յարածամ եհար զսատանայ, յսինքն ի Մնունդն, ի Մկրտութիւն, ի լեառն փորձութեան և իշխանութեամբ սաստելն ի վերայ սոցա: Վասն այս աղաղակէին՝ մի յառաջ, քան զժամանակն խայթել տանջանօք զմեզ և ապա խաչին հարեալ ազգու և արար կոխանս որդոց մարդկան՝ ըստ այնմ «ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձն և զկարիճն»²: Հինգերորդ, զի սատանայ խաւարաւ գիշերանման մեղօք իբր զկարիճ ի գիշերի խայթէ զմարդ, և Քրիստոս ի գիշերի այժմու կենցաղոյս հարեալ սպան զնա:

Իսկ ի Մկրտութիւն Քրիստոսի Խոյն էր տանուտէր, որ և աստ երևի յոյժ խորհրդաւոր: Նախ, զի որպէս Խոյն սկիզբն է ամենայն կենդանակերպից, նոյնպէս և Քրիստոս եկն ի մկրտութիւն և սկիզբն արար բանին և վարդապետութեան և նշանաց սքանչելագործութեան: Երկրորդ, զի որպէս Խոյն գլուխն է ամենայն կենդանակերպիցն, նոյնպէս և Քրիստոս գլուխ գոլով մեր եկեալ ի մկրտութիւն և ընկալեալ զՀոգին Սուրբ ոչ իբր զկարօտօք զի որդի է Հօր և էակից Սուրբ 25 Հոգոյն, այլ որպէս գլուխ մեր առեալ և ի յանդամս իւր սփռեալ յեկեղեցի սուրբ: Երրորդ զի զգալի Արեգակն յորժամ գայ ի կենդանակերպս յայս, առնէ հաւասարութիւն տուրնջեանն և գիշերոյ, նոյնպէս իմանալ Արեգակն բանն Աստուած, որ միշտ լոյս է իբրև զտիւ միջօրեայ հաւասար եղև գիշերանման մարդկայինս բնութեան, 30 մարդանալովն և խաւարանման մարդկային բնութիւնս միացուցանելովն ընդ ինքեան հաւասարեցոյց լուսոյ աստուածութեան, զի որքան Աստուածն մարդացաւ, այնքան մարդն աստուածացաւ ըստ Գրիգորի

1 Եսայի ԾԳԳ:
2 Դուգ. ԺԹ:

աստուածաբանի: Եւ դարձեալ որդեգրութեամբ աւազանին հաւասարեցոյց զմեզ ընդ ինքեան լինել որպէս Աստուծոյ Հօր, ըստ առաքելոյ՝ «այսուհետև չեմք ծառայ, այլ որդի Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի»¹: Չորրորդ, զի յորժամ Արեգակն գայ ի կենդանակերպս յայս, եռայ երկիր և շարժի ի շերմութենէ նորա և արձակէ զբոյսս ի ներքուստ ի վեր և կանանչանայ ամենայն երկիր, ծաղկին ծառք և փթթին վարդք և բացուին երփներանգ գոյնք զանազան ծաղկանց: Նոյնպէս իմանալի Արեգակն՝ Քրիստոս եկեալ ի Յորդանան մկրտիլ ի Յովաննէ, և այնուհետև եռայ բանաւորս երկիր ի կենարար վարդապետութենէ նորա և շերմութեամբ սիրոյն Քրիստոսի զարդարեցաւ մարդկայինս բնութիւն ի զանազան գոյնս առաքինութեանց և յորակս աստուածապաշտութեանց բազմազան և յոքնատեսակ դասք արդարոցն: Հինգերորդ, զի Արեգակն գոլով ի կենդանակերպս յայս, շարժին ամենայն կենդանիք և թռչունք ի ծնունդս իւրեանց և լնուն զերկիր, նոյնպէս և Քրիստոս մկրտութեամբն իւրով բազմացոյց զծնունդս սուրբ աւազանին և ելից զերկիրս անհամար քրիստոնէիւք:

Իսկ ի Խաչելութեան Քրիստոսի Առիւծն էր տանուտէր, որ ևս ունի բազում խորհուրդ. նախ զի առիւծն թագաւոր է ի վերայ ամենայն գաղանաց, և Քրիստոս թագաւոր է ի վերայ ամենեցունց արարածոց, ըստ այնմ, թէ «ահա թագաւոր քո գայ նստեալ ի վերայ իշոյ»²: Երկրորդ, զի առիւծն արի և յաղթող է ի մարտ և ի կռիւ ի վերայ ամենայն կենդանեաց, և Քրիստոս քաջութեամբ արիութեան իւրոյ կապեաց զՏգօրն սատանայ և աւար է առ զամենայն ինչս նորա: Երրորդ, զի առիւծն ժանեօքն փողոտէ և ճիրանեօքն պատառէ, նոյնպէս և Քրիստոս բանիւ բերան իւրոյ փողոտեաց զսատանայ, ըստ այնմ՝ թէ «իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է և թէ իշխան աշխարհիս ընկեսցի արտաքս և ճիրանաւ խաչին պատառեաց զնա»: Չորրորդ, զի առիւծն քաղցր երևի ի տես մարդկան, և տեսն Քրիստոսի ցանկալի և քաղցր երևէր յայս տեսողացն, ըստ այնմ «երանի որովայնին, որ կրեացն զքեզ և ստեանցն, որդիեցուցին

¹ Հոով. Ը17:

² Յովհ. ԺԲ15:

զքեզ»¹: Հինգերորդ, զի առիւծն ահարկու ունի զգեմս կերպարանացն, զի ի տեսանելն զնա ամենայն կենդանիք սարսին և դողան ի սմանէ, նոյնպէս Քրիստոս ահարկու է ի վերայ ամենայն դիւաց, վասն այն ի տեսանելն զողութեամբ սարսէին և ասէին՝ «գիտեմք զքեզ, ով էս Սուրբ Աստուծոյ, մի յառաջ, քան զժամանակն տանջէր զմեզ»:

Այսքան բացայայտութիւն սակաւօք ինչ յաղագս կենդանակերպից տանուտէրացդ ի սէր մակացու ուսումնասիրաց:

ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻ, ԶՈՐ ԽՆԴՐԵԱԼ ԹՈՎՄԱ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ
ՄԵԾՈՓՈՅ ՎԱՆԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԲՆԱԿ ՍՈՒՐԲ ՈՒՒՏԻՆ ԵՒ ՍԻՐՈՎ
ԶԼԱՅՑՈՒԱԾՍ ՆՈՐԱ ԿԱՏԱՐԵԱԼ ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՂՐԻՄԵՑԻՈՅ: ՕԳՆԵԱ ՀՈԳԻՒ ՍՈՒՐԲ:

5 Զհայցուածս գերերջանիկ րարունայեալի և երիցս երանելոյ
վեհին՝ եռակի առաքինութեանցն կատարողի, եռանձնեայ տէրու-
թեանց եռափափագ սիրով ներընդունողի ի բումդ գոյաւորութեան ի
կայս եռակի ստացեալ սեփորեն զնշոյս հոգւոյն ի թիւ եզակի և եր-
բեակ երկակի, որ իբրև զսպունդ առ լցեալ արտաքս՝ ցօղեսցես զկայ-
10 թուածս իմաստից ընդ ցնցուղ շնշոյդ ի լսելիս ներակրթելոցն ան-
ձանց, որ տենչան աստուածային իմաստիցն և փիլիսոփայական ար-
տաբերեալ հանճարիցն:

Ծանիր, ո՛վ վեհիմաստդ մտօք, զի որք որ տումարական մա-
կացութեանցս են ներընդունակք, ոչ որ ըստ արհեստին են ներակրթ-
15 թեալք, բավական են այսմ իրագործութեանց հարցափորձեալ մեկ-
նութեան, այլ որք ի մակացութիւն սորա են յառաջեալք, նոցա ար-
ժանաւոր վարկանիմ զոլ հարցափորձիլ ի տեսութիւն խնդրոյդ, իսկ
մերս նուաստութիւն յաստիճան ներհմտութեան սորա միայն ժամա-
նեալ, զիա՛րդ կարացից զիղձս փափագանաց մաքուր քոյդ սրտի
20 հանել ի վախճան, զի բերկրեալ՝ խրախասցիս ի ցանկութիւն սրտիդ
մտածման: Այլ ինքն Հոգին Աստուած, որ շարժէ զոմանս ի խնդիր
և զոմանս ի տուր, տալով նոցա զշարժմանն խնդիր, տացէ բան ապի-
կար մտաց մերոց ըստ փափագանաց ձերոյդ սրբութեան և ի կըր-
թութիւն մանկանց Սիոնի, ի փառս Հօր և Որդոյն և Հոգւոյն Սրբոյ
25 այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն: Օգնեա՛, Հոգիւ
Սուրբ:

Գիտելի է ըստ կանոնաց իմաստասիրաց, զի գիտութիւն ի շորս
բաժանի և շորս կերպիւ առ ներընդունողսն երևի: Եւ եթէ ոյք են
այսոքիկ, ասեմք հմտութիւն, ներհմտութիւն, արհեստ և մակացու-

թիւն: Հմտութիւն է սակաւ ինչ ծանօթութիւն ի ճանաչումն իրին-
Եւ ներհմտութիւն է մասնաւոր գիտութիւն առաջադրեալ իրին: Իսկ
արհեստ է թարց պատճառի բոլոր գիտութիւն: Եւ մակացութիւն է
հանդերձ պատճառօք բոլոր գիտութիւն, անսխալ ճանաչումն իմա-
5 ցականին առ մակացելին: Եւ գայս կրկին յարացուցիւ արտայայտե-
ցից, առաջինն, զի հմտութիւն է, յորժամ զմանուկն տան յուսումն
դպրութեան, և նա ըստ վարժմանն ճանաչել կարասցէ զգիրն. ասել
այլ, բեն, գիմ: Իսկ ներհմտութիւն է, յորժամ զհնգն կապել կարաս-
ցէ ի վանկսն և ի փաղառութիւնսն ի բառսն և յանունսն, որպէս ասել
10 «երանեալ»: Եւ արհեստ է, յորժամ խառն զանունսն և զբայսն և
զամենայն մասունս բանին, ըստ այնմ «երանեալ է այլ, որ ոչ
գնաց»¹, բայց զպատճառս գրոյն ոչ գիտենայ, թէ զինչ է գիր և վասն
էր է գիր: Իսկ մակացութիւն է, որ զգիրն հանդերձ պատճառան
գիտենայ, զի յորժամ հարցցի յումեքէ, թէ զի՞նչ է գիր, և նա կա-
15 րասցէ ասել, թէ գիր է մարմին բանի, զի բանն է անտես աշաց և
անշօշափելի ձեռաց վասն անմարմնութեան, իսկ իմաստասէրք և
վարդապետք եկեղեցւոյ Հոգովն Սրբով զգիրն մարմին զգեցուցին
անմարմին բանին, և եղև տեսանելի և շօշափելի, որպէս Բանն Աս-
տուած միջնորդութեամբ մարմնոյն եղև տեսանելի և շօշափելի:
20 Նաև ի հարցանելն յումեքէ թէ վասն է՞ր է գիր, ասել կարասցէ, թէ
յատուկ է մտաց մարդոյն բանիցն մոռացումն: Նախ՝ վասն յանց-
մանն, զի սկզբան ստեղծմանն ոչ էր այսպէս: Երկրորդ, զի մերկացաւ
ի շնորհաց Հոգւոյն, ըստ այնմ՝ «մի մնացէ Հոգի իմ ի մարդիկք»²:
Երրորդ, վասն պատժոյն, զի որպէս մարմնովն ի քիրտն վաստա-
25 կաց շարշարի, այսպէս և հոգովն ի ուսումն գիտութեան շարշա-
րեսցի: Չորրորդ, զի ընդգիմատիպ է մարմինն հոգւոյն, որպէս ժանգն
պայծառութեան հայելոյն: Հինգերորդ, վասն բազմաբեր հոգւոցն ի
հայթայթումն կարևորացն և հարկաւորացն: Վեցերորդ՝ զի որպէս
փոփոխելի է էութեամբ մարդն ի փոփոխելի ժամանակս, փոփոխելի
30 է և գիտութեամբ՝ երբեմն գիտել և երբեմն ոչ գիտել, և վասն այն
սահմանեալ եղև գիր, զի զմոռացեալ գիտութիւն ի ձեռն ընթերց-
մանն վերստին բերցէ ի յիշողութիւն և ի գիտութիւն մտացն:

1 Սողմ. Ա1:

2 Մննդ. Զ3:

Իսկ հրեշտակը ոչ են այսպէս, այլ անմոռանալի պահեն զգիտութիւն, զի զոր ինչ ի ստեղծմանն ընկալան զառաջինն լուսափայլութեան գիտութիւն և զոր ինչ այսօր զաւուրս այլ առաւել ոչ գիտեն, քան զոր ի ստեղծմանն ընկալան, այլ միայն գիտեն զառաջինն և զվերջինն: Եւ այս վասն էր՝ նախ զի ոչ յանցեան, երկրորդ՝ զի պարզ են էութեամբ, երրորդ՝ զի ազատ են կրից, չորրորդ՝ զի մշտնջենաւորք են, վասն այն ընդունին զմշտնջենաւոր և զանփոփոխ գիտութիւն, որպէս և մեք ի կատարածին, որպէս ասէ առաքեալն՝ «գիտութիւնը նորոգեսցին»¹:

10 Երկրորդ, հմտութիւն է ընթերցումն բանի, գիտել զգպրութիւն: Եւ ներհմտութիւն է սպասաւորելն բանի՝ որպէս գրոց աշակերտաց, սպասաւորաց բանի տեղեկանալ ներակրթութեամբ ի մասնաւոր մտածութիւնս բանին:

Իսկ արհեստ է՝ վարդապետելն բանիւ և իմաստասիրելն առանց պատճառի, թէ գիտէ և ոչ ասէ և թէ ոչ գիտէ և ոչ ասէ: Որպէս թէ որ իմաստասիրեսցէ թէ ութ են մասունք բանին ըստ քերթողին՝ անուն, բայ, ընդունելութիւն, յոդ, դերանուն, նախադրութիւն, մակբայ և շաղկապ: Եւ հարցեալ յումեքէ, ասիցէ զմեկնութիւն՝ մակացութիւն է և եթէ ոչ՝ արհեստ է:

20 Իսկ Արիստոտել զբանին մասունս ի հինգ բաժանէ. յանուն և ի բայ և ի բան բացերևական, ի բացասութիւն և ի ստորասութիւն: Արդ, եթէ հարցեալ լիցի յումեմնէ, թէ վասն էր՝ տարածայնին սորա ի մասունս բանին, եթէ գիտիցէ ասել զպատճառս տարածայնութեան սոցա՝ մակացութիւն է, յորժամ ասասցէ, թէ ի սկզբանէ մասունք բանի անուն է և բայն: Իսկ այլքն ի համբակագունիցն ասացաւ և զարձեալ, զի այլքն այլ իմն պիտոյից սակս առան, որպէս ի նավին առ այլ իմն պէտս բերին ձիւթն և վուշն՝ առ ի մածուցանել զնավն, իսկ առ ի զօղս՝ պնդել բեռք և կամ առ ի գեղեցկութիւնս՝ զկարմրադեղն, և ոչ մի որ ի սոցանէ մաս ասի նավին, այլ պիտոյից սակս վերարերին առ նավն:

30 Այսպէս և բանի՝ ոմանք առ ի յարել և ի պնդել զմասունս բանի՝ որպէս շաղկապն, և ոմանք են առ ի լրութիւն, որպէս նախդիրն, ոչ որպէս առ ի կատարել, այլ առ ի գեղեցկացուցանել և պայծառացուցանել: Այսպէս և այլքն զիրաբանչիւր պէտսն առ բանն ունելով

ոչ ևս մասունք ասասցին՝ զայս ասել մակացութիւն է, ապա թէ ոչ՝ արհեստ է:

Դարձեալ, յորժամ արտաճառեսցէ, թէ շարախառնեալ էութիւնքս ի շորից տարերաց են, և յորժամ հարցցի՝ զվասն է՞րն, եթէ ասիցէ, 5 զի առանց հողոյ ոչ լինէր մարմին և ոչ թարց ջրոյ՝ մածոմն մարմնոյ և ոչ առանց օդոյ՝ շարժումն և ոչ առանց հրոյ՝ երևումն, զայս ասել՝ մակացութիւն է, ապա թէ ոչ՝ արհեստ է:

Իսկ յորժամ վարդապետեսցէ, թէ Քրիստոս Աստուած է՝ և Քրիստոսն օժեալ թարգմանի՝ այս արհեստ է, զի որպէս ուսալ ի գրոց, 10 նոյնպէս և վարդապետ է՞: Եւ մակացութիւն է, յորժամ հարցեալ զզիարդն, ասասցէ, թէ Բանն Աստուած զառեալ մարմինն, աստուածութեամբն էօժ և աստուածացոյց, և եղև առեալն իբրև զառօղն՝ համանգամայն և զոյգ Աստուած: Այս իսկապես մակացութիւն է և ոչ արհեստ, զի զգիտութիւն հանդերձ պատճառան ունի:

15 Այսպէս և ի տումարական արհեստս՝ հմտութիւն է ծանօթութիւն անուան ամսոց, որպէս ռամիկ մարդիկ ծանոթացեալ անուանցն և հարցանեն, թէ նաւասարդի և կամ հոռի քանի՞ է:

Եւ ներհմտութիւն է, յորժամ նորավարժքն, որ դեռևս ուսեալ լինին զՊատճէն տումարին, բայց ոչ զարհեստ առնելոյն:

20 Իսկ արհեստ՝ է առնել ամսամուտ, օրագիւտ, ծնունդ կուսնի և այլն:

Եւ մակացութիւն է գիտել, թէ ուստի պատճառին վերադիրք և եօթնեբեակ և շրջանք Արեգական և կուսնի և այլն՝ և ուսել զայս:

Այժմ տեսցուք նախ թէ՝

25 ԶԻՆՉ Է ՏՈՒՄԱՐ

Բայց յառաջ, քան զայս խնդրելի է, թէ քանոն և սահման իմաստասիրաց գոլ, զի ամենայն իրողութիւնս առ ի գիտել և ճանաչել զորպիսութիւն իրին. զչորեսինս զայս խնդրելի է, նախ՝ զէն, երկրորդ՝ զինչ էն, երրորդ՝ զորպիսի ինչ էն, չորրորդ՝ զվասն էրն: Եւ օրինակ այսմ՝ Սոկրատ. նախ խնդրելի է, թէ Սոկրատ անուն, որ ասեք,

¹ Մատթ. Ա25:
² Յովհ. Ա38:

¹ Կողոս Գ10:

է է՞, թէ՞ ոչ է՞, և ասասցեն, թէ է է, և այժմ կարօտ գոլ մեզ գիտել
զինչ՞ էն, վասն որոյ խնդրեմք զերկրորդն և ասեմք, թէ զինչ՞ է Սոկ-
րատն և ասասցեն, թէ մարդ է Սոկրատն: Եւ այսու ևս ոչ է կզերեալ
գիտութիւն սորա: Հարկիմք խնդրել զերրորդն, թէ որպիսի ինչ մարդ
է Սոկրատն: Եւ ասասցեն, թէ իմաստասէր է: Եւ դեռևս ոչ գոլ վախ-
ճան գիտութեան սորա: Կարօտիմք զչորրորդն խնդրել: Եւ ասեմք, թէ
վասն էր է Սոկրատ իմաստասէր: Եւ ասասցեն՝ վասն իմաստասի-
րելոյ երկնի և երկրի և վասն ծանուցանելոյ զգիտութիւն գոյիցս և
զորպիսութիւն սոցա մակացու արանց: Եւ այժմ եզերեալ վախճան
գիտութեան սորա: Եւ ծանեայք, զի Սոկրատէս է՞ է և մարդ է և
իմաստասէր է և քննող գոյիցս և ներածիցելոցն իմաստնացուցիչ:

Այսպէս իմա և զտումարս, զի ինքս իր մի է: Եւ թէ զինչ է,
ասեմք տումար է, և թէ որպիսի ինչ է տումարն, ասեմք՝ այսպիսի
ինչ է, որ առնէ եօթներեակ և վերադիր և այլն: Եւ թէ վասն էր՞
առնէ, ասեմք՝ զի գտանիցեմք զաւուրն պատկերն և զծնունդն և
զքանիք և զլրումն Լուսնի և այլն:

Եւ շորիք խնդրիքս ոչ միայն տումարական արհեստից մա-
սանցս կարելի գոլ լինել վերահասու մակացու արանց, այլ յաւէտ
ևս ի վերայ բոլոր գոյիցս, զի այս է սեռաբար և համառօտ գիտու-
թիւն և ապա մանրամասնաբար և յերկար գիտութիւն: Այսքան առ
այս:

Եկեսցուք այժմ և տեսցուք մանրամասնաբար. նախ, թէ զի՞նչ
է տումար, երկրորդ, թէ յումմէ՞ էառ զարտադրութիւն և ուստի՞
զսկիզբն, երրորդ, թէ յորո՞ց արարան տումարք, չորրորդ, թէ յորո՞ց
պատճառի տումարական մակացութիւնս:

1ա Վասն առաջնոյն գիտելի է, զի ըստ իմաստասիրացն և աստե-
ղարաշխութեան մակացութեանն՝ տումար է նախ եօթ մոլորակացն
շաղագ անսխալ գիտութիւն, որով կարասցէ գիտել զյամր և զարազ
շարժութիւն ընթացից նոցա:

Եւ գիտելի է, զի որ անմոլար աստեղքն են, նոքա առ չերկինս
այնպէս հաստատեալք են, որպէս բեռնն ի տախտակի, և գունդն
անմոլար ըստ ինքեան շրջեցուցանէ զնոսա:

Իսկ որ մոլորականք ասեն՝ սոքա տարրորշեալ գօտիք են և յա-
ւէտ բացակայութեամբ տարանջատեալք են ի միմեանց: Եւ ունին
սոքա երկակի շարժումն՝ այսինքն հասարակ և յատուկ: Եւ հասա-

րակ գոլ սոցա՝ յարեւից յարեւմուտս, իսկ յատուկ գոլ՝ յարեւմտից
յարեւելս:

Եւ զայս Լուսինն ցուցանէ մեզ, զի ծնանի յարեւմուտս և ըստ
կարգի կենդանակերպիցն գայ յարեւելս: Եւ զայս բարձր և խոնարհ
ընթացիւք ի հիւսիսոյ ի հարաւ:

Եւ է առաջին ի մոլորակս Երեւակն, զոր պարսիկք Զօհալ կոչեն,
և բարձրագոյն է, քան զամենայն գօտիս, և բնութիւն սորա ցուրտ է
և չոր: Սա ի մէկ աստիճանն կենայ Լ. (30) օր և յԼ. (30) աստիճանն՝
Ջ. (900) օր, որ առնէ երկու տարի և կէս՝ 34. (360) աւուր վերայ:
Եւ յԼ. (30) տարին պատէ զերկոտասան կենդանակերպքն:

Երկրորդ՝ Լուսնթագն, զոր Մուշթարի անուանեն: Եւ ունի բնու-
թիւն ջերմ և գէշ: Սա կենայ ի մէկ աստիճանն երկոտասան օր և ի
կենդանակերպն երկոտասան ամիս: Եւ ի երկոտասան տարին պատէ
զկենդանակերպսն:

Երրորդ՝ Հրատն է, զոր Մառեխ ասեն: Եւ բնութիւն սորա ջերմ է
և չոր: Սա կենայ յաստիճանն օր մի և ութ ժամ: Խ. (40) օր կենայ ի
կենդանակերպն և ի տարին և ի չորս ամիսն պատէ զկենդանա-
կերպսն:

Չորրորդ՝ է Արեգակն, զոր Շամս կոչեն: Բնութիւն սորա ջերմ է
և լուսաւոր: Սա կենայ յաստիճանն մէկ օր և Լ. (30) օր կենայ ի
կենդանակերպն և ի տարին պատէ զկենդանակերպսն:

Հինգերորդ՝ Լուսաբերն, որ է Արուսեակն, զոր Զոհրա ասեն: Սա
ջերմ է և խոնաւ: Սա կենայ յաստիճանն կէս օր և ի կենդանակերպն
կէս ամիս և ի վեց ամիսն կատարէ զկենդանակերպսն: Եւ այլք ասեն,
թէ Յեւ. (348) օրն կատարէ:

Վեցերորդ՝ Փայլածուն է, զոր Օտարիտ ասեն: Սա միշտ շրջի
ընդ Արեգականն և սակաւ հեռանայ ի նմանէ: Եւ զընթացս իւր կա-
տարէ ՅԼ. (338) օրն և այլք ասեն, թէ յերեք ամիսն, վեց ժամ յաս-
տիճանն կենայ և եօթ օր և կէս ի կենդանակերպն:

Եօթներորդ՝ Լուսինն, զոր Ղամար կոչեն, և հով, գոլ և գէշ: Սա
յաստիճանն կենայ մէկ ժամ, Լ. (30) ժամ կենայ ի կենդանակերպն,
յԼ. (30) օրն պատէ զկենդանակերպսն՝ կէս օր պակաս:

Իր երկրորդ՝ տումարն ժողով ասի, և է այս ստուգաբանորէն անուն,
զի վասն ժողովեալ աստեղացն գիտութեան ժողով անուանեցաւ. ոչ
միայն մոլորակացս, որ ասացաւ, այլ և անմոլարիցս, այսինքն, կեն-

դանակերպիցն և Վիշապին և բւեռացն հիւսիսային և հարաւային, Լայկին և Սայլին և այլ նշանաւոր աստեղաց առհասարակ:

14 Երրորդ՝ ժողով ասի, վասն զի իմաստասէրք և վարդապետք կամեցան զտիեզերս ժողովել յայսմ իմաստասիրութիւն, որպէս ասէ՝
5 էաս իմաստասէրն ժողովեաց զբազումս ի բազում աշխարհաց զարսկորովամիտս ի քննութիւն շրջանաց Արեգական և Լուսնի: Քանզի անսխալ դիտելն զսոսա գործ մեծ է ի ուսումնական մակացութիւնս, զի ուսումնականն քառակի բաժանի՝ ի թուականն, յերաժշտականն, յերկրաշափականն և յաստեղաբաշխականն: Եւ քանակի են սոքա,
10 զի ամենեքեան տարրորջ քանակին բազկանան՝ այսինքն թուով, և թիւն տարրորջ քանակ է: Բայց զանազանին, զի թէպէտ հասարակ գոյ սայց տարրորջն քանակ, այլ ոմանք շարաբանին յանշարժ շարունակս, և ոմանք ի շարժուն շարունակն, քանզի թուականն թուի ի մասնկունս մատանց յանշարժ շարունակ մարմնոյն:

15 Ոչ անշարժ ասեմ ըստ ներգործութեան, այլ ըստ անբաժանելի գոյոյ ի մարմնոյն: Նոյնպէս և երաժշտականն շարաթուի տարրորջ քանակին ի անշարժ շարունակ քնարի փայտին: Այսպէս և երկրաշափականն ի անշարժ շարունակս երկրի: Իսկ աստեղաբաշխականն ի շարժուն շարունակս երկնից:

20 Ի դիրքին գոյ անշարժին մակացութիւն, քան զշարժականին, զի որ անշարժն է, երեսք տեսանել կարէ և շօշափելիքն ըմբռնել, իսկ որ շարժինն, անկար գոյ ոչ ասեմ ըստ էութեան, քանզի երեսք տեսանել կարեն զընթացս երկնից և լուսաւորաց ըստ էութեան, այլ ի նորք շափոյս ընթացիցն տկարանան: Եւ գիտութիւն ի շափոյսն է և ոչ չէութիւն, վասն որոյ, զոր ինչ իմացականն ըմբռնէ թարց զգայութեանց,
25 զժուարին է այն ի մակացութիւնս:

Վասն որոյ բարձրագոյն է գիտութիւն ընթացից լուսաւորացս յուսումնականն, որ է յաստեղաբաշխականն, քան զայլ երիս մասունս:

30 Եւ զայս օրինակաւ բացայայտեսցուք, քանզի թուականն իմաստասէրն ի մատունսն և կամ զրոշմեալ ի քարտի, զի զիրն յարազրէ զարուեստ՝ զթիւն յեռանկիւնիսն և ի քառանկիւնիսն: Քանզի առեալ զմիական և զերկեական, զմիական և զերրեական, զմիական և զքառեական և շինէ զանկիւնաւոր թիւսն: Նաև կալեալ զմատունսն, ցուցանէ զծնրն-
35 զական թիւսն ի ներքոյ տասնեկին: Ասէ մի և բերէ զերկեական ի վերայ և ցուցանէ ծնեալ զերրորդն, բերէ զերրորդն և յայտնէ զվեցե-

րորդն, բերէ զչորսն և ցուցանէ զտասներորդն: Նաև ցուցանէ զդարսն և զկոճատսն, զզոյգն և զանզոյգն, նաև զթիւսն և զսկիզբն թուոցն: Միական ցուցանէ սկիզբն ընդհանուր թուոց դարից և կոճատաց: Եւ զերկեական՝ դարիցն, որ է զոյգն՝ որպէս երկու, շորս, վեց, ութ, տաս:
5 Եւ ցուցանէ զերկեական օրինակաւ՝ ոչ գոյ թիւ, այլ սկիզբն թուոցն, վասն զի ոչ ունի յյատակութիւն թուոյ: Վասն զի ամենայն թիւ բազմապատկելով թիւ մեծ բացակատարէ, քան զշարադրելովն, որ գոն. երիցս երեք՝ ինն և երեք, երեք՝ վեց, չորիցս շորս՝ տասնվեց, շորս, շորս՝ ութ, հնգիցս հինգ՝ քսանհինգ, հինգ, հինգ՝ տասը, վեցիցս՝
10 վեց՝ երեսունվեց, վեց, վեց՝ երկոտասան, եօթնիցս եօթ՝ քառասունինը, եօթ ու եօթ՝ չորեքտասան, ութիցս ութ՝ վաթսունչորս, ութ և ութ՝ վեշտասան, իննիցս իննը՝ ութսունմէկ, իննը ու իննը տասնևութ, տասնիցս տաս՝ հարիւր, տաս և տաս՝ քսան: Ահաւաղիկ, բազմապատկելով մեծ թիւ արար՝ իննը, քան թէ շարադրելով, որ է վեց:
15 Բայց զերկեական ոչ այսպէս, քանզի բազմապատկելով և շարադրելով զնոյն թիւ բացակատարէ՝ զչորսն. երկիցս երկու շորք և երկու երկու՝ շորք: Ուստի յայտ արար, թէ երկեական ոչ է թիւ, այլ միայն սկիզբն թուոց, զի զմիակի յատկութիւն ունէր, որ է սկիզբն թուոց, զի թէ շարադրես մէկ և մէկ, առնէ երկուք և թէ բազմապատկես երկիցս
20 մէկ, դարձեալ երկու սոնէ, ապա և երկեական սկիզբն է թուոց դարիցն և եթ: Եւ դարձեալ բաժանէ զքանակն ի երկուս տեսակս՝ ի տարրորջն և ի շարունակն: Եւ զիրաքանչիւրն՝ դարձեալ երկակի, որ լինին շորք: Զի տարրորջն է, որ ըստ ինքեան ասի և է, որ ըստ բազաղանութեան: Ըստ ինքեան, յորժամ զթիւն առանձին առնումք, իսկ ըստ
25 բազաղանութեան, յորժամ զսոսա առ այլ թիւս բազաղանեմք եթէ տասն հնգին կրկնապատիկ է և քսանն տասինն: Նոյնպէս և շարունակ քանակն երկակի է, քանզի է, որ անշարժ է և է, որ շարժուն, անշարժ, որպէս երկիր, զի ոչ շարժի յայսմ տեղոյ յայլ տեղի, իսկ շարժուն՝ որպէս երկին, որ է մշտաշարժ: Գարձեալ ուսուցանէ, եթէ
30 տարրորջ քանակին մասունքն ոչ ունին զհասարակ սահմանն, զի հինգ և հինգ մասունք են տասինն, զի մէկ հնգին մասունքն այս են՝ մէկ, երկու, երեք, շորս, հինգ, իսկ երկրորդին՝ վեց, եօթն, ութ, ինն, տասն: Եւ ոչ մի ի մասանց սոցա ունին հասարակութիւն, զի մէկն և զվեցն ոչ ունին հասարակութիւն, և ոչ երկուսն և եօթն և ոչ այլն:
35 Գարձեալ, ըստ համարողացն՝ առաջին հինգն հնգետասան թիւ բացակատարէ, իսկ երկրորդ հինգն՝ քառասուն՝: Եւ ոչ մի ունին հասար-

րակութիւն, այլ է հնգետասան և այլ՝ քառասուն և վասն այսմ տարորոշ քանակ ասին: Գարձեալ՝ զի և ոչ մասունք տասինս զիր ունին առ միմեանս, զի հինգ և հինգ մէկ ի միոյ կարօտին կցիլ յիրեարս, զի տասն, որ տարորոշ քանակ է և ոչ ինչ ունելով ընդ մէջ, որով կարող գոյ շարամերձիլ զայս մասն առ այն, քանզի թէ առնես զմիակն և զնես ի մէջ հնգիցն, անկանի ի տասն լինելոյն:

Իսկ շարունակ քանակին մասունքն առ մի սահման շարամերձին, որպէս որմոյ քար, որ է շարունակ քանակ, քանզի եթէ զօրութեամբ հատանես և բաժանես ի բազում տեղիս զամենայն որմունս նորա, հատեալքն և բաժանեալքն առ մի սահման շարամերձին, քանզի այս հատած յայն հատած շարամերձեալ իմանի, յորժամ իմանալի զգիծն առնուցուս ի լինել բաժանման: Քանզի իմանալի զիծն զօրութեամբ առնելով զբաժանմունսն և միջակ գոլով զօրութեամբ բաժանելոյն գտանի այս մասն շարամերձեալ իմանալի գծով յայն, և այն՝ իմանալի գծով յայլ, և ի ձեռն իմանալի գծին շարամերձեալք գոլ միմեանց: Բայց ասացուք զօրութեամբ բաժանեալ զշարունակն և ոչ ազգմամբ, վասն զի ազգմամբ բաժանեալ տարորոշ առնէ և ընկնու ի բնութենէ շարունակին:

Գարձեալ ցուցանէ, թէ տարորոշ քանակն պատուականագոյն է, քան զշարունակն, վասն զի տարորոշ քանակն կարող գոյ անշփոթաբար զանազան տեսակս ընդունել, որպէս քսան և հինգն տարորոշ քանակ գոլով՝ անշփոթաբար ընկալաւ զանազան տեսակս, բոլոր գոլով և քառանկիւնի: Եւ բոլոր, վասն զի որպէս ի բոլորումն սկիզբն շարամերձեալ գոյ կատարմանն, վասն զի կարող գոյ ի բոլորումն նոյն նշան և սկիզբն լինել և կատարումն: Այսպէս և աստանօր ի հնգէ սկիզբն արարեալ բազմապատկաբար ավարտեցաւ բոլորաբար ի նոյն, այսինքն հինգ, որպէս հնգիցս հինգ՝ քսան և հինգ. ահա ի հնգէ սկիզբն արարեալ ավարտեցաւ ի հինգ:

Իսկ քառանկիւնի, վասն զի ամենայն թիւ յինքեան բազմապատկելով զբառանկիւնի թիւսն բացակատարէ, որպէս երիցս երեք՝ ինն, չորիցս չորք՝ տասն և վեց. նոյնպէս և հնգիցս հինգ՝ քսան և հինգ: Իսկ շարունակ քանակն ոչ կարէ անշփոթաբար տեսակս ընդունել զանազանս, վասն զի մոմ, որ է շարունակ քանակ, եթէ ոք ստեղծանէ զնա ըստ Տիգրանայ կերպարանին ոչ կարէ այլ կերպարանս ընդունել, եթէ ոչ՝ յառաջագոյն ի բաց եղծանի, ապա թէ ոչ՝ շփո-

թութիւն լինի: Ահա զայս ամենայն ուսանելով մերձ է առ և ոչ ի բացեալ:

Գարձեալ ուսուցանէ զտարորոշ քանակն, որ է թիւ, զի ոմանք անջատական համեմատութիւն ունին ըստ երկրաչափին, իսկ ոմանք յարեցեալ համեմատութիւն, որպէս չորսն և ութն, զի յորժամ կըրկնապատկես զերկուսն, լինի չորս և զչորսն, լինի ութ: Եւ յորժամ զութն յերկուս բաժանես, լինի չորս և զչորսն՝ լինի երկուս: Եւ յարի ութն առ չորսն, և չորսն առ երկուսն, զի չորսն և ութն դարք են: Իսկ երկուսն և վեցն և տասն անջատական համեմատութիւն ունին առ իրեարս, զի յորժամ կրկնապատկես զմէկն՝ լինի երկուս և զերեքն՝ լինի վեցն և զհինգն՝ լինի տասն: Եւ են սոքա դարք, իսկ յորժամ յերկուս հատանես, լինին կոճատք, զի երկուսն մէկ և մէկ լինի, և զվեցն՝ երեք և երեք և տասն՝ հինգ և հինգ: Եւ սոքա անջատական ասին, զի ոչ դար և եթ, այլ դար և կոճատ:

Գարձեալ, Արիստոտել զտարարոշն յերկուս տրամատէ, այսինքն ի թիւ և ի բան: Բայց թէպէտ բանն տարորոշ քանակ է, այլ ոչ շարաբերի առ թուականն, այլ յաւէտ շարադասի առ երաժշտականն, զի զմասունս բանի, որ ձայնիւ արտաբերի, քննէ զսուղն և զկրկնապատիկն, որպէս քերականքն զբնութիւն գրոյն՝ զսուղն և զերկամանեակն և զերկարն, որ է ո և ա և օ, բայց ոչ զներտրամադրեալ բանին, որ ներխորհրդոշն է, վասն այն աստ զբանն զանց արարաք առ թուականն քննութիւնս, զի ըստ երաժշտին զերկարն և զսուղն արտադատէ:

Եւ ահա յայտնի եղև, զի թուական զիտութիւնս ի ուսումնական մակացութիւնս զիրագոյն է, քան զտումարական մակացութիւնս, զի մերձ է առ մեզ և ընտանի, զի մանկունսն ընդ արձակել լեզուին նախ զհամարողական թիւս ուսանին և ապա զայլ արհեստս:

Նաև տեսանէ զհամարս թուոցն ի մատունսն իւր և յայլ զանազան նիւթս թուոց, որ են անչափ, իսկ Արեզական և Լուսնի ընթացք՝ սաստիկ հեռագոյնք և անտես երեսաց շափղբ նոցա, վասն որոյ և բարձրագոյն է գիտութիւն սոցա ի մասունս ուսումնականին:

Իսկ երաժշտական իմաստասէրն քննէ ի վերայ շարունակ քնարին, որ է փայտն ի բազում մասանց շարամիացեալ զտարորոշ թիւ աղեացն առ շարունակն մակապնդեալ՝ թէ որն է ի նոցանէ, որ սուր է և կամ բուր, զիլ և կամ բամբ, սուղ և կամ երկար: Զի թէ քնարն է, որ ունի զտասն աղին համարով ի լարս մետաքսեա և թէ սալիդին.

որ է քառասուն աղի ի թելս պղնձի և թէ զանոնն, որ է ի վերայ եօթանասուն լարից, և թէ արղանոնն, որ է վեց հարիւր աղի ի թելս պղնձի, ի մի անգամն յորժամ շարժէ զկտրնտոցն ի վերուստ ի վայր ի վերայ լարից, քաղցրահնչող ձայնից նուագարանին, առժամայն 5
ճանաչէ ի տարրող բազմութիւնս աղեացն, թէ որն է սուր և որն բութ, որն զիւ և որն բամբ, որն սուղ և որն երկար, որն թուլ և որն պինդ և թէ որոց պարտ է ունել զկէս ձայնս և որոշ զերկասպատիկն և որ զկիսաբողբոն և որ զմակեռակն և որ զմակաքառեակն: Եւ առեալ զպղնձի բութակն ի ձեռինն և ձգէ ի բոլթսն: Եւ զթուլսն պնդէ և 10
զյաւէտ ձիգն թուլացուցանէ: Եւ համահասարեալ համոզէ զբազմութիւն լարիցն ի մի միաբանութիւն դաշնակից լինել միմեանց և ուխտաղիրք ի ձայնատրութիւն երաժշտական արհեստին ըստ կամաց երաժշտին: Զի մի որ ի նոցանէ հանիցէ խոշոր ձայն և կամ բոտոտա և ապականեսցէ զներդաշնակաւոր ձայնսն քաղցրահնչող 15
նուագարանին և փցուն երեկցուցէ զերաժիշտն: Եւ յորժամ զնուագարանն այսպէս յորինէ և կազմէ ի յարմար ձայնատրութիւն, որպէս զօրավար զօրս ըստ արքունական հրամանին, յայնժամ առեալ ի ձեռն զկտրնտոցն և շարժէ արուեստաբար զմասունսն ի վերայ բազմութեան լարիցն: Եւ աստ տես զներդաշնակաւոր ձայնատրութիւնս բազմութեան աղեացն, թէ որպէս դաշնակիցք և 20
ուխտակիցք եղեն միմեանց ոչ արտաբոյ կամաց երաժշտին ներձայնեալ զձայնս անյարմարս, այլ զօրէն արքունի զօրաց ըստ կարգելոյ զօրավարին, ըստ կամաց արքունի հրամանին ի գործս պատերազմական խաղուց թէատրոնին և կամ ի գործս պատերազմական հանդիսին դաշնակցաբար ներգործեն ըստ կամաց թագաւորին: Այսպէս և երաժիշտն բերեալ յինքեան զձե թագաւորին և զձեռն՝ զմամնութիւն զօրավարին, և զկտրնտոցն իբրև զգործի խաղացուցանելով ի լարսն, արագ-արագ շուտափութութեամբ խառնէ զզանազան ձայնսն ի ներդաշնակաւոր լարսն զսուրն և 25
զբութն, զզիւն և զբամբն և զայլսն: Եւ իբրև ի միոյ լարէ հանէ զքաղցրաձայն և զզարմանալի ձայնատրութիւնս ի զանազան երանգքս և ի գոյնս, յորժամ անոյշ-անոյշ խաղացուցանէ զմասունսն ի նուխառն նուագարանին, յայնժամ տես զզարմանալի հրաշս, որ ներգործի ի պես-պես խաղացմունս մատանց երաժշտին, թէ որպէս յափշտակէ և կողոպտէ զմիտս լսողացն, թէ ի զօրավարաց որ 35
իցէ, և յապուշս դարձուցանէ ի յանուշութիւն հեշտալուր ձայնիցն,

մինչև մոռանայ զինքն ի նոյն հեշտութիւն: Եւ ոչ կամի ընաւ մեկնիլ ի քաղցրորակ ձայնատրութենէ նուագարանացն. զոմանս ի ցանկութիւն շարժէ, զոմանս ի հեշտութիւն, զոմանս՝ լաց, զոմանս՝ խնդալ, զոմանս՝ խնութիւն, զոմանս՝ քաղցրութիւն, ոմանց՝ ազգ 5
և ազինս դարձուցանէ զմիտս, ոմանց՝ անշարժութիւն ի տեղիս իրեանց, ոմանց՝ ախ, ոմանց՝ վայ, ոմանց՝ կանչ, ոմանց՝ ճիշ, ոմանց՝ առ խնութիւնս, ոմանց՝ սգալ, ոմանք նայեն այս կոյս և այն կոյս, ոմանք համբիրեն զմիմեանս, իբր թէ ուրախ են այսօր, ոմանք պարս ոմանց բերին, այլ ոմանք ազգի-ազգի և պես-պես 10
ձայնս ածեն ի հնչմանէ նուագարանացն: Եւ տես զայս ի հռչակաւոր երաժշտապետն Աղեքսանդրի յՈրփես, զի ոչ միայն բանականք, այլև անբան զազանքն խայտային և խնդային և ի խաղս ելանէին յառաջի արքային, յորժամ նուագէր Որփես: Եւ յաւուր միում, յորժամ նուագէր առաջի արքայի, ի խրախութեան լինելով 15
Որփես, զպատերազմականն խաղացուց զմատն, և նա իսկոյն զինեալ արտաքս վազեաց: Իսկ զարձեալ զուրախականն շարժեալ զնուագս, և նա անդէն դարձեալ ի բազմականն ձեմէր խրախութեամբ:

Եւ թէպէտ այս այսպէս է, սակայն և երաժշտական գիտութիւնս զիւրին է ի մակացութիւնս մասանց ուսումնականին, զի ունի զքնարն ի գրկին և զլարսն ի քնարին և ոչ բարձրագոյն՝ իբրև զԱրեգական և զԼուսին, վասն որոյ մեծ և արժանի է զարմանալոյն մակացութիւնս սոցա, քան զայլ մասունս ուսումնականին:

Նոյնպէս իմա և զերկրաշափականն, որ եղաք ականատես յերկրին եգիպտացուց, քանզի և նա շափէ կանգունաւ գաւազանին, որ ի ձեռն ի վերայ անշարժ շարունակի երկրիս զշափ արտորէից անդաստանացն: Զի թէ Ռ. (1000) կամ Ս. (2000) մոթ և այլ ավելի և պակաս սերմ, որ ի միում արտի սերմանեալ է բովանդակ զեղջն ի միասին, և ոչ ակօս մի և խիճ մի կայ նշան ի մէջ արտորէիցն, զի յայտնի լինիցի իմն և քոյն, սորայն կամ նորայն: Այլ է միատարր և աննշան իբրև զժով, և եկեալ երկրաշափին, մտանէ ի ներս և հարցանէ զտէր արտին, թէ քանի մոթ սերմանեալ է քո: Եւ նա ասէ զորշափն, եթէ տասն և կամ ի քսանն: Եւ շափէ նա զչորս ճակատն արտին կանգունաւ գաւազանին և հարկանէ ցից ի զետինն և կապէ բարակ լար մի իբրև զկանթեղան ի ցցէ և ասէ՝ «այդ քո է հնձեա զայդ»: Եւ թէ ժՌ. (10000) մոթ սերմանի ի միում արտի, սերմա-

նեալ իցէ այնպէս, չափէ երկրաշահական արուեստին, զի մի մոթու տեղ ոչ առաւելու և ոչ նուազէ: Եւ այս գործ մեծ է, բայց սակայն և ոչ սորայս գիտութիւն իբրև մոլորակացն, վասն մերձ գոլոյն, քանզի կայ ինքն ի վերայ երկրի և չափելով զգետինն, բացակատարէ զարուեստն իւր:

5 Երկրորդ, բարձրագոյն է սոցայցն գիտութիւն, զի այլ երիցն գիտութիւն ի մասնաւոր տեղիս տայ զծանօթութիւն. ոմն՝ յեզրիպտոս և այլքն ի տեղիս-տեղիս, իսկ սոցայցն համաշխարհական է գիտութիւն և բոլորիցն հարկաւոր:

10 Երրորդ, բարձրագոյն է սոցայս գիտութիւն, զի այլքն արտաքոյ եկեղեցւոյ և աշխարհականացն է գիտութիւն, իսկ սոցայս՝ ի ծոց եկեղեցւոյ և բաբունեաց փիլիսոփայից և կարգաւորաց է մակացութիւն:

15 Զորրորդ, բարձրագոյն են սոքա, զի նոքա ի ստորինս երկրի և ստորնականաց իրաց են գիտութիւն, և սոքա բարձրութեան երկնից և լուսաւորաց նորին են մակացութիւն:

Հինգերորդ՝ զի նոցայն նիւթ յուր և անարգագոյն, զի ոմնմն հող և այլում քնարս և ի միուսումն նիւթականքս և թիւս, իսկ սոքա՝ պատուականագոյն տեսակ և ճառագայթափայլ որակ:

20 Վեցերորդ՝ զի նոքա ուր և իցեն, նոցա ևեթ տեսանին, իսկ սոքա են երկնային դիտակ՝ տեսանեն զամենեսան և յամենեցունց տեսանին:

Եօթներորդ՝ զի նոցայնն գիտութիւն ոչ բոլոր արարածոցս շնորհէ զխնդութիւն և ոչ՝ ոչ զիտելն զտրամութիւն, իսկ սոցայն 25 ընդհանուր եկեղեցւոյ բերէ զխրախոսութիւն և ոչ զիտելն սուգ մեծ բերէ ընդհանուր եկեղեցւոյ և ուժգին տրամութիւն: Որպէս բազում անգամ պատահեալ ի մոլորումն Զատկաց ևս առաւել յաւուրս էասայ իմաստասիրի, ի լնուլ Մ. (200) եկին Անդրէասայ:

Ութերորդ՝ զի նոցայն վասն հեշտութեան արհեստին ի վաղընջուց ժամանակաց ի ճարտարութենէ մարդկան եզերեալ եղև բոլորիցն գիտութիւն, իսկ Արեգականս և Լուսնիս՝ ի վեցերորդում դարիս ի քրտնաջան աշխատութեանց կորովամիտ փիլիսոփայից: Զաւուրս Խ. (40) խաղացեալ զընթացս նուրբ շաղագ շրջանացն, մինչ զթացեալ Հոգւոյն Սրբոյ ի շարշարանս նոցա և բացեալ զմիտս 35 նոցա և ծանոյց զգնացս ընթացից նոցա ի շրջանս նոցա: Ապա ուրեմըն բարձրագոյն է գիտութիւնս սոցա, որ բոլորին մակացութիւն է:

Հոգւոյն Սրբոյ աւարտեցաւ այս ի վախճան ժամանակի:

Իններորդ՝ զի նիւթ նոցա խաւարատեսակ է և սեաթորմի, իսկ նիւթ տումարական արհեստիս, որ են լուսաւորք ջահաւորեալ, լուսաւորեն զփորուածս երկնից ծագէ ի ծագ, որպէս ի տին արփիագեղն Արեգակ և ի զիշերն՝ լոյս աստեղացն և Լուսնի:

5 Տասներորդ՝ բնութիւնս ուսուցանէ զազնուութիւն մեծութեան սորա առ մասունս ուսումնականին, զի որ առ ընդ իբքն են ի նըրբահայեաց տեսութիւնս և բարձրագոյն ի խորին իմացմունս, նոքա յաւէտ մշտաշարժութեամբ ցանկան բերիլ ի սոցայն իմաստասիրել քննութիւն և հասեալ ի գիտութիւն սոցա՝ զուարթանայ սիրտ նոցա ի մեծագոյն խրախոսութիւնս:

10 1դ. Զորրորդ՝ ասի ժողով վասն զի ներգործութեամբ ի հաշիւութեան ժողովեցաւ Լուսինն առ Արեգակն, զի յաւուր հաշիւութեան Լուսինն ի լրմանն էր տասնևհինգ ւուրն ձևի և քանակի, քանզի բատր էր և բոլոր և լիալուսին: Իսկ զի Արարիչն Աստուած ի վեցերորդ ժամուն, որ մերկ բեռեալ կայր ի խաշին, շհանդուրծեալ լուսաւորացն մերկութեան Արարչին իւրեանց, մերկացուցին՝ զինքեանս ի լուսոյն իւրեանց, զի ծածկեսցեն զմերկութիւն Արարչին իւրեանց: Իսկ Լուսինն ի ներքին կիսագնդին գոլով ի կամարն երկնից, որ է ներքին կորնթարթն հանդէպ Արեգականն, զի Արեգակն ի վեցերորդ ժամուն զվերին կամարս ուներ զհասարակ ւուրն տեղի, զի Արեգակն զգարնանային հասարակութեան զգօտին ունէր, ուր հոյն էր և երկոտասան ժամս շափէր զօր տուրնջեանն, և այսպէս Լուսինն զներքին կամարն ունէր: 2ի ընդ խոնարհիւն Արեգական յերեկոյին ի մուտն Արևու ժամանեսցէ Լուսինն յելք Արևու Արդ՝ ի վեցերորդ ժամուն, որ մերկացաւ Արարիչն, մերկացաւ Արեգակն ի լուսոյն և խաւարեցաւ վասն ակներն տեսանելոյ զմերկութիւն Արարչին իւրոյ: Եւ Լուսինն ի նոյն նուագն առանց ակներն տեսութեան, զի ի ներքին կիսագնդին գոլով, ծանեաւ զմերկ բեռեիլն 30 Արարչին իւրոյ ի խաշին և զխաւարիւն համասեռինն իւրոյ: Եւ ինքն ի տեղին իւր մերկացաւ ի լուսոյն և խաւարեցաւ: Եւ խաւարեալ կերպարանովն յական թօթափելն սլացաւ, հասաւ, մերձեցաւ, կցեցաւ և ժողովեցաւ առ Արեգակն և գնաց ընդ նմա զերևթ ժամս խաւարեալ: Եւ յիններորդ ժամուն, յորժամ Յիսուս ի ձայն բարձր աղաղակեաց և արձակեաց զհոգին ի ձեռն Հօր, ծանեան լուսաւորքըն, եթէ կատարեցաւ փրկութիւն մարդկան մահուամբն Քրիստո-

սի: Վաղվազակի խնդակից եղեն փրկութեան մերոյ և զգեցան զպատմուճան լուսոյ փառաց իւրեանց և Արեգակն ընթացաւ զճանապարհն իւր և Լուսինն դարձեալ ի տեղի իւր, յարեելս, ուստի պարտ էր նմա երեկոյին ծագել ի նմին և ի նոյն ժամու հասանել ի տեղի իւր: Դարձեալ դարձաւ յարեմոտսս զնալ ըստ սովորութեան իւրում: Եւ այս եղև պատճառ դարձին Դիոնեսիոսի, զի ի նմին աւուր, յորում այս եղև, պատահեցաւ ի Պալպաք քաղաքի պատճառաւ դատաստանի իրիք: Եւ յորժամ քննեաց ըստ աստեղաբաշխութեան արհեստին, զի գտցէ զպատճառս խաւարման Արեգականն և հետև այն, ինչ զի ահա և Լուսինն ընդ նմա էր, զի ի սլանալ Լուսինին խաւարեալ էր և այնպէս եհաս առ Արեգակն: Զի թէ լուսով էր սլացեալ, տեսեալ լինէր Դիոնեսիոսս զսլանալն նորա, որպէս տեսանեմք զթոբիչս աստեղաց: Վասն այն հիացաւ, թէ ուստի եհաս Լուսինն յԱրեգակն, զի լրմանն գոլով և տեղիք սորա ներքին կամարն է: Եւ ապա ազգմամբ Հոգւոյն իմացաւ, թէ անծանօթ Աստուած կայ ի խաչին վասն փրկութեան աշխարհի և անշարշարելի Աստուած մարմնացեալ շարշարի և մնայ անշարշարելի: Վասն այն սուգ առին արարածք, և գրեաց զամն և զամիսն և զօրն և զժամ: և ի քարոզելն Պօղոսի յԱթենս վաղվազակի հաւատեաց: Եւ թէ տարակուսեցի որ, թէ զիարզ անզգայ արարածք զգալին զշարշարանս Արարչին իւրեանց, զիտացէ այնպիսին, զի զգալի արարածք առ մեզ են անզգայ և անբան և անկենդան, այլ առ Աստուած ամենեքեան զգայունք են և բանականք և կենդանի: Զի հոգմք և ծովք լսեն հրամանին Աստուծոյ և ճանաչեն զձայն նորա և վաղվազակի կատարեն զհրամանս՝ որպէս ծովն Կարմիր և ծովն Տիբերեայ հոգմովքն հանդերձ: Եւ դարձեալ՝ զի ճանաչէր զԱրարիչն իւր և բառնայր ի վերայ երեսաց իւրոց: Եւ Յորդանան յակն աղբերն իւր դառնայր: Եւ էշն զբաղաամ մոզն բանիւ յանդիմանէր: Եւ կէտն որպէս զբանական հրամանին Աստուծոյ լսէր, և զՅունան կլանէր և թքանէր: Եւ անխոս մանկունքն իբրև զքար ի գալստեան Տեառն յԵրուսաղէմ փառաւորէին զԱստուած: Եւ այլ ամենայն արարածք, վասն որոյ ի ժամ Խաչելութեան իւրաքանչիւր ի բնութիւնս իւր ծանեան արարածքս զշարշարանս Արարչին իւրեանց, որպէս զբանականն: Վասն որոյ, Արեգակն և Լուսինն մերկանային զլոյսս իւրեանց: Եւ երկիր տատանէր ի հիմանց և վէմք պատառէին և վարագոյրն ցելոյր և գերեզմանք բանային, մեռեալք յառնէին: Ապա և

ամենայն ստեղծուածքս առ Աստուած զգայուն են և կենդանի և բանական և լսող են ձայնի նորա և կատարողք հրամանաց նորա, որպէս ասէ Երեմիա, որ քառաքէ զլոյս և զնաց կոշեաց զնա և լուանմա զողութեամբս¹:

- 5 1և Հինգերորդ՝ ժողով ասի տումարս, զի վարդապետք և իմաստասէրք եկեղեցւոյ ի ժողովիլ մոլորակացո զերկուսս զայս՝ ալսինքն զԱրեգակն և զԼուսինն, միայն ժողովեցին ի մակացութիւն տումարական արհեստին. զԱրեգակն վասն դարնանային հասարակաւորութեան և զԼուսինն վասն լրմանն: Եւ շատ համարեցան սորօք բավական լինել եկեղեցւոյ մանկանց վասն կրկին պատճառի: Եւ ինչ վասն լըրմանց և Զատկաց, վերադրաց և եօթներեկաց և այլոցն, սորօք կարող զոն զլուսաւորիլ: Երկրորդ, զի խնայելով ի տկարսն վասն յաւէտ աշխատելոյ, զայլոցն գիտութենէ զանց արարին: Եւ ըստ այսքան կերպի տումարս ժողով անուանեցաւ: Իբր հարցանելով ումեք՝ տումարս զիտես, որ է ժողով, զիտես, այսինքն զժողովեալ աստեղացն գիտութիւն ճանաչես զԱրեգակն և զԼուսին, զոր ժողովեցին հարքն ի մակացութիւն լրմանց տէրունեան Զատկի: Այսքան առ այս:
- 20 2ա Վասն երկրորդին ասելի է, թէ տումարական մակացութիւնս առ մարդիկ զսկիզբն յԱստուծոյ էառ: Եւ զայս ի շորս տեղիս: Եւ յարարչութեան Զատիկն, երկրորդ յօրինադրական Զատիկն, երրորդ ի փրկական Զատիկն, չորրորդ ի նորոգման Զատիկն: Գիտելի է, զի տումարական արհեստս հարկաւորաբար և յատուկ յաղագս
- 25 Զատկաց է և լրմանց նորա, և երկրորդաբար՝ այլոց տօնից և մասանց նորա: Զի որպէս արար Աստուած և սահմանեաց ի շորեսին Զատիկան, զնոյն և մեք ըստ օրինակին նորա արացուր: Եւ նախ զարարչութեան Զատիկն, զոր արար Աստուած Աղամայ և ամենայն զգալի արարածոցս յեա յերկուց տուրց հասարակաւորութեան, զի ի հասարակածին ետեղծ Աստուած զԱրեգակն և զԼուսին, որ ըստ եբրայեցոց էր յաւելեաց ի շորս և ըստ հռոմայեցոց՝ մարտի ի քսան, յաւուր շորեքշաբթոյ: Իսկ յաւուր ուրբաթու, յորում արար զմարդն և զգեցոյց նմա հանդերձս Զատկի զեռակի պարգես՝ զբահանայութեան, զմարգարեութեան և զթագաւորութեան ի հոգին

1 Բարուք 9:33:

և զփեսայն նազելի շքնաղագեղն կուսիւ, զոր հարսնացոյցն Ադամայ զօրիորդն վայրի, զարդարեալ պաճուճեաց զնոսա ի մարմին վայելուչ ի հանդերձս յոսկէհուռս լուսեղեն զգեստին և ետ նոցա յուրախութիւն Զատիկի զերկինս իւր լուսաւորօքն և զգրախտն իւր իմանալի տնկօքն և զօրդ իւր երաժշտական թռչնօքն և զերկիրս իւր զանազան տեսակացն կենդանեօքն և զլուրս ծովուց իւր ամենափարթամ լիզակօքն, զի մի ինչ պակաս գտանիցի յուրախութեանցն նորն Ադամայ ի նորագոյն արարածոցն, ի նոր արարչագործութիւնս Աստուծոյ ի նորոգումն Զատիկին: Եւ ապա արար Զատիկ

10 նոցա ըստ բառից նշանակութեան, նախ զի յետ հասարակաւորութեան արար, երկրորդ՝ զի զԱրեգակն ի Խոյն եղ, որ սկիզբն և առաջին է կենդանակերպիցն, երրորդ՝ զի ի նիսան ամիսն արար, որ սկիզբն է ամսոց ի յամիսս տարւոյն և յառաջնումն աւուրն, չորրորդ՝ զի Լուսինն ի լրման էր և բար և բոլոր, լրացեալ քանակին

15 շափու լուսովն զարդու, զոր յառաջիկայդ ուսուցուք: Բայց զիտեւ պարտ է, զի ոչ էառ դրութիւն յԱստուծոյ առ Ադամ տումարական արհեստս Զատիկաց՝ առնել զայսմ կեանս իւր և ինքն և որդիք իւր: Եւ այս վասն երից պատճառաց. նախ ի կողմանէ Աստուծոյ, երկրորդ՝ ի կողմանէ մարդոյն, երրորդ՝ ի կողմանէ Զատիկին:

20 Եւ նախ ի կողմանէ Աստուծոյ, զի Աստուած ետ նմա զմշտնջենաւոր Զատիկն, զի ուրախութեան զրաւ ոչ լիցի, զոր այժմ ունին հրեշտակք և ի կատարածին արդարքն, զայն ընդ առնուլն և իսկոյն կորոյս, վասն որոյ ոչ կամեցաւ տալ զժամանակաւորս Զատիկ: Երկրորդ, զի Ադամ ոչ ուրախացոյց զԱստուած յառաջին Զատիկն իւր ստունկ անելով պատուիրանին, այսպէս և ոչ կամեցաւ

25 Աստուած ուրախանալ՝ նմա պարգևելով երկրորդ Զատիկն: Երրորդ, զի յորժամ դատապարտեաց մահու և ծառայութեան, այլ ոչ էր հնար տալ Զատիկ առանց ազատութեան: Չորրորդ, իբրև ետես Աստուած, եթէ կորուստ մշտնջենաւոր Զատիկն Ադամայ ի դրախտին

30 ի սատանայէ եղև, զի վասն անկման նորա՝ սուտ խարեութեամբ ձգէր զնա ի ցանկութիւնս աստուածանալոյն, կամեցաւ Աստուած զընդ դիմակն սատանայի առնել, ճշմարտիւ աստուածացուցանել զմարդն և տալ Ադամայ զերկնային Զատիկն ևս բարձրագոյն: Վասն այն ոչ կամեցաւ տալ Աստուած սուղ դրութեամբ զաստ ի

35 Զատիկս Ադամայ, որ էր նուաստագոյն: Երկրորդ, ի կողմանէն Ադամայ, քանզի սաստիկ եղև հարուած անկմանն Ադամայ և սուգ

յախտենական, զի ոչ էր յանձն առնելոց զուրախութիւն Զատիկաց, որ այնքան բազմապատիկ պարգևեաց, կորստեանն պատահեցաւ:

5 Նախ զի ի տեսութենէն Աստուծոյ զրկեցաւ, զի այլ ոչ ևս յանկ տեսանել զերեսս Աստուծոյ և ոչ խոսել ընդ նմա, երկրորդ՝ ի լուսաւոր պատմութեանէն, զի յորժամ կերան ի պտղոյն առ ժամայն մերկացան ի լուսեղէն զարդուն, երրորդ՝ ի անաշխատ կենացն, զի ի քիրտն երեսացն հրամայեցաւ վաստակել զհացն, չորրորդ՝ ի կեցոյց ընդդէմ դրախտին, հինգերորդ՝ զի կորոյս զթագաւորութիւն,

10 զմարգարէութիւն, վեցերորդ՝ զանծերանալի հասակն և զանմահութիւնն: Երրորդ՝ ի կողմանէ Զատիկին, նախ՝ զի Զատիկն ազատութիւն է, և նա կորոյս զազատութիւն թագաւորութեան և եղև ծառայմեղացն, զի «որ առնէ զմեզս, ծառայ է մեղաց»¹ ասէ Տէր, և ուրախութիւն Զատիկ ոչ կարէ ուրախացուցանել զտրտմութիւն ծառայի,

15 թէև բարութեան իցէ, երկրորդ՝ զի դատապարտեցաւ ի ծառայութիւն մահու, դառնալ ի հող և բանտիլ մարմնով ի գերեզման, երրորդ՝ զի հոգով իջաւ ի բանտ դժոխոց և մատնեցաւ ի գերութիւն սատանայի, չորրորդ՝ զի Զատիկն ուրախութիւն լսի, և նմա ասացաւ «տրտմութեամբ և ցաւօք ծնցես որդիս»², զի մինչև յօր մահու

20 ի տրտմութենէ, ի ցաւոց և ի արտասուաց ոչ զազարեաց: Չր երկրորդ՝ էառ սկիզբն յօրինադրական Զատիկն, յորժամ ազատութիւն արար ազգին Իսրայէլի, քանզի յորժամ եհար Տէր զփարաւոն իններորդ հարուածովն, որ էր մարախ, ասաց Աստուած Մովսիսի՝ «ամիսս այս ձեզ սկիզբն եղիցի ամսոց, առաջին եղիցի

25 ձեզ յամիսս տարւոյ»³: Եւ ի տասներորդումն ամսեանս հրամայեաց առնուլ ոչխար⁴ և ի չորեքտասներորդումն զենել⁵ և «փութանակի ուտիչիք,—ասաց,—զի Զատիկն Տեառն է»⁶, այսինքն ազատութիւն և «զարիւնն ի բարաւորս սեմայ ձերոց օծչիք»⁷, զի «յայսմ

1 Յովհ. Ը34:
 2 Մենդ. 916:
 3 Ելք ԺԲ2:
 4 Ելք ԺԲ3:
 5 Ելք ԺԲ6:
 6 Ելք ԺԲ11:
 7 Ելք ԺԲ22:

գիշերի ի սատակել զանդրանիկս Եգիպտոսի, դուք անվնաս մնաս-
ջիք»¹:

5 Եւ յորժամ զօրինադրական Զատիկս ետ, ունէր և սա զչորս-
նշանակութիւնս արարչութեան Զատիին, զի յետ հասարակածին
էր, և Արեգակն ի հոյն էր, և ամիսն նիսան, և Լուսինն ի լրման:
Եւ ազատեաց զնոսա շորս կերպիւ. նախ ի ձեռաց փարաւոնի, զի
այլ ոչ տիրեաց նոցա, երկրորդ՝ ի հեղձուցմանէ ծովուն, զի ոչ ողո-
ղեաց զնոսա որպէս զփարաւոն և զզօրս իւր, երրորդ՝ յահագնու-
թենէ անապատին, ուր օձն հարկանէր և կարիճն խածանէր, շոր-
10 րորդ՝ յԱմաղէկայ և յայլ եօթն հզօրագոյն ազգացն, զի մաշեաց
զնոսա ի սուր սուսերի և ի տէգ նիզակին և թագաւորեցոյց զնոսա
և զժառանգութիւն նոցա ետ նոցա:

Բայց գիտելի է զի մարմնոց ազատութիւն նոցա նշանակէր
զհոգւոցն ազատութիւն, որ լինելոց էր Քրիստոսի ի փրկական
15 Զատիին: Զի Մովսէս՝ նշանակէր զՔրիստոս, և գաւազանն՝ զիսայն
և ծովն՝ զդժոխս և պատառումն ծովուն՝ զքակտումն զժոխոցն և
ելանելն ի ծովուն որդւոցն Իսրայէլի՝ զելանել հոգւոցն ի դժոխոցն
և ընկզմիլն փարաւոնի՝ զկորուստն սատանայի և գնալն նոցա ի
լեառն Քորէբ՝ զելանելն հոգւոց յերկինս:

20 2գ Երրորդ՝ էառ սկիզբն տումարական մակացութիւնս ի փրկ-
կական Զատիկն Փրկչին մերոյ, զի յորժամ կամաւ մատնեաց
զանձն ի շարշարանս և բեռեցաւ Տէր մեր ի յաշին և մահուամբն
արար մեզ ազատութիւն, ունէր և փրկական Զատիկս զքառակի նշա-
նակութիւնս արարչութեան Զատիի, զի և աստ շարշարանք Տեառն

25 մերոյ յետ հասարակածին էր, և Արեգակն ի հոյն, և ամիսն նիսան,
և Լուսինն ի լրման: Եւ աստ ազատեաց զմեզ մահուամբն իւրով:
Նախ ի մահուանէ մեղաց, որ թագաւորեալ էր ի վերայ բնութեանս
մերոյ, ըստ այնմ՝ «Թագաւորեաց մահ յԱդամայ մինչև ի Մով-
սէս»², անդ զօրութեամբ բարձաւ, զի գեռևս օրինօքն ամենեքեան

30 մեղաւորք և արդարք ի դժոխս երթային, այլ աստ ներգործութեամբ,
զի արդարքն այլ ոչ ևս տեսանելոց են զերեսս դժոխոցոյ: Երկրորդ՝
ազատեաց զհոգիսն ի խաւարային դժոխոցն և յիշխանութենէ սա-
տանայի և բարձրացոյց զարժանաւոր հոգիսն ի լոյս արքայութեան

երկնից: Երրորդ՝ ազատեաց զմեզ յանիծից օրինացն և եմոյժ յա-
զատութեան օրենս շնորհաց: Զորրորդ՝ ազատեաց զմեզ ի խաւարէ
անգիտութեան, անհաւատութեան և անհաւատութեան և անհաւատութեան
աստուածապաշտութեան: Դարձեալ գիտելի է, զի և աստ նշանա-
կեաց զազատութիւն հողացեալ մարմնոց, զոր առնելոց է Քրիս-
տոս ի նորոգման Զատիին՝ ի կատարածին՝ յարութեամբ մեռելոցն,
որ մտեալ ի քաղաքն պատմեցին զյարութիւն Քրիստոսի:

2գ Զորրորդ՝ զի առեալ է զսկիզբն ի նորոգման Զատիէն, զոր
առնելոց է Քրիստոս ի կատարածին, զի և անդ ըստ առաքելոյ՝
10 յորժամ «նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ ի ձեռն յա-
րութեան ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց»¹:

Երևեսցի և անդ երկիցս երկու նշանակութիւնք, արարչութեան
Զատիին, զի լինիցի յետ հասարակութեան ի գարնանային յեղա-
նակս, և Արեգակն ի հոյն ըստ երկնիցն զկայ առցէ, և ամիսն նի-
15 սան եղիցի: Զի որպէս զկարկինն, որ եղեաւ ի վերայ քարտիսի
տպագրես զբոլորակ ձեռն, նոյն մասնիկն, ուստի սկիզբն էառ, կըր-
կին նոյն լիցի աւարտ բոլորութեան ծրին ի քարտի, այսպէս և տա-
րեղութի և սկիզբն Զատիի արարչութեան նիսան եղև: Նոյնպէս և
կատարումն նորոգման Զատիին ի նիսան եղիցի: Իսկ Լուսինն
20 յայնժամ ներգործութեամբ առցէ զկայ և զլրումն ըստ նորոգման
արարածոցս, զի լիցի Լուսինն իբր զԱրեգակն, և Արեգակն եօթնա-
պատիկ պայծառացի:

Բայց ասացուք և զազատութիւն մեր ի նորոգման Զատիին,
զոր կատարելոց է Քրիստոս ի հոգիս և ի մարմինս մեր: Նախ, զի
25 զհոգիս մեր ազատեաց է ի տգիտութենէ, որպէս ասէ առաքեալ, թէ
«գիտութիւնք նորոգեաց»² և դարձեալ Դանիէլ՝ «զպրութիւնք բա-
ցան»³ և առաքեալ՝ «յայնժամ տեսանեմք զնա դէմ յանդիման և
ամենայն իմաստութեան զազափար Աստուած է և տեսանելով
զնա իմաստնանամք, զամենայն ճանաչեմք»: Երկրորդ՝ ազատէ
30 զհոգիս մեր յատելութենէ և կապէ հ սէր իւր անխզելի, զի որպէս
անդամք մարմնոյն, որ միացեալ են սիրով ի մարմինն, նոյնպէս և
մեք սիրով միանամք ի Քրիստոս, որ է ճշմարիտ սիրելի, ըստ

1 Փիլիպ. 921:

2 Կողոս 910:

3 Դան. է10:

1 Եւր. ԺԲ12,13:

2 Հոմ. Ե10:

այնմ՝ «որ սիրէ զիս, սիրեցցի ի Հօրէ իմմէ և ես սիրեցից զնա»¹։
 Երրորդ՝ զի ազատէ ի հոգոց, զոր ունիմք ի բազմաբեր կրից ցաւա-
 լից մարմնոց և հանգուցէ ի հանգիստ անհոգութեան, ըստ այնմ՝
 «եկայք առ իս ամենայն աշխատեալք և ես հանգուցից զձեզ»²։
 5 Զորրորդ՝ ազատէ ի տրտմութենէ և խնդութեամբ ուրախացուցանէ
 յերկնային փառսն և ի պսակն, ըստ այնմ «զուրախութիւն ձեր ոչ
 որ հանիցէ ի ձեռն»³։ Իսկ տայ ազատութիւն մարմնոց զայս. նախ
 զի ազատէ ի տկարութենէ և առնէ զօրաւոր, երկրորդ՝ ազատէ ի
 ծանրութենէ թանձրութեան և առնէ անօսր և թեթև, երրորդ՝ ազատէ
 10 ի խաւարատեսակ մարմնոց և տայ մարմին լուսաւոր, չորրորդ՝
 ազատէ յապականութենէ և տայ զանապականութիւն, որպէս ասէ
 առաքելն՝ «սերմանի ապականութեամբ և յառնէ առանց ապա-
 կանութեան, սերմանի տկարութեամբ և յառնէ զօրութեամբ, սեր-
 մանի անարգութեամբ և յառնէ փառօք, սերմանի մարմին շնչա-
 15 տր և յառնէ մարմին հոգևոր»⁴։
 Եւ թէ որ ասացէ, թէ յամենայն Զատիկս երևեցաւ ազատու-
 թիւն, և հարկ է, զի լիցի ազատութիւն, զի Զատիկն ազատութիւն
 ասի և ուրախութիւն, իսկ յարարչութեան Զատիկս զինչ էր ազա-
 տութիւն։ Ասեմք կերպիւ իմն. ընդհանուր գոյքս և բոլորէքս յոչ
 20 գոյսն և յոչ էսն իբր ի կալանս էին։ Եւ ի ստեղծագործելն զնոսա և
 յոչ էութենէ յէութիւն ածել և յոչ գոյութենէ ի գոյութիւն բերել իբր
 ազատութիւն էր նոցա, վասն այն Զատիկ արար սոցա և խնդու-
 թեամբ ելից զսիրտս նոցա յազատալիր կեանս իւրեանց և ի
 25 քաղցրալիր վայելչութիւն վայելման խնդարեր սիրելի արարածոցս,
 զի ազատեցան յոչ գոյէն և էացան յէէն։ Եւ ի շորից Զատկացս եր-
 կուցն վախճան լեալ էր և երրորդին լինելոց է, իսկ չորրորդին՝
 սկիզբն առ յապայ է և կատարածն անվախճան, զի անեղբերելի
 ազատութիւն է և անզրաւ կեանք և խնդութիւն մշտնջենաւոր յա-
 փտենիս։
 30 3. Վասն երրորդին²) զիտելի է, թէ տումարական մակացու-
 թիւնս յորոց մարդկանէ արհեստաւորեցաւ։ Գիտելի է, զի նախ՝ ի
 նախամարգարէէն Մովսիսէ օրինադրեցաւ, զի նա կարգեաց զլըր-

1 Յովհ. ԺԳԶԷ։
 2 Մատթ. ԺԱԶԳ։
 3 Յովհ. ԺՁԶԳ։
 4 Ա. Կորնթ. ԺԵԶԷ։

մունս Զատկաց հինն Իսրայէլի յօր ելիցն, որ յեզիպտոսէ։ Զի ի
 գիշերին յայն արարին զԶատիկն և կերան զգառն խորովեալ և ելին
 ի եզիպտական ծառայութենէն։
 5 Երկրորդ՝ յետ սորա նորոգեաց Եզրաս, որդի Սարսոնի, զտա-
 նիններեակն զտումար երբայեցուց Լուսնի յետ Ռ. (1000) ամի ելիցն
 յեզիպտոսէ ի դարձի գերութեան, զի ապականեալ էր և թիւրեալ ի
 գերութեան։ Եւ յետ Շ. (500) ամի դարձի գերութեան, յորում պա-
 տարագեցաւ Քրիստոս ի վերայ խաչին, եղև կատարումն օրինաց
 մարգարէիցն։
 10 Երրորդ՝ յետ սորա Ըղբստակէս Աթենացի արար տումար հո-
 մայեցուց աշխարհին և թուեաց, թէ օր առաջին ապրիլի է սկիզբն
 արարածոցս արարչութեան, վասն զի չորրորդում աւուրն ստեղծ
 Աստուած զԱրեգակն և զԼուսինն, և վասն այնորիկ ի շորիցն ապ-
 15 ներեակ բոլորին, որ ի միում աւուր սկիզբն առնուն և ի միում
 աւուր կատարին։
 Զորրորդ՝ զկնի սորա Ղեւոնդ՝ հայրն Որոգինէի, արար զլրումն
 Զատկաց եթովպացուց և եզիպտացուց։
 20 Հինգերորդ՝ յետ սորա որդի սորա արար զլրումն Զատկաց
 արաբացուց և մակեդոնացուց։
 Վեցերորդ՝ Անատոլիս Արիոպագացի արար զլրումն Զատկաց
 յունաց և ասորուց։
 Եօթներորդ՝ յետ սորա Անդէս արար զլրումն բիթանացուց և
 կապադոկացուց։
 25 Ութերորդ՝ յետ սորա Դիոնեսիոս Արիոպագացի արար զլրումն
 աթենացուց աշխարհին։
 Իններորդ՝ յետ սորա Անդրէաս Բիւզանդացի, եղբայր Մագնո-
 սի եպիսկոպոսի, արար միաբանութիւն ամենայն տիեզերաց լըր-
 մանց և տասնիններեկաց, կրկնակաց, վերադրաց և տարեմտից և ազ-
 30 ալ զանազան խորհրդոց։ Վասն զի գայր առ նա Հոգին Սուրբ և ազ-
 բիրացուցանէր զնա առաւել քան զժովն ովկիանոս, որ քննէր
 զվերին կիսագունդն և զներքին կիսագունդն, զընթացս լուսաւո-
 րացն։
 Ծասներորդ՝ յետ սորա Անանիա Շիրակացին արար զլրումն
 Հայոց Մեծաց։

Իսկ ի ժամանակս ամբարիշտ թագաւորին Յուստինիանոսի
հղև լրումն Մ. (200) ամի կարգացն Անդրէասու, և սկսան շիտթիւ
լրմունք Զատկաց և զիրք արուեստական տումարաց: Վասն որոյ,
մետասաներորդ՝ այր մի ճշտագունիցն ուսումնասիրաց յեզիպտա-
5 կան մայրաքաղաքէն յԱղեքսանդրեայ՝ էաս անուն կոչեցեալ,
ձայն արկեալ առ ինքն ժողովէ և հավաքէ զայրս կորովամիտս՝
զԱղղա ի Գամրաց, զՓենեհեզ ի Հրէաստանէ, զՅոհան ի Արաբիոյ,
զՅովբել յեթովպիոյ, զՍերգ ի Մակեդոնիա, զԳիզան յԱսորոց և
այլ ևՁ. (36) արամբ հաւատարմօք, խորհէին գտանել զդարձ Արե-
10 գական և Լուսինն ի միում ամի: Եւ գտին՝ զայս լեալ ի ԻԸ. (28)
տասնիններեական: Ապա զնեն զօր լրմանն ՇԼԲ. (532) ամի ան-
սխալ, զաւարտն գտեալ ի մարտի ԻԾ. (25) և սկզբնաւորեալ յապ-
րիլի երեքտասանիցն: Եւ վասն զի անցեալ էր ինն ամ յիսկզբանէ
բոլորին, կարգեցին զապրիլի շորան և ասացին՝ թուական Հայոց
15 տասն: Ուստի սահմանեցին երթալ ի թուէն ինն և զայլն երթալ
տասնինն, տասնինն և ի շորիցն ապրիլի գտանել զօր լրմանն:

Իսկ այր ոմն՝ Իրիոն անուն ի դրան ամբարշտին Յուստինիա-
նոսի քամահանս վարկուցեալ զոչն կոչելն զնա ի ժողովն, և կամե-
ցաւ տապալել զկանոնեալ արուեստն, խախտեաց զապրիլի տաս-
20 նեւթն ի վեշտասան և զապրիլի զվեցն ի հինգ, որով գտանիս սխալ
պատէքն Սուրբ՝ յառաջեալ միով շաբաթով: Եւ այս ոչ յամենայն
տասնիններեակ բոլորի, այլ ութն անգամ պատահեալ ի շրջանին,
պատճառելով զժողովումն հնգեկի մասանց, զօր կոչէ օր եկա-
մուտ», և զնէ ի վերայ յարակային: Եւ այսպէս ընդ սխալանօք զայ
25 հանդիպի ի ներքոյ հասարակածին և փակէ ընդ նզովիք գրեկացն,
զի գրեալ է, թէ անիծեալ է, որ առնէ զլրումն յառաջ, քան զհասար-
ակածն: Արդ, Իրիոն թէպէտ և բիր անգամ կարծէ ճարտարանալ,
սակայն ոչ զերծանի ի նզովից՝ նմանեալ այնմ, որ սակաւ աղօթի
և բազում հայհոյէ:

30 4. Վասն շորորդին գիտելի է, զի տումարական մակացութիւնս
պատճառի յընթացից յաւէտ և նուազ մասանց Արեգական և Լուսնի,
որպէս ուսուցանելոց եմք յառաջիկայդ:

ԿՐԿՆԱԿ ԱՄՍՈՑ ԱՅՍՊԷՍ ԱՐԱ

Նախ խնդրելի է, թէ ամիսքս ուստի գոյացան, երկրորդ, թէ
անուանք ամսոցս յումմէ եղան:

Վասն առաջնոյն ասելի է, զի ամիսք յընթացից երկուց լուսա-
ւորացդ գոյանան: Նախ՝ յԱրեգականէն, զի զտարեն ճանապարհն
Արեգականն յերկինս Արարիչն յերկոտասան կենդանակերպս բո-
վանդակեալ չափարեբից ի վեր կոչս՝ ի հիսիս գալովն և ի խո-
5 նարհ կոչս՝ ի հարաւ գնալովն: Եւ իւրաքանչիւր կենդանակերպ
Արեգական զարշաւանս ընթացից իւրոց յԼ. (30) օրն ածէ ի վախ-
ճան և այնպէս զԺԲ. (12) ամիսն ի երկրի ներգործէ: Երկրորդ՝
պատճառին ամիսք ի Լուսնէն. նախ ի ներգործութենէ ընթացիցն,
զի զԺԲ. (12) կենդանակերպն ի Լ. (30) օրն վճարէ և առնէ ամիս
10 մի: Երրորդ՝ ի ներգործութենէ աճման Լուսնոյն, որ շրջապատեալ
զարտաքին երեսօք անօթոյն և լրացեալ, բոլորէ զնա յաւուրս ԺԵ.
(15): Եւ դարձեալ կրելով ի ծոց պատենին, առ սակաւ-սակաւ
նուազեցուցանէ զլոյսն յարտաքին դիմացն և ի ծոց իւր ժողովեալ
կնքէ և ծրարէ յաւուրս Լ. (30): Տեսանելով իմաստասիրացն զայս-
15 պիսի կիրս և զներգործութիւն Լուսնին, փոխանակեցին զայք ընդ
ինու և զինի ընդ եչի, որ ասէր «ամիս», սոքա ասացին «իմ ես»,
այսինքն օրինակ: Եւ վարդապետ՝ զի և ես նման քեզ առնում զա-
ճումն ի ծննդենէն և բոլորեալ կատարիմ ի հասակս երիտասար-
դական և ի կատարելութենէ սկսում նուազիլ և ծրարեալ ամփոփիմ
20 ի ծոց գերեզմանին յախտեան: Դարձեալ՝ որպէս ի ծնանիլ լուսոյդ
բո ամիսն սկսանի և ի պակասիլ լուսոյդ ամիսն վճարի և անյայ-
տի, այսպէս և կեանք մեր ի ծնանիլն երևի և ի վճար մահուան ան-
յայտի և ծածկի, զի ոչ է և ո՛ր երևի տեղի նորա»: Զի Աստուծոյ
նախախնամութիւն ծանեալ, զի ամենայն ուրեք վարդապետ և
25 խրատիչ ոչ գտանի զնա, ետ վարդապետ բոլոր աշխարհի ի երեսս
երկրից, որ յամենեցունց տեսանի: Զի տեսանելով զյեղչեղուկ և
զփոփոխելի բնութիւնս նորա, իմասցին զինքեանս, որ զնորին ունին
բնութիւն, և մի ամենեկին տացեն զինքեանս ի շարիս և ի սէր աշ-
խարհիս:

30 Դարձեալ, զի անգիտ արանց տումար ետ զԼուսինն աշխար-
հիս, զի զմուտ և զել ամսոցն նովաւ գիտասցեն և դառ և զտույ
աշխարհիս նովաւ վարեցեն:

Երկրորդ՝ վասն անուան ամսոցդ գիտելի է, զի ի սկզբանն՝ յԱ-
դամայ հետէ մինչև ի Մովսէս անուանք ամսոց ոչ գոյր, այլ ամե-
35 նայն ազգ զգարնանային Լուսին տարույն առաջին Լուսին անուա-
նէին և զայլն ըստ կարգի՝ երկրորդ և երրորդ, մինչև ի վախճան

տարւոյն և այսպէս վճարէին զտարիս իւրեանց: Իսկ անուանք եր-
րայնցուց ամսոցդ ի Մովսիսէ օրինադրեցաւ, որ և կարգեաց զԸՐ-
մունն Զատկաց նոցա, որ էր օր ելից նոցա յնգիպտոսէ: Նոյնպէս
և զամենայն տօնսն նոցա կարգեաց:

5 Իսկ այլ աղագացդ և սորա յայտնի ոչ երևին, այլ էր, որ ի նախ-
նեաց իւրեանց անուանիք որ ծնանէին, յիւրեանց անունն անուա-
նէին զամիսն: Որպէս թագաւորք հոռոմոց, զի Յուլիոս՝ վասն ծնըն-
դեանն իւրոյ, ի տիլոս ամիս ի թագաւորելն իւրում կոչեաց անունն
Յուլիոս, որ է յուլիսս: Այսպէս և Օգոստոս կայսրն զհեկիտոս ամիս
10 վասն ծննդեանն իւրոյ ի թագաւորելն իւրում կոչեաց յիւր անունն
օգոստոս: Եւ է, որ յիմաստասիրաց եղան: Եւ է, որ ըստ մրգաբեր
ժամանակին ընկալան զանունս իւրեանց:

Իսկ մերս՝ յանուն որդուց և դստերացն Հայկայ եղան, զի որ-
պէս յանուն Հայկայ ազգս «հայք» անուանեցաւ, այսպէս և ամիսքս
15 ի զաւակաց անուանց նոցա զանուն ընկալան: Եւ են այսոքիկ՝
Նաւասարդի, Հոռի, Սահմի, Մեհեկի, Արեգի և Հրտոից՝ սորա որ-
դիք էին: Եւ Արաց և Մարերի, Տրէ և Քաղոց՝ սորա դստերք էին:
Իսկ մարգաց և հարուանց, որ է ահկի՝ զայս ի գործոց առին զան-
ուանս, զի ըստ այն ժամանակն ամառնայինք էին այսոքիկ:

20 Բայց գիտելի է, զի կրկնակի ընկալան ամիսք զանունս իւ-
րեանց՝ հասարակ և յատուկ: Հասարակ է ամիս ասելն, զի ամե-
նեքեան ամիսք անուանին, իսկ յատուկ է նաւասարդի, հոռի և
այլն: Բայց հասարակն յիմաստասիրացն եղաւ, զի տեսանելով
զԼուսինն ասացին «իմ ես», իսկ յատուկն՝ ի նախնեացն, որպէս
25 ասացաւ:

Կրկնակ այսպէս արա:

Նախ խնդրելի է, թէ զինչ է կրկնակն, երկրորդ, թէ որքան կեր-
պիւ իմանի, երրորդ, թէ վասն էր կրկնեմք, չորրորդ, թէ վասն էր
զանունն կրկնակ ընկալաւ:

30 Վասն առաջնոյն գիտելի է, զի կրկնակքս յաւելուածք շարա-
թուց աւուրցն է, որպէս եօթներեակն և վերագիրն տարւոյն աւուրց
և մասանց յաւելուածքն է՝ այսպէս և կրկնակն շարաթուցն զյա-
տուկ և զառանձնակի ամիսն ասէ:

Երկրորդ՝ զի կրկնակն կրկին կերպիւ իմանի. նախ՝ կրկնակ
35 ամսոյ և երկրորդ՝ կրկնակ ամսոց: Առաջինն՝ կրկնակ ամսոյ, զիւ-
րաքանչիւր զյատուկ և զառանձնակի ամիսն ասէ—զնաւասարդոյ,

կամ զհոռոյ և զայլն: Երկրորդ՝ կրկնակ ամսոց զբազում օրինակին
ցուցանէ, և այս կրկին կերպիւ: Նախ զիրաքանչիւր ազգաց, զի
ամենեցունց կրկնակիւ է, և նոյնպէս արասցես զմերս, երկրորդ՝
զմիտյ ազգի, զի բազումք են, քանզի ժԲ. (12) ամիսք են և որպէս
5 զմինն առնես, նոյնպէս և զբազումսն, վասն այն ամսոց ասէ:

Երրորդ, թէ վասն էր կրկնեմք: Վասն այն, զի ամիսն Լ. (30)
օր է, և շաբաթն եօթն, և կրկնելով զշաբաթսն, զամիսն ի գլուխ
հանեմք: Այսպէս և զկրկնակն վասն այն կրկնեմք, զի շաբաթն
եօթն օր է, և յաւելուած շաբաթուցն երկու կրկնելով և զսոսա շա-
10 բաթացուցանեմք:

Չորրորդ՝ և զանուն վասն այն կրկնակ ընկալաւ, զի ամենայն
անուն յերից բաղկանայ, այսինքն՝ յիրէն, յարուեստէն և ի ձայնէն:
Եւ յիրէն, որպէս ասեմք սապատ, զի պատեալ ունի զհացն կամ
այլ ինչ, սափոր, զի փորօք ունի զծոցն, փակեղ, զի փակեալ ունի
15 զգլուխն, կարաս՝ կայ աստ ջուր, կամ գինի: Ի ձայնէն՝ վասն
ճվճվալոյն թռչնոյն ասեմք ճնճուկ և վասն կռկռալոյն ազուով և
վասն կչկչալոյն՝ կեչեղակ և վասն խոսելոյն՝ խօսող: Յարուեստէն,
որպէս ի հիւանութենէն՝ հիւան, որպէս սարդին վասն ոստայն հի-
նելոյն՝ սարդոստէն և վասն մեղեր գործելոյն՝ մեղու և վասն բոյն
20 շինելոյն զդուրպայ՝ ասեմք գուրպարար: Նոյնպէս և կրկնակս յա-
րուեստէն ընկալաւ զանունն, զի կրկնելով արուեստաւորեցաւ զիստ
կրկնակացս:

ԹՈՒԱԿԱՆ ԱՅՍՊԷՍ ԱՐԱ

25 Զի որպէս ուսուցաք ըստ իմաստասիրացն, թէ նախ պարտ է
խնդրել՝ զինչ էն, այսինքն, թէ զինչ է թուականն, երկրորդ, թէ ուս-
տի գոյանայ թուականն: Գիտել պարտ է, զի տոմարական մակա-
ցութիւնս ոչ սոսկ իմաստասիրութիւն է և ոչ պարզ աստուածաբա-
նութիւն, այլ խառն ի յերկուցն գեղեցիկ ունի զվարդապետութիւն,
ի նմանութիւն գեղեցկութեան մարդոյ յինքեան բերելով, որպէս
30 ասէ Գրիգոր Նիւսացին վասն լինելութեան մարդոյս, թէ ի կրկին
գոյացութեանց, այսինքն ի հոգւոյ իմանալոյ և ի մարմնոյ զգալոյ
գեղեցիկ իմն արարչագործեաց զմարդն արարչագործն Աստուած:
Զի ամենայն արարածք յերիս բաժանին՝ կամ ամենեւին անմարմին,

զանցեալն և զներկայն, վասն այն կարեմք զորքանութիւն սոցա
 թուել: Ութերորդ՝ զի նիւթն էացուցանէ զգործն և առանց նիւթոյ
 անէ՝ և անգոյ է, այսպէս և թուականն էացուցանէ զտումարն և
 5 առանց գործոյ ունի զէութիւն, բայց գործն առանց նիւթոյ՝ ոչ, այս-
 պէս և թուականն առանց տումարի ունի զէութիւն, զի ի ժամանա-
 կէն բաղկանայ, և ժամանակս միշտ յէութիւնէ կայ, որ թուելով
 զէութիւն թուականին տայ: Իսկ տումարն թարց թուականին ոչ ունի
 զգոլն էութիւն, զի ամենայն մասունք նորա առանց թուականի ան-
 10 կար են ի գոլն: Տասներորդ՝ զի նիւթն առաջին է բնութեամբ և գործն
 երկրորդ պատահմամբ, այսպէս և թուականն առաջին է բնութեամբ,
 զի տումարն մինչ ոչ ունեւր զգոլն, թուականն՝ էր և զամենայն ինչ
 թուէր: Իսկ տումարն յետոյ պատահմամբ էառ զգոլն, չորժամ զօրի-
 նադրական Զատիկն ետ Աստուած Մովսիսի և չորժամ արար Մով-
 15 սէս զլրմունս Զատկաց և զամենայն տօնից սահմանս, որ է տու-
 մար: Մետասաներորդ՝ զի որպէս նիւթն նախ յԱստուծոյ է, և ապա
 գործն՝ ի մարդոյ, այսպէս և թուականն, նախ յԱստուծոյ է, որ
 ժամանակացն է արարիչ, և ապա տումարն՝ ի մարդոյ, որ ժամա-
 նակացն է կարգաւորիչ: Երկուտասաներորդ՝ զի ամենայն նիւթք
 20 և ներգործութիւնք, որ ի նիւթոց վախճանականք են և ոչ մնացա-
 կանք, այսպէս թուականն և տումարական մասունք, որ ի սմանէ
 առնուն զներգործութիւն արուեստելոյն իւրեանց, շին մնացականք,
 այլ ի կատարածի աշխարհի ամենեքեան վախճանականք են: Եւ
 ըստ այսքան կերպի ունի թուականս զնմանութիւն նիւթոյ:

25 1բ Երկրորդ, ասելի է վասն յաւէտ յառաջախաղաց շարժմանն
 թուականին: Զայս ուսանելի է ի յաւէտ յառաջախաղաց շարժմանէ
 երկնից, բայց նախ պարտ է գիտել, թէ ըստ որում եղանակի շար-
 ժին երկինք և լուսաւորք: Գիտելի է, զի ըստ Արիստոտելի՝ վեց են
 շարժութեան եղանակք. նախ ի վեր, երկրորդ ի վայր, երրորդ

30 յառաջ, չորրորդ ի յետ, հինգերորդ յաջ, վեցերորդ յահակ: Եւ
 ըստ վեց շարժմանցս այս շարժին երկինք և լուսաւորք հասարա-
 կաբար, իսկ եռակի կերպիւ՝ յատկաբար: Բայց նախ ասասցուք
 զհասարակաբարն և ապա զյատկաբարն: Արդ՝ շարժին երկինք և
 լուսաւորք նախ առաջին՝ ի վեր, ի կամարէն ներքին կիսագնդին

35 մինչ ի կամարն վերին կիսագնդին՝ ի վեր, երկրորդ՝ ի կամարէ վե-
 րին կիսագնդին մինչ ի կամար ներքին կիսագնդին՝ շարժին ի վայր

կոյս, երրորդ՝ յառաջ շարժին յարեւելից յարեւմուտս, չորրորդ՝ զեպ
 յետ շարժին յարեւմտից յարեւելս: Իսկ հինգերորդ և վեցերորդ՝ զի
 լուսաւորքն ի հիւսիսոյ ի հարաւ ի յաջ շարժին և ի հարաւոյ ի հիւ-

5 նաւոր գլորի և այն նմա աջ և ձախ ասի: Իսկ յատկաբար շար-
 ժումն է սոցա, զի երկինքն գնդաձև գլորելով՝ գլլի և կողմնաւոր,
 նոյնպէս և Արեգակն, բայց ոչ կողմնաւոր, այլ ուղիղ, որպէս գունդ
 սայլի: Բայց լուսինն ոչ այսպէս, զի սողալով սողի, որպէս զնավ
 ի վերայ ջրի:

10 Երկրորդ, զի երկինքն միշտ յարեւելից արեւմուտս ձգի, և Արե-
 գակն և լուսին յարեւելից յարեւմուտս և յարեւմտից յարեւելս՝ հասարակ
 և յատուկ շարժմամբն իւրեանց: Եւ յայտ է ի Լուսնէն, որ
 զծնունդն յարեւմուտս առնու և յարեւելս գալով՝ զլրումն:

15 Երրորդ՝ զի երկինքն ի վերայ միում գծի շարժի և Արեգակն և
 Լուսին ի վերայ 34. (360) գծի, զի ճ2. (18) գիծ է յԱյծեղջիւրէն ի
 հեցգետինն ի վերին կիսագունդն և ճ2. (180) յԱռիւծէն յԱղեղնա-
 տրն՝ ի ներքինն: Զի Արեգակն յեւանելն յարեւելս կէս հոլով ի վեր
 բարձրանայ և առնէ զճ2. (180) գիծն ի վերին կիսագունդս և զկէս
 հոլովն խոնարհի յարեւմուտս և շինէ զճ2. (180) գիծն ի ներքին

20 կիսագունդն: Իսկ Լուսինն ի վերայ 1. (30) գծի, զի ԺԵ. (15) օրն
 պատէ զ2. (6) կենդանակերպն, ԺԵ. (15) ի վերս առնու և ԺԵ. (15)
 ի ներքինն:

25 Զարցումն.—Երկնից գնդաձև շուրջ գալն յայտնապէս երևի ի
 կենդանակերպիցն, իսկ Արեգականն գնդաձև գլլիլն և առնուլ զհիռն
 և կամ Լուսինն սողալով ընթանալն ուստի՞ է յայտ:

Պատասխանի.—Գիտել պարտ է, զի Արեգակն զլոյսն ի գունդ
 անօթոյն իւրոյ թափանցաբար ունի, որպէս հուր ընդ երկաթ և գլո-

30 բելով գնդին անշարժ ի միում ձևի պահէ զլոյսն: Զոր թէ Լուսինն
 այսպէս ընթանայր, ոչ կարէր ի միում կերպի պահել զլոյսն, այլ եր-
 բեմն յարեւելս և երբեմն յարեւմուտս գառնայր եղջիւրք լուսոյն և թէ
 զբոլոր քանակն՝ լրացեալ լուսով բոլորեալ ունէր: Սակայն միա-
 կողմանի ունի, զի որպէս արտաքին երեսս լոյս է, նոյնպէս ներ-
 քինն խաւար է, և երբ գնդաձև շրջէր, երբեմն լոյսն գայր ի վեր

և երբեմն խաւարն: Այսպիսով, սողալով ընթանայ, զի այսպէս կա-
 րելի է նմա պահել զլոյսն ի միում ձևի:

Հարցումն.— Ընդ էր՞ է, զի երկինքն ոչ որպէս զգունդս սայլի՞
ըստ ուղիղ գծի գլլի, այլ իբրև զքար ձիթահանուց կողմնաւոր շրջ-
ջաբերի:

Պատասխանի.— Գիտելի է, զի երկնից մշտաշարժութիւն է, որ
5 պահէ՞ զերկիրս յանշարժութիւն, որպէս անշարժութիւն երկիրս պա-
հէ՞ զնա ի մշտաշարժութիւն: Արդ եթէ իբրև զգունդս սայլի ուղիղ
թաւալէր զկողմունքն հիւսիսային և հարաւային, եզերացն ոչ կարէր
ի հաստատութեան պահել, այլ միայն զմէջն, զի նա առնոյր զթափ
արագաշարժութեան երկնից: Իսկ յորժամ կողմնաւոր առնու զհիւսն,
10 զրոյրն միայէս պնդէ և այսպէս զաշխարհս ի հաստատութեան
պահէ, վասն այնորիկ իբրև զքարս ձիթահանուց շրջաբերի:

Հարցումն.— Զիարդ՞ երկինքն միշտ յառաջ խաղայ, զի ասա-
ցեր, եթէ յառաջ և յետ ունի զշարժումն:

Պատասխանի.— Մանիր, որդի, զի յետ շարժիլն յարևելս ոչ
15 ըստ ընթանալոյն է, այլ ըստ դառնալոյն և յետս կրկնելոյն, իսկ
ըստ ընթացիցն՝ միշտ յառաջ շարժի: Եւ օրինակ քեզ մարդն՝ զի
մարդոյն առաջը պատկերը հրեսացն է, զի թէ յարևելք ընթանայ
հանդէպ երեսացն երթայ, և թէ յարևմուտս դառնայ, դարձեալ հան-
դէպ երեսացն գայ: Այսպէս և երկինքն վասն դառնալոյն յետս անդ-
20 րէն յարևելս յետ ասի ունել զշարժումն, որպէս թէ ի յետ դար-
ձաւ, իսկ ըստ ընթացիցն՝ միշտ յառաջ շարժի, որպէս շուր յակնէ:

Արդ, ժամանակն ի շրջագայութենէ՞ երկնիցն պատճառի, և
թուականն ի ժամանակէն: Եւ որպէս ուսաք, զի երկինքն միշտ յա-
ւէտ յառաջախաղաց է, այսպէս և ժամանակն, զի ներկայն միշտ
անցելոյն առաջի կայ, և ապագայն ներկայիս: Նոյնպէս և թուա-
կանն՝ նման պատճառացն իւրոց յաւէտ յառաջախաղաց է, զի ի
թիւս է տեսանելի: Զի յորժամ ասես մէկ, յառաջ խաղալով ասես
երկու և յառաջ խաղալով ասես երեք, իսկ յետ շարժիլն այս է, յոր-
ժամ ասես երեք և յետ խաղալով ասես երկու և ապա զմէկն: Եւ թէ
25 ասիցէ որ, ապա զիարդ է, զի դէպ յետ գնալով զՄնունդն Քրիստո-
սի առնումք և թուեմք, նոյնպէս զԱբրահամունն և զԱդամայն, զի-
տասցէ այնպիսին, զի գնալն է դէպ յետ և ոչ թուելն, այլ յորժամ
թուես, ի նոցանէ առնուս դէպ յառաջ, ի քեզ գալով թուես: Ապա
և յիրաւի է, զի թուականն յաւէտ յառաջախաղաց է, որպէս ցուցաւ:

35 Խնդրելի է և զայս, թէ թուականս որ զժամանակս շափէ, ժա-
մանակս զինչ՞ կերպիւ շափէ զայս. զայն, յորում է՞, թէ՞ զայն, յո-

րում ոչ է: Երկրորդ՞ թէ ժամանակն ի գոյից է, թէ յանգոյից: Եր-
րորդ՞ թէ ժամանակին որ մասն է առաջին և կամ վերջին: Չորրորդ՞
թէ շորք են յաւիտեանք, և թուականս զսոսա առ հասարակ՞ շափէ,
թէ՞ զոմն, կամ զոմն:

5 Պատասխանի.— Վասն առաջնոյն գիտելի է, զի ժամանակս
առ մեզ է և ոչ յերկինս, վասն զի առաջին շարժումն զայս շափէ, և
զինքն ոչ շափէ, և յերկրի լինի ամառն և ձմեռն և ոչ յերկինս, որ-
պէս ասեն փիլիսոսփայք: Որպէս գիծ, որ ի կանգունն է, այսինքն
երկայնքն, ըստ ինքեան շափէ զկանգուն, յորում է և ըստ պատահ-
10 ման շափէ զկտան, յորում ոչ է: Այլ ժամանակն ըստ այսմ շափէ
զայնս, յորում ոչ է և ոչ շափէ զայն, յորում է, զի ժամանակն է
յառաջին շարժումն երկնից, սակայն ոչ շափէ զնա, այլ շափէ
զտարրականս և զներգործութիւնս մեր, յորում ոչ է:

Իսկ վասն երկրորդին՝ ոմանք ի գոյից ասեն զժամանակն, և
15 կէսք յանգոյից: Ի գոյից է, զի շարժումն երկնի և ընթացք լուսաւո-
րացդ ծնանին զժամանակն, և յանգոյից, զի անցեալն ապակա-
նեալ է, և ապագայն ոչ է ի միջի, և ներկայն անզգայաբար անցանէ:

Վասն երրորդին գիտելի է, թէ միևնոյն իմանաս զժամանակն,
ապառնին յառաջ է, քան զայսն, զի զժամանակն նախ է հանդեր-
ձեալ, և ապա ներկայ և յետոյ լինի անցեալ: Եւ որպէս դու՞ նախ
էիր ապառնի և ապա ներկա և յետոյ լինիս անցեալ: Իսկ թէ զանա-
զանապէս իմանաս զժամանակն. նախ է անցեալն, որպէս երեկ և
ապա ներկայն, որպէս այսօր և յետոյ ապառնին, որպէս վաղիւն:
Իսկ թէ ըստ պատուոյ իմանաս՝ նախ է ներկայն, զի է ստոյգ և ճշ-
25 մարիտ և ապա անցեալն և յետոյ ապառնին, որպէս շարագասեն
քերթողքն:

Չորրորդ՞ գիտելի է, զի շորք են յաւիտեանք, բայց թուականն
առհասարակ զսոսա ոչ կարէ շափել: Նախ զյարաձգականն, զի ոչ
սկիզբն ունի և ոչ կատարած, ոչ կարէ շափել: Զի որպէս աստեղք
30 երկնից, որ ի ծոցը երկնից բովանդակեալք են և բոլորն տեսանի
աշաց, վասն բազմութեան, որ գերազանցէ քան զթիւ համարողա-
կան արհեստից, ոչ թուի, ըստ այնմ «¹ թուէ զբազմութիւն աստե-
ղաց»: Իսկ այն յաւիտեանն, որ սկիզբն ոչ ունենայ, զիարդ՞ թուես-
ցի: Զի թէ զաստեղս երկնից առնուցուս և զհիւղեն, որ գողդ լցեալ

¹ Սաղմ. ճե24:

ունի, նաև գշիթք անձրևաց և գտերևք ծառոց և դալիք ծովու, որ
 ինչ եղեալ է և որ ինչ լինելոց է, նաև զաւազ համօրէն ծովուց, որ
 է Պոնտոս, Պրոպոնտոս և Սելեսպոնտոս, Ուռկանիկանն, Գաղտա-
 կանն, Սարդոնականն, Սիկիլիականն, Յունականն, Կասպիականն,
 5 Բասարանն, ծովն Կարմիր և ծովն Սպիտակ, Հարաւային ովկիանոս-
 և Հիւսիսայինն ովկիանոս և ծովն համատարած, որ զբովանդակն
 ի ծոց իւր ունի՝ հանդերձ ամենայն ծովովք, որք են մանունք ըստ
 ոլորտս տիեզերաց, և թէ զբովանդակն ասացելոցս զթիւն մի-մի
 տացես տարւոյ-տարւոյ, ոչ կարասցես գտանել զսկիզբն նորա: Եւ թէ
 10 Ժ. (10), Ժ. (10) տարւոյ տացես, կամ Ճ. (100), Ճ. (100), կամ Ռ.
 (1000), Ռ. (1000) ոչ կարասցես գտանել զսկիզբն նորա: Եւ թէ բիր-
 բիր ամաց տացես զմի-մի թիւ մինչ ամենայն սպառեսցի, սակայն և
 այնպէս ոչ կարասցես գտանել զսկիզբն հեռաւորութեան անսկզբնու-
 թեան յարածգական յաւիտենին: Եւ եթէ գտեր, եղիցի սկսեալ և
 15 ոչ անսկիզբն: Զի այս գոյ յատուկ անսկզբնութեան, զի զինչ և հնա-
 րեսցես, ոչ կարասցես գտանել զսկիզբն: Ապա թէ գտցես, անկաւ
 յատկութենէ անսկզբնութեան և դասեցաւ ի կարգս սկզբնաւորելոցս:
 Եւ թէ ստիցէ որ՝ եթէ այդ այդպէս է վասն յարածգական յաւի-
 տենին, զի թէ գտցի սկիզբն, անկաւ յանսկզբնութենէն, և ընդ
 20 սկզբնաւորելոցս դասեցաւ, ապա զինչ արասցուք, որ Որդի և Հոգի
 ասին սկսեալք ի Հօրէ, որպէս յատուկ է այնոցիկ, որ սկսանելով
 ծնանին և ինքեանք են սկսեալք:

Ասեմք առ այն, ճշմարիտ է, զի ըստ ամենայն աստուածաբա-
 նից խոստովանիմք զՈրդի և զՀոգի սկսեալք ի Հօրէ, բայց ոչ սկզբ-
 25 նաբար, այլ անսկզբնաբար: Եւ եթէ անսկզբնաբար, ապա և ոչ
 սկզբնաբար: Եւ եթէ ոչ սկզբնաբար, անսկիզբն իմա և զնա ընդ
 Հօր սկսանելովն անսկզբնաբար, որպէս ասէ աստուածաբանն Գրի-
 գոր՝ եթէ իմանաս սկիզբն Որդու, անսկիզբն ասեմ և զնա: Զի
 եթէ եղեր սկիզբն Որդու, հանէր զՀայր ի հայրութենէ, զի եղիցի
 30 երբեմն, որ ոչ եղիցի Հայր և եթէ եղիցի երբեմն, որ ոչ եղիցի Հայր,
 ապա սկսանելով ծնաւ զՈրդի և որ սկսանելով ծնանի, եղիցի և
 ինքն սկսեալ, որպէս յատուկ է այնոցիկ, որ սկսանելով ծնանին և
 ինքեան են սկսեալք: Եւ յորժամ սկիզբն սկզբնաւորեցելովքն սկսեալ
 լինի, յայնժամ եղիցի և ոչ որքն Աստուած, զոր զայսպիսի զմտաւ
 35 ածողքն որոշեմք անիծիւք ի մասնակցութենէ Հոգույն Սրբոյ: Այլ
 այսպէս խոստովանիմք՝ եթէ Հայր միշտ Հայր է և եթե միշտ Հայր

է Հայր, ապա և Որդի միշտ Որդի է, ընդմիշտ էին Հօր: Նոյնպէս և
 Հոգին Սուրբ և որ միշտ Որդի և Հոգի են, նոցա սկիզբն ոչ գոյ ընդ
 սկզբնաւորացս, զի միշտ գոյն զայս ունի յատուկ, զի ոչ եղիցի նմա
 սկիզբն, նաև ոչ կատարած: Այսպիսով անսկզբնաբար սկսեալքն
 5 զանսկզբնաբար ունին զսահման, թէ և սկսեալք են ի Հօրէ, վասն
 զի Հայր և Որդի ասելն առ ինչ ունակին են և առ ինչ ունակքն, որ
 ինչ են՝ համանգամայնք են և որ համանգամայնք են, նոցա ոչ է
 առաջին և վերջին: Այսպիսով, որքան զՀայր Հայր իմանաս ան-
 սկզբնաբար, ընդ նմա զՈրդի և զՀոգի իմա անսկզբնաբար, թէ և
 10 սկսեալք են ի Հօրէ, զի անսկզբնաբար սկսեալք են. Որդի՝ ծնըն-
 դեամբ և Հոգին՝ սուրբ բխամբ: Եւ այսպէս համագոյ նոյնութեամբ
 խոստովանիմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին ի մի էութիւն և ի
 մի բնութիւն աստուածութեան ընդ սրբոց հարցն աստուածաբանից:
 Երկրորդ՝ զսկզբնական յաւիտեանն, որ ի սկզբանէ ունին արա-
 15 րածքս զգոյն ըստ Աստուծոյ ի նախագաղափար տեսութիւն Աստու-
 ծոյ: Զի թէպէտ այս վախճան ունի, այլ սկիզբն ոչ ունի, զի արա-
 րածքս այսմ յաւիտենիւս կային ի նախագաղափար տեսութիւն Աս-
 տուծոյ անսկզբնաբար, որով նա միշտ Արարիչ ճանաչի, և առնելոց
 է զվախճան ի կատարածի: Եւ թուականս թէպէտ զվախճան սորա
 20 կարէ ըմբռնել, այլ վասն ոչ ունելոյ սկիզբն, ոչ կարէ թուել:
 Իսկ երրորդն, որ է մշտնջենաւոր յաւիտեանն, զսորա սկիզբն
 թէպէտ կարէ ըմբռնել թուականն ըստ ժամանակաւոր յաւիտենիս,
 այլ զի վախճան ոչ ունի, ոչ կարէ և զսա թուել: Զորրորդ յաւիտեանս,
 որ ժամանակաւոր յաւիտեան կոչի, զսա կարողանայ ի թուել, զի
 25 յերկուց կողմանց ըմբռնի, զի ունի սկիզբն յարարչութենէն և զվախ-
 ճանն ի կատարածի:

Արդ, որովհետև ուսաք, թէ զժամանակաւոր յաւիտեանս կա-
 րեմք թուել, որ սկիզբն ունի և վախճան, պարտ է և զայս խնդրել,
 թէ զժամանակաւոր յաւիտենիս սկիզբն թուելութեան ամաց և դա-
 30 րուց և ժամանակաց յարարչութեան աւուրցն յորոց աւուրց թուեմք՝
 յառաջինն թէ երկրորդն թէ յայլսն:

Պատասխանի.— Գիտելի է, զի երեք են սկիզբն արարչութեան
 աւուրցն. առաջին օրն սկիզբն է արարչութեան, և չորրորդ օրն՝
 սկիզբն Արեգականն և Լուսնի ընթացութեան, իսկ վեցերորդ օրն՝
 35 սկիզբն արարչութեան Զատիկի և տարեմտի, ամաց և ժամանակաց
 և դարուց կատարման: Զի և նմին աւուր մարդն ստեղծաւ, և Արե-

գական ի խոյն եմուտ, և տարին զսկիզբն ի վեցերորդ աւուրս էառ, որ օր առաջին էր երբայեցւոց նիսան ամսոյ, և առաջին ամիս սա է յամիսս տարույ: Եւ զայս ցուցցուք հինգ կերպիւ: Առաջին, զի մարդն էր թուող ամաց և ժամանակաց և յառաջին աւուրսն ոչ էր ստեղծեալ: Այլ յորժամ հստեղծ զթուողն ժամանակաց ի վեցերորդ աւուրըն, ապա եղ զԱրեգական ի խոյն, և զարարչութեան Զատիկն արար ի նիսանի Ա. (1), և զմէկն նիսանայ արար տարեգլուխ և սկիզբն տարույն, զի անտի թուեսցէ զհամար որքանութեան ժամանակաց: Երկրորդ՝ լընթացից Արեգականն, զի յորժամ զերկոտասան կենդանակերպն ընթանալով վճարեաց և եհաս յարարչութեան աւուրքն, ոչ աւարտեաց զտարին, այլ կոխեալ զաւուրսն զայն և ապա վախճան արար տարույն և մտեալ ի խոյն, սկիզբն արար երկրորդ տարույն: Եւ վասն այն աւել աւուրք կոչեցան, զի ոչ մտան ի թիւ տարույն: Երրորդ՝ զի անիծիւք փակեալ է, թէ որ առնէ Զատիկն ի ներքոյ հասարակածին և կամ ի հասարակածն ընդ անիծիւք է, զի մի տարին երկու Զատիկ լինի, և երկրորդ տարույն Զատիկն խափանի: Եւ վասն այն զԱւագ լրման հանապազորդն ԽԶ. (46) կալնումք զի զլրումն արտաքոյ հասարակածին հանցուք: Եւ զԶատիկն ըստ արարչութեան Զատիկն ի նիսան ամիս բերցուք, զի յԱստուծոյ եղաւ Զատիկն այն, հիմն ամենայն Զատկաց: Չորրորդ՝ զի ելք Աւելեացն եօթներեակ է առաջիկայ ամին, և ելք անելաց արարչութեան Ե. (5)-երորդ օրն է երբայեցւոց: Կալ զառաջին օր տարույն և Ե. (5)՝ զեօթներեակ նոր տարույն, առնէ Զ. (6): Եւ այս ցուցանէ մեզ սկիզբն տարույն, զուրբաթ լինելն՝ զվեցերորդ օրն արարչութեան և ոչ զառաջինն և կամ զայլսն: Հինգերորդ՝ ևս յայտնի, զի դարքն ի ժամանակէն բաղկանան, և ժամանակն ի տարեացն, և տարիքն յամսոցն, և ամիսքն ի շաբաթուցն և շաբաթքն յաւուրցն, և աւուրքն ի ժամուցն, և ժամքն ի մասանցն, և մասունքն ի թաւալմանէ Արեգականն յաստիճանսն, և աստիճանքն ի խոյն առնուն զսկիզբն: Զի յայնմ աւուր Արեգակն սկիզբն առնու յաւելով զմասունսն թաւալմանցն, զի 34Ա. (361) թաւալ առնու և ի մասանցս այս սկիզբն առնուն ժամք և աւուրք և որ ի կարգին է, որպէս ասացաք: Ապա և յայտնի եղև, թէ սկիզբն դարուց և ժամանակաց թուելութեան վեցերորդ օրն է արարչութեան, զոր թուէ թուականն: Վեցերորդ՝ զի յառնելն թուական՝ ոչ ասեն՝ կալ յարարչութեան

առաջին աւուրն, այլ թէ կալ յԱղամայ հետէ, և Աղամ ի վեցերորդ օրն ստեղծաւ, յարարչութեան Զատիկին:

14. Վասն երրորդին ասելի է, որ ասէ «հիմն զանազան մասանց արհեստից»: Գիտելի է, զի բազմաւորակի զհիմն զոլ ցուցանէ, զի մասանց արհեստից ասէ՝ իբր ոչ եթէ եզակի տումարական արհեստիս ևեթ, այլ բազմաց ևս, զորս ցուցցուք սակաւուք: Նախ՝ զանազան մասանց տումարական արհեստիս, այսինքն եօթներեակց և վերադրաց, նահանջից, տասնիններեակց և այլոցն: Երկրորդ՝ վասն ուսումնականին մասանց, զի թուականն և երաժշտականն, երկրաչափականն և աստեղաբաշխականն, համարողական թուովս հիմնաւորի, և առանց թուելոյ անհնարին է, եթէ բացակատարի: Երրորդ՝ և հոյլք ամենայն իմաստասիրութեան սովաւ բացակատարի: Զի իմաստասիրութիւն թուով չերկուս բաժանի՝ ի տեսականն և ի գործնականն, և սահմանք իմաստասիրութեան ի վեց թիւն ժողովին: Եւ մասունք բերականին վեցիւք հաւաքի և առագանութիւնքն տասն թուով ցուցանի: Եւ բանին մասունք ութ թուով շարաբերի: Եւ իմաստասիրութիւն Պորփիրի հինգ ձայնի ճանաչի, և ստորագութիւնքն Արիստոտելի տասամբ բացայայտի, և բան բացերեական չերկուս տարորոշի և այլն:

20. Չորրորդ, զի և ամենայն վարդապետութիւն թուով յառաջի: Զի չեղանակ վարդապետութեան ի շորս թիւ բովանդակի և ամենայն աստուածաշունչ Գրոց վարդապետութիւն համարով շարագրի հինգ մտօք և տասն և այլն յաւէտ և նուազ, նաև համարք գրոց, այլ և տունք և զլուխք ի ցանկս համարով կարգին: Նաև ամենայն աստուածաբանութիւն թուով բացայայտին. եռակի թուով զառանձնութիւնսն նոցա վարդապետել և եզակի միակի զբնութիւն աստուածաբանել և զհրաբուն զօրսն չերիս երրեակս բացորոշել և այլն:

25. Հինգերորդ՝ դարք ժամանակաց և որքանութիւն ամաց նոցա թուականութեամբ բացայայտին: Զի եօթն ասամբ զդար կենցաղոյս զութեբորդն՝ զգալուստն ճառեմք: Եւ զառաջին դարն Ենովք փոխեցաւ, թուի ՌնԶէ. (1487), և անտի չերկրորդ դարն, որ է ջրհեղեղն, ՉՄԵ. (755) և այլն:

30. Վեցերորդ՝ և ամբ նախահարցն սովաւ յայտնին, զի ասեմք, թէ Աղամ ԶԼ. (930) ամ կեաց և մեռաւ, Սեթ՝ ԶԺԲ. (912), և Ենովս ԶԵ. (905), նոյ՝ ԶՄ. (950), Աբրահամ ՃՃԵ. (175):

Ծօթներորդ՝ իշխանութիւնք թագաւորաց և դատաւորաց թուով ճառին, որպէս Սաւուղ և Դաւիթ և Սողոմոն և. (40) ամօք թագաւորնցին: Նաև ներգործութիւնք պատերազմաց թագաւորաց և շինութիւն քաղաքաց թուով պատմին, որպէս պատմի, թէ յերրորդ ամի 5 դատաւորութեան Իլոնայ առաւ ապստամբ քաղաքն Իլոնի թագաւորացն հոռոմոց: Եւ ի դնել թուականին հոռոմոց Ռ. (1000) ամ լցաւ ի շինութենէ քաղաքին Հոռոմոյ: Այլ և արքունական զորք թուով կարգաւորին, որպէս թուեաց Մովսէս և Դաւիթ:

Եւ մուտք և ծախք նոցա և համարք թուով շարագրին դիւանապարօքն իւրեանց, որպէս արքային Սողոմոնի գրեալ է վասն մտոց, թէ տիկիինն Սարայ ևտ արքայի ճի. (120) տաղանդ ոսկւոյ և վասն ծախուց տանն իւրոյ՝ թէ ի միում աւուր ոտճիկք, որ ծախէին և. (30) քոռ նաշոյ և և. (40) քոռ ալեր գերմակոյ և ժ. (10) ևզն ընտիր և Ի. (20) կով արոտական և ճ. (100) ոչխար, թող զեղջերու և զայծեամն և զընտիր-զընտիր հաւուց պարարելոց: Եւ ի նաւակատիս տաճարին զոհեաց արքայ արջառս ԻԲՌ. (22000) և յոչխարաց ճԻՌ. (120000):

Ութերորդ, զի և արհեստ նաւարկութեան ծովու թուով շափաբերեալ լինի ճանապարհք ծովու, որպէս ի Պոնտոսէ, որ է Տրապիզոն ի Կոստանդնուպոլիս շափեալ Ռ. (1000) միլ և անտի ի Մազտաքէ կղզի ԴՃ. (400) և անտի յԹօտն Յ. (300) և անտի ի Կիպրոս Շ. (500) և անտի ի Ջաֆն, որ է Յոպպէ ի նավահանգիստն Երուսաղեմայ, ՄՄ. (250): Նաև ընթացքն նավուցն ի սիրտս ծովուց միշտ շափաբերին յարածամ, թէ այսքան եկեալ ենք և այսքան զնալու 25 ենք:

Իններորդ՝ և այլ ամենայն մարմնական արհեստք թուով զըլխաւորին, որպէս մետաքսագործք ասեն, թէ այսքան քիմխայս որպէս զՌ. (1000) թել և և զրահագործք, թէ այսքան Ռ. (1000) օղ պիտոյ է ի բովանդակութիւն մի զրեհի:

Տասներորդ՝ զի ամենայն տուր և առութիւն վաճառուց համարով թուոց կատարին՝ եթէ ի դրամս և ի շափս և ի կշիռս:

Ապա և յայտնի է, զի բոլոր կենցաղս զանազան արհեստիքն իւրեանց հոգևոր և մարմնաւոր՝ թուով եզերին: Ճշմարիտ է, զի հիմն է զանազան մասանց արհեստից, որպէս և ցուցեալ եղև:

«Թուական այսպէս արա. կալ թիւ մի յարաց ամսոյ...»: Մանիր, ով ուսումնասէր վասն յաւելեալ թուիս, թէ զինչ է պատճառն,

որ երբ կուկանումք յարաց ամսոյ թիւ մի մինչև ցՅայտնութիւն և շորերպատկեմք զնոսա, որ գտնումք զթուականն, նա ՊԿԴ. (864) կուգայ, և թուականս ՊԿԵ. (865) է: Եւ այս թիւ մի աւելի կուգայ, և թէ վասն էր: Զի պարտ էր ըստ արհեստին խրատու, որ ՊԿԴ. (864) լինէր թուականն և ոչ ՊԿԵ. (865): Իմա որդի, զի սաստիկ դժուարին է անվարժ մտաց տոմարական մակացութեանս վասն յաւելեալ թուոյն բանի հասկացուցանել, այլ զգալի օրինակի կարօտանայ, զի տեսցէ աչօք և ապա մտօքն իմանալ կարասցէ: Բայց նախ բանի ասացուք և ապա դրոշմեալ ի քարտի զօրինակն տացուք տեսանել զգալի աչաց: Արդ՝ ի դնել Մեծ թուականին Հայոց նաւասարդն, որ տարեկուրս եղաւ հայոց և սկիզբն թուականին, ըստ հոռոմոց ամսոցն ի յուլիս ամսոյ ի ԺԱ. (11) եղեալ է, որ ամարան առաջին ամսոյն ԻԳ. (23) օր լեալ էր: Եւ Յայտնութիւն յարաց ամսոյ ի և. (30) ն դիպեցաւ, և ամն առաջին ամ նահանջի, և շորերորդ ամն նահանջ, որ է զոյգ թիւ: Եւ յորժամ յարաց և. (30) էն մինչև յաւելեացն ի Ե. (5) եկն Յայտնութիւն, որ է ճՁԶ. (186) օր, և առնէ ՉեԴ. (744) ամ, նա նահանջն հանապաղ ի զոյգ թիւն եկաւ, որ է Դ. (4), Ը. (8), ԺԲ. (12) և այլն ըստ կարգի: Եւ այս վասն էր: Վասն այն, զի Յայտնութիւն զայսքան ժամանակս յառաջ գայր, քան զնաւասարդն, և ապա յետոյ գայր նաւասարդն և յաւելոյր զՖարտ թիւ թուականին ի նահանջի յառաջի ամն: Իսկ յորժամ եկն Յայտնութիւն և եմուտ ի նաւասարդն ի ՉեԸ. (748) ամն, յայնժամ յառաջ խաղացոյց նահանջն զնաւասարդն և ձգեաց յառաջ և Յայտնութեան: Զի ի նաւասարդի մէկն ի մտանել թուականին, յառաջ Ֆարտ թիւն յաւելաւ և էառ զնահանջն զոր մինչև ցայժմ զոյգ թիւն առնոյր զնահանջն և Ֆարտ թիւն զնահանջի առաջի ամն, զի ՉեԸ. (748) ամն առնելոց էր զնահանջն, թէ յառաջ Յայտնութիւն էր եկեալ և ապա նաւասարդն, իսկ յորժամ նահանջն յառաջ խաղացոյց զնաւասարդն և կոխեալ ևտ զՅայտնութիւն յայնժամ թիւն զոյգ, որ էր ՉեԸ. (748) թիւ, շկարաց առնուլ զնահանջն: Այլ Ֆարտ թիւն, որ էր ՉեԹ. (749), նա էառ զնահանջն և զոյգ թիւն էր ՉՄ. (750), նա էառ զնահանջի առաջի ամն: Եւ այսպէս եմուտ յաւելեալ թիւն թարնաբար ի ներքս: Վասն այն յորժամ կուշորերպատկեմք յարաց և. (30) էն մինչև ի Յայտնութիւն, նա զնահանջն ի ՊԿԴ. (864) կուցուցանէ, և թուականս ՊԿԵ. (865) է: Եւ ի ՉեԹ. (749) թուէն ի վեր ՌնԿ. (1460) ամ նահանջն ի Ֆարտ

թիւն պիտի գայ, և նահանջի առաջին ամն ի զոյգն: Եւ յորժամ
դարձեալ կրկին անգամ կոխէ նաւասարդն զՅայտնութիւն, յայն-
ժամ դարձեալ ուղղի իբրև զառաջինն և նահանջն գայ ի զոյգ թիւն
և նահանջի առաջի ամն՝ ի Ֆարտ թիւն: Այսքան յաղագս թուակա-
5 նին շատ լիցի:

ՆԱՀԱՆՋ ԱՅՍՊԷՍ ԱՐԱ.

Նախ խնդրելի է, թէ զինչ է նահանջն, երկրորդ՝ թէ ուստի գո-
յանայ օրն նահանջի, երրորդ՝ թէ ի քանիս բաժանի նահանջն, չոր-
րորդ՝ թէ զինչ առնէ նահանջն:

10 Վասն առաջնոյն գիտելի է. նախ զի զնահանջն ստուգաբանօ-
րէն յաւելուած մասանց ասի, որ ի չորս ամն յաւելու օր մի և զտա-
րին առնէ 342. (366) օր: Երկրորդ՝ որոշումն ասի, զի ժամանակն
յերկուս տարանջատի՝ ի նահանջ և յամսանահանջ: Իսկ եկեալ նա-
հանջին, որոշէ զժամանակն և ցուցանէ, թէ այս ի նահանջի երից
15 ամացն չէ, որ զտարին 346. (365) օր կատարէ, այլ նահանջն է,
որ զտարին 342. (366) օր շարաշինէ:

Երկրորդ՝ ասելի է, թէ յորոց մասանց գոյանայ նահանջն:
Ասեմք ըստ փիլիսոսփայիցն ձայնի տումարական հանձարասիրացն,
նախ ըստ ԻԳ. (24) ժամու աւուրն շափու, զոր կատարէ Արեգակն
20 34. (360) մասանցն ըստ Լ. (30) հոլովման ընթացիցն յաւելու այլևս
Ժ. (10) մասն և կէս: Իսկ օրս նահանջի յայն կէս մասանցն գոյա-
ւորի, զի յաւելու յօրն կէս մասն և յԲ. (2) օրն Ա. (1) մասն և յԼ.
(30) օրն, որ է ամիս մի՝ ԺԵ. (15) մասն, որ է կէս ժամ և յԲ. (2)
ամիսն Ա. (1) ժամ և ի տարին, որ է ԺԲ. (12) ամիս, 2. (6) ժամ և ի
25 Գ. (4) տարին ԻԳ. (24) ժամ, որ է օր մի, ուստի բաղկացաւ ի մա-
սանցս յայս և օրս այս է նահանջ: Երկրորդ՝ ըստ ԺԲ. (12) ժամու
աւուրցն այսպէս է, զի Արեգակն ընթանայ զԺԲ. (12) ժամ աւուրն և
յաւելու այլևս Ե. (5) մասն և չորեակ մասին միոյ, որ ի չորից բա-
ժանէ մասինն, մինն է: Զի որպէս մի դրամն ի Գ. (4) ըսուպ բաժանի,
30 նոյնպէս և մի մասն ի Գ. (4) մասնիկս բաժանի: Եւ այս ժողովի
ի Գ. (4) օրն մի մասն և յամիսն է. (7) մասն և կէս և ի Գ. (4)
ամիսն Լ. (30) մասն, որ է ժամ մի և ի տարին Գ. (3) ժամ և ի Գ.
(4) տարին ԺԲ. (12) ժամ, որ է օր մի, և այս է նահանջն:

Երրորդ՝ գիտելի է, զի նահանջն ի Գ. (4) բաժանի՝ ի նահանջ,
յամսանահանջ, ի նահանջից նահանջ, ի գերադրական նահանջ:
Առաջին նահանջ այս է, որ զորոշումն ժամանակաց առնէ, որպէս
ասացար: Երկրորդ նահանջ՝ ամսանահանջն է, որ զուգաւորութիւն
5 ամսոց ազգաց առնէ, որպէս է հոռոմոց և հայոց: Երրորդ նահանջ՝
նահանջից նահանջն է, որ է Արեգակնն և Լուսինն որ զԼուսինն յիւր
շրջանն ձգէ և զԱրեգակն յիւրն: Չորրորդ՝ գերադրական նահանջն
այն է, որ զԵ. (500) եակ աւագ շրջանն կատարէ, և զԱրեգակն և
զԼուսինն ի միասին ի ստեղծման շաւիղն ձգէ: Իսկ գերադրական
10 նահանջն պարունակէ զնահանջից նահանջսն, և նահանջից նա-
հանջն՝ զնահանջսն և նահանջքն՝ զամսանահանջսն: Որպէս պարու-
նակէ մարմինն զմակերևոյթն, և մակերևոյթն՝ զգիծն, և գիծն՝
զանյայտ նիշն: Դարձեալ՝ չորրորդն պարունակէ զերրեակն, և եր-
րորդն՝ զերկեակն, և երկեակն զմիակն, այսպէս մարմինն և մա-
15 կերևոյթն: Դարձեալ՝ երկրորդն բաղկանայ յառաջնոյն, երրեակն
յերկակէն, և քառեակն՝ յեռակէն, այսպէս գիծ և մակերևոյթ: Դար-
ձեալ՝ երկեակն շարաբառնայ զերրեակն, և երրեակն զքառեակն,
այսպէս և գիծն՝ զմակերևոյթն, և նա զմարմինն:

Չորրորդ՝ ասելի է, թէ զինչ առնէ նահանջն: Ներգործութիւն
20 նահանջի այս է. նախ, զի տարրորշէ զժամանակն, երկրորդ՝ զի շա-
բաթացուցանէ զէ. (7) օր նահանջիցն և առնէ զնահանջից նա-
հանջն, նոյնպէս և զԺԱ. (11) օր Լուսինն բոլորէ յաւուրս Լ. (30) և
առնէ զնահանջից նահանջն Լուսինն: Երրորդ՝ զի թիւ մի ի վե-
րադրացն հայոց պակասեցուցանէ: Չորրորդ՝ զի Արեգակն թիւ մի
25 յեօթններեակս այլ ազգացն յաւելի և առնէ զմէկն երկու և զայն ըստ
կարգի: Հինգերորդ՝ զի յաւելու ի չորս տարին օր մի:

ԵՌԹՆԵՐԵԱԿ ԱՅՍՊԷՍ ԱՐԱ.

Նախ խնդրելի է, թէ զինչ է եօթններեակն, երկրորդ, թէ ուստի
գոյանայ, երրորդ, թէ զինչ առնէ, չորրորդ, թէ վասն էր՝ Գ. (3) ի
30 վերայ բերեմք:

Վասն առաջնոյն ասելի է, թէ կրկին կերպիւ իմանի եօթնե-
րեակն: Նախ՝ ըստ համարոյ թուոյն, զի է. (7) է. եօթններեակ է
աւուրք շաբաթուն, վասն այն եօթններեակ ասէ, իբր թէ եօթներորդ,
զի երկորեանն զմի և զնոյն տեղի ունին: Երկրորդ՝ եօթններեակ է

ելք աւելեացն, որպէս ասէ «ելք աւելեացն եօթներեակ է առաջիկայ ամին»: Զի նա է, որ անխախտ պահէ զսկիզբն մտից աւուրն տարւոյն, զի թէ ինքն կիրակի է, զսկիզբն տարւոյն անխախտ երկուշարթի պահէ և ոչ թողու որ շփոթուի և այլն ըստ կարգի:

- 5 Վասն երկրորդին ասելի է, թէ ուստի գոյանայ: Գիտելի է, զի և սա յարեգականային մասանցն գոյանայ ըստ կրկին եղանակինախ ըստ ԻԳ. (24) ժամու աւուրն, զոր կատարէ Արեգական և յաւելու Ժ. (10) մասն ու կէս: Եւ որպէս կէս մասն զնահանջն առնէ, նոյնպէս Ժ. (10) մասունքն զաւել աւուրքն առնեն: Զի Ժ. (10) մասն, որ աւելի ընթանայ Արեգական, քան զԻԳ. (24) ժամն, ժողովի ի Ժ. (10) օրն, և լինի Ծ. (100) մասն և ի Կ. (20) օրն՝ Մ. (200) և յԼ. (30) օրն, որ է ամիս մի, 3. (300): Եւ զԼ. (30) մասն մի ժամ առնեմք լինի Ժ. (10) ժամ ի ամիսն և յԳ. (3) ամիսն Լ. (30) ժամ, հանեմք զԻԳ. (24) ժամն օր մի և տամք ի զարնանային եղանակն:
- 15 Եւ առնեմք ՂԱ. (91) օր, և յաւելու Զ. (6) ժամ, այսպէս և յԳ. (3) եղանակն առնէ զյաւելուածս զայս Արեգական, զի յաւելու մի-մի օր և Զ. (6) ժամ: Եւ Զ. (6) ժամն ժողովեալ ի Գ. (4) եղանակն, լինի ԻԳ. (24) ժամ, որ է օր մի: Եւ վերջի օր աւելեացն առնէ զեօթներեակն: Երկրորդ՝ ըստ ԺԲ. (12) ժամու ընթացիցն յաւելու Արեգական այլևս Ե. (5) մասն: Եւ այս ժողովեալ, լինի յաւուրս Ժ. (10), առնէ Ծ. (50) մասն և յամիսն՝ ԾԾ. (150): Եւ ըստ Լ. (30) մասանցրն առնեմք Ե. (5) ժամ և յԳ. (3) ամիսն ԺԵ. (15) ժամ, զԺԲ. (12) ժամն առնեմք օր մի և յաւելումք Գ. (3) ժամ, այսպէս և զայլ եղանակսն առնէ: Եւ Գ. (3), Գ. (3) ժամքն ժողովեալ ի Գ. (4) եղանակն և լինի օր մի, որ է հինգերորդ օր աւելեացն: Եւ սայ առնէ զեօթներեակ առաջիկայ տարւոյն: Զի վերջին օր տարւոյն սա է: Զի թէպէտ զհաշիւ ի վերայ եղանակացն առնեմք, և եօթներեակն այսպէս ոչ դիպի, զի ոմանց աւելեացն յամառն դիպի և յայլոց՝ յաշունն, և կիսոյն՝ ի ձմեռն: Եւ Մեծ Հայոց՝ ի բոլոր տարին շկացաւ, զի ուր և դիպի, ևլք աւելեացն, վերջին օրն առնէ զեօթներեակն: Եւ այս վասն տարեգլխին լինի, զի ոչ եզին ըստ եբրայեցւոց ի զարնանային եղանակն: Բայց ըստ եբրայեցւոցն ուղիղ է հաշիվն, զոր արարաք, զի նոցա ձմեռան վերջին օրն առնէ զեօթներեակն:
- 35 Վասն երրորդին գիտելի է, զի եօթներեակն առնէ ամսամուտ և օրագիւտ և այլն:

Վասն չորրորդին, զի ասէ Գ. (3) ի վերայ ած, կամ Գ. (4) ի բաց երթ, զի ի չորրորդումն աւուր արարաւ Արեգական, Գ. (4) օր անցեալ էր ի շաբաթուն, Գ. (3) ի վերայ ած, որ Գ. (4) ն է. (7) լինի և կամ Գ. (4) երթ, որ եօթանն սկիզբն լինի: Զայս երկու մտօք իմա. մէկ՝ ըստ արարչութեան Զատկին և երկու՝ ըստ մեր թուականիս, որ ի հինգշաբթի օր են զրել:

— Զինչ՞ է, որ ասէ «յամսամուտն կալ թիւ մի»:

- Առաջին օր ամսոյն է, զոր ասէ «կալ թիւ մի», որպէս և յօրագիւտն զքանիս աւուր ամսոյն կալնումք: Իսկ զեօթներեակն վասն այն կալնումք զի անցեալ տարւոյն վերջին օրն այն է և նոր տարւոյս ամենայն աւուրց կարգ նովաւ գայ անսխալ: Եւ զկրկնական վասն այն կալնումք, որ թիւ աւուրց ամսոյն լման գայ և զկարգն ուղիղ բերէ: Զի թէ կրկնական Բ. (2) լինի, որպէս հոռու և եօթներեակն՝ է. (7) և ոչ կալնումք զկրկնական, ամիսն, որ յերեքշաբթի պիտի մտէ, նա ի կիրակի պիտի գայ, և զայլն ըստ կարգի առաւելութեան կրկնակացն իմայ:

ՏԱՍՆԻՆՆԵՐԵԱԿ ԱՅՍՊԵԼՍ ԱՐԱ.

Նախ խնդրելի է, թե զինչ է տասնիններեակ, երկրորդ՝ թէ ուստի պատճառի պակասումն աւուրց, երրորդ՝ թէ զինչ առնէ տասնիններեակն:

- 20 1. Նախ գիտել պարտ է, զի ի չորրորդ աւուր ընդ արշալույսն ստեղծագործեցաւ Արեգական և եղաւ յառաջին շաբաթն ստեղծման՝ ի նոյն կէտն և ի նոյն բոպէն, որ մինչև ցայսօր ծագէ ըստ սահմանադրութեան արարչին: Իսկ յերկուցին արար զԼուսինն և զնա եղ ի նոյն շաբաթ ստեղծմանն, յորում ընթացաւ Արեգական, զի զհետ հետոց Արեգականն ընթացաւ և սա: Արդ՝ զի նախկին է ստեղծումն, քան զընթացումն, վասն այն նախկին ասելի է վասն ստեղծմանն, քան վասն ընթացմանն:

- 30 Եւ նախ խնդրելի է, թէ որպէս գոյացան լուսաւորք, երկրորդ՝ վասն լուսոյն, երրորդ՝ վասն բարութեան լուսոյն, չորրորդ՝ վասն յատկութեան նոցա, հինգերորդ՝ վասն նշանակութեան նոցա, վեցերորդ՝ թէ վասն էր՞ յերկինս եղ:

1ա. Վասն առաջնոյն գիտելի է, զի ոմանք ասեն, թէ հինգերորդ էութիւն է արտաքոյ շորից տարերց ըստ Արիստոտելի: Այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն ըստ Պղատոնի, եթէ լոյսն խզումն է ի տարրական հրոյ, որ յառաջին օրն գոյացաւ: Եւ լուսաւոր անօթքն ի շորրորդումն աւուրն կազմեցան յօգոյ, և խզեալ յառաջին լուսոյն զպարզն և զվճիտն և զչերմինն և եղեալ յանօթ Արեգականն, և զայլ նուազն և զգիշայինն եղեալ յանօթ Լուսինն: Եւ ըստ այսմ կերպի զպայծառ և զնուազ աստեղս իմա: Եւ այս հաւանելի երևի վասն կրկին պատճառի. նախ զի յոմանս առաւել է լոյսն, որպէս յԱրեգակն և յոմանս նուազ, որպէս ի Լուսինն և յայլ աստեղս: Այլ հինգերորդ էութիւն է պարզ և հաւասար՝ զառաւելն և զնուազն ոչ ընդունի: Եւ թէ ասեն յանօթոյն է, որ մինն առաւել լոյս տայ և մինն նուազ և ոչ ի լուսոյն, որպէս յատակ ապակի, որ առաւել լուսաւորէ, ասեմք՝ ապա յայտ է, որ անօթք լուսաւորացն տարրական է, թէ ոմն պարզ է և ոմն թանձր: Երկրորդ, զի ոմնին ջերմութիւն և ցըրտութիւն, շորութիւն և գիշութիւն, որ յատկապէս տարրական է որպէս կութիւն:

1բ. Գիտելի է վասն լուսոյն, զի հոմանուն է լոյս և բաժանի յանեղ և եղական լոյս: Եւ է անեղական լոյս և երրորդութիւն սուրբ լոյս անմատուց, ըստ այնմ՝ «լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս»¹: Իսկ եղականն լոյս դարձեալ բաժանի յիմանելին և ի զգալին: Եւ է իմանալի լոյսն որպէս հրեշտակք և հոգի մարդոյ և պատուիրանն Աստուծոյ, զի «պատուիրանք Տնան լոյս են»²,—ասէ մարգարեն: Իսկ զգալի լոյսն դարձեալ բաժանի յերկնայինն և յերկրայինս: Եւ է երկնային լոյս՝ որպէս Արեգակն և Լուսինն և աստեղք, իսկ երկրային լոյս է ճրագն և պայծառ օդն և լոյս աչաց:

1գ. Երրորդ՝ ասելի է վասն բարութեան լուսոյն, որ ասէ՝ «ետես Աստուած զլոյսն զի բարի է»³ և բազում ինչ բարութիւն և յատկութիւն է լուսոյն. նախ զի հալածէ զխաւար, երկրորդ՝ փարատէ զտրամութիւն և ուրախ առնէ, երրորդ՝ զգազանս և զգողս փախուցանէ, չորրորդ՝ զճանապարհորդս և զարուեստաւորս և զայլս ի գործս յորդորէ, հինգերորդ՝ զընտիրս և զխոտանս որոշէ, վեցերորդ՝ զբարեկամս և զթշնամիս ցուցանէ, եօթներորդ՝ միջնորդով զայլս

1 Սաղմ. ԼԵ10:
2 Սաղմ. ԺԸ9:
3 Մենգ. Ա4:

լուսաւորէ, որպէս ընդ օդ և ընդ ապակի, ութերորդ՝ ի թանձր և ի կարծր նիւթ անգործ մնայ, որպէս ի քար և ի հող, իններորդ՝ զփորուածս երկնից բովանդակ ընու, տասներորդ՝ ըստ չափու տարողութեան զաչս լուսաւորէ:

5 նմանապէս և իմանալի լոյսն ներգործէ զայս. նախ զխաւար անդիտութեան հալածէ, երկրորդ՝ զտրամութիւն մեղաց փարատէ, երրորդ՝ զթշնամին, սատանայ և զչարն փախուցանէ, չորրորդ՝ զիմաստունս և զառաքինիս ի գործս յորդորէ, հինգերորդ՝ զբարիս և զչարս որոշէ, վեցերորդ՝ զբարեկամս հրեշտակս և զթշնամիս սատանայ ցուցանէ, եօթներորդ՝ միջնորդով զայլս լուսաւորէ: Որպէս Տէրն մեր՝ «ես լոյս յաշխարհ եկի»¹ և «ես եմ լոյս աշխարհի»² և առաքելոցն ասէր՝ «զուր եք լոյս աշխարհի»³, և նորօք լուսաւորեաց զհաւատացեալս: Ութերորդ՝ որք խստացեալ են անհաւատութեամբ և թանձրացեալ մեղօք, անգործ մնայ, իններորդ՝ զերկեայինս և զերկրային միտս մարդկան առ հասարակ լուսաւորէ, տասներորդ՝ ըստ չափու և կարողութեան բաշխէ, որպէս ի կեանս յայսմիկ, և ի հանդերձեան առաւել, զի կարիցեմք տանել:

1դ. Չորրորդ՝ գիտելի է և վասն յատկութեան սոցա: Նախ յատկութիւն է Արեգական. զի միատեսակ է և մի, երկրորդ՝ զտեսակն անիրաց զնելի ունի, երրորդ՝ զտեսակն յառաջ է, քան զնիւթն, չորրորդ՝ երեք յատկութեամբ և մի բնութեամբ, հինգերորդ՝ պատկեր և օրինակ է Քրիստոսի Արեգականն արդարութեան, վեցերորդ՝ մեծ է, քան զաշխարհս, եօթներորդ՝ ջերմ է զօրութեամբ, ութերորդ՝ զի լուսաւոր է, իններորդ՝ հաւասար ունի զջերմութիւն և զլոյս, տասներորդ՝ արարիչ է եղանակաց, մետասաներորդ՝ զտիւ և զգիշեր կատարէ, երկտասաներորդ՝ պատճառ է ծննդոց, երեքտասաներորդ՝ խոնարհի և բարձրանայ, չորեքտասաներորդ՝ մերձեանալով նորոգէ և հեռանալով ապականէ, հնգեքտասաներորդ՝ անդադար է ի ներգործութիւն, յորս կարգեցաւ, վեշտասաներորդ՝ զի ամենայն լուսաւորք ի նմանէ առնուն զլոյսն, տասնևեօթներորդ՝ զի չափ է ժամանակաց, տասնևութերորդ՝ լուսով և ջերմութեամբ մերձեալ է յամենեսեան և բոլորակութեամբ հեռի, տասնևիններորդ՝ զոմանս

1 Յովհ. ԺԲ46:
2 Յովհ. Ը12:
3 Մատ. Ե14:

խաւարէ և զայս լուսաւորէ, քսաներորդ՝ է ռի նշանս և ի ժամանակս
և յաւուրս և ի տարիս»¹, — որպէս ասէ Գիրն:

Իսկ վասն յատկութեան Լուսնի գիտելի է. նախ զի միջակ է
Արեգական և աստեղաց, խոնարհ է, սրբնթաց է, փոքր է զօտին,
5 զամիսն առնէ, զգիշերս լուսաւորէ, խաւարի, ընդ դէմ երկնիցն
շարժի, հասարակ և յատուկ շարժութիւն ունի, գէջ է և հով, ունի
բնական լոյս և յԱրեգակնէ փոխառնու լոյս, մերձեալ՝ յԱրեգակէ
լուսաւորի, այլ և եղջերաւորի և հեռացեալ նուազի լոյսն, զԱրեգակն
խաւարէ, ի լոյս նորա ծածկի, իշխէ տարրական մարմնոց, ի ծնուն-
10 դրս ազդէ, տնկոց սնունդ է, ոմանց որակ գունոց տայ՝ որպէս խըն-
ձորոյ և զոմանց բառնայ՝ որպէս զմարդոյ, հայելի է աշխարհի,
ըստ որում ազտն յերեսն երևի: Զամենայն մոլորակաց զօրութիւն
ունի. և այս վասն երկու պատճառի, նախ զի ներքոյ է ամենեցուն
և ամենայնին զօրութիւն առ նա ժողովի, և դարձեալ՝ Արեգակն
15 միջակ գոլով հազորդի ամենայն մոլորակաց և զայն անցուցանէ ի
Լուսին՝ լուսով հանդերձ: Վասն այն ի նորանալն առաւել զօրաւոր
և ազդու է սերմանելոյ և այլոց, որ և զծովս և զազրիւրս և զհերս
և զըզեզս առաւելու ընդ իւր և նուազէ:

Բայց խնդրելի է և զայս, թէ զլոյսն որպէս՝ ունի: Վարդապետք
ասեն որպէս սուրբն Բարսեղ, թէ որպէս երկրերանի քսակ է Լուսին,
20 ընդ միսն ելանէ և ի վերինն թիկունքն ժողովի, և պակասի ի մենջ
լոյսն և ի միս ներքս մտանէ և լուսաւորէ զմեզ: Եւ այլք ասեն, թէ
յԱրեգակէն առնու զլոյսն: Այսպէս, զի մերձ եկեալ ի նոյն կեն-
դանակերպն, սակս լոյս առնելոյ ի նմանէ՝ յարեւելիցն կողմանէ,
25 թէպէտ մեզ ի մտիցն երևէ, այլ նմա արեւելից մասն է, որ զլոյսն
առնու: Եւ որքան հեռանայ ի Արեգականն առաւելու լոյսն, և յոր-
ժամ ի միս կիսագունդն հասանէ ընդ վեց կենդանակերպս հետե-
վեալ՝ բոլորի լոյսն ի նմա, զի ուղղապէս զլոյսն ընդունի և այնու-
հետե նուազի լոյսն որքան յառաջէ քան զԱրեգակն և թեքի ի նմանէ:
30 Եւ այլք ասացին, թէ ունի բնական լոյս և առնու զլոյս յԱրեւէ և այն-
պէս խառնի երկու լոյսն ի նմա և սնուցանէ՝ զորս յերկրի: Եւ գիտե-
լի է, զի ընդ ամենեկին հեռանալն՝ Լուսինն խաւարի: Եւ ամենեկին
մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն և ուղղապէս ընդդէմ անցեալ
Արեգականն, խաւարէ զնա, զի ընդդիմատիպ է անօթ Լուսնին:
Նմանապէս և զայլ մոլորական ծածկէ, յորժամ ուղղապէս ընդդէմ

անկանի: Եւ զի ոչ հանապազ խաւարին, զի ոչ միշտ ընդ նոյն շա-
փղս ընթանան, թէպէտ հանդիպին ի մին կենդանակերպ:

Խնդրելի է և զայս, թէ ազտն զինչ՝ է յերեսն Լուսնին:
Ոմանք ասացին՝ ի խաւարմանէ հաշուութեան է մնացեալ
5 նշան: Եւ ոմանք՝ զստուեր երկրի ասեն: Եւ այլք ասեն, թէ կերպա-
րանք է ցամաք երկրիս, որպէս հայելին զմարդոյ կերպարան յինքն
երեւցուցանէ: Նոյնպէս և Լուսինն, զի այն, որ պայծառն է՝ լուսա-
փայլութիւն ծովուցն է, և ազտն երկրի:
Նաև զայս պարտ է գիտել, թէ զինչ է, որ ի նորին եղջերուա-
10 կերպ երևի:

Ստուեր երկրի ընդ մէջ անցեալ Արեգական, խաւարէ զԼուսինն
և յորժամ առնու զլոյսն յԱրեւուն յեղրն, երկրիս ձեն բոլորակ է,
խաւար մնայ մէջն, նոյնպէս յորժամ հնանայ, և պակասի լոյսն:

Այլ վասն զի նոյնասեռք են և սոցա աստեղք, ասելի է և զյատ-
15 կութիւն սոցա. նախ զի մի բնութիւն է աստեղաց, երկրորդ՝ զի լու-
սաւոր է, երրորդ՝ զի անապական է, չորրորդ՝ զի մշտաշարժ է,
հինգերորդ՝ զի գիրքն իւր մեծ է, թէպէտ և առ մեղ փոքր, վեցե-
րորդ՝ զի հաստատ է ի գիրքս իւր, հօթներորդ՝ զի զարդ երկնից է,
ութերորդ՝ զի նշան ժամանակաց է, իններորդ՝ զի յօրինակ մերոց
20 փառաց է, տասներորդ՝ զի բոլոր է:

1ե. Հինգերորդ՝ ասելի է վասն նշանակութեան նոցա: Նախ լոյս
Արեգականն նշանակէ զլոյս աստուածութեան և բոլորակութիւն՝
զանթերի և զկատարեալ աստուածութիւն: Երկրորդ՝ Արեգակն
զՀայր Աստուած նշանակէ, և դեղին լոյսն՝ զՈրդին միածին, և սպի-
25 տակ լոյսն՝ զՀոգին Սուրբ: Երրորդ՝ զի Արեգակ երեք է յատկու-
թեամբ, և մի է բնութեամբ, այսպէս աստուածութիւն երեք է անձ-
նաւորութեամբ և մի է բնութեամբ: Չորրորդ՝ զի Արեգակն ունի
լոյս և ջերմութիւն, նոյնպէս Հայր ունի լոյս՝ զՈրդին միածին և
ջերմութիւն՝ զՀոգին Սուրբ: Հինգերորդ՝ ելանելն Արեգական յարե-
30 վելից՝ զեկանելն Որդույ ի Հօրէ նշանակէ, ըստ այնմ ճելի ի Հօրէ
և ևկի յաշխարհս¹: Եւ խոնարհիւն ի մուտն Արեւու զխոնարհիւն առ
կոյսն, ըստ այնմ՝ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ
քոս²: Եւ ծածկիւն ի ներքին կիսագունդն՝ զպարուրիւն ի որովայն

1 Յովհ. Ժ228:
2 Գուկ. Ա35:

1 Մենդ. Ա14:

Կուսին, ըստ այնմ՝ «ահա յղասցիր»¹: Եւ վերստին ծագիլն՝ զծնանիլն ի Կուսէն, ըստ այնմ՝ «և ծնցիս որդի»²: Վեցերորդ՝ բարձրանայն Արեգականն յերկրէ՝ զբարձրանալն ի խաչին նշանակէ, ըստ այնմ՝ «յորժամ բարձրացայց, զամենեսեան, ձգեցից առ իս»³: Եւ խոնարհիլն՝ զիշումն ի խաչէն, որպէս խոնարհեցաւ ի վերայ բազկացն Յովսէփայ: Եւ ծածկիլն ի ներքին կիսագունդն՝ զծածկիլն հողով ի գերեզմանի, ըստ այնմ՝ «զի որպէս Յովնան եղև ի փոր կիտին զերիս տիւս, նոյնպէս և որդի մարդոյ ի սիրտ երկրի»⁴: Եւ վերստին ծագիլն՝ զփառաւոր յարութիւն աստուածային ի գերեզմանէ, ըստ այնմ՝ «և յերիւր աւուր յառնեմ»⁵: Եւ խոնարհեցաւ՝ համբառնալն Արեգականն ի երկրէ, զհամբառնալն առ Հայր նշանակէ, ըստ այնմ՝ «ելանեմ ես առ Հայր իմ»⁶: Եւ խոնարհիլն զմիւս անգամ՝ զալուստն, ըստ այնմ՝ «ղարձեալ գամ, առնում զձեզ»⁷: Եւ ծածկիլն զկորուստ մեղաց և մեղաւորացն ի դժոխս, ըստ այնմ՝ «երթայք յինէն անիծեալք»⁸: Եւ վերստին ծագիլն՝ զվերանալն արդարոցն յերկին, ըստ այնմ՝ առաքելոյ «արդարքն լուսեղէն ամպօք վերանան ընդ առաջ Տեառն յօդս»⁹: Ութերորդ, ծագիլն՝ զաստուածային վարդապետութեան լուսաւորելն նշանակէ, ըստ այնմ՝ «ես լոյս աշխարհ եկի»¹⁰: Եւ խոնարհիլն՝ զաստուածահրաշ սքանչելիքն, որպէս ասէր՝ «ես եկի, զի զկեանս ունիցիս»¹¹: Եւ ծածկիլն՝ զթաքնութիւն աստուածային զօրութեան յանհաւատիցն, ըստ այնմ՝ «վասն անհաւատութեան նոցա ոչ արար զօրութիւնս»¹²: Եւ վերստին ծագիլն՝ զլուսաւորելն զաշս ըստ հաւատոցն, որպէս ասաց Բարտիմէի՝ «երթ, հաւատք քո կեցուցիս զքեզ»¹³: Իններորդ՝ զաստուածային

հրաշագործութիւնս յորժամ ներգործէր, բարձրանայր իբրև զԱրեգակն, որպէս վասն յարութեան Ղազարոյ ի մտանելն յաւանակաւ յԵրուսաղէմ զըրզեցաւ քաղաքն ամենայն, և Ովսաննայ երգով փառաւորէին զնա: Եւ խոնարհէր իբրև զԱրեգակն, յորժամ զմարդկայինս նկատէր զքաղց, զծարաւ և զայլսն: Եւ ծածկէր, որպէս զԱրեգակն, աշխնքն ի սատանայէ, որ մինչ ի խաչն ոչ կարաց վերահասու լինել ճշմարտութեան առանց տարակուսանաց: Թէպէտ և ազաղակէին զեք «գիտեմք զքեզ, ով ես սուրբք Աստուծոյ և ի հրէիցն», որպէս ասէ առաքեալն՝ «եթէ էին ծանուցեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին»¹: Տասներորդ՝ ծագեցաւ ի տուն Սիմոնի իբրև զԱրեգակն և խոնարհեցաւ, յորժամ սեղանակից եղև նմա, ծածկեցաւ ի Սիմոնէ, յորժամ ասէր, թէ մարգարէ ոմն էր սա, գիտէր և ծագեցաւ ի սիրտ պոռնկին, որ հաւատեաց զնա Աստուած և թողօղ մեղաց և օծ զՏեառն յօծումն պատանեաց: Մետասաներորդ՝ ծագեցաւ հեթանոսաց իբրև զԱրեգակն և ըստ այնմ՝ «լոյս յաշտնեցար հեթանոսաց» և խոնարհեցաւ ի տունս մաքսաւորաց և մեղաւորաց, որպէս Զաքէին, և ծածկեցաւ կղէտպեանցն ի ճանապարհին և վերստին ծագեցաւ ի վերնատունն, որպէս Թովմայի: Երկուտասաներորդ՝ ծագէ որպէս զԱրեգակն յօգիս արժանաւորաց և փառաւորեալ բարձրանայ բարեգործութեամբ նոցին: Եւ ծածկի յանզեղջ մեղաւորաց և վերստին ծագէ ապաշխարողաց, աշսպէս և լոյս լուսնին նշանակ է գոյացութեան մերոյ, ծնանելովն, բոլորելովն և մաշելովն, զի և մեք ծնանիմք և բոլորեալ կատարիմք և նուազելով մաշիմք, երկրորդ՝ նշանակ է մահու և յարութեան մերոյ, երրորդ՝ մեղաց և ապաշխարութեան, չորրորդ՝ հին օրինացն, հինգերորդ՝ նշանակէ և զփոփոխական և զյեղչեղոլ բնութիւնս մեր: Իսկ նշանակութիւն աստեղացն, որպէս նշանակ եղև Մնաղեանն Քրիստոսի և այժմ աստղ զիսաւոր նշանակ է աշխարհի խոռովութեան և սասանման, նաև ըստ փոփոխութեան որակաց լուսոյն, զանազան նշանակութիւնս շնորհն աշխարհի:

1 զ. Վեցերորդ՝ ասելի է, թէ վասն էր՝ յերկինս եղ: Նախ զի երկինքն բարձր է, և յայնմանէ առաւել զլոյսն ծագէին յերկիր: Երկրորդ՝ լուսաւորքն ի հրոյ են, և տեղիք հրոյն է բարձրագոյն, որպէս տարր հրոյն: Երրորդ՝ աչք մեր, որ է լոյս, ի վերին մասն գլխոյս

1 Ղուկ. Ա31:
 2 Ղուկ. Ա31:
 3 Յովհ. ԺԲ32:
 4 Մատթ. ԺԲ40:
 5 Մատթ. Իէ63:
 6 Յովհ. Ի17:
 7 Յովհ. ԺԳ3:
 8 Մատթ. ԻԵ41:
 9 Ա. Թեաալ. Դ16:
 10 Յովհ. ԺԲ46:
 11 Յովհ. Ժ10:
 12 Մատթ. ԺԳ38:
 13 Մատթ. ԺԸ42:

1 Ա. Կորն. ԲԾ:

է, նոյնպէս և լուսաւորքն յերկինս, զի մերձաւոր՝ նմանն զնմանն տեսցէ: Զորրորդ՝ զի ի վեր տեսցուք աշօք և մտօք զվերինն խորհիմք, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ: Հինգերորդ՝ զի տեսցուք և իմասցուք, թէ արտաքին սրահն երկնից այսպէս է

5 զարգարուն, քան ի առաւել ներքին կողմն սրբութեան իմանալեացն դասուց: Վեցերորդ՝ զի ի միտ ածցուք զառաջին փառսն մեր և ցանկասցուք և մի որպէս զանասուն յերկիր կորասցուք, յիշեա, եղբայր:

Արդ, այժմ ասասցուք, թէ զինչ է տասնիններեակն: Տասնիններեակ է շրջանն Լուսինն, որ յամս ժԹ. (19) Լուսինն կատարէ զընթացս իւր՝ սկսեալ ի ստեղծման շաւղէն և հասեալ ի գլուխ շրջանին՝ պատահու: Եւ դարձեալ դառնայ և մտանէ ի սկիզբն շրջանին ի մտանել քսաներորդ ամին:

2. Երկրորդ՝ խնդրելի է, թէ ուստի պատճառի պակասումն աւուրն տասնիններեակիս: Գիտելի է, զի ի շորքշարթոջ աւուր ի վաղորդեանն պահու, յորում ստեղծաւ Արեգակն և եղաւ ի ստեղծման շաւղն ի հասարակաւորութեան էր, զի երկոտասան ժամ զտիւն չափէր և զերկոտասան՝ զգիշերն: Եւ ընթացաւ Արեգակն զտիւ աւուրն այն ժԱ. (11) ժամ և ժԱ. (11) մասն և մնաց յերկոտասան ժամէ աւուրն ժԹ. (19) մասն այլ վճարէր զերկոտասան ժամն և մտանէր ի ներքին կիսագունդն: Եւ մերձ երեկոյին հստեղծ Աստուած զԼուսինն և եզ ի նոյն շաւղ ստեղծման Արեգականն և ընթացաւ զհետ հետոց նորա ժԱ. (11) ժամ և ժԱ. (11) մասն: Եւ Արեգակն զԺԲ. (12) ժամն բոլոր իշխեաց տուրնջեանն, բայց Լուսինն զԺԲ. (12) ժամն ոչ կարաց իշխել զիշերոյն, զի զԺԹ. (19) մասն ի տիւն ընդ Արեգականն գնաց: Եւ մնաց ժԱ. (11) ժամ և ժԱ. (11) մասն զիշերոյն յիւր իշխանութիւն, զի զայն միայն լուսաւորեաց ի վերին կիսագունդն: Եւ զԺԹ. (19) մասն, որ ի ժԲ. (12) ժամէն պակաս լուսաւորեաց, զայն ի ներքին կիսագունդն ընթացաւ: Եւ զայն ժԹ. (19) մասն յամենայն ամի պակաս ընթանայ Լուսինն ըստ ստեղծման աւուրն, որ ոչ կարաց լուսաւորելով իշխել զիշերոյն զԺԲ. (12) ժամն և զԺԱ. (11) մասն: Եւ ժԹ. (19) մասունքս ժողովեալ ի ժԹ. (19) ամն, պակասեցուցանեն օր մի և մասն մի յաւելեալ 34. (360) մասանցն և առնէ «զկատարեալ Լուսինն»:

30

— Բայց աստ տարակոյս է. զի ասէ մեկնիշն, թէ այս է տասնիններեակ, որ ժԹ. (19) մասն ամի ամի յաւելու ի Լուսինն և ի ժԲ. (19) տարին լինի օր մի, որ յաւելու ի վերադիրս ազգաց:

— Մի՛ այսպէս իմանալ, թէ Լուսինն այսպիսի ընթացիւքս, որ

5 ամի ամի ժԹ. (19) մասն յաւելու ի Լուսինն, թէ օր յաւելեալ բացակատարէ և այնպէս յաւելու: զվերադիրս ազգաց: Ո՛չ այսպէս, այլ պակաս ընթանալովն ամի ամի ժԹ. (19) մասն օր մի այլ պակաս ընթանայ, քան զԱրեգակն ի տասնիններեակի ամին: Զի զԺԸ. (18) ամն Լուսինն զիւր տարին 357. (354) օրն վճարէր և ի տասնիններեակի ամին 359. (353) օրն վճարէ, որ է օր մի այլ պակաս, քան զ357. (354) օրն, զոր իւր սահման էր, որ հանապազ ընթանայր: Վասն որոյ ի տասնիններեակի ամին ժԲ. (12) բերեմք ի վերայ վերադիրն, որ 359. (353) օր տարույ Լուսինն դարձեալ 346. (365) լինի և հաւասարի տարույ Արեգականն: Եւ ի նահանջի

15 ամին, որ օր մի յաւելու Արեգակն ի տարին, նա ժ. (10) թիւ ածեմք ի վերայ վերադիրն հայոց, որ է թիւ մի պակաս, զի դարձեալ լիցի 349. (366) օրն՝ 346. (365): Եւ յորժամ տասնիններեակի ամ ոչ լինի, որ Լուսինն պակասեցնէ օր մի և կամ նահանջի, որ Արեգակն յաւելու օր մի, նա ժԱ. (11) բերեմք ի վերայ, որ դարձեալ 346. (365) լինի օր տարույն Լուսինն և հաւասար գտանիցի Արեգականն: Եւ յորժամ նահանջն և տասնիններեակն ի մի ամ հանդիպին, դարձեալ ժԱ. (11) ածեմք ի վերայ, զի թէ Լուսինն պակասեցուց օր մի, նա Արեգակն յաւել օր մի, վասն այն ժԱ. (11) ածեմք ի վերայ:

3. Երրորդ՝ ասելի է, թէ զինչ առնէ տասնիններեակս: Առաջինն՝

25 զայս առնէ, զի զԼուսինն ի ստեղծման շաւղն ձգէ, երկրորդ՝ զի յաւելու ի վերադիրս ամենայն ազգաց, երրորդ՝ զի թիւ մի պակասեցուցանէ ի վերադրէն Հայոց Մեծաց:

ՎԵՐԱԳԻՐ ԱՅՈՂԷՍ ԱՐԱ.

Նախ թէ զինչ է վերադիր, երկրորդ՝ թէ յորքան աւուրց ձևի

30 ստեղծաւ Լուսինն, երրորդ՝ թէ ուստի գոյանան վերադիրքն:

1. Վասն առաջնոյն գիտելի է, զի ժԱ. (11) թիւ պակաս ընթանայ Լուսինն, քան զԱրեգակն և առեալ մեր մետասան թիւ ի ժԳ. (13) Լուսինն և յաւելումք ի վերայ ժԲ. (12) Լուսինն և հաւասարեմք զնա ընդ Արեգական, զի Արեգակն ընթանայ ի տարին 346. (365)

օր, և Լուսինն՝ 3ՄԴ. (354) օր՝ ԺԱ. (11) օր պակաս, քան զԱրեգակն և զԺԱ. (11) թիւն, զոր յաւելումք ի վերայ պակասութեան Լուսինն, վերադիր կուցմք:

2. Երկրորդ՝ թէ յորքան ատուր ձևի ստեղծաւ Լուսինն: Արդ՝ ի վերայ ատուրցս այս բազում են կարծիք, զի ի զանազան ձևս ասեն զԼուսինն ստեղծեալ: Ոմանք եօթեայ և այլք՝ միօրեայ, իսկ կէսք՝ մետասանօրեայ: Եւ որք եօթեայ ասացին, երեք կերպիւ սխալեցին: Նախ՝ զի խոռ և անկատար երևի ձև Լուսինն ի կարգ արարածոցս, որ ամենեքեան կատարեալ ստեղծան յԱստուծոյ: Երկրորդ՝ զի զառաջին՝ արարչութեան լրումն յապրիլի մէկն բերէ, զի երեք ատուր ի մարտի Ի. (20) ասեն ստեղծեալ և ԺԱ. (11) օր ի մարտի ամսոյ, որ է ԺԴ. (14) և ի մէկն ապրիլի գայ լրումն, որ է ԺԵ. (15)-երրորդ, բայց արարչութեան լրումն յապրիլի Դ. (4)-ն եղեալ է և ոչ ի մէկն: Վասն այն ի սկիզբն շրջանին զապրիլի Դ. (4) եղին առաջի լրումն: Երրորդ՝ զի առաջիկայ ամին վերադիրն, որ ԺԱ. (11) պարտ է լինել, նա ԺԴ. (14) լինենայ, որ անհնար է այժմ լինել, զի ԺԲ. (12) Լուսինն ԻԹ. (29) օր ու կիսկան 3ՄԴ. (354) օր առնէ: Եւ յորժամ Գ. (3) ատուր լինի ստեղծեալ, 3ԿԱ. (361) օր առնէ: Իսկ որ միօրեայ ասեն, և այս կարի անտեղի է, զի միօրեայ ստեղծեալ Լուսինն ամենեին տեսութեան ոչ է արժանի: Երկրորդ՝ զի ամենեկն ընդդէմ բնութեան է այս, զի այս է կարգ ընթացից բնութեան Լուսնի ի ստեղծմանէ մինչև ցայժմ, զի Լուսինն երբ ի լրման լինի, ապա յարևելից յարևմուտս ընթանայ: Եւ օր ըստ օրէ յետս անկանի յարևմտից կուտէ: Իսկ յորժամ ի ծնունդն լինի՝ յարևմտից յարևելս գայ և օր ըստ օրէ յառաջէ յարևելս կոյս: Արդ, Լուսինն երբ ստեղծաւ, յարևելս եղաւ և եթէ միօրեայ գոլով և յարևելից յարևմուտս սկսաւ ընթանալ, ապա երբ ի լրմանն ժամանէր, նա պարտ էր, որ յարևմտից յարևելս ընթանայր, որ է ամենեկն անհնարին և անտեղի: Զի թէ զաճումն ըստ կարգի բնութեան ընկալաւ, պարտ էր զի և զընթացսն ըստ կարգի բնութեան ընթացի, զի աստ ոչ է սքանչելիք, այլ կարգ բնութեան ըստ այժմուս բերման, որ օր ըստ օրէ, որպէս այժմ աճեալ բոլորեսցի:

Իսկ որք մետասանօրեայ ասեն ստեղծեալ զԼուսինն, նաև ոչ այս է ուղիղ: Առաջին՝ զի ասեն, եթէ մետասանօրեայ ստեղծաւ և այն մետասան օրն ի Լ. (30) ատուրց Լուսինն պակաս եղև յարարչութեան, վասն այն ասեն ԺԱ. (11) ածեմք ի վերայ վերադիրն և

զայն պակասն լցուցանեմք: Նախ ասեմք, եթէ ԺԱ. (11) օր պակաս եղև ի Լուսնէն վասն մետասանօրեայ ստեղծանելոյն: Եւ յորժամ Լուսինն զիր ամն վճարէր ի վերայ ԺԲ. (12) Լուսնոյ ի մին յայն, յայնժամ ԺԲ. (12) երրորդ Լուսինն, որ վերջին Լուսին է տարւոյն՝ ԺԱ. (11) օր և նա պակասեցուցանէր, որպէս և այժմ է: Եւ այս լինէր ԻԲ. (22) օր պակաս: Զի առաջին Լուսինն, որ ստեղծաւ մետասանօրեայ, ունի ի ԻԹ. (29) օր ու կիսոյն ԺԸ. (18) օր ու կէս, և ԺԱ. (11) Լուսինն այլ առնէ 3ԻԴ. (324) օր ու կէս, և այս լինի՝ 3նԳ. (343) օր: Եւ պիտոյ է, զի լիցի վերադիրն ԻԲ. (22) օր, և ապա Լուսինն կարացէ հավասարիլ զԱրեգականն ի 3ԿԵ. (365) օրն: Երկրորդ՝ զի թէ մետասանօրեայ ստեղծաւ Լուսինն, և էր մարտի Ի. (20) պարտ էր, զի առաջին լրումն մարտի ԻԴ. (24) գայր, և առաջին լրումն՝ յապրիլի Դ. (4) է լեալ և ոչ մարտի ԻԴ. (24): Երրորդ՝ զի թէ մարտի ԻԴ. (24) առնոյր զլրումն, յայնժամ Լուսնի ԺԸ. (18) օր ու կէսն զԼ. (30) ատուր թիւն վճարէր և ԺԱ. (11) օր ի ծննդեան կարգէ ընթացիցն պակաս գայր, որ ոչ ընթացաւ: Զորրորդ՝ զի թէ զծննդեան կարգ այսպէս թերի ընթանայր, զի զթիւ ԻԹ. (29) օր և կիսոյ Լուսնին անպակաս վճարեսցէ, և այս անկարելի է լինել, որ Լուսինն ի հասարակածին և կամ զկնի հասարակածին ի ծննդեանն կարգի լինէր, այլ զկնի լրմանն լինի, որպէս այժմ տեսանեմք, զի յետ հասարակածին Լուսինն ի լրմանն լինի: Հինգերորդ՝ զի թէ ԺԱ. (11) օրն հանց զնայր, և յԺԲ. (12) օրէն ի վեր առնոյր զաճումն և զառաջին լրումն յապրիլի Դ. (4) բերէր, և այս անհնարին էր՝ Լուսնին խոռ գոլով ԺԱ. (11) ի նոյն ձևի մնալ: Զի ամենայն բնութիւն կատարմանն ցանկայ և ի սկսանելն՝ զաճումն խնդրէ վասն կատարելութեան: Իսկ Լուսինն զհարգ՝ կարէր ԺԱ. (11) օր ի միում ձևի մնալ և այն՝ անկատար ձևի: Վեցերորդ՝ զի անվայելուչ էր Աստուծոյ ասուածութեան զի զերկիրս ամենայն կենդանեօք լիակատար ստեղծանել մինչ ի անարգ զեռունսդ, նաև զբոյսս և զտունկս և զձառս միանգամայն ստեղծանել տերևովն, ծաղկովն, պտղովն, այսպէս և զամենայն սերմանիս, զբոյսս և զբանջարս, այսպէս և զժովային և զբային լողակս, նաև զօղային թռչունս, և զայնպիսի պատուական ստեղծուածն անկատար ստեղծանել: Եօթներորդ՝ զի ամենայն հոմասեռք իւր՝ ի մեծամեծաց մինչ ցփոքունս, լիակատար ստեղծան յԱստուծոյ ի զարգ երկնից և ի լուսաւորութիւն գիշերոյ: Իսկ Լուսինն, որ մեծ էր յամենայն աս-

տեղս և ընդ Արեգական համաթուեցաւ լինել իշխան գիշերոյ, որ-
պէս և նա տուրնջեան, զիարդ՝ վայելէր նմա անկատար արարչա-
գործել: Ութերորդ՝ զի որպէս արարողն արարածոց լի և անթերի
է յիրում աստուածութեան, այսպէս վայելէր աստուածութեան նորա
5 լի և անթերի ստեղծանել զամենայն առարածս յիրում արարչու-
թեան: Իններորդ՝ զի Տէր և զլուխ ամենայն զգալի արարածոցս
զԱդամ ստեղծանելոց էր, զի վայելեսցէ ի զեղեցկութիւն սոցա-
նու պարտ էր, զի ի տեսանելն Ադամայ զվայելչութիւն զարմանա-
հրաշ արարածոցս՝ կատարելապէս բերել յինքեան զուրախութիւն ի
կատարեալ ստեղծագործութիւն ամենայն արարածոցս և ոչ անկա-
տար խնդութեամբ տալ տպաշաւանս և ամսոսանս յանկատարու-
թիւն Լուսինն: Տասներորդ՝ զի այս ստեղծական բնութեան է յատուկ
զիր անկատար յառաջ բերել, որ վասն տկարութեան կարօտանայ
ժամանակի, իսկ աստուածային արարչագործ և ամենակարող զօ-
րութեան ոչ վայելէր, որ զամենայն արարածոցս յական թօթափելն
15 տայր զկատարելութիւն և զԼուսինն՝ հանդերձ ժամանակաւ:
Իսկ թէ ոք ասացէ, զինչ՞ արասցուք, զի բանս յերևելի և ի
հուշակատր յառնէ ասացեալ է ի սրբոյն Եփրեմէ ի Գիրս Սուրբս,
որպէս ի մեկնութիւն արարածոցն, ասեմք՝ մի ոք պարսաւանս զիցէ
20 սրբոյն, եթէ նա ի մետասան ատուր ձեռում ասէ ստեղծեալ զԼու-
սինն: Քաւ և մի լիցի, այլ մետասան ատուրք երեց գոլ ասէ զԼուսինն
քան զԱրեգակն: Զի զԳ. (4) ատուրսն հասարակ ունին նոքա զա-
ռաջինն, զերկրորդն, զերրորդն և զչորրորդն, յորում գոյացանն, իսկ
Գ. (4) և ժԱ. (11) միատրեալ լինին ժՅ. (15): Արդ՝ վասն ժՅ. (15)
25 օրեայ գոյոյ Լուսինն ի շորրորդում ատուր ստեղծման իրոյ ժԱ.
(11) ատուրք երեց զնա, քան զԱրեգակն ասէ գոյ: Զի զԳ. (4) թիւ
ատուրցն առաջնոցն ոչ առանձնակի կամի տալ Լուսնոյ, քանզի հա-
սարակ ունին զայն Արեգակն և Լուսին, վասն ի շորրորդում ատուր
ստեղծմանն և երկօրեան ատուրք հանգիտաթիւք և միահասակք են,
30 վասն ի միում ատուր ստեղծանելոյն: Իսկ վասն ամենալին գոլ
Լուսնոյ ի ժՅ. (15) ատուր ձևի զրոյոր գունդն լուսով լրացեալ և
անթերի ունելով ժԱ. (11) ատուրք երեց ասէ Լուսին, քան զԱրեգակն՝
ոչ ներգործութեամբ ատուրք, որպէս թէ Լուսինն ժԱ. (11) ատուրք
յառաջ ստեղծեալ է, քան զԱրեգակն, քանզի ի միում ատուր ստեղ-
35 ժան: Եւ ոչ ըստ ժԱ. (11) ատուր ձևի, այլ վասն յիալիք և բոլորեալ
Լուսնոյն, որ իբրև զժՅ. (15) օրեայ ստեղծաւ՝ զժԱ. (11) օր անլիք:

քան զԱրեգակն և ոչ ի ժԱ. (11) ատուր ձևի խոռ և թերի ասէ ստեղ-
ծեալ, որպէս կարծեն ոմանք, որ ոչ հասկանալ կարեն զմիտս բա-
նին: Ապա և անպարսաւ լիցի սուրբս՝ վասն ճշմարիտ առաստիճան
յայնցանէ, որ ոչ կարեն իմանալ զկարծիս սրբոյն: Զի Գ. (4) ատուր
5 զԱրեգակն ասէ և ժՅ. (15) ատուր զԼուսինն վասն լիալիք գոյոյն և
ժԱ. (11) ատուր ձեռովն երեց ասէ զԼուսինն քան զԱրեգակն: Զի զԳ.
(4) թիւ ատուրք առաջնոց արարչութեան ոչ առանձնակի կամի տալ
Լուսինն, քանզի հասարակ ունին զայս Արեգակն և Լուսին վասն ի
միում ատուր ստեղծմանն: Այսքան առ այս:
10 Գարձեալ, այլք ոմանք Բ. (2) ատուր ասացին ստեղծեալ զԼու-
սինն, և ոմանք՝ ժՅ. (15) ատուր և առ օրին առեալ զլրումն, որում
և սոցայս երևի ոչ գոլ ուղիղ: Եւ զի որք Բ. (2) ատուր ասացին, նախ
այս է թիրութիւն սոցա, զի խոռ ասեն ստեղծեալ զԼուսինն: Երկ-
րորդ՝ զի յարարչութեան Զատիկն Լուսինն ի ծննդեան կարգն գայ
15 և ոչ ի լրմանն, զի Գ. (4) ատուր գայ Լուսինն ի Զատիկն: Երրորդ՝ զի
զառաջին լրումն յապրիլի Բ. (2) բերէ: Չորրորդ՝ զի զվերադիրն
ժԳ. (13) բերէ:
Իսկ որ ժՅ. (15) օրեայ ասացին և առ օրին առեալ զլրումն,
նախ այս է սխալումն նոցա, զի անվայելուչ և անյարմար էր առ
20 օրին ստեղծանիլ բոլոր ի լրմանն ձևի և դարձեալ ի նմին պահու-
նուազիլ: Թէպէտ և այս բնութիւն է նորա ընդ լրանալն նուազիւն,
որպէս այժմ տեսանեմք, այլ այս գործ բնութեան է և այն՝ գործ
արարչութեան: Եւ այն, զի ամենայն բոյսք և տունկք և կենդանիք
առ տարովն զկատարելութիւն պահեցին, և Լուսինն իսկոյն նուա-
25 զէր, կարի անղէպ էր և անվայելուչ: Երկրորդ՝ զի ծննդեան կարգն
կորնչէր ժՅ. (15) օր, եթէ առ օրին էառ զլրումն, և զԼ. (30)-երորդ
օր Լուսինն լինի ժՅ. (15) օր: Երրորդ՝ զի զառաջին վերադիրն
բերէ իՉ. (26) օր:
— Իսկ թէ Լուսինն ի միօրեայ, կամ երկօրեայ, կամ եռօրեայ
30 կամ մետասանօրեայ ոչ է ստեղծեալ և կամ բոլոր և առ օրին ոչ
է նուազեալ և զլրումն առեալ, աղաչեմ ի սէրն Քրիստոսի լուծանել
զտարակոյսդ, թէ որպէս՞ և կամ զիարդ՞ և յորում՞ քանակի և ձևի
ստեղծաւ Լուսինն:
— Ծանիր, որդի, զի առաջինքն ոչ զմի յեղանակ կանոնեալ
35 լուսնացոյցսդ վարեցան, այսինքն տասնիններեկօք, այլ ոմանք ժ.
(10)-եկօք և կէսք ժՅ. (15)-եկօք և այլք ժՉ. (16)-եկօք և ոմանք՝

Մ. (200)-եկան Անդրէասայ, մինչև ի գիւտ Շ. (500)-եկիր, և այլը՝ նուազագունովք, որպէս և յայտնի իսկ է, զի Ղն. (95)-եկօք վարեցան: Իսկ ի ժամանակս ամբարիշտ թագաւորին Յուստինիանոսի, եղև լրումն Մ. (200) ամի կարգացն Անդրէասայ, և սկսան շփոթել 5 լրումնք Զատկաց և գիրք արուեստական տումարաց: Իսկ այլ մի ի ճշմարտագունիցն ուսումնասիրաց յեզրատական մայրաքաղաքէն Աղեքսանդրեայ էաս անուն կոչեցեալ ձայն արկեալ առ ինքն ժողովէ զարս կորովամիտս. զԱղգայ ի Գամրաց, զՓենեհեզ ի Հրէաստանէ, զՅոհան ի Արաբիոյ, զՅովբել յԵթովպիոյ, զՍեբզ ի Մակեդոնիայ, զԳիգան յԱսորոց և այլ ևՁ. (36) արամբբ հաւատարմօք: Եւ սկսան խորհիլ գտանել զզարձ Արեգականն և Լուսինն ի միում ամի: Եւ գտին զայս լեալ ի ԻՐ. (28) տասնիններեակս: Եւ ազդեցութեամբ 10 Հոգւոյն Սրբոյն ծանեան՝ զԼուսին ստեղծեալ ի լրման ձևի և զաւուրբս ժԵ. (15) ընթացեալ լիալիւր և բոլոր լուսովն՝ միշտ յերեկոյին ծագելով և զժԵ. (15) օոն դբոլոր զիշերն լուսաւորելով: Եւ ապա 15 բստ բնութեան յետ ժԵ. (15) աւուրն, որ էառ զլրումն յապրիլի Դ. (4), այլ ոչ ծագեաց յերեկոյին, այլ օր քան զօր յետ անկանէր և գայր ի գիշերի, որպէս և այժմ բստ բնութեան կարգի, այսպէս աւարտեալ զկարգ ծննդեանն: Եւ հասեալ յապրիլի Դ. (4), առնու 20 զառաջին լրումն նուազելոյ, որպէս և այժմ բստ բնութեան կարգի: Եւ ուրախացեայ՝ փառս ետուն Աստուծոյ և զոհացան զՀոգւոյն Սրբոյ, և սկիզբն արարին բնութեան յապրիլի Դ. (4)-իցն, զի գտանիցեն միւս անգամ զԱրեգակն և զԼուսինն ի ստեղծման շաւիղն: Եւ գայր Լուսինն ի ժԹ. (19) ամի, և Արեգակն՝ ի ԻՐ. (28) ամի, և 25 ապա այսպէս ընթացեալ մի զկնի միոյ, և գտեալ ի ՇԼԲ. (532) ամի զերկոսեանն ի գլուխ շրջանին: Եւ փառաւորեցին զԱստուած, և դրին ի գլուխ բոլորին ապրիլի Դ. (4) լինել լրումն առաջին՝ զկնի արարութեան Զատիկին և շինեցին ՇԼԲ. (532) տարու լրմունք և վերագիրք և եօթներեակք և զպատկեր աւուրց լրմանն և անուանեցին անտարակոյս օրինակ: Զի զՇ. (500)-եակ շրջանն յորժամ 30 լմնեն Արեգակն և Լուսին և դարձեալ դառնան յառաջին կարգն ի սկիզբն շրջանին և նոյնպէս բերեն, որպէս զառաջինն զլրմունքն, զվերագիրսն, զեօթներեակսն և զպատկեր աւուրց լրմանց և զամենայն տօնս և զորպիսութիւնս միանգամայն: Եւ սմա այլ ոչ է կատարած և կամ վախճան, այլ կատարումն Շ. (500)-եակ շրջանին

կատարումն աշխարհիս է, զի այլ կերպիւ ոչ է հնար վախճան առնու սմա: — Խնդրելի է և այս, թէ Լուսինն վասն էր՞ ստեղծ ի լրմանն: — Ասելի է՝ նախ, զի գործ Արարչի էր և ոչ բնութեան, զի բնութիւն առ սակաւ սակաւ բստ ժամանակի ներգործէ զկատարելութիւն: Երկրորդ՝ զի առաջին արարչութիւն էր գոյիցս, գոյացուցանել 5 զսոսա յոչ ընչէ և յոչ գոյից: Եթէ բստ ժամանակի տայր զկատարելութիւն, կարծէին անկար գոյ զամենակարողն Աստուած ի համանգամայն գոյացուցանելն զսոսա և ասէին, թէ վասն տկարութեան՝ միջնորդութեամբ բնութեան, ի ժամանակի գոյացոյց զսոսա: Երրորդ՝ զի զամենայն գոյքս՝ եթէ մշտնջենաւորքն և եթէ ժամանակաւորքն, զբովանդակն կատարելութեամբ եստեղծ, որպէս զդասս հրեշտակացն, նաև զբոլոր զգալի արարածքս՝ զօգայինս, զծովայինս և զցամաքայինս, մինչ յանարգ զեոունս, վասն այն և 15 զԼուսինն բոլոր եստեղծ: Զորրորդ՝ վասն արարչական Զատիկին, զի որպէս ամենայն արարածս բոլոր և կատարեալ գոյաւորութեամբն շքեղացոյց ի ուրախութիւն արարչութեան Զատիկին, նոյնպէս և զԼուսինն՝ ի ձև լրմանն արարչագործեալ և լիակատար լուսովն պայծառացոյց: Հինգերորդ՝ զի որպէս ի բոլոր երրորդութիւն ոչ ինչ նուազութիւն երևի ի մէջ երից անձնաւորութեանց, այլ համապատիւք են բստ բնութեան և բստ աստուածութեան: Թէպէտ ասի Հայր մեծ բստ պատճառին, որպէս ասէ Տէր՝ «ես և հայր իմ մի եմք»: Եւ բստ այնմ կամեցան յարարչագործութիւնս իւրեանց զի ոք ոչ խոռ և նուազ գտանիցի յարարելոցս ինքեանց, այլ ամենեքեան համապատիւք լինիցին կատարեալ գոյաւորութեամբն իւրեանց, զի ի կատարելութեանէ արարածոցս երևեսցի կատարելութիւն Արարչին իւրեանց: Վեցերորդ՝ ի լրմանն եստեղծ վասն Ադամայ, որ զլուխ և 25 թագաւոր արարածոցս արարչագործեաց, զի մի գուցէ տեսեալ Ադամայ զվայելչութիւն արարածոցս, որ վասն իւր արարաւ, և գտանիցէ զոր ի պակասութեան ձևի և անկարութիւն, ածիցէ զմտաւ զարարչէն Աստուծոյ և կամ անհաւան լիցի ի պակասութիւն նորա, կամ ափսոսանս տրտմութեան հանցէ նմա և կամ անարգ ամենայն գոյից զնա համարեցի, որ պատուականագոյն է, քան զբազումս ի սպասաւորութիւն արարածոցս: Եօթներորդ՝ զի նոր արարչագործութիւն էր և նոր էին արարածք, նոր Զատիկ և նոր հարսանիս ընդհանուր գոյից, կամեցաւ Աստուած, զի որպէս զտիւն ողջոյն, որ Արեգական

լուսովն խրախացուցանէր զամենայն կենդանիս և պաշտառացուցանէր զնորոգ արարածքս, նոյնպէս և զմթութիւն խաւարատեսակ գիշերոյն զաւուր վեշտասան զկարգ ծննդեանն Ավագ լրմանն և Ավագ Զատիկին՝ լիալիբ և բատրան Լուսինն զբովանդակ գիշերն մխիթարեալ և լուսավորեալ զամենայն տեսակ կենդանեաց, և շահաւորէր զծոցս երկնից և փայլուն ներգործէր զերեսս ծովուց, և գեղեցկատեսսիլ յօրինէր զերեսս երկրի և ցանկալիս ներգործէր զտեսութիւն ամենայն բուսոց և տնկոց: Ութերորդ՝ վասն այն ի լրմանն ձեռն ստեղծեաց, զի նախատիպ ամենայն Զատկաց լինիցի, և ամենայն Զատիկբ ըստ օրինակի արարչութեան Զատիկին ի լրմանն Լուսինն կատարեսցին: Իններորդ՝ զի զոր բոլոր գոյիցս կացուցանելոց էր սպասաւոր՝ ետ նմա զձեն բոլոր, զի եղիցի ի սպասաւորութիւն իւր պատշաճաւոր և մի գտցի ի գործ սպասաւորութեան իւր պակասաւոր: Տասներորդ՝ զի կամեցաւ յայտնի առնել զԼուսինն վախճանն ի ձեռն սկզբանն, զի որպէս ի սկիզբն արարչութեանս բոլոր և կատարեալ ստեղծաւ, նոյնպէս և ի վախճան կատարածի աշխարհիս բոլոր և կատարեալ եղիցի և այլ մի նուազեսցի:

Հարցումն.— Ուստի՞ թուեսցուք զառաջին լրումն Լուսինն. և թէ ի ստեղծմանէ աւուրն, ժՁ. (16) օր գայ և եթէ յաւուրն, յորում եմուտ ի խոյն, ժԵ. (15):

Պատասխանի.— Ասեմք, եթէ երկորեանն են ստոյգ և գեղեցիկ: Զի յորժամ ուրբաթի աւուր սկիզբն զհինգշաբթի երեկոյն դնեմք, ըստ ասիցն Մովսիսի՝ «եղև երեկոյ և եղև վաղորդեան օր մի», զի երբայցիքն աւուր սկիզբն զերեկոյն դնեն, յայնժամ Արեգակն և Լուսին՝ ի խոյն հաշիվն է: Եւ յապրիլի Դ. (4) յերեկոյին ի Ե. (5) ժամն զարարչութեան զառաջին լրումն առեալ է: Այս ի ժԵ. (15) աւուր վերայ է, յորժամ յապրիլի ի գիշերն էառ զլրումն ի ժԵ. (15) ժամն: Եւ այս ուղիղ է, զի ըստ կարգի բնութեան Լուսինն է, որ յամենայն ժԵ. (15) աւուր վերայ առնու զլրումն և բերէ զառաջին վերագիրն զկնի արարչութեան ամին ուղիղ, այսինքն ժԱ. (11):

Իսկ ի ստեղծմանէն ի վեր, որ է մարտի Ի. (20) և աւելեաց երբայցեաց՝ ի Դ. (4), որ ժՁ. (16) օր դայր նա, և այս է յոյժ վայելուչ բազում կերպիւ: Նախ զի ամենայն Զատիկի լրման սահման է, որ ժՁ. (16) օր առնու, և վասն այն ասի Աւագ լրումն: Նոյնպէս և սա առաջին լրումն է առաջին Զատիկին և անդրանիկ է ամենայն լրմանց Զատկաց, վասն այն ի ստեղծմանէն ի հետ ժՁ. (16) օր գայ լրումն

առաջին Զատիկին: Եւ մեր ի սմանէ առեալ հանապազ զլրումն Զատկաց ի վերայ ժՁ. (16) աւուր բերեմք, զի արարչութեան Լուսնի ստեղծմանէն ի լրումն ժԵ. (15) բոլոր ուներ և ընդ ժամ՝ ի Լուսնի ժամէն, որ Ե. (5) մասն ժամ մի է Լուսնի, ի ժՁ. (16)-երորդ օրն մտեալ էր: Երկրորդ՝ զի համակարգեցաւ Լուսինն ընդ Արեգականն՝ կոչիլ և սա «մեծ և իշխան»: Եւ Արեգակն զմեծութիւն ի քանակն ընկալաւ, և Լուսինն զժՁ. (16)-երորդ օրն: Երրորդ՝ զի Լուսինն օրիակ է մարդոյն՝ ըստ աճելութեան և նուազութեան: Եւ որպէս նախատիպն մարդ, որ անդրանիկն է, աւելի ունի զաւուրս Ե. (5) զկնի եղեալ կրսեր եղբարցն, այսպէս և անդրանիկ է Լուսինն արարչութեան, աւելի ունի ներգործութեամբ զմի օր զկնի եկեալ կրսերագունից ամենայն լրմանց: Չորրորդ՝ զի ամենայն գոյքս նախ առաւելուն լինելութեամբ և յետոյ պակասին նուազութեամբ, որպէս մարդ, որ մինչ ի Ե. (40) ամն առաւելու ի տարիս իւր և յետ այնորիկ օրըստ օրէ պակասի: Այսպէս և Լուսինն ի լինելութեան աւելի էառ զաւուրս իւր զօրն ժՁ. (16)-երորդ, իսկ յետ լրման նուազութեան պակասեցաւ և եղև ժԵ. (16)-երորդ: Հինգերորդ՝ զի բոլոր երկնայինսն, զոր ստեղծ Աստուած, ամենեցուն պատիւն և մեծարանս ետ. զի հրեշտակացն ետ պատիւ ի մէջ բանականացս՝ զԵ. (5) օրեայ անդրանկութիւն, և հրեղէն երկնիցն՝ բարձրագոյն լինել ամենայն երկնից, և ջրեղէն երկնիցն՝ ի վեր ամենայն ծովուց, և հաստատութիւնդ՝ զեր ի վերոյ լինել ամենայն մարդակաց երկնից, և Արեգական՝ ետ զուկէճաճանչ: Ճառագայթս ի մէջ ամենայն լուսատրաց, և ամենայն ստեղաց՝ զանփոփոխութիւն լուսոյն, իսկ Լուսինն՝ անդրանկութիւն

ժՁ. (16)-երորդ աւուրն:
3. Վասն վերագրին ասելի է, թէ ուստի պատճառին ժԱ. (11) օր վերագրացս Լուսնի ըստ տումարական արհեստին. նախ՝ պատճառին յարեգակնային ընթացիցն, որ յժԲ. (12) կենդանակերպսն: Զի Արեգակն սկսեալ ի խոյն զընթացս իւր և եղերեալ զկենդանակերպսն և վերստին եկեալ ի խոյն, բովանդակէ զտարիս իւր՝ յաւուրս 34Ե. (365): Իսկ Լուսինն սկիզբն արարեալ ի խոյն և ժԲ. (12) անդամ պատեալ զկենդանակերպսն ի ժԲ. (12) Լուսինն և վերստին հասեալ ի խոյն յառաջին սկիզբն իւր և կատարէ զտարիս իւր յաւուրս 3ԾԳ. (354)՝ ժԱ. (11) օր պակաս, քան զԱրեգակն: Եւ աստի գոյանայ ժԱ. (11) թիւ վերագրացն, որ յամենայն ամի ժԱ. (11) թիւ ի վերայ պակասութեան Լուսնին ածեմք և հաւասարեմք Արեգականն: Երկ-

որորդ՝ զի շափ տարւոյն 34. (360) օր է, և Արեգական ընթանայ զշափ տարւոյն ի լման, վասն զի Լ. (30), Լ. (30) օր կենայ ի կենդանակերպն և յաւելու ի վերայ ևս Ե. (5) օր ըստ աւելի մասանց ընթացիցն: Իսկ Լուսինն կենայ ի ծննդենէ ի ծնունդ աւուրս ԻԹ. (29) և կէս՝ կէս օր պակաս յամսոյն: Զի ի ծննդենէն ի լրումն կենայ ԺԴ. (14) օր և կէս և Գ. (3) ժամ և նոյնչափ ի լրմանէն ի ծնունդն, և ոչ կարէ հասանել ի շափ տարւոյն, որ է 34. (360) օր: Այլ գտանի պակաս 2. (6) օր և յԱրեգական աւելի ընթացիցն, և ի կէս աւուր կիսակաց պակասութեան Լուսնիցն՝ յառաջ գայ ԺԱ. (11) թիւ վերադրացն: 10 Երրորդ զի ըստ ԻԴ. (24) ժամուցն, որ շափ է աւուրն, Արեգական ընթանայ Ժ. (10) մասն այլ աւելի: Եւ այս առնէ յամիսն Ժ. (10) ժամ, Լ. (30) մասն ժամ մի, և յԳ. (3) ամիսն՝ Լ. (30) ժամ: 2 ԻԴ. (24) ժամն առնեմք օր մի, և յաւելու այլ ևս 2. (6) ժամ: Եւ այսպէս յաւելու ի Դ. (4) եղանակս Դ. (4) օր և ԻԴ. (24) ժամ, որ է և այս օր մի: 15 Եւ լինենայ ընդ ամենն Ե. (5) օր աւելի, քան զշափ տարւոյն: Իսկ Լուսինն ընթանայ յաւուրն ԻԳ. (23) ժամ և Գ. (3) մասն, Բ. (2) մաս պակաս, քան զԻԴ. (24) ժամ աւուրն, և առնէ յԼ. (30) օրն Կ. (60) մասն: Ե. (5), Ե. (5) թիւս ժամս առնեմք, լինի ԺԲ. (12) ժամ, որ է կէս օր, և ի ԺԲ. (12) ամիսն առնէ 2. (6) օր: Եւ այսպէս յԱրեգական աւելի մասանցն և ի Լուսնի պակաս մասանցս յառաջ գայ ԺԱ. (11) թիւս, որ պակասեցաւ ի տարւոյ Լուսնին և եղև պատճառ վերադրին ԺԱ. (11) թուին, զոր յաւելումք ի վերայ Լուսնին: Զորորդ՝ և ըստ ԺԲ. (12) ժամուցն այսպէս է ընթացք Արեգականն, զի ընթանայ յօրն ԺԲ. (12) ժամ և Ե. (5) մասն աւելի: Եւ ի 2. (6) օրն առնէ Լ. (30) մասն, որ է ժամ մի, և ի ամիսն՝ Ե. (5) ժամ, և յԳ. (3) ամիսն, որ է եղանակ մի, առնէ ԺԵ. (15) ժամ: 2 անեմք զԺԲ. (12)՝ օր մի, և մնայ Գ. (3) ժամ աւելի, տամք զմէկ օրն ի գարնան եղանակն և առնեմք ՂԱ. (91) օր, և մնայ Գ. (3) ժամն ի տեղն: Եւ այսպէս ի Դ. (4) եղանակն յաւելու Դ. (4) օր և ԺԲ. (12) ժամ, որ լինի և սա՝ օր մի: Եւ առնէ զձմեռնային եղանակն ՂԲ. (92) օր: Եւ ըստ ԺԲ. (12) ժամուցն այսպէս աւելի ընթանայ Արեգական, քան զշափ տարւոյն Ե. (5) օր աւելի: Իսկ Լուսինն ընթանայ ըստ ԺԲ. (12) ժամու աւուրցն ի օրն ԺԱ. (11) ժամ և ԻԴ. (24) մասն՝ 2. (6) մասն պակաս, քան զԺԲ. (12) ժամն, որ լինի ի Ե. (5) օրն ժամ մի և ի ամիսն՝ 2. (6) ժամ, որ է կէս օր ըստ ԺԲ. (12) ժամու աւուրցն և ի տարին 2. (6) օր: Եւ այսպէս Արեգական վասն Ե. (5) մասն աւելի

ընթանալոյն, քան զԺԲ. (12) ժամ աւուրն, յաւելու ի տարին Ե. (5) օր: Եւ Լուսինն վասն 2. (6) մասն պակաս զնալոյն պակասեցուցանէ 2. (6) օր, զոր լինի ԺԱ. (11) օր: Եւ յայսպիսի ընթացից երկուց լուսաւորացս պատճառի ԺԱ. (11) թիւ վերադրացն: 2 Ինչորորդ՝ դարսաւորացս պատճառի ԺԱ. (11) թիւ և ԺԹ. (19) մասն, ԺԱ. 5 ձեալ, ընթանայ Լուսինն ի օրն ԺԱ. (11) ժամ և ԺԹ. (19) մասն, ԺԱ. (11) մասն պակաս, քան զԱրեգական: Եւ զայս ԺԱ. (11) մասն ժողովեմք ի ամիսն, առնէ 3Լ. (330) մասն, առնեմք զԼ. (30) ժամ մի, և լինի ԺԱ. (11) ժամ: Եւ զԺԱ. (11) ժամն ժողովեմք ի ԺԲ. (12) ամիսն, առնէ ձԼԲ. (132) ժամ, առնեմք զԺԲ. (12)՝ օր մի, լինի ԺԱ. 10 (11) օր, որ պակաս զնաց Լուսինն, քան զԱրեգական: Եւ ըստ այսքան յեղանակիս ցուցաւ պատճառ վերադրացն բաղկանալոյ, զոր առեալ յառաջիկայ Լուսնէն ԺԱ. (11) թիւ և յաւելումք ի վերայ պակասութեան վերջին Լուսնին և հավասարեմք զսա Արեգականն, զի երկուցուց լուսաւորացս մի տարի արասցուք և մի 2 ատիկ: 15 — «Վերադիր այսպէս արա...»: Զինչ՝ է բազմապատկելն³): — Մետասան թիւ աւուրցն է, որ այսքան ժամանակս առեալ եմք յաւուրց Արեգականն և տուեալ եմք ի պակասութիւն Լուսնին, ժողովել պարտիւք և ըստ կարգի յաւելցուք, և զնոր թիւս՝ նոր վերադիրս: 20 — Զինչ՝ է «ըստ նահանջիցն պակասեցոյ»: — Զի յամն, որ նահանջի լինենայ, թիւ մի պակաս ածեմք ի վերայ հին վերադրին, զԺԱ. (11)-ն Ժ. (10) վերայ բերեմք: Եւ զբազմապատիկս հասարակաբար ԺԱ. (11), ԺԱ. (11) բազմապատկեցար, նա Ա. (1), Ա. (1) թիւ աւելի տուաւ յամսն, որ էր նահանջ, այժմ 25 պակասեցուցանելով զնահանջսն, զաւելի թիւն ի բաց բառնամք, զի մնացեալն անաւելորդ մնասցէ: — Վասն էր՝, որ ի ամն նահանջի մի թիւ պակաս ածեմք ի վերայ: — Վասն տէրունեան լրմանն, զի նահանջն զհասարակածն յառաջ փոխէ, և եթէ վերադիրն մեր ոչ պակասէ մի թուով յամս, որ 30 է նահանջ, լրումն ոչ զուգի ըստ այլոց լրմանցն, այլ միով աւուրթ թուով յառաջ հանդիպի և գործէ մեծ վնաս, զի զպահճն ուտել տայ և զուտիքն պահել, զ2 ատիկն ի տեղաց հանել և զամենայն տօնս թիւրել և ապականել: — Զինչ՝ է «ըստ տասնիններեկացն յաւել»: 35 — Զի ի տասնիններեկի ամին թիւ մի յաւելի ածեմք ի վերայ հին վերադրին վասն ԺԹ. (19) մասանցն, որ ժողովեալ պակասե-

ցուցին ի ժԹ. (19) ամն օր մի ևս ի տարւոյ Լուսնոյն: Եւ յայն ամին զԺԱ. (11) թիւն ժԹ. (12) բերեմք ի վերայ: Եւ յորժամ հասարակաբար բազմապատկեցաք զմինն ժԱ. (11), նա Ա. (1), Ա. (1) թիւ պակասեցոյց ի տասնիններեկի ամացն: Վասն այն զթիւ տասնիններեկացն ի վերայ բերեմք և զպակասն զայն լմնեմք, զի որպէս զնահանջն պակասեցուցաք և զաւելի թիւն հանաք, այսպէս և զտասնիններեակսն յաւելաք և զպակասութիւն թուոցն լցուցաք, և հավասարեցաք զպակասումն նահանջիցն:

— Զինչ՞ է ճԼ. (8) հանապաղ երթ»: 10 — Ծանիր, որդի, զի ի մեկնչերդ գրեալ է, թէ յառաջին ամին ոչ նահանջ կայր և ոչ տասնիններեակ. զմինն ժԱ. (11) բազմապատկել և Լ. (8) երթալ, մնայ Գ. (3), և ասեն Գ. (3) է եղեալ վերադիր առաջին ամին ի զնել թուականիս: Իսկ կէսք՝ յՄն. (240) ամին ընդ Բ. (2) ամիս անցանելով հասարակածն Ա. (1), Ա. (1) 15 պակասեցուցանեն զդա, և է այսպէս. նաւասարդի և հոռի՝ Լ. (8), սահմի և տրէ՝ է. (7), քաղոց և արաց՝ Զ. (6), մեհեկի և արեգի՝ է. (7), ահկի և մարերի՝ Լ. (8), մարգաց և հրոտից՝ Թ. (9), նոյնպէս և աւելեացն, և ոչ զիտէ, թէ զինչ ասէ: Բայց այս է ճշմարիտն, զի ի զնել թուականիս վերադիրն Դ. (4) է եղեալ և յերկրորդ ամին՝ 20 ժԵ. (15) և յերրորդ՝ ԻԶ. (26) և չորրորդն, որ նահանջ է՝ ժ. (10) ի վերայ ԻԶ. (26) ին բեր, լինի ԼԶ. (36), երթ Լ. (30), մնայ վերադիրն՝ Զ. (6) չորրորդ ամին: Կալ զԴ. (4) թիւն, բազմապատկէ, առնէ ԽԴ. (44), երթ զհանապաղորդն Լ. (8), մնայ ԼԶ. (36), զնայ զԼ. (30) ն, մնայ Զ. (6)՝ չորրորդ ամին վերադիր: Եւ այս մինչև 25 ցայժմ և մինչև ի կատարած աշխարհի անսխալ բերէ:

Եւ թէ որ տարակուսի, թէ վերադիր առաջին ամին Դ. (4) եղեալ է, ապա զիարդ՞ է, որ ասէ, թէ հանապաղ Լ. (8) թիւ ի բաց երթ: Ուսիր և զայս, զի Դ. (4) թիւն ի ներքոյ Լ. (30)-ին էր և ի Դ. (4) տարին, ապա զԼ. (30) անցաւ, որ ի վերոյց ցուցաք, և եղև վերադիրն Զ. (6): Եւ յորժամ զԴ. (4) ն բազմապատկեցաք, արար ԽԴ. (44) և այս Դ. (4)-ս, որ ի Խ. (40)-էն յաւելաւ, անկաւ ի վերայ առաջին վերադիրն և արար զԴ. (4) ն՝ Լ. (8): Եւ այս է պատճառն, զի ի ներքոյ առաջին Լ. (30)-ին էր վերադիրն Դ. (4), իսկ յետ այնմ առաջին Լ. (30)-ին այլ ոչ կարաց յաւելուլ և ոչ այլ կարող է:

Ծանիր և զայլ զժուարութիւն իրիս, զի թէ դու ոչ իմանաս, սակայն ես ծանուցից: Զի թէ ասես, ընդ էր՞ է, զի զնահանջին Ա. (1) թիւն ոչ պակասեցուցեր:

Գիտեա, զի առաջին նահանջս առանց պակասեցուցանելոյ 5 բերէ ուղիղ, որպէս և տեսար: Բայց յորժամ երկրորդ նահանջ լինի, զառաջինս պակասեցուցանեմք և թէ երրորդ՝ զերկրորդն և յորժամ յառաջին տասնիններեակն մտանէ, յայնժամ և զնոր նահանջն այլ պակասեցուցանեմք, որպէս այժմ: Զի նոր նահանջն թէ կուպակասեցնէ թիւ մի, նաև տասնիններեակն կուտէ և յաւելու թիւ մի 10 և հավասարէ զպակասութիւն նահանջին:

— Զինչ՞ է, որ ասէ՝ «երթ Լ. (30), Լ. (30)»: — Զի թիւ լուսնային աւուրցն քան զԼ. (30) այլ ոչ յաւելէ, վասն այն յորժամ վերադիրն զԼ. (30) անցանէ, զԼ. (30) ն զնալ պարտ է: Ե և այս, զի ամիսք ժողովեալք ժԱ. (11) իցն ըստ քա- 15 նակի այսր թուոց՝ զսոսա ի բաց տրոհելով, մնացեալքն լինին ամիսք Լուսնի ներկայի:

ԱՄՍԱՄՈՒՏ ԱՅՍՊԷՍ ԱՐՈՎ

— Զինչ՞ է «Կալ թիւ մի...»: — Առաջին օր ամսոյն է, յոր մտանելոց է ամիսն, պարտ է 20 կալնուլ, զի յայտնի լիցի պատկեր աւուրն: Իսկ զեօթնեբեակն, որ կալնումք, անցեալ տարւոյն վերջին օրն է և զնոր տարւոյն զառաջին օրն անխախտ պահէ, զինչ և իցէ. թէ կիրակի, թէ երկուշաբթի և այլն, և նոր տարւոյն ամենայն աւուրց կարգն զայ անսխալ: Եւ զկրկնակն վասն այն կալնումք, որ միջոց երկու ամսոցն թերատ 25 լմնայ, զի կրկնակն երբ երկու լինի, որպէս հոռու և եօթնեբեակն՝ մէկ, նա՞ հոռի, որ ի շրեքշաբթի պիտի մտանէ, նա ի երկուշաբթի պիտի գայ: Զի երբ կալնուս թիւ մի զհոռու առաջին օրն և բերես զեօթնեբեակն մէկ՝ ի վերայ առանց կրկնակի, նա առնէ երկու, որ է երկուշաբթի, որ է երկու օրով յառաջ, և թէ զկրկնակն երկու այլ 30 ի վերայ բերես, նա առնէ չորս, որ է շրեքշաբթի, և այս ուղիղ է: Եւ թէ կրկնակն չորս լինի, և չկալնուս, նա չորս օրով յառաջ բերէ զամիսն: Եւ թէ Զ. (6)՝, նա Զ. (6), նոյնպէս և այլն: Իսկ յօրագիրտն զաւուրս ամսոյն կալնումք, զի ըստ կարգի անսխալ ցուցանիցէ զօրագիրտ պատկեր աւուր ամսոյն:

— Զինչ՞ է, որ ասէ «Կալ հանապազ Լ. (30)»:

— Զաւորք միոյ Լուսնի ասէ, որ ի պակասեցուցանելոյ զվերադիրն և զկիսական, զծնունդ Լուսնին յայտ ածէ:

5 — Զինչ՞ է, որ ԽԵ. (45) հանապազ ասէ կալ^Է:

— Լ. (30) աւորք Լուսնին է և ՓԵ. (15) ի վերայ: որ զլրումն ցուցանէ:

ԲՈՊԷ ԱՅՍՊԷՍ ԱՐԱՅ՝

— Զինչ՞ է ըոպէն:

10 — Ըոպէն մասն ասէ և վասն այն կրկնեմք, զի Լուսինն յաւուրն երկու մասն պակաս գնայ, քան զաւոր շափն: Եւ ժողովեալ զմասունս զայս ըստ քանիօնութեան աւորցն Ե. (5), Ե. (5) թիւ ժամս առնեմք և տամք զիշերոյն և տուրնջեանն, որպէս Պատճէնն հրամայէ: Եւ գտանեմք զծնունդն և զլրումն Լուսնի, թէ որքան ժամու և կամ ի քանիբորոգ մասին լեալ է: Բայց երբ զըոպէն առնես, զգոյշ 15 լեր, տես, թէ ծնունդն ի վաղուց հետէ լեալ է, և աւորք անցեալ է ի վերայ որքան և իցէ: Մի՞ զաւոր ըոպէն կալնուլ, յորում իցես, այլ երթ դեպ յետ և զծննդեանն ըոպէն կալ, յորում աւոր Լուսինն ծնեալ իցէ: Նոյնպէս և զլրմանն արասցես, որ թէ դեռես զէպ յառաջ լինելու է լրումն Լուսնին, զլրման աւորն կալ զըոպէն: Ապա 20 եթէ յօրն, յորում Լուսինն ծնանիցի՝ իցես և կամ զլրումն առցէ, զնոյն աւորն կալ: Իսկ յորժամ զաւորք Լուսնին կամիցիս դիտել, յորում աւոր և իցես, զնոյն աւորն կալցես և գտանես զերկոսինն անսխալ:

ԱՌԱՋԱՒՈՐ ԱՅՍՊԷՍ ԱՐԱՅ՝

25

«Պահք» անունս անուամբ և ներգործութեամբ մի է առհասարակ, զի միապէս պահելի է ամենայն: Այլ ըստ զանազան ժամանակաց և տեղաց զանազան անուանս ընկալան, որպէս աղուհացիցն՝ քառասներորդ կոչեցաւ, Վարդավառին և Մննդեանն՝ «յիսներորդ», ըստ որում և յոմանց «յեղիական» և «յիսնակամուտ»: Եւ

այլ շարաթապահք ըստ տեղուցն դիպման անուանակոչեցան «Աստուածածնի», «Խաչի» և կամ յայլ սրբոց անուն, որ և «Ութօրեք»:

Իսկ պահքս այս «Առաջաւորաց» պահք կոչեցաւ: Եւ թէ վասն էր՞ զանազան անունք, զի «պահք» անունս հոմանուն ձայն է և 5 հասարակաբար ի վերայ բազմաց բերի:

Եւ վասն այն յատկական անուանքս ի վերայ եղան, զի տարրորոշեցին ի միմեանց և ճանաչիցին: Եւ պահքս այս ըստ հասարակ անուանն ընկալաւ և զյատկական անունս՝ «Առաջաւոր»: Եւ «Առաջաւոր» անունս այս ըստ երից դիմաց կոչեցան. ի վարդապետաց 10 կրկին կերպիւ՝ առաջին, ըստ բնականին և երկրորդ, ըստ դրականին, իսկ երրորդն՝ ըստ տումարական արհեստին:

Եւ ըստ բնականին այսպէս. նախ արարչութեան պահքն բնական եղև ամենայն կենդանեաց մինչ զի յետ Զ. (6) աւոր ստեղծաւ մարդն և ապա լուծաւ պահքն կենդանեաց: Զի կենդանիքն, որ 15 յառաջագոյն ստեղծան, քան զմարդն, անսուաղ կեցան մինչ ի լինելութիւն մարդոյն: Եւ յորժամ հրամայեաց Աստուած Ադամայ՝ թէ «ամենայն պտուղք և սերմանիք ձեզ լիցի ի կերակուր և ամենայն զազանաց և ամենայն սողնոց»¹, և ապա սկսան կերակրիլ կենդանիք:

20 Երկրորդ՝ զի յորժամ ել Ադամ ի դրախտէն, Ե. (5) օր սուգ պահեաց անսուաղ՝ մնալով մահու, մինչ յետոյ զթացաւ Տէրն և հրամայեաց հրեշտակի միոյ մխիթարել զնա և խոստացաւ զառքումն Միածնին ի փրկութիւն նորա և հրամայեաց ուտել ի պտղոյ վայրեացն: Եւ զայսպիսի խոստմանէս լիշեցուցանելը Դաւիթ, ասելով՝ «լիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցէր զիս»²:

Երրորդ՝ ուսեալ ի հօրէն Աբել, պահէր և նա զԵ. (5) օրեայ պահքս և ապա մատուցանէր զհաճոյական պատարագն Աստուծոյ: Զորրորդ՝ պահեաց և Սէթ, յորժամ մեռաւ Ադամ, սուգ պահելով ըստ որդիական սիրոյն:

30 Հինգերորդ՝ պահէր և Ենովք ի մուտս ամսոյն աւորս Ե. (5) վասն դառնալոյն ի դրախտն, ուստի անկաւ Ադամ վասն ոչ պահելոյն:

1 Մենդ. Ա29:

2 Սաղմ. ՃԺԸ49:

Վեցերորդ՝ պահեաց նոյ յառաջ, քան զմտանելն ի տապանն, զի ապրեցցի նովաւ ի ջրահեղձոց կորստենէն և յետ յելանելոյն, զի ապրեցաւ նովաւ ի հասարակաց նախախնամողէն:

5 Եօթներորդ՝ պահէին և ամենայն անդրանիկքն, յորժամ մեռանէին հարքն իրեանց զԵ. (5) օր հայր որդոյ աւանդելով, որպէս ասէ սուրբն Բարսեղ:

Ութներորդ՝ պահեաց և Աբրահամ, յորժամ ապրեցաւ ի Սահակի զենմանէն, զի զոհանալով զոհանայր զՏեառնէ շորիւք եղանակօքնախ զի խնայեաց ի միամօր զաւակս նորա և կրկնակի պարգևեաց նմա: Երկրորդ՝ զի ետ զխոյն կախեալ զեղջերացն Սաբեկայ, փոխանակ ի Սահակայ՝ որդոյ նորա: Երրորդ՝ զի հաճեցաւ ի պատարագս նորա ըստ յօժարութեան կամաց սրտի նորա, զի թէպէտ ոչ զենաւ ի Սահակ, այլ ոչ էր ի կամացն Աբրահամու: Եւ յայտ անտի է, որ ձգեաց զձեռն ի սուրն առ ի զենուլ զորդի իւր, այլ ապրեցաւ ի Սահակ ի գթութեանցն Աստուծոյ, որ հաճեցաւ Աստուած ի պատարագն Աբրահամու ոչ որպէս ի խոյսն Աբելի, այլ որպէս ի Սահակն որդի, զի ըստ յօժարութեան կամացն Աբրահամու ի Սահակէ զենեցաւ և ըստ գթութեանց Աստուծոյ խոյն փոխեցաւ: Զորրորդ՝ զի օրհնեցաւ յամէն օրհնեալ բերանէն Աստուծոյ «յանձն իմ երգուայ,— 20 ասէ Տէր,— փոխանակ զի արարէր զու զբանդ զայդ և ոչ խնայեցէր յորդից քո սիրելի վասն իմ այդ օրհնելով օրհնեցից զքեզ և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո, որպէս զաստեղս երկնից, և օրհնեցից ի զաւակէ բումէ ամենայն ազգ երկրի փոխանակ զի լուար ձայնի իմում»¹:

25 Իններորդ՝ պահեաց և Յակոբ Ե. (5) օր, յորժամ ետես զսանդուխքն, որ նշանակէր սանդուխքն՝ զխաչն, և զՏէրն ի զլուխ խաչին՝ միացեալ ի նմա: Եւ հրեշտակք, որ մարդեղութեամբ բանին յերկիր իջին, և խաչելութեամբն մարդիկ յերկինս ելին:

Տասներորդ՝ պահեաց և Յովսէփ, յորժամ եմուտ անպարտ և 30 անմեղ ի բանտն փարաւոնի: Եւ այսու պահօքս կարդաց առ Տէր, զի ազատեցի ի կրկին նեղութեանցն՝ ի ծառայութեանէն և ի բանտէն, յորս կատարեաց Տէր ըստ կամաց նորա, զի զկամս երկիւղածաց առ Տէր՝ աղօթ: Զի հանեալ ի բանտէն, յարբունիսն բնակեցոյց և ազատեալ ի ծառայութեանէն, տէր և թագաւոր աշխարհին կացոյց:

Եւ զի պահօքս այս այն է, զոր նախնի և առաջին նահապետքն պահեցին յառաջնումն ժամանակին: Եւ ըստ ժամանակին և ըստ անուան նոցա ընկալաւ զանունն «Առաջաւորաց» պահօք, այսինքն՝ առաջին հարցն:

5 Երկրորդ՝ «Առաջաւոր» կոչի ըստ դրութեան, զի սա է առաջին շարաթ մեծի պահօց աղուհացիցն: Վասն զի ասեն, թէ առաքեալքն կամեցան Շ. (70) օր զնել զպահօքն մեծ, ըստ թուոյ նախահարցն՝ ըստ պատմութեան Ղուկասու: Այլ յորժամ զտրտունջ և զաղաղակ բարձին նոր եկեալքն ի հաւատս վասն երկարութեան պահօցն, 10 առաքեալքն երկեսն վասն խակութեան նոցին՝ մի գուցէ զարձեալ յառաջին անհաւատութիւն դարձցին, զի անկիրթք էին ծանրութեան կրօնիցն: Եւ զԲ. (2) շարաթն ի միջին բարեկենդանացուցին և զայս յամենայն ամի պահել հրամայեցին «Առաջաւոր» անուանելով: Եւ 15 այլք՝ թէ Մ. (50) օր կարգեցին պահօք առաքեալքն, երբ մի շարաթ պահեցին, տեսին, որ Բ. (2) վնաս կայր ի նմա. մինն, որ լրումն Զատիկին հեռ հրէից լրմանն չմիաբանէր և մինն, զի ի ներքոյ հասարակածին գայր շարչարանքն և Զատիկին: Ապա, վասն այն զԲ. (2) շարաթն բարեկենդանացուցին, զի պահօք Զատիկին այլ ի դուրս 20 խաղացէ, և զլրումն Զատիկին արտաքոյ հասարակածին հանցէ, զի մի տէրունական շարչարանքն ի ներքոյ հասարակածին եկեցէ: Եւ այսու պատճառաւ զԲ. (2) շարաթն բարեկենդանացուցին և զայս շարաթս «Առաջաւոր» անուանեցին: Գարձեալ, յորժամ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր ել ի Վիրապէն, Կ. (60) օր վարդապետեաց 30 ժողովրդեանն և թագաւորին: Եւ ապա Ե. (5) օր պահել ի սրբութիւն Ե. (2) զգայութեանցս հրամայեաց: Եւ էր ժամանակն այն ամառնային: Եւ սուրբն Սեղբեստրոս, որ զԿոստանդիանոս մկրտեաց, Ե. (5) օր պահել հրամայեաց նմա և ժողովրդեանն: Եւ վասն առ միմեանս միարանութեան աստ և զին զերկոսինն: Այլ նորա զիրեանցն կորուսին, և մեք զմերն հաստատուն պահեցաք շնորհին Աստուծոյ: Եւ մնաց առ նոսա անիծից պանրուտէքն: Եւ վասն այսորիկ «Առաջաւոր» կոչի՝ իրր առաջին պահօք ի Լուսաւորչէն մեր կարգեալ:

Իսկ ըստ տումարական արհեստիս կոչի Առաջաւոր, զի պահօք և տօնք ըստ երկից եղանակաց բացակատարին. զի է, որ անշարժք 35 են և է, որ շարժականք: Անշարժք, որպէս տօն Աւետեացն և Մնընդեանն և Տեառն ընդ առաջին, զի յապրիլի է. (7) տօնեմք Աւետեաց

¹ Ծննդ. ԻԲ16—17:

միշտ և յունուարի 2. (6) Մննդեանն և Յայտնութեան: Տեառն և փետրուարի ԺԳ. (14)՝ Տեառն ընդ առաջի, յորում աուր և դիպեցի: 2ի ոչ խտրութիւն առնեմք աուրցն՝ թէ կիրակի հանդիպի և թէ երկուշաբթի և այլն, որ ի կարգին: Եւ թէ ոք ասիցէ՝ էր՝ վասն, 5 ասեմք, թէ աստ ոչ պատիւ աուրն խնդրեմք, թէպէտ և զպատկերսն, զի խնդրելի է մեզ, թէ յաուր շորեքշաբթի տուաւ Աւետիք Կուսին և ի հինգշաբթօջ եղև ծնունդ Կուսին և ի կիրակի՝ Յայտնութիւն Քրիստոսի ի Մկրտութիւն և յերկուշաբթի գալուստ Տեառն ընդ առաջին: Եւ զբանիքս զայս վասն այն խնդրեմք և ոչ զպատիւ 10 աուրցն, զի զբանիօնութիւն ամսոցն, յորս եղեն սորա, անսխալ բերիցեմք ըստ պատմութեան Աւետարանին, որ ասէ, թէ «յամսեանն վեցերորդի առաքեցաւ հրեշտակն՝ տալ զԱւետիս Կուսին»¹, որ էր ապրիլ ամսոյ, ըստ աուրցն թուոյ՝ ապրիլ է. (7): Եւ յղացմանն Յովհաննու՝ ամսոյն վեցերորդ, ըստ որում ասաց հրեշտակն՝ 15 և այս վեցերորդ ամիս է, որ ամուսն կոչեցեալ է, զոր ի տօնացուցերդ վասն ոչ հասկանալոյ զբանն հրեշտակին, ուղղութեամբ ի գրչաց սխալեալ գրեցաւ: 2ի զվեց թիւ ամսեացն յղացմանն Յովհաննու ըստ ասից հրեշտակին իմացան զայս ի վերայ թուոյ աուրց ամսոյն: Եւ զէ. (7) երորդ օրն ապրիլի ամսոյն գրեցին 2. (6): Եւ 20 որ ախմարքն են, ոչ իմանան զվնաս դորա. նախ, զի զօրն աւելի բերէ և երկրորդ, զի զպատկեր աուրն քակէ և ի տեղացն հանէ: 2ի այս այլ ազգ քրիստոնէից է, որ ոչ կարեն զԱւետիք Կուսին ի շորեքշաբթի բերել և զՄնունդն ի հինգշաբթի, և մեք այսու յամօթ առնեմք զնոսա: Եթ յորժամ զԱւետիք Կուսին յապրիլի 2. (6) առնես, յայնժամ և մերս սխալի, զի և ոչ մեք կարեմք բերել ուղղակի 25 զաուրցն պատկեր: Եւ մեք վասն այսմ անշարժ պահեմք զտօնքս զայս, զի ըստ աւետարանչին Ղուկասայ՝ 1. (30) ամեայ գալ թ Մկրտութիւն Քրիստոսի, զաուրցն պատկեր ըստ կարգի անսխալ բերիցեմք և զճշտութիւն պատկեր աուրցն յայտնի կացուցանիցեմք: 30 Իսկ որ շարժունք են, է որ միշտ յառաջ շարժի և շարժէ, և են, որ յետ և յառաջ շարժին: Յետ և յառաջ շարժին, որպէս Աստուածածնին, Յիսնակամտին և սուրբ Յակոբին: Աստուածածնին վասն փոխմանն այլայլի, զի դասք այլ ազգ քրիստոնէիցդ զննջման օրն տօնախմբեն, և մեք զվերափոխմանն, որ ի կիրակի օր դիպեցաւ

Եւ զ2. (6) օրն շաբաթուն բաժանեալ են Բ. (2) կիրակէիցն. թէ ի Դ. (4) շաբթի օր հանապազորդն դիպի, տամք ի յառաջիկայ կիրակին և ի Ե. (5) շաբթի՝ ի երկրորդ կիրակին: Իսկ զխաչին՝ վասն Յայտնութեան, թէպէտ յաուր ուրբաթուն խաչն ներկեցաւ աստուածային արեամբն, բայց փառք խաչին յաուր կիրակէի Յարութեամբն Քրիստոսի յայտնի եղև, զի մինչ ի կիրակի իբր ի գործի մահու հայէին, իսկ ի կիրակէին, որպէս կենաց փայտն երկրպագէին: Իսկ զՅիսնակամտին, զի և նա յիսներորդ է Մննդեանն Քրիստոսի, որպէս աղուհացքն Յարութեան և Վարդավառին, Պայծառակերպութեան, և որպէս նոցա սկիզբն պահոցն երկուշաբթի սկսանի, և զսորայս՝ կիրակէ բարեկենդան առնեմք, զի և սկիզբն պահոցն յերկուշաբթի լիցի, և սուրբ Յակոբին՝ անփոխաբար գայ հետ սմա ի կիրակի:

Եւ որ միշտ յառաջ շարժի՝ պահք Առաջաւորացս է: Եւ այս՝ 15 վասն տէրունեան լրմանցն, զի զլրումն Զատիկին յառաջ խաղացուցէ և արտաքոյ հասարակածին հանցէ զԶատիկին: Եւ վասն յառաջ մշտաշարժութեանս՝ «Առաջաւոր» անուանեցաւ ըստ տումարական արհեստին: Եւ տումարագիտին աստ պարտ է մեծաւ փութաւ զգուշանալ, զի հիմն և սկիզբն ամենայն պահոց տօնից և Զատկաց սա է, և եթէ աստ սխալեցցի, զբովանդակն թիրէ և եթէ ճշգրտեցցէ՝ զբոլորն ուղղէ:

ԱՆԱԳ ԼՐՈՒՄՆ ԱՅՍՊԷՍ ԱՐԱ

Երիս իրս խնդրելի է մեզ աստ. նախ, թէ վասն էր՝ ասի «Աւագ լրումն», երկրորդ՝ թէ վասն էր՝ զհանապազորդն Խ2. (46) կայնումք, երրորդ՝ թէ վասն էր՝ յորժամ ի կիրակի հանդիպի, ի միւս կիրակին անցուցանեմք:

Վասն առաջնոյն գիտելի է, նախ ասի «Աւագ լրումն» վասն արարչութեան Զատիկին, զի այս այն լրումն է, որ ամենայն լրումանց անգրանիկն նա է, երկրորդ՝ վասն օրինադրութեան Զատիկին, զի սա և զնորայն բերէ զնմանութիւն, զի նա օրինակ էր սմա, երրորդ՝ վասն նորոգման Զատիկին, զի սա օրինակ էր նմա և սովա զփտասցուք զներգործութեամբ լրումն նորա, չորրորդ՝ վասն փրկական Զատիկին, զի սա ինքն է նա, զոր առնեմք՝ վասն յիշատակու-

¹ Ղուկ. Ա26:

թեան նորա, հինգերորդ՝ «Աւագ լրումն» ասի, զի զհանապազորդ սորա թիւ մի աւելի կալնումք, քան զհասարակաց լրմանցդ:

Վասն երկրորդին ասելի է՝ ոչ եթէ վասն այն ԽԶ. (46) կալնումք զհանապազորդն, որպէս թէ «Աւագ լրումն» Զատիկս զԺԶ. (16) օրն ներգործութեամբ առնու արտաքոյ, այլ հասարակ լրմանց, որ ի ԺԵ. (15) աւուր վրա առնուն զլրումն, ըստ բնութեան կարգի Ո՛չ այսպէս, զի այն արարչութեան Զատիկն միայն պատահեցաւ վասն վերոյ ասացեալ պատճառացն, որ Լուսին ներգործութեամբ էաք զԺԲ. (12) օրն յառաջին օրն: Բայց աստ սոսկ թուելութեամբ առնու, զի Լուսինն ըստ հասարակ լրմանցն զլրումն Զատիկն ի վերայ ԺԵ. (15) աւուր առեալ է, բայց մեք թուով ԺԶ. (16)-երորդ համարեմք:

Եւ թէ որ ասիցէ,—եթէ ներգործութեամբ զԺԶ. (16)-երորդ օրն Լուսինն ոչ ումի, ապա ընդ էր՝ ԽԶ. (46) կալնումք զհանապազորդն, ասեմք, թէ՛ վասն զի գրեալ է, թէ անիծեալ է, որ առնէ զլրումն Զատիկն յառաջ, քան զհասարակածն և կամ ի հասարակածին: Արդ՝ ըստ հոռոմոց՝ մարտի ի Բ. (20) հասարակած է և ըստ եբրայեցոց՝ յաւելեաց ի Գ. (4): Ես ըստ բնութեան կարգի պատահի երբեմն՝ լրումն Զատիկն, որ ի հասարակածն դիպի, այսինքն մարտի ի Բ. (20) և յաւելեաց ի Գ. (4), եթէ զհանապազորդն ԽԶ. (46) ոչ կալնումք, ոչ կարեմք զլրումն արտաքոյ հասարակածին ձգել և հանել, որ է մարտի ԻԱ. (21) և յաւելեաց ի Ե. (5): Եւ այս է պատճառն ԽԶ. (46) կալնուլն, զի մի ի ներքոյ անիծից անկցուք, և զտէրունական շարչարանքն ի ներքոյ հասարակածին բերցուք, որ արտաքոյ հասարակածին եղև:

Եւ թէ որ ասիցէ, եթէ ընդ անիծիք է այն, որ ի ներքոյ հասարակածին բերցէ զլրումն, իսկ ի հասարակածին զինչ՝ է վնասն:

Այս է վնասն, զի թէ օրն շաբաթ պատահի, Զատիկն ի տարւոյն ի վերջի օրն լինի՝ ի աւելեացի Ե. (5): Յայնժամ շարչարանքն գայ ի ներքոյ հասարակածին, զի ի շարչարանքն Փրկչին վաղ ուրեմն Լուսինն զլրումն առեալ էր: Ապա և յայտնի եղև, եթէ ոչ վասն ներգործութեամբ ունելոյ Լուսինն աւուրս ԺԶ. (16) կալնումք ԽԶ. (46), այլ վասն զլրումն արտաքոյ հասարակածին հանելոյ սպար:

Վասն երրորդին, որ ի կիրակի հանդիպի, յայլ կիրակի տամք, այս է պատճառն, զի թէպէտ Լուսին լրումն յորժամ զհանապազորդն ԽԶ. (46) կալնումք և արտաքոյ հասարակածին հանեմք զլրումն

Զատիկն, սակայն դեռևս այլ երկիւղ կայ, զի թէ պատահիցի օրն կիրակի և առնիցեմք զԶատիկն, յայնժամ ի մէկ տարին երկու Զատիկ առնեմք: Զի զմէկ Զատիկն արարեալ եմք ի նիսան ամիսն, որ սկիզբն և առաջին ամիս է յամիսս տարւոյն, իսկ զմիւսն առնեմք յաւելեաց ի Ե. (5) ն, որ յետին և վերջին օր է տարւոյն: Եւ այսպէս ի մէկ տարին երկու Զատիկ լինի, և երկրորդ տարւոյն Զատիկն խափանի: Եւ այս մեծ հիմարութիւն լինէր վարդապետաց տումարական մակացութեան՝ զէ՛՛. (7000) տարու զաւուրսն, զժամսն և զմասունսն քննել և գիտել և զտարւոյն զվերջին օրն ոչ ճանաչել և կրկին Զատիկ առնել: Եւ վասն այս հարկիս ԽԶ. (46) կալնումք, որ զլրումն արտաքոյ հասարակածին հանեմք և ի կիրակի յայլ կիրակի անցուցանեմք, զի զԶատիկն ի տարւոյն վերջին աւուրն հանիցեմք և ի նիսան ամիսն առնիցեմք զԶատիկն ըստ աստուածային հրամանին, որ յամեայն Զատիկսն այսպէս հրամայեաց և արար ըստ այսմ եղանակի: Եւ յայսպէս առնելն բազում շահս օգտութեան լինի մեզ. նախ՝ զի ազատեմք յանիծից, երկրորդ՝ զի զհրամանս Աստուծոյ և սրբոց հարցն կատարեմք, երրորդ՝ զի զԶատիկն յիրում տեղուցն ի նիսան ամիսն առնեմք, որ սկիզբն է տարւոյն ըստ եբրայեցոցն, չորրորդ՝ զի ոչ տգէտ և անմիտ երևեմք և կամ պարսաւիմք, այլ ամենեկին իմաստուն և գիտուն երևեմք և յամենեցունց գովիմք:

Հետ այսմ զանփոխ եղանակքն արա, այսինքն զԸ. (8), Գ. (3)...³):

ՏԱՆՈՒՏԷՐ ՏԱՐԻՈՅ ԱՅՍՊԷՍ ԱՐԱ

Նախ խնդրելի է, թէ ընդ էր՝ ասէ «է. (7) ի վերայ բեր, կամ Ե. (5) ի բաց գնա»: Երկրորդ՝ թէ վասն էր՝ ԺԲ. (12), ԺԲ. (12) գնամք, երրորդ՝ թէ վասն էր՝ այսպիսի անուամբ կոչեցան՝ Խոյ, Յուլ, Եկատր:

Վասն առաջնոյն գիտելի է, զի այս էր ստոյգն՝ Զ. (6) ի վերայ բերել, կամ Գ. (4) ի բաց դնալ, բայց վասն յաւելեալ թուին, որ նահանջն ի ֆարա թիւն անկաւ՝ է. (7) հրամայէ ի վերայ բերել, կամ Ե. (5) ի բաց գնալ, զի ուղիղ գայցէ տանուտէր տարւոյն: Զի յԺԲ. (12) տանուտէրքն Գ. (3) ն նահանջ է, որ է՝ Խեցգետինն,

Կարիճն և Զուկն, իսկ յորժամ Դ. (4) ի բաց գնամբ, սխալէ զկարգ կենդանակերպիցն, և զայ նահանջն յԱռիւծն և յԱղեղնաւորն և ի հոյն: Եւ վասն սխալելոյ զկարգս՝ յաւելեալ թուոյն հարկիմբ Ե. (5) ի բաց գնալ, զի կարգ կենդանակերպիցն ուղիղ եկեցէ:

5 Երկրորդ՝ զի ԺԲ. (12) են կենդանակերպք, և սկիզբն հոյն է, վասն այն ԺԲ. (12), ԺԲ. (12) գնամբ և զսկիզբն ի հոյնն առնեմք, զի նա է առաջին: Զի յառաջին՝ յարարութեան Զատիկն զԱրեգակն ի հոյն եղ Աստուած և ապա ի նմանէ՝ կարգաւ յայլսն փոխեցաւ:

10 Վասն երրորդին գիտելի է, թէ անուանքս այս՝ ինն կենդանեաց է անուն, իսկ Եկաւորն՝ ըստ թուոյ երկուց աստեղաց, և Կշիռն՝ վասն հասարակութեան, և Զրհոսն՝ ըստ ներգործութեան օդոյդ՝ սոքա այսպէս կոչեցան: Իսկ որ ըստ անուան կենդանեաց՝ կրկին կերպիւ կոչեցան. է, որ զմասնաւոր անդամոց զնմանութիւն դիրք աստեղաց կենդանակերպիցն յինքեանս երեւցուցանեն, և է, որ ըստ զանազան ներգործութեան Արեգականն գալով և գնալով ի սոսա ընկալան գանուանքս զայս: Զի Արեգակն զորոց կենդանեաց բերէ յինքն զներգործութիւնս ի կենդանակերպն յայն, զնոյն անունն ընկալաւ կենդանակերպն այն:

15 Վասն առաջնոյն գիտելի է, զի հոյն ունի ի խոյնն զնմանութիւն դմակին, որ է Բազմաստեղն, իսկ Յուսն՝ զեղջերացն, Եկաւորն՝ ի յերկուց աստեղն, Առիւծն՝ զգլխոյն, Խեցդետինն՝ զկրծիցն, Կշիռն՝ զնժարին, որ է թաթն, Կարիճն՝ զանձինն և զտտանն, Վիշապն՝ զգլխոյն և զողինն—սոքա վասն մասնաւոր նմանութեանցն կոչեցան այսպիսի անուամբ:

25 Երկրորդ՝ ըստ ներգործութեան Արեգականն այսպէս կոչեցան: Եւ զի հոյն ծննդական է, և Արեգակն գալով ի սա, զաշխարհս շարժէ ի ծննդականութիւն: Զի երկիր ծնանի զրոյսս, և ծառք և տունկը՝ զտերև և զծաղիկս, և կենդանիք ծնանին զնմանս իւրեանց, որպէս ոշխարն զգառն, կովն՝ զհորթն, ձին՝ զբուռակն և այլն: Եւ վասն այսորիկ կենդանակերպս այս հոյ անուանեցաւ:

30 Եւ զի Յուսն առաւել ծննդական է, քան զխոյն, զի որպէս անձամբն մեծ է և յաղթող, այսպէս և ծննդական զօրութեամբն, նոյնպէս և Արեգակն՝ գալով ի սա, այլևս առաւել ներգործէ, զի բարձրացուցանէ զբոյսս և ծղօտ կապէ և զպտուղս ի ծառոց արձակէ: Եւ զոր ոչ ի հոյն կարաց զարթուցանել, աստ առհասարակ զարթու-

ցանէ և փթթեալ զուարճացուցանէ: Նաև զգառինս և զորթս ի խայտալ և յարօտ հանէ:

5 Իսկ յԵկաւորն բարձրացեալ Արեգականն և զորացեալ ջերմութեամբն՝ բերէ զառաջին եկն: Զի վաղահաս պտուղքն ի ծառոց գան ի յեկ և ի կերակուր՝ որպէս ծիրան և բալ և կեռաս և թուխ և անուշահոտ վարդք: Եւ յարտօրէից, որք ի դաշտս ջերմալինս՝ զարիք, գան ի հունձս, և ի յածուոց՝ բոյսք և բանջարք, վասն որոյ և Եկաւոր անուանեցաւ:

10 Եւ ի Խեցդետինն ժամանեալ Արեգականն, սկսանի զկողմնաւոր ընթացս և յերկուց կողմանց ընթանայ, որպէս զԽեցդետինն: Զի յԵկաւորէն զառիվեր ընթացաւ ի Խեցդետինն և ի Խեցդետնէն դարձաւ զառ ի վայր և գայ յԱռիւծն, վասն որոյ կենդանակերպն այն Խեցդետին անուանեցաւ՝ վասն յետ և յառաջ ընթացից Արեգականն: Դարձեալ՝ զի Խեցդետինն զկտուցն խիստ ունի, որպէս զերկաթ՝ մինչ զի զբար ու կիր զոփս ջրոց ծակել կարէ, այսպէս և Արեգակն ի կենդանակերպս յայս զորանայ ջերմութեամբ՝ մինչ զի զզագաթս կենդանեաց ջանայ ծակել, որպէս զմարդոյ և զոշխարաց և զայլոց:

15 Իսկ յԱռիւծն եկեալ Արեգականն, թագաւորէ ջերմութեամբն և սաստկանայ և զազանանայ որպէս զառիւծ: Զի որպէս զառիւծն ահարկու է ի գազանս վասն սաստիկ արիութեան, զի փիղ և միեղջերու, որ անճոռնի և յաղթանդամ զազանք են, նոքայ երբ խարխափուն ձայնի առնուն՝ կրեն ինչ երկիր: Մինչ զի տեսցեն զկենդանին, թէ զօրաւոր լիցի, քան զինքեանս, փախնուն, և եթէ տկար՝ ապա յառնեն և յարձակին ի վերայ: Իսկ առիւծն վասն սաստիկ

25 արիութեան զիմէ ի ձայնն յայն, զոր լուաւ, առանց երկիրոյ: Եւ ահարկու է ի գազանս և սաստիկ՝ ի պատառել և ի մահացուցանել: Այսպէս և Արեգակն յԱռիւծն գալով, զբազումս մահացուցանէ, զորս գտանէ ի դաշտի, որպէս բազմաց գիտելի է: Դարձեալ ըստ ստուգաբանութեան՝ առիւծն «առ» ասէ. ի ծառոց՝ զանազան պտուղս և ի յորթոց՝ խաղողս և ի յանդստանաց՝ զցորեանս զգարնան և զաշնան և ի պարտիզաց զսեխ և զձմերուկ և յոշխարաց՝ զզառինս ի մատաղ և ի զենումն: Եւ ըստ այսքան ներգործութեան Արեգականն կենդանակերպն այն Առիւծ անուանեցաւ:

35 Իսկ որ Կոյսն անուանեցաւ, զի Արեգակն գալով ի կենդանակերպս յայս, երկիր զկուսի բնութիւն ստանայ, զի այլ ոչ ծնանի, իբրև զկոյս: Զի անհնար է յայսմ ժամանակի իր սերմանել յերկիր

և զայն հնձել, թէպէտ սերմանի և կանաչանայ, բայց ի հունձս ոչ գայ, զի ոչ կարէ երկիր ի կատարելութիւն հասուցանել զսերմանեալն: Վասն այն Կոյս անուանեցաւ:

5 Եւ զալով ի Կշինն, Արեգակն կշռէ նախ զտիւ և զգիշեր, զի զԺԲ. (12) ժամ տին լինի և ԺԲ. (12)՝ գիշերն: Երկրորդ՝ կշռէ զչերմութիւն և զցրտութիւն, զի ոչ ջերմութեամբ այրէ և ոչ ցրտութեամբ սառեցուցանէ: Երրորդ՝ կշռէ, զի կիսէ զԺԲ. (12) կենդանակերպսն և հաւասարապէս բաժանէ Զ. (6) և Զ. (6): Զորրորդ՝ կշռէ զգօտին, զի ի մէջ երկնամիջակ և այրեցեալ գօտոյն մտեալ է և ունի զհասարակութեան գօտին: Զինգերորդ՝ կշռէ և զԳ. (4) եղանակս՝ զգարունն և զամառն ի մի կողմն թողու և զաշունն և զձմեռն ի միւս կողմն առնու և հաւասար բաժանէ զեղանակսն Բ. (2) և Բ. (2): Վեցերորդ՝ կշռէ ընդդէմ խոյին, զի յեւաննն յարևելից կշռէ Արեգակն զշառաւիղն ի վերայ Կշինն ըստ ուղիղ զԺԻ ծագելով և ի 15 մտանելն ձգէ զշառաւիղն դարձեալ ըստ ուղիղ զԺԻ՝ ի վերայ խոյին ծագելով:

Եւ ի զալն ի Կարիճն Արեգակն ղնորայն բերէ զնմանութիւն: Զի կարիճն զխալթոցն ի վերջքն ունի, այսինքն ի տուտն և ի հարկանելն սաստիկ կսկծեցուցանէ և վիրավորէ: Այսպէս և Արեգակն ի վերջքն 20 հասանելով Կարճին, յանկարծակի ձիւնաբերութիւն լինի, և խայթէ ի վերջքն իբրև զկարիճ՝ զորս ի ճանապարհի գտանէ և կամ ի լերինս, անպատրաստ և մերկ. զոմանց զոտս և զձեռս մսէ, զմատունս թափեալ կսկծցուցանէ, զայս ի հիվանդութիւն ձգէ: Եւ զմնացեալ պտուղս ծառոց և տնկոց խամրացուցանէ և մսեալ ապականէ: 25 և զմնացեալ կալս և զանագանեալս փտեցուցանէ: Եւ զայսքան վնասս յանկարծակի գործէ, վասն այն Կարիճ անուանեցաւ:

Իսկ ժամանեալ յԱղեղնաւորն, սաստկանայ ցրտութիւն և մահ գործէ կենդանեաց, զորս գտանէ արտաքս: Զոր օրինակ նետ՝ ելեալ ի հաստ և ի լայնալիճ աղեղնէ և զոր հարկանէ ի մերկաց, այլ ոչ 30 տայ նմա ապրել. քանզի շարաշար մահացուցանէ, այսպէս և զօրութիւն ցրտութեան, զորս գտանէ մերկ, արտաքոյ շինի, այլ ոչ տայ նոցա ապրել: Որպէս և բազում անգամ պատահի ճանապարհորդաց, որ ոչ կարեն հասնել ի քաղաք կամ ի գիւղ կամ յազարակ և ի խան և ոչ գտանիցեն նիւթ հրոյ, զի բորբոքեալ ապրեսցին ի խրստութենէ սառնամանեացն, այնպիսիքն ինքեանք և անասունք իւ-

րեանց ողորմելի և խեղճ մահուամբ կորնչին: Եւ վասն մահակործան վնասուն Աղեղնաւոր կոչեցաւ կենդանակերպս այս:

Եւ եկեալ Արեգակն ի Այծեղջիրն, կրկին կերպիւ բերէ զնմանութիւն նորա. նախ՝ զի այժն յորժամ գտանէ կտուրս տանց և որմոց 5 և կամ քարինս բարձրաբերձս, թողեալ զհարթալատակ ճանապարհս և զգիւրինս, կիցս և վազս, իբրև զթռչունս ի յորմունս և ի քարինս ձգէ և խնդութեամբ ձայնս ուրախական արձակելով զարշաւանս իր քարէ ի քար և յորմէ յորմ առնելով զայն ճանապարհորդէ: Սոյնպէս և Արեգակն հասեալ յԱյծեղջիրն, զարշաւանս ընթացից իւրոց զառ 10 ի վեր առնէ, զի ի խոնարհութենէն սկսանի բարձրանալ և այլ ոչ ախորժէ զառ ի վայր գնալն, այլ իբրև զայժս զձիգս ի բարձունս ձգէ և այնպէս զճանապարհս իր յարմարէ: Դարձեալ, զի շոր է եղջիր այծուն, այսպէս և ի կենդանակերպս այս շոր ցուրտն ի հողմոյ սաստկանայ: Որ թէպէտ պարզ և արև լինի, բայց զարինն ծծէ 15 զմարդոյ, որպէս սովորութիւն առեալ ասեն «արև է, բայց արին կուծծէ»: Եւ եթէ մանուկ և կամ անասուն պատճառաւ ինչ իրիք զարտաքս յամեսցի, զաղաղակ բառնան և փութացուցանեն ասելով՝ «շուտ արա, զի շորացաւ տղայն և տավարն ի դրաց»: Եւ վասն զառիվեր ընթացից Արեգականն ի կենդանակերպս յայս և շորութեան ցրտին՝ Այծեղջիր անուանեցաւ:

Իսկ ի Զրհոսն մտանելով Արեգականն և երկարեալ փոքր մի ի վերին կիսագունդն Արեգականն վասն յերկարելոյ աուրցն և ջերմութեան Արեգականն, փոքր մի ազդեալ յերկիր, սկսանի յարեգունի տեղիսն հալ առնուլ ձիւնն: Եւ ջուրն յառաջ հոսի և ընթանայ փոքր-փոքր: Եւ օր ըստ օրէ յաւելեալ ջերմութեան Արեգականն վասն երկարելոյ աուրցն, յաւելու և հոսումն ջուրցն: Զի լինի ի դաշտ տեղորայքն իբրև զմիջնագարուն, և երեսք երկրի բացուի ի հալմանէ ձեանցն ի ջերմութենէ Արեգականն: Եւ վասն այնորիկ կենդանակերպս այս Զրհոս անուանեցաւ, զի ջուրք և առուք, որ սառեալ էին և դարձեալ՝ իբրև զքար և զերկաթ և արգելեալք էին ի հոսելոյ, սկսան լկիլ և հալիլ և հոսիլ ի ջերմութենէ Արևուն:

Եւ ի Զուկն շարամանեալ Արեգականն և գտեալ օգնականութիւն ի հարաւային հողմոցն, փոխէ զձիւնաբերութիւն ամպոց յանձրևս և ի տաղատարափս: Եւ սկսանի նա մսել զձիւնն, զոր օրինակ սառնամանիքն և ձեան ցրտութիւն զմարմին կենդանոյն թափէ, այսպէս և հողմն հարաւոյ զձիւնն մսէ և թափէ ի կարողու-

թենէ իւրմէ, որ իբրև զմտեալ մարմին մարդոյ փլորի և թափի յիւրումն էութենէ և հալի: Եւ աստ տես յորդութիւնք աղբերաց և յարուցմունք գետոց և էջք և տաղատարափք անձրևաց և դառնայ երկիր ի մօր և ի տիղմն: Եւ որպէս ձուկն ի մեջ ջրին լեղայ, այսպէս և աշխարհ ի մեջ ջրոց իբրև զձուկն ի լեղ գայ: Վասն որոյ կենդանակերպս այս Զուկն անուանեցաւ:

Այսքան շատ լիցի վասն անուանակոչութեան կենդանակերպիցն, որ ի զանազան ներգործութենէ Արեգականն անուանակոչեցան՝ Խոյ և Յուլ և այլն, որպէս առ ասացաք և ցուցաք:

10 Եւ ԺԲ. (12) կենդանակերպքս ունին զբնութիւն չորից տարերաց: Զի Խոյն և Առիւծն և Աղեղնաւորն ունին զբնութիւն հրոյ՝ ջերմ և չոր, իսկ Յուլն և Կոյսն և Այծեղջիւրն ունին զբնութիւն հողոյ՝ չոր և ցուրտ, իսկ Եկաւորն և Կշիռն և Զրհոսն ունին զբնութիւն օդոյ՝ ջերմ և գէշ, իսկ Խեցգետինն, Կարիճն և Զուկն ունին զբնութիւն ջրոց՝ ցուրտ և գէշ:

ԵԹԷ ԿԱՄԻՑԻՍ ԳԻՏԵԼ, ԹԷ ԱՐԵԳԱԿ ՅՈՐՈՒՄ ԿԵՆՂԱՆԱԿԵՐՊԻ Է՞՞

Գիտելի է, զի ԺԲ. (12) կենդանակերպքս ոչ են իբրև զԷ. (7) մոլորակս, որ ի ներքոյ երկնիցս տարրոշ պարունակք են և գօտիք, այլ սոքա յերկինս ամրացեալք են, որպէս բեռն ի տախտակի: Վասն այսորիկ խնդրելի է՝ նախ վասն գիտութեան երկնից և ապա վասն ունակութեան կենդանակերպից նորին:

Եւ վասն երկնից Ե. (5) իրս խնդրելի է. նախ՝ թէ զինչ՞ է պատճառ շարժութեան երկնից, երկրորդ՝ թէ զոր՞ ձև ունի, երրորդ՝ թէ քանի՞ են երկինք, չորրորդ՝ թէ զինչ՞ է յատկութիւն երկնից, հինգերորդ՝ վասն համեմատութեան որ առ Արարիչն Աստուած:

1ա. Վասն առաջնոյն գիտելի է, զի պատճառ շարժութեան երկնից ըստ վարդապետաց կրկին է. նախ՝ բնական, երկրորդ՝ բարոյական: Եւ բնականն նախ այսպէս. զի օդն, որ ի մէջ է մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա է պատճառ շարժութեան երկնից: Գարձեալ՝ կէտ երկրիս անշարժ է ի մէջն և պատճառէ զշարժութիւն երկնի, որպէս կարակնին կէտ անշարժ է և պատճառէ զբոլորակ ծիրն:

Իսկ ըստ Արիստոտելի՝ ի վերայ երկու բեռացն ասէ շրջի երկնի, որպէս անիւ սայլի ի վերայ սոնոյ: Այս բնական պատճառ:

Եւ բարոյականն է այս. երկինքն անապական է բնութեամբ, Աստուած ետ նմա շարժիլ, և երկիրս է անշարժ տեղեալ, ետ նմա ապականիլ երեսօք: Զի տեսեալ եղական և ծառայ իմասցին և մի Աստուածս կարծեսցին և մոլորեսցին,—որպէս ասէ Նիւսացին ի «Գիրս կազմութեան»:

1բ. Վասն երկրորդին գիտելի է, զի ասին վարդապետք, թէ ամենայն երկինք ի հարկէ պարտին ունել զբոլորակ ձև: Առաջին պատճառ, զի երկինքն է պարզ մարմին, զի ոչ է ի չորից տարերաց, այլ հինգերորդ էութիւն է, և բոլորակ ձևն պարզ է, քան զամենայն ձև: Զի եռանկիւնին յերից գծից բաղկանայ, և քառանկիւնին՝ ի քառից, նոյնպէս և այլքն, իսկ բոլորակ ձևն ի միոյ գծից բաղկանայ, ապա և պարզ էութեան երկնից պարտ է ունել զպարզ ձև, որ է բոլորակն: Երկրորդ՝ զի բոլորակ ձևն պարունակող է, և երկինքն զամենայն պարունակեալ ունի յինքեան առ ծոցս իւր, ապա և պարտ է, զի ունիցի զձև բոլորակ: Երրորդ՝ զի բոլորակն սուր է ի շարժումն, որ ի շրջելն իւրում շօշափէ զերկիր ի մի կէտ, ապա և բոլորակ ձևն պատշաճ է երկնից: Չորրորդ՝ զի երկինքն է կատարեալ մարմին, զի ազդէ յամենայն ստորնային մարմինս խնայելով ի նոսա: Իսկ բոլորակ ձևն ի մէջ ամենայն ձևոց է կատարեալ. նախ՝ զի ոչ կարէ յաւելուլ ի նմա և ոչ պակասիլ, երկրորդ՝ զի ոչ երևի սկիզբն և ոչ կատարած, երրորդ՝ զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց է առաջին, կատարեալ, և Զ. (6) թիւն է ի բոլորակ ձևն՝ զի որքան է ի միջին կիտէն ի բոլորակ ծիրն, Զ. (6) այնչափ է իւր բոլորակ ծիրն: Ապա և բոլորակ ձևն կատարեալ է և պատշաճի բոլորակութեան երկնից մարմնոյ: Հինգերորդ՝ զի թէ ոչ էր բոլորակ, այլ եռանկիւնի կամ քառանկիւնի, յո՞ժամ շարժէր, անկիւնքն յորմէ տեղուոջ վերանային, մնային առանց տեղուոյ և տեղի անկեանցն՝ առանց մարմնոյ: Վեցերորդ՝ զի թէ երկինքն ոչ էր բոլորակ, յայնժամ Արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին, զի ի միջի կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ, իսկ յարեւելից առ մեզ է խտտորնակ գիծն, և ուղղական գիծն կարճ է, քան զխտտորնակ գիծն: Այլ ոչ երբեք մեծագոյն երևի աստղ, յորժամ է ի միջին կէտն, քան յորժամ է յարեւելս կամ յարեւմուտս:

1 գ. Վասն երրորդին ասելի է, թէ բազումք են երկինք, որպէս ասէ մարգարէն՝ «երկինք երկնից»¹, և առաքեալ՝ վասն Քրիստոսի, «որ ելն ի վերոյ, քան զամենայն երկինս»²:

Արդ՝ բաժանի երկինքն յերիս՝ այսինքն ի բնականն, ի յատկա-
կանն, ի նմանականն: Եւ է բնականն Ժ. (10). նախ հրեղէն եր-
կինքն, երկրորդ՝ ջրեղէնն, երրորդ՝ հաստատութիւն և է. (7) եր-
կինք՝ գոտիքն է. (7) մոլորակացն, որ է Երեւակն, Լուսնթագն, Զրատն, Արեգակն, Լուսաբերն, Փայլածուն, Լուսինն: Իսկ յատկական
երկինքն է Ե. (5). առաջինն է տարրական հրոյն վերին մասն, որ
կոչի հրեղէն երկին՝ հոմանուն առաջին երկնիցն, այլ կոչի սա հրե-
ղէն, զի է ի հրոյ, իսկ նա կոչի հրեղէն, զի է որպէս զհուր: Երկրորդ՝
ներքին մասն հրոյն, որ կոչի օլոմպիային երկին՝ վասն մերձ գո-
լոյն յՈլոմպիոս լեռան: Երրորդն է վերին մասն օդոյն և կոչի եթե-
րային երկին, զի մերձ ի տարրեղէն հուրն և և վառի ի նմանէ, զոր
թոխլ աստեղաց կոչեմք: Չորրորդն է ներքին մասն օդոյն և կոչի
օդեղեն երկին, որպէս ասեն Գիրք Սուրբք՝ «թռչունք երկնից զՏէր
օրհնեցեք»³: Հինգերորդ՝ երկին կոչի և դրախտն, զի բարձր և լու-
սաւոր և անմահութեան է վայր, որպէս ասէր անառակ որդին՝
«հայր մեղայ յերկինս»⁴, այսինքն՝ ի դրախտն: Սուքա հնգեքին կո-
չին երկինք, զի զյատկութիւնս երկնից ունին: Եւ սոքա լինին ԺԵ.
(15) երկինք: Իսկ նմանական երկինքն է Ե. (5): նախ կոչեմք եր-
կինք ամենասուրբ երրորդութիւն, զի անհաս բարձրութեամբ գե-
րազանցեալ է յամենայն եղելոց: Այլև նախ կոչի երկին զգալի երե-
վումն Աստուծոյ և հրեշտակաց մարգարէիցն սրբոց: Երկրորդ՝
երևակայութեան տեսիլն դարձեալ նոցա: Երրորդ՝ երկին կատա-
րեալ տեսութիւն իմացականին, որք զէմ յանդիման տեսին զԱս-
տուած, որպէս Մովսէս և Դաւիթ և Պողոս յափշտակեցան յայս
երրորդ երկինս: Չորրորդ՝ հոգևոր բարձրութիւնքն և վարձք սրբոցն
կոչին երկինք. ըստ այնմ՝ «վարձք ձեր բազում են յերկինս»⁵: Հինգ-
երորդ՝ կոչի երկինք ամենասուրբ երրորդութիւն վասն լուսաւորու-
թեան և անհաս բարձրութեան յամենայն եղելոց, որպէս ասացաւ:

Զորմէ ասէր,—Արուսեակ ելից յերկինս և եղեց նման բարձրելոյն
և այնժամ էր ի դասս հրեշտակաց յերկինս, այլ վասն հրեղէն երկ-
նիցն ասէր ելանել և հաւասարիլ նմա:

Արդ՝ այսքան է թիւ երկնից՝ տասն բնական և հինգն յատկա-
կան և հինգն՝ ըստ նմանութեան, որ լինին քսան երկնիք: Բայց մերս
վարդապետութիւն վասն աստղալից երկնիցս է, զի տուարական
մակացութիւնս վասն սորա է, զի սա ունի զԱրեգակն և զԼուսին,
զմոլորակսն և զղեկնդանակերպսն: Վասն որոյ զչորրորդն տեսանե-
լի է, թէ զինչ՝ է յատկութիւն երկնիցս այս:
1 գ. Չորրորդ՝ ասելի է վասն յատկութեան երկնից. նախ զի
մարմին է բարձր, որ և ի սահմանս իւր բացակատարի, երկրորդ՝
զի է փայլուն և լուսաւոր, երրորդ՝ զի բոլորակ ունի ձևս, որ է կա-
տարեալ վեցեկի շափօք, չորրորդ՝ զի պարզ և վճիտ է ըստ էութեան,
հինգերորդ՝ զի անապական է բնութեամբ, վեցերորդ՝ զի աստեղօք
է ջահաւորեալ, եօթներորդ՝ զի է անդորր վայր, այսինքն հաւասար,
ընդարձակ և դաշտաձև գոլով, ութերորդ՝ զի է առանց պղտորման,
այսինքն ձեան կամ անձրեաց, կամ խորշակի և ցրտոյ, իններորդ՝
զի մշտակայ է ի պարունակութիւնս իւր, այսինքն զի ոչ ունի այլայլ-
լումն և փոփոխումն ըստ անկարգ շարժութեան երկրի, տասներորդ՝
որ և վերագոյնն է, զի ապարանք և հանգիստ է՝ միայն Աստուծոյ
պատշաճեալ: Ուստի նեղեալքս առ ի խնդիրս առ ի բարձունս զձեռս
տարածեալ ըղձան, որպէս վկայէ և մարգարէն՝ «Աստուած մեր,
որ նստի յերկինս երկնից»¹:

Գարձեալ և այլ յատկութիւն երկնից՝ նախ զի խոր է, երկրորդ՝
լայնացեալ է յամենայն կողմանց, երրորդ՝ նրբագոյն է մասն,
չորրորդ՝ կարծր և անպախելի, հինգերորդ՝ թեթև և սրբնթաց, վեցե-
րորդ՝ մեծութեամբ քանակեալ, եօթներորդ՝ ի ծոց իւր ունի զամենայն,
ութերորդ՝ պատճառէ զհաստատութիւն միջոցիս, իններորդ՝ տալ
զոր ունակացեալ է երկրի՝ որպէս զանձրե, զլոյս, զչերմութիւն և
զազդողութիւն, տասներորդ՝ միշտ տայ և ոչ առնու:

Եւ զայս գիտել պարտ է, զի մեծն ներսես զհաստատութիւն
արփի և եթեր կոչէ, զոր արտաքինքն հինգերորդ տարր ասացին, որ
ոչ երևի մեզ: Այլ զաստղալից երկինս յօդոյ ասէ խտացեալ և թանձ-
րացեալ և ի նմա են կառուցեալ աստեղք և ընթանան:

1 Սաղմ. ճԻԳ16:

2 Եփես. Գ10:

3 Գան. Գ78:

4 Դուկ. ԺԵ18:

5 Մատ. Ե12, Դուկ. 225:

1 Սաղմ. Կէ34:

Եւ այս գիտելի է, զի որպէս հրեղէն երկինն հոմանուն է, այսինքն՝ լուսեղենն, որ ի սկզբանէ ստեղծաւ, և բոլորակ հրոյն, նոյնպէս և հոմանուն է և արփին, այսինքն լուսեղենն և հաստատութիւն: Այսպէս հոմանուն է և հեթերն, այսինքն՝ հինգերորդ էութիւն: Եւ տարրական հուրն նմանապէս հոմանուն է, և հաստատութիւն՝ ի ներքոյ ջրոց, այսինքն ութերորդ կամարն, և օդս առ մեզ, որ ունի զշուրս ամպով հաստատեալ:

1 Եւ Հինգերորդ՝ ասելի է վասն համեմատութեան, թէ որքան նշանակութիւն ունի երկինքն առ արարիչն Աստուած: Նախ՝ զի մի է երկինք, և մի է Աստուած, ըստ այնմ՝ «լուր Իսրայէլ Տէր Աստուած Քրիստոս Տէր մի է»¹ և առաքեալ ասէ՝ «մեզ մի է Տէր»² որով ամենայն: Երկրորդ՝ զի պարզ ունի զձեն, քանզի բոլորակ է, այսպէս և Աստուած պարզ և անշարագիր էութիւն է: Երրորդ՝ զի բոլորակ ծիրն երկնից ոչ սկիզբն երևի և ոչ կատարածն, այսպէս և Աստուած անսկիզբն է և անվախճան և ամենայն արարածոցս սկիզբն է և վախճան, որպէս ասէ Եսայեալ՝ «ես եմ առաջին և ես եմ վերջին և ի տեսիլն ես եմ ալիքայ և ես եմ օ»³: Չորրորդ՝ զի նուրբ է և Աստուած ամենեին պարզ անմարմին է յաւէտ, քան զանմարմնութիւն հոգւոյս մեր և զհրեշտակաց, զի որքան նուրբ է անմարմին հոգիս մեր առ զգալի մարմինքս, բազմապատիկ նուրբ է անմարմնութիւն հրեշտակացն, քան զհոգոց մերոց: Անմարմնութիւնս բիրապատիկ առաւել իմա զպարզութիւն անմարմնութեան Աստուծոյ, քան զհրեշտակացն: Հինգերորդ՝ զի արփի է, որ է լույս: Եւ անեղական լույս է աստուածութիւն, որպէս հարքն Նիկիոյ ի դաւանութիւն Հօր և Որդւոյ այսպէս շարագրեցին՝ «Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ»: Եւ Տէրն ասէր՝ «ես եմ լոյս աշխարհի»⁴ և Դաւիթ ասէր վասն հոգւոյն՝ «լուսով երեսաց բոց տեսանեմք զլուսն»⁵: Եւ Սողոմոն վասն հոգւոյն ասէ՝ «նշոյլ է՝ մշտնջենաւոր լուսոյն»⁶: Վեցերորդ՝ մեծ է քանակութեամբ, և Դաւիթ ասէ՝ «Աստուած մեծ է, Տէր»⁷ և «Տէր մեծ է ի

վերայ ամենայն երկրի»¹ և Տէրն ասէ՝ «Հայր իմ մեծ է քան զիս»², զի «քան զիս» ասելովն շափ մեծութեան Հօր, զինքն եղիր: Եօթներորդ՝ բարձր է տեղեալ, և վասն այն ասէ Դաւիթ՝ «Աստուած մեր ի բարձունս բնակեալ զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի»³ և թէ «բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր»⁴: Ութերորդ՝ զի ամենահայեաց է: Եւ վասն Աստուծոյ ասէ առաքեալ՝ «ամենայն ինչ մերկապարանոց է առաջի նորա»⁵: Եւ Դաւիթ ասէ «որ քննէ զսիրտս և զերիկամունս»⁶, և թէ «զանգործս իմ տեսին աչք քո»⁷ և թէ «Աստուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան»⁸: Եւ Սողոմոն՝ «աչք Տեառն լուսաւոր են, քան զԱրեգակն և տեսնեն զճանապարհս»⁹ ասէ, զի բոլոր բանական բնութեանս՝ հրեշտակաց և մարդկան գործ մի, կամ խորհուրդ մի ոչ կարէ թարչիլ ի գիտութեանն Աստուծոյ: Իններորդ՝ զի պարունակող է: Եւ Աստուած ինքն անպարագրելի բնութիւն է և զամենայն արարածս պարագրեալ ունի: Ըստ այնմ՝ «զերկինս և զերկիր ես լնում»¹⁰: Եւ ըստ փրիլիսոփայիցն՝ Աստուած ամենուրեք և ոչ ուրեք, ոչ ի բացեալ ի տեղուցէ իմիք և ոչ ի տեղուցէ իմիք, այլ ի մէջ սորա և արտաքոյ սորա, ի վերոյ սորա և ի ներքոյ, և յաջէ և յահեկէ սորա: Տասներորդ՝ զի անապական է: Եւ Աստուած անապական է և անվախճան, նաև ըստ մարդեղութեան մարմին բանին անապական է, ըստ այնմ՝ «մարմին նորա ոչ ետես զապականութիւն»: Եւ ըստ թագաւորութեան ոչ ունի վախճան ըստ հրեշտակին՝ որ ասէ. «թագաւորութեան նորա վախճան մի լիցի»¹¹: Եւ այս վասն անապական բնութեան է, և զի անապական է, վասն որոյ և անվախճան: Մտաւասնեցորդ՝ զի ըստ ամենայն արարածս զոլով յայտնի է ամենայն տեսողաց: Այսպէս և Աստուած զալով ամենուրեք, յայտնի է ամենայն արարածոցս,

1 Մատթ. ԺԲԶ:
2 Մատթ. ԺԲԶ:
3 Յայտ. Ա10:
4 Յովհ. Ը12:
5 Սաղմ. ԼԵ10:
6 Իմաստ. Է26:
7 Սաղմ. ԼԹ17, ԿԹ5, ԽԷ2:

1 Սաղմ. ԶԵ10, ԴԵ4, ԷԳ1, ԺԽ25:
2 Յովհ. ԺԳ28:
3 Սաղմ. ԺԼԷ6:
4 Սաղմ. ԺԹԲ4:
5 Երբ. Գ13:
6 Սաղմ. Է10:
7 Սաղմ. ԺԼԸ16:
8 Սաղմ. ՄԹ3:
9 Առակ Ե21:
10 Երեմ. ԻԳ24:
11 Դուկ. Ա33:

որպէս ասէ Դաւիթ՝ «երկինք պատմեն զփառս Աստուծոյ»¹, զի արարչութեամբն առ ամենեւեան երևի: Եւ ամենայն էքս ճանաչեն զձայն նորա և անսան հրամանի նորա: Եւ ամենայն արարածքս օրհնէ զնա ըստ ասից երից մանկանցն է՝ Նոցին, որ յերգս օրհնութեան զբոլոր գոյքս հրաւիրէին: Երկոտասաներորդ՝ զի խոր և ծածուկ է և անտեսանելի ընդ ներքին կիսագնդին: Նոյնպէս և առաքեալ ասէ վասն Աստուծոյ «Ով խորք մեծութեան և իմաստութեան Աստուծոյ, քան զի անքննելի են դատաստանք նորա և անհետազօտելի են ճանապարհք նորա»²: Եւ Եսայի ասէ՝ «Ո՞ր զիտաց զմիտս Տեառն և կամ ո՞ր եղև նմա խորհրդակից»³: Եւ Յոհաննես ասէ՝ «զԱստուած ոչ ոք ետես»⁴, բայց միածին Որդին, որ ի ծոց Հօր նա պատմեաց մեզ և զարձեալ՝ «ցանկան գոնե ըստ աղօստեսանել հրեշտակք»⁵: Երեքտասաներորդ՝ զի ինքնաշարժ է ըստ հրամանի Արարչին: Այսպէս և անշարժն Աստուած յինքենէ շարժեալ՝ արար զամենայն արարածս: Զի յումեքէ ոչ բռնադատեալ և ոչ աղաչեցեալ, զի ոչ էքն ոչ բռնադատեալ ունին և ոչ աղաչեալ: Այլ ինքնակամ կամօք վասն բարութեան իւրոյ զամենայն զորինչ կամեցաւ և արար, որպէս ասէ Դաւիթ: Չորեքտասաներորդ՝ զի մշտաշարժ է երկին և անդադրելի: Այսպէս և Աստուած ի գործ նախախնամութեան, որպէս ասէր Տէրն «հայր իմ մինչև ցայժմ գործէ և ես գործեմ՝ զարև և զանձրև տալով, զաղբիւրքս բխեցուցանելով և զգետս ընթացուցանելով և զերկիր ի բոյսս և ի պտղաբերութիւն շարժելով և զամենայն գոյքս յէութիւն պահելով»⁶, որպէս ասէ Սողոմոն՝ «ազգ գայ և ազգ երթայ և երկիր յափտեան կայ»⁷: Զինգտասաներորդ՝ զի արագ և սուր է ի շարժումն: Եւ վասն արագութեան Աստուծոյ ասէ Եսայի ի կողմանէն Աստուծոյ առ ողորմածսն՝ «մինչ չև խօսիցիս, ասիցեմ թէ ահաւասիկ կամ»⁸: Եւ Յոհաննէս ասէ «Ո՞ր մեռելոյն նմա արագ յայտնեցար», և զարձեալ՝

«արագօրենս ցուցար նոցա»: Վեշտասաներորդ՝ զի անարգել է ի շարժելն, և ոչ ոք կարէ զգեմ ունել: Այսպէս և Աստուած ի պատճել զհակառակորդս իւր, զի ոչ ոք կարէ զգէմ ունել բարկութեան նորա, որպէս ասէ Յոր «Ո՞ր խստացաւ ընդդէմ նորա և հանդարտեաց»¹: Եւ Նաուամ ասէ «Ո՞ր հանդարտեացէ և կամ ո՞ր կացցէ ընդդէմ բարկութեան, սրամտութեան նորա»²: Տասնևեօթներորդ՝ զի երկինքն ունի ի ծոց իւր զԱրեգակն և զԼուսինն: Այսպէս և Հայր Աստուած ունի ի ծոց իւր զիմանալի Արեգակն արդարութեան՝ զՔրիստոս և Լուսինն՝ լիալիւր և բոլոր ի ծոց խնամոց իւրոց՝ զաստուածային Կոյն Մարիամ: Տասնևութերորդ՝ զի ունի առ ինքն երկինքն զբազմութիւն աստեղացն, և աստղ քան զաստղ առաւել փառօք: Այսպէս և Աստուած ունի զբազմութիւն աստեղացն, այսինքն հրեշտակացն զասուց, որպէս ասէ Յոր ի բերանոյ Աստուծոյ՝ «յորժամ զովէին զիս աստեղք առաւօտուն, այսինքն հրեշտակք»³: Նաև աստեղք ունի զհաւատացեալս անուան իւրոյ, որպէս Աբրահամու ասէր Տէր՝ «բազմացուցից զլաւակ քո որպէս զաստեղս երկնից»⁴, այսինքն զհաւատացեալքս անուան իւրոյ: Եւ աստղ քան զաստղ առաւել ունի փառք որպէս հրեշտակս վերինսն՝ քան զներքինսն: Նոյնպէս և արդարոցն եղիցին ի կատարածին, որպէս ասէ առաքեալ՝ թէ որպէս «աստղ քան զաստղ առաւել է փառօք»⁵ այսպէս և ի կատարածին եղիցի փառք և պսակ արդարոց: Տասնիններորդ՝ զի երկինքն ունի յինքեան զէ. (7) մոլորակ աստեղսն, որ են է. (7) գօտիք երկնիցն: Այսպէս և Հոգին Աստուած ունի առ ինքեան զէ. (7)-արփեան շնորհս, որ գօտի են երկնից եկեղեցւոյս ի վերայ երկրի: Քսաներորդ՝ զի երկինքն ունի առ ինքն ամրացեալ զԺԲ. (12) կենդանակերպըս աստեղաց: Այսպէս և Որդին Աստուծոյ ունի առ ինքեան զԺԲ. (12) առաքեալս հաստատուն ըստ օրինակի աստեղաց, որպէս ասէր «հաստատուն կացեք ի սէր իմ»⁶:

1 Սաղմ. ԺԲ2:

2 Հոով. ԺԱ33:

3 Եսայի Խ13:

4 Յովհ. Ա18:

5 Ա Պետ. Ա12:

6 Յովհ. Ե17:

7 Ժողով. Ա4:

8 Եսայի ԿԵ24:

1 Յովր. Թ4:

2 Նաուամ Ա6:

3 Յովր. ԼԸ7:

4 Մենդ. ԺԶ10:

5 Ա Կորնթ. ԺԵ41:

6 Յովհ. ԺԵ9:

Եւ ըստ այսքան եղանակացս ունի երկիրն համեմատութիւն
և նմանութիւն առ Աստուած ըստ սակաւ քահակութեան թուոցս,
որպէս ցուցաւ:

2. Այժմ ասելի է՝ թէ վասն էր՞ կենդանակերպող են թուով ժԲ.
5 (12): Նախ վասն այն, զի ժԲ. (12) մասն է բաժանեալ աշխարհս,
պարտ էր՝ ժԲ. (12) լինել կենդանակերպիցն, զի իւրաքանչիւր կեն-
դանակերպ միոյ մասին աշխարհի տանուէր և իշխան լիցի: Երկ-
րորդ՝ զի մարդս փոքր աշխարհ է և ժԲ. (12) անդամօք ունի զկա-
տարելութիւն գոյութեան իւրոյ, այսպէս և արարածքս, որ մեծ աշ-
10 խարհ է, ժԲ. (12) կենդանակերպի ունի զկատարելութիւն իւր ըստ
նմանութեան մասին անդամոց մարդոյն: Ըստ այնմ խոյն՝ պար-
սիկք, որ է գլուխն, Յուլն՝ բարեկացիք, որ է պարանոցն, Եկաւորն՝
գամիրք, որ է ուսքն, Խեցզետինն՝ հայք, որ է լանջքն, Առիծն՝
ասիացիք, որ է աշ ձեռն, Կոյսն՝ էլլադացիք, որ է ձախ ձեռն,
15 Կշիւն՝ կիլիկեցիք, որ է կուշտն և կուտն, Կարիճն՝ կրետացիք, որ
է փորն, Աղեղնաւորն՝ իտալացիք, որ է երանքն, Այծեղջիրն՝ ասո-
րիք, որ է բարձքն, Զրհոսն՝ եգիպտացիք, որ է սրունքն, Զուկն՝
հնդկիք, որ է թաթ ոտիցն: Երրորդ՝ զի Արարին կամեցաւ չորիւք
եղանակօք պսակել զտարին, պիտոյ էր, զի առներ ժԲ. (12) կեն-
20 դանակերպ, զի Գ. (3) Գ. (3) կենդանակերպօք ածցէ ի կատա-
րումն զչորեսին եղանակն: Զորրորդ՝ ըստ տարեբացոյ Գ. (4), որ
ծնողք են ամենայն շարախառնեալ էութեանց, նոքա ժԲ. (12) թուով
գլխաւորին, զի Գ. (4) տարր են և Ը. (8) ծայր, որ լինին ժԲ. (12):
Զի հողն ունի չորութիւն և ցրտութիւն, ջուրն ունի ցրտութիւն և գի-
25 ջութիւն, օդն ունի գիջութիւն և ջերմութիւն, հուրն ունի ջերմութիւն
և չորութիւն: Եւ սոքա գոյացական տեսական տարրորոշին և պա-
տահական որակօքն մակբեկութեամբ և մակղարձութեամբ միաւո-
րին, զի գոյացական տեսական թշնամիք անհատելիք են և պա-
տահական որակօքն՝ սիրելիք անքակտելիք, զի այսու ազգակիցք են
30 միմեանց: Եւ է գոյացական տեսակ ի հողն՝ չորութիւն և պատահա-
կան որակ՝ ցրտութիւն, և ի ջուրն գոյացական տեսակն՝ ցրտութիւն
և պատահական որակ՝ գիջութիւն, և յօդն՝ գոյացական տեսակ՝
գիջութիւն և պատահական որակ՝ ջերմութիւն, և ի հուրն գոյացա-
կան տեսակ՝ ջերմութիւն և պատահական որակ՝ չորութիւն: Եւ այ-
35 սու միաբանութիւնս շարախառնեալ էութեանցս պատճառք լինելու-
թեան են: Նոյնպէս և ըստ թուոյ սոցա ժԲ. (12) կենդանակերպս

արար յերկինս, զի զանազան ազդմունս ներգործեսցեն ի տարրա-
կան էութիւնքս: Հինգերորդ՝ զի անուն Արարչին սոցոց երիցն անձ-
նաւորութեանցն ժԲ. (12) գրովք կապին, այսպէս և սոքա յԱրար-
չէն իւրեանցն ժԲ. (12) թուով զէութիւն առին: Վեցերորդ՝ զի կա-
5 տարելութիւն ամենայն գոյից ի ներքոյ երկնից երկիրն է, զի
ամենեքեան ի շարժմանէ նորա ունին զդադարումն և զտեղի,
վասն որոյ և ըստ կատարեալ թուոց առին երկրքին կիսագունդքն
վերինն և ներքինն զկենդանակերպս իւրեանց Զ. (6) Զ. (6) թուով:
Իսկ զի ասէ «կալ ի գարնանային հասարակածէն Բ. (2) թուով
10 պակաս», զի ի հասարակածին ստեղծան Արեգակն և Լուսինն, բայց
ի հասարակածին ի խոյն ոչ եղան, այլ յետ զկնի Բ. (2) աւուրց,
յորժամ մարդն ստեղծաւ. և արարչութեան Զատիկն սկսաւ, ապա
ի խոյն եղաւ ի նիսանի Ա. (1), զի տարւոյն սկիզբն և կենդանա-
կերպիցն սկիզբն ի միում աւուր լիցի: Ի. Լ. (30), Լ. (30) զգնալն՝
15 զի իւրաքանչիւր կենդանակերպս Լ. (30), Լ. (30) կենայ:

ԵԹԷ ԿԱՄԻՑԻՍ ԳԻՏԵԼ, ԹԷ ԱՐԵԳԱԿՆ ՅՈՐՈՒՄ ԳՐԻ Է՞՞

Աստ ոչ ևթէ զեզակի գիտութիւնս գրոյս ևեթ ուսուցանէ մեզ,
թէ Արեգակն յորում գրի է, այլ և զերկրորդ՝ գիտութիւն աստիճա-
նացն, զոր բաղադրեալ ունի յինքեան. ըստ որում ասէ «թիւ աւուրցն
20 Բձ. (200) պատկեա և տուր ամեն գրի Թ. (1000), Թ. (1000)»: Եւ
զի աստ մեզ զբանակութիւն թուոց զանազան իրի բացայայտէ, այ-
սինքն՝ զգրից և զաստիճանաց գիտութիւն, զի ձայնս այս հոմա-
նունաբար ի վերայ բազմաց բերի:

Բայց նախ պարտ է գիտել, թէ զինչ է յատկութիւն աստիճա-
25 նաց, որով ի բացորոշելն զիւրաւ ծանիցուք զէութիւն սոցա: Գի-
տելի է, զի ըստ իրին այս է յատկութիւն սոցա, զի ունիցին ներ-
քին, միջին և վերին մասն, որով զելն ի ներքուստ ունիցի և զէջն
ի վերուստ: Եւ զառաջինն ի ընդել իրաց ծանուցուք, որ հասարա-
կաց է գիտելի: Նախ ասեմք աստիճան սանդխոյ, որ ունի ներքին,
30 միջին և վերին մատունք: Երկրորդ՝ ըստ շինուածոց՝ որպէս ներք-
նատուն, միջնատուն և վերնատուն, զի ըստ կարգի աստիճանի
բարձրանան ի վերայ միմեանց զի թէ ներքինն ոչ շինեսցի, անհնա-
րին է վերնոյն շինելն: Երրորդ՝ ըստ տեղեաց, որպէս յեկեղեցիս՝

ժամատունն, եկեղեցին, խորանն և սեղանն: Եւ յարքունիս՝ մեջգե-
 տինն, տախտն և թախտն, որ է թագաւորական գահոյքն, յորում
 նա միայն է արժան բազմիչն: Չորրորդ՝ աստիճան ունին և դիրք
 տարեբացող՝ զի ներքին է հող և ի վերոյ՝ ջուր և օդ և հուր: Հինգ-
 5 երրորդ՝ երեւի աստիճանն ի գօտիք մոլորակացոյ. զի ի ներքին գօ-
 տին է Լուսինն, ի վերոյ՝ Փայլածուն և ապա՝ Լուսաբերն, Արեգակն,
 Հրատն, Լուսնթագն և Երևակն՝ ի վերին ծայրն ունի զգօտին: Վեց-
 երրորդ՝ ի կենդանակերպքն. զի Այծեղջիւրն ունի զնեքքին աստի-
 ճանն, և Խեցգետինն՝ զրուն վերինն, և Առիծն՝ հաւասար ընդ Խեց-
 10 գետինն: Եօթներրորդ՝ երեւի կամարք երկնիցն, զի զնեքքին ունի
 հաստատութիւնդ, զմիջինն՝ ջրեղէնն, զվերինն՝ հրեղէնն: Ութե-
 րորդ՝ երեւի ընդ դասու՝ ի դասակարգութիւն հրեշտակացն, զի զնեք-
 քին դասս ունին հրեշտակք և ի վերոյ սոցա՝ հրեշտակապետք և
 ապա՝ պետք, զօրութիւնք, իշխանութիւնք, տէրութիւնք, աթոռք,
 15 սերովբեք և քերովբեք: Իսկ ըստ կարգապետութեան՝ նեքքին պե-
 տութիւնք, միջին տէրութիւնք, վերին աթոռք: Իններրորդ՝ երեւի աս-
 տիճանն ի կարգս քահանայութեան, ըստ որում Թ. (9) աստիճան ասի-
 առաջինն՝ դուռն բացողն, երկրորդ՝ ընթերցողն, երրորդ՝ երզմնե-
 ցուցիչն, չորրորդ՝ ջահընկալն, հինգերորդ՝ դպիրն, որ է կիսասար-
 20 կաւազն, վեցերորդ՝ սարկաւազն, եօթներորդ՝ քահանայն, ութերորդ՝
 եպիսկոպոսն, իններորդ՝ կաթողիկոսն և պատրիարքն, և սոքա
 ունին զվերին և զբարձրագոյն աստիճանն: Տասներորդ՝ ասի աս-
 տիճան և առաքինութեան, որպէս շարագրեալ է ի Գիրս. սանդուխտ,
 որ առաջին աստիճանն զնէ առաքինութեան՝ զխոնարհութիւն և վե-
 25 րին՝ զսէրն: Եւ զմիջոցսն ոչ կամիմ շարագրել վասն երկարութեան:
 Իսկ այս, որ ասէ «եթէ կամիցիս գիտել, թէ Արեգակն յորում
 գրի է և յորքան աստիճանի», և աստ երեւցուցանէ կրկին աստի-
 ճան՝ ըստ գրոյ և ըստ թուոյ: Զի և ի գիրս զառաջին աստիճանն ունի
 30 այլն և զվերինն՝ քէն և այլն ըստ իւրնաբանչիրումն կարգի, ըստ
 որում ասէ՝ «զբարձրանայն յայրէն և յԱյծեղջիւրէն արա և զխո-
 նարհիւն՝ ի քէն և ի Խեցգետնէն»: Իսկ ըստ թուոյ՝ զի և ի թիւսն
 է աստիճան, զի ի պարզ թիւսն զառաջին աստիճանն ունի միակն
 և զվերինն՝ Ժ. (10) եակն, իսկ ի բաղադրեալսն, որ բարձրանայ ի
 35 ճ. (100) ն, զառաջինն՝ Ժ. (10) եակն և զվերինն՝ ճ. (100) եակն,
 իսկ ի հազարն՝ զառաջինն ճ. (100) ն և զվերինն՝ Ռ. (1000) ն, և ի
 բիւրն՝ զառաջինն Ռ. (1000) ն և զվերինն՝ բիւրն, և ի քանքարսն՝

զառաջինն զբիւրն և զվերինն՝ զքանքարն: Եւ աստիճանք Արեգա-
 կանն կրկին է. զի մեծ է և փոքր, որպէս ի մատունս մեծ է, որ
 5 Ե. (5) մասն ժամ մի լինենայ, և փոքր, որ՝ Լ. (30) ն: Եւ ի ժամսն
 մեծ է, որ ԺԲ. (12) օր մի լինենայ, և փոքր, որ՝ ԻԴ. (24): Եւ
 5 յօրն մեծ է, որ ԺԵ. (15) ժամ լինենայ, և փոքր, որ՝ Թ. (9): Այս-
 պէս և յաստիճանս Արեգականն մեծ է, յորժամ զկենդանակերպն
 Լ. (30) աստիճան չափէ, և փոքր, յորժամ՝ Մ. (200), զի մէկ մեծ
 աստիճանն Մ. (200) փոքր է: Եւ ի մեծ աստիճանսն բարձրանայ
 Արեգակն ճԶ. (180) և խոնարհի ճԶ. (180), և փոքրն՝ ԼԶԲ. (36000)
 10 բարձրանայ և ԼԶԲ. (36000) խոնարհի: Եւ ի մեծ աստիճանացն
 ամեն գիր առնու Ե. (5), Ե. (5) և ի փոքրն՝ Ռ. (1000), Ռ. (1000): Եւ
 ի գիրսն՝ ԼԶ. (36) բարձրանայ և ԼԶ. (36) գիր խոնարհի, և զբարձ-
 րանայն յԱյծեղջիւրէն և յայքէն առնու և զխոնարհիւն՝ ի քէն և ի
 15 Խեցգետնէն: Եւ զձմեռն և զգարունն բարձրանայ, և զամառն և զա-
 շունն խոնարհի: Եւ բարձրանալովն բերէ զգարուն և զամառն և խո-
 նարհելով՝ զաշունն և զձմեռն: Եւ բարձրանալովն ի ծնունդ շարժէ
 զերկիր և զծննդականս և խոնարհելովն՝ ի յամլութիւն փոխէ զարա-
 20 րածս: Եւ բարձրանալովն մեծացուցանէ զօրն և խոնարհելովն փոք-
 րացուցանէ: Եւ բարձրանալովն ջերմացուցանէ զհիւսիս և խոնար-
 հելովն՝ զհարաւ: Եւ բարձրանալովն՝ յորդիլ յարուցումք առնէ գե-
 տոց և խոնարհելովն՝ նուազութիւն բերէ ջրոց: Եւ զբարձրանալն
 յաջ կողմն աշխարհի առնէ և զխոնարհիւն՝ ի ձախ: Եւ ի բարձրա-
 նայն խնդութիւն բերէ արարածոց, զի բերէ մեզ զուրախարար գա-
 25 րունն, և խոնարհելովն՝ տրամութիւն, զի բերէ մեզ զձմեռն զժո-
 խոցն: Բարձրանալովն ի տունս բնակողացն զգեղեցկութիւն դի-
 մացն միջնորդութեամբ նշուլիցն շնորհէ և խոնարհելովն զերեսս
 իւր ծածկեալ ամփոփէ և կարօտութիւն ոչ տեսողացն առնէ: Բարձ-
 րանալովն՝ ի բարձրութիւն երկնից հասանէ և խոնարհելովն՝ ի խո-
 30 նարհութիւն երկրիս զիջանէ: Եւ ըստ ԺԴ. (14) ընթացից Արեգա-
 կանս՝ եթէ որ առաքինութեամբ թեակոխէ զԺԴ. (14) աստիճանս
 հաւատոց, նա ի բարձրութիւնս երկնից ժամանէ, ուր Քրիստոս
 նստի ընդ աջմէ Աստուծոյ: Եւ եթէ մոլորութեամբ խոնարհի յաս-
 տիճանաց հաւատոյն, նա մերձենայ յերկիր և անկանի ի դժոխս:
 35 Եւ զայս ևս գիտելի է, զի աստիճանքս ի կենդանակերպքն է,
 և չափ աստիճանացս՝ քանակութիւն բոլորակութեան Արեգականն է,
 զի նա չափէ զաստիճանսն: Եւ աստ կրկին կերպիւ չափեցին իմաս-

տասերքն զաստիճանքս զայսոսիկ՝ անմարմին տեղեաւ և տեղեաւ
մարմնոյ: 2ի օգաչափութեամբ զերկնային ճանապարհք շափեցին
զշափզսն զայն, զոր գնայ Արեգակն ի բարձրութիւնս երկնից ըստ
անմարմնութեան տեղոյն, զորս ոչ կարեմբ իմանալ ըստ քանակին
5 քանակութեան: Եւ տեղեաւ մարմնոյ ըստ երկրաչափութեան արհես-
տի զնոյն աստիճանացն շափ շափեցին յերկրի, զի միջնորդութեամբ
երկրիս տացեն մեզ զճանօթութիւն երկարութեան միոյ աստիճանի,
զի նովաւ զայն իմանալ մարթասցուք: Արդ՝ զմի թաւալումն Արե-
գականն, որ առնէ զմի մեծ աստիճան, որ է մասն մի, Ծ. (500)
10 ասպարեզ ասացին, և զասպարեզն՝ Ծ. (500) նետաձիգ: Եւ յոր-
ժամ օրն ԺԲ. (12) ժամ լինի, 34. (360) հոլովումն առնու և ճՁՌ
(180000) ասպարեզս ընթանայ: Եւ յորժամ օրն ԺԵ. (15) ժամ
լինի, նԾ. (450) հոլովումն առնու և ՄԻԵՌ. (225000) ասպարեզս
ընթանայ: Եւ ոմանք յերկրաչափաց ասացին զերկրի լայնութիւն և
15 զերկայնութիւն ճՁՌ. (180000) ասպարեզս ըստ ԺԲ. (12) ժամու
աւուրն, և այլք՝ ՄԻԵՌ. (225000) ասպարեզս՝ ըստ ԺԵ. (15) ժամու
աւուրն: Եւ իմա այժմ զորքանութիւն միոյ թաւալման Արեգականն,
զի մի թաւալումն Ծ. (500) ասպարեզ է, և Ա. (1) ասպարեզն Ծ.
(500) նետաձիգ է, զի ասպարեզն թաւալման պատկեր է: Եւ Ա. (1)
20 թաւալումն Արեգական ՄՌ. (200000) և ՍՌ. (50000) նետաձիգ է,
և Ժ. (10) թաւալն՝ ԻԵՃՌ. (2500000) է, և Ի. (20) թաւալն՝ ՄՃՌ.
(5000000), և Խ. (40) թաւալն՝ ՃՃՌ. (10000000), որ է Ռ. (1000)
բիւր, 2. (80) թաւալն՝ Ս. (2000) բիւր, ՃԻ. (120) թաւալն՝ Վ. (3000)
բիւր, ՃԿ. (160) թաւալն՝ Տ. (4000) բիւր, Մ. (200) թաւալն՝ Բ.
25 (5000) բիւր, ՄԽ. (240) թաւալն՝ 3. (6000) բիւր, ՄԶ. (280) թա-
ւալն՝ Ի (7000) բիւր, 3Ի. (320) թաւալն՝ Փ. (8000) բիւր, 3Կ. (360)
թաւալն՝ Բ. (9000) բիւր: Զայս ի հասարակութեան, յորժամ ԺԲ.
(12) ժամ ի վերին կիսագունդն գնայ, առնու 3Կ. (360) թաւալ
Արեգակն՝ Բ. (9000) բիւր նետաձիգ: Եւ այսչափ թաւալ ի ներ-
30 քին կիսագունդն գնայ, որ առնու ընդ տիւն և ընդ գիշերն ԺԸՌ.
(18000) բիւր նետաձիգ: Եւ երբ ԺԵ. (15) ժամ ընթանայ զտիւն՝
առնու նԾ. (450) թաւալ, որ է ԺԱՌ. (11000) և ՄԾ. (250) բիւր
նետաձիգ, և գիշերն՝ 3ԶԾ. (6750) բիւր նետաձիգ:

Եւ ՏԾ. (4500) բիւր նետաձիգ բարձրանայ և ՏԾ. (4500) բիւր
35 խոնարհի: Ահա յայտնի եղև ամենիցն շափ, զի ԼԶ. (36) գիր
բարձրանայ և ԼԶ. (36) խոնարհի, և ի մեծ աստիճանսն՝ ճՁ. (180)

աստիճան բարձրանայ և ճՁ. (180) խոնարհի, և ի փոքր աստի-
ճանսն՝ ԼԶՌ. (36000) բարձրանայ և ԼԶՌ. (36000) խոնարհի, և ի
հոլովսն՝ ճՁ. (180) հոլով բարձրանայ և ճՁ. (180) խոնարհի, և ի
մասունսն՝ ճՁ. (180) մասն բարձրանայ և ճՁ. (180) խոնարհի, և
5 յասպարեզսն՝ ՂՌ. (90000) բարձրանայ և ՂՌ. (90000) խոնար-
հի, և ի նետաձիգսն՝ ՏԾ. (4500) բիւր նետաձիգ բարձրանայ և ՏԾ.
(4500) խոնարհի: Եւ արդ տումարական մակացութեանս յայտնի
արարաք զչափս զայս ըստ որքանութեան թուոց իւրոց:

Նոյնպէս պարտիմք և զհանրիցն զչափ գիտել, զի ամենեցուն
10 շափ եղ Աստուած և առանց շափոյ ինչ ոչ արար, որ ինչ շարաբերի՝
մասունք ըստ տումարական արհեստիս:

ՅԱՂԱԳՍ ՈՐՔԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՓՈՒՑ, ԹԷ
ՎԱՍՆ ԷՐ ԱՅՍՊԷՍ ԶԱՓԱԲԵՐԵՑԱՆ

Նախ խնդրելի է, թէ վասն էր մի անգամ շրջաբերի և շրջագա-
15 յի երկինքն յաւուրն, երկրորդ՝ ընդ էր՝ Լ. (30) աստիճան եղ կեն-
դանակերպ մի, երրորդ՝ ընդ էր՝ Լ. (30) մասն մի ժամ է, չորրորդ՝
ընդ էր՝ ԻԳ. (24) ժամն մի օր է, հինգերորդ՝ ընդ էր՝ շաբաթն է.
(7) օր է, վեցերորդ՝ ընդ էր՝ ամիսն Լ. (30) օր է, հօթներորդ՝ ընդ
էր՝ տարին ԺԲ. (12) ամիս է, ութերորդ՝ ընդ էր՝ տարին 3Կ. (360)
20 օր է, իններորդ՝ ընդ էր՝ տարին Գ. (4) եղանակ է, տասներորդ՝
ընդ էր՝ ամն տարի անուանեցաւ, մետասաներորդ՝ վասն յատուկ
շրջանաց Արեգական և Լուսնի, երկուտասաներորդ՝ վասն հասա-
րակ շրջանաց նոցա:

1. վասն առաջնոյն գիտելի է, թէ երկինքն նախ մի անգամ
25 հոլովի յաւուրն, վասն զի յառաջնում աւուր ստեղծաւ, և առաջին
օրն մի էր ի թիւս աւուրց, զի առաջին էր: վասն որոյ և երկինքն
մի անգամ շարժի յաւուրն, զի առաջին շարժումն է, որպէս միակն,
որ սկիզբն է թուոց: Եւ ինքն մի է և առաջին, և միշտ զմիակ շար-
ժումն նա ունի ի թիւսն, և որք զկնի նորա՝ բազմաւորակին, որ-
30 պէս Բ. (2), Գ. (3), Դ. (4) և այլն: Նոյնպէս և երկինքն յամենայն
շարժմանս սկիզբն է և առաջին և միշտ նա ունի զմիակ շարժումն:
Երկրորդ՝ զի երկինքն շափ է աւուրն, զի ի կիտէ ի նոյն կէտ ընթա-
նալով բովանդակէ զօրն, և օրն մի է: վասն որոյ և մի ունի զշար-

ժուամն ի միում աւուր, որպէս Արեգակն և Լուսին, որ արարիչք են աւուրցն, նաև այլք ի մոլորակացն զմիակի ունին շարժումն: Երբորդ՝ զի միակն պարզ է ի թիւն, վասն որոյ զմիակն շարժումն ունի միշտ, որ պարզ է ի շարժմունս, այսպէս և երկինքն պարզ է ի
5 ձևս, զի բոլորակ է, վասն որոյ զպարզ շարժումն ընկալաւ թուով եզակի: Չորրորդ՝ զի ամենայն ինչ շարժում և կշռով արար Աստուած, որպէս զի հանդարտութեամբ մնայցեն ի կայի իւրեանց: Եւ օրինակ կենդանացս բնութիւն, որ յառաւելութենէ տարերաց լինի ապականութիւն, նոյնպէս և բնութիւն արարածոցս յառաւելութենէ սոցս վնասի: Այսպէս և երկինքն, եթէ յաւուրն Բ. (2) կամ Գ. (3) անգամ շուրջ առնոյր, զօրանայր սաստկապէս հողմն վասն ասագին սրընթացութեան, և ցրուէր զծովս և հոսէր զերկիր: Վասն որոյ կշռարար ետ նմա Աստուած զմիակի շարժումն, զի եթէ փոքր և շնչին գունդ Արեգական վասն արագ սլացութեան այնքան ասագին
15 ճայթմունք արձակէ, մինչ զի մերձակայ աշխարհն այն պղինձս հարկանեն, վասն ոչ կարելոյ տանել լսելեացն զահագին ճայթմունս, ապա զինչ՝ համարիս զանշափելի մեծութեան երկնից, եթէ երկիցս և կամ երկիցս անգամ առնոյր շուրջ, զիարդ՝ տեէր արարածքս զօրութեան հողմոյն, որ պատճառէր ի նմանէ: Հինգերորդ՝ զի
20 թէ պակաս զնալովն քան զմի անգամ շարժումն, զոր կշռեաց Աստուած, որպէս թէ Դ. (2) կամ Ե. (3) օրն մի անգամ հողմվէր, ասագին ծանրութիւն երկրի և ծովուց ոչ կարէր զկայ առնուլ զմիշոցիս, այլ խոնարհեալ ի ներքին կիսագունդն, քակեալ ապականէր, որպէս ի պակասութենէ տարերաց՝ բնութիւն կենդանեաց և տարրական արարածոցս: Վեցերորդ՝ զի յարագ շարժութենէ նորա և ի շփմանէ ծնանի ջերմութիւն և բարեխառն պահէ զաշխարհս ի հիւսիսային խստաշունչ ցրտութենէն. արդ՝ եթէ այլևս սրընթացութեամբ ընթանայր, քան զոր այժմս ընթանայ, կիզէր և շորացուցանէր զաշխարհս, և ոչ կարէին զգէմ ունել զջերմութեան այնր, վասն այն մի անգամ շարժի: Եօթներորդ՝ զի թէ Բ. (2) անգամ յաւուրն շուրջ գայր երկինքն, կարի փոքրացուցանէր զտիւն և զգիշերն, և անհանգիստ լինէր աշխարհս: Զի ոչ ի տիւն ի գործս իւրեանց հանգիլ կարէին վասն փոքրութեան օրն, զի անկատար մնայր ամենայն գործ, և ոչ գիշերն՝ ի քունն վասն տքնութեան: Որպէս յամառն տքնութեամբ շարժարիմք և ի ձմեռն վասն ոչ զլուս առնելոյ գործոյն, նեղիմք: Իսկ մի անգամ շուրջ զալովն երկար

բերէ զտիւն և զգիշերն, և ամենայն գործ մեր հանգիստ, բարէպէս վճարի:

Եւ թէ տարակուսեցի որ, եթէ երկինքն թող շարժէր Բ. (2) անգամ, տիւն և գիշերն ընդ էր՝ փոքրանայր, ասելի է՝ վասն զի
5 լուսաւորքն ունին հասարակ և յատուկ շարժումն. յատուկ շարժումն յարեմտից յարեելս, և այս յայտ է ի Լուսնէն, իսկ հասարակ շարժումն՝ յարեելից յարեմուտս: Եւ յատուկ շարժումն լինքեանց շարժումն՝ յարեելից յարեմուտս: Եւ երկինքն յարեելից յարեելս, և հասարակն՝ ի բնութենէ երկնիցն, զի երկինքն յարեելից յարեմուտս ձգի և զնոսա բնութեամբ ըստ ինքեան ձգէ: Եւ օրինակ քեզ մտտս ձգի և զնոսա բնութեամբ ըստ ինքեան ձգէր զէպ յառաջ գնայ, և քարն մըջինն, որ ի վերայ երկանարարի ուղիղ դէպ յառաջ գնայ, և քարն բնութեամբ ըստ ինքեան յետ կոյս շարժէ: Այսպէս և երկինքն. զյատուկ շարժումն նոցա բնութեամբ շարժեալ ձգէ ըստ ինքեան ի հասարակ շարժումն՝ հասարակել նմա, վասն որոյ արագ ընթանալովն և զնոսա արագապէս ձգէր ըստ ինքեան և փոքրացուցանէր
15 զտիւն և զգիշերն և անհանգստութիւն գործէր աշխարհի: Վասն որոյ վաշ արարչական բնութեան, որ ի վերայ ԻԴ. (24) ժամու կշռեաց վաշ արարչական բնութեան առ օրն, զի մի կրկին զալովն կարի զմի անգամ շարժումն երկնից առ օրն, զի մի կրկին զալովն կարի փոքրացուցէ, և այնպէս նեղիցին, և մի ըստ Բ. (2) աւուր շափ զալովն ի երկարութենէն ձանձրացուցէ: Այլ մի անգամ շուրջ զալովն զԴ. (24) ժամ աւուրն շափեցէ և այնպէս զմիշինն գնալով ճանապարհ զաշխարհս ի հանդարտութեան պահեցէ, և զիւրութեամբ վարեցէ ըստ կարողութեան մերոյ:
2. Երկրորդ՝ ասելի է, թէ ընդ էր՝ Լ. (30) աստիճան արար զմի կենդանակերպն. նախ արար զայս ըստ քանակութեան Արեգականն, զի ըստ Լ. (30) թաւալմանն կշիռ գտցի աստիճանքն, զի ի կատարել
25 զաւուրս ամսոյն ի զլուս ելանիցէ զկենդանակերպն: Երկրորդ՝ զի զաւուրս ամսոյն է, երեքն զեռանձնեան տէրութեան զթիւն Լ. (30)ն երեք տասն է, երեքն զեռանձնեան տէրութեան զթիւն էրբերէ և տասն՝ զկատարելութեան: Եւ զի Արեգակն օրինակ է երբորդութեան, կամեցաւ Աստուած, զի կատարեալ աստիճանօք արրորդութեան, կամեցաւ իւր լիւրաքանչիւր կենդանակերպ: Երրորդ՝ շավեցէ զճանապարհս իւր լիւրաքանչիւր կենդանակերպ: Երրորդ՝ ըստ մոլորակացն, զի Գ. (3), Գ. (3) մոլորակք, և նոքա ըստ թուոյ երից անձնաւորութեանցն կատարեալ տասնեկի թուովն ընթանայցեն զկենդանակերպսն, վասն որոյ և ըստ երից անձնաւորութեանցն երիւք մտօք բացայայտեցաւ խորհուրդ Լ. (30) աստիճանացս:
3. Երրորդ՝ խնդրելի է, թէ վասն էր՝ Լ. (30) մասն մի ժամ է:
35 Զի Լ. (30) աստիճան է մի կենդանակերպն, և Արեգակն Լ. (30)

Թաւալմամբն բովանդակէ զմի կենդանակերպն, այսպէս և ի. (30) մասն կատարէ զմի ժամն: Դարձեալ՝ զի երեք անձնաւորութիւնք կատարէ զմի աստուածութիւն, զի կատարեալ թիւ է և ունի սկիզբըն, մէջ և կատարած, այսպէս և մասունք երից տասանց կատարէ զմի ժամ: Դարձեալ, զի երից տասանց աւորց զոյանայ մի ամիս, այսպէս և յերից տասանց մասանց զոյանայ մի ժամ: Դարձեալ՝ զի յերից տասանց թուոց կոչի մի ի. (30), այսպէս և յերից տասանց մասանց՝ մի ժամ:

4. Չորրորդ՝ տեսանելի է, թէ վասն էր՝ ԻԴ. (24) ժամ է աւուրն: 10 Ըստ եկեղեցւոյ վարդապետաց՝ նախ ԻԴ. (24) մարգարէք տուան մարդկային բնութեանս, որ աւետեցին մեզ զգալուստ իմանալի Արեգական յաշխարհս, այսպէս և ԻԴ. (24) ժամք տուան մեզ առ օրն, որ ի կատարման աւուրն լրման անդադար աւետեն մեզ զգալուստ զգալի Արեգականս ի աշխարհս: Երկրորդ՝ զի օրն տիւ է և 15 գիշեր, և տիւն լուսատու ունի ինքեան զԱրեգակն, և գիշերն՝ զԼուսինն: Արդ՝ ԺԲ. (12) մարգարէքն ի Լուսինն՝ հին օրինացն, որպէս ի գիշեր ընդ աղօտ տեսութեամբ տեսանէին զխորհուրդ տնօրինութեան Քրիստոսի, իսկ առաքեալքն ի տիւ՝ նոր օրինացս, ակներև տեսութեամբ ականատեսք եղեն մարդեղութեան Քրիստոսի, որպէս 20 ասէ Յոհանէս, որ «էրն ի սկզբանէ»¹, զորմէ լուսք, որում ականատեսք իսկ եղաք: Եւ ըստ թուոյ սոցա կարգեցաւ ժամ աւուրն առ ի վայելումն և ի տեսութիւն զգալի աւուրս Արևու Երրորդ՝ ըստ տեսլեանն ԻԴ. (24) էին երիցունքն ի պարս սրբոցն, որում տուաւ սպիտակ արկանելիս, զծաղկեալ առաքինութեանց նոցա զպայծառու- 25 թիւն, այսպէս և ըստ ԻԴ. (24) ժամու տուրնջեանն և գիշերոյ, տուաւ նոցա սպիտակ արկանելիս տուրնջեանն ժամուց՝ զԱրեգակն և գիշերին՝ զԼուսինն: Իսկ ըստ իմաստասիրաց, զի իմաստասիրութիւն ի ԻԴ. (24) մասանց կատարի, այսպէս և օրն ի ԻԴ. (24) ժամուց: Եւ նախ՝ ըստ քերթողին, զի Զ. (6) են մասունք քերականութեան. նախ՝ վերծանութիւն ներկուս ըստ առողանութեանցն, երկ- 30 րորդ՝ զբուցատրութիւն ըստ ներգոյս քերթողական յնդանակս, երրորդ՝ լեզուաց և հնագէտ պատմութեանց առ ձեռն բացատրութիւն, չորրորդ՝ ստուգաբանութեան զիւտ, հինգերորդ՝ համեմատութեան տեղեկութիւն, վեցերորդ՝ դատումն քերթածաց: Եւ Ժ. (10) առողա-

նութիւնքն՝ շեշտ, բութ, պարոյկ, երկար, սուղ, թաւ, սոսկ, ապա- Թարց, ենթամնայ, ստորատ: Եւ Ը. (8) մասունք բանի, որ են անուն, բայ, ընդունելութիւն, յօդ, զերանուն, նախադրութիւն, մակ- րայ, շաղկապ, որ լինին ԻԴ. (24): Երկրորդ՝ Ե. (5) ձայնք են Պոր- 5 փիրի. սեռ, տեսակ, տարբերութիւն, յատուկ, պատահումն, և Ե. (5) են նդանակ ստորոգութեանցն, որ չետ այսորիկ բերին. եթէ է՞, զինչ է՞, որպիսի ինչ է՞, վասն էր է՞ և առ որպիսի ինչ ունի սեռ և տեսակ, և ԺԴ. (14) քաղաքական կացուցմունք ճարտասանիցն, որ լինին ԻԴ. (24): Երրորդ՝ իմաստասիրութիւն բաժանի ի տեսականն 10 և ի գործնականն և Զ. (6) սահմանք իմաստասիրութեան. առաջինն, որ ասէ թէ իմաստասիրութիւն է գիտութիւն գոյիցն, ըստ որում գոյքն են, երկրորդ՝ գիտութիւն աստուածայնոց և մարդկայնոց իրողութեանց, երրորդ՝ որ ասէ՝ իմաստասիրութիւն է խոկումն մահու, չորրորդ՝ իմաստասիրութիւն է նմանութիւն Աստուծոյ ըստ 15 կարողութեան մարդկան, հինգերորդ՝ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց, վեցերորդ՝ իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստութեան, որ լինի Ը. (8): Եւ Ժ. (10) ստորոգութիւնքն Արիստոտելի, որ է գոյացութիւն, որակ, քանակ, առ ինչ, ուր, երբ, կալ, ունել, առնել, կրել, և այս լինի ԺԸ. (18): 20 Եւ Ե. (5) հակադրութիւնքն, որ է՝ հակասականն, ներհականն, ենթաներհականն, անորիշն և իւրաքանչիւրն, որ լինի ԻԴ. (23), և բացերեական բանն առնէ ԻԴ. (24), որ ամենայն իմաստասիրութիւնք սոքօք բացակատարին ըստ ԻԴ. (24) ժամու աւուրցն որ ըստ թուոյ սոցա ներկայացաւ ի բովանդակութիւն միոյ աւուր: 25 Իսկ երկրորդաբար՝ ըստ տումարական արհեստիս. նախ ըստ թուոյ լուսաւորացն, զի ԺԲ. (12) կենդանակերպ է և է. (7) մոլորակ և Ե. (5) աստեղք աւել աւուրցն, որ Լուծ, Եղջերու, Մկրաւորի, Փառագնոտի, Արտախոյր: Ըստ ԻԴ. (24) նշանաւոր լուսաւորացս ԻԴ. (24) արարաւ և ժամ աւուրն: Երկրորդ՝ ըստ թուական արհեստին, 30 զի թիւ անուն իւր մասանցն շարագրութեամբ ի ներքոյ տասնեկին, բաղադրեալ ծնանի զթիւս ԻԴ. (24): Զի ասա մէկ և բեր Բ. (2) ի վերայ, լինի Գ. (3) և բեր Գ. (3) ի վերայ, լինի Զ. (6), և Զ. (6) ն և Գ. (3) ն առնէ ինն, և բեր Գ. (4) ի վերայ, առնէ ԺԳ. (13) և ԺԳ. (13) և Զ. (6) առնէ ԺԹ. (19), և միակն և երկեակն և երրեակն և քառեակն, և յ ծնանի զսոսա, առնէ ԻԳ. (23), և թիւ անունս՝ ԻԴ. 35 (24): Եւ ըստ սմա բաղադրական թուոցս բաղադրեցաւ և թիւ ժա-

¹ Յովհ. Ա. 1:

մուցն ԻԴ. (24): Երրորդ՝ զի աշխարհ՝ որ յերկնքէն է և յերկրէ, ԻԴ-
(24) թուով զետեղեցաւ՝ երկինքն ժԲ. (12) կենդանակերպով, եր-
կիրս ժԲ. (12) մասամբ, այսպէս և օր աշխարհիս ԻԴ. (24) ժամաւ
ժողովեցաւ:

5 Արդ՝ որովհետև ասացաք վասն աւուրց ժամու, ասելի է և
վասն թուոց և որպիսութեան և յատկութեան աւուրց:

4ա. Յաղագս աւուրց. նախ խնդրելի է վասն վեցերորդ աւուրն,
թէ վասն էր՞ զերկնայինսն կատարեալ է ետեղծ և զերկրաւորս՝
ըստ կարգի յաւուրս Զ. (6): Նախ, զի իմանալիքն մշտնջենաւորք
10 են, ի սակաւ վայրկենի կատարեցան, իսկ երկրաւորքս՝ ժամանա-
կեայ: Եւ ժամանակն կարգ ունի. առաջին, միջին և վերջին: Երկ-
րորդ՝ ասեն թէ ի սկիզբն աշխարհիս արար զբնութիւն յանկարծակի
այլ բնութիւն յամելով, և ըստ կարգի յանկատարութենէ ի կատա-
րելութիւն ելանէ: Երրորդ՝ զի երկիրս այս տեղի է ուսման մեր,
15 ըստ կարգի կատարեցան, զի և մեր զամենայն ինչ ըստ կարգի
ուսուցուք և մի անկարգ և շփոթեալ եղիցուք: Չորրորդ՝ զի մարդն
տէր և իշխան է երկրաւոր գոյից, գիտասցէ զիշխանութիւն իւր ուղ-
ղել ըստ կարգի և մի անկարգ և անիրաւութեամբ առնել: Հինգե-
րորդ՝ նշանակէ վեց թիւն, որ է կատարեալ, թէ բոլոր կատարելու-
20 թիւն աշխարհիս յամենակատարէն Աստուծոյ ստեղծեալ կատարե-
ցան՝ երկինք և երկիր և ամենայն ինչ:

4բ. Երկրորդ՝ վասն էր՞ ասէ գիրն «եղև օր մի» և ոչ թէ առաջին
և այլն ըստ կարգի:

Ասելի է՝ նախ զորքանութիւն ժամուցն ցուցանէ, թէ տիւ և գի-
շերն ԻԴ. (24) ժամ լինի օր մի բնական: Երկրորդ՝ զի մի և նոյն
25 օրն կատարի դարձմամբ Արեգական ի կիտէ ի նոյն կէտ արեւելից.
Երրորդ՝ զի յորժամ կատարին է. (7) աւուրքն, դառնամբ յառաջին
օրն, որ է միեւնոյն: Չորրորդ՝ նշանակէ զփութանցութիւն աւուրցս
մեր, զի ամենայն ժամանակը մեր անցանեն իբրև զմի օր անզգա-
30 յարար: Ըստ այնմ՝ «հաղար ամ յաչս Տեառն իբրև զօր երեկի,
զի անց որպէս պահ մի զիշերոյս»: Հինգերորդ՝ այս մին օր է, որ
կրկնուելով կատարէ զշաբաթ և զամիս և զտարի և զգար կենցա-
ղոյս և հասանէ ի վերջին օրն, որ է մի օր աներեկ և անփոխանորդ:

4գ. Երրորդ՝ տեսանելի է, թէ զինչ՞ է յատկութիւն միաշաբաթ

1 Սաղմ. 204:

աւուրն, որ է կիրակին: Այս է՝ նախ զի սկիզբն է և առաջին ամե-
նայն աւուրց, զի նա կրկնուելով առնէ զայլ աւուրս, որպէս ասա-
ցաւ: Երկրորդ՝ զի ի նմա եղեն երկինք և երկիր, հրեշտակք և լոյսն
և այլ տարերք, որ են է. (7) գործք արարչութեան: Երրորդ՝ բազում
5 աստուածախոսութիւնք ի նմա եղեն՝ յեւանին նոյի ի տապանէն,
և առ Աբրահամ, և առ Մովսէս ի Սինեայ լեան, և տւուրթիւն օրի-
նացն ի կիրակի եղև: Չորրորդ՝ պատուեցաւ յարութեամբն Քրիս-
տոսի և իջմամբ Հոգւոյն Սրբոյ ի դասս առաքելոցն: Հինգերորդ՝ օր
է հասարակ ամենայն մարդկան և զալստեանն Քրիստոսի և հա-
10 տուցման ըստ իւրաքանչիւր գործոց:

4դ. Չորրորդ՝ խնդրելի է և վասն վերջին աւուրն, թէ զինչ՞ է
յատկութիւն աւուրն վերջին:

Նախ զի վախճան է և սկիզբն. վախճան է ժամանակի և սկիզբն
յախտենի և մշտնջենաւոր կենացն, երկրորդ՝ զի աներեկ է, եր-
15 րորդ՝ զի անփոխանորդ է գիշերոյ, շորրորդ՝ զի օր զնա ոչ երկրոր-
դէ, հինգերորդ՝ զի անշարժ և անփոփոխ է ժամուց, մասանց և
բուպէից:

Դարձեալ այսպէս զանազանին սոքա երեքեան աւուրք, այսին-
քըն առաջին օր ստեղծման և միջին օր փոփոխման՝ մինչ ի կատա-
20 րած և վերջին օր յարութեան: Դարձեալ՝ զի առաջին օրն եղև անա-
ռաւօտ և վերջինն է աներեկոյ և միջինն՝ ամենայն աւուրք ունին
առաւօտ և երեկոյ:

4ե. Հինգերորդ՝ խնդրելի է, թէ որն՞ է սկիզբն աւուրն:

Նախ գիտելի է, զի կրկին է օր՝ այսինքն բնական և արուեստա-
կան: Արուեստական է ծագումն լուսոյ մինչև յերեկոյ առ հասարակ
յազգս, իսկ օր բնական, որ է կիտէ ի կէտ ԻԴ. (24): Եւ է զանազա-
նութիւն սոցա կրկին, նախ զի բնական օրն է տիւ և գիշեր, իսկ
արուեստական օրն՝ միայն տիւ: Երկրորդ՝ բնական օրն հաւասար-
աշափ է, զի ոչ առաւելու և ոչ նուազի, իսկ արուեստական օրն առա-
30ւելու և նուազի: Եւ բնական օրն զանազանապէս առեալ է ի զանա-
զան ազգս. զի հրէայքն և ասորիք զերեկոյն զնեն սկիզբն բնական
աւուրն՝ ասելով «եղև երեկոյ, եղև վաղորդեան օր մի»¹, իսկ աստե-
ղադէտք զհասարակ օրն, յորում Արեգակն ի բարձունս իւր հասանէ:
Իսկ այժմ քրիստոնէիցս կրկին է սկիզբն աւուրն, այսինքն մէջ գի-

1 Մենդ. Ա6:

շերն և առաւօտն: Զի ի մէջ գիշերի ծնաւ Քրիստոս և ի մէջ գիշերի յարեալ ի գերեզմանէն, վասն որոյ տօն առաջի աւուրն ի մէջ գիշերի սկսանի, և մեծամեծ տօնք՝ յերեկոյ, որպես ասեմք Զ. (6)-շաբթի երեկոյն կիրակամուտ: Իսկ միւսն է ըստ ծագումն, 5 յորում զպահճք և զուտիք բաժանեն, այսինքն լոյսն և գիշերն:

4գ. Վեցերորդ՝ խնդրելի է և վասն յատկութեանց, որ աւուր հետևին: Նախ վասն յատկութեան առաւօտու. առաջին՝ զի սկիզբն է տուրնջեան և վախճան գիշերոյ, երկրորդ՝ իստն է ի լուսոյ և ի խաւարէ, երրորդ՝ մերժէ զխաւար, չորրորդ՝ մերժին գողք և զազանք, 10 հինգերորդ՝ ցնծութիւն է աշաց և սրտից, վեցերորդ՝ որքան յամէ, լոյսն պայծառանայ, և խաւարն նուազի, Եօթներորդ՝ հասուցանէ առ Արեգակն, ութերորդ՝ զնոյն բնութիւն լուսոյ ունի, իննիւրորդ՝ է առաջին լոյս, տասներորդ՝ նուազին գիշերային լոյսը:

Իսկ յատկութիւն հասարակ աւուր, որ է կէսօր տուրնջեան. նախ 15 զի պայծառ է լոյսն և զի ջերմ է և զի շոր է և զի Արեգակն ի բարձրութիւն իւր է, և զի անստուեր է, և զի հաւասար և մէջ է տուրնջեան, և զի Զ. (6) ժամ է, որ է կատարեալ թիւ, և զի ժամ է կերակրոյ, և զի կարօտին հովանոյ, և զի ժամ է նշանաւոր:

Իսկ յատկութիւնք երեկոյի. նախ զի վախճան է տուրնջեան և սկիզբն գիշերոյ, և զի մերժի լոյսն և տարածի խաւարն, և զի դադարին ի գործոյ, և զի առնուն մշակք զվարձս, և զի զառնան ամենեքեան ի բնակութիւնս իրեանց, և զի ննջելոյ է ժամ, և զի փակին դրունք տանց, և զի զգայութիւնք մարմնոյ զինքեանս խնուն, և զի պահապանք առ պարիսպս կացուցանեն, և զի հօտք հովուաց՝ 25 առ փարայսս և առ գոմս ածին:

Իսկ յատկութիւն գիշերոյ. նախ զի ի նմա շրջին զազանք և կերակրին, և զի հանդիւն աշխատեալքն, և զի ուժ առնուն դարձեալ գործելոյ, և զի ստուեր երկրի է, որ ընդ մեզ և Արեգական զնի, և զի նուազ լոյսք երևին, և զի վնասակար է աշաց, և զի ծածկութիւն է զանազան գունոց, և զի ժամանակ է երկիւղի և երազից և ցնորից ածող, և շարագործացն ապաւեն, և ամօթոյ բարձող: Եւ գիշեր՝ զի զարշանայ երբ, որ է օր:

5. Հինգերորդ՝ ասելի է, թէ ընդ էր՞ շաբաթն է. (7) օր է:

Ասելի է թէ վասն բազում պատճառաց. նախ՝ արար ըստ թուոյ 35 առաջին աւուր արարչութեան, որ գոյացոյց զհրեշտակքն, զհրեղէն երկինքն և զլոյսն առաջին. նաև զԴ. (4) տարերբը, որ է է. (7),

այսպէս և լէ. (7) օր զխաւորեաց զշաբաթն: Երկրորդ՝ ըստ թուոյ արարչութեան աւուրցն, զի ի Զ. (6) օր արարչագործեաց և լէ. (7) երրորդին հանգեալ: Երրորդ՝ ըստ կարգադրութեան Զ. (6) երրորդ աւուրն, զի զԱդամ և զԵւայ, զԱրեգակն և զԼուսինն, զԽոյ և զնիսան և զարարչութեան Զատիկն ի միում աւուր կարգադրեաց՝ սկիզբն լինել և զլուսն ամենայն Զատկաց և տօնից ժամանակաւոր յաւիտենիս, որ է. (7) օրիւ կատարի: Չորրորդ՝ զի է. (7) են զիրք ամենայն արարածոց ըստ շորից տարերց և երից երկնից, այսպէս և է. (7) եղեն զիրք ամենայն աւուրց: Հինգերորդ՝ ըստ է. (7) մոլորակացն, 10 զի իւրաբանչիւր մոլորակ մի աւուր իշխան լիցի: Վեցերորդ՝ ըստ է. (7) դարուցդ, զի է. (7) են դարբդ և է. (7)-ամբ աւուրքս չափեսցին և կատարեսցին: Եօթներորդ՝ զի է. (7) են շնորհք Հոգւոյն Սրբոյ, կամեցաւ Աստուած զէ. (7) օր շաբաթուն զեօթնեկի շնորհօքն զարդարեսցի, և մի անդարդ և անփառ երեսցի:

6. Վեցերորդ՝ տեսանելի է, թէ ընդ էր՞ ամիսն Լ. (30) օր է: Նախ՝ ըստ Արեգականն, զի Արեգակն զմի ժամն Լ. (30) մասամբ չափէ, այսպէս և զմի ամիսն Լ. (30) աւուրքք: Երկրորդ՝ զի զմի կենդանակերպն յԼ. (30) աստիճան ընթանայ, և սոքօք զմի ամիսն Լ. (30) օր առնէ, իսկ Լուսինն՝ զի Լուսինն զԺԲ. (12) կենդանակերպն յԼ. (30) օրն պատէ և զամիսն Լ. (30) օրն վճարէ: Երկրորդ՝ զի Լ. (30) ժամ առնէ ի մի կենդանակերպն և Լ. (30) օր զմի ամիսն առնէ: Երրորդ՝ զի Լուսինն մարդոյն օրինակ է, զի ծնանելով աճէ և լրանալով մաշի, և մարդն Լ. (30)-ամեայ ստեղծաւ և Լ. (30)-ամեայ յառնելոց է, այսպէս և Լուսինն զամիսն Լ. (30) աւուրքք ի վճար ելանէ:

7. Եօթներորդ՝ խնդրելի է, թէ ընդ էր՞ տարին ԺԲ. (12) ամիս է: Նախ զի ԺԲ. (12) կենդանակերպք են յերկինս և ԺԲ. (12) ամիսք են յերկրի: Երկրորդ՝ զի ԺԲ. (12) մասունք են աշխարհի, յորս տիրեն կենդանակերպք, նոյնպէս և ԺԲ. (12) ամիսք են յաշխարհի, յորս չափին ի կենդանակերպքն: Երրորդ՝ զի և մարգս փոքր աշխարհ է և ԺԲ. (12) անդամօք է բաղկացեալ, նոյնպէս և տարի մեծ աշխարհիս ԺԲ. (12) ամսօք է բոլորեալ: Չորրորդ՝ զի օրն ԺԲ. (12) ժամով է չափեալ, և տարին ԺԲ. (12) ամսօք: Հինգերորդ՝ զի զզալի Արեգակն զօրինակ իմանալի Արեգականն յինքն բերէ, զի որպէս իմանալի Արեգակն՝ Քրիստոս ԺԲ. (12) առաքեալս ժողովեաց, նոյնպէս և զզալի Արեգակս զԺԲ. (12) ամիսս յինքն հաւա-

բեաց: Վեցերորդ՝ բերէ զօրինակ ներքինս երկին զվերինն երկնի, զի որպէս նա ունի զինն դասս հրեշտակաց հանդերձ եռանձնեայ տէրութեամբն ի թիւս ԺԲ. (12), նոյնպէս և ստորինս երկին ունի զամիսս տարւոյ ի համարս ԺԲ. (12):

5 8. Աւթերորդ՝ ասելի է թէ ընդ էր՞ տարին 34. (360) օր է: Նախ զի օրն տարւոյն պատկեր է և որպէս օրն 34. (360) մասն է, այսպէս և տարին 34. (360) օր է: Երկրորդ՝ զի և ամիսն 34. (360) ժամ է, նոյնպէս և տարին 34. (360) օր է: Երրորդ՝ զի Թ. (1000) տարին 3Թ. (300000) և ԿԹ. (60000) օր է, նոյնպէս և տարին 34. (360) օր է: Չորրորդ՝ զի մարդս, որ բանաւոր աշխարհ է, 34. (360) յողիւք և Ե. (5) զգայութեամբ է բաղկացեալ, նոյնպէս և տարի աշխարհիս 34Ե. (365) աւուրբք է գոյացեալ:

9. Իններորդ՝ տեսանելի է եթէ ընդ էր՞ տարին Դ. (4) եղանակ է: Նախ զի կէտք Արեգական Դ. (4) է ի գունդն երկնից. կէտ 15 արևելեան և կէտ հասարակօրեան և կէտ արևմտեան և կէտ հասարակ գիշերականն, նոյնպէս և Դ. (4) են եղանակք տարւոյն: Երկրորդ՝ ըստ կենդանակերպիցս, զի ԺԲ. (12) են և Դ. (4) իրիք բաժանեալք են և առնեն Դ. (4) եղանակք ի տարին: Երրորդ՝ զի Դ. (4) կողմ են աշխարհի և Դ. (4) եղանակք՝ ի տարին: Չորրորդ՝ զի Դ. (4) 20 թիւք շարադրեալ ծնանին զԺ. (10): Եւ Դ. (4) տարեքք են շարախառնեալ, որ ծնանին զգոյքս: Հինգերորդ՝ զի բոյսք և տունկք և կենդանիք չորիւք առնուն զկատարումն, որ է դադարումն, ծնելութիւն, աճելութիւն և կատարելութիւն: Դադարումն ձմեռանն է, որ զյղութիւն առաւելեն և դադարեն, ծնունդն գարունն է, որ բոյսք և 25 տունկք և կենդանիք ծնանին, աճումն ամարանն է, և կատարումն՝ աշնանն, որ ամենեքեան ժողովեալ շտեմարանին:

Խնդրելի է և վասն չորից որպիսութեան և յատկութեան եղանակացդ:

9ա. Յազգաց գարնանային յեղանակի գիտելի է, զի ի շորեսին 30 եղանակս տարւոյն գարունն այսու ճոխանայ: Նախ զի արարածոցս սկզբնաւորութիւն ի նմա եղև, երկրորդ՝ զի ըրհեղեղն համաշխարհական անդ սկսաւ և դարձեալ դադարեաց, երրորդ՝ ելք ժողովրդեանն Իսրայէլի յԵգիպտոսէ, չորրորդ՝ ժառանգելն զերկիրն քանանացոց, հինգերորդ՝ հասարակութիւն տուրնջեան և գիշերոյ, 35 վեցերորդ՝ մուտ նիսան ամսոյ, որ է սկիզբն տարւոյն երբայեցւոցն, և կազմութիւն մարդոյն՝ ի սկզբանէ, եօթներորդ՝ բուսոց և տնկոց

և ամենայն կենդանեաց աճման ժամանակ, ութերորդ՝ Փրկչին մերոյ և Աստուծոյ Աւետեաց, որ ծնաւ մարմնով վասն մեր, իններորդ՝ կենսատու շարշարանաց, ժամանակ թաղման և Յարութեան, նաև Համբարձմանն, տասներորդ՝ այլև օրինակ և յարացոյց նմանատիպ հասարակաց յարութեան և նորոգման տիեզերաց և մարդկային բնութեանս, որ յապագայն: Դարձեալ՝ յատկութիւն գարնան. նախ զի սկիզբն է տարւոյ, յորժամ Արեգակն ի հոյն մտանէ, և զի ջերմ է և գէջ ժամանակաւ, և զի հաւասարի տիւ և գիշեր, և զի ծառք չորացեալք դալարին և կանաչին, և զի արտաքս գան ծաղիկք 10 և պտուղք և տերևք, և զի արիւնն առաւելու ի մեզ, և զի նորոգին երեսք երկրի, և զի բուսանին և աճեն ամենայն սերմանիք, և զի ցօղեն ամպք անձրև, և զի շարժին կենդանիք ի ծնունդս, այլև հնչեն հաւք դանազան ձայնս, և գարուն՝ որ գայ ի յարումն:

9բ. Յատկութիւնք ամարան նոյնքան թուով. նախ զի Արեգակն առ մեզ մերձի, և զի Արևն է ի բարձրութիւն իւր, և զի ջերմութեամբ և չորութեամբ ցամաքի երկիր, և զի յերկարին աւուրբք, և զի նուազին ստուերք, և զի անօսրանան ամպք, և զի ցօղ իջանէ ի գիշերի, և զի հասանին պտուղք, և զի խարտեալ մաղձքն առաւելուն ի մեզ, և զի հաւք առաւելուն յերգս, և ամառն՝ որ յանօթ առնուն:

9գ. Յատկութիւն աշնան նոյն թուով. նախ զի կշիռ և հաւասար են տիւ և գիշեր, և զի ջերմն և ցուրտն բարեխառնին, և զի արմտիք ժողովեալ շտեմարանին, և զի երկիր և ծառք ի պտղոց կողոպտին, և զի ցրտութեամբ և չորութեամբ տերևք դեղնին և թափին, և զի ամլութիւն աճէ յերկիր, և զի փոփոխին ժամանակաւ դիրաւ, և զի 25 տենտ և ջերմ յաւելուն, և զի շարժին կենդանիք ի յղացումն, որ և սև մաղձք յաւելուն ի մեզ, կոշի աշուն, զի անշնչին:

9դ. Յատկութիւն ձմեռան. նախ զի Արեգակն հեռանայ ի մենջ, և զի ի սուղ ծիրս ընթանայ, և զի գիշերն մեծանայ, և զի ցրտութիւն և գիշութիւն առաւելուն, և զի երկիր և ծառք մեռանին, և զի սառն և ձիւնն տարածի, և զի ամպք և մէզ և մութն պատէ, և զի կաւ և 30 տիղմն և գարշութիւնք բազմանան, և զի պղղամ և սպիտակ հիւթք տիրեն, և զի անգործութիւն է մարդկան և ամենայն կենդանեաց սղութիւն և տխրութիւն, և «ձմեռն» զի ձիւնամեռ լինին:

Խնդրելի է և այս, թէ վասն էր՞ յամառն և ի ձմեռն ոչ բուսանին 35 սերմանիք: Նախ զի ամառն կարի ջերմ է և չոր, չորացուցանէ: Եւ ձմեռն խիստ ցուրտ՝ սառուցանէ զսերմն: Իսկ գարունն և աշունն է:

միջակ և ջերմ և գէշ, բուսուցանէ, զի շորութիւն և ցրտութիւն հա-
կառակ է ծննդեան, և ջերմն և գէշն օգնական: Գարձեալ յամառն և
ի ձմեռն զրկումն տուրնջեան և գիշերոյ, զի ամառն զրկէ զգիշերն
և ձմեռն՝ զտիւն: Իսկ գարունն և աշունն հաւասարադրութիւն է
5 տուրնջեան և գիշերոյ, վասն որոյ բուսանին սերմանիք: Գարձեալ՝
գարնան եղանակն սկիզբն է ստեղծման աշխարհի և բուսոց և ամե-
նայն ծննդոց, վասն որոյ ի սոյն ժամանակս առաւել բուսանին և
նորոզին ամենեքեան, իսկ աշունն զնմանութիւն գարնան ունի,
վասն այն և նա բուսուցանէ, իսկ ձմեռն՝ է կատարած և վերջը կեն-
10 ցաղոյս, վասն այն բոյսք և ծնունդք դադարին և շորանան: Իսկ
ամառն նորին նման, զի հունձք է և կատարած գործոց բարեաց և
ոչ ժամանակ սերմանելոյ և բուսանելոյ: Եւ դարձեալ՝ ի գարունն
սերմանին բոյսք և յամառն կատարին և յաշունն ժողովին և ի
ձմեռն վայելին: Եւ իւրաքանչիւր ժամանակս իւր գործն առաւելու:
15 Եւ սորա յերեք յեղանակս օրինակ են այսմ կենցաղոյս, և ձմեռն՝
հանդերձելոյն, որպէս ասացաւ:

10. Տասներորդ՝ տեսանելի է, թէ վասն էր՝ ամն տարի անուա-
նեցաւ: Նախ տանի զմասունս ժամուց և զժամս աւուրց, երկրորդ՝
տանի զաւուրքս շարաթուց և զշարաթս ամսուց, երրորդ՝ զեղանակս
20 կենդանակերպից, և զկենդանակերպս՝ յուսատրացն ընթացից,
չորրորդ՝ տանի զշրջանս Արեգական և Լուսնի և զկէտից և զերկնից,
հինգերորդ՝ տանի զպահճք և զուտիք, նաև զտօնք և զաւետիք, վե-
ցերորդ՝ զժամանակս և զդարքս և զժամանակաւոր կեանքս տանի
և հասանի առ հանդերձեալն յաւիտենի:

25 11. Մետասաներորդ՝ վասն յատուկ շրջանաց Արեգական և
Լուսնի: Յատուկ շրջան Արեգականն ԻԸ. (28) ամ է և Լուսնին՝ ԺԹ.
(19), զի յարարչութեան երկոքին որ ի ստեղծման շաւիղն ընթացան,
սկիզբն շրջանաց նոցա ստեղծման շաւիղն է: Եւ Լուսինն զշրջանն
ի ԺԹ. (19) ամն վճարէ, և ի Ի. (20) երորդ ամին դարձեալ նոր
30 շրջանին սկիզբն առնէ ի ստեղծման շաւիղն, որ յարարչութեան
զկնի Արեգականն ընթացաւ ի հետ Արեգականն և փութանակի հա-
սեալ ի շաւիղն յայն, քան զԱրեգակն Թ. (9) ամաւ յառաջ:

— Եւ զինչ՞ է, որ ձգէ զԼուսինն ի շաւիղն յայն:

35 — Եօթն ամիսն նահանջեալ հանէ զնա ի գլուխ շրջանին և
իջուցանէ դարձեալ ի սկիզբն շրջանին՝ ի ստեղծման շաւիղն: Զի
Լուսինն յամենայն ամի ԺԱ. (11) օր պակաս ընթանայ, քան զԱրե-

գակն: Եւ այս ի ԺԹ. (19) ամին առնէ ԲՃԹ. (209) օր, որ է մին օր
պակաս, քան զէ. (7) ամիսն: Իսկ ԺԹ. (19) մասն, որ ի ստեղծ-
մանն ի տիւն ընդ Արեգականն զնաց, նա զայն ի գիշերն ի իւր իշ-
խանութիւն պակաս գնաց: Զի յայնմ առաջին գիշերին ԺԱ. (11)
5 ժամ և ԺԱ. (11) մասն գնաց և ԺԹ. (19) մասն պակաս մնաց: Եւ
զայն ԺԹ. (19) մասն յամենայն ամի պակաս ընթանայ, և լինի ի
ԺԹ. (19) ամին 34Ա. (361) մասն պակաս: Եւ առնէ 34. (360)
մասն մէկ օր՝ ԺԹ. (19) երեկի ամին, որ ԺԲ. (12) բերեմք ի վերայ
վերադրին: Եւ մէկ օրս այս լմնեաց զէ. (7)-երորդ ամիսն, զի զԲՃ.
10 (200) և Թ. (9) օրն արար ԲՃԺ. (210), որ է ի լման է. (7) ամիս:
Եւ օրս այս եղև Լուսնին նահանջից նահանջ և ձգեաց զԼուսինն ի
սկիզբն շրջանին, որպէս անիւ, զի հոլովի: Եւ մասնիկն այն, ուստի
զսկիզբն հոլովմանն էառ, դարձեալ վերստին ի նոյն տեղին հասա-
նէ և ի նոյն հոլովման սկիզբն լինի: Իսկ Ա. (1) մասն, որ ի 34.
15 (360) մասնէն մնաց, այն առնէ զպատարեալ Լուսինն» և ցուցանէ
զվախճան ժամանակաց այսմ յաւիտենիս:

Իսկ Արեգակն՝ ի ԻԸ. (28) ամին, ապա հասանէ ի ստեղծման
շաւիղն Թ. (9) ամաւ զկնի Լուսնին:

— Եւ զինչ՞ է, որ ձգէ զԱրեգակն ի սկիզբն շրջանին:
20 — Եօթն աւուրք շարաթուն նահանջեալ, հանէ զնա ի գլուխ
շրջանին և անտի դարձեալ իջուցանէ զնա ի սկիզբն շրջանին՝ ի
ստեղծման շաւիղն: Զի ի կէս մասանցն, ուստի նահանջն բաղկանայ
և յաւելու ի Դ. (4) տարին օր մի, և նահանջի աւուրքս յորժամ ի ԻԸ.
(28) ամին շարաթանան և լինին է. (7) օր, օրն այն նահանջից նա-
25 հանջ լինի Արեգականն և ձգէ զնա ի սկիզբն շրջանին:

12. Երկոտասաներորդ՝ տեսանելի է և վասն հասարակ շրջա-
նաց սոցա: Գիտելի է, զի յատուկ շրջանան իւրեանց տարորոշին
ի միմեանց և բացատրոհին գոլովն ի միում տեղուց և ի միում
շաւիղի: Եւ ընթանալովն իւրաքանչիւր ի յատուկ շրջանս իւրեանց
30 տարանջատեալ տրոհեցան ի միմեանց զամս բազումս մինչև հա-
սեալ ի գլուխ հասարակ շրջանին պատահեցան միմեանց և գտին
խնդութեամբ զմիմեանս յամս ՇԼԲ. (532): Զի ԻԸ. (28) անգամ
ԺԹ. (19) տարի կատարելով Լուսնին և ԺԹ. (19) անգամ ԻԸ. (28)
տարի կատարելով Արեգականն եկին ի յատուկ շրջանս իւրեանց,
35 Արեգակն ԺԹ. (19) անգամ և Լուսինն ԻԸ. (28) անգամ: Եւ ապա
եզերեցաւ հասարակ շրջանն, և ելեալ ի գլուխ շրջանին, գտին զի-

րար: Եւ ուրախութեամբ ի միասին վերստին դարձան ի սկիզբն հասարակ շրջանին, որ էր ստեղծման շաւղն, որ յարարչութեան ի միասին ի շաւղն յայն արշաւեցին: Ահա աստ յայտնի եղև, եթէ յատուկ և փոքր շրջան Արեգականն ԻԸ. (28) ամ է և Լուսինն՝ ԺԹ. 5 (19), իսկ հասարակն և մեծն երկոցունցն՝ ՇԼԲ. (532):

Արդ՝ Արեգակն և Լուսինն ժամանելով ի գլուխ հասարակ շրջանին, գոհութեամբ փառաւորեն զԱստուած ի բնութիւնս իրեանց, որ այնքան յերկար ամօք տարանջատեալք էին ի միմեանց, իւրաքանչիւր՝ ի յատուկ շրջանս իրեանց ընթանալով, այժմ գտեալ զմիմեանս ի գլուխ հասարակ շրջանին, ուրախութիւն մեծ եղև ի նոսա: 10 Որպէս եղբայր ումեք երկար ժամանակաւ տարաշխարհիկ լեալ և դարձեալ վերստին ի տեսանելն զմիմեանս՝ յառաւել խնդութենէ: և ի կարօտոյն ծնանի սուգ խանդաղատական, որ պատճառէ զանտրտում ուրախութիւն, որպէս եղև Յակոբայ և Եսաւայ, Յովսեփու 15 և Բենիամենի, Յակոբայ և Յովսեփու: Եւ ապա մեծաւ ուրախութեամբ առնեն Ձատիկ խնդութեան վասն նորոգ սկիզբն առնելոյ հասարակաբար շրջանին, զի Արեգակն բերէ լինքեան զկայսերական ճոխութիւն, և Լուսինն՝ զթագաւորականն, իսկ մոլորակքն՝ զսինկզիտականն, որք քան զթագաւորն միայն են ի ներքոյ, և կենդանակերպքն՝ զեպարքոսականն, որ քաղաքի են իշխանք և նոքա՝ մասանց աշխարհի, իսկ այլ պայծառագոյն աստեղքն՝ զօրավորաց, իսկ հասարակ աստեղք՝ զարքունի զօրաց: Եւ ամենքն զարժանալի, հիանալի և անմոլար շաւղօքն իրեանց և շրջանօքն տան փառաւորել բանական բնութեանցս զարարիչն Աստուած. ըստ այնմ՝ «երկինք պատմեն զփառս Աստուծոյ»: 25 Զի անմոլար ընթացիւք զայնքան նուրբ շաւղոս շրջեցան ի յատուկ շրջանս իրեանց և հասարակաբար հասին ի գլուխ հասարակ շրջանին և ուրախութեամբ Ձատկի սկիզբն արարին նորոգ շրջանին:

Արդ՝ այսպէս ճոխացուցանէ Աստուած զթագաւորութիւն երկնային լուստորացն ի ձեռն սպասաւորութեան միմեանց, զի մասունքն սպասաւոր են ժամուցն՝ որպէս երկրագործ մշակք, և ժամքն կատարեն զաւուրքն, որպէս հրամանատար ձեռնաւորք, և աւուրքն կատարեն զշաբաթսն, որպէս զարքունի վերակացուք, և շաբաթքն կատարեն զամիսքն, որպէս զիւանագպիրքն զամենայն արքունա-

կան հրամանս: Եւ լինին շաբաթքս այս տասնապետք՝ ժողովելով զաւուրք շաբաթուն, և ամիսք՝ որպէս յիսնապետք, հավաքելով զշաբաթսն, և տարին՝ հարիւրապետք, զետեղելով առ ինքն զամիսքն, և նահանջքն՝ որպէս զհազարապետք, պարունակելով առ ինքեան 5 զամքն նահանջի, և շրջանքն՝ որպէս զբիւրապետք, որ է թուման աւագունին, ի ներքոյ ինքեանց՝ զնահանջքն, զի նոքա նահանջից նահանջք են, և յատուկ շրջանքս ժողովեալ բացակատարեն զաւագ և զմեծ շրջանն: Եւ այսպիսի սպասաւորութեամբս հանեն զԱրեգակն և զԼուսինն ի գլուխ աւագ շրջանին, և մոռանեն անտի ի սկիզբն նոր շրջանին և առնեն տօն ուրախութեան Ձատկի: Զի ըստ աստուածադիր սահմանին անմոլար և անսխալ ընթացիւք ի այնքան յերկար ամս՝ ՇԼԲ. (532), գտին զստեղծման Ձատիկն և զինքեանս ի միասին՝ Արեգակն և Լուսինն, և զամենայն լուսաւորքս իրեանց հրաւիրեցին ուրախութեամբ Ձատկին իրեանց՝ ի փառաւորութիւն 15 Արարչին: Ընդ որս և մեք փառաւորեսցուք զհրաշագործն Աստուած, որ անշունչ և անկենդան լուսաւորացն այսքան անմոլար շաւղօք տայ գտանել զմիմեանս յամս ՇԼԲ. (532) առանց մոլորելոյ, զի ոչ եթէ տարով ոչ մոլորին զմիմեանս, այլ և ոչ ամսով մի կամ շաբաթով, կամ օրով, կամ ժամով, կամ մասամբ, այլ և ոչ ըրպէիւ մի, 20 ոչ անագանեն զմիմեանս գտանելոյ յայսքան ամս:

Եթէ ԿԱՄԻՑԻՍ ԳԻՏԵԼ, ԹԷ ԱՐԵԳԱԿ ՅՈՐՈՈՄ ԳՕՏՈՋ Է՛՛)

Գիտելի է, զի է. (7) են գօտիք. առաջինն Հրատն, որ է Մառեխն, երկրորդ՝ Արեգակն, որ է Շաման, երրորդ՝ Լուսաբերն, որ է Զօհրայն, չորրորդ՝ Փայլածուն, որ է Օտարիտն, հինգերորդ՝ Լուսինն, որ է Ղամարն, վեցերորդ՝ Երեւակն, որ է Զոհալն, եօթներորդ՝ Լուսնթագն, որ է Մուշթարին:

Եւ աստ երկու իրս խնդրելի է. նախ թէ վասն էր՞ է. (7) գօտիք կոչին, երկրորդ՝ թէ վասն էր՞ է. (7) եղեն:

Վասն առաջնոյն ասելի է, զի է. (7) գօտիք վասն այն ասին, 30 զի ոչ ի միում շրջանի շրջին սոքա, որ մի գօտի անուանէին, այլ են բարձր և խոնարհ՝ մի քան զմի: Զի Երեւակն ունի զվերին գօտին, և Լուսինն՝ զներքինն, և այլքն՝ զմիջոցն, մի քան զմի վերագոյն և խոնարհագոյն, և վասն այն է. (7) գօտիք անուանին, զի է. (7)

պարունակք են: Երկրորդ՝ զի և սոքա եօթներինս տարորոշ երկինք են ի միմեանց, որպէս և աշխարհս սովորութեամբ երդնուն միշտ հայ այն Աստուածն, որ «ի եօթներորդ երկինքն է», վասն այն է:

- (7) գօտիք անուանին և ասին:
- 5 Վասն երկրորդին գիտելի է, զի աշխարհս ի է. (7) կլէմ բաժանեալ է, որ է զլէմ, և մոլորակք է. (7) եղեն, զի է. (7) զլէմ աշխարհիս իշխողք լիցին: Երկրորդ՝ զի շարաթն է. (7) օր է, և է. (7) մոլորակս եղեն՝ յիշխանութիւն սոցա, երրորդ՝ զի է. (7) են դարք կենցաղոյս, և սոքա են վերակացուք ըստ աստեղագիտաց: Եւ յառաջին դարն Երևակն էր տանուտէր, և վասն այն յերկար ասլէին մարդիկն այն ըստ երկար ընթացից Երևակին, յերկրորդն՝ Լուսնթազն, յերրորդն՝ Հրատն, չորրորդն՝ Արեգակն, հինգերորդ՝ Լուսաբերն, վեցերորդ՝ Փայլածուն, եօթներորդ՝ Լուսինն: Եւ վասն այն «սակաակեացք» ասեն զմարդիկ վասն սուղ ընթացից Լուսինն:
- 15 Չորրորդ՝ ըստ անծննդական բնութեան իւրեանց՝ է. (7) գոյաւորուեցան, զի որպէս է. (7)՝ ի ներքոյ տասնեկին կոյս թիւ գոլով, ոչ ծնանի յումեքէ և ոչ ծնանի զոք, նոյնպէս և նոքա ի ստեղծմանէն ոչ յաւելուն ի թիւս իւրեանց և ոչ զայլ ոք յաւելու կարացին: Իսկ այն, զի Բ. (2) պակաս կալնումք ի հասարակածէն, որպէս կենդանա-
- 20 կերպից, զի Արեգակն ի միում աւուր եմուտ ի կենդանակերպն և ի գօտին, որ է նոյն և Հրատն: Եւ Հ. (70), Հ. (70) երթալն՝ զի յամեն գօտի Ժ. (10), Ժ. (10) օր կենայ, որպէս ի կենդանակերպն՝ Լ. (30):

ԵԹԷ ԿԱՄԻՑԻՍ ԳԻՏԵԼ, ԹԷ ԼՈՒՍԻՆՆ ՅՈՐՈՒՄ ԳՕՏՈՋ Է

- Եւ ընդ էր՝ ասէ «տես նախ զԱրեգակն». զի այս բնական է
- 25 Լուսինն, որ զընծայումն ի կենդանակերպ Արեգականն առնու: Զի յորժամ ծնանի Լուսինն մերձ Արեգականն, յայնժամ Զ. (6) կենդանակերպիւ յետ վազէ ի կեդանակերպէ Արեգականն մինչև ի լրումն և յորժամ զլրումն առնու, դարձեալ Զ. (6) կենդանակերպ յառաջ գայ և հասանի առ Արեգակն ի կենդանակերպն յայն, յորում
- 30 է և վերստին առնու զընծայումն և զծնունդն:

Բայց իմա և զայլ ծածուկ ընթացս Լուսինն. զի յորժամ յԱյծեղջիւրն ծնունդ առնու առ Արեգակն և Զ. (6) կենդանակերպիւ հեռացեալ յԱրեգակնէն և գայ յԵկաւորն առնու զլրումն և դարձեալ Զ.

- (6) կենդանակերպիւ մերձ գայ առ Արեգակն, զի վերստին առցէ զընծայումն: Եւ ԺԲ. (12) կենդանակերպն յԱղեղնաւորն լմնի: Եւ յԱղեղնաւորէն վազ տայ և թռիչս արձակէ և կոխէ զԱյծեղջիւրն և հասանէ ի Զրհոսն առ Արեգակն և անդ առնու զծնունդն: Զի Լուսինն
- 5 ի լմնելն զԺԲ. (12) կենդանակերպն ի Լ. (30) օրն լմնէ, և Արեգակն զիւր կենդանակերպն և փոխի յայլ կենդանակերպ և հեռանայ ի Լուսնէն միով կենդանակերպիւ ևս: Վասն որոյ հարկ լինի Լուսնին թռիչս արձակել զմի կենդանակերպիւն այն, ուստի փոխեցաւ Արեգակն, զի հասանել կարացէ ի կենդանակերպն, յորս եմուտ Արեգակն և առցէ զընծայումն իւր ըստ աստուածաղիր սահմանին:

- Եւ եթէ կամիցիս գիտել զծածուկ ընթացս Լուսնին, զոր բացալայտեցի, տես յայզի Լուսնին, ուր կենդանակերպն են և իմացիր, եթէ միտս ունիս: Եւ թէ ոչ կարես իմանալ՝ դու զպարզեալս ի մենջ ընկալ և օրհնէ զԱստուած: Զի այս բնական է Լուսնին, որ յամենայն ծնունդս զմի կենդանակերպն վաղս արձակեալ կոխէ և ապա կարէ հասանել ի կենդանակերպ Արեգականն և անդ առնուլ զընծայումն ծննդեանն, որպէս գրեցի զնշանացդ յԱյծեղջիւրէն ի Զրհոսն: Եւ վասն այս պատճառիս ասէ, թէ տես, թէ «Արեգակն յորում կենդանակերպի է»:

- Իսկ զի ասէ զաւուրս Լուսնին ԺԲ. (12)-պատկեայ, զի Արեգակն ի կենդանակերպն յօրն Ա. (1) աստիճան գնա, և Լուսինն՝ ԺԲ. (12), և Արեգակն զԼ. (30) աստիճանն ի Լ. (30) օրն վճարէ, և Լուսինն՝ յԲ. (2) օր ու կէս լմնէ, վասն այն ասէ «ԺԲ. (12)-պատկեալ»: Եւ այն, զի ասէ՝ «լից զթերութիւն Արեգականն», զի թէ քանի օր էր
- 25 Արեգակն ի կենդանակերպն յայն, յորում ծնաւ Լուսինն և անդի զսկիզբն էառ զԺԲ. (12) աստիճանացն ընթանալոյն, անդի ի հետ լից զթերութիւն կենդանակերպի Արեգականն և ապա զայն տուր Լ. (30), Լ. (30) առաջիկայ կենդանակերպիցն և գտանես, թէ յորում կենդանակերպի է Լուսինն: Նոյնպէս և զգօտեաց Լուսնին արացցես, որպէս Պատճէնն հրամայէ:
- 30

ՇԱԽԻՂ ԼՈՒՍԻՆՆ ԱՅՍՊԷՍ ԱՐԱՄԷ)

Շախիղն ճանապարհ ասէ, այսինքն թէ «ճանապարհ ընթացից լուսաւորացն այսպէս արա»: Բայց զանազան են ճանապարհք, զի

որ լայն և ընդարձակ է, որպէս փարսին «շահ ոահ» ասէ և արապն՝
«դարբի սուլթան», և ըստ մերս՝ «արքունի ճանապարհ», ըստ այնմ
ճանապարհ զարքունի գնասցուք: Եւ արքունի ճանապարհ լայն է և
ընդարձակ, որ զօրքն արքունի բաղմութեամբ աղխիցն զիրաւ ըն-
թանալ կարեն: Եւ նեղ ճանապարհ է, որ հետիոտս ընթանան: Եւ
նուրբ և կածան ճանապարհ է՝ որպէս կապանք, որ է ղժուարինք և
ահագինք: Եւ նուրբ շաւիղ է՝ որպէս փայտ բարակ եզակի թուով ի
վերայ յորդահոտուն և լայնածաւալ գետոյ, որ նրբութիւն փայտին
և սրընթացութիւն հեղուկ խոնարին որոտումն ընդդիմահար վիճին
բարձրաբեր մակացեալ վետին, որ զի բացուսս գտեսողսն զար-
հուրեցուցանէ: Արդ զմտաւ ած, թէ որքան զգուշութիւն պարտ է
ընթացողին, որ ըստ ուղիղ գծի անխոտոր քայլափոխեսցէ զնրբու-
թիւն փայտին:

Ինչ ապա զմտաւ ածիցես զերկնային շաւղաց նրբութիւն, որք
զոսկէորակ թելս մետաքսեայ յաւէտ նրբագոյն գոլ, զոր ընթանան
լուսաւորքն: Եւ վասն այսպիսի նրբութեան անխոտոր ընթացիցս
«շաւիղ» ասէ և ոչ ճանապարհ անուանէ:

ԵԹԷ ԿԱՄԻՑԻՍ ԳԻՏԵԼ, ԹԷ ԱՐԵԳԱԿՆ ՅՈՐՈՒՄ ԿԻՏԻ Է¹³⁾

Գիտելի է, զի կէտ՝ ձայնս հոմանուն է, քանզի ի վերայ բազ-
մաց բերի: Նախ առաջին՝ կէտ ամենայն արարածոցս Աստուած է,
որ ի նմանէ առին զսկիզբն լինելութեան, զի ոչ ոք յառաջ քան զնա-
լստ այնմ՝ «ես եմ առաջին և ես եմ վերջին»¹⁾: Երկրորդ՝ կէտ առնու
և ի վերայ յաւիտենից, զի յիրաքանչիւր յաւիտեան ունի կէտ
զսկիզբն և զվախճանն իւր: Երրորդ՝ ասի կէտ և վախճան մարդոյն,
որպէս ասեմք թէ ժամանակս ի կէտ կոչմանն իւրոյ: Զորրորդ՝ կոչի
կէտ վայրկեան և սուղ ժամանակն, որպէս ասէ Յոք վասն հեշտա-
սիրացն՝ «կատարեն ի բարութեան»²⁾ զկեանս իրեանց և ի նոյն
կէտն իջանեն ի ղժոխս: Հինգերորդ՝ կէտ է և դրութիւն օրինացն,
որպէս Ազամայ հրամայեաց շուտել ի պտղոյն մինչև ի կէտ սահ-
մանադրութեան իւրոյ, որչափ որ ինքն կամենայր: Վեցերորդ՝ առ-

նու կէտս ի վերայ բոլոր գոյիցս, որպէս ծովու ասաց՝ «ցայդ վայր
եկեսցես և այլ մի անցանիցես» զի շափ տեղւոյ սահմանի ընթա-
ցից նորա այն կէտ է նմա, զի այլ ոչ կարէ անցանել ընդ նա: Որ-
պէս և մանկունք ի խաղս իրեանց գտեղին, որ նշանեն, ասեն ցմի-
մեանս՝ ի կիտէն ի դուրս մի ելանել: Եօթներորդ՝ ասի կէտ և մե-
ծամեծ ձկանց ծովու, որպէս ասէ Գիր, թէ «հրաման ետ Տէր կէ-
տին մեծի կլանել և թքանել զՅովնան»³⁾: Ութերորդ՝ կոչի կէտ և ըստ
բերականութեան արհեստին, որ առ ամենայն գիրս և բանս երևի,
որպէս ստորակէտ, միջակէտ և աւարտակէտ: Իններորդ՝ երևի կէտս
ի վերայ միջոցաց տարրոջ և շարունակ քանակին, զի զտարրոջսն
տարանջատ է և զշարունակսն բաղկացուցանէ, զի ի տարրոջ քա-
նակսն զառանձնացեալ թիւսն ոչ թողու շարամօտիլ առ միմեանս:
Եւ ի բանս զսուղսն և զերկարսն ոչ տայ շարամերձիլ մէջն, իսկ ի
շարունակ քանակն կէտն բաղկացուցանէ զգիծն: Տասներորդ՝ երևի
կէտն և ի բոլորակն ծիր, զի մէջն, ուր կարակնին ոտք հաստատեալ
է, կէտ է առ բոլորն ծիր: Մետասաներորդ՝ կէտ է և միջոցս երկիր
առ անբաւ հեռաւորութիւն երկնային ծրին: Երկուտասաներորդ՝ կէտ
է և շափ աւուրն, որպէս ասեմք՝ Արեգակն ի կիտէ ի կէտ ընթանալով
բացակատարէ զօրն: Նոյնպէս և շրջանք Արեգական և Լուսնի կէտք
են: Երեքտասաներորդ՝ կէտ է և երկնիցն ըստ քառից կերպի՝ արե-
ելեան, արևմտեան, հասարակօրեան և մէջ գիշերին: Նաև ըստ
միանգամ հիւ գալոյն ունի և կէտ: Զորեքտասաներորդ՝ այս է կէտ,
որ ասէ «տես թէ Արեգակն յորում կիտի է»:

Եւ գիտելի է, զի Գ. (4) են կէտք ժամանակաւոր եղանակացս,
որպէս տարեւոր եղանակացն: Եւ որ ինչ վասն շորիցս է, ասացեալ
եղև տարեւոր եղանակացն: Եւ սոքա տարի ըստ աւուր ունին ըստ
քանիօնութեան աւուրց նոցա. ՂԱ. (91) ամ և Գ. (3) ժամ ըստ
ՂԱ. (91) աւուրց և ժամուց նոցա երից: Իսկ զի «կէտ երկնամիջակ՝
զարուն» ասէ, մի կարծեր, թէ երկնամիջակ գօտի զայն ասէ, ուր
սեցգետինն է, զի նա ունի զմէջն երկնից հաւասարաշափ: Վասն
որոյ իմաստասէրդ զգուշանայ վասն հոմանունութեան և ասէ
«զհարաւային հասարակակէտն ասեմ, որ զտիւն և զգիշերն հասա-
րակ ունի և ոչ զայն հասարակ գօտին ասեմ, որ զերկու մասունս
երկնային գնդին հաւասար ունի»: Քանզի Գ. (3) են գօտիք. առա-

¹ Եսայի ԽԼԷ, Յայտ. Ա. 10, 17:

² Յովբ. ԺԶԷ:

³ Յովնան ԲԷ, 11:

չին՝ երկնամիջական, ուր խեցզետինն է, երկրորդ՝ հասարակն, ուր
խոյն է, երրորդ՝ այրեցեալ գոտին, ուր Այծեղջիւրն է: Եւ իմա, զի
որպէս երկիրս ի ԺԲ. (12) մասունս բաժանեալ է, այսպէս և եր-
կինքն ըստ ԺԲ. (12) կենդանակերպիցն՝ ԺԲ. (12) մասունս և նա է
5 բաժանեալ: Արդ ի եղերէ երկնից հիւսիսային կողմանն մինչև յերկ-
նամիջակ գոտին, որ խեցզետինն է, զվեցերորդ բաժինն երկնից երկ-
նամիջակ գոտին ունի և զիններորդ բաժինն հասարակ գոտին ունի,
ուր խոյն է: Եւ զԺԲ. (12)-երորդ բաժինն՝ այրեցեալ գոտին, ուր
Այծեղջիւրն է: Եւ վասն սաստիկ մերձ գոլոյ Արեգականն առ հարաւ՝
10 ի խոնարհ ընթանալովն, տարի և կիսու ճանապարհ այնպէս այրե-
ցեալ է, իբրև զխանձողս փայտից և սևացեալ, որ ոչ բոյս և ոչ
ինչ կենդանի ցամաքային և կամ օդային ապրել կարէ, վասն այն
«այրեցեալ գոտի» ասի: Զի Արեգականն ժամանելով այնմ գոտուջ,
կիզէ և տոչորէ զաշխարհն այն: Զի թէ զՀնդուստան, որ բնակութիւն
է մարդկան, այնպէս զմարդիկ իբրև զխանձողս փայտից սևացուցա-
15 նէ, զինչ՝ համարիս զանբնական, թէ որքան այրէ: Եւ վասն կարի
հեռի մնալոյն ի հիւսիսոյ կողմանէն Արեգակն, զի երկնամիջակ
գոտին, որ զկէս երկնիցն ունի, յայն կոյս Արեգակն ոչ անցանէ:
Զի և ոչ ի կենդանակերպիցն երեք յայն կոյս հիւսիսոյ գտանի որ,
20 վասն որոյ և ահագին ցրտութիւն տիրէ հիւսիսային կողմանն, յոր-
ժամ Արեգակն ի հարաւ խոնարհի: Զի թէ աշխարհն ըրուզաց, ուր
բնակութիւն մարդկան է, այնքան սաստիկ լինի ցուրտն, որ ի
պարզկայ զիշերն զզրկապատ ծառն ճայթեցնէ և յերկուս հերձէ,
զինչ՝ համարիս զանբնական, վասն որոյ և տարի և կիսու ճանա-
25 պարհ, և անդ է անբնակ՝ վասն ցրտութեան: Վասն որոյ զկէտ երկ-
նամիջակն զհարաւային հասարակն իմացիր, ուր խոյն է, զի ի
ստեղծմանն անդ եղաւ ի կէտն զարնանային, ուր բարեխառնութիւն
երկրի էր և ամենայն գոյից զուարճութիւն:

Իսկ զի ասէ՝ «կէտ ժամադիտակ ամառնային», զի յամարան
եղանակն Արեգակն դիտէ ի յառաելութիւն ժամուց, զի առաւելու
օրն քան զգիշերն, վասն որոյ ժամադիտակ ասէ: Եւ այնքան բարձ-
րանայ ի կամարն երկնից յամառնային կէտն, մինչ զի ժամս Բ. (2)
անստուեր առնէ զերկիր: Զի այնքան դիմաւորի Արեգակն, զի ի
խորագոյն յատակս ջրհորոց ծագեացէ զշառափզս իւր: Եւ ամենայն
35 մարմին, որ ի վերայ երկրի լինիցին, և թէ ի կենդանեաց և եթէ ի
ծառոց, ժամ մի յառաջ քան զհասարակ կէտն երկնից, որ է կորըն-

թարթն, և ժամ մի զկնի՝ բնաւ յամենայն կողմանց մարմնոց ստուեր
ոչ երևեսցի, զի այնպէս ուզիղ դիմաւորեսցի Արեգակն ի վերայ
զլխոյ մարմնոց: Եւ սաստկացի ջերմութեամբ մանաւանդ ի ԿԳ.
(64) ամէն ի վեր, զի զհիւսիսային ծովքն խոնարհեցուցանէ և
5 նուազեցուցանէ, զի ջերմութիւն Արեգականն զցրտութիւն ի ջրոցն
արտաքսեացէ, և շորութիւն զխոնաւութիւն ծծիցէ, և այնպէս զծովն
նուազեցուցէ: Եւ աղբիւրք վասն այն յոլովանան, զի թանձրութիւն
երկրիս ոչ թողու խստութեամբ թափանցել ի սիրտ երկրի սաստկա-
գին ջերմութեան: Որպէս ի վերայ ծովու, որ զերես ջուրցն ի բաց
10 ունի և վասն այն նուազի, իսկ զի սիրտ երկրի պաղ մնայ, վասն
այն յոլովանան աղբիւրք: Եւ դարձեալ՝ զի ջերմութիւն զերակ երկ-
րի քրքիր պահէ, որով արծակ մնայ ճանապարհ ջրոցն և յոլովաբար
արտաքս զեղին: Նաև դաշտք խափանին յարտորէից և ի պտղաբե-
րութեանց, զի տապախառն ջերմութեամբն այրեալ՝ կիզէ զնոսա:
15 Եւ վասն այնմ գատարկանան դաշտք ի մարդկանէ, և աւերութիւն
լինի, և յայնժամ զշինութիւն ի լերինս արասցեն, քանզի և պտղա-
բերութիւնք ծառոց լինիցին:

Իսկ զի ասէ «կէտ եթերական», որ է աշունն՝ օգոյն վերին մասն
եթեր ասի: Եւ զի հողմային է օդ, և սա աշնանային կէտ է՝ յարուց-
20 մունք հողմոց լինի, որպէս աշնանն է յատուկ: Եւ յաղթութիւն ներ-
գործէ սաստիկ ջերմութեան Արեգական և բարեխառնութիւն առնէ
երկրի և շինութիւն դաշտորէից:

Իսկ կէտ «սուզական», որ է ձմեռն, սուզիլ՝ վասն իջմանն ասէ,
զի ի ձմեռնային յեղանակս յարաժամ սուզին և իջանին ձիւնաբե-
25 րութիւնք և ցրտութիւնք յօդոյ: Եւ նուազի հարաւային ուկիա-
նոս, զի Արեգակն յայրեցեալ գոտին է, և հարաւային կողմանց
սաստիկ տապախառնութիւն լինի: Բայց հիւսիսային կողմանցս
օդք ցրտաշունչք, պտղոցն նուազութիւնք, աղբերաց պակասութիւնք,
զի ցրտութիւնքն սաստկացեալ ուժգինս ներգործէ ի սիրտ երկրի,
30 և զճանապարհս աղբերաց սառուցեալ նեղացուցանէ: Եւ ըստ այսմ
նուազին աղբերք, և լերինք լինին ամենեին անպտուղք: Եւ ծովք
հիւսիսային կողմանցն լնուն, զի ոչ կարէ ներգործել ջերմութիւն
Արեգականն առ ի սպառել զնա:

Եւ որպէս զԳ. (4) եղանակս տարաշափեաց Աստուած ՂԱ. (91)
35 օրիւք, նոյնպէս և զԳ. (4) եղանակ ժամանակաց շափեաց ՂԱ. (91)
ամօք առ ի զանազան ներգործութիւն առնել աշխարհի: Քանզի լու-

րեկին շրջանքս Դ. (4) իրս ներգործեն յաշխարհի. նախ բարձրութիւնք և խոնարհութիւնք Արեգականն, երկրորդ՝ բարեխառնութիւնք և յոռութիւնք, երրորդ՝ շերմութիւնք և ցրտութիւնք, չորրորդ՝ ամբարձմունք ծովուց և իջմունք:

5 Արդ՝ զամենայն մակացութիւնս տումարական մասանց արհեստիս՝ որպէս ուսաք, զբոլորն բովանդակ Արարիչն Աստուած ներսահմանեալ էր շափաբերական թուով համարուց յաւէտ և նուազ քանակիւ: Վասն որոյ արժան է խնդրել և յաղագս ըստ քանակին արարչագործելոյ, զի աստուածային իրագործութիւնքն համայնքն

10 խորհրդաւորք են: Խնդրելի է թէ՛

ՎԱՍՆ ԷՐ՝ ՉԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ ԸՍՏ ՉԱՓՈՅ ԵՒ
 ՀԱՄԱՐՈՅ ԱՐԱՐՉԱԳՈՐԾԵԱՑ ԱՍՏՈՒՍԱՊ՝

Մարգարէն ասէ՝ «զամենայն ինչ իմաստութեամբ արարեր»¹: Եւ Սողոմոն՝ «Աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի»², զի

15 ըստ ամենակարող զօրութեան լծակցեաց և զամենահանճար իմաստ գիտութիւն, որով իմաստութիւն Աստուծոյ երևի ըստ կարգաւորութեան արարածոցս: Քանզի ի ստեղծագործութիւն արարածոցս իմաստութիւն Աստուծոյ նախ զաւուրսն շափեաց ըստ վեցեկի կատարեալ թուոց, և ի ծննդական թիւսն ծնաւ զարարածս արարչութեամբ: Եւ յանձնունդ թիւն հանգեալ յանելոյն դադարմամբ: Եւ

20 այս մեծ իմաստութիւն էր, զի ոչ ի ծննդական թիւն դադարեաց և ոչ յանձնողականն ներգործեաց: Եւ տես զայսպիսի իմաստութեան լիշատակութիւնս՝ ոչ կամեցաւ Աստուած ծածուկ մնալ ի գիտութենէ մարդկան: Վասն որոյ եղ ի բնութիւն տարերացս, զի և սոքա

25 ըստ այս ներշափութեան ծննդական թուոցս վեցիցս ներգործեսցեն զսպասաւորութիւն արարածոցս և յանձնողական թիւն ժամանեալ լռեալ դադարեսցին:

Եւ տես ի Արեգակն, զի զվեց կենդանակերպս յառաջեալ գայ ի ներգործութիւն ծննդագործութեան և պտղաբերութեան ամենայն բուսոց և տնկոց յամիսս վեց: Իսկ ի եօթներորդն ժամանեալ յա-

միսս է. (7), դառնայ յետս յարալածոցս ի ծննդական ներգործութեանն և լռեալ դադարէ: Մինչ զի հասանիցէ վերստին յարարչութեան եղանակն և ապա դարձեալ ըստ արարչագիր սահմանին ներգործեսցէ զառաջինն:

5 Այսպիսով յայտնի եղև, թէ զքանակաւոր արարչութիւն ըստ թուոյ արարածոցս օն և օն յարարչութեան յաւուրսն գաղափարեաց: Զի որպէս շափով թուեցան աւուրք արարչութեան, այսպէս թուաբերութեամբ շափեցան և արարչութիւնք աւուրցն, զոր այժմ ասասցուք ժ. (10) թուով:

10 Նախ առաջին՝ ասելի է, թէ անշափութիւն միայն Աստուծոյ վայելէ: Էր՞ վասն: Յաղագս այն, զի անեղ է և որ անեղ է, նա անսկիզբն է և որ անսկիզբն է, նա անշափելի է, զի թուաբերութիւն տեղի բմբունելոյ ոչ գտանէ, վասն որոյ և ոչ շափի: Իսկ արարածական բնութիւնս շափաւորք են, վասն զի եղանակք են և ի ժամանակի ստեղծան: Եւ ժամանակն շափի ըստ համարոյ թուոց, որպէս ասէ՝ «եղև երեկոյ և եղև վաղորդեան օր մի»¹, վասն որոյ և ի ժամանակի ներգոյացեալքն ըստ համարոյ թուոց ստեղծագործեցան:

Երկրորդ՝ զի և կերպիւ իմն անշափութիւն Աստուծոյ շափի, և շափիւն այն անշափութիւն Աստուծոյ յայտնի: Զի թէ հարցանիցեմք, թէ,—որչա֞ է Աստուած, պատասխանեմք, թէ,—անշափ է Աստուած: Եւ ահա անշափութեամբ շափեցաւ և շափիւ անշափութեան անշափութիւն Աստուծոյ բացայայտեցաւ: Զի թէ ոչ անշափութեամբ շափէր անշափութիւն Աստուծոյ, զիարդ՞ յայտնէր: Նոյնպէս՝ և շափաւորութիւն արարածոցս շափաբերաբար ստեղծանելովն՝ արտայայտի և ծանուցանի ամենեցուն, թէ ամենայն ներգոյացեալքս շափաւոր եմք՝ եթէ երկնաւորք և եթէ երկրաւորք, և ոչ որ է անշափ, բայց՝ միայն Աստուած:

Երրորդ՝ զի թէպէտ աստուածութիւն ըստ բնութեան և էութեան անշափելի է, սակայն ըստ թուոց անձնաւորութեանցն և նա ունի շափ, զի եռակի թուով ծանուցեալ է ամենայն արարածոցս: Եւ թիւ անձնաւորութեանցն վասն այն բացայայտեցաւ, զի բոլոր՝ երրորդութիւն ծանուցանի Արարիչ արարածոցս: Եւ մի եզակի թուով ըստ բնութեան և զանձն խոստովանեսցին, որպէս Մաբել կիրեացիին և կամ որպէս այժմ այլ ազգիք և զյափտենական կորուստն ժառան-

1 Սաղմ. ճԳ:24:

2 Առակ Գ19:

1 Ծննդ. Ա6:

զեցեան: Եւ կամ մի ըստ անշափութեան բնութեան և զանձինսն
անշափ իմասցին. զի թէ նեստոր՝ որ շորորդութիւն ասաց և վասն
մէկ յաւելոյն որդւոյ, Բ. (2) անձն ասաց, մինչև յորս կանիժանի և
մինչ ի կատարած անիծելոց է, զինչ՞ համարիս շայն, որ Ժ. (10)
5 կամ Ճ. (100) կամ Ռ. (1000) ասէր: Այլ այս յայտնի եղև եռակի
թուով, զի Գ. (3) ն կատարեալ է, ունի սկիզբն, մէջ, և կատարած:
Եւ երկուքն ի միակէն է, այսպէս և որդի և Հոգի ի Հօրէն, որ սկիզբն
է նոցա և պատճառ անպատճառ պատճառից: Եւ որպէս Աստուծոյ
առ անձնատրութեանցն ցուցաւ շափ, այսպէս և իւր արարածոցս
10 կամեցաւ, զի լիցի շափ: Եւ վասն այն շափ և թիւ ետ սոցա ի յտո-
նելն, զի յամենեսեան իմաստութիւն Աստուծոյ ծանիցի և փառաւո-
րեսցի անուն նոցա:

Չորրորդ՝ զի և յանշափելի է Հոգին Աստուած, աստուածային
շնորհք Սուրբ Հոգւոյն, թէպէտ և ըստ ներգործութեան և շնորհքն
15 անշափելի է, վասն զի աստուածային է: Եւ որպէս Աստուած Հոգին
է անշափելի, նոյնպէս և զօրութիւնք շնորհացն իւրոց է անշափելի,
բայց ըստ որքանութեան և բազմութիւն շնորհացն իւրոց ներշափե-
լի: Քանզի է. (7) ասեմք ըստ քանակի թուոց զշնորհս Հոգւոյն Սրբ-
բոյ որպէս թուէ կայծակնամաքուրն Եսայի, «Հոգի խորհրդոց,
20 հեզութեան, զօրութեան, իմաստութեան, գիտութեան, երկիւղի,
աստուածապաշտութեան»¹:

Հինգերորդ՝ զի շափ ստեղծական իրին դարդ է և գեղեցկու-
թիւն, իսկ անշափութիւն՝ անզարդութիւն է: Որպէս մարդ, որ զմի-
շակ շափն ունի ի կոպար անձինն, գեղեցիկ է և ցանկալի, զի շա-
25 փակցութիւն անդամոցն ծնանի զգեղեցկութիւն տիոցն: Իսկ զօր
բնութիւն սխալէ և քան զշափն յաւէտ երկայն և կարճ բերէ այն,
անշնորհք է և անզարդ: Եւ զոր բնութիւն զշափակցութիւն անդա-
մոցն անսխալ բերէ, այն ունի շնորհք և զարդ, և յայտ է յԱբիսո-
ղոմն, զոր Գիրն Սուրբ յիշատակէ, թէ «յտտից մինչև ցզլուխն ոչ
30 գոյր արատ յԱբիսողոմ»²: Նոյնպէս և գեղեցիկն Յովսէփ, նաև նա-
խահայրն Ադամ, որ ձեռացն Աստուծոյ էր գործ, և առաւել գեղե-
ցիկ էր, քան զգեղեցիկ: Զի ասի աւանդութեամբ, թէ Դաւիթ ցան-
կացեալ գեղեցկութեան Ադամայ և խնդրեաց յԱստուծոյ, զի տաց՛

¹ Եսայի ԺԱ2:
² Բ Թագ. ԺՂ25:

նմա զառակ ի գեղն Ադամայ: Եւ դժուարեալ Աստուծոյ ի խնդիրն
յայն: Ասէ՛ տաց բեզ զառակ ի պատկերն Ադամայ, բայց որ շափնն
յԱդամ, հանգեա, այնքան և դու ի նա հանգիցես: Եւ ետ նմա զԱբի-
սողոմ, որ զոր զհերս իւր բնդ ոսկւոյ կշռէր:

5 Զինչ՞ ասացից գերկրորդն Ադամայ՝ զՏեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի զգեղեցկութիւն, որ ծնողն էր Աստուածածին, և որդին՝
Աստուած էր և Կուսածին, և նիւթ մարմնոցն էր արիւն Կուսին՝ մար-
րեալ Հոգովն աստուածային: Քանզի յորժամ քարոզէր ի ժողո-
վուրդ նոցին Տէրն մեր Յիսուս Քրիստոս, հայեցեալ կնոջն նրբահա-
10 յեաց տեսութեամբ ի գեղ երեսացն և ի ձև հասակին Քրիստոսի և
ընդարմանայր: Քանզի հայեցաւ ի մազ զլիսոյն Քրիստոսի, նա
զանգրահեր էր, ի ճակատն, նա՛ իբրև գելս Արևու էր, յօնքն, նա՛
իբրև գերկնային կամար էր, յաշքն, նա իբրև զծով էր, ի ախանջն,
նա՛ բլթակ քնարից ականջացն իբրև զքնարս լուսատեսիլ ամպոյ
15 էր, ի անգունքն՝ նա իբրև զծոյլս ոսկւոյ էր, յայտքն աստուածային
երեսացն նա՛ իբրև զհատ նռան էր, ի շրթունքն նա՛ իբրև զլար
կարմիր էր, ի բերանն նա՛ իբրև զակն Արևու էր, որ զլոյս բանիցն
բխէր, ի ատամունքն՝ նա իբրև զշարս լուսափայլ մարգարտաց
էր, ի լեզուն նա սուր էր ու սուար, բանքն քաղցր էր և ազգա-
20 րար, համեղ էր ու ճարտար, ի հեր շրթանցն նա՛ իբրև զզա-
լամի քաշուածք էր, ի գոյն մորուացն նա՛ իբրև զթելս ոսկւոյ
շիկագունար էր, ի պարանոցն նա՛ իբրև զսիւն ամպոյ էր, ի
լանջքն նա՛ իբրև զծոցս բոցափայլ Արեգական էր, ի ձգումն ձեռացն,
որ քարոզէր, նա՛ իբրև զցոլմունս նշուլից լուսոյ էր, յանձին վայել-
25 շութիւն նա՛ ցանկալի էր տեսիլն, իբրև զտիպս զմրութեանայ ականց,
և իբրև զգունագեղ ականց քարանց պատուականաց: Վասն որոյ ոչ
կարաց ժուծել անհամեմատ վայելչութեան և շքնադագեղ գեղեց-
կութեան, ի բաց մերկացաւ զկանացի ամոթխածութիւն ի մեծ
բազմականին, գոշեաց և գոռաց հառաշալիւր արտասուօք: Եւ բարձ-
30 րածայնեալ արձակէր զճիշ մղձկեալ սրտին և ասէր «ոհ, ոհ, ոհ,
երանի որովայնին, որ կրեացն զբեզ և ստեանցն, որ որդիեցուցին
զբեզ»¹, երանի բարձանցն, որ եբարձ զբեզ, և բազկին, որ ամ-
բառնայրն զբեզ, երանի շրթանցն, որ համբուրեցին զբեզ, և լե-
զուին, որ զովէին և գզուերն զբեզ, զի ի վեր է, քան զբնութիւն՝ գե-
ղեցկութիւն բո: Ահա տես, զի թէ յաստուածային անձն շափակցու-

¹ Ղուկ. ԺԱ27:

թիւն շափուց մասանց անդամոցն այնքան զեղեցկութիւն էր, որ
զարմացուցանէր զհոգեբարձութեամբ տեսողսն:

Վեցերորդ՝ զի զշափն պայման և սահման եղ Աստուած ի վե-
րայ գոյիցս, զի մի արտաքոյ կամացն և հրամանացն Աստուծոյ
5 արտաքս ելցեն յեղեալ սահմանէն: Ըստ այնմ՝ «սահման եղ, և
ոչ անցանեն»¹ և ծովու ասաց՝ «ցայդ վայր եկեսցես և այլ մի ան-
ցանիցես»:

Եօթներորդ՝ շափ եղ ամենայն իրի, զի ի խրատ և ի վարդա-
պետութիւն մեզ լիցի, զի և մեք զամենայն ինչ ըստ շափի ներգոր-
10 ծեսցուք, եթէ ի գործնական առաքինութիւնս՝ մի առաւել քան զկարն
մեր ձեռնարկեսցուք, զի Աստուած ի կարէն պահանջէ: Եւ եթէ ի
տեսական հանճարասիրութիւնս՝ մի արտաքոյ քան զքանոն իմաս-
տասիրաց և վարդապետացն քննեսցուք: Զի ասէ Սողոմոն՝ «կթեա
կաթն, զի եղիցի կոզի և մի առաւել ճմլել, զի մի դարձցի յարիւն»²,
15 այսպէս և մեք զհասանելիսն ըստ շափոյ և կարողութեան քննես-
ցուք և զանհասանելիսն Աստուծոյ՝ լռութեամբ պատուեսցուք:

Ութերորդ՝ զի վարդապետ և իմաստասիրող գոյիցս մարդն է,
և մարդն շափաւոր է, և շափաւորն զանշափն ոչ կարէ շափել, որ-
պէս զբազմութիւն աստեղացն, վասն որոյ արար զսոսա շափաւոր:

Իններորդ՝ զի ներշափելի որբանութիւն թուոց արարածոցս, որ
ներսահմանեալ եղև յարարչութենէն Աստուծոյ, լինի մեզ մատն՝
իբրև զաստիճան սանդղոց, և դիւրաւ ներածիմք ի գիտութիւն գո-
յիցս: Որպէս զբանս, որ համարազլսովք բաժանեմք, դիւրաւ ըմ-
բռնեն միտք ուսումնականաց, քանզի միատարր շարաբանութեամբն
25 շարամանեմք:

Տասներորդ՝ զի ուր շափ և համար ոչ է, անդ և ոչ գիտութիւն է:
Եւ ուր ոչ գիտութիւն, անդ և մոլորութիւն, որպէս ի թիւս համարոյ
ծովուց ավազոյ: Զի թէ ոչ գիտացէ զաստիճանս կենդանակեր-
պիցն, զիարդ՝ գիտացէ զԱրեգական հոլովմունս, և եթէ ոչ զհո-
30 լովմունս, նաև ոչ՝ զմասունս, և եթէ ոչ զմասունս, նաև ոչ՝ զժամս,
և եթէ ոչ զժամս, նաև ոչ՝ զաւուրս, և եթէ ոչ զաւուրս, նաև ոչ՝ զշա-
բաթս, և եթէ ոչ զշաբաթս, նաև ոչ՝ զամիսս, և եթէ ոչ զամիսս, նաև
ոչ՝ զտարիս, և եթէ ոչ զտարիս, նաև ոչ՝ զժամանակս, և եթէ ոչ զժա-

մանակս, նաև ոչ՝ զդարս, և եթէ ոչ զդարս, նաև ոչ՝ զհանդերձեալն:
Ապա և յայտնի եղև, զի ուր ոչ է շափ և համար, անդ և ոչ
գիտութիւն: Վասն որոյ յամենայնի փառաւորեա զԱստուած, որ
շափ և համար եղ ամենայն գոյիցս, զի դու գիտութեան գոյիցս
5 հաղորդեսցիս և վասն սոցա իմաստասիրել մարթասցիս և համա-
րոցն թուօք զշափ գոյիցս գիտասցես և զԱրարիչն սոցա փառա-
ւորեսցես:

1 Սողմ. ճե՛՛6:

2 Առակ. 133:

ՆՈՐԻՆ ՅԱԿՈՒՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՂՐԻՄԵՑԻՈՅ ՅԱՂԱԿՍ
ՏՈՒՄԱՐԱԿԱՆ ՄԱԿԱՑՈՒԹԵԱՆ, ԹԷ ՅՈՐՈՑ ՄԱՐԴԿԱՆԷ
ԱՐԶԵՍՏԱԻՈՐՈՒԵՑԱԻ

Գիտելի է, զի նախ ի նախամարգարէէն Մովսիսէ օրինադրեցաւ, զի նա կարգեաց զլրմունս Զատկաց հինն Իսրայէլի յօր ելիցն, որ յԵգիպտոսէ: Զի ի գիշերին յայն արարին զԶատիկն և կերան զգառն խորովեալ և ելին յԵգիպտական ծառայութենէն:

Երկրորդ՝ յետ սորա նորոգեաց Եզրաս՝ որդի Սարսոնի, զԺԹ. (19) երեակն, զտումար երրայեցուց Լուսնի՝ յետ Ռ. (1000) ամի յԵլիցն յԵգիպտոսէ: Եւ յետ Շ. (500) ամի դարձի գերութեան, յորժամ պատարագեցաւ Քրիստոս ի վերայ խաչին, եղև կատարումն օրինաց մարգարէից:

Երրորդ՝ յետ սորա Ընդստակէս Աթենացի արար տումար հոմայեցուց աշխարհին և թուեաց, թէ առաջին ապրիլի է սկիզբն արարչութեան, վասն զի ի շորրորդումն աւուր ստեղծ Աստուած զԱրեգակն և զԼուսին, և վասն այնորիկ ի շորիցն ապրիլի է սկիզբն: Եւ ի ԺԳ. (14) իցն նիսանայ կարգեցին զԺԹ. (19) երեակ բուրիին, որ ի միում աւուր սկիզբն առնուն և ի միում աւուր կատարին:

Չորրորդ՝ զկնի սորա Ղևոնդ՝ հայրն Որոգինէի, արար զլրումն Զատկաց Եթովպացուց և Եգիպտացուց:

Հինգերորդ՝ յետ սորա, որդի նորա արար զլրումն Զատկաց արարացուց և մակեդոնացուց:

Վեցերորդ՝ Անատոլիս Արիոպագացի արար զլրումն Զատկաց յունաց և ասորուց:

Եօթներորդ՝ յետ սորա Անդէս արար զլրումն բիւթանացուց և կապադովկացուց:

Ութերորդ՝ յետ սորա Դիոնեսիոս Արիոպագացի արար զլրումն աթենացուց:

Իններորդ՝ յետ սորա Անդրէաս Բիւզանդացի, եղբայր Մագ-

նոսի եպիսկոպոսի, արար միաբանութիւն ամենայն տիեզերաց լըրմանց ԺԹ. (19) երեկաց, կրկնակաց, վերադրաց և տարեմտից և այլ զանազան խորհրդոց: Վասն զի գայր առ նա Հոգին Սուրբ և աղբիւրացուցանէր զնա քան զժովն ուկիանոս, որ քննէր զվերին կիսագունդն և զներքին կիսագունդն:

Տասներորդ՝ յետ սորա Անանիա Շիրակացին արար զլրումն Հայոց Մեծաց:

Իսկ ի ժամանակս ամբարիշտ թագաւորին Յուստինիանոսի եղև լրումն Մ. (200) ամի կարգացն Անդրէասայ: Եւ սկսան շփոթել լրմունք Զատկաց և գիրք արուեստական տումարաց: Իսկ այլ մի ի ճշմարտագունիցն ուսումնասիրաց յԵգիպտական մայրաքաղաքէն յԱղեքսանդրեայ՝ էաս անուն կոչեցեալ, ձայն արկեալ առ ինքն ժողովէ և հավաքէ զայրս կորովամիտ՝ զԱդրա ի Գամրաց, զՓեննհեղ ի Հրէաստանէ, զՅոհան ի Արաբիոյ, զՅովբել յԵթովպիոյ, զՍերդ ի Մակեդոնիոյ, զԳիգան յԱսորոց, և այլ և. (36) արամբբ հաւատարմօք խորհէին գտանել զդարձ Արեգական և Լուսնի ի միում ամի: Եւ գտին զայս լեալ ի ԲԸ. (28) ԺԹ. (19) երեակսն: Ապա դնեն զօր լրմանն ՇԼԹ. (532) ամի անսխալ՝ զաւարտն գտեալ ի մարտի ԻԵ. (25) և սկզբնաւորեալ յապրիլի ԺԳ. (13)-իցն: Եւ վասն զի անցնալ էր Թ. (9) ամ ի սկզբանէ բուրիին՝ կարգեցին զապրիլի Գ. (4) ն և ասացին թուական Հայոց՝ Ժ. (10): Ուստի և սահմանեցին երթալ ի թուէն Թ. (9) և զայլն երթալ՝ ԺԹ. (19), ԺԹ. (19) և ի Գ. (4) իցն ապրիլի գտանել զօր լրմանն:

Իսկ այլ ոմն՝ Իրիոն անուն, ի դրան ամբարշտին Յուստինիանոսի, քամահանս վարկուցեալ զոչ կոչելն զնա ի ժողովն, կամեցաւ տապալել զկանոնեալ արհեստն: Խախտեաց զապրիլի ԺԷ. (17) ն ի ԺԶ. (16) և զապրիլի Զ. (6) ն՝ ի Ե. (5), որով գտանի սխալ պասեքն Սուրբ՝ յառաջեալ միով շաբաթով: Եւ այս ոչ յամենայն ԺԹ. (19) երեակ բուրիի, այլ Ը. (8) անգամ պատահեալ ի շրջանին՝ պատճառելով զժողովումն Ե. (5) եկի մասանց, զոր կոչէ «օր եկամուտ» և դնէ ի վերայ յարակային: Եւ այսպէս ընդ սխալանօք գայ և հանդիպի ի ներքոյ հասարակածին և փակի ընդ նզովիւք գրեւեացն, զի գրեալ է, թէ անիծեալ է, որ առնէ զլրումն յառաջ, քան զհասարակածն: Արդ՝ Իրիոն թէպէտ և բազում անգամ կարծէր ճարտարանալ, սակայն ոչ զերծանի ի նզովից՝ նմանեալ յայնմ, որ սակաւ ազօթէ և բազում հայհոյէ:

Արդ՝ եղաւ Շ. (500)-եակ բոլորն յլԱ. (31) ամի թագաւորութեան Յուստինիանոսի կայսերն և ի ԻԸ. (28)՝ հոսորովու պարսից արքային, զի յԼ. (30) ամին Մ. (200) եակն Անդրէասայ կատարեցաւ և աւարտեալ վճարեցաւ: Եւ յլԱ. (31)՝ Շ. (500) եակ շրջանն ի Աղեքսանդրացոց եղաւ, զի ընդ լինել վախճանի Մ. (200) եկին Անդրէասայ եղև սկիզբն Շ. (500) եկին: Եւ գլուխ շրջանին Մ. (200) եկին Անդրէասայ ապրիլի Դ. (4) ն է: Եւ Ժ. (10) անգամ ԺԹ (19) երեակն պատեալ զանձամբ յապրիլի շորիցն և ի ԺԱ. (11) անգամն ընթացեալ այլևս Ժ. (10) ամ և հասեալ ի մարտի ԻԵ. (25), վճարեցաւ Մ. (200) եակն Անդրէասայ:

Եւ թուականս Հայոց եղաւ ի մարտի ԻԵ. (25) ն, որ վերջին ամ էր երկերկրին Անդրէասայ:

Բայց ծանիր, որդի, զի յախմար զրչէ ապականեալ է բազում ինչ ի մասանց տումարական արհեստիս, նաև ի մեկնութիւնս վասն զթիւսն յաւել և պակաս գրելոյ: Զի տումարի գրողն պարտ է, զի քաջ վերահասու լինի տումարական մակացութեան և ապա համարձակի ի գրելն, զի տումարս ոչ է իբրև զայլ գրեանս: Թէպէտ և սխալն յամենայն գիրս ոչ մեկնի, բայց թէ պատահէ յայլսն, կարողութիւն է վարդապետաց այլ իմն մտօք ուղղել զայն, բայց ի տումարական գիտութիւնս անկարելի է. զոր օրինակ՝ մէկն անկարելի է լինել Բ. (2) կամ Բ. (2) ն՝ Ա. (1): Այսպէս անկարելի է թիւ մի աւելի կամ պակաս գրել, թէ ոչ՝ սխալէ զարուեստն:

Եւ օրինակ քեզ Իրիոն. արդ՝ յորժամ երանելին Եւսերի ժամանակագիրն ժողով արար ՍԲ. (52) իմաստասիրօք ի Կոստանդնուպօլիս, որ է մայրաքաղաք ամենայն իմաստասիրաց, և կարգեաց զՇ. (500)-եակն, իսկ Իրիոն աւարիկ գիտնականն հոռոմոց, ոչ կոչեցաւ ի ժողովն յայն: Այլ յորժամ եկն ի հեռի ճանապարհէն, յոր և երթալն էր, մախացեալ ըստ իրան յայն և զապրիլի Զ. (6) ն Ե. (5) ասաց և ելից զԿոստանդնուպօլիս: Իսկ ապրիլի Զ. (6) ն յայնմ ամի կիրակի հանդիպի, բայց մեք ի միս այլ կիրակին անցուցանեմք զԶատիկն, իսկ Ե. (5) երորդ օրն շաբաթ լինի, և նոքա զլրումն ի տեղին առնեն և ուտեն զխաչելութեան շաբաթն: Ահա տես, զի թէ մէկ թիւն զնա անիծից մատնեաց քան ևս աուաւել այլ յլովն:

Վասն որոյ մեծաւ աշխատութեամբ մեք զթիւրեալսն ուղղեմք, բայց ոչ սակաւ երկիւղ է մեզ ի վերստին թիւրելոյ յախմար գրչաց:

Եւ վասն Հայոց թուականիս իմա, զի ոմանք գրեալ են զվախ-

ճան Մ. (200) եկին Անդրէասայ և սկիզբն թուականիս Հայոց և զՇ. (500) եակ բոլորին՝ լինել յլԱ. (31) ամի թագաւորութեան Յուստինիանոսի ամբարիշտ կայսերն և ի ԻԸ. (28)՝ հոսորովու պարսից արքային: Եւ այլք յԼԴ. (34) ն և ոմանք՝ յԼԶ. (36) ն և այլք՝ աւելի և նուազ: Եւ ով ոք որ զարհեստն ոչ գիտէ, սոցա զթիւրն և զուղիղն ոչ ճանաչէ, նաև ոչ՝ զվնասն: Արդ՝ ամենայն թիւր և սխալ ի բուն սկզբանէն ճանաչի և անդի ուղղի: Եւ ի բուն և սկիզբն սոցա՝ Հոռոմայեցոց թուականն, և վկա՝ ամք Մենդեանն Քրիստոսի:

Արդ՝ յառաջնումն ամի թագաւորութեան Փիլիպոսի կայսերն լցաւ Ռ. (1000) ամ շինութեան քաղաքին Հոռոմայ: Եւ յերկրորդ ամի նորին Փիլիպոսի եղին թուական Հոռոմոց երկրորդումն Ռ. (1000) եկին, և էր ի Քրիստոսէ ՄԽԹ. (249) ամ:

Եւ սկիզբն թուականիս մերոյ էր ՇՄԴ. (553) թիւն, որ ի Քրիստոսէ, բայց ոչ ըստ դրութեան, այլ ըստ թուելութեան, զոր յետոյ բացայայտեցից: Եւ էր թուական Հոռոմոց յայսմ ամի 3Ե. (305): Արդ՝ արա Հոռոմ թուական և տես. կալ զՀայ թուականն Ա. (1) և բեր ի վերայ 3Դ. (304), լինի 3Ե. (305) ամ, որպէս և այժմ և առ յապալ:

Յորժամ Հոռոմոց թուական առնեմք, կալնումք զՀայ ՄԵԺ թուականն և 3Դ. (304) ի վերայ բերեմք, Հոռոմոց ՄԵԺ թուական է, և զըջանսն ի բաց զնամք՝ Փոքր թուական է:

Եւ աստ լինի Յուստինիանոսի կայսերն ԻԱ. (21) ամ և հոսորովու՝ ԺԸ. (18) ամ:

Իսկ Մ. (200) եակն Անդրէասայ առնու վախճան և կատարումն յԼ. (30) ամին Յուստինիանոսի և ի ԻԷ. (27)՝ հոսորովու: Եւ էր ապրիլէանց խորանն մարտի ԻԵ. (25), որպէս վերագոյն ասացաք:

Եւ զիր թուականիս մերոյ աստ եղև՝ ի լրումն Մ. (200) եկին, որ էր մարտի ԻԵ. (25): Եւ զի ինն ամ անցեալ էր յապրիլի շորիցն, անուանեցին զթուականն մեր իսկ և իսկ ի նոյն կէտն, յորում պահու և եղին՝ Ժ. (10), զի յապրիլի շորիցն մինչ ի մարտի ԻԵ. (25)՝ Ժ. (10) ամ է և Ժ. (10) խորան:

